208.1
Б 22

2010

208.1
Բ-22
220
447-ԱՍ

# ԹԱՆԳԱՐԱՆ

220
447-ԱՍ

## ՀԱՅԿԱԿԱՆ

## ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

## Գ

---

## ԱՆԿԱՆՈՆ ԳԻՐՔ

### ԱՌԱՔԵԼԱԿԱՆՔ

220
447-ԱՍ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ՂԱԶԱՐՈՒ

1904

[illegible]
[illegible]
1917

# ԹԱՆԳԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

Գ

208.1
Բ-22

# ԹԱՆԳԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

Գ

## ԱՆԿԱՆՈՆ ԳԻՐՔ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆՔ

19495
107792 - ԱՀ
7/XI 1922

ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ՂԱԶԱՐՈՒ
1904

Ի

ՅԻՇԱՏԱԿ ՄԿՐՏՉԻ ԷՄԻՆ

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

ՈՐՈՑ միանգամ ի քնին գքրիստոսական կրօնիցս պատմութիւն արկեալ իցէ և նախնեացն տուչութեանց և աւանդից հետամուտ դեգերեալ, ապաքէն ոչինչ անհաճոյ վարկցին իւրեանց ծոնի՝ և գերբորդս գայս, յետ երկուցն վաղ հրատարակելոց առ ի մէնջ անվաւերականացն ասեմ գրոց Հնոյ և Նորոյ կտակաց։

Վարք և Վկայաբանութիւնք առաքելոց ի սմին բովանդակեալք , զանազանին յայլոց ստուգապատում գրուցաց, և ոչինչ խղճեմք անկանել զսոսա առձայնել՝ վասն որ ի սոսին բովանդակելոց բազմադիմի մոլորութեանցն և առասպելազանց մտացածին ցնորից տեսլեանց եւ նշանագործ զօրութեանց։

Նոյն և մի կէտ նպատակի և ոճ հրատարակութեան եղեւ և մեր, զոր օրինակ կալեալ էին և նախորդքն մեր հրատարակիչք երկուց հատորոց. խղճամիտ պարապել ի համեմատութիւն գրչագրաց, և զմանր խտիրսն անգամ պէսպիսութեանց ընթերցուածոց յիշատակել ի դիւրութիւն անձնիւր քննչաց և հետամտից։ Նմին իրի՝ առ ի պահելոյ զոճ նախկին հրատարակութեանցն, զանց արարաք զհամեմատութեամբ ընթերցուածոց հայկական թարգմանութեանս ընդ բնագրաց և թարգմանութեանց որ ի յոյն, լա-

տին և յասորի բարբառս. հմտագունից բան զմեզ թողեալ զայս վաստակ լեզուագիտաց և քննասիրաց, որպէս և զճշդելն որ ինչ աստէն ի հայկական թարգմանութեանս ուղղելիք կամ յապաւելիք և կամ յաւելլիք ինչ գտանիցին:

Ուր ուրեք նոյն և միոյ վկայաբանութեան կրկին դիպեցան խմբագրութիւնք, փոյթ յանձին կալաք ի մի շար մի զմիոյ կնի տպագրել զերկաքանչիւրն. իսկ զժամանակին մէն միոյ վկայաբանութեանցս յօրինելոյ կամ թարգմանելոյ՝ անմարթ էր մեզ ճշտիւ գտակաւ սահմանել. թէպէտ զոմանս ոչ երկմտիմք վասն յստակութեան ոճոյ շարագրութեանն և պերճութեան հայեցի բանից ոսկեղինիկ դպրաց թարգմանչաց Ե. Դարու համարել երկս: Յայտ է դարձեալ զի որ ի հայկական թարգմանութեանս ի համառօտ ձեւ գտանին, զյետնագոյն ժամանակաց բերեն յինքեանս զդրոշմ. զայս յաղճատ և յաղաւաղեալ լեզուի անդ նոցին մարթ է նշմարել:

Որ ինչ բացայայտ վրիպակք էին օրինակագրաց ի գրչագիրս՝ ուղղեցաք, և ուր ուրեք մթին էին բանքն և անիմանալի՝ ի հմտագոյնս իրին արարաք ապաստան, մեզէն նշան եւեթ հարցական եդեալ առընթեր:

Ոչ ի ճահ թուեցաւ մեզ ի տաղտուկ հմտից հարցասիրաց ծանրաբեռնել զհատորիկս կրկնութեամբ անվաւեր գրութեանց ինչ, վաղու իսկ հրատարակելոց այլուր. յորպիսեաց սակի են Թուղթ Կորընթացւոց առ սուրբ առաքեալն Պաւղոս և Պաւղոսի առ Կորնթացիս. Հանգիստ սրբոյն Յովհաննու առաքելոյ և աւետարանչի. Պատմութիւն վարուց սրբոյն Թէկղեայ. Առաքելական կանոնք, եւն: Զնոյն և զանվաւերականօք ինչ յանուն աշակերտաց ոմանց՝ իբր առաքելոց՝ յիշատակելովք, ապախտ արարեալ, այլում սեպհական հատորոյ գրեցաք զնոսին պատկանաւորս:

Պարտ աստէն անձին վարկանիմք և բառ մի յիշատակի ծոնել յուշ ի միտս ընթերցանելեաց մատենկանս, առ եղբայրակիցն իմ Հ. Վրթանէս

Թուսեանն, որ աւելի չափ ի սոյն երկ վաստակեալ քրտնաջան ընդօրինակութեամբք և համեմատութեամբք ընթերցուածոց գրչագրաց, երկնահրաւէր կոչմամբ կանխաժամանն մահու սլացաւ յաստեաց, ի վեր յերկինս ընդ իւր ձգելով և զյոյս հանդերձելոյ լուսաբանի մատենագրութեան նախնեաց։

Շնորհ ունիմք և մեծարոյ Ուսուցչապետին Կոնիբերի հայագիտի, որ յանձն էառ իւրովն ազնուութեամբ լուսագրել զհատուած վարուց Յովհաննու աւետարանչի որ ի Բրիտանական Մուզէոնին Լոնտոնի։

Յետ համկիրճ բանիցս այսոցիկ յառհասարակ լուսաբանութիւն ոճոյ հրատարակութեանս, ի ճահ համարիմք և վասն միոյ միոյ Վկայաբանութեանցս և Վարուց հանգամանաց գրչագրաց և ընագրաց՝ յաւելուլ աստէն համառօտ եւեթ ծանօթութիւնս, զի յոլովագոյնք ի նոցանէ վաղ իսկ նկարագրեալ են յերկոսին նախկին հատորսն հրատարակեալս ի մէնջ։

**Ա. ԳՈՐԾՔ ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑ**[1]. — Բնագիր սորա է **ԻԹ. Ճառընտիր** մատենադարանիս. թիւ գրչ. 653. բովանդակ մատեանս է ձեռագիր **Հ. Ներսէս վ.ի Սարգսեան**. զայլ կարևոր ծանօթութիւնն զգրչագրէս տես յԲ. հատոր Անկանոն Գրոցս էջ ԺԴ։ Առաջին օրինակն է **Բ. Ճառընտիր**. թիւ գրչ. 1014 (տես Բ. հտ. էջ Թ)։ Երկրորդ օրինակն է **Ա. Ճառընտիր** մատենադարանի վանացս. թիւ գրչ. 17. բոլորգիր խոշոր միաձև,

1. Հմմտ. Վէթթէր, Die armenischen apokryphen Apostelakten ի Թերթին Oriens Christianus. 1901, 217-239. 1903, 16-55։ Լիփսիուս և Պոննէ, Acta apostolorum apocrypha Լայփցիկ, 1891, 45-222։ Լիփսիուս, Die apokryphen Apostelgeschichten und Apostellegenden II, I, 1887, 85-284։ Ցան, Gesch. des neutestamentl. Kanons II, II, 832-891։ Հառնաք, Gesch. der altchristl. Litt. II. I, 549։ Ճէյմս Ռոպէնսոն, Apocrypha anecdota II. Քէմպրիճ, 1897։ Շմիթ, Neue Heidelberger Jahrbücher, VII, 1897, 117-124. եւն։

երկսիւն, գրեալ ի Թադէոս գրչէ յանապատն սուրբ Լուսաւորչի, ի թուին հայոց ՈՀԳ (1224)։ Երրորդ օրինակն է **ԻԳ** Ճառընտիր. թիւ գրչ. 239. բոլորգիր, գրեալ ի վերայ բամբակեայ թղթոյ. գրիչ մատենիս՝ Ներսէս Կրակեցի. տեղի գրչութեան՝ Երուսաղէմ, ի թուին հայոց ՉՁԴ (1335)։ Չորրորդ օրինակն է **ԺԶ** Ճառընտիր. թիւ գրչ. 299. օրինակեալ յԱտաբազար Նիկոմիդիոյ ի ձեռն քարեբարոյ ուրումն Տիրացուի Յովհաննու Տէրվարդանեան, յամին 1829։ Հինգերորդ օրինակն է **ԺԸ** Ճառընտիր. թիւ գրչ. 456 (տես Բ. հտ. էջ Թ)։

ԱՅԼ ՕՐԻՆԱԿՔ ՀԱՄԱՌՕՏ ԳՈՐԾՈՅ ՍՐԲՈՑ ԱՌԱՔԵԼՈՑՆ ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ՊՕՂՈՍԻ. — Բնագիր սորա է **ԼԵ** Ճառընտիր վանացս. թիւ գրչ. 569 (տես Բ. հտ. էջ Ժ)։ Առաջին օրինակն է **ԻԳ** Ճառընտիր մատենադարանիս. թիւ գրչ. 1447 (տես Բ. հտ. էջ Թ)։

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԳԼԽԱՒՈՐ ԱՌԱՔԵԼՈՑՆ ՍՐԲՈՑՆ ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ՍՐԲՈՅՆ ՊԱՒՂՈՍԻ ՓԱՌԱՒՈՐԵԼՈՅՆ. — Բնագիր սորա է **ԺԶ** Հաւաքումն բանից նախնեաց. թիւ գրչ. 345 (տես Ա. հտ. էջ Թ)։

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ. — Բնագիր սորա է **ԻԹ** Ճառընտիր մատենադարանիս, զորմէ տես ի վեր։

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՊԱՒՂՈՍԻ ՍՐԲՈՅ ԱՌԱՔԵԼՈՅՆ. — Բնագիր սորա է նոյնպէս **ԻԹ** Ճառընտիր։

ՏԵՍԻԼ ԱՌԱՔԵԼՈՅՆ ՊԱՒՂՈՍԻ ՈՐ ՏԱՐԱՆ ՀՐԵՇՏԱԿՔՆ ԶՀՈԳԻ ՆՈՐԱ[1]. — Բնագիր սորա է **Ը** Ճառընտիր մատենադարանի վանացս. թիւ գրչ. 1002. փոքրագիր, բոլորգիր գրեալ ի Գրիգորիս քահանայէ՝ յորդւոյ Մկրտչի երիցու, ի վայելումն Աստուածատուր կրօնաւորի։ « Արդ աւարտեցաւ հոգէպատում տառս ի շրջագա-

1. Հմմտ. Յոյն բնագիր, Թիշէնտորֆ, Apocalypses apocryphæ, Լայփցիկ, 1866, 34-69։ Լատին հին թրգմ. Ճէյմս Ռոպէնսոն, Apocrypha anecdota, Քէմպրիճ, 1893, Հտ. Բ. 11-42։ Ասորի հին թրգմ. Բէրքինս, Journal of the American Society, VIII, 1866, 183-212։ Հայ. հատակոտոր, Ն. Մառ. Ամառնային ուղեւորութիւն Վիեննա, 1892, 61-66։

յութեան ժամանակին՝ յայսմ ամի յորում էր յելանելոյն Ադամայ ի փառակենցաղ դրախտէն՝ ամք 6766. և ի ծննդենէ կենարարին մերոյ՝ ամք 1343. և ի թուականութեանս հայկազեան տումարիս ՉՂԱ (քերեալ և եղծեալ), յամսեանն հայոց յահկի ի Ժ. աւրն, և յամսեանն հռովմայեցւոց, սեպտեմբերի ի Ա. աւուրն։ Յեկեղեաց գաւառս, ի մայրաքաղաքս աստուածապահ՝ **Եզընկայ**, ընդ հովանեաւ սուրբ և երկնանման տաճարիս՝ սուրբ կաթողիկէի և սուրբ ամենափրկչին և սուրբ առաքելոցն և սրբոյն Սարգսի և սուրբ Աստուածածնին։

ԱՅԼ ՕՐԻՆԱԿՔ ՀԱՄԱՌՕՏ ՏԵՍԼԵԱՆ ԱՌԱՔԵԼՈՑՆ ՊԱՒՂՈՍԻ. — Էին առ մեզ երեք օրինակք համառօտ տեսլեանս. զառաջին զերկոսինսն խուն ինչ համաձայն գտեալ իրերաց եդաք ի մի և ի նոյն իջի տպագրիս. բնագիր առաջնոյն է **Դ. Ճառընտիր** մատենադարանիս. թիւ գրչ. 985, զորմէ (տես Բ. հտ. էջ Ը)։ Բնագիր երկրորդին է **ԻԴ. Ոսկեփորիկ**. թիւ գրչ. 541 (տես Բ. հտ. էջ ԺԳ)։ Բնագիր երրորդին է **ԼՋ Ճառընտիր**. թիւ գրչ. 305 (տես Բ. հտ. էջ ԺԳ)։

ԹՈՒՂԹ ԴԻՈՆԵՍԻՈՍԻ ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԱՇԱԿԵՐՏՆ ՊԱՒՂՈՍԻ ՅԱՂԱԳՍ ՄԱՀՈՒԱՆ ՊԱՒՂՈՍԻ ԵՒ ՊԵՏՐՈՍԻ[1]. — Բնագիր սորա է **Բ. Ճառընտիր** մատենադարանիս, զորմէ տես ի վեր։ Առաջին օր. է **Ը** օր. **Թղթոյն Մ. Ներսեսի Շնորհալւոյ** և ժողովոյն **Հռոմկլայ**. թիւ գրչ. 693. բոլորգիր ԺԳ դարու, լրացուցեալ նորագոյն գրով, այլ և նօտրիւ. ստացողք՝ **Պաւղոս** քահանայ, **Վարդան** պիտակ վարդապետ են։ Երկրորդ օր. է **Ժ** օր. **Թղթոյն Շնորհալւոյ**. թիւ գրչ. 1252 (տես Բ. հտ. էջ ԺԱ)։ Երրորդն՝ **Ե Ճառընտիր**. թիւ գրչ. 1553 (տես Բ. հտ. էջ ԺԴ)։ Չորրորդն՝ **ԺԳ. Խմբագիր**, թիւ գրչ. 211, թիւ տետրին 3. շղագիր նոր օրինակութիւն, բնագիրն անյայտ։ Հինգերորդն՝ **ԺԼ. Խմբագիր**. թիւ

1. Հմմտ. Յայսմաւուրք, Կ. Պոլիս, 1834, Յաւելուած 45-47։ Մարթէն, Pitra, Anacleta sacra, Հտ. Դ. 249-54, լատ. թարգմ. 272-76. ասորին՝ անդ, 241-49, թրգմ. 261-71։

գրչ. 301. Թիւ տետրին 5. նոտրագիր ի վերայ թըղթոյ. ժամանակ գրչութեան անյայտ։ Վերջերորդն՝ **Ա. Ճառընտիր**, զորմէ տես ի վեր։

ՆԱԽԱՐԿՈՒԹԻՒՆ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ Ի ՀՌՈՄ. — Յամենայն ստուածաշունչ գիրս գտանին օրինակք նաւարկութեանս, եղեալ զկնի թղթոցն Պաւղոսի. ի բազմաց չորս եւեթ գրչագիրս ընտրեցաք, յորոց կալաք ի բնագիր զ**Գ. Աստուածաշունչն**. թիւ գրչ. 229 (տես Ա. նո. էջ ԺԱ)։ Առաջին օր. **Ժ Աստուածաշունչ**. թիւ գրչ. 280 (տես Ա. նո. էջ Թ)։ Երկրորդ օր. **Զ Աստուածաշունչ**. թիւ գրչ. 1006, բոլորգիր ընտիր, անթուական, հին։ Երրորդ օր. **Բ Աստուածաշունչ**. թիւ գրչ. 1634. նոտրագիր, գրեալ ի **Ցապալայ** գրչէ ի թուին հայոց ՌՂ (1641)։

Բ. ՅԱՂԱԳՍ ԱՆԴՐԷԻ ԱՌԱՔԵԼՈՅ ԵՒ ՆՈՐԻՆ ՍՔԱՆՉԵԼԵԱՑՆ ԶՈՐ ՏԷՐ ԱՐԱՐ Ի ՁԵՌՆ ՆՈՐԱ ԵՒ ՄԱՏԹԷԻ Ի ՄԱՐԴԱԿԵՐԱՑ ԱՇԽԱՐՀՆ [1]. — Բնագիր սորա է **ԻԹ Ճառընտիր**, զորմէ տես ի վեր։ Առաջին օր. **ԻԳ Ճառընտիր**, զորմէ նոյնպէս տես ի վեր։ Երկրորդ օր. **ԼԳ Ճառընտիր**. թիւ գրչ. 812. շղագիր օրինակեալ ի Մխիթարեան հայրց ի մեծ և յեռանդատոր տօնականէ կայսերական գրատան Փարիզու։ Երրորդ օր. **ԻԶ Ճառընտիր**. թիւ գրչ. 731. գրեալ ի Կարին ի Հ. Ներսիսէ Սարգսեան։ Չորրորդ օր. **ԺԳ Ճառընտիր**. թիւ գրչ. 463. մեծադիր ստուար, բոլորգիր խոշոր, թուղթ բամբակեայ. գրեալ յաւուրս թագաւորութեան Ա. Հեթմոյ արքայի. գրիչն՝ **Բասիլ**։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՑՆ ԱՆԴՐԷԻ ԵՒ ՄԱԹԷՈՍԻ ԹԷ ՈՐՊԷՍ ԳՆԱՑԻՆ ՅԱՇԽԱՐՀՆ ՄԱՐԴԱԿԵՐԱՑ. — Բնագիր սորա է **ԻԳ Ճառընտիր**, զորմէ տես ի վեր։

1. Հմմտ. Թիշէնտորֆ, Acta apost. apocr. Լայփցիգ, 1851, 132-166։ Նոյն, Apocalypses apocr. Լայփցիգ, 1866, 139-141 և 161-167։ Լիփսիուս և Պոննէ, Acta apost. apocr. II, 1898, 1-127։

Գ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼՈՅՆ ՅԱԿՈԲԱՅ ԹԷ ՈՐՊԷՍ ԳՆԱՑ Ի ՍՊԱՆԻԱ. — *Բնագիր սորա է* **ԻԳ. Ճառընտիր**, *զորմէ տես ի վեր։*

Դ. ՎԱՐՔ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆՉԻ[1]. — *Բնագիր սորա է գրչագիր Բրիտանական Թանգարանին Լոնտոնի. Թիւ գրչ.* 19728, *զոր սիրայօժար յղեաց մեզ Մեծ. հայագէտն Կոնիբիր, հանեալ գլուսատիպ պատկեր նոցին։ Գրեալ է ի սկիզբն չորեքտասաներորդ դարու. յորում գոյ և յիշատակարանս այս. «Գրեցաւ գիրքս այս որ կոչի Պրոխաւռ. որ ունի առ ինք հաւաքեալ զամենայն բանս և զգործս Յովհաննու աւետարանչի եղբաւր Տեառն՝ ի սուրբ ուխտս* **Մլիճի**, *ընդ հովանեաւ Տիրամաւր սուրբ Աստուածածնի և այլ սրբոցս, ձեռամբ յանարժան դղեակս* **Պապառաւն**։ *Արդ առացաւ* **Կոստանդին** *քահանայ յիշատակ իւր և ծնողաց իւրոց և ամենայն զարմից իւրոց։ Արդ աղաչեմ զամենեսին և առ ոտս ձեր անկանիմ. գրեցաւ ի թվ. եօթն հարիւրորդի յիսներորդի վեցերորդի»* (1307)։

*Այլ զառաջին գլուխ վարուցս Յովհաննու Աւետարանչի (էջ* 190–221) *զաղափարեցաք ի* **ԻԳ. Ճառընտիրէ** *մատենադարանիս և համեմատեցաք ընդ օրինակին Լոնտոնի, զորոյ զգանազանութիւնն եդաք ի ստորեւ։* **Ի Մատենադարանի հայկական թարգմանութեանց**, *յիշէ Հ. Գարեգին Վ. Զարբհանալեան այլ եւս երկուս գլուխս տեսլեան Յովհաննու Աւետարանչի ի Պրոխորոնէ, ըստ գրչագրաց մատենադարանին Էջմիածնի, այլ մեզ չեն ինչ ծանօթ նոքին։ Գոն և համառօտք ի ճառընտիրս և համառօտութիւնք գրոցն Պրոխորոնի, այլ աւելորդ վարկաք երկրորդել զնոսին։*

1. *Հմմտ. Ցան*, Acta Joannis. *Էրլանկէն*, 1880. 219-252։ *Նոյն*, Neue kirchl. Zeitschr. X, 1899. 191-218։ *Լիփսիուս և Պոննէ*, Acta apost. apocr. II, 1898. 151-216։ *Ռայթ*, Apocryphal Acts of the Apostles, *Լոնտոն*, 1871, *Հտ.* Ա. 66 *եւն*։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼՈՑՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱԿՈԲԱՅ ԵՒ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՐԴՒՈՑՆ ՈՐՈՏՄԱՆ. — *Բնագիր սորա է* **ԻԴ** *ճառընտիր, զորմէ տես ի վեր։ Առաջին օր.* **ԼԵ** *ճառընտիր, զորմէ նոյնպէս տես ի վեր։*

**Ե. ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՑՆ ՓԻԼԻՊՊՈՍԻ**[1]. — *Կրկին են օրինակք վկայաբանութեանս փոքու ինչ զանազանութեամբ, վասն որոյ արժան համարեցաք տպագրել ի միասին ի մի և նոյն իջի։ Բնագիր առաջնոյն է* **ԻԹ** *ճառընտիր մատենադարանիս, զորմէ տես ի վեր. բնագիր երկրորդին* **ԻԴ** *ճառընտիր, զորմէ նոյնպէս տես ի վեր։*

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅ ԱՌԱՔԵԼՈՑՆ ՓԻԼԻՊՊՈՍԻ ՈՐ Է ՄԻ ՅԵՐԿՈՏԱՍԱՆԻՑՆ ԵՒ ՔԵՌՆ ԻՒՐՈՅ ՄԱՐԻԱՄՆԻ ԵՒ ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍԻ ՈՐ ԷՐ ՅԵՒԹԱՆԱՍՆԻՑ ԱՆՏԻ. — *Բնագիր սորա է* **Բ** *ճառընտիր, զորմէ տես ի վեր։ Առաջին օր.* **ԺԸ** *Ուխտփորիկ (տես Բ. հտ. էջ Ժ)։ Երկրորդ օր.* **ԼԵ** *ճառընտիր, զորմէ տես ի վեր։ Երրորդ օր.* **ԻԴ** *ճառընտիր, զորմէ նոյնպէս տես ի վեր։*

ԿԱՆՈՆՔ ՓԻԼԻՊՊՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ. — *Բնագիր և օրինակք կանոնացս տպագրեցան ըստ ձեռագիր վաստակոց Հ. Եփրեմ վ.ի Սեթեան, որ ոչ միայն զՓիլիպպոսին, այլ զողջոյն իսկ կանոնս առաքելոց և ժողովոց համեմատեալ է մանրաքննին զննութեամբ. բայց քանզի հրատարակեալ են անկանոն մատեանքս* **Վարդապետութիւն առաքելոց, Կանոնք Թադդէի և Թուղթ Յակոբայ առ Կոդրատոս**, *ի Հ. Յ. Տաշեանէ, վասն որոյ զանց արարաք երկրորդել ի հատորս այս։*

**Զ. ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅ ԱՌԱՔԵԼՈՑՆ ԲԱՐԴՈՂՈՄԷՈՍԻ**. — *Բնագիր վկայաբանութեանս*

1. Հմմտ. Թիշէնտորֆ, Acta apost. apocr. 75-104։ Նոյն Apocalypses apocr. 141-156։ Ճէյմս Ռոպէնսոն, Apocr. anecdota, 158-163։ Պաթթիֆֆոլ, Analecta Bollandiana IX, 1890, 204-249։ Ռայթ, Apocr. Acts of the Apostles I, 73-99, II 69-92. Լիփսիուս, Die apokr. Apostelgesch. II,2, 1-53 եւն։ Ցան, Farschungen եւն VI, 1900, 18-24։

եղեւ տպագրեալն ի մէնջ համառօտ նահատակութիւն առաքելոյն յԱ. հատորն « Վարք և վկայաբանութիւնք սրբոց » էջ 200–211, որ համաձայն ընթանայ **Բ** ճառընտրի մատենադարանիս։ Առաջին օր. **ԻԹ** ճառընտիր։ Երկրորդ օր. **ԼԵ** ճառընտիր։ Երրորդ օր. **ԺԳ** ճառընտիր։ Զսոցանէ տես ի վեր։

ԱՅԼ ՕՐԻՆԱԿ ՀԱՄԱՌՕՏ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅՆ ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍԻ. — *Բնագիր սորա է* **ԻԳ** *ճառընտիր, զորմէ տես ի վեր։*

ԳԻՒՏ ՆՇԽԱՐԱՑ ՍՐԲՈՅ ԱՌԱՔԵԼՈՅՆ ԲԱՐԹՈՂՈՄԷՈՍԻ. — *Բնագիր սորա է* **ԻԹ** *ճառընտիր։ Առաջին օր* **Բ** *ճառընտիր։ Զսոցանէ եւս տես ի վեր։*

**Է. Ի ՅԻՇԱՏԱԿ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՅՆ ԹՈՎՄԱՅԻ ԹԷ ՈՐՊԷՍ ՅԵՐՈՒՍԱՂԷՄԷ Ի ՀՆԴԻԿՍ ԶՈԳԱՒ**[1]. — *Բնագիր սորա է* **ԻԶ** *ճառընտիր։ Առաջին օր.* **ԻԳ** *ճառընտիր։ Զսոցանէ տես ի վեր։*

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ԹՈՎՄԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՅ ՈՐ ԿԱՏԱՐԵՑԱՒ Ի ՀՆԴԻԿՍ. *Բնագիր սորա է* **ԻԹ** *ճառընտիր, զորմէ տես ի վեր։*

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՅՆ ԹՈՒՄԱՅԻ. — *Բնագիր՝* **Ա** *ճառընտիր, զորմէ տես ի վեր։*

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅԱՂԱԳՍ ԳԻՒՏԻ ՆՇԽԱՐԱՑ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՅՆ ԹՈՎՄԱՅԻ. — *Բնագիր սորա է* **Ա** *ճառընտիր։ Առաջին օր.* **Բ** *ճառընտիր։ Զսոցանէ եւս տես ի վեր։*

ԱՅԼ ՕՐԻՆԱԿ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԹՈՒՄԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ. *Բնագիր՝* **ԻԳ** *ճառընտիր, զորմէ տես ի վեր։*

**Ը. ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՅՆ ԵՒ ԱՒԵՏԱՐԱՆՉԻՆ ՄԱՏԹԷՈՍԻ**[2]. — *Բնագիր սորա է* **ԻԳ**

1. Համմ. Ասորի բնագիր, Ռայթ, Apocr. Acts of the Apostles I, 171-333. II, 146-298։ Յոյն բնագիր, Պոննէ, Supplementum codicis apocryphi, 1883, I. 1-95։ Թիշէնտորֆ, Acta apost. apocr. 190-242։ Նոյն, Apocalypses apocr. 156-161։ Լիփսիուս, Die apokr. Apostelgesch. I, 225-347։ Պուրքիթ, Journal of theological Studies, I, 1900, 280-290. III, 1903, 94-95։

2. Համմ. Թիշէնտորֆ, Acta apost. apocr. 167-189։ Լիփսիուս և Պոննէ, Acta apost. apocr. II, 1898, 217-262։ Լիփսիուս, Die apokr. Apostelgesch. II, 2, 109-141 եւն։

Ճառընտիր։ Առաջին օր. **Ա.** Ճառընտիր։ Երկրորդ օր. **Բ** Ճառընտիր։ Երրորդ օր. **ԼԵ** Ճառընտիր։ Չորրորդ օր. **ԺԸ** Ոսկեփորիկ։ Զորցանէ ամենեցուն տես ի վեր։

**Թ. ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՅԱԿՈԲԱՅ ՏԵԱՌՆ ԵՂԲՕՐՆ.** — Բնագիր սորա է **ԻԳ** Ճառընտիր, զորմէ տես ի վեր։ Գոն և այլ վկայաբանութիւնք առաքելոյս ի ճառընտիրս՝ հատուածք յեկեղ. պատմ. Եւսեբեայ։

**Ժ. ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՅՆ ԹԱԴԷՈՍԻ ՅԱՂԱԳՍ ԱՌԱՋԻՆ ԳԻՒՏԻ ՍՈՒՐԲ ԽԱՉԻՆ**[1]. — Բնագիր սորա է **ԻԹ** Ճառընտիր, զորմէ տես ի վեր։ Առաջին օր. **ԺԳ** Ճառընտիր. թիւ գրչ. 1307. բոլորգիր, թուղթ բամբակեայ, թերի, անթուական. գրիչ մատենիս՝ **Յակոբ**։

ՍՐԲՈՅՆ ԹԱԴԷՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ ՎԱՍՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՄԵՌԵԼՈՑ[2]. — Բնագիր սորա է **Գ** Ճառընտիր. թիւ գրչ. 512. նոտրագիր, գրեալ **յԵրուսաղէմ** ի թուին հայոց ՌՁԶ (1637). գրիչն՝ **Մկրտիչ որդի Ղազարի**. ստացող մատենիս՝ **Զաքարիա** աւագերեց Իլովայ։ Առաջին օր. **ԻԷ** Ճառընտիր. թիւ գրչ. 41. մեծադիր, բոլորգիր երկիւնեան, թուական անյայտ՝ համարի գրեալ ի ԺԴ դարու. թերի ի սկզբանէ. գրիչն՝ **Ղազար**. ստացողք՝ զանազան անձինք. օրինակ իմն **Մխիթար** թագաւոր, որդի **Գուռչիրէկի**, եղբօր որդի **Զաքարիայ** կաթողիկոսի (Աղթամարայ)։ Երկրորդ օր. **ԺԱ** Ճառընտիր. թիւ գրչ. 1352 (տես Բ. հտ. էջ ԺԱ)։ Երրորդ օր. **ԾԵ. Մաշտոց**. թիւ գրչ. 940. բոլորգիր, գրեալ ի **Կոստանդնուպոլիս**՝ ի **Ս. Գէորգ**, ի թուին հայոց ՌԿ (1811). գրիչ մատենիս՝ **Միքայէլ Թոխաթցի**. ստացողն՝ **Յակոբ** արքեպիսկոպոս Քոթանեցի։

**ԺԱ. ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՅՆ ՍԻՄՈՎՆԻ ՆԱԽԱՆՁԱՅՈՅԶԻ.** — Բնագիր վկայաբանութեանս է **Բ** Ճառընտիր, զորմէ տես ի վեր։

1. Համմ. Ղերուբնա, Վենետիկ, 1869, 12-17։
2. Համմ. Անդ, 44։

**ԺԲ. ՅԱՂԱԳՍ ՍՐԲՈՑ ԱՌԱՔԵԼՈՑՆ ԹԷ Ո՛ՅՔ ԷԻՆ ԵՒ ՈՐՊԷՍ ԿՈՉԵՑԱՆ ՅԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ.** — *Բնագիր սորա է* **ԻԳ Ոսկեփորիկ**. *Թիւ գրչ.* 1537. *Նոտրագիր, գրեալ ի* **Վան** *քաղաքի ի սուրբ* **Պօղոս** *առաքելոյ եկեղեցւոջ, ի թուին հայոց ՌՃԽԵ* (1696), *գրիչ մատենիս* **Բուշկանց Տէր Թումա**:

ՅԱՂԱԳՍ ԵՐԿՈՏԱՍԱՆ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՑՆ. — *Բնագիր սորա է* **Զ Ճառընտիր**. *Թիւ գրչ.* 1554. *բոլորգիր և ուրեք երկաթագիր, պակասաւոր յոյժ, յայլ և այլ գրչաց գրեալ ի մի և նոյն ժամանակի, որ անյայտ է. գրեալ հրամանաւ* **Պաւղի**՝ *հօր* **Մաշկեւոր** *անապատին: Առաջին օր.* **Բ Ճառընտիր**, *զորմէ տես ի վեր: Երկրորդ օր.* **Ե Ոսկեփորիկ**. *Թիւ գրչ.* 176. *բոլորգիր. չիք թուական գրչութեան. գրիչն՝* **Աշագ** *կոչի: Երրորդ օր.* **ԻԶ Ճառընտիր**, *զորմէ տես ի վեր:*

ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼՈՑՆ. — *Բնագիր սորա է* **ԻԶ Ճառընտիր**, *զորմէ տես ի վեր:*

ՅԱՂԱԳՍ ԱՌԱՔԵԼՈՑՆ ԹԷ ՈՅՔ ԷԻՆ ԱՄՈՒՍՆԱՑԵԱԼՔ ԵՒ ԹԷ ՈՅՔ ՈՉ. — *Բնագիր սորա է* **Է** *ճառընտիր. Թիւ գրչ.* 822. *բոլորգիր հին, սխալագիր, պակասաւոր ի վերջոյ. չիք թուական գրութեան, այլ միայն ստացողի ուրումն ի յետին ժամանակս, ի թուին հայոց ՊԾԱ* (1402): *Առաջին օր.* **ԻԳ Ոսկեփորիկ**, *զորմէ տես ի վեր: Երկրորդ օր.* **ԻԱ Ոսկեփորիկ**. *Թիւ գրչ.* 245. *բոլորգիր և նոտրագիր խառն, երկսիւն՝ ի վերայ թղթոյ. ժամանակ գրութեանն անյայտ:*

Հ. ՔԵՐՈՎԲԷ ՉՐԱՔԵԱՆ

[illegible]

| | |
|---|---|
| [illegible], 31 | [illegible], 55 |
| [illegible], 91 | [illegible], 17[illegible] |
| [illegible], 27[illegible], 394: | [illegible], 381: |
| [illegible], 431, 432. | [illegible], 435: |
| [illegible], 451. | |

# ԱՆԿԱՆՈՆ ԳԻՐՔ
# ԱՌԱՔԵԼԱԿԱՆՔ

## Ա

### ԳՈՐԾՔ ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑ [1]

Եւ եղեւ յետ ելանելոյն Պաւղոսի ի Գոդոմելեդացւոց[2] կղզւոյն՝ գալ նմա ի կողմանս Իտաղիացւոց[3]. և լուեալ եղեւ Հրէիցն՝ որք էին յերիցագունին Հռոմ[4], եթէ Պաւղոս խնդրէ առ կայսր գալ: Ի տրտմութիւն ապա անկեալք[5] և ի տարակուսանս մեծամեծս, ասեն զմիմեանս. Ո՞չ շատանայ զի զամենայն եղբարս և զծնողս մեր ի Հրէաստանի և ի Սամարիա և ի Պաղեստին նեղեաց, այլ աշա և այսր գայ՝ ի ձեռն[6] ցախութեանց

1. Ա. օր. Գործք Պետրոսի եւ Պաւղոսի եւ վկայութիւն նոցա: Բ. Գ. և Դ. օր. Գործք Պետրոսի եւ Պաւղոսի սրբոց առաքելոցն, թէ զիա՞րդ կատարեցան ի Հռովմ:
2. Ա. օր. ի Գաւդոյ մելիտացւոց: Բ. օր. ի Գոդոյ մելիտացւոց: Գ. օր. ի Գոդոյ մելետացւոց: Դ. օր. ի Գոգոյ (այսպէս ունի միշտ) մետիլինացւոց: Ե. օր. ի Գոդոյ:
3. Ե. օր. Տալիացւոց (այսպէս ունի միշտ):
4. Ա. և Բ. օր. ի Հռովմ: Գ. և Ե. օր. յորոց էին յերիցագունին Հռովմայ: Դ. օր. երիցագունից ի Հռոմ:
5. Բ. օր. ապականեալք: Գ. օր. եղեալ: Ե. օր. չունի:
6. Գ և Ե. օր. չունին ձեռն:

խնդրել ի կայսերէ զմեզ կորուսանել։ Ատեան[1] տալ կամեցին ընդդէմ Պաւղոսի, և բազում յեղանակս արարեալ՝ հաճոյ եղեւ նոցա ամենեցուն անկանել առաջի Ներոնի արքայի, որ թագաւորէր ընդ աւուրն ընդ այնոսիկ, որպէս զի մի թողացուցէ նա զայլ Պաւղոսի ի Հռոմ։ Եւ արարեալ պատրաստութիւն ոչ սակաւ ընծայից, և բարձեալ ընդ ինքեանս[2] հանդերձ պաշտանօք եկին առաջի նորա ասելով. Աղաչեմք զքեզ, բարի թագաւոր, առաքեա յամենայն քաղաքս և ի գաւառս քո բարեպաշտութեանց[3] և հրամայեա, զի Պաւղոս ոմն՝ նեղիչ ամենայն[4] ազգիս մերոյ՝ խնդրէ զայլ այսր առ ի զմեզ կորուսանել. և չար է մեզ, ով թագաւոր մեծ, այս նեղութիւնս զոր ունիմք[5] ի Պետրոսէ։

Լուեալ զայսոսիկ թագաւորն Ներոն, պատասխանի ետ նոցա և ասէ. Լինի ըստ կամաց ձերոց, և գրեմք յամենայն քաղաքս մեր, զի ամենակատարելապէս[6] մի անցցէ ի կողմանս Իտաղիացւոց։ Ետուն կոչել և Սիմոնի մոգի աղաչելով զնա գրել ըստ ասացելոցն, զի մի անցցէ ի կողմանս Իտաղիացւոց[7]։

Այսոցիկ այսպէս եղելոց, ոմանք ի զղջացելոցն[8] քարոզութեամբ Պետրոսի առաքելոյ, առաքեն[9] առ Պաւղոս պատգամաւորս հանդերձ թղթով, որ ունէր այսպէս[10]. Պաւղեայ հաւատարիմ ծառայի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եղբայր Պետրոսի գլխաւորի առաքելոցն[11]։ Լուաք ի վարդապետացն հրէից,

1. Բն. Մատեան այս ամենայն ընդդէմ։ Բ. օր. Ցարեան ամենայնն ընդդէմ։ Գ. օր. Մարտեան։ Վ, Գ և Ե. օր. ամենեքեան։
2. Բ. օր. չունի բարձեալ ընդ ինքեանս։
3. Բ և Ե. օր. չունին բարեպաշտութեանց։
4. Ա և Բ. օր. յաւելուն հայրենի։ Գ. օր. նեղիչ ազգիս մերոյ յամենայնի։
5 Ա և Գ. օր. կրեմք։
6. Ե. օր. չունի ամենակատարելապէս։ Ամենայն օր. մի եկեսցէ։
7. Բ. Գ և Ե. օր. չունին Իտալ... Իտաղիացւոց։
8. Ա. օր. յաւելու մկրտելոց։
9. Գ. օր. յղեցին։
10. Գ և Ե. օր. օրինակ զայս։
11. Ե. օր. չունի եղբայր... առաքելոցն։

որոց են յայսմ մեծագունի քաղաքիս Հռոմ, եթէ խնդրէ կայսր առաքել յամենայն կողմանս[1] գաւառաց, որպէս զի ուրանօր գտցին՝ սպանցին. իսկ մեք հաւատացաք և հաւատամք, եթէ որպէս ոչ բաժանէ Աստուած զերկուս լուսաւորս մեծամեծս՝ զոր արար, նոյնպէս և ոչ ունի բաժանել զձեզ ի միմեանց, այսինքն ոչ զՊաւղոս ի Պետրոսէ, և ոչ զՊետրոս ի Պաւղոսէ. այլպէս հաւատամք ի Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ յոր մկրտեցաքն, թէ արժանի լիցուք ձերում վարդապետութեան սմա:

Ընկալեալ ապա Պաւղոսի զարսն առաքելոյս[2] առ նա հանդերձ թղթով, յանձնեաց մայրի ի քաղաքին, և յաղթութեան եղեալ գոհացաւ զԱստուծոյ: Բացանաւեալ ի Կողմեղեգացւոց, և ոչ երբէք եկն ընդ Աֆրիկէ ի կողմանս Խաղխացւոց, այլ ընդ Սիկիլիա[3] ընթացեալ, մինչև եկն ի Սեռակուսա քաղաք, հանդերձ երեքումբք՝ արամբք առաքելովք ի Հռոմէ առ նա: Եւ անդուստ բացանաւեալ գայ ի Ռիգինուպոլիս[4], և ի Ռիգեանց ի Մեսինին: Եւ կարգեաց անդ եպիսկոպոս Բաքղիոս[5] անուն: Իսկ ելեալ[6] նորա ի Մեսինեայ և բացանաւեալ մինչև ի Գփղիմն, և մնաց անդ գիշեր մի, և աստուստ բացանաւեալ[7] եկն ի քաղաքն կոչեցեալ Պռաղին՝ յերկրորդում աւուրն[8]:

1. Ա. օր. չունի գաւառաց: Բ. օր. յամենայն գաւառս: Գ. օր. յամենայն քաղաքս եւ ի գաւառս:
2. Գ. Դ և Ե. օր. առաքելոյ թղթովն հանդերձ:
3. Ա. օր. Սիկիլիացւոյ: Բն. Սոշղիայ: Ա և Բ. օր. մերձերբոյ մինչեւ:
4. Ա. օր. ի Ռիգինեպողոսիայ, եւ ի Ռիգինեայ ի Մեսինին: Բ. օր. չունի ի Ռիգին... բացանաւեալ: Գ. և Ե. օր. ի Ռիգինեա ի Մեսինին: Գ. օր. ի Ռիգինեպողոսի, եւ ի Ռիգեանցն ի Մեսինին:
5. Ա. օր. Բաքիղոս: Գ. օր. Բաքեղոս: Գ. օր. Բասիլիոս: Ե. օր. Բաքեոս:
6. Գ. օր. ելեալ: Ե. օր. եկեալ: Բն. եղեալ:
7. Ամենայն օր. նաւեալ:
8. Գ և Ե. օր. չունին յերկրորդում աւուրն:

Գէորգորոս նաւապետն, որ ած զնա ի Սելեւկեայ, չարչարակցեալ Պաւղոսի՝ զի զորդի[1] նորա փրկեաց ի մահուանէ, թողեալ զիւր նաւն ի Սելեւկիա՝ զհետ նորա եկն մինչեւ ցՊոնտոս։ Իսկ առ ի յաշակերտացն Պետրոսի զանեալ ոմն՝ ընկալան զՊաւղոս և պաշտէին զնա մեալ առ նոսա, և մեաց առ նոսա[2] չորս ամ՝ թարգմանեալ վասն պատուիրանին կայսեր։ Իսկ ամենայն իշխանքն պահէին զանգիտն առ ի յանել զնա և սպանանել։ Գէորգորոս այս նաւապետն՝ և նա կանգ զլխով[3], պարեգօտն նաւապետականն զգեցեալ և համարձակեալ յառաջնումն աւուրն եկն յառաջ. և կարծեցեալ Հրէիցն թէ Պաւղոս իցէ, կալան զնա և գլխատեցին, և տարեալ զգլուխ նորա առ կայսր։ Եւ կոչեցեալ կայսեր զառաջնորդս Հրէիցն՝ պատմեաց նոցա և ասէ. Ուրախացիք յուրախութիւն մեծ, զի Պաւղոս թշնամին ձեր մեռաւ, և եցոյց նոցա զգլուխն Գէորգորոսի[4]։ Եւ արարեալ ուրախութիւն յաւուր յայնմիկ, որ օր տասն[5] և չորս էր յունիս ամսոյ, զի ամենայն[6] Հրեայքն հաւատացին եթէ Պաւղոս գլխատեցաւ։ Իսկ Պաւղոսի ի Պոնտոս գոլով, և լուեալ եթէ Գէորգորոս գլխատեցաւ փոխանակ նորա, արտասուեցաւ ի տրտմութիւն մեծ. և հայցեալ ի բարձրութենէ[7] երկնից ասաց. Տէր ամենակալ երկնաւոր[8], որ երեւեցար ինձ ամենայն ուրեք[9] ուր և երթեալ շրջայ վասն միածնի քո բանի՝ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, առաքեա քաղաքիս այսմիկ, և հան ի սմանէ զամենայն հաւատա-

1. Բն. զոգի։
2. Բն. չունի և մեաց առ նոսա։
3. Բն. գալեզ։ Ա և Գ. օր. գալով։
4. Բն. չունի և եցոյց նոցա զգլուխն Գէորգորոսի։
5. Գ. և Ե. օր. տասն։
6. Ե. օր. չունի Զի ամենայն (Ա, Բ, Գ և Դ. օր. ի բացեյեր աք) ... գլխատեցաւ ։
7. Ա և Գ. օր. ի բարձունս երկնից։ Բ. օր. ի բարձունս։ Ե. օր. յերկինս։
8. Բ. օր. չունի Տէր ամենակալ երկնաւոր։
9. Ամենայն օր. յամենայն տեղիս։ Ե. օր. չունի ուր և ... Քրիստոսի։

ցեալքս ի քեզ, և զհետ երթեալս բանի քո [1]։ Եւ ասէ ցնոսա. Եկայք զհետ իմ։ Եւ ելեալ ի Ֆռանգեաց հանդերձ հաւատացելովք բանին [2], եկին ի տեղին կոչեցեալ Բարամ [3]։ Եւ հայեցեալք աչօք իրեանց ամենեքին, տեսին զքաղաքն զայն կոչեցեալ Ֆռանգիս, ընկղմեալ ի խորութիւն ծովուն իբրև գիրկ մի. և անդ է մինչև ցայսօր [4] ի յիշատակ ի ներքոյ ծովուն։ Իսկ ելեալ Նորա ի Բասեայ եկն ի Գալիայ, և անդ ուսուցանէր զբանն Աստուծոյ, քանզի մնաց անդ զերիս ամսս ի տուն [5] Եղասմու [6], զոր աշակերտ Պետրոս ուսուցանել զբանն Աստուծոյ [7]։ Եւ ելեալ ի Գալիայ եկն ի բերդ [8] ասացեալ Տատակինաս, և մնաց անդ ամսս եօթն ի տուն Կեսասու տարկուացի՝ զոր ձեռնադրեաց Պետրոս. անդուստ նաւեալ ընդ գետն եկն ի տեղին կոչեցեալ Տաննաիս [9]։ Իսկ ազգեալքն ի քաղաքէն Ֆռանգիաց, որ ընկղմեցան, պատմեցին կայսեր ի Հռոմ, եթէ Ֆռանգիս ընկղմեցաւ։ Եւ ի տրտմութեան մեծի եղև թագաւորն, հրամայեաց կոչել զառաջնորդն Հրէից և ասէ ցնոսա. Ահա զի հնազանդութիւն արարի ձեզ և զխառնեցի զՊաւղոս, վասն այնորիկ ընկղմեցաւ քաղաքն [10]։ Եւ առաջնորդք Հրէիցն ասեն ցկայսր. Բարեպաշտազոյն թագաւոր, միթէ ո՞չ ասացաք քեզ, եթէ զամենայն աշխարհն արևելից նա խռովեաց և զհարան մեր. լաւագոյն էր զի մի քաղաք կորեաւ, և մի թագաւորութիւնդ քո, քանզի զայս կրել ունէր և Հռոմ։ Եւ մխիթարեցաւ թագաւորն լուեալ զբանս նոցա։

1. Բն. յաւելու իմ։ Գ. օր. եւ ճետեւեալս բան բանի քում։
2. Ա. Բ և Գ. օր. բանին Աստուծոյ։ Գ և Ե. օր. ճաւատացելովքն որ ընդ նմա։
3. Ա. օր. Բաւաս։ Բ. օր. Բայիաս։ Գ և Ե. օր. Բարամ։ Դ. օր. Բացիամ։
4. Ամենայն օր. յաւուրս յայս։
5. Ե. օր. չունի ի տան . . . Տանեսիս։
6. Բ. օր. Եղասոու։ Գ. օր. Ոսամսոյ։
7. Բն. կենաց։
8. Ա. օր. Պերգէ։ Բ. օր. ի գետ։
9. Ա. օր. Մանեսիս։
10 Բն. յաւելու իմ։

Եւ Պաւղոս մնաց ի Վայրս Տարեաննեայ[1] աւուրս չորս. և եկեալ անդուստ եկն յԱպփուփառն կոչեցեալ և նրն-ջեաց անդ: Եւ տեսեալ զմի նստեալ յաթոռ ակի, և չուրջ կայր զնովաւ բազմութիւնք սեւոց[2] ասելով ցնա. Ես արարի այսօր ապանանել որդւոյ զՀայր. և այլ ամն ասէր. Եւ ես արարի անկանել տան և ապանանել զծնօղսն Հանդերձ որդւովք. այլք ասպ ա՛յլ ինչ պատմէին նմա չարագոյն բազում. և այլ ամն եկեալ պատմեաց նմա, եթէ Ես յարգարեցի[3] զեպիսկոպոսն Ցորնադիոս, զոր ձեռնադրեաց Պետրոս, զի ընդ[4] զխաւարի Հաւատաւորացն Ցուլիաննեայ նրնջեացէ: Եւ[5] լուեալ զայս ամենայն ի ննջելն[6] ի նոյն ինքն յԱպփուփառն, փութապէս[7] տարաքեաց ի Հռովմ յայնցանէ որ ընդ[8] իւրն էին ի Պռճոզիայ, առ եպիսկոպոսն Ցորնադիոս, ասելով զայս նմա, թէ զինչ Հանդերձեալ իցէ գործել: Եւ ընթացեալ ի վաղուեան աւուրն Ցորնադիոս ընկէց զինքն յոտն Պետրոսի լալով և ողբալով և խոստովանելով[9], եթէ առ փոքր մի կործանել պատրաստեալ[10] էի. և պատմեաց նմա զամենայն իրսն և ասաց. Հաւատամ եթէ նա է՝ որում միայիրն, լուսաւորն Պաւղոս: Իսկ Պետրոս առ նա ասէ. Զի՞րդ Հնար է նմա լինել՝ վախճանելով[11] նմա: Եւ Ցորնադիոս էառ[12] զաստքեայն առ նա ի Պաւղոսէ և տարաւ առ Պետրոս[13]. և նա պատմեաց նմա, եթէ կենդանի է և գայ և է

1. Գ և Ե. օր. Սատրեն-նայ: Ե. օր. չունի աւուրս չորս. և եկեալ անդուստ:
2. Ա. օր. սեւ կնոց:
3. Գ և Ե. օր. յորդորեցի զեպիսկոպոսն (նաև Բ. օր.) Բենադիոս: Գ. օր. յարգեցի:
4. Բն. չունի ընդ: Ա և Ե. օր. չունին Ցուլիաննեայ:
5. Գ. օր. յաւելու Պաւղոս:
6. Ա. Բ և Գ. օր. ննջեալ: Գ. օր. ննջեաց: Ե. օր. չունի:
7. Ա. Բ և Գ. օր. յաւելուն առժամայն: Գ. օր. ապա: Ե. օր. չունի:
8. Ամենայն օր. զնա էին:
9. Բ. օր. չունի ողբալով և խոստովանելով:
10. Գ. օր. Հանդերձեալ:
11. Բն. զի՞րդ նմա Հնար է լինելով նմա (Գ. օր. նորա) Բ. օր. բանզի վախճանելով նմա:
12. Գ. օր. ած:
13. Բն. առ նա:

յԱպխուփառն. և գոհացաւ Պետրոս և փառաւորեաց զԱստուած: Յայնժամ կոչեցեալ զհաւատացեալ աշակերտսն իւր՝ տարեաց զնոսա առ Պաւղոս մինչև ցՏրրոս Տարենտինթեայ [1], որ ի Հռոմէ հեռի է մղոնաւք երեսուն և ութ [2]. և տեսեալ զնոսա Պաւղոս գոհացաւ զԱստուծոյ և առ քաջալերս: Եւ գնացեալ անդուստ՝ եկեն ի քաղաքին [3] կոչեցելոյ Ափիկիան [4]: Հռչակ ապա եղև ի Հռոմ, եթէ Պաւղոս՝ եղբայր Պետրոսի՝ կենդանի է և գայ, և հաւատացեալքն ուրախացան յուրախութիւն մեծ: Իսկ Հրէիցն եղև խռովութիւն մեծ [5], և երթեալ առ Սիմոն մոգ աղաչէին զնա ասելով. Ցանո՛ թագաւորին թէ ոչ մեռաւ Պաւղոս, այլ կենդանի է [6] և եկն: Եւ Սիմոն ցՀրեայսն ասէ. Ո՞ր ապա էր գլուխն որ բերին առ կայսր ի Պոռոզէ, միթէ և նա ո՞չ իցէ կունդ:

Իսկ եկեալ Պաւղոսի ի Հռոմ, երկիւղ մեծ անկաւ ի վերայ [7] Հրէիցն. և եկեալք առ նա աղաչէին զնա ասելով. Ի հաւատս յորում ծնեալ ես, այնմիկ մրճմինդիր լեր. քանզի ոչ է իրաւացի Եբրայեցի գոլով եւ առ ի յԵբրայեցւոց. վարդապետ ասել զքեզ հեթանոսաց եւ ջատագով անթլփատութեան. եւ դու ինքն թլփատեալ ես, և զթլփատութեանն արհամարհես [8] զհաւատս. արդ յորժամ տեսցես զՊետրոս, ընդդէմ ջանասջիր [9] նորա վարդապետութեանն, զի [10] լուեցին մերոց օրինացս պահպանութիւն անգործ եղեալ: Եւ պատասխանեալ Պաւղոսի

1. Ա և Բ. օր. ցՏոփրուստարենտինեայ: Գ. օր. ցՏոփրովն բատարենտենա: Դ. օր. ցՏոփի բուսնեայ բենտինեայ: Ե. օր. չունի:
2. Բ. օր. մղոնովք ԼԸ: Ա. օր. մղոնաւք:
3. Դ. օր. ի Ալտեի քաղաք:
4. Ա. Բ և Գ. օր. Արտկիան: Դ. օր. Նարիկիան:
5. Բ և Գ. օր. չունին եղև խռովութիւն մեծ: Դ. օր. յաւելու ասատկայս:
6. Բն. յաւելու եւ գայ:
7. Բն. յաւելու նոցա եւ:
8. Դ. օր. յաւելու զօրէն եւ:
9. Բ. օր. ընդ մեզ անցանիցիր:
10. Գ և Ե. օր. յաւելուն մի լուեցին:

առէ ցնոսա. Եթէ վարդապետութիւն նորա ճըշմարիտ առ հեբրայեցւոց գրոց [1] հզօրացեալ հանդիպի, վայելուչ է ամենեցուն մեզ հաւանել [2] նմա: Եւ զնմանս այսոցիկ [3] Պաւղոսի ասացեալ: Ծանուցեալ Պետրոսի, եթէ Պաւղոս եկն ի Հռոմ, ուրախացաւ յուրախութիւն մեծ, և նոյնժամայն յարուցեալ գնաց առ նա, և տեսեալք զմիմեանս յուրախութենէն լացին, և բազում ժամս գիրկս արկեալ զմիմեամբք արտասուօք թացեալք լինէին [4]: Իբրև Պաւղոս զամենայն զգործս իւր և զպատճառն պատմեաց Պետրոսի. և կամ թէ որպէս ի նաւին աշխատեցաւ, և Պետրոս ասաց նմա զինչ կրեաց ի Սիմոնէ մոգէ, և զամենայն գործեցեալս նորա. և զայս ասացեալ գնաց [5] առ երեկոյն: Եւ առ վաղիւն եկեալ գտանէ բազմութիւն Հրէից առ աթոռոյն Պաւղոսի. և էր ի մէջ Հրէիցն և քրիստոնէիցն, որ առ ի հեթանոսաց, խռովութիւն մեծ: Քանզի Հրեայքն ասէին. Մեք ազգ ունիմք ընտիր, քահանայութիւն, թագաւորութիւն, և ցեղ եմք Աբրահամու, Սահակայ, Յակոբայ եւ ամենայն մարգարէիցն, ընդ որս խօսեցաւ Աստուած, որոց եցոյց զիւր զօրութիւն [6] և զխորհուրդն և զսքանչելիս մեծամեծս. դուք որք ի հեթանոսաց՝ ոչ ինչ մեծագոյն գոյ [7] ի տոհմս ձեր, բայց միայն ի կռոց և ի զարշելեաց և ի դրօշելոց [8] պղծեալք եղէք: Եւ զայսոսիկ և զսոյն նմանս ասացեալ Հրէիցն, պատասխանեցին որք ի հեթանոսացն, ասելով. Մեք իբրև լուաք զճշմարտութիւնն, վաղվաղակի հետևեցաք նմա, թողեալ զմոլորութիւնն մեր. իսկ դուք և զհայրենին ծանուցեալ զօրութիւն, և զմարգարէա-

1. Բն. և Բ. օր. չունին գրոց:
2. Բ. օր. ճանդիպել:
3. Ա. օր. Եւ զայսոսիկ: Գ. օր. Եւ զայս: Դ. օր. Եւ ցնմանս Պաւղոսի զայս:
4. Բն. թանային: Ե. օր. չունի:
5. Բն. գնացին:
6. Ամենայն օր. չունին զօրութիւն:
7. Ա. Բ. Գ. և Դ. օր. չունին գոյ:
8. Բն. չունի ի դրօշելոց: Ե. օր. ի դրոշմելոյ:

կան տեսեալ զնշանսն, և օրէնս ընկալեալք, և ընդ ծով իբրև[1] ընդ ցամաք անցեալ, և զԹշնամիս ձեր ընկղմեալ տեսեալ, և սիւն հրոյ և ամպոյ լուսով[2] ձեզ յերկնից երևեալ ի գիշերի, և մանանայ ձեզ յերկնից տուեալ, և ի վիմէ ջուր բղխեալ. յետ այսր ամենայնի կուռս ձեզ որթ ստացայք և երկրպագեալք դրօշելոյ. իսկ մեր ոչինչ նշանս տեսեալ, հաւատացաք զնա գոլ Աստուած, զոր դուք Թողեալք անհաւատք եղէք: Եւ զայսուիկ և զայսպիսիս նոցա յաղթահարելով[3], ասաց առաքեալն, ոչ պէտս ունել նոցա այսպիսի ի մէջ իւրեանց հակառակութեանց, այլ զայսպիսի մեծութիւն ընդունել, զի կատարեաց Աստուած զխոստումն իւր զոր խոստացաւ Աբրահամու հօր մերում, Թէ ի զաւակէ նորա ժառանգեսցէ[4] զամենայն հեթանոսս. "քանզի ոչ է ակնառութիւն առաջի[5] Աստուծոյ": Զայսուիկ Պաւղոսի առելով, համգարանեցան որք ի հրէից և որք առ ի հեթանոսաց. այլ իշխանք հրէիցն ի վերայ եկեալ Պետրոսի[6]. իսկ նա առ ի յանդիմանութիւն նոցա, յորժամ[7] զժողովարանս նոցա ի բաց մերժեաց[8], ասաց. Լուարուք եղբարք Հոգւոյն սրբոյ, զի ի ձեռն մարգարէին[9] Դաւթայ հրաւիրեալք եղէք, եթէ ի պտղոյ որովայնի նորա նստելոց[10] է յաթոռ նորա. զորմէ Հայր ասաց, Որդի իմ ես դու, և ես այսօր ծնայ զքեզ. խաչեցին հրեայքն զնա նախանձու և քահանայապետքն, զի կատարեսցի աշխարհի փրկութիւն. Թոյլ ետ այսմ ամենայնի յինքեան կրել[11]: Արդ որպէս ի կողէն Ադամայ շինեցաւ Եւա, այսպէս և ի կողէն Քրիստոսի շինեցաւ եկեղեցի, որ

1. Ա. և Գ. օր. չունին իբրև ընդ: Դ. և Ե. օր. ծով եւ ընդ:
2. Ա. Բ. և Գ. օր. չունին լուսով: Դ. և Ե. օր. ամպ լուսոյ:
3. Բ. օր. յաղթահարելով: Գ. օր. յաղթահարել սիրով:
4. Բն. ժառանգեսցեն:
5. Ա. օր. առ ի յԱստուծոյ:
6. Դ. և Ե. օր. Պաւղոսի:
7. Գ. օր. յարաժամ:
8. Բն. մերժեալ:
9. Ա. օր. ձայնապետին Դաւթի: Բ. օր. ձայնապետին:
10. Ա. Բ և Գ. օր. դնելոց:
11. Ա և Գ. օր. յինքն կրել:

ոչ ունի տրտում և ոչ ապի: Զատ այժմ երաց Աստուած դաւան որդւոց [1] Աբրահամու, Սահակայ, և Յակոբայ, լինել նոցա ի հաւատս եկեղեցւոյ, և մի յանհաւատութիւն ժողովրդանոցացն. արդ՝ զարձարուք և մտէք յուրախութիւն հօրն ձերում Աբրահամու, զի զխոստացեալսն նմա կատարեաց Աստուած. ուստի և մարգարէն ասաց. Երդուաւ Տէր և ոչ եւս զղջասցի [2], զի դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի, և Տէր ընդ աջմէ քումմէ: Քանզի քահանայ ի խաչին եղեւ՝ բերելով ողջակէզ զիւր մարմինն և զարիւն, վասն ամենայն աշխարհի ի զենումն մատոյց [3]:

Զայսոսիկ և զայլս նմանս առնելով Պետրոսի [4], յոլով ժողովրդեան մասն հաւատոյ: Դէպ եղեւ կնոջ Ներոնի՝ Պիրեայ, և Ագրիպպեայ եպարքոսին կինն այնպէս հաւատալ նոցա, որպէս զի ելանել նոցա յիւրեանց արանց անկողնոցն ի ձեռն Պետրոսի վարդապետութեանն: Այնուհետեւ բազումք արհամարհել զզինուորութիւնս իւրեանց յարեցան յԱստուած [5] թողեալ զկեանս աշխարհի:

Եկեալ ապա Սիմոն, նախանձու շարժեալ, յարուցանէր ամբոխ. և սկսաւ վասն Պետրոսի ասել չարիս, մոգ և խաբեբայ լինել նմա: Եւ հաւատացին նմա որք զնշանս և զքանչելիս [6] նորա տեսեալ էին: Քանզի առնէր (օ)ձի [7] պղնձոյ շարժել յինքենէ, և քարեղէն անդրեաց ծիծաղել և շարժել և ընթանալ. և ինքն յանկարծակի յօդս համբառնայր [8] յանդի-

1. Բն. յաւելու մարդկան:
2. Ամենայն օր. զղջացաւ:
3. Գ. օր. մատնեաց:
4. Բ. Գ և Ե. օր. Պաւղոսի:
5. Ամենայն օր. յաւելուն որպէս զի յանկողնոյ (Գ և Ե. օր. ի դրանէ) բազմաւորին զալ առ նա ոմանց եւ լինել քրիստոնեայս. եւ ոչ երբէք կամեցան դառնալ ի զինուորութիւն իւրեանց. եւ ոչ ի պալատան:
6. Բ. օր. զարուեստս:
7. Ա. օր. առձի պղնձոյ չարժել զինքն: Բ. օր. առձի պղծոյ չարժել զինքն: Գ և Ե. օր. առձ պղնձի եւ չարժիլ նմա: Դ. օր. առձի պղնձոյ եւ չարժել զինքն:
8. Ա և Բ. օր. վերանայր:

ման ամենեցուն[1]: Իսկ Պետրոս զհիւանդս բժշկէր բանիւ, կուրաց տեսանել աղօթիւք շնորհէր, հրամանաւ զդեւս փախստականս առնէր, և զմեռեալս յարուցանէր. և ասէր առ ժողովուրդսն, զի մի միայն ի Սիմոնէ խաբիցիք փախչելով, այլ[2] ի յայտնի ցուցակութեանց ինչ նորա. զի մի երեւիցիք սատանայի ծառայեալք: Եւ այնպէս եղեւ, զի ամենայն երկիւղածաց արանց գարշել ի Սիմոնէ, մոգ և անմաքուր զնա կարդալ. իսկ որ ի Սիմոնն յարեալք էին, զՊետրոս ասէին մոգ:

Մինչ նոքա էին ընդ Սիմոնի, բանն առ Ներոն կայսր հասանէր. և խնդրեաց[3] զՍիմոն առ ինքն ածել: Որոյ մտեալ եկաց առաջի նորա, և սկսաւ յանկարծակի ի կերպարանս փոխել, որպէս զի լինել նորա յանկարծակի մանուկ, և յետ փոքր միոյ ծեր և ապա երիտասարդ, ունելով սպասաւոր զսատանայ: Զոր տեսեալ Ներոնի՝ ճշմարտապէս զնա որդի Աստուծոյ կարծեաց: Իսկ առաքեալն Պետրոս ուսուցանէր, սուտ և մոգ, գարշելի և անօրէն, ապստամբ և յամենայն հաւատոյ Աստուծոյ անպիտան զնա լինել[4]: Յայնժամ մտեալ Սիմոն առ Ներոն[5] ասաց. Լուր, թագաւոր, եթէ ոչ զարդ զայդանիկ հալածես աստուստ, ոչ կարասցէ կալ թագաւորութիւնդ քո: Յայնժամ Ներոն լցեալ[6] հօգովք, հրամայեաց զնոսա փութով առ ինքն ածել: Եւ ի միումն աւուր[7] նստեալ առ Ներոնի Պետրոս և Պաւղոս, Քրիստոսի առաքեալքն, Սիմոն ասաց. Սոքա են աշակերտք Նազովրեցւոյն, զորմէ ասացին ոչ[8] բարւոք գոլ, ժողովուրդք Հրէից: Ներոն ասաց. Ո՞վ է Նազովրեցին: Սիմոն ասաց. Է քաղաք[9] ի Հրէաստանի, որ հանապազ հակառակ ձեր եղև,

1. Ամենայն օր. եւցա:
2. Ա և Բ. օր. այլ եւ ոչ:
3. Ա. Բ և Գ. օր. հրամայեաց:
4. ԲՆ. լեալ:
5. ԲՆ. չունի առ Ներոնն:
6. Գ և Ե. օր. զայրացեալ հրամայեաց:
7. ԲՆ. չունի աւուր: Ա և Գ. օր. մտեալ:
8. ԲՆ. Ա. Գ և Ե. օր չունին ոչ:
9. Բ. Գ և Ե. օր. ի քաղաքէ:

Նաւարկեթ կոչեմք , անդուստ մարգարէս գոյա եղեալ է :

Յայնժամ Պետրոս առ Սիմոն ասաց. Աքանչանամ թէ որով ամօթով առաջի թագաւորիդ շաղփաղփիս, և համարիս թէ ի ձեռն քո մոգական արուեստից կարասցես յաղթել[1] Քրիստոսի աշակերտացն: Ներոնն ասաց. Ո՞վ է Քրիստոսն: Պետրոս ասաց. Եթէ կամեսցիս գիտել ո՞վ է Քրիստոսն, ով թագաւոր, և զգործեցեալսն առ ի Հրէից, ա՛ռ[2] զգիրն Պոնտացւոյ Պիղատոսի առ Կղաւդէոս առաքեալ ի Հրէաստանէ, և այսպէս գիտասցես զամենայնն: Իսկ Ներոնն հրամայեաց բերել զնա, և առաջի իւր ընթեռնուլ, որ ունէր այսպէս[3]. Պոնտոս Պիղատոս, Կղաւդեայ խնդալ: Դժնդակ իրք պատահեալ[4], զորս գնաքին ես յայտնեմ քեզ: Հրեայքն յաղագս նախանձու իւրեանց և իւրեանց դժնեայ դատաստանաւն չարչարեցին զնա ընդվայր, վասն որոյ պատուէր ունէին հարքն նոցա՝ եթէ առաքէ առ նոսա Աստուած զսուրբն իւր յերկնից, որ և թագաւոր նոցա կոչեսցի[5]. զսա խոստացեալ[6] ի ձեռն կուսի առաքել յերկիր. սա այսպէս յիմում[7] դատաւորութեանն եկն ի Հրէաստան: Եւ տեսեալ զնա զկոյրս լուսաւորեալ, զբորոտս սրբեալ[8], զանդամալոյծս բժշկեալ[9], զդեւս առ ի մարդկանէ հալածեալ, զմեռեալս յարուցեալ, հողմոց սաստեալ, ի վերայ ալեաց ծովու[10] գնացեալ, և բազում և այլ ինչ արարեալ, որպէս զի ամենայն[11] Հրէիցն որդի ասել զնա Աստուծոյ: Եւ նախանձու քահանայապետքն ընդդէմ

1. Ամենայն օր. չունիս կարասցես, զնեն յաղթեսցես:
2. Բն. եւ:
3. Գ և Ե. օր. աշխհնակ գայս:
4. Բն. պատահեալ: Գ և Ե. օր. յաւելուն յիմում դատաւորութեանս գործ եւ զնոսին: Ա և Բ. օր. պատմեմ:
5. Բն. կոչի:
6. Բն. խոստովանեալ:
7. Բն. յիւրում:
8. Ա. Գ և Դ. օր. մաքրեալ.
9. Գ և Ե. օր. հաստատեալ:
10. Բն. չունի ծովու:
11. Ա. Բ և Գ. օր. յաւելուն ժողովրդեանն:

նորա չարժեալ, կալան և ինձ զնա մատնեցին. և այլ ընդ այլոյ առեալ [1] մոլորեցուցիչ զնա ասելով, և ընդդէմ օրինաց Նմա [2] գործեալ: Նա հաւատացեալ այսոցիկ այսպէս լինել, տանջեալ զնա մատնեցի կամաց նոցա: Որոց խաչեալ զնա և թաղեալ, պահապանս կացուցին ի վերայ նորա: Իսկ զօրականաց իմոց պահելով զնա, յերրորդ աւուրն յարեաւ: Այլ այնքան բորբոքեցաւ չարութիւն Հրէիցն՝ որպէս զի տալ արծաթ զօրականացն և ասացին. "Ասասջիք եթէ աշակերտք նորա (զմարմին նորա) եկեալ [3] գողացան: Այլ նոքա առեալ զարծաթն, և լռել [4] զեղեալսն ոչ կարացեալ, քանզի և նոքա վկայեցին՝ յարուցեալ տեսանելով զնա: Զայսպիսի վասն այնորիկ ծանուցի, զի մի ոք այլապէս տեսցէ [5], և կարծիցես հաւատալ Հրէից ստաբանութեանց [6]:

Ընթերցեալ [7] ապա այնուհետև թղթոյն, ասաց Ներոն. Պետրէ, ո՞րպէս այս ամենայն վասն այնորիկ գործեցան [8]: Պետրոս ասաց. Այսպէս ճշմարտապէս, Թագաւոր, այլ Սիմոն այս լի ստութեամբ և խաբէութեամբ [9] գոյ, կարծէ [10] զինքն լինել Աստուած. իսկ Տէրն մերոյ Յիսուսի Քրիստոսի է ամենայն ստուգութիւն յաղթութեան. վասն մարդկան փրկութեան հաճեցաւ ի ձեռն աստուածային իւրոյ տնօրէնութեանն [11] ընդ մարդկան շրջել: Սիմոն ասաց. Ոչ համբերեցից քեզ ի վերայ բազմաց

1. Բ. օր. ուսեալք:
2. Բն. նոցա:
3. Բն. յաւելու եկեալ:
4. Գ և Ե. օր. առել: Բն. լռել:
5. Բն. այսպէս տեսցէ: Բ. օր. այլապէս ասիցէ:
6. Բն. ստամբակութեանց:
7. Ա. Բ և Գ. օր. Ընթերցեալ թղթոյն:
8. Ա. Բ և Գ. օր. Ասա Պետրէ: Գ. օր. այս ամենայն գործեցա՞ւ: Բն. գրեցան:
9. Բն. խաբամանկութեամբ:
10. Գ. օր. որ կարծիս տայ:
11. Բ. Գ և Ե. օր. տնօրէնութեանն:

հայհոյութեանց[1] այդոցիկ, այլ հրամայեմ հրեշտակաց իմոց, որպէս զի եկեալ վրէժս խնդրեսցեն զիմ ի քէն: Պետրոս ասաց. Ոչ երկնչիմ ի զիւական[2] քոց հրեշտակաց. նոքա մանաւանդ յինէն երկիցեն զօրութեամբ Տեառն իմոյ Յիսուսի Քրիստոսի: Ներոն ասաց. Ո՞չ երկնչիս ի Սիմոնէ, Պետրէ, և որ ի գմա աստուածային իրողութեանցն հաստատեալ[3] է: Պետրոս ասաց. Եթէ ի գմա է աստուածութիւնն՝ որ քննէ զխորս սրտից, այժմ ապա ասասցէ Սիմոն եթէ զի՞նչ խորհիմ ես, և կամ թէ որպիսի՞ք անկան ի խորհուրդս իմ, առ ի ստոյգ ցուցանելոյ զգա այնոցիկ զորս ապականեացն. զի մի՛ յանդըգնեսցի ասել[4], թէ զի՞նչ խորհիմ: Ներոն ասաց. Մատուցեալ այսր առա՛ ինձ եթէ զի՞նչ խորհիս: Եւ Պետրոս երթեալ յառաջ՝ մերձ եկաց առ Ներոն և ասաց. Հրամայեա բերել հաց գարեղէն գաղտնի և տալ ցիս: Իսկ իբրև հրամայեաց բերել և գաղտնի ետ ցՊետրոս, ասաց Պետրոս. Ասասցէ Սիմոն այժմ զի՞նչ խորհեցաք, և զի՞նչ ասացեալք և եղեալք: Սիմոն ասաց. Զայս գիտեա, թագաւոր, եթէ զխորհուրդ մարդկան ոչ ոք կարէ գիտել, բայց միայն Աստուած: Պետրոս ասաց. Դու ապա որ ասես զքեզ լինել որդի Աստուծոյ, առա՛ այժմիկ զի՞նչ խորհեցայ և կամ զի՞նչ արարի, զգաղտնիս իմ յայտնեայ: Եւ էր Պետրոս օրհնեալ[5] զառեալ գարեղէն հացն, և բեկեալ աջոն, և ահեկուն ի ձեռս իւր ունէր: Յայնժամ Սիմոն ոչ կարացեալ ասել զառաքելոյն գաղտնիսն, ասէ. Եկեսցեն շունք մեծամեծք և զիմեսցեն ի Պետրոս: Իսկ Պետրոս տարածեաց զձեռսն յաղօթս և եցոյց շանցն զհացն զոր օրհնեաց. զոր տեսեալ շանցն[6] ոչ եւս երևեցան: Յայնժամ Պետրոս ասէ ցՆերոն. Ահա թագաւոր ցուցի քեզ մոգ և խաբեբայ զՍիմոն լինել՝ ոչ բանիւք, այլ գոր-

1. Գ և Ե. օր. յաւելուն հայհոյութեանց:
2. Բն. ի դիւաց:
3. Ա. օր. գործելոց:
4. Գ և Ե. օր. խաբել:
5. Գ. օր. յօրհնել զգարեղէն:
6. Բ և Գ. օր. շունքն զոր տեսեալ շանցն:

ծովք. զի ոչ հրեշտակս ունէր ընդդէմ իմ առաքել՝ զոր էառն՝ որպէս զի ցուցցէ զինքն զոլ Աստուած, ոչ աստուածային ունել հրեշտակս, այլ չնական գեւս: Յայնժամ Ներոփէ առ Սիմոփէ[1] ասաց. Զի՞ է Սիմոփէ, կարծեմ պարտեալ եղեր: Սիմոփէ ասաց. Այսպէս ի Հռէատանի և ի Կեսարիա[2] այսպիսիս ինձ[3] արար: Յայնժամ Ներոփէ ասաց ցՊաւղոս. Դու ընդէ՞ր ոչինչ ասես[4], Պաւղէ: Պատասխանեաց Պաւղոս և ասէ. Գիտեա՛ զայս, ո՛վ թագաւոր, զի թէ արձակես զմոգս զայս՝ այսպիսի մեծամեծս գործել յաշխարհի քում, ամէն չարիք թագաւորութեան քում հակառակ՝ ի խռովութիւն հասանանեալք: Եւ Ներոփէ զՍիմոփէ ասէ. Զի՞նչ ասես դու Սիմոփէ առ այսոսիկ: Սիմոփէ ասաց. Ես եթէ ոչ յայտնեցից զիս և ցուցից լինել աստուած, ոչ ոք ինձ զպատշաճ տանի պաշտօն: Ներոփէ ասաց. Եւ արդ զի՞ յամես և ոչ ցուցանես զքեզ, որպէս զի սոքա տանջեսցին: Յայնժամ ասէ Սիմոփէ. Հրամայեա՛ աշտարակ շինել ի փայտից բարձր, և ելեալ ի վերայ նորա կոչեցից զհրեշտակս իմ, զի ամենեցունց հայելով ի վեր, տարցին զիս ի վեր առ հայր իմ յերկինս. զայս դոցա ոչ կարացեալ առնել, յանդիմանեսցին անխրատ մարդիկ զդոսա լինել: Իսկ Ներոփէ ցՊետրոս ասաց. Լուա՞ր Պետրէ առ ի Սիմոփէէ զասացեալսդ. յայդմանէ[5] երեւեսցի առ, եթէ զօրութիւն[6] ունի այդքան առ, է աստուած ապա Սիմոփէ: Պետրոս ապա ասաց. Հաստատեսցի թագաւոր[7], եթէ կամեսցիս զիտել[8], եթէ լի՛ է զիւօք: Ներոփէ ասաց. Զի՞նչ ինչ[9] բանս ընդ մայր ծախէք, եթէ ի մաղուեան աւուրն փոր-

1. Ա. օր. չունի Յայնժամ... արար: Գ. օր. Պետրոս:
2. Բ. օր. Սամարիա:
3. Բն. ինէ: Գ. օր. չունի Սիմոփէ... արար:
4. Գ. օր. խօսիս:
5. Գ և Ե. օր. յանդիման:
6. Բն. զաւր:
7. Բն. չունի թագաւոր:
8. Գ և Ե. օր. յաւելուն զՍիմոնէ:
9. Ա. Գ և Ե օր. ինձ: Բ. օր. զի՞ ոչինչ:

ձեռցէ[1] զձեզ: Սիմոնին ասաց, Եթէ ոչ հաւատաս, բարի[2] Թագաւոր, եթէ մեծ ոչ եմ, հրամանաւ գլխոյ, առել զնա ի անդուոջ խաւարին եւ անդ թող[3] զնա. եւ եթէ ոչ յերիր աւուր յարեայց, գիտես զնա մոգ գոլ. իսկ եթէ յարեայց, ծանիր զնա որդի Աստուծոյ գոլ: Զայս հրամայեալ կայսեր լինել: Իսկ Նա խաւարային իբրով մոգական արուեստին արար խոյ զի գլխատեսցեն: Այսպէս[4] ապա խոյ Սիմոնին երեւեցաւ ի խաւարի. քանզի չոշափեաց որ գլխատեացն զնա, եւ տարեալ ի լոյս զգլուխն՝ եգիտ գլուխ խոյի. այլ ոչ ինչ Թագաւորին ասել համարձակեցաւ, զի մի ամաչեսցէ զնա: Աստուստ ապա ասէր Սիմոնին, յերրորդ աւուր յառնել[5] իւր. զի զգլուխ խոյին զանգաման եգիտ եւ Թաղոյց. իսկ արիւնն անդանօր մածեալ կայր: Եւ յաւուրն երրորդի եցոյց զինքն Ներոնին, ասելով գնա. Արա[6] մաքրել զարիւն իմ որ հեղաւ, զի ահա գլխատեալ սպակս եւ յանձն առի, եւ յերրորդ աւուր յարեայ: Եւ զարձեալ ասաց զՆերոնին. Ի վաղուեան աւուր զմեզ փորձեսցես: Դարձաւ Ներոնն առ Պաւղոս եւ ասէ. Դու Պաւղոս ո՞չ ինչ բարբառիս: Որ եւ ասաց. Այսպիսի բանս[7] մի կամիր լսել, ով Թագաւոր, զի խաբեբայ եւ մոգ է եւ ի կորուստ կամի յուղարկել զհոգի[8] եւ զթագաւորութիւն քո: Քանզի զոր օրինակ եգիպտացիքն Յանէսն եւ Յամբրէսն մոլորեցուցին զփարաւոնին եւ զզօրս[9] նորա՝ մինչեւ ընկղմեցաւ ի ծով, այսպէս եւ սա ի ձեռն հօրն իւրոյ սատանայի խաբէութեամբ հաւանեցուցանէ զմարդիկ բազում չարութեան յանձն

1. Գ. եւ Ե. օր. փորձեցից:
2. Բն. բանի:
3. Բնա. թողեա:
4. Գ. եւ Ե. օր. չունին Այսպէս ... երեւեցաւ:
5. Գ. եւ Ե. օր. Սիմոնի յառնել:
6. Գ. օր. ասա:
7. Գ. օր. չունի որ եւ ... բանս: Ե. օր. ասէ Պաւղոս:
8. Ա. օր. չունի զհոգի:
9. Գ. օր. զզաւրականն:

առնուլ[1], և զբազում պարգամիտս խարել, և առ ի փորձութիւն զքո թագաւորութիւնդ առնի[2]: Իսկ ես վստահ եմ ի զօրութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ եթէ փութապէս[3] ցուցցէ զգա, թէ ով է. և որքան կարծէ բարձրացուցանել զինքն մինչև յերկինս, այնքան ի սոր[4] ընկղմեսցի ի խորս դժոխոց, ուր է լալ աչաց և կրճել ատամանց: Ներսէս ասաց. Զի՞նչ է Քրիստոսին քո վարդապետութիւն՝ քոյոյ վարդապետին: Պաւղոս ասաց. Վասն վարդապետին իմոյ վարդապետութեան՝ վասն որոյ[5] հարցերդ, ոչ ոք բաւականանայ[6] նմա, բայց միայն մաքուրք սրտիւք[7] և հաւատովք առ նա մերձեցեալք. քանզի նա է խաղաղութեան վարդապետ[8]. և ես յԵրուսաղեմէ մինչև ի Լիւրիկիայ[9] լցի[10] խաղաղութեամբ բանիւն, որպէս ի նմանէ ուսայ: Քանզի ուսոյց, որպէս զի պատուով զմիմեանս նախապատուեսցեն[11]. զերագունից և հարստաց՝ մի առնել համարել զանձինս և յուսալ ի հարստութիւն անյայտութեան, այլ յԱստուած զյոյս իւրեանց դնել ազքատութեամբ[12]. Հարց՝ ուսուցանել որդւոց իւրեանց զբարեաց երկիւղն Աստուծոյ. որդւոց՝ հաւանել ծնողաց փրկական ուսմանն. եկեղեցւոյ՝ հաւատալի մի[13] Աստուած Հայր ամենակալ և յՈրդի Նորա Միածին

1. Ա և Գ. օր. յանձինս առնել: Բ. օր. յանձին առնուլ: Գ. օր. անձին առնել: Ե. օր. յանձինս առնեն:
2. Բն. չունի առնի: Գ. օր. առնէ: Ե. օր. չունի և... թագաւորութիւնդ:
3. Գ և Ե. օր. փութով:
4. Գ և Ե. օր. ի խոնարհ անկեալ: Գ. օր. ի սորինս:
5. Գ և Ե. օր. զոր: Գ. օր. որով:
6. Բն. ոչ բաւականանամ: Գ և Ե. օր. ոչ բաւեն միտք մարդկան:
7. Գ. օր. հոգւովք: Ե. օր. հաւատով և մաքուր ոգով:
8. Գ. օր. թագաւոր:
9. Բն. մինչև ի կողմանս Լիրեացւոց:
10. Գ. օր. յաւելու վարդապետութեանն և:
11. Ե. օր. [illegible]
12. Ե. օր. խոնարհութեամբ:
13. Բն. յԱստուած[illegible]

Գ. ՀՏ.



1904
19495
7/XI - 1922

և ի հոգի նորա սուրբ։ Այս է իմ վարդապետութիւն. ոչ ի մարդկանէ և ոչ ի ձեռն մարդոյ, այլ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի տուեալ յերկնից ընդ իս խօսելով։ Այնպէս առաքեաց զիս ի քարոզութիւն ասելով ինձ. Երթ և ես եղէց ընդ քեզ, և զամենայն որչափ և առնես, ես ունիմ արդարացուցանել ։

Եւ դայտարիկ լուեալ Ներոնի զարմացաւ, և դարձեալ առ Պետրոս ասէ. Դու զի՞նչ ասես, Պետրէ։ Եւ Պետրոս ասաց. Զամենայն զոր ինչ Պաւղոս ասաց [1], ճշմարիտ է [2], քանզի ի վաղնջուց հետէ բազում [3] անգամ ընկալայ ի մերոց եպիսկոպոսաց թուղթս, յորոց ընդ ամենայն տիեզերս, յաղագս եղելոցն և խօսելոցն առ ի նմանէ։ Քանզի հալածիչ դորա գոլով վասն օրինացն, ձայն զդա յերկնից կոչեաց, և ուսոյց զճշմարտութիւնն, զի ոչ էր թշնամի՝ արհամարհելով զհաւատն, այլ ըստ անգիտութեանն։ Զի և եղեն իսկ յառաջ քան զմեզ սուտ Քրիստոսք [4], որպէս Սիմոնս այս, և սուտ առաքեալք և սուտ մարգարէք. այք ոմանք ըստ անուրբ [5] կերպարանաց արուեստից իւրեանց ունայնացուցանէին զճշմարտութիւնն. ընդդէմ նոցա հարկաւոր էր զայնպիսին նախաձեռնել [6] այր՝ որ ի մանկութենէ ոչ ինչ խրատեալ, բայց զաստուածային օրինացն քննել զխորհուրդս [7], որովք ճշմարտութեանն լինի ջատագով և ստութեան հալածիչ։ Եւ քանզի հալածանքն որ ի դմանէ՝ ոչ յաղագս նախանձու եղեւ, այլ վասն օրինացն վրէժխնդրութեան, նոյն ինքն ապա ճըշմարտութիւնն յերկնից ընդ դմա խօսեցեալ և ասաց. Ես եմ Յիսուս զոր դուն հալածես. արդ դադարեա

1. Ա. և Բ. օր. խօսի։
2. Գ. Դ և Ե. օր. հանդիպի։
3. Ա. Գ և Ե. օր. բազումս ընկալաւ։ Բ. օր. ընկալան։ Գ. օր. ընկալայ։
4. Բն. չունի Քրիստոսք։ Գ. օր. քան զմեզ յառաջնումն։ Ե. օր. չունի Զի եւ . . . վրէժխնդրութեան։
5. Բ և Գ. օր. անուս։
6. Ա և Գ. օր. նախաձեռնեալ։ Դ. օր. նախանձ առնել։
7. Բն. զխորս։

ի հալածելոյ, զի ես եմ ճշմարտութիւնն, վասն որոյ հանդիպանել քեզ ընդդէմ թշնամեաց ճշմարտութեանն արժան է։ Զոր գիտացեալ այսպիսի լինել, թողեալ զայն՝ որոյ վրէժխնդիրն էր, սկսաւ ի կողմ անկանել դա ճանապարհին Քրիստոսի, զոր հալածէրն, որ է նոյն ինքն ճշմարտութիւնն, անստութեամբ գնալով ի նա։

Զայսոսիկ ասացեալ Պետրոսի, Սիմոն ասաց ցՆերոն. Գիտեմ, թագաւոր բարի, զի համաշունչք եղեն սոքա երկոքեան ի վերայ իմ, և ես եմ ճըշմարտութիւնն, և սոքա զհակառակն ինձ խորհին [1]։ Պետրոս ասաց. Եւ ոչ մի ինչ ի քեզ ճշմարտութիւն գոյ, այլ զամենայնն սուտ ասես։ Սիմոն ասաց. Բարի թագաւոր, արքս այսոքիկ խաբեն զքեզ [2] և զհեզութիւնդ քո։ Ներոն ասաց. Այլ և ոչ դու ինչ [3] յաղագս քո ինքեան հաստատեցեր ինչ [4]։ Սիմոն ասաց. Որքան բարի գործս և նշանս [5] ընկալեալ քո յինէն, սքանչանամ եթէ է՞ր [6] երկմտես։ Ներոն ասաց. Ես ոչ միում ումեք ի ձէնջ զուգամիաւորիմ [7]. այլ հարցանեմ զքեզ մանաւանդ, պատասխանեա ինձ։ Սիմոն ասաց. Ապա արդ և ոչ մի ինչ պատասխանեցից քեզ։ Ներոն ասաց. Զի սուտ ես՝ վասն այդորիկ ասացեր [8] զայդ. արդ ոչ ինչ այլ խորհիմ. քանզի, որպէս գտանեմ [9] սուտ ես յամենայնի, զի՞ բազում ինչ ասացից [10], երեքեան դուք յամենայնի տարակուսել առնէք

1. Գ. օր. խոսեցան։ Գ. և Ե. օր. չունին եւ սոքա... խորհին։
2. ԲՆ. յաւելու զքեզ եւ ։
3. Ա. օր. ինձ։
4. Գ. օր. ինձ։
5. ԲՆ. յաւելու սքանչելիս։ Ե. օր. նշանս յինէն տեսեր ։
6. Ա. Բ և Գ. օր. թէ երկմըտես։ Ե. օր. զի երկմտես։
7. Գ և Ե. օր. զուգեալ միաւորիմ։
8. Ա և Գ. օր. ասես։ Բ. Գ և Ե. օր. ասեմ։
9. Բ. օր. գիտեմ։
10. Գ և Ե. օր. ասացեալ եւ երեքեան դուք։ Գ. օր. ասացի։

ինձ [1], որպէս զի ոչ դատնել [2] ինձ թէ ում կարացից հաւատալ։ Պետրոս ասաց. Մի Աստուած և Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի քարոզեմ, որ արար զերկինս և զերկիր, զծով և զամենայն որ է ի նոսա. որ է ճշմարտութեան թագաւոր, որոյ թագաւորութեանն վախճան ոչ գոյ։ Ներոն ասաց. Ո՞վ է այն Աստուած թագաւորն։ Պաւղոս [3] ասաց. Տէր՝ որ է փրկիչ ամենայն հեթանոսաց։ Սիմոն ասաց. Ես եմ զոր ասէքդ, Պետրէ և Պաւղէ, և գիտէք իսկ [4]. այլ զի մի երկնեցայց ընդդէմ ձեր, և ցանկալիս [5] զձեզ և վկայութեան արժանի արարից։ Պետրոս և Պաւղոս ասացին. Մի երբէք բարի քեզ, Սիմոն մոգ և դառնութեամբ լի։ Սիմոն ասաց. Լո՛ւր կայսր, որպէս զի ծանիցես սուտ զսոսա լինել, և զիս յերկնուստ առաքեալ, ի վաղուեան աւուրն յերկինս ելանեմ [6], որպէս զի զհաւատացեալսն յիս երանելիս արարից. իսկ ի սոսա՝ որք յանդգնեցան ուրանալ զիս, զբարկութիւն իմ ցուցից։ Պետրոս և Պաւղոս ասացին. Զմեզ Աստուած կանխաւ կոչեաց ի փառս իւր, դու առ ի սատանայէ յափշտակեալ՝ փութաս առ ի քոյին տանջանան [7]։ Սիմոն ասաց. Բարի թագաւոր, լո՛ւր, զյամառեալս զայսոսիկ որոշեա ի քէն, որպէս զի ի գնալն իմ [8] յերկինս առ Հայր իմ՝ կարասցես լինել բարեմիտ [9]։ Ներոն ասաց. Եւ ո՞րպէս զայս գիտացից, թէ յերկինս ելանես։ Սիմոն ասաց. Հրամայեա շինել աշտարակ բարձր ի փայտից և ի գերանաց, որպէս զի ի վեր ի նոսա

1. Ա. Բ և Գ. օր. երեքին դուք տարակուսել ինձ առնէք։
2. Ա. օր. գիտել։
3. Բն. Պետրոս։
4. Ամենայն օր. եւ գիտացէք Պետրէ եւ Պաւղէ։
5. Գ. օր. ցանկալի եմ ձեզ։
6. Ա. օր. յաւելու առաջի ամենեցուն։
7. Ա. օր. յաւելու յաւիտենից սատակումն։
8. Ա և Գ. օր. ի գնալն իմում։ Բն. գնալ իմ։ Գ և Ե. օր. գնացեալ իմ։
9. Բ. օր. բարեկամ իմ։

ելից, և հրեշտակք իմ յօդս բարձցեն զիս, քանզի ոչ կարեն յերկիր ի մէջ մեղաւորաց գալ առ իս:

Եւ Ներոն հրամայեաց ի դաշտին կոչեցելոյ Մառտին[1] բարձու շինել աշտարակ, և զամենայն ժողովուրդն և զզօրականսն ածել ի տեսանել զայս[2]: Իսկ գալ և յայս զոյգընթացումն հրամայեաց Ներոն Պետրոսի և Պօղոսի մերձ կալ, որոց ասաց. Այժմ ունի ճշմարտութիւնն յայտնել: Պետրոս և Պօղոս ասացին. Մեք զդա ոչ արհամարհեմք, այլ Տէրն մեր Յիսուս Քրիստոս Որդի Աստուծոյ կենդանւոյ, զոր[3] լինել զինքն յանդգնեաց առնել: Յայնժամ Պօղոս ցՊետրոս ասաց. Քո է պաշտօնջ՛ին՝ թէ տեսանիցես զնա ձեռնարկեալ յիրս ինչ, քանզի յառաջագոյն ընտրեցար ի Տեառնէ: Եւ եդեալ ծունր Պօղոս ա-ղօթէր: Իսկ Պետրոս ցՍիմոն ասէ. Կատարեա զոր սկսար, զի մերձեցաւ քո անկումն և մեր ի վեր կոչումն[4], քանզի տեսանեմ զՔրիստոս՝ կոչելով զմեզ: Ներոն ասաց. Եւ ո՞ւր երթայցէք առանց իմոյ կա-մաց: Պետրոս ասաց. Ուր և կոչեաց զմեզ Տէրն մեր: Ներոն ասաց. Ո՞վ է Տէրն ձեր: Պետրոս ա-սաց. Յիսուս Քրիստոս զոր տեսանեմ կոչելով զմեզ[5]: Ներոն ասաց. Եւ զո՞ւք ապա յերկինս ելանէք: Իսկ նոքա ասացին. Որպէս և ուր հաճոյ է կոչողին: Սի-մոն ասաց. Որպէս զի ծանիցես[6] զսոսա խաբեբայս զոլ, առժամայն իբրև ելից յերկինս, առաքեմ զհրեշ-տակս իմ առ քեզ և առնեմ զքեզ գալ առ իս: Նե-րոն ասաց. Արա՛ վաղվաղակի, քանզի[7] կամիմ տեսանել զքեզ կատարել՝ զոր ասեսդ:

Յայնժամ Սիմոն ել յաշտարակն առաջի ամե-

1. Ա. Գ և Ե. օր. Մառտի:
2. Բն. ի տեսարանն: Բ. օր. չունի:
3. Բ. օր. չունի Պետրոս ... առնել: Ե. օր. չունի զոր... առնել:
4. Գ և Ե. օր. չունին եւ մեր ի վեր կոչումն:
5. Բն. զիս:
6. Ա. Բ և Գ. օր. յաւելուն թագաւոր:
7. Բն. քանզի տեսանեմ:

նեցուն պսակեալ դափնեաւ, և տարածեալ զձեռսն [1] սկսաւ թռչել։ Իսկ Ներոնի իբրև ետես զնա յափշտակեալ յօդս, ասէ ցՊետրոս և ցՊաւղոս. Արդարև Աստուած է Սիմոն, իսկ դուք մոլորեցուցիչք։ Պետրոս ասաց. Այժմ գիտասցես զմեզ, թագաւոր, քրիստոսի գոլ աշակերտս, և զսա չարագործ [2]։ Ներոն ասաց. Պարտեալ՝ ամպութին յամառիք, և աշա տեսանէք զնա ամբարձեալ յերկինս, և մնայքդ ի նմին[3]։ Յայնժամ[4] Պետրոս նայեցեալ ի Պաւղոս ասէ. Ի վեր նայեաց և տես։ Իսկ Պաւղոս նայեցեալ լի արտասուօք, ետես թռուցեալ զՍիմոն, ասէ ցՊետրոս. Զի՞նչ անես, կատարեա՛ զոր սկսարդ, զի աշա կոչէ զմեզ Տէր մեր Յիսուս Քրիստոս։ Եւ Ներոնի իբրև լուաւ ի նոցանէ, ժպտեցաւ [5] և ասէ. Սոքա տեսին զինքեանս պարտեալս, արդ չաղփաղփին։ Պետրոս ասաց. Այժմ ծանիցես ոչ գոլ զմեզ չաղփաղփս։ Ասէ Պաւղոս ցՊետրոս. Արա՛ արդ զոր ինչ առնելոց ես, ընդէ՞ր յապաղես։ Յայնժամ նայեցեալ Պետրոսի ընդդէմ Սիմոնի ասէ. Երդմնեցուցանեմ զձեզ հրեշտակք սատանայի[6], որք յափշտակեցէք զդա յօդս առ ի խաբել ըզսիրտ մարդկան՝ յԱստուած ամենայնի և ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ յերրորդ աւուր յարեաւ ի մեռելոց, յայսմհետէ [7] մի ևս զդա բառնայք, այլ թողէք զդա [8]։ Եւ առժամայն թողեալ զնա, անկաւ ի տեղւոջն կոչեցեալ Սակարրիայ [9], որ էր եռաճանապարհ. և չորք մասունք եղեալ, և չորք կարք առ միմեանս եղեալք [10], առ ի վկայութիւն առաքելոցն յաղթութեան մինչև ցայսօր [11]։

1. Գ և Ե. օր. զթևս։
2. Գ. օր. չունի եւ զսա չարագործ։
3. Բ. օր. յաւելու մոլորութեան։ Ե. օր. չունի եւ մնայքդ ի նմին։
4. Բն. չունի Յայնժամ... տես։
5. Բն. ժմտեցաւ։
6. Բն. չարին։
7. Բ. Գ և Ե. օր. յայսմ ժամն։
8. Բ. օր. յաւելու ի վայր։ Գ և Ե օր. կործանիլ դմա։
9. Գ և Ե. օր. Ակարքիա։
10. Բն. եղեալք։
11. Բն. մինչեւ ցայսօր վասն յաղթութեան նոցա։

Յայնժամ Ներոն բարկութեամբ լցեալ վասն մահուանն Սիմոնի կախարդի, և կալեալ զՊետրոս և զՊաւղոս արար[1] ի կապանս լինել։ Իսկ զմարմինն Սիմոնի զյօշուածն հրամայեաց պահել զերիս աւուրս, կարծելով յառնել նմա յերրորդ աւուր[2]։ Առ որ Պետրոս ասաց. Ո՛չ երբէք յառնէ, զի ճշմարտապէս մեռեալ է և դատապարտեալ ի տանջանսն յաւիտենից։ Եւ Ներոն ասաց. Ո՞վ հրամայեաց քեզ զայդպիսի զժնդակ գործ գործել։ Պետրոս ասաց. Անօրէնութիւն[3] նորա և չարութիւն և հայհոյութիւն պարգեւեաց զմա զկորնչելդ[4]։ Ներոն ասաց. Քանզի ընդդէմ կամաց իմոց արարէք[5], չարիւ կորուսից զձեզ։ Պետրոս ասաց. Ոչ զոր դուն կամիցիս՝ այն լինիցի մեզ, այլ զոր պատմեաց[6] Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ պարտ է կատարիլ։ Յայնժամ Ներոն ասաց ցԱգրիպպաս եպարքոսն[7]. Զարս զայսոսիկ զխռովիչս չարաւ կորուսանել արժան է. վարոցօք ապա երկաթեօք հարեալք, հրամայեաց[8] զնոսա ի Նաւմաքմիոյ[9] տեղւոջ սպանանել, և զամենեսեան զայսպիսիս չարաւ փախճանել։ Ագրիպպաս եպարքոսն[10] ասաց. Բարի թագաւոր, ոչ է արժան չարչարել զնոսա[11] որպէս զխռովիչս եղեալս։ Ներոն ասաց. Ընդէ՞ր։ Ագրիպպաս ասաց. Զի Պաւղոս անպարտ երևի, իսկ

1. Բն. արկ։
2. Գ. օր. ի մեռելոց։ Գ և Ե. օր. չունին յերրորդ... յառնել։
3. Բ. օր. անօրէնութիւն։ Ե. օր. անօրէնութեան գործն։
4. Ա. օր. զկորուստն։ Բ. օր. չունի հայհոյութիւն ... ընդկորնչելոյդ։
5. Գ և Ե. օր. մերոց գործեցէք։
6. Գ. օր. պատուիրեաց։
7. Ա. օր. ճիւպարքոսն։ Գ և Ե. օր. եւ ցեպարքոսն։
8. Բ. օր. երկաթիւք հրամայեաց խարել։ Գ. օր. հրամայեաց հարկանել։ Ե. օր. ապա երկաթիւք հարեալ եւ ապա սպանանել։
9. Ա. օր. ի Նաւմաքմարի։ Գ. օր. ի Նաւմաքոյ։
10. Ա. օր. ճիւպարքոսն։ Գ և Ե. օր. եւ եպարքոսն ասացին։
11. Ա. օր. յաւելու ի միասին։

Պետրոս մահու պարտաւոր [1] է, ի վերայ այսորիկ և անկրօն։ Ներոնն ասաց. Որո՞վք տանջանօք պարտ է կորուսանել զդոսա [2]։ Ագրիպպաս ասաց. Որպէս ինձ իրաւացի թուի, Պաւղոսի [3] զգլուխն հատանել, իսկ Պետրոս քանզի մահապարտ է [4] և անկրօն, ի վերայ փայտի սպանանել։ Ներոնն ասաց. Գեղեցիկ դատեցար։

Եւ ի բաց տարեալք եղեն [5] յերեսաց Ներոնի, առեալ վճիռ մահու [6]։ Եւ մինչդեռ տանէին զՊաւղոս գլխատել հեռագոյն ի քաղաքէն իբրև մղոնաւք երիւք, կապեալ երկաթի կապանօք [7]. իսկ որք պահէին [8] զնա զօրականքն երեքին՝ ազգի զօրով մեծի [9]։ Եւ եկեալ ընդ դուռնն, միով նետընկեցաւ հեռագոյն [10], դիպեցաւ կին մի աստուածապաշտ [11], և տեսեալ զՊաւղոս կապանօքն երկաթի զի քարշէին, գթացաւ և ելաց յոյժ. և անուն կնոջն Պեռեպտուայ [12], և էր միականի. զոր տեսեալ Պաւղոսի ասէ. Տուր ինձ զուրարդ [13] քո, և ի դառնայն իմում տաց քեզ զդա. որ և յօժարութեամբ ետ։ Եւ զօրականքն ծիծաղեցան և ասեն. ընդէ՞ր կամիս կորուսանել զփակեղն քո, ո՞չ գիտես եթէ ի գլխատել երթայ։ Պեռեպտուայ առ նոսա ասաց. Երդմնեցուցանեմ զձեզ ի փրկութիւն կայսեր, այդուիկ փակեղամբդ պատեցէք զաչս՝ յորժամ հատանէք զդորա զգլուխդ. որ և եղև իսկ այնպէս [14]։ Եւ գլխատեցին զնա ի տեղւոջն կո-

1. Բն. պարտական։ Ա. օր. չունի ի վերայ...։ Ե. օր. չունի և անկրօն։
2. Բն. յաւելու զսոսա։
3. Ա և Բ. օր. յաւելուն անկրօնի։
4. Ա. Բ և Գ. օր. քանզի մահու պարտաւոր է։ Բն. յաւելու և անկրօն։
5. Ա. Բ և Գ. օր. յաւելուն եղեն։
6. Աստ աւարտի Գ. օր.։
7. Բ. օր. չունի կապեալ երկաթի կապանօք։
8. Գ և Ե. օր տանէին, չունին երեքին։
9. Բ. Գ և Ե. օր. մեծազգի։
10. Բ. օր. յաւելու ի քաղաքէն։ Ե. օր. չունի միով... հեռագոյն։
11. Գ և Ե. օր. բարեպաշտ։
12. Բ և Գ. օր. Պեռեպտուա։
13. Բն. զգարդ։
14. Բ. օր. չունի որ և եղև իսկ այնպէս։

չեցելոյ Սատան [1] մերձ առ ստորավենի ծառոյն [2]: Եւ որպէս կամեցաւ Աստուած, նախ քան զզատանալ զօրականացն տուաւ փակեղն կնոջն, ունելով կաթս [3] արեան. և իբրև զգեցաւ զնա, առժամայն բացաւ նորա աչքն:

Իսկ զօրականքն որ տանէին զերանելին [4] Պետրոս խաչել, ասէ ցնոսա. Քանզի Տէրն իմ Յիսուս Քրիստոս յերկնից յերկիր էջ, ուղիղ բարձրացաւ ի խաչին. զիս որ յերկրէս եմ, յերկինս կոչելով, արժան է ի խաչիդ, զգլուխ իմոյ ի խոնարհ լինել և զոտս իմ յերկինս կոյս ուղղել. զի ոչ եմ արժանի այնպէս ի խաչին լինել՝ որպէս Տէրն իմ. շրջեցէք զխաչդ իմ. [5] և նոքա փափագակի շրջեցին զխաչն, և զոտս նորա ի վեր բևեռեցին:

Եկն անդր անթիւ բազմութիւն բամբասելով զկայսրն լի ցասմամբ, մինչ զի այրել զնա խորհելով: Իսկ Պետրոս տեսեալ զնոսա յայնոսիկ [6] ջանալ, արգել զնոսա ասելով. Յառաջ քան զաւկաւուրս [7] աղաչեցայ յեղբարց ելանել և գնալ, և տեսի զՏէրն իմ Յիսուս Քրիստոս և երկրպագեցի նմա և ասացի. Տէր, յո՞ երթաս, և ասէ ցիս. Ի Հռովմ երթամ վերստին խաչիլ: Եւ մինչդեռ զհետ երթայի նորա, դարձայ անդրէն ի Հռովմ: Եւ ասէ ցիս. Մի երկնչիր, զի ընդ քեզ եմ, մինչև մուծից զքեզ ի տուն Հօր իմոյ: Վասն այսորիկ որդեակք իմ, արգաչեմ զձեզ [8], մի խափանէք զճանապարհս իմ, զի ոտք իմ յերկնային ուղևորին ճանապարհ. և մի ապա այժմ տրտմիք, այլ մանաւանդ խնդակիցք ինձ եղերուք. զի այսօր վաստակոցն իմոց պտղոյն [9] հան-

1. ԲՆ. Մակաւ:
2. ԲՆ. ստորենի ծառոցն: Բ. օր. ստորատովենի ծառոյն: Գ. օր. ստորոտովենի ծառոյն: Է. օր. ստորոտով մի ծառի:
3. Բ. օր. զկաթոտած:
4. Ա. օր. զառաքեալն: Բ. օր. չունի:
5. Գ. և Է. օր. չունին շրջեցէք զխաչդ իմ:
6. Գ. օր. չունի յայնոսիկ: Ա. Գ. և Է. օր. ջանացեալ:
7. ԲՆ. աւուրց:
8. Բ. օր. չունի արգաչեմ զձեզ:
9. ԲՆ. յաւելու իմոյ: Գ. և Է. օր. չունին պտղոյն:

զիրկս։ Եւ զայս ասացեալ աղօթեաց այսպէս․ Գոհանամ զքէն, Հայր բարի, զի արժանաւորեցեր զիս ժամուս այսմիկ․ այլ աղաչեմ զքեզ, զոչխարս՝ զոր հաւատացեր ինձ, մի փարատեսցին առանց իմ մնա-ցեալք, զքեզ ունելով՝ ի ձեռն որոյ ես հօտիս այս-միկ կարող լինէի հովուել։ Եւ զայս ասացեալ ա-ւանդեաց զոգին[1] առժամայն։

Այս երեւեցան արք սուրբք զորս ոչ ուրուք եր-բէք էր տեսեալ, և ոչ յետ այնորիկ տեսանել կա-րացին, որք առէին զնշխարսն, յԵրուսաղեմէ գալ հանդերձ Մարկիանու՝ արամբ որ էր հաւատացեալ ի Քրիստոս, որոյ թողեալ զՍիմոն[2], Պետրոսի հետեւե-ցաւ։ Առին զմարմին սրբոյն Պետրոսի հաւատա-ցեալքն և եդին զնա ի ներքոյ բեւեկնոյն՝ մերձ ի Նաւ-միու[3], ի տեղւոջ կոչեցելում Բիտիկայոն[4]։ Իսկ երեք զօրականքն որք հարին զգլուխն Պաւղոսի, յետ երից ժամուց նորին աւուրն եկին որք ունէինն զբուղոնն[5], տանէին զնա Ներոնի։ Եւ զլպեալք Պետեկատուոյ՝ ասեն ցնա․ Զի՞ է կին դու, աշա յա-մասութեամբ քով կորուսեր զփակեղն քո։ Եւ նա ցնոսա ասէ․ Ես զփակեղն իմ վերստին առի, և ակն իմ ետես[6], որպէս տեսանէք զիս, և կենդանի է Տէր Աստուած Պաւղոսի, և վասն ձեր աղաչեցի զնա[7] արժանի լինել ծառայութեան Տեառն Նորա։ Յայն-ժամ զօրականքն որք զբուղոնն ունէին, ծանեան զփակեղն և տեսին եթէ բացաւ ակնն նորա, աղա-ղակեցին որպէս ի միջէ բերանոյ և ասեն ի ձայն

1. Ա. օր. յաւելու ի Քրիս-տոս սուրբ առաքեալն Պե-տրոս։
2. Բ. օր. Պետրոս՝ Պաւղոսի։ Գ. օր. Սոփ, Պետրոսի հան-դիպեցաւ։ Ե. օր. չունի զոր ոչ . . . հետեւեցաւ։
3. Ա և Բ. օր. ի Նաւմա-քիու։ Գ և Ե. օր. ի Նաւ-մաք միում։
4. Ա. օր. Բատիկանոն։ Բ. օր. Բիմիկանոն։ Գ և Ե. օր. Բիտիկան։
5. Ա. Գ և Ե. օր. բողոնն։
6. Գ. օր. յաւելու զլոյս։ Ե. օր. այլ իմ ետես զլոյս։
7. Բն. չունի զնա։

մեծ. Եւ մեք ծառայ եմք Տեառն Պաւղոսի: Երթեալ Պեռեպտուայ պատմեաց ի պալատն Ներոնի եթէ, զօրականքն որ գլխատեցին զՊաւղոս, ասեն եթէ, ոչ մտանեմք ի քաղաքն[1], քանզի և մեք հաւատամք Քրիստոսի՝ զոր Պաւղոս քարոզեաց, և յայսմհետէ քրիստոնեայ եմք: Ուսեալ ապա զայս Ներոնի, հրամայեաց զՊեռեպտուայ պահել երկաթի կապանօք, իսկ զզօրականսն, զմինն գլխատել և զերկուսն[2] քարկոծել արտաքոյ դրանն՝ որպէս մղոնաւ միով հեռի[3] ի քաղաքէն: Իսկ Պեռեպտուայ ի բանդին յորում պահէին, էր Պոնտինտինեա[4] աղջիկ երկիւղած, որ առեալ զծնօղս իւր և զամենայն ստացուածս, կամէր քրիստոնեայ լինել, և արգելեալ էղև ի բանդն: Եւ Պեռեպտուայ պատմեաց զամենայն վասն Պաւղոսի, և առաւել ծնօղք նորա հաստատեցան ի հաւատսն Քրիստոսի: Իսկ կին Ներոնի քոյր նորա էր, և գաղտնի յղէր[5] առ նա յաղագս Քրիստոսի՝ թէ զյաւիտենական ուրախութիւնս տեսանեն՝ որ հաւատանն ի նա, և եթէ՝ լուծանելիք[6] են առժամանակեայքս, իսկ հանդերձեալքն յաւիտենականք[7]. մինչև փախչել նմա ի պալատէ անտի, և ոմանց ի սինկղիտոսաց ընդ նմա: Յայնժամ Ներոն բազում տանջանօք չարչարեաց զՊեռեպտուայ, և ի վախճանին[8] կապեալ քար զպարանոցէ նորա, հրամայեաց ընկենուլ ի փոսից: Եւ եդան նշխարք նորա ի դրանն[9] Մեմենտանեա: Իսկ Պոնտենտիանէ[10] և նա յոլովից համբերեալ տանջանաց, յետոյ հրով այրեցաւ[11] :

1. Գ և Ե. օր. ի պալատան:
2. Ա. օր. զերկիրորդն:
3. Բն. հեռու: Ե. օր. չուեի որպէս ... ի քաղաքէն:
4. Բ. Գ և Ե. օր. Պոնտեն-տիանի:
5. Բն. առեր: Գ. օր. յղեր-կեր :
6. Բն. լուծանելոց են: Բ. օր. լուծանի ի բէն:
7. Բ. օր. յաւիտեան մնան:
8. Բն. ի վախճան:
9. Բն. չուեի ի դրանն: Ա. օր. Տոմենտանայ: Ե. օր. Մոմենտանեայ:
10. Յաւելու ըստ ամենայն օր:
11. Ա. Բ և Գ. օր. յաւելուն ի միում աւուր: Բն. այրեցին :

Բայց արքն սուրբք, տեսեալք յերաւագնեմէ եկեալք, զորս ոչ ոք յառաջագոյն ետես, տեսցին ցամենայն ժողովուրդն. Ցնծացէք եւ ուրախ լերուք, զի մեծի փրկութեան հանդիպեցայք [1], արժանաւորք որոց առաքելոցն՝ սիրելեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. այլ գիտացէք, այս Ներսէհի չարագոյն թագաւորի ոչ երբէք եղիցի [2] ունել զթագաւորութիւնն :

Դէպ եղեւ ապա լսել Ներսէհի յամենայն ժողովրդոցն եւ ի զօրացն [3] համիմայեցւոց, մինչեւ խորհեցան հրապարակապէս զնա հարկանել լաւ արժանի, այնքան մինչեւ արձակիցէ զոգին: Իբրեւ լուաւ զայս Ներսէհ, անկաւ ի վերայ նորա երկիւղ [4] եւ դողումն անտանելի. եւ այնպէս փախեաւ որպէս զի ոչ եւս երեւել նմա: Եւ ասէին ոմանք, եթէ մինչ մոլորեալ էր ի մայրեան փախչելով, ի սովոյ եւ ի ցըրտոյ սատակեցաւ, եւ գայլոց կերակուր եղեւ:

Իսկ զայրոց առաքելոց զմարմինսն, դէպ եղեւ [5] արեւելեացն [6] առ ի տանել զնոսա յարեւելս: Եւ եղեւ չարժումն մեծ ի քաղաքին, եւ ընթացեալ ժողովուրդքըն համիմայեցւոց առին զնոսա եւ եդին [7] ի տեղին կոչեցեալ կատակոմաս [8]. եւ անդ պահեցան մարմինք որոցն զտարի մի եւ զամիսս եօթն, մինչեւ լինել [9] տեղեացն ուր եւ եդան իսկ: Եւ որոյն Պետրոսի ապա մարմինն ի Բամիկանուն [10] տեղւոջն՝ մերձ ի Մահմաքմիու [11] հանգեաւ: Իսկ որոյն Պաւղոսի՝

1. Ա. Բ եւ Գ. օր. արժանաւորեցայք. չունին արժանաւորք:
2. Ա. օր. այլ: Բ եւ Գ. օր. չունին: Ե. օր. չունի բայց արքն... զթագաւորութիւնն:
3. Գ եւ Ե. օր. զօրաց:
4. Գ եւ Ե. օր. ահ:
5. Գ եւ Ե. օր. յաւելուն առնուլ:
6. Ա. Գ եւ Ե. օր. յաւելուն ոմանց:
7. Ամենայն օր. չունին եւ եդին:
8. Ա. օր. կամակոմաս:
9. Գ. օր. ի լինել:
10. Բ. օր. Բատիկանոսի:
11. Ա եւ Բ. օր. Նաւմաքու: Գ եւ Ե. օր. Նաւմաքմիոյ:

յՈւստինիանէս[1] համապարզին՝ հեռի երկու մղոնաւք ի քաղաքէն, բարեգործութիւնս բազումս շնորհելով հաւատացելոցն[2] Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Կատարեցան ընծայք որոց տաւքելոցն Պե-տրոսի եւ Պաւղոսի յամսեանն յունիս ի քսանն եւ յիննն[3]. իսկ զօրականացն՝ յամսեանն յուլիս[4] յեր-կուսն. եւ Գեռեպասայ եւ Գոնտինտինեայ ի նորին ամ-սոյ յութին[5]. շնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ որում փառք եւ զօրու-թիւն յաւիտեանս ամէն։

1. Ա. որ. յՈւստիանէ։ Բ. որ. Ուստինիանէ։ Գ. որ. յՈւստինիանէս ։ Է. որ. չունի իսկ սրբոյն... ի քա-ղաքէն։
2. Ա եւ Բ. որ. յաւելուն յա-նուն։ Գ եւ Է որ. ի Քրիս-տոս Յիսուս Տէրն մեր։
3. Գ եւ Է. որ. չունին ի քսան... յուլիս։
4. Ա եւ Բ. որ. յուլի։
5. Ա. որ. յերրն։ Բ. որ. ի քսան նորին ամսոյ։

# ԱՅԼ ՕՐԻՆԱԿ ՀԱՄԱՌՕՏ

## ԳՈՐԾՔ[1] ՍՐԲՈՑ ԱՌԱՔԵԼՈՑՆ ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ՊՕՂՈՍԻ ԹԷ ԶԻԱՐԴ ԿԱՏԱՐԵՑԱՆ Ի ՀՌՈՄ

*Այն ինչ իբրև լուան զգնալն Պօղոսի ի Հռոմ՝ Հրեայքն որ անդանոր էին [2], ժողովեցան և մատեան ընծայիւք առաջի Ներոնի կայսեր և ասեն. Աղաչեմք զքեզ, բարի թագաւոր, առաքել յամենայն քաղաքս և ի գաւառս հրաման՝ վասն Պօղոսի ումեմն [3] Նազօրացւոյ, որ խնդրէ [4] գալ աստ՝ առ ի զմեզ կորուսանել. զի շատ է մեզ այս նեղութիւնս զոր կրեմք ի Պետրոսէ: Պատասխանի տուեալ կայսեր և ասէ ցնոսա. Լինի բստ կամաց ձերոց: Իսկ ոմանք ի հաւատացելոցն և աշակերտացն Պետրոսի, առաքեցին [5] առ Պօղոս թուղթ այսպէս.*

*Պօղեայ հաւատարիմ ծառայի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և եղբօր Պետրոսի գլխաւորի առաքելոցն:*

*Յուշ լիցի քեզ՝ զի Հրեայքս Հռոմայ զարան գործեցին քեզ՝ հրամանաւ կայսեր, զի ուր և գտցին՝ սպանցեն [6]. բայց մեք հաւատացաք և հաւատամք [7] թէ ոչ բաժանէ Աստուած ի միմեանց զերկու մեծամեծ լուսաւորս զոր արար, այսինքն ոչ զՊետրոս ի Պօղոսէ և ոչ զՊօղոս ի Պետրոսէ [8]: Տիրապէս հաւատամք ի տէր մեր Յիսուս Քրիստոս յոր մկրտեցաքն, եթէ արժանի լիցուք ձերոյ վարդապետութեանդ աստ:*

1. Ա. օր. Պատմութիւն:
2. Ա. օր. չունի որ անդանօր էին:
3. Ա. օր. ուրեմն:
4. Ա. օր. կամի:
5. Ա. օր. գրեցին:
6. Ա. օր. սպանցեն զքեզ:
7. Ա. օր. յաւելու ի տէր մեր Յիսուս Քրիստոս:
8. Բն. չունի եւ ոչ զՊաւղոս ի Պետրոսէ:

Եւ իբրև եկին արքն երեք՝ առաքեալքն ի Հռոմայ՝ առ Պօղոս, և [1] հանդիպեցան նմա ի մայիս ամսոյ ի քառն. և ընկալեալ զնոսա Պօղոս ուրախութեամբ, և ապա նաւեալ նոքօք ի Գազայն [2] Մելխացւոց՝ և եկն ի քաղաքն կոչեցեալ Պոճողիս։ Եւ էին անդ ոմանք յաշակերտացն, Պետրոսի որք ընկալան զՊօղոս և աղաչեցին զնա մնալ առ նոսա, և մնաց առ նոսա շաբաթ մի, թագուցեալ վասն պատուիրանի կայսերն. զի յամենայն քաղաքսն ամենայն իշխանքն պահէին զանցս առ ի յուզել զՊօղոս և սպանանել։ Վասն որոյ կալան զայր մի Դէոսկորոս անուն, նաւապետ, որ զնաւն իւր եթող ի Սիրակուսայ և եկն ընդ մեզ ի Պոճողիս [3], չարչարակցեալ Պօղոսի, զի զորդի նորա փրկեաց ի մահուանէ։ Զնա տեսեալ Հրէիցն կանդ զլխով, և կարծեցին թէ Պօղոսն է, հատին զգլուխ նորա և առաքեցին առ կայսրն ։ Եւ կոչեցեալ կայսերն զառաջնորդսն [4] Հրէից, եցոյց նոցա զգլուխն Դէոսկորոսի և ասէ. Ուրախացիք զի Պօղոս թշնամին մեր մեռաւ [5]. և արարին Հրեայքն ուրախութիւն մեծ յաւուր [6] յայնմիկ, զի հաւատացին թէ Պօղոս գլխատեցաւ, որ էր չորեքտասան յունիս ամսոյ։ Իսկ Պօղոս յոյժ տրտմեցաւ վասն Դէոսկորոսի, հայեցաւ ի բարձունս և ասէ. Տէր ամենակալ, տեսես քաղաքիս այսմիկ՝ և հան ի սմանէ զամենայն հաւատացեալս անուան քո. և ժողովեալ զամենայն հաւատացեալսն և ասէ ցնոսա. Եկայք զկնի իմ։ Ելեալ ի Պոճողէ հանդերձ հաւատացելովքն և եկին ի տեղին որ կոչի Բայիաս։ Եւ դարձեալ, տեսաք զՊոճողիս ընկղմեալ ի խորս ծովուն։ Իբրև լուաւ կայսրն տրտմեցաւ և ասէ ցվարդապետսն Հրէից. Ահա լսեցի ձեզ և գլխատեցի [7] զՊօղոս, և վասն այնորիկ ընկղմեցաւ քաղաքն։

1. Ա. օր. եւ ընկալաւ զնոսա ուրախութեամբ, չունի զմնացեալսն։
2. Ա. օր. ի Գաւզայն։
3. Ա. օր. ի Ճոպողիս։
4. Ա. օր. զառաջնորդսն։
5. Ա. օր ձեր գլխատեցաւ։
6. Ա. օր. չունի յաւուր... ամսոյ։
7. Ա. օր. սպանի։

Եւ նոքա ասեն. Բարեպաշտ թագաւոր, միթէ ո՞չ ասացաք քեզ եթէ զամենայն աշխարհն արևելից նա խռովեաց. լաւագոյն էր զի մի քաղաք կորեաւ, քան թագաւորութիւնդ քո. քանզի զայս ունէր կրել Հռոմ. և մխիթարեցաւ թագաւորն ի բանս նոցա:

Եւ Պօղոս եկեալ յԱպխուփառն և ննջեաց անդ. և ետես զանձն նստեալ յաթոռ ոսկի [1] և շուրջ կային զնովաւ բազմութիւնք սևոց ասելով ցնա. Ես արարի այսօր սպանանել որդւոյ զհայր [2], և այլ ոմն ասէր, ես արարի անկանել տան և սպանանել զծնօղն հանդերձ որդւովքն, և այլք [3] այլ ինչ պատմէին նմա չարիս [4] մեծագոյնս. և այլ ոմն եկեալ պատմեաց նմա, եթէ ես յորդորեցի [5] զեպիսկոպոսն Յովհաննէս, զոր ձեռնադրեաց Պետրոս, զի ընդ գլխաւորի հաւատո-րացն Յուլիանեայ ննջեացէ: Եւ լուեալ զայս ամենայն, զարթեաւ և առաքեաց փութապէս ի Հռոմ յայնցանէ որ զհետ նորա էին ի ճապաղէ, առ եպիսկոպոսն [6] Յովհաննէս, ասելով զայս նորա, եթէ զինչ հանդերձեալ է առնել: Եւ Յովհաննէս իբրև լուաւ, ընթացաւ փաղփաղակի, անկաւ առ ոտս Պետրոսի, խոստովանեցաւ լալով եթէ փոքր մի ես և կործանել պատրաստեալ էի, և պատմեաց նմա զիրսն ամենայն և ասաց. Հաւատամ եթէ դա է որում մնայիրն՝ լուսաւորն Պօղոս: Եւ Պետրոս ասէ ցնա. Զի՞արդ հնար է լինել կենդանի: Եւ Յովհաննէս տարաւ զաւաքեալն ի Պօղոսէ առ Պետրոս, և նա պատմեաց նմա

1. Ա. օր. ոսկեղէն:
2. Ա. օր. յաւելու եւ ոմն ասէր, ես արարի այսօր սպանանել եղբօր զեղբայր:
3. Բն. չունի այլք:
4. Ա. օր. չարագոյնս բազումս:
5. Բն. յարդարեցի:
6. Ա. օր. զգուշանալ զոր հանդերձեալ է առնել, ասելով զիրն. եւ նա իբրեւ ընթացաւ առ Պետրոս եւ անկաւ առ ոտս նորա, եւ խոստովանեցաւ զմեղս իւր, եւ ասաց. Հաւատամ եթէ նա է զոր մնայիրն՝ լուսաւորիչն Պաւղոս:

թէ Պօղոս կենդանի է և գայ[1]. և Պետրոս գոհացեալ փառաւորեաց զԱստուած: Յայնժամ առաքեաց Պետրոս յաշակերտաց իւրոց առ Պօղոս ի Բենիտ, և տեսեալ զնոսա Պօղոս, գոհացաւ զԱստուծոյ և առ քաջալեր[2]: Եւ լուան[3] ի Հռոմ եթէ Պօղոս՝ եղբայր Պետրոսի՝ կենդանի է և գայ, և հաւատացեալքն Քրիստոսի[4] ուրախացան յոյժ: Իսկ Հրէիցն[5] եղև խռովութիւն մեծ, և երթեալ առ Սիմոն մոգ աղաչեցին զնա ասելով. Ցանո՛ թագաւորին[6] եթէ ոչ մեռաւ Պօղոս, այլ կենդանի է և գայ: Եւ ասէ Սիմոն ցՀրէայսն. Ապա ո՞յր էր գլուխն որ բերին[7] ի ճապաղէ. միթէ նա ո՞չ իցէ կունդ: Եւ եկեալ Պօղոս ի Հռոմ, երկիւղ[8] մեծ անկաւ ի վերայ Հրէիցն, և եկեալ առ նա աղաչէին ասելով. Ի հաւատս յոր դու ծնեալ ես, այսմիկ վրէժխնդիր լեր. քանզի ոչ է իրաւացի Եբրայեցի[9] գալով և առ ի յեբրայեցւոց, և վարդապետ ասել զքեզ հեթանոսաց և ջատագով անթլփատութեան. արդ յորժամ տեսանիցես զՊետրոս, ընդդէմ ջանացիր նորա վարդապետութեան: Պատասխանեալ Պօղոսի ասէ. Թէ վարդապետութիւն նորա ճշմարիտ առ ի յեբրայեցւոց գրոց հզաւրացեալ հանդիպի, վայելուչ է մեզ ամենեցուն հաւանել նմա: Եւ ծանուցեալ[10] Պետրոսի եթէ Պօղոս եկն ի Հռոմ, և ուրախացաւ ուրախութիւն մեծ, և նոյնժամայն յարուցեալ գնաց առ նա, և տեսեալ զմիմեանս և զիրկս արկեալ համբուրեցին և լացին[11] յուրախութենէն. և ապա նստեալ պատմեցին միմեանց զոր ինչ անցք անցին ընդ նոսա, և զոր ինչ կրեաց Պետրոս ի Սիմոնէ մոգէ: Եկեալ ապա Սիմոն, նա-

1. Ա. օր. չուեալ եւ գայ:
2. Ա. օր. քաջալերեցաւ:
3. Ա. օր. լուր եղեւ:
4. Ա. օր. ամենայն:
5. Ա. օր. Հրէայքն խռովեցան յոյժ:
6. Ա. օր. արքային:
7. Ա. օր. բերաւ:
8. Ա. օր. ահ:
9. Ա. օր. յաւելու զրով եւ:
10. Ա. օր. գիտացեալ:
11. Ա. օր. յաւելու յառաւել:

խանձու շարժեալ, յարուցանէր ամբոխ, և սկսաւ ասել վասն Պետրոսի չարիս, մոգ և խաբեբայ. և հաւատացին նմա որք զնշանս նորա տեսին. քանզի տանէր օձ պղնձի շարժել զինք, և քարեղէն անդրեայց ծիծաղել տայր, շարժել և ընթանալ. և ինքն յանկարծակի յօդս վերանայր յանդիման նոցա: Իսկ Պետրոս զհիւանդսն բժշկէր աղօթիւք[1], զկաղսն գնայ(ուցա)նէր, զկոյրսն լուսաւորէր, զդեւսն ի մարդկանէ հալածէր, խլից լսել տայր և համրից խօսել, և զամենայն ցաւս փարատէր, և զմեռեալս յարուցանէր: Եւ այսմ այսպէս լինելոյ, ամենայն իմաստուն և երկիւղած մարդ զարշէր ի Սիմոնէ, խրատելով Պետրոսի՝ մոգ և անմաքուր զնա ասել: Իսկ որք ի Սիմոն յարեալք՝ զՊետրոս ասէին մոգ լինել: Եւ իբրեւ բանն առ կայսր Ներոն հասանէր, և հրամայէր զՍիմոն առ ինքն ածել: Որոյ մտեալ եկաց առաջի նորա և սկսաւ յանկարծակի կերպարանափոխ լինել, որպէս զի լինել նմա մանուկ և յետ սակաւ[2] միոյ պահոյ ծեր, և ապա երիտասարդ՝ ունելով սպասւոր զատանայ: Զոր տեսեալ Ներոն, ճշմարտապէս որդի Աստուծոյ զնա կարծէր: Իսկ առաքեալն Պետրոս ուսուցանէր ասելով. Սուտ է և զարշելի յամենայնի: Եւ շարախօսէր Սիմոն զՊետրոս առ Ներոն և ասէր. Եթէ ոչ հալածես զնա աստի, ոչ կարէ կեալ թագաւորութիւնդ քո: Եւ հրամայեաց Ներոն փութով ածել զՊետրոս առաջի իւր. և մտեալ[3] կացին առաջի Ներոնի Պետրոս և Պօղոս առաքեալքն Քրիստոսի: Եւ Սիմոն յառաջ կացեալ[4] ասաց. Սոքա են աշակերտ(ք) Յիսուսի: Ներոն ասէ. Ո՞վ է Յիսուս: Սիմոն ասէ. Այր մի Գալիլեցի ի Նազարեթէ: Ներոն ասէ. Զի՞նչ է Նազարէթ: Սիմոն ասէ. Քաղաք ի Հրէաստան. անդուստ վարդապետն դոցա ե-

1. Ա. օր. յաւելու եւ անուամբն Քրիստոսի:

2. Ա. օր. եւ յետ պահոյ միոյ:

3. Ա. օր. եւ մտեալ Պետրոս առաջի նորա ընդ նմին եւ Պաւ-(ղոս)

4. Ա. օր. յառաջեալ:

գեալ է։ Ներոն ցՊետրոս ասէ. Ո՞վ անուամբ առնես դու զաքանչելիսն։ Պետրոս ասէ. Քրիստոսի զօրութեամբ։ Ներոն ասէ. Ո՞վ Քրիստոս։ Պետրոս ասէ. Եթէ կամիս գիտել զՔրիստոս, ով թագաւոր, զգործեալսն[1] ի նմանէ և զոր Հրեայքն ընդ նմա արարին, առ զգիրսն Պոնփացւոյ Պիղատոսի, որ առ Կղօդիոս կայսրն յուղարկեալ[2] է ի Հրէաստանէ, և այնու գիտասցես զամենայն։ Եւ Ներոն հրամայեաց բերել և առաջի իւր ընթեռնուլ, որ ունէր օրինակ զայս[3].

Պոնփիոս Պիղատոս Կղօդեայ խնդալ.

Դժնդակ իրս պատահեալ մեզ։ Հրեայք պատուէր ունէին եղեալ առ հարսն իւրեանց եթէ առաքէ առ նոսա Աստուած զսուրբն իւր յերկնից, որ և թագաւոր նոցա կոչեսցի. զնա խոստացեալ Աստուծոյ ի ձեռն կուսի յերկիր առաքել. և յիմում դատաւորութեան եկն ի Հրէաստան և տեսաք ի նմանէ զկոյրսն լուսաւորեալ, զկաղս գնացուցեալ, զբորոտս սրբեալ, զանդամալոյծս բժշկեալ, զդևս առ ի մարդկանէ հալածեալ, զմեռեալս յարուցեալ, հողմոց սաստեալ և հանդարտեալ, ի վերայ ալեաց ծովու գնացեալ, և բազում այլ ինչ արարեալ, որպէս զի ամենայն ժողովրդեանն Հրէից՝ զնա որդի Աստուծոյ ասացեալ. վասն որոյ նախանձու քահանայքն ընդդէմ նորա շարժեալ, կալան զնա և ինձ մատնեցին, և այլ ընդ այլոյ ստեալ մոլորեցուցիչ զնա ասէին, և ընդդէմ օրինացն Հրէից գործել նմա. և ես հաւատացեալ այսպէս այսոցիկ լինել և գանեալ մատնեցի կամաց նոցա. որոց խաչեալ զնա և թաղեալ, պահապանս կացուցին ի վերայ նորա, և զօրականաց իմոց պահեալ զնա, որ և յերրորդ աւուր յարեաւ։ Այլ այնքան բորբոքեցաւ չարութիւն Հրէից, որպէս զի տալով արծաթ զօրականացն ասելով. Ասացէք եթէ աշակերտքն նորա եկեալ գողացեալ զնա. այլ նոցա

1. Ա. օր. չունի զգործեալսն . . . արարին։
2. Ա. օր. առաքեալ։
3. Ա. օր. չունի զբովանդակ թուղթն։

տանել զարծաթն և լնել զեղեալն ոչ կարացին, քանզի և նոքա յարուցեալ տեսին զնա և վկայեցին: Զայսպիսի վասն այնորիկ ծանուցի, զի մի այլ ոք այլապէս առիցէ և կարծիցէ հաւատալ Հրէից ստաբանութեանց:

Յայնժամ ասէ Ներոն. Ա՛ռ Պետրէ, այսպէս այս ամենայն վասն այսորիկ գործեցաւ: Եւ Պետրոս ասէ. Այսպէս է ճշմարիտն ո՛վ թագաւոր, այլ Սիմոնս այս լի ստութեամբ և խաբէութեամբ զայ կարծեցուցանէ զինքն լինել Աստուած. իսկ Տեառն իմում Յիսուսի Քրիստոսի է ամենայն ստուգութեամբ յաղթութիւն. վասն մարդկան փրկութեան հաճեցաւ ի ձեռն աստուածային իւրոյ անօրէնութեան ընդ մարդկան շրջել: Սիմոն ասաց. Ոչ համբերեցից քեզ, այլ հրամայեմ հրեշտակաց իմոց որպէս զի եկեալ առնիցեն[1] զվրէժ իմ ի քէն: Պետրոս ասաց. Ոչ երկեայց ի զաւակին[2] քոց հրեշտակաց, նոքա մանաւանդ յինէն երկնչին[3], անուամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Ներոն ասէ. Ո՞չ երկնչիս ի Սիմոնէ, Պետրէ, և որ ի դմա աստուածային իր: Պետրոս ասաց. Եթէ դա[4] է աստուածութիւնն որ քննէ զխորս սրտից, ասասցէ ինձ Սիմոն թէ զինչ խորհիմ ես, և կամ որպիսի բանք անկան ի սիրտ[5] իմ, առ ի սուտ ցուցանել զդա առ այնոսիկ զորս ապականեացն: Ներոն ասէ. Մատուցեալ այսր ասա՛ ինձ թէ զինչ խորհիս. և Պետրոս գնացեալ մերձ Ներոնի և ասէ. Հրամայեա՛ բերել հաց գարեղէն և գաղտնի տալ ինձ. և հրամայեաց բերել և[6] տալ ի Պետրոս: Ասէ արքայ. Ասիցէ այժմ Սիմոն զինչ են խորհեցեալքն: Սիմոն ասէ. Զայս գիտես թագաւոր, զի զխորհուրդս մարդկան ոչ ոք գիտէ, բայց միայն Աստուած: Պետրոս ասաց. Դու

1. Ա. օր. առցեն:
2. Ա. օր. ի դիւաց քոց:
3. Ա. օր. փախիցեն:
4. Ա. օր. ի դա:
5. Ա. օր. ի միտս, և չունի առ . . . ապականեացն:
6. Ա. օր. չունի եւ տալ ի Պետրոս:

որ ասես զքեզ որդի Աստուծոյ լինել, ասա՛ այժմ թէ զինչ խորհեցայ. և էր Պետրոս զհացն օրհնեալ աջոյն, և ունէր յաջեակ ձեռին: Իբրև ոչ կարաց գիտել Սիմոն զպատասխս Պետրոսի, ասէ. Եկեսցեն շունք մեծամեծք և դիմեսցեն ի Պետրոս: Իսկ Պետրոս տարածեաց զձեռս իւր յաղօթս, և եցոյց շանցն զհացն զոր օրհնեաց. և (առ)ժամայն աներևոյթ եղեն շունքն, և այլ ոչ ևս երևեցան: Յայնժամ ասէ Պետրոս ցՆերոն. Ահա Թագաւոր ցուցի զՍիմոն մոգ և խաբեբայ, ոչ բանիւք միայն, այլ և գործովք, քանզի ոչ ունէր հրեշտակս ընդդէմ իմ առաքել քան զոր էածն, որպէս զի[1] ցուցցէ զինքն Աստուած գոլ, ոչ ունելով զաստուածային հրեշտակս, այլ շնական դեւս: Յայնժամ ասէ Ներոն[2]. կարծեմ պարտեալ եղեր: Սիմոն ասաց. Այսպիսիս զա ինձ ի Հրէաստանի և ի Սամարիա արար և ի Կեսարիա: Ներոն ասէ ցՊօղոս. Դու ընդէ՞ր ոչ խօսիս, Պօղէ: Պատասխանի ետ Պօղոս և ասէ. Գիտեա զայս, Թագաւոր, զի թէ արձակես զմոգս զայս, վնաս մեծ գործէ աշխարհիս քում: Եւ Ներոն ասէ ցՍիմոն. Զի՞նչ ասես դու առ այսոսիկ: Սիմոն ասէ. Եթէ ոչ յայտնեցից զիս և ցուցից լինել Աստուած՝ ոչ ոք ինձ զպատաշաճն տանի պաշտօն: Ներոն ասաց. Եւ արդ զի՞ յամես և ոչ ցուցանես զքեզ, որպէս զի սոքա ամաչեսցին: Սիմոն ասաց. Եթէ ոչ հաւատաս, բարի Թագաւոր, եթէ իցեմ մեծ ոմն, հրամայեա գլխատել զիս ի տեղւոջ խաւարին և անդ թող զիս. և եթէ յերրորդ աւուր ոչ յառնեմ, գիտեա՛ զիս մոգ գոլ. իսկ թէ յարեայց, ծանիր զիս որդի Աստուծոյ: Եւ զայս հրամայեալ կայսերն այսպէս լինել: Իսկ մոգական արուեստին իւրով եղեալ Սիմոնի խոյ, զի գլխատեսցի. ապա խոյն Սիմոն երևեցաւ ի խաւարին, և զի շօշափեաց որ գլխատեաց զնա և տարեալ զգլուխն ի լոյսն ետես գլուխ խոյի, այլ ոչինչ համարձակեցաւ[3] ասել Թագաւորին,

1. Ա. օր. զի ասէ զինքն գոլ Աստուած:
2. Ա. օր. յաւելու Զի՞ է Սիմոն:
3. Ա. օր. այլ ոչ իշխեաց:

զի մի տանջեսցէ[1] զնա։ Եւ եկեալ Սիմոն յետ երրորդ աւուր յառնելն իւր և զգլուխ խոյին և զանդամս եգիտ և թաղոյց, իսկ արիւնն մածեալ կայր. և յաւուրն երրորդի եցոյց զինքն Ներոնի առելով. Արա՛ մաքրել զարիւն իմ որ հեղաւ, զի ահա գլխատեցայ որպէս և յանձն առի, և յերրորդ աւուր յարեայ։ Եւ դարձեալ ասէ ցՆերոն. ի վաղուեան աւուր փորձեսցես զմեզ։ Դարձաւ (Ներոն) առ Պօղոս և ասէ. Եւ դու Պօղոս ո՞չ բարբառիս։ Եւ Պօղոս ասէ. Մի՛ կամեսցիս լսել արքայ, զի խաբեբայ է և մոգ և ի կորուստ կամի յուղարկել զկեանս քո, որպէս Յանէսն և Յամբրէսն զփարաւոն մոլորեցուցին[2], մինչև ի խորս ծովուն ընկղմեցին. բայց վստահ եմ ի զօրութիւն տեառն իմոյ Յիսուսի Քրիստոսի, փութապէս խայտառակել զդա թէ ո՛վ է և զորպիսի՛ աղանդ ունի, և որքան կարէ բարձրացուցանէ զինքն մինչև յերկինս, այնքան ի ստոր ընկղմեսցի ի խորս դժոխոց, ուր է լալ աչացն և կրճել ատամանցն։ Ներոն ասէ. Զի՞նչ է վարդապետութիւն Քրիստոսի։ Պօղոս ասաց. Ոչ ոք բաւականանայ նմա, բայց միայն մաքուրն սրտիւ և հաւատով առ նա մերձեցեալն, քանզի նա է խաղաղութեան վարդապետ, և ես յԵրուսաղեմայ մինչև ի Իլլուրիկէ լցի[3] խաղաղութեամբ որպէս առ ի նմանէ ուսայ. քանզի ուսայց մարդկան զմիմեանս պատուել և զընկերան քան զինքեանս լաւ համարել, և առ Աստուած զյոյսն իւրեանց դնել աղքատութեամբ. հարց ուսուցանել որդւոց իւրեանց զբարւոք երկիւղն Աստուծոյ, որդւոց հաւանել ծնողաց իւրեանց և պատուել զնոսա, ծառայից հնազանդել տերանց երկիւղիւն Աստուծոյ և ծառայել նոցա միամտութեամբ սրտիւ, արանց սիրել զկանայս իւրեանց, և կանանց կալ ի միաբանութիւն արանց. հաւատալ ի մի Աստուած ի Հայրն ամենակալ և յՈրդի նորա միածին

1. Ա. օր. տանջեսցի։
2. Ա. օր. չունի մոլորեցուցին . . . ընկղմեցին։
3. Ա. օր. լի արարի զաւետարանն Քրիստոսի որպէս։

և ի սուրբ Հոգին ճշմարիտ։ Այս է վարդապետութիւն իմ[1] ոչ ի մարդկանէ և ոչ ի ձեռս մարդոյ, այլ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի տուաւ ինձ ի վերուստ յԱստուծոյ Հոգւոյն, որ առաքեաց զիս ի քարոզութիւն ասելով ինձ. Ե՛րթ և ես եղէց ընդ քեզ և զամենայն որչափ[2] և առնիցես, ես ունիմ արդարացուցանել։ Եւ զայսոսիկ լուեալ Ներոնի զարմացաւ, դարձաւ առ Պետրոս և ասէ. Եւ դու զի՞նչ ասես, Պետրէ։ Եւ Պետրոս ասաց. Զամենայն զոր ինչ և Պօղոս ասաց, ճշմարիտ հանդիպի[3]։ Զայսոսիկ ասացեալ Պետրոսի, Սիմոն ասէ ցՆերոն. Գիտեա՛ բարի թագաւոր զի համաշունչք եղեն սոքա երկոքեանն ի վերայ իմ, և ես(եմ) ճշմարտութիւնն, և զքեզ հակառակ ինձ համարին։ Պետրոս ասաց. Եւ ոչ մի ի քեզ ճշմարտութիւն գոյ, այլ զամենայն սուտ ասես։ Սիմոն ասաց. Բարի թագաւոր, արքս այս խաբեն զքեզ։ Ներոն ասաց. Այլ և դու ոչ ինձ յաղագս քո հաստատեցեր ինչ։ Սիմոն ասաց. Բարի թագաւոր, ո՛րքան բարի գործս և նշանս յինէն ընկալեալ քո, սքանչանամ թէ զիա՞րդ երկմտիս։ Ներոն ասաց. Ես ոչ միում ումեք ի ձէնջ զուգամասնաւորիմ[4], այլ հարցանեմ զքեզ մանաւանդ պատասխանեա՛ ինձ։ Սիմոն ասաց. Ապա արդ[5] և ոչ ինչ պատասխանեցից քեզ։ Ներոն ասաց. Զի սուտ ես, վասն այնորիկ զայդ ասես. արդ երեքեան դուք տարակուսել ինձ առնէք յամենայնի, որպէս զի ոչ գտանել ինձ թէ ո՞ւմ հաւատալ կարացից։ Պետրոս[6] ասէ. Մի է Աստուած Հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որ արար զերկինս և զերկիր, որոյ թագաւորութեան վախճան ոչ գոյ։ Ներոն ասաց. Ո՞վ է այն Աստուածն թագաւոր։ Պօղոս[7] ասաց. Տէր մեր որ է փրկիչ ամե-

1. Ա. օր. Քրիստոսի։
2. Ա. օր. զոր։
3. Ա. օր. ճշմարիտ է։ Յայնժամ Սիմոն։
4. Ա. օր. մասնաւորիմ, արդ
5. Ա. օր. արդար։
6. Ա. օր. Պաւղոս։
7. Ա. օր. Պետրոս։

նայն հեթանոսաց: Սիմոն ասաց. Ես եմ զոր ա-ռէքդ, և գիտասջիք դուք, Պօղէ և Պետրէ, զի մի երևեցայց ընդդէմ ձեզ և ցանկալիս արարից զձեզ և վկայութեան արժանի: Պետրոս և Պօղոս ասացին. Մի բարի քեզ Սիմոն մոգ և դառնութեամբ[1] լի: Սիմոն ասաց. Լո՛ւր արքայ, որպէս զի ծանիցես սուտ զսոսա լինել, ի վաղուեան աւուրն յերկինս ելանեմ, որպէս զի զհաւատացեալս իմ երանելիս արարից. իսկ սոցա որ յանդգնեցան ուրանալ զիս, զպարկութիւն իմ ցուցից: Պետրոս և Պօղոս ասացին. Զմեզ Աստուած կոչեաց կանխաւ ի փառս իւր, և դու առ ի սատանայէ ջանալ փութաս: Սիմոն ասաց. Զյամառեալս զայսոսիկ որոշեմ ի քէն, որպէս զի ի վերանալն իմ յերկինս առ հայրն իմ՝ կարասցես լինել բարեմիտ: Ներոն ասաց. Եւ ո՞րպէս կարասցիս գիտել եթէ յերկինս ելանես: Սիմոն ասաց. Հրամայեա՛ շինել աշտարակ ի փայտից գերանաց, և ես ի վեր ի նոսա ելից և ապա հրեշտակք իմ բարձցեն զիս ի վեր, քանզի ոչ կարեն յերկրի ի մէջ մեղաւորաց գալ առ իս: Յայնժամ հրամայեաց Ներոն շինել աշտարակ բարձր ի դաշտի ի մօտեւոր տեղի[2]. և զամենայն ժողովուրդն և զօտարականս ածել անդ, և զՊետրոս և զՊօղոս մերձ կալ: Պետրոս և Պօղոս ասացին. Մեք զդա ոչ արհամարհեմք, այլ տէր Յիսուս որդին Աստուծոյ կենդանւոյ, որ լինել զինքն յանդգնեցաւ ասել: Յայնժամ ասէ Պօղոս ցՊետրոս. Քո է պահանջել, եթէ տեսանիցես զնա յիրս ինչ ձեռնարկեալ, քանզի յառաջագոյն ընտրեցար յԱստուծոյ: Եւ եղեալ ծունր Պօղոս աղօթէր, իսկ Պետրոս ասէ ցՍիմոն. Կատարեա զոր սկսարն, քանզի մերձեցաւ քո սատակումն և մեր ի վեր կոչումն. քանզի տեսանեմ զՔրիստոս կոչելով զմեզ: Ներոն ասաց. Եւ ո՞ւր երթիցէք առանց իմ կամացն: Պետրոս ասաց. Ուր կոչեացէ զմեզ Տէրն

1. Ա. օր. դառնութեան ոգի: 2. Ա. օր. մօտ ի քաղաքն:

մեր[1]։ Ներոն ասաց. Այդ և դո՞ւք յերկինս ելանէք։ Պետրոս ասաց. Ուր և հաճոյ է[2] կոչողին զմեզ։ Սիմոն ասաց. Ո՞րպէս ծանիցես զսոսա, թագաւոր, խաբեբայ գոլով. այլ ես առժամայն իբրև ելանեմ յերկինս, առաքեմ զհրեշտակ իմ առ քեզ և առնեմ զքեզ գալ առ իս։ Ներոն ասաց. Արա՛ վաղվաղակի, քանզի կամիմ[3] զքեզ տեսանել. կատարեա՛ զոր ասեդ։ Յայնժամ Սիմոն ել յաշտարակն առաջի ամենեցուն պսակեալ դափնեաւն, և տարածեալ զձեռսն սկսաւ թռչել։ Իսկ Ներոն իբրև ետես զնա յափշտակեալ յօդս, ասէ ցառաքեալսն. Արդարև աստուած էր Սիմոն, և դուք մոլորեցուցիչ։ Պետրոս ասաց. Այժմ գիտասցես, թագաւոր, զմեզ Քրիստոսի գոլ աշակերտս, իսկ զՍիմոն չարագործ և կախարդ։ Ներոն ասաց. Պարտեալք, տակաւին յամառի՞ք. ահա տեսանէք զնա ամբարձեալ յերկինս և դուք մնա՞յք ի նմին։ Յայնժամ Պետրոս նայեցեալ ի Պօղոս ասէ. Ի վեր նայեաց և տես։ Եւ Պօղոս լի արտասուօք նայեցեալ ետես թռուցեալ զՍիմոն և ասէ. Պետրէ, զի՞նչ առնես, կատարեա զոր սկսարդ. զի ահա[4] կոչէ զմեզ Տէրն մեր Յիսուս Քրիստոս։ Զայս իբրև լուաւ Ներոն ի նոցանէ, ժմտեցաւ և ասէ. Սոքա տեսանեն զինքեանս պարտեալ, արդ չարփափին։ Ասէ Պօղոս ցՊետրոս. Արա՛ զոր առնելոց ես, ընդէ՞ր յամես։ Յայնժամ նայեցեալ Պետրոս ընդդէմ Սիմոնի ասէ. Երդմնեցուցանեմ զձեզ հրեշտակք սատանայի որք յափշտակեցիք զդա յօդս, առ ի խաբել զմիտս մարդկան. երդմնեցուցանեմ զձեզ յԱստուածն ամենայնի և ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ յերրորդ աւուր յարեաւ ի մեռելոց, յայսմհետէ մի ևս բառնայք զդա այլ թողէք ի բաց. և առժամայն թողեալ, անկաւ ի

1. Ա. օր. յաւելու Ներոն ասաց. Ո՞վ է Տէրն մեր. Պետրոս ասաց. Յիսուս Քրիստոս։
2. Ա. օր. բաւեսցի։
3. Ա. օր. յաւելու յար։
4. Ա. օր. յաւելու վերացաւ Սիմոն եւ։

տեղւոյն կոչեցեալ Սակրայիրայ որ էր եռաճանա-
պարհ[1]. և չորս մատունս և չորս կարս առ մխեալս
եղեալ, առ ի վկայութիւն յաղթութեան առաքելոցն
մինչև ցայսօր:

Յայնժամ Ներոն բարկութեամբ լցեալ վասն Սի-
մոնի կախարդի և հրամայեաց զառաքեալսն ի կա-
պանս լինել[2]: Իսկ զմարմին պղծոյն Սիմոնի զերիս
աւուրս հրամայեաց պահել զյօշուածս, կարծելով
յառնել նմա յերրորդ աւուր. առ[3] որ ասաց Պետրոս
թէ ոչ երբեք յառնէ, զի ճշմարտապէս մեռաւ և
դատապարտեցաւ ի տանջանս յաւիտենից: Եւ Ներոն
ասէ ցՊետրոս. Ո՞վ հրամայեաց քեզ զայնպիսի դժնդ-
դակ գործ գործել: Պետրոս ասաց. Անօրէնութիւն
նորա և չարութիւն և հայհոյութիւնն ետ նմա զկորն-
չելն: Ներոն ասաց. Վասն զի ընդդէմ կամաց իմ
արարէք, չարաւ կորուսից զձեզ: Պետրոս ասաց.
Ոչ զոր դու կամիս այն լիցի մեզ, այլ զոր պատմեաց
Տէր մեր Յիսուս Քրիստոս պարտ է կատարել:

Յայնժամ ասէ Ներոն ցԱգրիպպաս եպարքոսն.
Զարս զայսոսիկ զխռովիչս, չարաւ կորուսանել ար-
ժան է, վարցօք[4] ապա երկաթով խարել. և հրա-
մայեաց զնոսա ի Նաւմաքիոյ տեղւոջ սպանանել:
Ագրիպպաս ասաց. Բարի թագաւոր, ոչ է արժան չարչարել
զդոսա իբրև զխռովիչս: Ներոն ասաց. Ապա որո՞վ
տանջանօք պարտ է կորուսանել: Ագրիպպաս ասաց[5].
Որով[6] ինձ իրաւացի թուի, Պօղոսի անկրօնի զգլուխն
հատանել, իսկ զՊետրոս, քանզի մահու է պարտա-
ւոր, ի վերայ փայտի սպանանել: Ներոն ասաց. Գե-
ղեցիկ դատեցար:

1. Ա. օր. յորս ճանապարհարաւ-մին, եղեալ ի վերայ չորս ճա-նապարհի մաս մաս:
2. Ա. օր. ունել:
3. Ա. օր. չունի առ որ . . . կատարել:
4. Ա. օր. չունի վարցօք . . . սպանանել:
5. Ա. օր. զի Պօղոս ասաց ան-պարտ եմ:
6. Ա. օր. որպէս:

Եւ ի բաց տարեալք եղեն յերեսաց Ներոնի, առեալք զվճիռ մահու. և մինչդեռ տանէին զՊօղոս ի գլխատել հեռագոյն ի քաղաքէն իբրև երեք մղոնաւ կապեալ երկաթի կապանօք, և ընդ դուռն ելեալ իբրև նետաձիգ մի, հանդիպեցաւ կին մի աստուածապաշտ[1], և տեսեալ զՊօղոս երկաթապատ քարշեալ, գթացեալ[2] և ելաց յոյժ. և անուն կնոջն էր Պեռեպետուա[3] և էր միականի, զոր տեսեալ Պաւղոսի ասէ ցնա. Տուր ինձ զփակեղդ քո, և ի դառնալ իմ տաց քեզ զդա. որ և յօժարութեամբ ետ. և զօրականք երեք[4] եղբարք որ տանէին զՊաւղոս, ծիծաղեցան և ասեն. Ընդէ՞ր կորուսանես զփակեղդ քո, ո՞չ գիտես եթէ ի գլխատել երթայ: Ասէ կինն. Երդմնեցուցանեմ ի փրկութիւն կայսեր, այդ փակեղամբդ պատեցէք զաչս դորա, յորժամ գլխատէք զդա, որ և արարին իսկ այնպէս. և գլխատեցին զնա առ ստորոտով ծառայն: Եւ նախ քան զդառնալն զօրականացն, տեսաւ ի հրեշտակաց փակեղն կնոջն, ունելով կաթուածս[5] արեան. և առեալ զնա կապեաց ի գլուխ[6] իւր և առժամայն բացան աչք[7] նորա. և ի գլխատելն Պօղոսի ընդ արեանն կաթն բղխեաց:

Էր սուրբ առաքեալն Պօղոս անձամբն կարճ և հաստ, մեծաքիթ և խաժակն, թաւայօն և զուարթերես, ճաղատ և երկայնամօրուս, ալէխառն[8], աստուածային շնորհօքն լի և բժիշկ ամենայն ցաւոց ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

Իսկ[9] ի խաչելն Պետրոսի, ասէ ցզօրականս. Տէրն իմ Յիսուս Քրիստոս յերկնից ի յերկիր էջ և ուղիղ ի խաչին բարձրացաւ. զիս որ յերկրէս կոչելով, արժան է գլխիվայր խաչել և դառս իմ յերկինս ուղղել. զի

1. Ա. օր. հաւատացեալ:
2. Ա. օր. գթացաւ ի նա:
3. Ա. օր. Պեռպետուեայ:
4. Ա. օր. չունի երեք . . . զՊաւղոս:
5. Ա. օր. արեանբարբախ:
6. Ա. օր. ի ճակատն:
7. Ա. օր. աչն:
8. Ա. օր. յաւելու ծաղրերես:
9. Ա. օր. յաւելու իսկ Պետրոս

ոչ եմ արժանի այնպէս լինել ի խաչի որպէս և տէրն իմ. և նոքա այնպէս զոտսն ի վեր բևեռեցին[1] ։ Եկն անդ անթիւ բազմութիւն բամբասելով զկայսր լի ցասմամբ, մինչ զի այրել խորհէին։ Իսկ Պետրոս տեսեալ զնոսա յայնպիսի միտս, արգել զնոսա ասելով. Յառաջ քան զսակաւ աւուրս աղաչեցայ յեղբարց ելանել և գնալ, և տեսի զՏէր մեր Յիսուս Քրիստոս. երկրպագեցի նմա և ասացի. Տէր, ո՞ւր երթաս։ Եւ ասաց ցիս. Ի Հռոմ զի խաչեցայց։ Եւ ես ասեմ. Տէր, միւսանգա՞մ խաչիս։ Եւ ասաց Տէր. Այո, Պետրէ, վասն զի դու փախչիս։ Եւ ասաց ինձ. Մի երկնչիր, զի ես ընդ քեզ եմ մինչև մուծից զքեզ ի տուն Հօր իմոյ։ Եւ իմ երկրպագեալ նմա դարձայ ի Հռոմ։ Վասն որոյ աղաչեմ զձեզ, որդեակք իմ, մի խափանէք զճանապարհս իմ[2], զի ոտք իմ զերկնայինն ուղևորին ճանապարհ. մի ապա այժմ տրտմիք, այլ մանաւանդ խնդակիցք եղերուք ինձ, զի այսօր հանդիպիմ պտղոյ վաստակոց իմոց. և զայս ասացեալ՝ աղօթեաց այսպէս. Գոհանամ զքէն, Տէր[3], որ արժանի արարեր զիս ժամուս այսմիկ. և արդ զոչխարս[4] զորս հաւատացեր ինձ՝ յանձն առնեմ ողորմութեամբ[5]

իբրև լուաւ եթէ ի խաչ հանեն զնա, ել ի քաղաքէն և կամէր փախչել, խորհրդեամբ աշակերտացն. և յելանելն նորա ի քաղաքէն ետես զտէրն Քրիստոս զի մտանէր ի քաղաք, երկրպագեաց նմա և ասաց. Տէր, ո՞ւր երթաս։ Եւ ասէ Տէրն. Ի Հռոմ զի խաչեցայց։ Եւ ասէ Պետրոս. Տէր, միանգամ խաչեցար յԵրուսաղէմ և դարձեա՞լ խաչիս։ Ասէ Տէրն. Վասն զի դու փախչիս, ես մտեալ խաչիմ։ Յայնժամ Պետրոս ի միտս իւր եկեալ զղջացաւ և դարձաւ ի քաղաքն, յայտնեցաւ զօրականացն յորոց խաչէրն։ Եւ ի խաչել Պետրոսի ասէ զզօրականսն . . .

1. Ա. օր. յաւելու ստորաճակ գլխիվայր։
2. Ա. օր. յաւելու որ տանի զիս առ Քրիստոս. չունի զի ոտք . . . ճանապարհ։
3. Ա. օր. հովիւ բարի։
4. Ա. օր. զհօտս։
5. Ա. օր. ողորմութեան քո։

շնորհաց քոյ. զի մի վարատեսցին տանց իմ մնա-ցեալք, այլ քոյին խնամօք պահեսցին, ամէն: Եւ զայս ասացեալ աւանդեաց զոգին:

Յայնժամ երեւեցան արք սուրբք զորս ոչ ուրեք երբեք էր տեսեալ, որք ասէին զինքեանս յերուսա-ղեմէ գալ, հանդերձ Մարկեղաւ, որ էր հաւատա-ցեալ ի Քրիստոս, որոյ թողեալ զՍիմոն, զհետ Պե-տրոսի հետեւէր: Առին զմարմին սրբոյն Պետրոսի հա-ւատացեալքն եւ եդին ի ներքոյ բեւեկնոյն մերձ ի նաւմաքու, ի տեղւոջն կոչեցելում Բատիկանոն:

Եւ էր սուրբն Պետրոս կարճահասակ եւ հաստանձն, հեր գլխոյն գանգ եւ սպիտակ, եւ մօրուսն կարճ, թա-ւայօն, երկայնաքիթ, կարմրերես եւ սպիտակամար-մին, խաստասիրտ եւ արագահաշտ, սքանչելագործ եւ աստուածահրաշ:

Իսկ երեք զօրականքն որք հատին զգլուխն Պօղոսի, յետ երից ժամուց ի նմին աւուր եկին ի քաղաքն, եւ հանդիպեցան Պեռեպլտուայ, ասեն ցնա. Զի՞նչ զոր-ծեցեր անմտութեամբ, որ կորուսեր զփակեղն քո: Եւ նա ցուցեալ զայն, ասէ. Զփակեղս իմ վերստին առի եւ ահա ակն իմ տեսանէ զայս, որպէս եւ տե-սանէք զիս. կենդանի է տէր Աստուածն Պաւղոսի. եւ ես վասն ձեր աղաչեցի զնա, արժանի լինել ծա-ռայութեան տեառն նորա: Յայնժամ զօրականքն իբրեւ տեսին զփակեղն եւ զակն[1] կնոջն բացեալ, հա-ւատացին ի Քրիստոս, զոր լուեալ կայսեր ետ սպա-նանել զնոսա, եւ այնպէս կատարեցան բարի հաւա-տով ի Քրիստոս:

1. Ա. օր. զաչքն:

## ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԳԼԽԱՒՈՐ ԱՌԱՔԵԼՈՑՆ

## ՍՐԲՈՑՆ ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ՍՐԲՈՑՆ ՊԱՒՂՈՍԻ

## ՓԱՌԱՒՈՐԵԼՈՑՆ

*Սուրբ առաքեալն Պետրոս եկեալ յԵրուսաղեմէ ի քարոզել զբանն Աստուծոյ յերկրի, գնաց ի Կապադովկիա և ի Գաղատիա, ի Պոնտոս և ի Բիւթանիա և ապա ի Հռոմ ընդ Պաւղոսի։ Գտին անդ զՍիմոն զկախարդն, որ զարմացուցանէր մոգութեամբ իւրով զժողովուրդս Հռովմայեցւոց. ասէր զանձնէ իւրմէ, եթէ Ես եմ Քրիստոսն. և ասէին Հռովմայեցիքն ցՊետրոս առաքեալն վասն Սիմոնի, եթէ մեծ անն իցէ և առնէ նշանս և հաւատացուցանէ զժողովուրդն։*

*Եւ երթեալ Պետրոս յերեսս Սիմոնի և ասէ. Ո՞չ դու իցես որ խնդրեցեր ի մէնջ յառաքելոցս Քրիստոսի յԵրուսաղէմ ընչիւք առնուլ զշնորհս Հոգւոյն սրբոյ, զի առնիցես և դու նշանս իբրև զմեզ, և մեք նզովեցաք զքեզ. և այժմ եկիր աստ կամելով ի մէնջ գաղտ կեալ։ Ասէ Սիմոն. Ես եմ Քրիստոս, և դու ո՞չ ծանեար զիս. և արդ տես եթէ որպէս առնեմ նշանս մեծամեծս. և առժամայն Սիմոն մոգութեամբ մահացոյց զորդի կնոջ այրւոյ և զՊոռիքառայ զորդին կախարդութեամբ ապան. և խօսեցաւ յունկն ցլու և յերկուս հերձաւ։ Իսկ սուրբն Պետրոս զմեռեալն և զարջառն աղօթիւք կենդանացոյց, և ժողովուրդն զարմացան յոյժ և ասեն. Աստուածն Պետրոսի մեծ է որ պարգևէ կեանս մեռելոց, քան զՍիմոնին՝ որ մահացուցանէ և կենդանացուցանել ոչ կարէ։*

*Եւ լուաւ Ներոն արքայն և կոչեաց առաջի իւր*

զՊետրոս և զՍիմոն և զՊիղատոս. եհարց Ներոն ցՊիղատոս. ճանաչե՞ս զսոսա: Ասէ Պիղատոս վասն Պետրոսի եթէ Աշակերտ էր Յիսուսի, զոր ես ետու ի ձեռս Հրէից զի խաչեսցեն զնա. իսկ այրս այս Սիմոն ոչ է Յիսուսն այն. քանզի յոյժ թաւագլուխ է և հաստաձան: Եւ ելին յերեսաց Ներոնի:

Եւ Պետրոս և Սիմոն առնէին նշանս հակառակ միմեանց. Սիմոն առ աչօք երևմամբ և Պետրոս ճշմարտութեամբ և յայտնի: Ասէ Սիմոն ցՊետրոս. Ասես վասն իմ որ չեմ ես Քրիստոսն որ համբարձաւն յերկինս. արդ նայեա յիս եթէ որպէս ելանեմ յերկինս. և նոյնժամայն սլացաւ և թռչէր ի բարձրութիւնս երկնից: Ասէ Պաւղոս ցՊետրոս. Եղբայր Պետրէ, գնաց Սիմոն յերկինս: Ասէ Պետրոս. Դիցուք ծունր առ Աստուած և աղօթեսցուք: Եւ մինչդեռ յերկիր խոնարհեալ կային և աղաչէին զԱստուած զի ընկեսցէ զնա ի բարձրութենէն, և ահա Սիմոն գլխիվայր ի վերուստ իջանէր, և անկաւ ի մէջ քաղաքին ի վերայ քարեայ սալի, և խորտակեցաւ ի բազում մասունս. և երթեալ աշակերտքն իւր ժողովեցին զմարմինն և եդին ի վերայ պղնձի սեան ի մէջ պողոտային. իսկ քարեղէն սալն հերձաւ խաչանման և երևի մինչև ցայսօր:

Զայս լուեալ Ներոն արքայն, տրտմեցաւ յոյժ ընդ կորուստն Սիմոնի, և հրամայեաց բարկութեամբ ըմբռնել զՊետրոս, վասն զի բազում ժողովուրդս և չորս հարճս Պոեւէքտայ դարձոյց ի հաւատն Քրիստոսի: Եւ գիտացեալ զայս Պետրոսի փախեաւ, և ելեալ ի քաղաքէն հանդիպեցաւ Քրիստոսի և ասէ. Յի՞նչ պէտս գաս աստ, Տէր: Եւ ասէ Քրիստոս. Մտանեմ ի Հռոմ զի խաչեցայց: Ասէ Պետրոս. Եւ դարձեալ միւսանգա՞մ խաչիս, Տէր: Եւ նա ասէ. Այո, Պետրէ, միւսանգամ խաչիմ. և վերացաւ յերկինս: Եւ գիտաց Պետրոս զի վասն իւր ասաց Տէրն, դարձաւ ուրախութեամբ ի Հռոմ փառաւորելով զԱստուած: Եւ յորժամ կալան զնա, զպատմուճանս

եպիսկոպոսութեանն Հռովմայ եւ յաշակերտն իւր ի Գլինոն, զի նա միայն գնայց զկնի Պետրոսի: Եւ յորժամ տանէին զնա ի խաչ հանել, աղաչեաց Պետրոս զդահիճսն զի մի խաչեսցեն զնա կանգուն որպէս զՏէրն, այլ գլխիվայր. եւ խաչեցին զնա այնպէս. Եւ ի խաչէն ուսուցանէր ժողովրդեանն զբանն կենաց: Եւ աղօթեաց առ Աստուած եւ ասէ. Դու Տէր հայր մեր, դու եղբայր մեր, դու սիրելի մեր, դու հոգացող մեր, դու ամենայն յամենայնի, եւ ոչ այլ իմանալի բայց ի քէն Տէր Աստուած մեր. գոհանամ զքէն եւ խոստովանիմ զքեզ եւ փառաւորեմ, զի դու միայն ես Աստուած այժմ եւ յաւիտեանս յաւիտենից. եւ ժողովուրդն ասացին, ամէն. եւ առժամայն աւանդեաց զհոգին: Եւ մի ոմն հաւատացեալ որոյ անուն էր Մարկեղոս, իջոյց ի խաչէն եւ անոյշ իւղօք եւ խնկօք եւ սուրբ կտաւովք թաղեաց զմարմինն:

Եւ ի գիշերին յայնմիկ հրեշտակ Տեառն տանջեաց զՆերոն արքայն եւ ասէ. Թող տուր ծառայից Աստուծոյ եւ մի հալածեր:

Էր սուրբն Պետրոս կարճահասակ, հեր գլխոյն գանգ եւ սպիտակ. եւ միրուսն թաւ եւ սպիտակ. սպիտակ մարմին, երկայնաքիթ եւ թաւայօն, խըստասիրտ եւ արագահաշտ, սքանչելագործ:

Իսկ երանելին Պաւղոս առաքեալն էր ի Տարսոն քաղաքէն, յաւուրս անօրէն արքայից Տիբերի եւ Գայիոսի եւ Կղաւդիոսի եւ Ներոնի. էր հրեայ ի հրեայ ծնօղաց, եւ օրինաւոր փարիսեցի, եւ նախանձայոյզ հաւատոյն իւրոյ. եւ սա հրամանս ի քահանայապետիցն հալածել զքրիստոնեայսն. եւ գործակից եղեւ ի մահն Ստեփաննոսի Նախավկային՝ պահելով զհանդերձս քարկոծչացն. եւ յորժամ մերձեցաւ ի Դամասկոս, եղեւ յերկնից լոյս եւ կուրացոյց զնա, որպէս պատմէ Ղուկաս ի Գործս առաքելոցն. մկրտեցաւ յԱնանիայէ եւ դարձաւ յԵրուսաղէմ, եւ ծանոյց զնա Բառնաբաս՝ առաքելոցն, զկնի չորից ամաց համբարձմանն Քրիստոսի. եւ կարգեցին զնա առաքեալքն Քրիստոսի ապասա-

ւոր, և ծառայէր սրբոց և քարոզէր ամենեցուն զՔրիստոս: Եւ այս են քաղաքք յորս գնացն և ուսուցանէր զբանն կենաց. ի Դամասկոսէ սկսեալ, յԵրուսաղէմ չորս անգամ. ի Տարսոն, յԱնտիոք տարւոց. չորիցս անգամ ի Ս(ել)եւկիա, ի Կիւպրոս, ի Պերգին, յԱնտիոք Պիսիդիայ երիցս անգամ. յԻկոնիոն, ի Լիւստրիա, ի Դերբին երկու անգամ. ի Լիւկիաոնիա, ի Պամփիլա, յԱտալիա, ի Գաղատիա երկու անգամ. ի Բերիա, յԱթէնս, ի Կորնթոս, յԵփեսոս երիցս անգամ. ի Կեսարիա երկրորդ անգամ. ի Կրիտիս, ի Մակեդոնիա, յԵլլադա, յԱսոն, ի Միտելինի, ի Քիոս, ի Սամոս, ի Մելիտոն, ի Կոոն, ի Ռոդոն, ի Պատարա, ի Տիւրոս, ի Պտղեմիադա, ի Փիլիպիս, և ապա կապանօք ի Հռոմ: Եւ դարձեալ ի Հռոմայ ի Սիդոն, ի Միւռիս Լիւկիացւոց, ի Կնիդոն, ի Նիոսն, ի Սուրակիոսն, յՌիգն, ի Տոպիելու, յԱպամիա, ի Տաբերնոն, և դարձեալ ի Հռոմ երկրորդ (անգ)ամ: Եւ զբազում ժամանակս շրջագայութեամբն գնաց ի վաթսուն և հինգ քաղաքս և գաւառս քարոզել զանունն Քրիստոսի. և բազում վշտաց և նեղութեանց վասն սիրոյն և հաւատոյն Քրիստոսի համբերեաց, ունելով զԿնի իւր զԱրիստարքոս և զՂուկաս որ զԳործս առաքելոցն գրեաց: Եւ զերկու ամ պահէին զնա ի Հռոմ, և նախ քան զկատարումն իւր գնաց Ղուկաս ի Հռոմայ, և վասն այնորիկ ոչ գրեաց ի գիրս իւր զվկայութեամբ մահն Պաւղոսի:

Իսկ Պաւղոս կացեալ առաջի Ներոնի արքային, ըստ արժանեաց պատասխանի տանէր. և Ներոն մոլեգու իբրև կատաղի շուն, և նախ քան զԱգրիպինա զմայրն իւր՝ եսպան և զհօրաքոյրն իւր և զկինն իւր զՈքտաբինա, վասն զի հաւատացին ի Քրիստոս և այլս բազումս յազգականաց իւրոց. և ապա յամենայն երկիր արար հալածումն քրիստոնէից, և փութայր զառաքեալսն սպանանել: Կացոյց առաջի իւր զՊաւղոս, և քանզի զբազումս դարձոյց վարդապետութեամբն իւրով յաստուածգիտութիւն, զատապար-

տեաց զնա ի մահ. հրամայեաց և հատին զգլուխ
նորա, յորմէ բղխեաց արիւն և կաթն։

Էր սուրբն Պաւղոս անձամբն կարճ և հաստ, ճա-
ղատ ալեխառն, մեծաքիթ, խաժակն, թաւայօն, զո-
ւարթերես, երկայնամօրուս, և աստուածային շնորհօքն
արտափայլեալ, և բժիշկ ամենայն ցաւոց։ Կատարի
տօն սուրբ և փառաւորեալ առաքելոցն Քրիստոսի
Պետրոսի և Պաւղոսի ի յունիս քսան և ինն. զոր հանդիսի
սոցա յիշատակս պատուեսք և սոքօք զքեզ Քրիս-
տոս ծանուցեալ Աստուած ճշմարիտ փառաւորեսք.
կեցո զմեզ զի քո են փառք այժմ և միշտ և յաւի-
տեանս յաւիտենից։

## ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

Երանելի առաքեալն Պետրոս հանդերձ եղբարբքն էր ի Հռոմ քաղաքին մեծաւ ուրախութեամբ ի Տէր, գոհանալով ի տուէ և ի գիշերի ի վերայ բազմութեանն, որ ընծայէր հանապազ անուանն Քրիստոսի։ Քանզի բազումք ժողովէին և լսէին զբան վարդապետութեան նորա, և հաւատային ի Տէր։ Գային և հարճք չորք Ագրիպպեայ, Ագրիպինեա, Եւկարիա և Եփիմեա և Գոլիա, լսել զվարդապետութիւնն Քրիստոսի։ Խորշեցան յագխ իւրեանց և միաբանեալ ընդ միմեանս, սուրբ պահել զանձինս յանկողնոյն Ագրիպպեայ, և Նեղէին յոյժ ի Նմանէ։ Տարակուսեալ այնուհետև Ագրիպպաս և տրտմեալ վասն նոցա, յղէ զմի ի ծառայից իւրոց հետարածի(?), տեսանել թէ յո՞ երթայցեն։ Եւ գիտացեալ այնուհետև թէ առ Պետրոսն երթան, լուռ եղեալ առ ժամն, և իբրև եկին ասէ ցնոսա. Քրիստոնեի՞ն այն ուսոյց ձեզ չհաղորդել ընդ իս, զայս գիտասջիք զի զձեզ կորուսանեմ և զնա կենդանւոյն այրեմ։ Իսկ Նոքա յանձն առնուին զամենայն չարչարանս կրել յԱգրիպպեայ, ոյժ առեալ ի զօրութենէ Քրիստոսի, միայն զի մի՛ շաղախիցին ընդ անօրէնն։ Միւս ևս կին գեղցիկ, ամուսին Ագրիանոսի սիրելւոյ կայսեր, որում անունն էր Քսանթիպպէ, հանդերձ այլովք ևս ազատ կանամբք գայր առ Պետրոս, և լսէին զբանն կենաց։ Եւ յետ ոչ բազում աւուրց և նա ի բաց եկաց յԱգրիանոսէ։ Իսկ այր նորա յոյժ զայրանայր, քանզի առաւել ջերմութեամբ հարեալ էր ի սէր կնոջն։ Այնուհետև որպէս զգազան վայրենի կամէր կորուսանել զՊետրոս, քան-

զի գիտաց այսու, եթէ նա եղև պատճառք մեկնելոյ կնոջ նորա ի նմանէ: Բազում և այլ կանայք յարգարեցան բանիւն Աստուծոյ և յարանց ի բաց կացին, և արք ի կանանց մեկուսանալ կամեցեալք՝ սրբութեամբ պաշտել զԱստուած. և էր այնուհետև մեծ խռովութիւն ի Հռոմ: Իսկ Ագրիանոս յղեալ առ Ագրիպպաս, ամբաստան եղեալ զՊետրոսէ, եթէ դու կամիս խնդրեա վրէժս յայնմանէ, որ զիս յամուսնոյն իմոյ քեցեայ և կամ ես ինձէն խնդրեցից: Իսկ Ագրիպպաս ասէր զինքենէ զնոյն կրել ի նմանէ, և զօտարանալն ի հարճից իւրոց: Ագրիանոս ասէ. Եւ զի՞ թուլանաս Ագրիպպաս, ըմբռնեսցուք զնա և իբրև զմոգ սպանցուք, և մեք կալցուք զկանայս մեր, և զայլոց ևս վրէժս խնդրեսցուք, որ չեն սատ կարող զիւրեանց վրէժս առնուլ, վասն զի զնոցա կանայսն հրապուրեաց: Իսկ Քսանթիպեայ գիտացեալ զխորհուրդս առն իւրոյ և Ագրիպպեայ, վասն դաւաճանութեան առաքելոյն, յղէ գաղտ և զուշակէ Պետրոսի, զի ելցէ և գնասցէ ի Հռոմայ: Դարձեալ և այլ եղբարքն, հանդերձ Մարկեղաւ, աղաչէին զնա գնալ անտի: Իսկ Պետրոս ասէ ցնոսա. փախստակա՞ն լինիմ եղբարք: Եւ նոքա ասեն. Ո՛չ, զի դեռ ևս ի կարու կաս սպասաւորել Տեառն: Եւ նմա հաւանեալ, ել և գնաց միայն. և ասէ. Մի՛ ոք եկեսցէ զհետ իմ ի ձէնջ, այլ ես միայն ելանեմ փոխեալ զկերպարանս իմ: Եւ մինչդեռ ելանէր ընդ դուռն քաղաքին, տեսանէր զՏէր զի մտանէր ի Հռոմ, և իբրև ետես Պետրոս ասէ ցՏէր. Յո՞ գաս այսր Տէր: Եւ Տէր ասէ. Մտանեմ ի Հռոմ խաչիլ: Պետրոս ասէ. Դարձեա՞լ խաչիս: Եւ ասէ. Այո՛, Պետրէ, դարձեալ խաչիմ: Եւ եկեալ ի միտս իւր Պետրոս, և տեսեալ զՏէր վերացեալ յերկինս, դարձաւ ի Հռոմ ուրախութեամբ մեծաւ փառաւորելով զՏէր, զի նա ասաց խաչիլ, որ ի Պետրոս հանդերձեալ էր լինել: Եւ եկեալ առաքելոյն պատմեաց նոցա զտեսիլն որ երևեցաւ նմա: Իսկ նոքա ազացին յոգիս իւրեանց, լային և ասէին. Աղաչեմք զքեզ, տէր Պետրէ, վասն մեր տղայոցն

հոգա։ Եւ Պետրոս ասէ. Որ ինչ Տեառն կամք են՝ այն լինի. Թէպէտ և մեք ոչ կամիմք, այլ Տէր կարող է հաստատել զձեզ ի հաւատս իւր, և հիմնացուցանել ի Նմին զոր ինքն տնկեաց. և դուք զայս զիտասջիք և տնկեսջիք Նովաւ։ Այլ ես, մինչև կամի զիս Տէր ի մարմնի, ոչ ընդդիմանամ Նմա, և դարձեալ կամեցեալ առնուլ զիս, գնամ և ուրախ եմ։

Եւ Պետրոս մինչդեռ խօսէր զայս, և եղբարքն լսէին, հասեալ չորից զինուորացն կալան զնա և տարան առ Ագրիպպաս։ Եւ նա վասն ախտին իւրոյ ի պատճառս անաստուածութեան, հրամայեաց զնա խաչել։ Իբրև լուան զայս ամենայն եղբարցն բազմութիւն, մեծատանց և աղքատաց, որբոց և այրեաց, զօրաւորաց և տկարաց, խուռնընթաց ամենեքեան անդր դիմեցին, կամեցեալ տեսանել զՊետրոս և յափշտակել զնա։ Եւ հասեալք ի տեղին աղաղակէին և ասէին. Զի՞նչ մեղաւ քեզ Պետրէ, ով Ագրիպպաս, զի՞նչ չար արար հռոմայեցւոց. տես քեզէն քաջ. մի՛ սա մեռանի, և Աստուած զմեզ կորուսանէ։ Իսկ սուրբն Պետրոս հասեալ ի տեղին, ցածոյց զամբոխն և ասէ. Արք, զօրականք Քրիստոսի, որք ի Քրիստոս յուսացեալ էք, յիշեցէք զչարչարակցութիւնն Աստուծոյ որչափ բժշկութիւնս արար վասն ձեր, համբերեցէք Նմա որ գայն և հատուցանէ ըստ գործոց իւրեանց, և ամենայն իրօք լինի և այս. քանզի Տէր յայտնեաց զլինելոցն։ Այլ ես զի՞ ես հեզգամ և ոչ մատչիմ ի խաչն, զի երթեալ կացից ընդ աջմէ խաչելոյն։ Երթեալ այնուհետև եկաց առ ընթեր խաչին, և սկսաւ այսպէս. Ո՛վ անուն խաչի ծածկեալ խորհուրդ, ո՛վ անճառ շնորհք ի վերայ անուան խաչիս ասացեալ. ո՛վ բնութիւն մարդոյ մեկուսանալ յԱստուծոյ ոչ կարացեալ, բանադատեմ զքեզ աստ ի կատարածի այժմիկ լուծանելոյ եղելոյ։ Ո՞ րք ես յայտնեալ. ոչ լռեցից զխորհուրդս յոգւոյ իմոյ, փակեալ, յայտնեալ։ Խաչս մի՛ այսպէս թուեսցի ձեզ որպէս երևի, և մանաւանդ յորժամ կարէ ոք յառաջագոյն լսել չկարացեալ։ Ի վերջին ժամանակս և ի կատարածի եղեալ իմ,

լուարուք ինձ. Յամենայնի ի զգալեացս որոշեցէք զհոգիս ձեր, յամենայն երեւելեացս որ չէ ճշմարիտ՝ ի բաց լերուք, խցէք զաչս ձեր յերեւելեացս, խցէք և զշօշափելի ականջս ձեր, թագուցէք և զյայտնի գործս ձեր, գիտասջիք զայն որ Քրիստոսին եղև, և զամենայն խորհուրդ փրկութեան ձերոյ ծանիջիք: Ո՛վ Պետրէ, ժամ է քեզ մատնել զքեզ ունելեաց: Առէք այսուհետեւ որոց է իւրաքանչիւր ոք, և որպէս աղաչեմ զձեզ դահիճք, այսպէս խաչեցէք զիս գլխիվայր, և ոչ որպէս Տէրն իմ. և եթէ ընդէ՞ր այդպէս, տացից լսողացդ՝ յորժամ խաչիմ:

Եւ յորժամ կախեցին զնա, այնու օրինակաւ՝ որպէս աղաչեացն, սկսաւ ասել դարձեալ այսպէս. Արք, որոց պարտ է լսել՝ լուարուք. գիտէ՞ք զխորհուրդս ամենայն՝ որոց ամենայն եղելոց սկիզբն, քանզի և առաջին՝ զորոյ ազգի և զտեսիլն ունիմ ես, գլխիվայր անկեալ եցոյց զծնունդն՝ որ չէր զառաջինն, քանզի մեռեալ էր, շարժելն ոչ ունէր յինքեան և ի խոնարհ սողեալ անկաւ նա, և զիշխանութիւն իւր զամենայն յերկիր ընկեցեալ: Զամենայն տեսիլս զարդուս այսմիկ ընծայեցոյց անկեալ ի կոչմանէն, որով և զաջն ձախ համարեցաւ և զձախն իբրև զաջ: Զամենայն կերպարանս բնութեան իւրոյ փոխեաց, և զբարուքն չար համարեցաւ, և զբարին՝ իբրև ստոյգ չար: Վասն որոյ Տէրն ի խորհրդեանն ասէր, Եթէ ոչ առնիցէք զաջն իբրեւ զձախ և զձախն իբրեւ զաջն, զներքին իբրև զվերին, և զվերինն որպէս զներքին, և զառաջին իբրեւ զյետին, ոչ ծանիջիք զարքայութիւնն երկնից: Արդ իմաստս որ եղի առաջի ձեր, և կերպարանքս՝ որ տեսանէք զիս կախեալ նախնայն օրինակաւ՝ որ յառաջագոյն եկն ի ծնունդ մարդոյն: Դուք այսուհետեւ սիրելիք իմ, որ այժմ լսէքդ, և որ հանդերձեալ էք լսել, դադարեցէք յառաջին մոլորութենէն, պարտիք դառնալ առ Աստուած, քանզի պարտ է ելանել ի խաչն Քրիստոսի որ կարգեալ բանիւ միայն: Վասն որոյ Հոգին սուրբ ասէ. Եւ զինչ է Քրիստոս, այլ բան, ձայն Աստուծոյ: Զի բան իցէ

այս ուղիղ, յորում կախեալս եմ, և ձայն խոստովանակ փայտս բնութեան մարդոյն. իսկ բեւեռքս որ պնդի յուղիղ փայտի խոստովանակս ի միջոցի, դարձն և ապաշխարութիւն մարդոյն: Զայս ծանուցեալ քո և յայտնեալ քո ինձ ով Բան, կենաց փայտ այժմ յինէն ասացեալ: Գոհանամք զքէն ոչ շրթամբքս այսոքիւք բեւեռեցելովք, և ոչ լեզուաւս որ ստեան և ճշմարտութեան բանն ելանէ. և ոչ բանիւ այսուիկ որ արուեստականութեամբ և հիւթականութեամբ յառաջ խաղայ, այլ այնու բարբառով գոհանամ զքէն, Թագաւոր իմ, որ լռութեամբ իմանի, որ յայտնապէս չլսին, որ ոչ ապականի մարմնական գործով, յառաջ ելանէ, որ ապականելի բնութեանս է և մարմնական. որ ոչ յաշխարհի թողեալ, և ոչ ի գիր գրեալ՝ և ոչ ուրումն է և ուրումն չէ: Այլ այսու գոհանամ զքէն Յիսուս Քրիստոս: Նո՛ւր բարբառովք քով որ յիս հոգիս է, և զքեզ սիրէ և խօսի ընդ քեզ, և յանդիման լինի քեզ, որ հոգւոյ միայն իմանալիդ ես. դու հայր իմ և եղբայր իմ, դու մատակարար իմ և ամենայն ինչ իմ դո՛ւ, և ամենայն ի քէն, և ոչ ինչ որ ոչ ի քէն: Եւ դուք եղբարք իմ, ի նա ապաւինեալք, և ի նմա միայն զգութ ձեր ունել(ով), պարգեւացն հասջիք որ խոստացեալն է ձեզ, զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ: Արդ աղաչեմ զքեզ Տէր, վասն որոյ խոստացարն՝ տալ մեզ, և գոհանամք զքէն և պաղատիմք, խոստովանիմք և փառաւորեմք զքեզ մեք տկար մարդիկ, զի դու միայն ես, և ոչ գոյ այլ Աստուած, և քեզ փառք այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն:

Եւ իբրև ընթերակայ բազմութեանն զամէնն ասացին նովաւ հանդերձ, աւանդեաց սուրբ առաքեալն Պետրոս զհոգին ի ձեռս Աստուծոյ:

Իսկ Մարկեղոսի չառեալ յումեքէ ի միտ, արարեալ՝ զոր չէր արժան. տեսեալ թէ երանելին Պետրոս եհան զոգին, իւրովք ձեռօք իջուցեալ ի խաչէն, լուաց կաթամբ և գինւով, և աղացեալ մազդիկ՝ ի Նիքոս կշռւոյ՝ Մնաս յիսուն, և զմուռ և հալուէ և անրեւս

անոյշահոտ այլ եւս յխաւն մնաս, և զմահուց զնշխարս նորա, և լցեալ քարեղէն տապան մեծ ատտիկեցւոյ մեղու, և եդեալ զնա ի ներքս, և յիւրում գերեզմանի թաղեաց: Եւ ի գիշերին յայնմիկ եկեալ եկաց սուրբ առաքեալն առ Մարկեղոս և ասէ ցնա. Մարկէ, ո՞չ լուար ի Տեառնէ, թող զմեռեալսն թաղել զմեռեալս իւրեանց: Եւ Մարկեղիոս ասաց. Այո՛: Եւ Պետրոս ասաց. Արդ, զոր ետուրն մեռելոցն՝ կորուսեր, զի դու կենդանիդ՝ որպէս մեռեալ՝ մեռելոյ հոգացար: Եւ Մարկեղիոս զարթուցեալ պատմեաց զտեսիլն եղբարցն, որք ի սրբոյն Պետրոսէ էին հաստատեալ ի հաւատսն Քրիստոսի:

Եւ բանն Աստուծոյ աճէր և զօրանայր, և բազմանային աշակերտեալքն և զօրանային ի հաւատս առաւել եւս գալստեամբն Պաւղոսի ի Հռոմ:

Իսկ Ներոնն գիտացեալ յետոյ զվճարելն Պետրոսի ի կենաց, մեղադիր եղև Ագրիպպեայ, զի առանց հրամանի նորա և սպան զնա: Քանզի նա կամէր առաւել եւս մեծապէս խոշտանգել զնա եւ յերկար տանջել, զի և ի նորա պաշտօնէիցն զոմանս հաւանեցոյց ի բաց կալ ի նմանէ: Որոյ ապագաւ տրտմեալ Ներոնի և բազում աւուրս չխօսէր ընդ Ագրիպպաս: Եւ այնուհետև խնդրէր զամենայն եղբարսն որ ի Պետրոսէ աշակերտեալ էին, կորուսանել: Եւ տեսեալ զոմն ի գիշերի զի տանջէր զնա և ասէր. Ոչ կարես զծառայս Քրիստոսի հալածել և կորուսանել. արգել զձեռն քո ի նոցանէ: Եւ այնպէս Ներոնի յերկիւղի եղեալ, ի բաց եկաց յաշակերտացն ի ժամանակին յայնմիկ՝ յորում երանելին Պետրոս ի կենացս վճարեցաւ: Քրիստոսի Աստուծոյ փառք այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն:

## ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## ՊԱՒՂՈՍԻ ՍՐԲՈՅ ԱՌԱՔԵԼՈՅՆ

Եկին հասին ի Հռոմ Ղուկաս ի Գաղիլեէ, Տիտոս ի Դաղմատեայ, և մնային Պաւղոսի: Իսկ իբրև եկն և ետես զնոսա ուրախ եղև յոյժ. և անդ արտաքոյ քաղաքին տուն ի վարձու կալեալ, զբանն կենաց խօսէր նոքօք: Եւ եղև հռչակ, և բազումք յաւելուին ի հաւատս, մինչև համբաւ տարածեալ ընդ ամենայն Հռոմ, և բազմաց գալ առ նա և հաւատալ, և լինէր այնուհետև ուրախութիւն մեծ: Իսկ պատանի մատռուակ կայսեր, որում անուն էր Պատրոկղոս, երթեալ երեկորին առ Պաւղոս, և վասն ամբոխին ոչ կարաց մտանել ի ներքս, այլ նստէր ի պատուհանի միում և լսէր զբանն, և յանկարծակի անկեալ մեռաւ, և նոյնժամայն լուր եղև Ներոնի կայսեր: Եւ Պաւղոս իմացեալ հոգւովն սրբով ասէ. Տեղի եղիտ չարն փորձելով եղբարք զձեզ. ելէք արտաքս և գտանիցէք մանուկ մի անկեալ և հանդերձեալ մեռանել, բարձէք և ածէք առ իս: Եւ նոքա ելեալ բերին զնա: Իբրև տեսին բազմութիւնն խռովեցան, և Պաւղոս ասէ. Մի խռովիք, այժմ հաւատք ձեր յայտնեսցին եղբարք. եկայք ամենեքեան աղօթս արասցուք զի կեցցէ, և կամ մեք ընդ նմա մեռցուք: Եւ կարդացեալ առ Տէր բազում և մեծաւ հառաչանօք, յարեաւ մեռեալն: Եւ առաքեցին զնա հանդերձ այլովք որք էին ի տանէ կայսեր: Իսկ կայսրն լուեալ էր զմահն Պատրոկղեայ, յոյժ տրտմեցաւ և հրամայեաց այլում կալ ի վերայ գինւոյն: Եւ ասեն դռնապանքն. Տէր կայսր, Պատրոկղոս կենդանի է և կայ ի վերայ տակառացն: Եւ ասէ կայսր. Զի

երկնչի մտանել: Եւ իբրեւ եմուտ, ասէ կայսրն. Պատրոկղոս, կեա՞ս: Եւ նա ասէ. Այո՛, կեամ: Եւ ասէ կայսրն. Ո՞ արար քեզ զկեալդ: Իսկ նա լցեալ իմաստութեամբ Հոգւոյն սրբոյ ասէ. Յիսուս Քրիստոս թագաւորն յաւիտենից: Եւ կայսրն ասէ. Եւ նա՞ հանդերձեալ է թագաւորել յաւիտենից և լուծանել զամենայն թագաւորութիւնս: Եւ Պատրոկղոս ասէ. Այո՛, զամենայն որ ի ներքոյ երկնից են դադարեցուցանէ, և նա լիցի միայն, և ոչ իցէ թագաւորութիւն որ թագիցէ ի նմանէ: Եւ ետ ապտակ ածել նմա. և ասէ (ց)Պատրոկղոս. Եւ դո՞ւ կամիս զինուորել նմա: Եւ նա ասէ. Այո՛, վասն զի նա յարոյց զիս ի մեռելոց: Եւ յետ այսր Բարսաբաս և Յուստոս և Որիոն և Լայնոտն և փեստոս քաղաքացին, սենեկապետք արքային ասեն ցնա. Եւ մեք երկնաւոր թագաւորին զինուորիմք: Իսկ նա տանջեալ զնոսա սաստկութեամբ մեծագոյնս, յետոյ արկ ի բանդ զնոսա, և հրամայեաց գրել վճիռ. Սոքա են մեծ թագաւորին զօրականք: Եւ հրամայեաց զամենեսեան զորս գտցեն ի զօրականացն Քրիստոսի, սպանանել: Ածին և անդր բազում կալանաւորս և զՊաւղոս կապեալ, ընդ որ հայէին ամենեքեան կապեալքն ակնածութեամբ որ ի նոյն կապանսն էին, մինչև իմանալ կայսերն թէ նա է ի վերայ ամենայն կալանաւորացն և Քրիստոսի զօրականացն: Եւ ասէ ցնա. Այր դու, մեծի թագաւորին զօրական և իմ կապեալ. զի՞նչ զմտաւ ածեալ է քո, եկիր ի հռովմայեցւոց իշխանութիւնս, և յիմմէ նահանգէս զօրս ժողովես տանել զինուոր քում թագաւորին: Եւ Պաւղոս մեծաւ համարձակութեամբ առաջի ամենեցուն ասէ. Ով կայսր, ոչ միայն ի քումմէ նահանգէ աստի ժողովեմ զինուորս, այլ և յամենայն աշխարհէ, զի այսպէս գրեալ է. Մի՛ զոք արգելուլ, որք կամին զինուորել իմում թագաւորին. արդ, եթէ կամիս և հաճոյ է քեզ, և դո՛ւ զինուորեա՛ նմա, քանզի ոչ մեծութիւն և ոչ այլ ինչ որ յաշխարհիս է պատուական, կեցուցանէ զքեզ: Արդ, եթէ դու անկցիս առաջի նորա և

*արաշխցեն՝ կեցցեն. քանզի յաւուր միում հանդերձեալ է դատել զաշխարհս: Եւ զայս լուեալ դատաւորին կայսեր, զամենայն կալանաւորսն հրամայեաց հրով այրել, և զՊաւղոս հրամայեաց գլխատել օրինօք հռովմայեցւոցն: Իսկ Պաւղոս չլռէր ի խօսելոյ զբանն:*

*Եւ այնուհետև և Ներոնն ի Հռովմ և զբազումս ազդմամբ չարին զքրիստոնեայս սպանանէր. մինչ կարի դժուար թուէր հռովմայեցւոցն և զալ յարքունիս ասելով. Բառնա՞ս զհռովմայեցւոց զօրութիւնս: Եւ իբրև լուաւ՝ դադարեաց այնուհետև, և եդեալ գրով, մի՛ զոք ի քրիստոնէիցն սպանանել մինչև ինքն գիտասցէ վասն նոցա:*

*Յայնժամ Պաւղոս ածաւ առաջի նորա, յետ հրամանին եդելոյ. և Ներոնն ի նոյն միտս կացեալ մնացեալ ասէր. Զդա գլխատեցէ՛ք: Իսկ Պաւղոս ասէ. Ո՛վ կայսր, ոչ եթէ սակաւ ժամանակս կեամ թագաւորին իմում. զի եթէ գլխատեսցես զիս, զայս արարից, դարձեալ յարուցեալ երևեցայց քեզ, և ցուցից թէ ոչ մեռայց. այլ կեամ Յիսուսի Քրիստոսի որ գայն դատել զաշխարհս ամենայն: Իսկ Լոնգոս և Կրեստէս ասացին. Պաւղոս, ուստի՞ ունիցիս զթագաւորն զայն, զի այսպէս հաւատասցուք ի նա, և ոչ փախել յամառութիւնս յայս: Եւ Պաւղոս, սկսաւ խօսել նոցա զբան վարդապետութեան այսպէս. Արք, որք ի յանգիտութեան էք և ի մոլորութեան, դարձջիք և ապրեսջիք ի հրոյն որ գալոցն է ի վերայ ամենայն աշխարհաց: Քանզի ոչ որպէս դուք կարծէք թագաւոր այն յաշխարհէ գալոց է, և զինուորեմք նմա, այլ յերկնից կենդանւոյն Աստուծոյ, որ վասն անօրէնութեանց զայ դատաւոր, և երանի այնոր հաւատայ ի նա, զի կեցցէ յաւիտեան. վասն զի գայ ի մաքրումն, յայրել զաշխարհս: Եւ նոքա առաջի նորա ասեն. Աղաչեմք զքեզ ծառայ Աստուծոյ, օգնեա մեզ և արա զմեզ որպէս դուդ ես, և արձակեմք զքեզ ի մահուանէդ: Եւ Պաւղոս ասաց. Ոչ եմ փախստական ի Քրիստոսէ, այլ օրինաւոր զօրական եմ Աստուծոյն կենդանւոյ. եթէ գիտէի եթէ մեռանիմ*

խմում թագաւորին, առնէի զայդ ով Ղոնգնէ և Կրեստէ: Այլ վասն զի կեամ Աստուծոյ խմում և զնա սիրեմ, երթամ առ Տէրն իմ, զի ընդ նմա եկից ի փառս Հօր իւրոյ: Եւ նոքա ասեն ցնա. Եւ զիա՞րդ յետ զլխատելոյն քո կեցցուք մեք:

Եւ մինչդեռ նա զայն խօսէր, առաքէր Ներոն զՊարթենէս և զփարէս տեսանել թէ գլխատեա՞լ իցէ Պաւղոս: Եւ իբրև եկին գտին զՊաւղոս կենդանի: Եւ Պաւղոս կոչեցեալ զնոսա առ ինքն ասէ. Հաւատացէք ի կենդանին Աստուած որ և զիս և զհաւատացեալս իւր յարուցանէ ի մեռելոց: Եւ նոքա ասեն. Երթամք առ Ներոն այժմ, և յորժամ մեռանիցես դու և յարիցես, հաւատասցուք յայնժամ: Եւ Ղոնգնոս և Կրեստէս աղաչեն զնա վասն փրկութեան իւրեանց: Ասաց Պաւղոս. Ընդ արշալոյսն առաւօտուն եկեալ ձեր և ի գերեզման իմ, գտջիք աստ երկուս զի յաղօթս կայցեն, զՏիտոս և զՂուկաս, նոքա տացեն ձեզ զկնիքն տէրունական: Եւ կացեալ Պաւղոս առաջի, յարեւելս կոյս, յաղօթս եկաց յերկար, խօսեցաւ եբրայեցերէն ընդ արսն, և ձգեալ զպարանոցն այլ ոչ եւս խօսեցաւ: Եւ իբրև եհատ զգլուխն դահիճն, կաթն ցայտեաց ի հանդերձս նորա. և նա զարմացեալ փառաւոր արար զԱստուած, որ ետ զայնպիսի փառս Պաւղոսի, և երթեալ պատմեաց կայսեր զեղեալսն:

Եւ մինչդեռ նա զարմանայր և տարակուսէր, եկն Պաւղոս յիններորդ ժամուն, մինչդեռ բազումք շուրջ կային զնովաւ փիլիսոփայք և սիրելիք. և ասէ ցկայսր. Ահաւասիկ կեամ ես Պաւղոս Աստուծոյ զօրականս, և ոչ մեռայ, այլ կեամ. և դու տես զի լինելոց է քեզ չար, յետ ոչ բազում աւուրցս այսոցիկ, վասն զի հեղեր արիւն արդար. և նա խռովեալ ընդ բանսն, հրամայեաց արձակել զկալանաւորսն և զամենայն կապեալսն: Իսկ որոց պատուիրեաց Պաւղոս առաւօտուն երթալ ի գերեզմանն, գտին աստ երկուս զի կային յաղօթս, և զՊաւղոս ի մէջ նոցա, և զարմացան յոյժ: Եւ տեսեալ զնոսա Տիտոսի և Ղուկայ, և զահի հարան ի մարդկանէն երկիւղէ, ի փախուստ

դարձան։ Իսկ նոքա զկնի ընթացեալ հասին և ասեն. Ոչ հալածեմք զձեզ այլ աղաչեմք զի տայցէք մեզ զկնիքն, որպէս և Պաւղոս պատուիրեաց որ ընդ ձեզ այժմ յաղօթս կայր։ Եւ նոցա լուեալ, յոյժ ուրախ եղեն և ետուն նոցա զկնիքն տէրունական, փառաւորելով զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին այժմ և յաւիտեանս. ամէն։

Առ Ներոնիւ կայսրբ Հռովմայեցւոց վկայեաց Պաւղոս առաքեալ, կորեալ զգլուխն սուսերաւ, յերեսներորդի վեցերորդի ամի կենարար չարչարանացն. զբարւոք պատերազմ պատերազմեալ ի Հռոմ քաղաքի, որ օր եօթն էր Պանէմոն ամսոյ, որ կոչի Հռովմայեցւոց, յառաջ քան զերիս կաղանդացն յուլեայ, որ է մարգաց ամիս, յորում կատարեցաւ սուրբ առաքեալն իւրով վկայութեամբն ի վաթսներորդի վեցերորդի ամի փրկչին մերոյ Տեառն գալստեանն։ Եւ ես ստոյգ նշանակեցի զժամանակ վկայութեան Պաւղոսի առաքելոյ։

# ՏԵՍԻԼ

## ԱՌԱՔԵԼՈՅՆ ՊԱՒՂՈՍԻ

### ՈՐ ՏԱՐԱՆ ՀՐԵՇՏԱԿՔՆ ԶՀՈԳԻ ՆՈՐԱ

*Եւ յորժամ տարան զՊաւղոս և ցուցին նմա զանգիս արդարոցն և մեղաւորացն, և մարմինն կայր կենդանի և հոգի նորա ետես զանգիս հանգստեան արդարոցն և զտանջանս մեղաւորացն: Զեօթն օր և զեօթն գիշեր, հրեշտակք ի շուրջ ածին և ցուցին նմա զամենայն սքանչելիսն Աստուծոյ. և արձակեցին զՊաւղոս քարոզել ընդ ամենայն տիեզերս: Արդ, լուարուք որդիք մարդկան և ի միտ առէք, և յորժամ լսէք զպատուիրանս զայս, ի միտ առէք և ողբացէք և ապաշխարեցէք և լացէք զյանցանս ձեր, յաղօթս կացէք և ջանացարուք վաղվաղակի վասն մեղաց ձերոց ի տուէ և ի գիշերի, և առաւօտու և ի վաղորդեան: Զի ի մտանել արևուն ամենայն հրեշտակքն տանին զփառաբանութիւն առաջի Աստուծոյ, զամենայն աւուրս կենաց իւրեանց, երկիր պագանեն Աստուծոյ և մատուցանեն զգործս մարդոյ զոր գործեալ իցէ յերեկորեայ մինչև յառաւօտն և ի վաղորդայնէ մինչև ցերեկոյն, եթէ բարի է գործեալ և եթէ չար. և են հրեշտակք՝ որ երթան ուրախութեամբ, և են՝ որ տրտմութեամբ: Ի մտանել արևուն որ է իսկ առաջին ժամ գիշերոյն, երթան ամենայն հրեշտակքն յարս և ի կանայս զի պահեսցեն զնոսա, զի պատկեր Աստուծոյ է մարդն, երթան հրեշտակքն առ Աստուած և երկիր պագանեն, և մատուցանեն զգործս մարդոյն, եթէ բարի և եթէ չար, զպատասխանիսն հանեն առ Աստուած:*

Ձեզ ասեմ որդիք մարդկան. զի յորժամ հրեշտակն առ Աստուած տանի զաղօթս և զերկրպագութիւն առաջի Աստուծոյ, ես Պաւղոս տեսի ի նմին ժամուն որ եկին հրեշտակքն ուրախութեամբ և սաղմոսիւք երկիր պագին առաջի Աստուծոյ: Հոգի սուրբ եղ ընդ առաջ նոցա, և ձայն որ ասէ. Ուստի՞ գայք պաշտօնեայք մեր, զի բերէք զբեռինս և զաւետիս: Ետուն պատասխանի և ասեն. Մեք գամք յայնցանէ՝ որք որոշեցին զանձինս իւրեանց յաշխարհէ և յայնմանէ որ բնակեալ են յայլս և ի փապարս լերանց, լան և մաշեն զանձինս իւրեանց վասն անուան քո: Ձայն որ ասէ. շնորհ իմ և օգնութիւն ի վերայ նոցա և ոչ թողից զնոսա, զի արարին զանձինս իւրեանց տաճար և բնակարան սուրբ Երրորդութեանն:

Իբրև գնացին այն հրեշտակքն, ահա եկին այլ հրեշտակք երկիր պագանել ի ժամու իւրեանց որք լային և ողբային. և հոգի Տեառն եղ ընդ առաջ նոցա և ասէ. Ուստի՞ գայք պաշտօնեայք մեր: Ետուն պատասխանի լալով և ասեն. Մեք գամք յայնցանէ որ կոչեցեալ է անուն քո ի վերայ նոցա, թշուառական դնեն պատճառս յամենայն ի գործս իւրեանց. աղօթք սուրբ ոչ արարին և ոչ կացին ի պատուիրանն Աստուծոյ, և ոչ եղեն լաւ առաջնորդաց իւրեանց, զի՞րդ պահեմք զնոսա: Եղև ձայն յԱստուծոյ որ ասէ. Մի՛ դադարէք պահել զնոսա, մինչ զի դարձցին և ապաշխարեսցեն. ապա թէ ոչ՝ գան առ իս և ես դատեմ զնոսա: Իմացարուք որդիք մարդկան, զի զամենայն զոր ինչ գործէք եթէ չար և եթէ բարի, զամենայն մատուցանեն առաջի Աստուծոյ:

Իբրև կայի ես անդր, եկն հրեշտակն և ասէ ցիս. Եկ զկնի իմ և ցուցից քեզ զտեղիս արդարոցն յորժամ ելանեն ի մարմնոյ իւրեանց. և անտի տարայց զքեզ ի տանջանս մեղաւորացն և ցուցից քեզ զխորութիւնս դժոխոցն, և անդ ցուցից քեզ զանձինս մեղաւորացն՝ յորժամ ելանեն ի մարմնոյ իւրեանց: Եւ գնացի զկնի նորա և հայեցայ ի խոնարհ երկիր

և տեսի զիշխան ահաւոր և անդ էին հոգիք մոլորելոցն որ մոլորեցուցանէին զմարդիկ յԱստուծոյ. և անդ հոգիք ստութեան և ագահութեան, և անդ էին իշխանք ամենայն չարութեանց աշխարհին: Զայս ամենայն ետես ակն իմ ի ներքոյ երկնից:

Եւ դարձեալ հայեցայ և տեսի հրեշտակս ահաւորս, անողորմս, որ ընակութիւն ոչ գոյ ի նոսա. և էին երեսք նոցա լի բարկութեամբ և ատամունք նոցա էին արտաքոյ բերանոյն, աչք նոցա փայլէին որպէս պղնձիս և հեր գլխոյ նոցա մեծամեծս, և բոց հրոյ ելանէր ի բերանոյ նոցա: Հարցի և ասեմ ցհրեշտակն. Տէր, ո՞վ են նոքա: Եւ պատասխանի տուեալ ասէ. Նոքա այն են որ տաքեն զանձինս ամբարըշտացն ի տանջանս և անողորմ տանջեն զանձինս մեղաւորացն:

Եւ հայեցայ ի բարձունս և տեսի այլ հրեշտակս որ էին երեսք նոցա լուսաւոր իբրև զարեգակն, ածեալ էին ընդ մէջս իւրեանց կամարս ոսկիս և ունէին ի ձեռին իւրեանց պսակս և զգրոշմ Աստուծոյ, և զգեցեալ էին հանդերձս լուսաւորս, և էր գրեալ ի նոսա անուն որդւոյն Աստուծոյ, և էին լի ամենայն հեզութեամբ: Հարցի ցհրեշտակն և ասեմ. Տէր, ո՞վ են սոքա: Եւ պատասխանի և ասէ. Այս են որ տանին զանձինս արդարոցն: Եւ հարցի և ասեմ. Եթէ պատահէին այն ահաւոր հրեշտակքն, զի՞նչ արասցեն արդարոցն: Եւ նա ասէ. Հրեշտակն ողորմութեան է ընդ նոսա, ոչ երկնչին զի արդարք են և ունին զմատանին ի ձեռին իւրեանց:

Հայեցայ և տեսի այր մի արդար զի մեռանէր. և եկին հրեշտակք ողորմութեան և առին զհոգի նորա և գնացին ընդ այն տեղին՝ ուր հոգիքն էին մոլորելոցն և ստութեան, պոռնկութեան և ագահութեան. և տեսին զի ոչ գոյր նոցա ինչ պատճառք: Իբրև տեսին զնա, լալով ասացին. Ով անձն որ զերծար ի ձեռաց մերոց, քանզի արարեալ էր քո զկամս Աստուծոյ յերկրի, զի ահա ուրախ են վասն քո հրեշտակք քո: Ձայն եղև յերկնից, որ ասէր. Ածէք զնա

այսր: Եւ իբրեւ մտին յերկինս, ի նմին ժամու ձայն որ ելանէր ի բիւրուց բիւրուց հրեշտակաց որ ասէր. Զօրացիր, ասեն, եւ քաջալերեա, քանզի զարմացան իբրեւ տեսին զի ունէր զգրոշմն Աստուծոյ. աղաղակէին միաբան եւ ասէին. Զօրացիր եւ քաջ լեր, ասեն, զի ամենեքեան ուրախ են ընդ քեզ, քանզի արարեալ է քո զկամս Աստուծոյ յերկրի: Եւ առաջնորդեցին նմա. գնաց եւ չոգաւ երկիր եպագ Աստուծոյ: Եւ իբրեւ դադարեցին, եկն Միքայէլ հրեշտակապետն բազում զօրօք հրեշտակաց ընդ նմա, եւ նոքա մերձեցան եւ երկիր պագին առաջի Աստուծոյ: Եւ ետ զնա ցՄիքայէլ հրեշտակապետն եւ տարաւ զնա ի կեանսն յաւիտենից, վայելել զանանց բարութիւնսն:

Ի նմին աւուր ելի յայլ տեղի, եւ տեսի այր մի մեղաւոր. եկեալ էին բարի հրեշտակքն եւ վիճէին ի վերայ անձինն, եւ ոչ գտին իրաւունս բարի հրեշտակքն. այլ ըմբռնեցին զնա անողորմ հրեշտակքն: Իբրեւ մերձեցան յերկինս լսել զձայն որ ասէր ի բիւրուց հրեշտակաց. Վա՜յ քեզ, թշուառական անձն. լաւ էր քեզ եթէ չէր ծնեալ զքեզ երկիր: Ահա եկն հրեշտակ անձին ընդ այնորիկ եւ ասէ. Այս է անձն որ մոռացանէի զգործս զորս հանապազ: Եղեւ ձայն որ ասէր. Ո՞ւր է արդարութիւն քո, ո՞ւր է ողորմութիւն քո. գիտէիր զարդարութիւն եւ գործէիր զանօրէնութիւն: Եւ պատասխանի հոգին թշուառական եւ ասէ. Ո՞վ է որ էջն ի դժոխս. եւ ել պատմեաց մեզ, եթէ գոյ դատաստանք: Հայեցայ եւ տեսի զչարիս նորա զամենայն զոր յիշէր. եւ եղեւ ձայն որ ասէր. Հանէք զդա ի խաւարն արտաքին, անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց:

Եւ ասէ ցիս Հրեշտակն. Եկ զկնի իմ եւ տարայց զքեզ ի տեղիս արդարոցն: Եւ գնացի զկնի նորա. եւ հայեցայ ի խոնարհ երկիր եւ տեսի լոյս եւ մլար եւ խաւար: Եւ ասեմ ցհրեշտակն. Տէր, զի՞նչ է այս: Եւ ասէ ցիս. Այս է մեգք որ խառնեալ են ընդ աղօթս մեղաւորաց: Եւ յոգւոց հանելով՝ ասեմ ցհրեշտակն. Կամէի տեսանել զանձինս մեղաւորացն թէ յո՞րում

նմանութեան եղանեն յաշխարհէս։ Եւ պատասխանի
հրեշտակն և ասէ ցիս. Հայեաց ի խոնարհ երկիր։
Եւ հայեցայ և տեսի երկիր բարի և վայելուչ. և
ահա պայծառ է եօթնպատիկ քան զճառագայթս արե-
գականն։ Հարցի ցհրեշտակն և ասեմ. Տէր, ո՞ է
տեղիս այս։ Ասէ ցիս. Այս տեղիք կուսանացն են
և այնոցիկ որ նեղեալ են և մաշեալ զանձինս քաղցով
և ծարաւով վասն անուանն Աստուծոյ։

Եւ յետ այսորիկ տեսի յարևելից կուսէ գետ ջրոյ.
և գետն էր սպիտակ քան զկաթն։ Հարցի ցհրեշտակն.
Տէր, զի՞նչ է այս։ Եւ ասէ ցիս. Այս է ծովն
փափկութեան, և յարևելից կուսէ մտանէ ի քաղաք
օծելոյն. այլ ոչ են արժանի մտանել ի քաղաք օծե-
լոյն. բայց ճանապարհ այս է որ տանի ի նա. եթէ
ոք շնացեալ կամ ամբարշտեալ, և դարձեալ ապաշ-
խարեսցէ և արասցէ պտուղ ապաշխարութեան, յոր-
ժամ ելանէ ի մարմնոյն, ածեն զնա երկիր պագանել
առաջի Աստուծոյ, և յետ այնորիկ տան զայնպիսին
ցՄիքայէլ հրեշտակապետն կատարանացն և մկրտէ
զնոսա ի ծովս յայսմիկ, և ածեն զնոսա ի քաղաքս
յայսմիկ ընդ այնոսիկ որք ոչ երբեք մեղան։ Ես
զարմացայ և օրհնեցի զԱստուած։ Եւ պատասխանի
հրեշտակն. Եկ զկնի իմ և տարայց զքեզ ի քաղաքն
յայնմիկ։ Եւ յանկարծակի եղև ինձ ելանել ի վերայ
ծովուն, և եհան զիս ի նաւ ոսկի. և էին հրեշտակք
իբրև հազարք, սաղմոսելով առաջնորդէին ինձ մինչև
մտի ի քաղաք օծելոյն, և բնակիչք քաղաքին ուրախ
էին ընդ երթալն իմում ի քաղաքն. և էր իսկ լոյս
նորա պայծառ՝ առաւել քան զլոյս աշխարհիս, եօթն-
պատիկ քան զճառագայթս արեգականն։ Եւ էր իսկ
տեսիլ քաղաքին միապէս ոսկի, և երկոտասան պա-
րիսպ շուրջ զնովաւ, և երկոտասան հազար աշտարակ
կա(յին) ի նմա, և երկոտասան դրունք մոխց ի քա-
ղաքն և էին բարձր ի միմեանց և յայնցանէ, և էին
զարդարեալք ամենայն վայելչութեամբ. և չորս գետ
գային շուրջ զնովաւ, և յարևելից կուսէ էր գետն
մեղր, և յարևմտից էր գետն գինւոյ. և ի հարաւոյ

*էր գետն կաթն. և ի հիւսիսոյ էր գետն ձիթոյ: Եւ իբրև տեսի, հարցի զհրեշտակն. Ո՞վ են այս գետքս որ կան շուրջ զքաղաքաւս: Ասէ ցիս. Այս գետք նման են այնմ գետոյ որ յաշխարհին են. անուն գետոյն որ մեղր է՝ Փիսոն է. և անուն գետոյն կաթինն՝ Տիգրիս է. և անուն գետոյն որ գինին է՝ Գեհոն է. և անուն գետոյն որ ձէթն գայ՝ Եփրատէս: Քանզի արդարք մինչ յաշխարհին էին՝ ոչ արարին զկամս անձանց իւրեանց, այլ քաղցիւ և ծարաւով կային վասն անուանն Աստուծոյ: Վասն այնորիկ գան ի քաղաքս յայս և հատուցէ նոցա Աստուած բիւրապատիկ քան զոր տեսանես: Դարձեալ հարցի զհրեշտակն. Տէր, ո՞յս են պարգեւքն զոր խոստացաւ Աստուած սրբոց իւրոց: Եւ նա ասէ. Ոչ են այս միայն, այլ առաւել եօթնպատիկք (քան) զոր տեսանես: Իբրև եկանեն սուրբք յաշխարհէ և գան տեսանել զայս պարգեւս, լան և ասեն յոգւոց հանելով. Ընդէ՞ր ոչ լռաք բան մի բարի խօսք ի բերանոյ մերմէ. ընդէ՞ր բարկացուցաք զեղբարս մեր և զընկերս: Իբրև յաւելաւ ի խօսս, հարցի և ասեմ. Տէր, ո՞յս միայն են պարգեւքն զոր խոստացեալ է Աստուած սրբոց իւրոց: Ետ պատասխանի հրեշտակն. Ոչ է այս միայն զոր տեսանես այժմ. այս այնոցիկ են որ կանայս ունին և կանանցն որ արս ունին, և հանդարտք եղեն ի կուսութենէ իւրեանց և արարին զկամս Աստուծոյ, տայ նոցա զայս պարգեւս:*

*Հարցի զհրեշտակն և ասեմ. Տէր, ո՞յր է այս տեղիս: Եւ ասէ ցիս. Երկրպագուացն է և հեզոցն, որպէս ասէ Տէրն, եթէ երանի հեզոց՝ զի նոքա ժառանգեսցեն զերկիր:*

*Եւ դարձեալ եհան զիս ընդ դուռն արեւելեան, և տեսի անդ ծառս մեծամեծս, և պտուղ ոչ գոյր ի նոսա. եկանէին մարդիկ և մտանէին ի քաղաքն. լային նոքա յարժամ մտանէին մարդիկն ի քաղաքն, և ծառքն ապաշխարէին, և ի ծունր իջանէին և կանգնէին: Եւ իբրև տեսի, լացի ընդ նոսա և ասեմ. Տէր, ո՞վ են սոքա զի ոչ եղեն արժանի մտանել ի*

քաղաքս յայս, քանզի ամենայն մարդիկ մտանեն։ Եւ ասէ. Սոքա երիցունք էին հպարտք. հանապազ կային յաղօթս, բայց զմիտս իւրեանց հպարտ ունէին քան զամենայն մարդիկ. նզովէին, բարձր ունէին զանձինս իւրեանց, արհամարհէին զընկերս իւրեանց, ոմանց ողջոյն տային, և ոմանց բանային զդուրս տանն և ոմանց ոչ բանային. եթէ ընկերքն տակաւ ինչ ասէին, բարձրանային ի վերայ նոցա, և լի էին ամբարտաւանութեամբ։ Հարցի և ասեմ. Եւ ամբարտաւանութիւն արգելո՞ւ զնոսա ի քաղաքէս։ Եւ ասէ ցիս. Արմատ ամենայն չարեաց՝ ամբարտաւանութիւնն է. մինթէ որդին Աստուծոյ որ էջ յաշխարհ մինթէ ամբարտաւանեցա՞ւ. ոչ, այլ խոնարհեցաւ։ Հարցի և ասեմ. Եւ ծառ(այ)քն ընդէ՞ր խոնարհին և կանգնին. և ասէ. Ի ժամանակին որ էին յերկրի, զժամն ասէին և ծունր ո՛չ ածէին. այժմ ապաշխարեն, որ ոչ գոյ տեղի ապաշխարելոյ։

Եւ ասէ ցիս հրեշտակն. Եկ զկնի իմ և տարայց զքեզ ի տեղիս արդարոցն։ Եւ եհան զիս յարևելից կուսէ ուր գետն է Գեհոն։ Եւ ետես անդ զԱբրահամ և զԻսահակ և զՅակոբ և զամենայն արդարսն. իբրև տեսին զիս, ողջոյն ետուն ինձ։ Եւ ասեմ ցհրեշտակն. Տէր, ո՞ր է տեղիս այս։ Եւ ասէ ցիս. Այս այնոցիկ է որ ընկերասէր և օտարասէր է. յորժամ ելանէ հոգին ի մարմնոյն, տայ զայնպիսին ցՄիքայէլ հրեշտակապետն. և ընդ այս ճանապարհս ածեն ի քաղաքս յայս, և արդարքն ողջոյն տան նմա և ասեն. Ընդ որս մտեր դու ի մէջս։

Եւ տարաւ զիս միւսանգամ ի տեղի մի խաւարի. և տեսի այր մի մեղաւոր անդ, և տանէին զնա հրեշտակքն ի տեղի խաւարի, և տանջէին զնա հրեղէն գաւազանաւ. և ձայն եղև յերկնից և ասէր. Ածէք զթշուառականդ որ բարկացոյց զԱստուած և զպատուիրան նորա ոչ պահեաց։ Իբրև ածին զնա, տեսին զնա հրեշտակք և հրեշտակապետքն բիւրք բիւրուց, աղաղակէին և ասէին. Վայ քեզ, թշուառական, զի՞նչ կամիս տալ պատասխանի ընդ գործոց քոց։ Պա-

տասխանի ետ Հրեշտակն որ պահէր զանձն և ասէ. Լացէք ամենայն Հրեշտակք երկնից ընդ իս: Պատասխանի ետուն ամենայն Հրեշտակքն և ասեն. Հանէք զդա ի մէնջ, զի հաս զորս ձանձրացուցանէ զմեզ: Եւ յետ այնորիկ ածին զնա առաջի Աստուծոյ և ցուցին նմա զԱստուած. և Հրեշտակն որ պահէր զնա աղաղակեաց և ասէ. Ես եմ Հրեշտակն, որ մատուցանէի զգործս զորս զոր գործէր ի տուէ և ի գիշերի. Հատո՛ ըստ գործոց դորա: Ձայն եղև առ նա և ասէ. Ո՞ր է բարօք քո փոխանակ ամենայնի զոր արարի քեզ բարի. միթէ ո՞չ տաճար եղի քեզ քան զարդարոյն. միթէ որ մի զարեգակնն ո՞չ ծագեցի ի վերայ քո իբրև ի վերայ արդարոյն. կամ թէ ո՞չ ետու պարարտութիւն յանդաստանս և ի տունս քո: Նա իբրև լուաւ, կարկեցաւ և ոչ տայր պատասխանի: Աղաղակէին ամենեքեան և ասէին. Արդար ես դու, Տէր, և ուղիղ են դատաստանք քո, զի ամենեքեան որ առնեն ողորմութիւն՝ եղիցի նոցա ողորմութիւն: Եւ դատաւորն ասէ. Արդ տուք զդա ի մեղաւոր Հրեշտակն, տանել ի խաւարն արտաքին, անդ եղիցի լալ և կրճել ատամանց. և անդ եղիցի մինչև յօր դատաստանի իմոյ:

Տեսի անձն մի զոր ածէին երկու Հրեշտակք, որ լայր և ասէր. Աստուած արդար ճշմարտութեամբ և քաղցր: Եւ ասէ Հոգին այն. Այս եօթն օր է որ մատնեցայ ի ձեռս այս երկու Հրեշտակացս, և տարան զիս ի տեղիս որ ոչ էի տեսեալ. ասէ ցիս արդար դատաւորն Աստուած. Զի՞նչ գործ գործեալ է քո, որ ոչ արարին քեզ ողորմութիւն. խոստովանեա զմեղս քո զոր արարեր յերկրի, զի ոչ դու արարեր ողորմութիւն: Ետ պատասխանի և ասէ. Ոչ մեղայ: Եւ բարկացեալ սրտմտութեամբ յասել նորա եթէ ոչ մեղայ, և ասէ ցնա. Ընդէ՞ր յաշխարհին յայն զոր ինչ մեղանչէիք յիս, ոչ խոստովանէիք և ապաշխարէիք. պատճառս մեղաց ուսանէիք. ո՞չ այնպէս է: Եւ միւանգամ լուան ձայն ի բիւրուց բիւրուց Հրեշտակաց որ ասէին. Արդար ես դու Տէր և ուղիղ են դատաս-

տանք քո: Եւ դարձեալ ասեն. Հանէք զծառայդ անպիտան ի խաւարն արտաքին, անդ եղիցի լալ և կրճել ատամանց:

Եւ ասէ ցիս հրեշտակն. Եկ զկնի իմ և տարայց զքեզ ի տեղիս արդարոցն: Եւ գնացի զկնի նորա: Եւ տարաւ զիս յերկրորդ երկինս և կացոյց զիս առաջի դրանն. և էր դուռն ոսկի, և առաջի նորա երկու սիւնք ոսկի և ի վերայ նորա երկու տախտակս լի գրով: Դարձաւ էառ զիս հրեշտակն և ասէ ցիս. Երանի է քեզ թէ մտանէիր ընդ այս դուռն. զի ամենեքեան չեն արժանի բայց միայն ամբիծքն: Հարցի և ասեմ. Տէր, զինչ է այս գիրս ի տախտակս: Եւ ասէ. Անուանք արդարոցն է, որք պաշտեն զԱստուած ամենայն սրտիւք իւրեանց և նոքա պանդուխտք են յերկրի: Հարցի և ասեմ. Տէր, անուանք նոցա գրա՞ծ է աստ թէ ոչ: Եւ ասէ ցիս. Ոչ եթէ անուանք նոցա միայն այլ և նմանութիւնք նոցա, և մազ գլխոյ նոցա գրեալ են աստ և այլ գործք նոցա և կերպարանք նոցա: Իբրև մտի ես ի ներքս անդ, պատահեաց ինձ այր մի ալեոր, և երեսն նորա լուսաւոր էին որպէս զարեգակն. եկն ընդ առաջ իմ և համբուրեաց զիս և ասէ. Ո՛ղջ լեր սիրելի Աստուծոյ Պաւղոս, և արտմեցաւ յոյժ և ասէ. Կամէի զամենայն երկիր, որ մտանէին յայս պարտէզս, և սակաւք են որ մտանեն աստ. լամ և յոգւոց հանեմ վասն ազգի մարդկան, քանզի յոյժ բազում են պարգևքն և բարիքն, զոր պատրաստեաց Աստուած սրբոց իւրոց: Հարցի վասն ալեւորին և ասեմ. Տէր, ո՞վ է սա ալեւորս այս: Եւ ասէ. Սա Ենովք է դպրապետն արդարութեան: Տեսի անդ և զԵղիա, եկն ետ ինձ ողջոյն, և իբրև ետ զողջոյնն, ի լաց հարաւ և ասէ. քանի՞ են պարգևքն զոր պատրաստեաց Աստուած սրբոց իւրոց: Եւ ասէ հրեշտակն. Տես և ի միտ առ զոր ցուցի քեզ, և պատմեա որդւոց մարդկան յերկրի:

Եւ ասէ հրեշտակն. Եկ զկնի իմ և ցուցից քեզ զոր արժանն է. պատմեա որդւոց մարդկան: Եւ

տարաւ զիս ի գետն որ էր ի հարաւոյ կոյս քաղաքին· զի էին անդ որդիք մարդկան ուրախ և սաղմոսէին: Եւ ասեմ· Տէր, ո՞վ են սոքա: Եւ ասէ ցիս· Սոքա այնոքիկ են որ ետուն զանձինս իւրեանց նուէրս Աստուծոյ և կացին սրբութեամբ, որ ոչ գայր ի նոսա ամբարտաւանութիւն, այլ ի հեզութիւն էին և ի խոնարհութիւն և ի մաքուր յօթեւանի գործս իւրեանց· տան զայնպիսիսն ի Միքայէլ հրեշտակապետն և ընդ այս ճանապարհս ածեն ի քաղաքս յայս: Հարցի ցհրեշտակն և ասեմ· Տէր, կա՞յ յայսմ տեղի որ լաւ է քան զընկերին ի քաղաքիս յայսմիկ: Եւ ասէ· Այո, երկրորդն լաւ է քան զառաջինն, և երրորդն քան զերկրորդն· մի քան զմի փառաւոր են: Եւ զարձեալ տեսի աթոռս արկեալ առ ամենայն դրանն, և ի վերայ ամենեցունցն պսակս և կամարս ոսկիս: Հայեցայ և տեսի միւանգամ այլ աթոռս ի մէջ քաղաքին, զարդարեալ ամենայն վայելչութեամբ և պսակս ի վերայ նոցա, անպատմելի որ ոչ ոք կարէ պատմել զվայելչութիւն նոցա: Հարցի և ասեմ· Տէր, ո՞ւմ պատրաստեալ են տեղիքս այս և աթոռքս: Եւ նա ասէ· Այս այնոցիկ է որքան(?) արարին զանձինս իւրեանց, վասն անուանն Տեառն, քանզի զիր նոքա ոչ գիտէին և ոչ սաղմոս բազումս, այլ զոր լսէին ի պատուիրանացն Աստուծոյ զայն առնէին, վասն հեզութեան և սրբութեան իւրեանց:

Իսկ էր ի մէջ քաղաքին եկեղեցի մի մեծ և յոյժ բարձր, և էր այր մի մերձ ի բեմն նորա, իբրև զարեգակն լոյս տայր քաղաքին, և ունէր գիրք ի ձեռին իւրում սաղմոսաց և տայր կցուրդ զալէլուն· և ի վերայ պարսպաց էին և ի վերայ աշտարակացն և ի վերայ դրանցն քաղաքին կցէին զալէլուն: Հարցի ցհրեշտակն և ասեմ· Տէր, ո՞վ են այնոքիկ որ սաղմոսեն ի վերայ բեմին: Եւ ասէ ցիս հրեշտակն· Այս Դաւիթ է որ սաղմոսէ ի վերայ բեմին, այս է Երուսաղէմ որ ի յերկրին է· զի յորժամ գայ Թագաւորն և երեւի փառօք իւրովք, Դաւիթ միւանգամ սաղմոսէ առաջի նորա և ամենայն արդարքն կցեն զալէլուն: Հարցի

և ասեմ. Քան զամենայն արդարքն Դաւիթ միայն սպասէ առաջի Աստուծոյ: Պատասխանի ետ և ասէ. Քանզի որդին Աստուծոյ Նստի ինքն ընդ աջմէ Հօր իւրոյ, և ինքն Դաւիթ սպասէ առաջի Նորա: Այսպէս պարտ է լինել և յերկրին, ըստ օրինակին որ յերկինս է. ոչ է արժան առանց սպասու և ալէլուի մատուցանել զպատարագն Աստուծոյ. զի յորժամ քահանայքն զպատարագն մատուցանեն, և զօրք երկնից ընդ Նոսա սպասեն: Հարցի և ասեմ. Տէր, զի՞նչ է ալէլուն: Եւ ասէ ցիս. Քննես և հարցանես վասն ամենայնի: Եւ ասէ. Ալէլուն եբրայեցի էր ի խօսից, և հրեշտակացն մեկնութիւն ալէլուն ասէ թեկզայթամարաթ: Ասէ ցիս. թեկզայթամարաթն(?), այլ թարգմանէ փառք է Աստուծոյ, որ էարկ հիմունս ամենայնի, օրհնեսցուք ի Նմին: Զի ամենայն որ սպասէ և ոչ կցէ զալէլուն, մեղանչէ Աստուծոյ: Ասէ ցիս հրեշտակն. Ամենայն որ կարող է և ոչ կցէ զալէլուն, ամբարտաւան է, ոչ է արժան օրհնել զարարիչն իւր:

Եւ իբրև լռեաց ի խօսիցն, եհան զիս ի մէջ ծառոցն, և ընդ մէջ քաղաքին և ի վերայ ծովուն փրկութեան, եւ ի վերայ գետոյն կաթին և գեհենի եզրին, և յետ այնորիկ եհան զիս ի վերայ ծովուն ովկիանոսի. և ասէ ցիս. Գիտե՞ս թէ յո՛ երթաս: Եւ ասեմ. Ոչ գիտեմ, Տէր: Եւ ասէ ցիս. Եկ զկնի իմ և ցուցից քեզ զանձինս ամբարշտացն և մեղաւորացն, զի իմասցես զանեզես Նոցա: Եւ գնացի զկնի Նորա, և էառ զիս և տարաւ յարեւմտից կուսէ. անդ տեսի ես զերեսս երկնից որ հաստատեալ կայր ի վերայ ծովուն ովկիանոսի. և յորժամ ելի ես ի վերայ ծովուն, տեսի անդ ոչ գոյր լոյս, այլ խաւար. և հեծոյն և լալոյն և վայուն և ճիչոյն, որ ելանէր ի խաւարէն: Եւ տեսի զի կայր գետ, հատանք հրոյ հոսէին և եռայր. և արկեալ էին անդ արս և կանայս, և էին բազում յոյժ, և էր ի Նոցանէն որ մինչև ի ծունկսն էր ի հուրն, և էր որ մինչեւ ի մէջսն էր ի հուրն, և էին որ մինչև ի շրթունսն

էին ի հուրն, և էր որ մինչև ի հեր գլխոյն էին՝ որ հուրն ծածկեալ էր։ Հարցի զհրեշտակն և ասեմ. Տէր, ո՞վ են սոքա որ յայսպիսի տանջանս մատնեցան։ Եւ ասէ ցիս հրեշտակն. Սոքա այնք են որ ոչ ի թիւս արդարոցն գտան և ոչ ի թիւս ամբարշտացն, զի զոր կացին յաշխարհին ազմելոյ, ի մեղս, ի չնութիւն կացին, և յիշոցաց ոչ դադարեցան և յամենայն չարիս էին մինչև մեռան։ Հարցի և ասեմ. Տէր, ո՞վ են սոքա որ մինչև ի ծունկսն են ի հուրն։ Պատասխանի ետ և ասէ. Սոքա այնք են որ յորժամ ելանէին յեկեղեցւոյն և մխէին զանձինս իւրեանց ի խոտոր այրս և յուզէին զչարս և զկռիւս։ Որ մինչև ի մէջս էին թաղեալ ի հուրն, այնպիսիքն էին որ հաղորդէին ի մարմնոյ և յարենէ որդւոյն Աստուծոյ և պոռնկէին և չնային զմիմեանս, և զրուցէին յեկեղեցին ի ժամ աղօթիցն։ Եւ որ մինչև ի հեր գլխոյն էր ծածկեալ ի հուրն, այնոքիկ են, որ տուեալ նոցա Աստուած զամենայն բարութիւնս երկրի, և նոքա ոչ ետուն քաղցելոց և ոչ ողորմեցան որբոց և այրեաց։ Որ մինչև ի շրթունսն էին, այն են որ ածէին զմիմեանս յեկեղեցին և զրուցէին, փոխանակ աղօթիցն. արդ առնուն զհատուցումն ըստ գործոց իւրեանց։

Եւ տեսի այր մի զի ածէին չորս հրեշտակ զնա ի հուրն մինչև ի ծունկսն, և սփռեալ ուն(էր) զձեռս իւր և թաթաւեալ արեամբ և որդն եռայր ի բերան նորա և յըղնգունս, և հեծէր և լալով ասէր. Ինձ ողորմեա, զի ես քան զամենեսեան ի տանջանս եմ։ Հարցի և ասեմ. Տէր, ո՞վ է սա։ Եւ ասէ ցիս. Այս զոր տեսանես սարկաւագ էր, որ գիտէր զօրէնս և գործէր զչարիս առաջի Աստուծոյ. արդ ունի զտանջանս անդադար։

Դարձեալ տեսի զուր մի հրոյ լի, և անդ արկեալ էին այրս և կանայս յոյժ և որդն ուտէր զնոսա. ես իբրև տեսի լացի և յոգւոց հանի, և ասեմ. Տէր, ո՞վ են սոքա։ Եւ պատասխանի և ասէ ցիս. Սոքա այն են որ զշահս ոսկւոյ և արծաթոյ առնուին։

Տեսի զայլ ամանս, տանջէին և թոյլ ոչ տային նո-

գա, լացի և ասեմ. Տէր, ո՞վ են սոքա: Եւ ասէ ցիս. Այս կայքն են, որ շնային և ապականէին զկուսութիւնս իւրեանց, այդպէս ընդունին զտան-ջանսդ:

Տեսի արս և կանայս բազումս, զի հատանէին զոտս և զձեռս իւրեանց, և իբրև տեսի զնոսա լացի և ասեմ. Տէր, ո՞վ են սոքա: Եւ ասէ ցիս. Սոքա այնոքիկ են, որ զորբս և զայրիս և զանանկս արտա-մեցուցին և զրկէին և լացուցանէին, հակառակու-թեամբ և նենգութեամբ կային ընդ ընկերս իւ-րեանց, այժմ տանջին:

Տեսի յարևելից կուսէ բազում չարչարանս և տանջանս, յորում էին բազում արս և կանայս. և գետ հրոյ իջանէր ի վերայ նոցա: Հայեցայ և տեսի անդ խորխորատս յորում էին արկեալ անձինք ի վերայ միմեանց, և էր գետն ի խորս իբրև երեսուն հազար կանգուն. տեսի զնոսա զի հեծեծէին և լային և բողոքէին և ասէին. Ողորմեա՛ց մեզ, զի քան զամենեսեան մեք տանջիմք չարաչար: Հարցի և ասեմ. Տէր, ո՞վ են սոքա: Եւ ասէ ցիս. Սոքա այն են որ ոչ յուսացան յԱստուած, զի յորժամ յառ-նէին յանկողնոյ իւրեանց, ոչ օրհնէին զարարիչն իւրեանց և ոչ ծունր ածէին. այլ սանդրէին և նր-ւաձէին և լուանային զմարմինս իւրեանց և զհոգսն կարուտանէին: Հարցի և ասեմ. Տէր, քանի՞ չափ է խորութեան հրոյս այսորիկ: Ասէ ցիս. Խորութեան հրոյս չափ ոչ գոյ, այլ իբրև զկաթսայն և իբրև զյորձանս հեղեղաց. որպէս այր ոք առեալ քար՝ ընկենու ի ծովն, և ապա զհետ ժամանակաց հա-սանէ յատակս, նոյնպէս և հուրս այս յորժամ ար-կանեն զանձինս մեղաւորացն ի հուրս յայս, նաև յետ հինգ հարիւր ամացն, ապա կարէ հասանել յատակ զորա: Եւ իբրև տեսի, լացի և յոգւոց հանի և ասեմ ցհրեշտակն. Միթէ դու ողորմած չե՞ս քան զորդին Աստուծոյ. քանզի Աստուած ողորմած է, երկայնամիտ ի վերայ որդւոց մարդկան և թողու որ յիւր կամն շրջի յերկրի, և գիտեն զտանջանս և ոչ

երկնչին և ոչ սարսեն և ոչ յիշեն եթէ երթալ պիտի առ Աստուած և համարս տալ ըստ գործոց և բանից. և այժմ տանջին յաւիտեանս յաւիտենից:

Դարձեալ տեսի այլ այր մի արկեալ ի հուրն և չորս հրեշտակք տանջէին զնա. և ունէր ի ձեռին մաճան երկաթի և երեքժանի կայր ի նմա, ածէին ի բերան նորա և հանէին զաղիս նորա: Հարցի զհրեշտակն և ասեմ. Տէր, ո՞վ է սա: Եւ ասէ. Այդ զոր տեսանես՝ երէց էր, ոչ պաշտէր զպաշտօն իւր բարի, այլ ուտէր և ըմպէր և ապա մատուցանէր զպատարագն Աստուծոյ. արդ ընդունի զտանջանս:

Դարձեալ տեսի զի չորս հրեշտակք ածէին զայր մի ի հուրն և այլ հրեշտակք փայլատակմամբ ծեծէին զնա և զերեսս նորա յայսմ տանջանս: Հարցի և ասեմ. Տէր, ո՞վ է սա: Պատասխանի ետ և ասէ ցիս. Զայդ զոր տեսանես՝ եպիսկոպոս էր և ոչ հովուէր հօտի իւրում բարի, այլ զփառս մեծութեան հովուէր անձին իւրում և ոչ գնայր ի շնորհս Աստուծոյ, այժմ տանջի:

Տեսի միւսանգամ այր և կանայս որ կախեալ կային զկրընկացն և զձեռացն, իբրև զթոնիր հրոյ ար-կեալ էին մուխ քթիցն նոցա, և թուխ բոց ելանէր և վառէր զերեսս նոցա: Հարցի և ասեմ. Տէր, ո՞վ են սոքա: Ասէ ցիս. Այս այնոքիկ են որ զարդարէին զանձինս իւրեանց, ոչ եթէ վասն արանց իւրեանց, այլ վասն շնութեան և պոռնկութեան:

Տեսի այր և կանայս և էր գոյնն նոցա չէկ. և արկեալ էին ի խորխորատ մի և ածեալ էին ի վե-րայ նոցա ծծումբ, և իջանէր ի վերայ նոցա հատանք հրոյ: Հարցի և ասեմ. Տէր, ո՞վ են սոքա: Եւ ասէ ցիս. Այդ այնոքիկ են, որ արքն ընդ իրար ապակա-նէին և կանայսն ընդ իրարս իբրև արուամոլեցիքն. և այժմ տանջին:

Տեսի այլ այր և կանայս որ կային ի վերայ գա-զանացն, որ խածատէին զնոսա, և գային իբրև զվիշապս մեծամեծս, ուտէին և մանրէին զա-կերս նոցա, և ոչ տային ասել ողորմեաց. և հրեշ-

տակն որ ի վերայ նոցա, ասէր. Իմացարո՞ւք եթէ զայ որդին Աստուծոյ, քանզի յառաջագոյն ասացաւ և դուք ոչ կամեցայք լսել. զի ընթեռնուին ձեզ քահանայքն զգիրս սուրբս և ոչ լսէիք, վասն այսորիկ ոչ անիրաւութեամբ մատնեաց զձեզ ի տանջանս, այլ իրաւամբք: Եւ յոգւոց հանի և ասեմ. Տէր, ո՞վ են սոքա որ կան այսպէս: Եւ ասէ ցիս. Այս այն կանայքն են որ ապականէին զստեղծուածն Աստուծոյ և կորուսանէին զմանկունս իւրեանց, և արքն այն են, որ պոռնկէին ընդ նոսա. և ահա եկին մանկունքն առաջի Աստուծոյ, և ասեն ցհրեշտակն որ կայր ի վերայ տանջանացն. Վրէժ խնդրեցէք ի ծնողաց մերոց, քանզի ապականեցին զստեղծուածն Աստուծոյ և անուն Աստուծոյ կոչեցեալ էր ի վերայ նոցա և զպատուիրանն Աստուծոյ ոչ պահեցին, այլ ետուն զմեզ կերակուր վիշապաց և կախան խոզից, և ի մեծ գետին ընկեցին զմեզ: Եւ տարաւ հրեշտակն զմանկունսն յանպատում ուրախութիւնն. և տարան զծնողսն ի տանջանսն յաւիտենից:

Եւ յետ այսորիկ տեսի այր և կանայս որ ելանէին ի գուբս խորս, և ծծումբ և ձէթ իջանէր ի վերայ նոցա, և շղթայս եդեալ ի պարանոցս նոցա և կապեալ երկաթի զատս նոցա, և քարշէին հրեշտակքն զնոսա բարկութեամբ և զնէին հրեղէն գաւազանս, և նախ տանջէին զնոսա և ասէին. Ընդէ՞ր ոչ կամեցարուք զժամանակս ձեր ապաշխարել և ապաշխարութեամբ պաշտել զՈրդին Աստուծոյ: Հարցի և ասեմ ցհրեշտակն. Տէր, ո՞վ են սոքա: Եւ ասէ ցիս. Սոքա այն են, որ մեծարանեալ են ի վերայ երկրի, և աղքատք երկրի թշուառական արարին զնոսա. զի անուն Աստուծոյ կոչեցեալ էր ի վերայ նոցա, և ոչ արարին ողորմութիւն որբոց և այրեաց, ոչ օտարաց և ոչ ընկերաց. և զաղօթս սուրբ ոչ արարին Աստուծոյ, քանզի բազում ստացուածք իւրեանց և հոգք աշխարհի անպտուղ արարին զնոսա, և հրեշտակք շրջեցուցանէին զնոսա ընդ ամենայն տեղիս ի տանջանսն ուր այլք կային, և ասէին իբրև տեսին. Թէ-

պէտ և մեք աշխարհականք էաք, ձեզ երանէաք թէ ոքա արդարք են և ծառայք Աստուծոյ. դուք առաւել էք ի տանջանս քան զմեզ։

Հայեցայ և տեսի բակ մի բարձր երեսուն կանգուն սրահ ի վերայ բոց հրոյ, և ածէր հրեշտակն արս և կանայս, զկանայս ընդ հերացն կախէին, և զարսն ընդ կրընկացն յանիւն, և դայր ձայն անուին բարձր յաղալն իւրում, և առնոյր զնա, և տանջէին զառնութեամբ, և դայր դառն հեծոյն և լալոյն ի հրոյ անտի նեղութեանցն։ Հարցի և ասեմ. Տէր, ո՞վ են ոքա. զի՞նչ արարեալ է ոցա։ Եւ ասէ ցիս. Ոքա այն են որ զգեցեալ էին զկուսութիւն սուտ, երևէին ի մարդկանէ թէ արդարք են և ներքոյ լի էին պղծութեամբ և պոռնկութեամբ, և ոչ գործեցին զարդարութիւն, այժմ ընդունին զտանջանս։ Աղաղակէին միաձայն և ասէին. Ողորմեա՛ց մեզ, զի այժմ ծանեաք զապաշխարութիւն։ Եւ հրեշտա՛կն յաւելոյր ի տանջանսն և ասէր. Ա՞յժմ ապաշխարէք ուր ոչ գոյ տեղի ապաշխարելոյ։

Եւ տեսի այլ տեղի մի որ էր անիւ մի բարձր եօթանասուն կանգուն, և եկանէր հուրն և շրջէր շուրջ զնովաւ, և թուխ էր բոց նորա իբրև զմրրիկ հնոցի, տեսանէի զարսն զի կախէին զլեզուացն և զկանայսն զհերացն, և եկանէր հուրն և ծածկէր զնոսա զի ոչ երևէին. եկանէր ձայն աղաղակի նոցա որ ասէին. Ողորմեաց մեզ, զի ծանեաք զապաշխարութիւն։ Եւ հրեշտակն յաւելոյր ի տանջանսն և ասէր. Ա՞յժմ ապաշխարէք ուր ոչ գոյ տեղի։ Ես հարցի և ասեմ. Տէր, զի՞նչ չար արարեալ է ոցա առաջի Աստուծոյ։ Եւ ասէ ցիս հրեշտակն. Ոքա այն են որ զգեցեալ էին զկուսութիւն սուտ և զարդարէին զանձինս իւրեանց ոչ եթէ վասն աստուածպաշտութեան այլ վասն ի պէտս մարմնոյ իւրեանց. և ձայն աղաղակի որ եկանէր ի բերանոյ նոցա որ ասէին. Ողորմեաց մեզ, զի ծանեաք զապաշխարութիւն։ Եւ հրեշտակն ասէ ցնոսա. Ո՞ւր է զեղեցկութիւն զեղոյ ձեր, ո՞ւր է քուն (գոյն?) աչաց ձերոց, ո՞ւր է

շօշափութիւն ձեռաց ձերոց, ո՞ւր են ընթացք ոտից ձերոց: Ուրախ էիք ի շնութիւն ձեր և ի գողութիւն ձեր և ի պոռնկութիւն և յիշոցս ձեր, պղծել բերանոց ձեր: Եւ հրեշտակն յաւելոյր ի տանջանսն և ասէր. Այժմ ապաշխարէք որ ոչ գոյ տեղի ապաշխարելոյ:

Դարձեալ տեսի այլ այր և կանայս, և գազանս ահաւորս և երկայնութիւն նորա կանգուն ինն և բարձրութիւն նորա կանգուն քսան. բանայր զբերան իւր և կլանէր զնոսա և ջախջախէր զնոսա և մանրէր զնոսա և մերձ լինէին ի մեռանել. հանէր զնոսա ի բերանոյ իւրմէ և ընկենոյր: Հարցի զհրեշտակն և ասեմ. Տէր, զի՞նչ չար գործեալ է նոցա որ յայսպիսի տանջանս մատնեցան: Պատասխանի ետ հրեշտակն և ասէ. Սոքա կոյսք էին, նուիրեալ զանձինս իւրեանց. և ապականեցին զկուսութիւնս իւրեանց ընդ մանկունս աշխարհի: Եւ բառնէին զնոսա հրեշտակքն ի վերայ գազանին և ուտէր զնոսա գազանն չարաչար. և էր զէմք գազանին իբրև զհուր և փայլէին աչք նորա իբրև զփայլատակն հրոյ, և գտանայր այնպէս ծամէր զնոսա: Աղաղակէին և ասէին. Ողորմեաց մեզ Տէր, զի քան զամենեսեան մեք եմք ի տանջանս. և հրեշտակն յաւելոյր ի տանջանս նոցա:

Տեսի այլ կանայս, զի չորս իժ ծծէին զստինս նոցա, և խածանէին դեւք զնոսա. և մանկունս ունէին նոքա ի գիրկս իւրեանց, և առ հրեշտակն զմանկունսն, և նոքա աղաղակէին. Յա՛յլ տանջանսն ես տանել յառաջեցուք, զի զխորհուրդ մահու խորհեաց մեզ, և լոյսն որ ի քէն տուաւ մեզ խաւար արարին: Հարցի զհրեշտակն և ասեմ. Տէր, զի՞նչ չար արարեալ է սոցա: Ասէ. Սոքա հաւատաւորք էին որ զգեցեալ էին զկուսութիւն սուտ և պոռնկէին և կորուսանէին զանեղծուածս իւրեանց, այժմ տացեն զտանջանսն յաւիտենից:

Դարձեալ տեսի այլ տեղի, զի էր ցուրտ և սառնամանիք և սառն, և էր զօշիւն ցրտոյն առաւել քան զհրոյն, և անդ արկեալ էր հրեշտակն այր և կանայս

ի սառնամանիքն և գայր լալիւն և հեծիւն և կրճը-
տումն ատամանց։ Հարցի ցհրեշտակն և ասեմ. Տէր,
զի՞նչ չար արարեալ է սոցա որ մատնեցան ի տան-
ջանս յայս։ Եւ ասէ ցիս հրեշտակն. Սոքա այն են
որ զգեցեալ էին զկուսութիւն սուտ և ապականէին
զմարմինս իւրեանց և երդնուին և ասէին եթէ, կոյսք
եմք։ Եւ արդ աճուստի Աստուած է որ քննէ զսիրտս
և զերիկամունս և ոչ ոք կարէ փախչել ի դատաս-
տանացն Աստուծոյ։ Եղև ձայն յամենեցուն որ ա-
սէին. Ողորմեա մեզ, զի ծանեաք զապաշխարութիւն։
Եւ հրեշտակն յաւելոյր և տանջէր զնոսա և ասէր.
Ապաշխարէք այժմ որ ոչ գոյ տեղի։ Հարցի ցհրեշ-
տակն վասն սառինն թէ զո՞յ ջերմութիւն ի սառս
յայս։ Եւ ասէ ցիս հրեշտակն. Թէ և արեգակն ծագէ
ի սառս յայս, ոչ ջեռնուն։ Ես լացի և յոգւոց հանի
և ասեմ...?։

Հայեցայ և տեսի այլ տեղիս աղմոլ, և էին անդ
արք և կանայք, և ելանէր որդն հրեղէն և ուտէր, և հուրն
եռայր և որդն ուտէր զմարմինս նոցա մինչև երևէր
ոսկերք նոցա, լային և ասէին. Ողորմեաց մեզ, տէր,
զի ծանեաք զապաշխարութիւն։ Ես հարցի և ասեմ.
Տէր, ո՞վ են սոքա։ Եւ պատասխանի հրեշտակն և
ասէ. Սոքա այնոքիկ են, որ ի կերակուրս մայ և
յագուրմն գինւոյ և մարմնոյ ընդ պոռնիկս բնակէին և
ուրախ էին ի գործս իւրեանց, և պղծութեամբ իւ-
րեանց մոլորեալ էին ի հրամանացն Աստուծոյ, այժմ
տանջին աստ։

Տեսի տեղի մի այլ զի եռայր հուրն և բորբոքէր
և հրահրանք իջանէր և հրեշտակն ածէր անդ արս
և կանայս ի հուրն։ Եկին այլ հրեշտակք և ունէին
ի ձեռս իւրեանց կայծակունս հրոյ, և նովաւ ծեծէին
զերեսս նոցա. և իբրև տեսի լացի և ասեմ. Տէր,
ո՞վ են սոքա որ այսպէս տանջին։ Եւ ասէ ցիս հրեշ-
տակն. Սոքա այն են որ ավկատաքն էին, տային
զարծաթս իւրեանց ի վաշխ և տանուին վաշխս ի
վաշխի վերայ և տոկոսիս ժողովէին։ Եւ ասեն. Ո-
ղորմեաց մեզ Տէր։ Եւ հրեշտակքն հրեղէն զաւա-

զանաւն ծեծէին զգլուխս նոցա և ասէին. ժողովեցուք զփրկութիւն հանապազ, զի դուք ոչ ժողովեցէք զփրկութիւն ձեր. այժմ տանջեսջիք:

Դարձեալ տեսի այլ սառնամանիք, արկեալ անդ արս և կանայս, և նոքա լային և ողբային և կրճտէին զատամունս իւրեանց. իբրև տեսի լացի զնոսա և ասեմ. Լաւ էր նոցա եթէ չէր ծնեալ զնոսա երկիր: Հարցի և ասեմ. Տէր, եթէ ծագի արեգակն ի վերայ, ո՞չ ջեռնուն անձինքս այսոքիկ: Եւ ասէ ցիս հրեշտակն. Եթէ ամենայն հուրդ զոր տեսանես, հեղու ի վերայ սառինդ, ոչ ջեռնու սառնդ: Եւ իբրև տեսին զիս այնոքիկ որ ի տանջանսն էին, լային և ողբային և ասէին. Ողորմեաց մեզ, Պաւղոս սիրելի Աստուծոյ:

Եւ յետ այսորիկ տեսի զի բացան երկինք, և տեսի զՄիքայէլ հրեշտակապետն կտակարանաց իջեալ յերկնից և ընդ նմա զօրք երկնից հրեշտակաց, առ այնոսիկ որ ի տանջանսն էին աղաղակէին և ասէին տանջանաւոր հրեշտակքն. Ողորմեաց մեզ հրեշտակ կտակարանաց, զի դու յամենայն ժամ աղաչես վասն որդւոց մարդկան: Եւ ասէ Միքայէլ հրեշտակապետն. Ես յամենայն ժամ աղաչեցի վասն ձեր և դուք ոչ արարէք սակաւ մի պարգևս, այժմ տանջիք յաւիտեանս:

Դարձեալ տեսի հաց շաղախեալ ընդ արեան և շուրջ կային երիցունք, բազում ժողովրդօք իւրեանց, և բոց ահագին ծածկէր զնոսա և աղաղակ յոյժ ելանէր անտի: Հարցի և ասեմ. Տէր, զի՞նչ են սոքա: Եւ պատասխանի և ասէ. Այս այն երիցունքն են որ ի կերակուրս մսոյ և գինւոյ անառակէին և ընդ կանայս պոռնկէին, և պիղծ ձեռօք իւրեանց մատուցանէին զպատարագն Աստուծոյ և հալածէին զհրեշտակն յեկեղեցւոյն Աստուծոյ և զհոգին մերժէին ի սրբութենէն, արդ այժմ տանջին: Եւ ես իբրև տեսի լացի և ասեմ. Վա՜յ ձեզ մեղաւորացդ, ընդէ՞ր ծնեալ էր զձեզ երկիր: Ասէ ցիս հրեշտակն. Միթէ դու ողորմա՞ծ ես քան զԱստուած որ քաղցր է և երկայնամիտ, որ թողու զմարդն յիւր կամսն որ զինչ և կամի առնէ յերկրի. և ես լացի դառնապէս:

Եւ ասէ ցիս հրեշտակն. Ե՛կ զկնի իմ և ցուցից ք՛եզ տանջանս մեծամեծս քան զայդ. և գնացի զկնի հրեշտակին և տարաւ զիս յարևելից կոյս:

Հայեցայ և տեսի խորխորատ մի, զի կային անդ դրունք պղնձիք և կապարս երկաթիս, և էր գիր գրեալ ի վերայ նոցա, և ասեմ. Բաց զդրունդ զայդ և ես տեսից զդա: Եւ ասէ ցիս հրեշտակն. Ոչ կարես հատայն համբերել: Եւ իբրև եբաց զդուռն, և ահա ժանտահոտութիւն դառն էր քան զտանջանս ամենայն, և հայէի ի ներքս ի դժոխսն և ահա անդ արկեալ էր բիւրս բիւրուց մարդկան, և իջանէր կաթիլ սառնամանեացն ի վերայ նոցա, և էր խաւար ի վերայ նոցա և եղանէր լալիւն և հեծիւն և կրծարախումն և կրճել ատամանց:

Եւ եկն Միքայէլ հրեշտակապետն և բազում զօրք հրեշտակաց՝ և ասեն. Լուարո՛ւք լուարուք.որ ի տանջանսդ էք, որ խօսի բան մի Միքայէլ մեծ հրեշտակապետն: Պատասխանի ետ Միքայէլ հրեշտակապետն և ասէ. Ես կացի առաջի Աստուծոյ վասն ամենայն կենդանեայ, և կամ զտիւ և զգիշեր և աղաչեմ զՏէր վասն մարդկան և աղօթեմ փախանակ նոցա. Նոքա ոչ դադարեցան և ոչ հանդարտեցան ի մեղաց և ի չնութենէ և յիշոցաց իւրեանց. արդ դուք անցուցիք զժամանակս ի մեղս և յանօրէնութիւնս ձեր: Ես յաղօթս կամ հանապազ և աղաչեմ զԱստուած՝ զի ածցէ անձրև, և դարձեալ աղօթեմ զի տացէ ցօղ յերկնից, և դարձեալ աղաչեմ զի տացէ պտուղ երկրի ձերում, և ասեմ՝ եթէ ոք արասցէ սակաւ մի բարի, ես աղաչեմ փախանակ նորա, և օգնեցից նմա զի ազրեսցի ի դառն տանջանացս յայսցանէ: Եւ ասէ հրեշտակապետն. Ո՞ւր են աղօթք ձեր, ո՞ւր է ապաշխարութիւն ձեր, ո՞ւր են ողորմութիւնք ձեր. բայց արդ լացէք հանապազ և ես ընդ ձեզ լացից և ամենայն հրեշտակք Պաւղոսի հանդերձ, թերևս ողորմեսցի ձեզ ողորմածն Աստուած: Եւ իբրև լուան զձայնն զայն, տառապեալքն միաբան լալով և ասէին. Ողոր-

մեա՛ց մեզ, Որդի Աստուծոյ: Եւ ես Պաւղոս լացի և ասեմ. Ողորմեա՛ց ստեղծուածոց քոց:

Եւ անկաւ Միքայէլ ի վերայ երեսաց իւրոց, նոյնպէս և բիւրք բիւրուց հրեշտակաց անկան առաջի աթոռոյ աստուածութեան և ասեն միաբան. Ողորմեա՛ց ի վերայ մարդկան, ողորմեա՛ց ի վերայ պատկերի քում:

Եւ տեսի զերկինս զի շարժէին իբրև զծառ ի հողմոյ, և ի նմին ժամու անկան առաջի աթոռոյն ամենայն հրեշտակապետքն և սերովբէքն և քերովբէքն, քառասուն և չորս երիցունքն կային առաջի աթոռոյն Աստուծոյ, և հազարքն հազարաց և բիւրք բիւրուց աղաղակէին և ասէին. Ողորմեա՛ց ստեղծուածոց քոց: Եւ վերացաւ աղաղակն մինչև յաթոռն Աստուծոյ. և լուան ձայն որ ասէր. Վասն է՞ր աղաչէք զիս; հրեշտակք իմ և պաշտօնեայք իմ: Եւ նոքա աղաղակէին և ասէին. Խնդրեմք ի քէն զի տեսանեմք շնորհս առ որդիս մարդկան:

Եւ յետ այսորիկ տեսի զերկինս բացեալ և զՈրդին Աստուծոյ զի իջանէր յերկնից, զթագն առնելով ի գլուխն իւր: Իբրև տեսին զայն ամենեքեան որ ի տանջանսն էին, համբարձին զձայնս իւրեանց լալագին և ասեն. Ողորմեա՛ց մեզ, Որդի Աստուծոյ բարձրելոյ, զի դու ես որ տաս ամենեցուն հանգիստ, որ յերկինս և որ յերկրի. ողորմեա՛ց մեզ, զի յորմէ հետէ տեսաք զքեզ, հանգեաք: Եւ ել ձայն յՈրդւոյն Աստուծոյ առ նոսա ի տանջանսն, և ասէ. Զո՞ր գործ գործեալ է ձեր որ յուզէք յինէն հանգիստ, յուսացայք յինչս՝ և ոչ յԱստուած որ փրկէր զնոսա, այժմ տանջեսջիք յաւիտենական տանջանօք:

Հայեցայ և տեսի այլ տեղիս, զի էր հուրն որպէս պարիսպ և ծեծէր զնոսա, և արկեալ էր ի նոսա արս և կանայս և ծածկէր զնոսա, և ծամէին զլեզուս իւրեանց: Հարցի և ասեմ. Տէր, ո՞վ են սոքա: Պատասխանի ետ և ասէ ցիս. Սոքա այնոքիկ են՝ որ յեկեղեցին քամահէին զմիմեանս և զրուցէին և ունկն ոչ դնէին պատուիրանացն Աստուծոյ, արհամարհէին

զպաշտօնեայն և զԱստուած, վասն այդորիկ ընդունին զտանջանս յաւիտենից:

Դարձեալ տեսի այլ տեղիս խաւարայինս, յոյժ խոր, և թուխ բոց հրոյ եռանէր ի նմանէ և գոչիւն հրոյն սարսեցոյց զսկերս իմ, և անդ արս և կանայս․ լային և ասէին․ Ողորմեա՛ց մեզ, Տէր, զի այժմ ծանեաք զապաշխարութիւն: Եւ հրեշտակն յաւելոյր ի տանջանս նոցա: Եւ ես հարցի և ասեմ․ Տէր, ո՞վ են այսոքիկ: Եւ ասէ ցիս․ Դոքա այնք են որ կախարդք էին և ոչ դադարեցան ի չարեաց, մինչև սատակեցան:

Դարձեալ տեսի այլ տեղիս խաւար չարաչար․ և ի խոր յոյժ մեծամեծ գուբ, և արկեալ էր անդ արս և կանայս: Հարցի և ասեմ․ Տէր, ո՞վ են սոքա: Եւ ասէ․ Սոքա այնք են՝ որ կանայս ունէին, և կանայքն որ արս ունէին՝ և շնային․ արդ՝ մատնեցան յայս տանջանս:

Դարձեալ տեսի արս և կանայս զի ագեալ էին հանդերձս սպիտակս, և ունէին հանդերձս․ և լի էին հրեղէն որդամբք․ և չորս դահիճս՝ զի ունէին շղթայս ի ձեռս իւրեանց, և արկանէին ի պարանոցս նոցա և քարշէին զնոսա ի խաւար անդր: Եւ եղև ձայն ի Տեառնէ որ ասէր․ փոխանակ ձեր արիւնս իմ հեղաւ, և ոչ ապաշխարեցիք․ վասն ձեր պսակ ի փշոց եդին ինձ, և ոչ ապաշխարեցիք․ ջուր խնդրեցի ի խաչին, զլեղի և զքացախն ետուն ինձ ըմպել․ տիգաւ խոցեցին զկողս իմ վասն ազգի մարդկան, և ոչ ապաշխարեցիք: Զկնի ամենեցուն առաքեցի առ ձեզ մարգարէս և առաքեալս և զնոսա սպանիք և զնոսա տանջեցիք․ յետ ամենեցուն տուաւ ձեզ ապաշխարութիւն և ոչ ապաշխարեցիք: Բայց վասն Միքայէլի հրեշտակապետի և Գաբրիէլի և Սաղաթիէլի և վասն Պաւղոսի եղբօր իմոյ սիրելւոյ, զի չկամիմ զնոսա տրտում առնել, և վասն եղբարց մերոց որ մատուցանէին յաշխարհի զպատարագն, և վասն արդարոցն որ առնեն զկամս իմ, և վասն քաղցրութեան իմոյ զի յարեայ ի մեռելոց, ահա տամ ամենեցուն որ տան-

ջիք տատ, որ մի և գիշեր մի հանգիստ: Աղաղակէին ամենեքեան և ասէին. Օրհնեմք զքեզ, Որդի Աստուծոյ, որ ետուր մեզ հանգիստ. լաւ է մեզ հանգիստս այս քան զամենայն ժամանակն որ կեցաք յաշխարհին յայնմիկ, զի թէ գիտացեալ էաք զայս՝ ամենեքին ոչ էաք մեղանչեալ, այլ ապաշխարեալ էաք և ոչ գտանէաք ի տանջանս յայս:

Արդ՝ զայս լսելով. արտաջիք ջանս, և ջանացարուք խոստովանութեամբ. և ապաշխարեցուք և մի կորիցուք. այլ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս. ամէն:

# ԱՅԼ ՕՐԻՆԱԿՔ ՀԱՄԱՌՕՏ

---

## ՏԵՍԻԼ

### ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՅՆ ՊԱՒՂՈՍԻ

### ՅՈՐԺԱՄ ՏԱՐԱՆ ՋՀՈԳԻՆ

*Լուարուք, որդիք մարդկան, և ի միտ առէք զպատուէրս և զքանչելիս զայս. ապաշխարեցէք արտասուօք զյանցանս ձեր ի տուէ և ի գիշերի, զի են հրեշտակք պահապան մարդկան, և զամենայն զգործս մարդոյն զոր գործէ յառաւօտէ և մինչև յերեկոյն, պարտ է մատուցանել առաջի Աստուծոյ, եթէ չար եթէ բարի. և են հրեշտակք որ երթան խաղաղու-*

## ՏԵՍԻԼ

### ՊԱՒՂՈՍ ԱՌԱՔԵԼՈՅՆ

### ԽՕՍԵԼՆ ԸՆԴ ՀՐԵՇՏԱԿԻՆ

*Եւ եղև բան Տեառն առ իս և ասէ. Ասա ժողովրդեանդ այդ. անմիտք, մինչև յե՞րբ մեղանչէք և յաւելուք մեղս ի վերայ մեղաց, և բարկացուցանէք զՏէր արարիչն ձեր. ասացէք (յ)անձինս ձեր եթէ հաւատացեալ եմք, և զգործս սատանայի գործէք, հրջիք անուամբ օծելոյն, և աշխարհս արար զձեզ թշուառական, զի ամենայն արարածք հնազանդին Աստուծոյ, և մարդիկ միայն մեղանչեն, զի զամենայն արարածս արար Աստուած, և տէր ամենայնի և ինքն միայն Աստուած: Բազում անգամ արեգակն և լուսինն և աստեղք կարդան առ Աստուած և ասեն. Տէր Աստուած ամենակալ, մինչև յե՞րբ տեսանեմք զանօրէնութիւն ի վերայ երկրի, զպոռնկութիւն, զշնութիւն, զապանութիւն և զամենայն արհամարհանս զոր գործեն մարդիկ ի վերայ երկրի. հրաման տուր մեզ զի ցուցցուք (զ)զօրութիւն աստուածութեանդ քո և այրեսցուք զնոսա, զի ծանիցեն եթէ դու միայն ես Ա-*

թեամբ և են որ երթան տրտմութեամբ. որ կան յամենայն տրս և ի կանայս և պաշեն զմարդն, զի ըստ պատկերի Աստուծոյ է մարդն: Եւ երթան հրեշտակքն և երկիր պագանեն առաջի Աստուծոյ:

Եւ Պաւղոս տեսի ի նմին ժամու որ եկին հրեշտակք ուրախութեամբ. և եկ Հոգին սուրբ ընդ առաջ նոցա և ասէ. Բերէ՞ք զբեռինս սաղմոսաց և աստուածպաշտութեան: Պատասխանի ետուն և ասեն. Մեք գամք յայնցանէ որ որոշեցին զանձինս յաշխարհէ և բնակեցան յայրս և ի ծերպս վիմաց, վասն զի լան և հալին և մաշին հանապազ վասն անուանդ քո սրբոյ: Ձայն եղև որ ասէ. Շնորհ և օգնութիւն իմ եղիցի ի վերայ ձեր:

Իբրև գնացին նոքա, եկին այլ հրեշտակք տրտում և տխուր՝ երկիր պագին Աստուծոյ. և եկ սուրբ Հոգին ընդ առաջ նոցա և ասէ. Ուստի՞ գայք, պաշտօնեայք Աստուծոյ: Ետուն պատասխանի ողբալով և ասեն. Գամք յայնցանէ՝ որ կոչեցեալ է անուն քո ի վերայ նոցա, և յամենայն գործս քո աղտեղի գտան և աղօթք սուրբ ոչ արարին և ոչ ողորմութիւն կայ առ նոսա: Եւ եղև ձայն առ նոսա և ասէ. Մի՜ գա-

տուած: Ձայն եղև յերկնից և ասէ. Զամենայն ինչ գիտեմ ես և ոչ ինչ թագչի յինէն, ակն իմ տեսանէ և ունկն իմ լսէ. այլ քաղցրութիւն իմ և ողորմութիւն իմ ներէ նոցա մինչև դարձցին և ապաշխարեսցեն խոստովանութեամբ և ապաշխարութեամբ, ապա թէ ոչ դառնայցեն, ես եմ որ դատեմ զնոսա: Բազում անգամ ծով և գետք և աղբերք կարդան առ Աստուած և ասեն (...?) ի վաղորդենէ մինչև յերեկոյ. և հրեշտակ որ երթայ (ուրախ)ութեամբ վասն մարդոյն (յ)որում բնակեալ է: Ի մտանել արեւուն երթան երկիր պագանեն Աստուծոյ և մատուցանեն զգործս մարդոյն զոր գործեալ է, չար և բարի:

Եւ ահա եկին ուրախութեամբ և երկիր պագին Աստուծոյ: Եհարց զնոսա և ասէ. Ուստի՞ գայք: Պատասխանի ետուն և ասեն. Մեք գամք յայնցանէ՝ որք որոշեցին զանձինս իւրեանց յաշխարհէ վասն անուան քո, և որք յանապատի են և ի փապարս լերանց, և մաշեն զմարմինս իւրեանց վասն բազում սիրոյ քոյ, և մեք եմք հրեշտակք նոցա: Եւ ասէ Տէր. Գիտասջիք զի որդի իմ սիրելի ընդ նոսա է և օրհնէ զնոսա, վասն զի անձինք նոցա բնակարան են օծելոյն իմոյ:

դարէք ի պաշտելոյ զնոսա մինչև դարձցին և ապաշ-խարեսցեն. ապա թէ ոչ՝ յորժամ գան առ իս, ես դատեցայց զնոսա:

Իբրև կայի ես անդ, եկն հրեշտակ մի և ասէ ցիս. Ե՛կ զկնի իմ և տարայց և ցուցից քեզ զտեղի արդա-րոցն և զտանջանս մեղաւորաց և զդժոխոց, և ցու-ցից զանձինս մեղաւորացն որ ելանեն ի մարմնոյն: Եւ գնացի զհետ հրեշտակին. և հայեցա ... աի իշ-խանս աշ... անդ էին ո... յորե[1] ... անդ էին որդիք ստութեան և պոռնկութեան և ագահութեան:

Եւ դարձեալ տեսի այլ հրեշտակս ահաւոր և ան-ողորմս, որ բնակութիւն ոչ գոյ ի նոսա. և էին ե-րեսք նոցա լի բարկութեամբ, և էին ատամունք նոցա արտաքոյ բերանոյն և աչք նոցա փայլէին որպէս պղնձիս, և հեր գլխոյ նոցա մեծամեծս, բոց հրոյ ելանէին ի բերանոյ նոցա: Հարցի ընդ հրեշտակին և ասեմ. Տէր, ո՞վ են սոքա: Պատասխանի ետ հրեշտակն և ասէ. Սոքա են որ առաքեն զանձինս ամբարշտաց ի տանջանս և անողորմ տանջեն զանձինս մեղաւորաց:

Եւ հայեցայ ի բարձունս և տեսի այլ հրեշտակս, որ էին երեսք նոցա իբրև զարեգակն, և ունէին կա-

Եկին հրեշտակք (և արարին երկրպագութիւն Աստուծոյ և լային և ողբային, և հոգի Տեառն եհարց զնոսա և ասէ. Ուստի՞ գայք, պաշտօնեայք Քրիստոսի: Եւ նոքա ասեն. Գամք մեք յայն-ցանէ՝ որ անուն քո կոչեցեալ է ի նոսա և աշխատ արար զնոսա, են թշուառականք և դնեն պատճառս մեղաց իւրեանց, և արդա-րութիւն ոչ արարին և յաղօթս ոչ կացին առաջի քո, ընդէ՞ր իսկ արժան է մեզ պահել զնոսա: Եւ ասէ Տէր. Մի դադարէք ի պա-հելոյ զնոսա մինչև դարձցին և ապաշխարեսցեն, ես յաւիտեան դատեմ զնոսա: Իմացարուք, ով մարդիկ, զի զոր ինչ գործէ մարդն, հրեշտակն տանի առ Աստուած. զբարին և զչարն: Յիշեցէք զօրն զայն, յորժամ ելանէ հոգին ի մարմնոյ անտի:

Ես Պօղոս, կոչեաց զիս հրեշտակն և ասէ. Եկ զհետ իմ և ցուցից քեզ զտեսիլս սուրբս, զտեղի արդարոցն՝ յորժամ ելանեն յաշխարհէ, և անտի տարայց զքեզ ի խորս դժոխոցն, և անդ ցուցից քեզ զտեղի մեղաւորացն և ամբարշտացն, եթէ յո՛ր տեղի գնան յորժամ մեռանին: Եւ գնացի զհետ նորա, և եհան զիս յեր-

1. Այս ծայր թղթոյն պատառեալ է:

մարս ընդ մէջս իւրեանց ոսկիս, և ի ձեռս իւրեանց պսակս և ունէին զդրօշմն Աստուծոյ և զգեցեալ էին հանդերձս լուսաւորս, և էր գրեալ ի նոսա անուն Որդւոյն Աստուծոյ, և էին լի ամենայն հեզութեամբ: Հարցի ց(հրեշտակն. Ո՞վ են սոքա): Ասէ . . .[1] յաւիտենից: Հարցի և ասեմ. Տէր, եթէ հանդիպին այն ահաւոր հրեշտակքն զի՞նչ արասցեն արդարոցն: Եւ նա ասէ. Հրեշտակն ողորմութեան ընդ նոսա է, ոչ ինչ երկնչին արդարքն:

Հայեցայ և տեսի այր մի արդար որ մեռանէր. և եկին հրեշտակքն ողորմութեան և առին զհոգի նորա, և երթային ի յայն տեղին ուր հոգիքն էին մեղաւորաց և պոռնկութեան. տեսի զի ոչ գային տային զպատճառս:

Եւ դարձեալ փոխեցայ և տեսի այլ տեղի, այր մի մեղաւոր՝ որ եկն բարի հրեշտակն և չար, եկն և անողորմն, և վիճէին ի վերայ անձին մեղաւորի և ոչ գտին խրատուս բարի հրեշտակքն, այլ ըմբռնեցին զնա անողորմ հրեշտակքն: Իբրև մերձեցան յերկինս,

կինս, հայեցայ ի հաստատութիւն երկնից և տեսի ի ներքոյ երկնից, և անդ էր իշխանն խաւարին և ամենայն իշխանք չարին. տեսի զամենայն ի հաստատութենէ երկնից, զի բնաւ գութ և ողորմութիւն ոչ գոյր ի նոսա, որոց երեսք լի էին բարկութեամբ: Հարցի ցհրեշտակն և ասեմ. Ո՞վ են սոքա, Տէր: Եւ ասէ. Սոքա են որ հանեն զհոգիս մեղաւորացն ի մարմնոյ իւրեանց, վասն զի ոչ հաւատացին յԱստուած և ոչ յուսացան ի փրկութիւն նորա:

Հայեցայ միւսանգամ ի բարձունս և տեսի այլ հրեշտակս որ էր երեսք նոցա լուսաւորք, և էին իբրև զարեգակն, ածեալ ընդ մէջ իւրեանց կա(մա)րս ոսկի և ունէին ի ձեռս իւրեանց պսակս լուսեղէնս և դրոշմ Աստուծոյ, գրեալ էր ի նոսա անուն որդւոյն Աստուծոյ, և լի էին ամենայն հեզութեամբ: Հարցի զհրեշտակն և ասեմ. Ո՞վ են սոքա Տէր, յայն վայելչութիւնն: Հրեշտակն ասէ. Սոքա են որ առնուն զհոգիս արդարոցն, յորժամ ելանեն ի մարմնոյն իւրեանց, որ հաւատացին յԱստուած և եղեւ նոցա օգնական: Եւ ասեմ. Իսկ արդարք և մեղաւորք հանդիպին միմեանց: Եւ պատասխանի և ասէ. Մի է ճանապարհ ամենեցուն

1. Մխս էջ պատառեալ թղթոյն:

ձայն եղև ի բիւրուց հրեշտակաց որ ասէին. Վա՜յ քեզ, Թշուառական անձն. լաւ էր քեզ թէ չէիր ծնեալ յերկիր. ձայն ելանէր ի վերուստ և ասէր. Ո՛վ Թշուառական, ո՞ւր են ողորմութիւնք քո. գիտէիր զարդարութիւն և ատնէիր զանօրէնութիւն: Եւ պատասխանի Թշուառական հոգին և ասէ. Ո՞վ է որ էջն ի դժոխս և ելեալ պատմեաց մեզ թէ գոյ դատաստանք: Եղև ձայն որ ասէ. Հանէք զդա ի խաւարն արտաքին, անդ եղիցի լալ և կրճտել ատամանց:

Հայեցայ և տեսի երկիր բարի և վայելուչ, և պայծառ էր եօթնպատիկ քան զարեգակն. Հարցի և ասեմ. Տէր, ո՞ր է այս տեղիս: Ասէ. Այս է տեղի արդարոցն որ նեղեալ էին զանձինս իւրեանց և մաչեալ քաղցով և ծարաւով վասն անուան Տեառն. տայ նոցա Աստուած զանապառ ուրախութիւնս զայս:

Եւ յետ այսորիկ տեսի գետ ջրոյ յարևելից կուսէ, և գետն էր սպիտակ որպէս կաթն: Հարցի և ասեմ. Տէր, զի՞նչ է այս: Ասէ հրեշտակն. Այս է ծովն փափկութեան որ յարևելից կուսէ մտանէ ի քաղաքն օ-

որ երթան առ Աստուած, այլ արդարքն ունին զբարի հրեշտակն օգնական և ոչ երկնչին:

Եւ ասեմ ընդ հրեշտակն. Կամիմ տեսանել զտեղիս արդարոց և մեղաւորաց յորժամ ելանեն ի մարմնոյն. Եւ նա ասէ. Յորժամ ելանէ հոգի արդարոյն, ի նմին ժամու հրեշտակն քաջալերէ զնա թէ մի երկնչիր, զի դու արարեր զկամս արարչին քո, քանզի մինչդեռ դու մարմնով յերկրի էիր, ես տանէի զգործս քո առ Աստուած. հոգի Աստուծոյ զօրացուցանէ զնա, և նա հանէ յերկինս և պահեն նմա հրեշտակք լուսեղէնք. Եւ լսելի լինի ձայն որ ասէ. Ածէք այսր զոգիդ որ արարեալ է զկամս Աստուծոյ. Եւ լուայ ձայն հրեշտակաց որ ասէին. Զօրացիր, հոգի արդար, զի ամենեքեան մեք ուրախ եմք, զի արարեր զկամս Աստուծոյ. Եւ առաջնորդեն նմա մինչ գնացեալ երկիր պագանէ Աստուծոյ: Եւ հրեշտակ Տեառն յիշէ զվաստակ նորա և ասէ. Որոյ զգործն մատուցանէի առաջի քո զօրհանապազ, արդ արա դատ ըստ իրաւանց քոց: Եւ Տէր ասէ. Որպէս ոչ տրտմեցուցեր դու զՀոգին սուրբ, և ոչ ես զքեզ տրտմեցուցից. և ասէ. Տուք զդա ի հրեշտակապետն որ տանի ի դրախտն փափկութեան, և եղիցի անդ մինչև յաւուր գալստեան իմոյ: Եւ լուայ ձայն հրեշտակաց որ աղաղակէին և ասէին. Արդար ես դու Տէր. և ուղիղ են դատաստանք քո և հատուցանես ըստ իւրաքանչիւր գործոց: Եւ ասէ հրեշտակն ցիս. Տեսե՞ր և իմացա՞ր զի զոր ինչ

ծեւոյ, այս է որ տանի ի ճանապարհն ընդ այն, և եթէ ամբարշտեալ է ոք և մեղուցեալ և դարձցի և ապաշխարէ, յորժամ ելանէ ի մարմնոյն, ածեն զնա նախ երկիր պագանել առաջի Աստուծոյ, և յետ այնորիկ տան զնա ցԳաբրիէլ հրեշտակապետն և նա մկրտէ զնա ի ծովս յայս, և յետ այնորիկ ածէ զնա ի քաղաք օծելոյն որք ոչ մեղան:

Եւ յանկարծակի եղև ինձ ելանել ի վերայ ծովուն, և եհան զիս ի նաւ մի ոսկի, և հրեշտակք բիւր և երեք հազար առաջնորդէին սաղմոսելով մինչև մօտ ի քաղաքն. բնակիչքն ուրախ լինէին ընդ երթալն իմ ի քաղաքն. և էր լոյս նորա առաւել եօթնպատիկ քան զարեգակն, և էր քաղաքն ոսկի և երկոտասան պարիսպ շուրջ զնովաւ, և երկոտասան հազար բիւր հրեշտակք կային ի նմա, և էին բարձր ի միմեանց և երկոտասան դրունքն մտանէին ի քաղաքն յայն: Եւ անցանէին չորս գետ զնովաւ. և գետն որ յարևելից կուսէ գայր, ունէր նմանութիւն մեղեր, և գետն որ յարևմտից՝ նմանութիւն գինւոյ, և որ ի հարաւոյ գայր՝ ի նմանութիւն կաթին, և որ ի հիւսիսոյ՝ ունէր զնմանութիւն ձիթոյ: Իբրև տեսի զարմացայ յոյժ, հարցի և ասեմ. Տէր, ո՞յր են այս

գործէ մարդ յաշխարհի, զայն առնու հատուցումն յԱստուծոյ: Եւ ասացի. Այո, Տէր:

Եւ ասէ հրեշտակն. Եկ զկնի իմ և ցուցից քեզ զտեղի մեղաւորաց: Եւ գնացի զհետ նորա, և եհան զիս արտաքոյ սահմանացն այնոցիկ, և տեսի զբազումս ի մէջ թանձրամած խաւարի. յոգւոց հանի լացի և ասացի առ Բարձրեալն. Ողորմեա տանջին, ոչ բնաւ ստեղծեալ էիր զորդիս մարդկան: Պատասխանի ետ հրեշտակն և ասէ. Ե՞ր լաս, միթէ դու ողորմած ես քան զԱստուած:

Հայեցայ և տեսի ալևոր մի, և չորս հրեշտակք ածէին զնա ի գետն հրեղէն, և գետն մինչև ի սիրտն հասանէր. և եկն հրեշտակն և երկաթանի մտահան ի ձեռին իւրում, և հանէր զաղիսն ընդ բերան նորա: Եւ ասեմ. Ո՞վ են սոքա, Տէր: Եւ ասէ. Երիցանին են, որ ոչ պաշտէին զպաշտօն Աստուծոյ, այլ յորժամ յագէր յուտելոյ և յըմպելոյ, շնայր և մատուցանէր պատարագ Աստուծոյ:

Նոյնպէս և այլքն տանջէին այնպէս: Եւ ասեմ. Ո՞վ են այսա-

գետերս որ կան շուրջ զքաղաքաւս(...?)։ Եւ անուն գետոյն որ մեղր՝ կոչի Փիսոն, և որ կաթն՝ Տիգրիս, և որ գինի՝ Գեհոն, այն որ ձէթ՝ Եփրատէս։ Բայց զայս ասեմ քեզ, մինչ դեռ յաշխարհի են և ոչ արարին զկամս անձին իւրեանց, այլ քաղց և ծարաւ կացին վասն անուանն Աստուծոյ։ Եւ ես ասացի ընդ հրեշտակն. Տէր, ո՞յս են պարգևքն զոր խոստացաւ Աստուած սիրելեաց իւրոց։ Եւ նա ասէ. Ուղիղ այս են, և նոցա է պատրաստեալ որ յաշխարհէ են արք՝ որ կանայս առնուն, և կանանց որ արանց լինին և որ պահեն զպատուիրանս արդարութեամբ։

Եւ եհան զիս ընդ դուռն արևմտից, և տեսի անդ ծառս մեծամեծս, որ պտուղ ոչ գոյր ի նոսա, եկանէին մարդիկն և մտանէին ի քաղաքն. և ծառքն ապաշխարէին և ի ծունր իջանէին։ Հարցի. Տէր ո՞վ են սոքա, զի ոչ եղեն արժանի մտանել ի քաղաքս յայս։ Ասէ հրեշտակն. Սոքա քահանայք էին որ ոչ պահէին զուխտ և զպատուիրանն Աստուծոյ, այլ խառնեցան յաշխարհ, պոռնկութեամբ և արբեցութեամբ կային զամենայն ժամանակս յաշխարհի և ոչ ապաշխարեցին։

Եւ տարաւ զիս ի տեղի մի խաւարային և տեսի

քիկ, Տէր։ Եւ ասէ. Եպիսկոպոսքն են՝ որ ոչ առնեն տեսչութիւն ըստ կամացն Աստուծոյ, և զփառս անձին իւրոյ խնդրեաց. ոչ եկաց արդարութեամբ և ոչ գնայր ի շնորհն Աստուծոյ որ տուեալ էր նմա. և ոչ արար իրաւունս որբոյն և այրւոյն. վասն այնորիկ յաւիտեան տանջին։

Միւս այլ ես տեսանէի զայր մի (զ)որ ածեալ էր հրեշտակն ի հուրն աչագին, և սփռեալ ունէին զձեռն թաթախեալ[1] արեամբ։ Եւ ասեմ. Ո՞վ է սա, Տէր։ Եւ ասէ. Սարկաւագն է՝ որ կայր սպասաւոր քահանային և առնոյր հաղորդ և շնայր. և բարի ոչ գործեաց։

Եւ տեսանէի զայլ ոք զի արկանէին ի հուր մինչև ի ծունկն. և եկն հրեշտակն և ածելեաւ հարթէր զշրթունս և զլեզու նորա։ Եւ ասեմ. Տէր, ո՞վ է սա։ Եւ ասէ. Գրակարդացն և վարդապետն, որ ասէն զպատուիրանն ժողովրդեան և ինքեանք ոչ առնէն, այլ կան անառակութեամբ. վասն այնորիկ տանջին։

1. Յօրինակին թագաւորեալ։

անգ այր մի մեղաւոր զի տանէին զնա ընդ խաւարն, և տային զնա ի տանջանս հրեղէն հրեշտակքն, և ասէին ցնա․ Տանջեցէք զդա հրեղէն գաւազանաւ։ Եւ ձայն եղև որ ասէ․ Ածէք զթշուառականն այն որ բարկացոյց զԱստուած, զպատուիրանն ոչ պահեաց։ Տեսին զնա հրեշտակքն և ասեն․ Վա՜յ քեզ թշուառական անձն, զի՞նչ կամիս տալ պատասխանի։ Ասեն հրեշտակքն․ Հանէք զդա ի մէնջ, զի զարհուրեցոյց զմեզ չարիք դորա։ Յետ այնորիկ ածին զնա առաջի Աստուծոյ, և հրեշտակ մի աղաղակեաց և ասէ․ Ես որ մատուցի զգործս դորա զոր գործեաց ի տուէ և ի գիշերի, արդ տուր զդատաստանն դորա։ Եղև ձայն առ նա և ասէ․ Ո՞ւր է պտուղ քո։ Իբրև լուաւ զայս, կարկեցաւ և ոչ տայր պատասխանի․ և հրեշտակքն ասէին․ Ուղիղ են դատաստանք քո։ Վասն մեղաւորին ասէ դատաւորն․ Հանէք ի խաւարն արտաքին, ուր լալ աչաց և կրճտել ատամանց։

Եւ դարձեալ տեսի անձն մի, որ տանէին երկու հրեշտակք, որ լայր և ասէր․ Աստուած արդար, քաւեա զիս զմեղաւորս․ այս եօթն օր է որ մատնեցայ ի ձեռս երկու հրեշտակացս որ տանջեն զիս անողորմ, և տարան զիս ի տեղի մի որ ոչ էի տեսեալ։ Եւ ասէ ցնա դատաւորն․ Զի՞նչ գործեալ է քո որ ոչ արարին ողորմութիւն քեզ․ վասն զի ոչ արարեր ողորմութիւն։ Ետ պատասխանի և ասէ․ Ոչ մեղայ։ Բարկացաւ Տէր Աստուած յասելն նորա թէ ոչ մե-

Դարձեալ տեսի զուրս լի անշէջ հրով և ազգի ազգի տանջանարանս․ զոմանս յանշէջ հուրն և զոմն լի ցրտագին սառնամանեաւ, զոմն լի խաւարաւ և զոմն լի հրացայտ շանթիւք, զոմն լի ծծմբով և զոմն լի հրեղէն նիզակօք և զոմն լի անքուն որդամբք․ և արկեալ էր անդ արս և կանայս բազումս անհամարս։ Իբրև տեսի, լալով ասացի ցհրեշտակն․ Ո՞վ են սոքա, Տէր։ Եւ ասէ․ Նոքա են որ արհամարհեցին զպատուիրանն Աստուծոյ և ձայնի քահանայիցն ոչ լսեցին, այլ հեռացան կամօք իւրեանց և ելին յԱստուծոյ պատուիրանացն։

Եւ տեսի զոմն որ տակաւ խնդրէին ի նմանէ, և ասեմ․ Ո՞վ են սոքա։

գայ․ և ասէ Տէր․ Հանէք զծառայդ անպիտան ի խաւարն արտաքին։

Եւ գնացի կրկին զհետ նորա, և տարաւ զիս մինչև յերկրորդ երկինս և կացոյց զիս առաջի դրանն․ և էր դուռն ոսկի և առաջի նորա երկու սիւնք ոսկի, և ի վերայ նորա երկու տախտակք լի գրով, և էին մեծամեծք տախտակքն իբրև երեք հազար կանգնու։ Դարձաւ առ իս հրեշտակն և ասէ ցիս․ Երանի է քեզ եթէ մտանես (ընդ) այս դուռնս, զի ամենեքեան ոչ են արժանի մտանել ընդ սա, բայց միայն ամբիծք։ Հարցի և ասեմ․ Տէր, զի՞նչ է այս գիրս ի տախտակիս յայս։ Եւ ասէ․ Անուանք արդարոց որ պաշտեն զԱստուած ամենայն սրտիւք իւրեանց, և են նոքա պանդուխտ յերկրի։ Հարցի և ասեմ․ Անուանք նոցա գրա՞ծ են թէ ոչ։ Ասէ ցիս․ Ոչ թէ անուանք նոցա, այլ և մազ գլխոյ նոցա։

Իբրև մտի ես ի ներքս ընդ դուռն, պատահեաց ինձ երկու ալեւոր, որոյ երեսք նոցա լուսաւոր էին իբրև զարեգակն, և ելին ընդ առաջ իմ և համբուրեցին զիս և ասեն․ Ողջ լեր, սիրելի Աստուծոյ․ և տրամեցան յոյժ և ասեն․ Կամէաք զամենայն մարդ որ մտանէին ի պարգևս յայս, և սակաւք են որ մտանեն աստ։ Լացի և յոգւոց հանի, հարցի և ասեմ․ Տէր, ո՞յք են այս ալեւորքս։ Եւ ասէ․ Այս դպրապետք են․ միւսն Եղիա մարգարէն։ Եւ ասէ ցիս հրեշտակն․ Տես և ի միտ առ զոր ցուցանեմ քեզ՝ առ ի պատմել որդւոց մարդկան յերկրի։

Եւ ասէ հրեշտակն․ Սոքա են որ փախչին ատնուն և տան։

Եւ տեսի զոմանս ի ցրտագին սառնամանիքն և կախեալ զկեղուէ, և չար հրեշտակք որ տանջէին զնոսա․ հարցի և ասեմ․ Ո՞վ են սոքա, Տէր։ Եւ ասէ․ Երդմնահարքն են, որ ուրացան զԱստուած յերդնուլն իւրեանց, վասն այնորիկ տանջին։

Եւ տեսի պարիսպ հուր և անդ արկեալ էր բազում այր և կանայս, և զազանք ծամէին զլեզու նոցա․ և ասեմ․ Ո՞վ են սոքա, Տէր։ Եւ ասէ․ Սոքա են որ ատեցին զպահս և զաղօթս։

Եւ տեսի զոմանս արկեալ ի խաւարուտ տեղւոջ և կապեալ զձեռս և զոտս նոցա և այնպէս տանջէին զնոսա․ և ասեմ․ Ո՞վ

Եւ տարաւ զիս առ գետն որ է ի հիւսիսոյ կողմն, և կային որդիք մարդկան և սաղմոսէին: Հարցի. Տէր, ո՞վ է որ սաղմոսէ: Ասէ ցիս. Այս Դաւիթ է որ սաղմոսէ ի վերայ բեմբին. այս է վերինն Երուսաղէմ, զի յորժամ գայ Թագաւորն երևելի փառօք, Դաւիթ սաղմոսէ առաջի Նորա և արդարքն ասեն զալէլուն: Հարցի և ասեմ. Տէր, ո՞վ է սա: Եւ պատասխանի և ասէ. Քանզի Որդին Աստուծոյ Նստի ընդ աջմէ Հօր իւրոյ, և Դաւիթ սաղմոսէ առաջի Նորա, և ոչ է արժան առանց ալէլուի պատարագ մատուցանել Աստուծոյ. զի յորժամ պատարագ մատուցանեն քահանայքն, և զօրք երկնից ընդ Նմա սաղմոսեն. երրայեցի խօս է ալէլուն, և մեկնութիւն ալէլուին՝ կղաթ մարիաթն: Եւ ասեմ. Զի՞նչ է կղաթ մարիաթն: Եւ ասէ. Կղաթ մարիաթն թարգմանի փառք Աստուծոյ. և ամենայն որ սաղմոսէ և ոչ ասէ զալէլուն, մեղանչէ Աստուծոյ. ամբարտաւան է, ոչ է արժանի օրհնել զարարիչն Աստուած:

Եւ անցոյց զիս ընդ չորս գետսն և եհան զիս ի վերայ ծովուն Երկղիանոսի, և ասէ ցիս. Գիտե՞ս ուր երթաս: (Եւ ասեմ.) Ոչ գիտեմ, Տէր: Եւ ասէ. Եկ զհետ իմ և ցուցից քեզ զանձինս մեղաւորաց:

Եւ տարաւ զիս յարևմտից կուսէ, և (անդ տեսի) ես զերեսս երկնից հաստատեալ ի վերայ ծովուն. և

են սոքա, Տէր: Եւ ասէ. Սոքա են անողորմք, որ աղքատաց ոչ անէին ողորմութիւն, այլ սիրեցին զինչս իւրեանց և գնացին զհետ մտաց կենաց, և օրինօքն Աստուծոյ ոչ շրջեցան, յանանց բարութենէն զրկեցան, վասն այնորիկ տանջին:

Եւ տեսի զտարտարոսն ներքին, և ի նմա էին արք և կանայք բազումք, և վիշապք ծծէին զականջս նոցա. և ասեմ. Ո՞վ են սոքա, Տէր: Եւ ասէ. Սոքա են որ յաւուր կիրակէի հեշտացան յանկողինս իւրեանց և ոչ լուան զձայն սուրբ աւետարանին, վասն այնորիկ տանջին: Հայեցայ ի տարտարոսն այն և տեսի ալեւորս և գոյնք նոցա ի գոյն արեան. և ասեմ. Ո՞վ են սոքա, Տէր: Եւ ասէ. Սոքա են անդարձ ծերքն որ ոչ զղջացան և ոչ խոստովանեցան զմեղս իւրեանց, այլ անդարձ և անխոստովանութեամբ մեռան, վասն այնորիկ տանջին:

Եւ տեսի այլ գուբ հրոյ անշէջ և արկեալ էին անդ արս և կանայս բազումս. և ասեմ. Ո՞վ են սոքա, Տէր: Եւ ասէ. Սոքա

գայր լալիւն և ձիչ սաստիկ, և գայր գետ հրոյ եռալով, և էր անդ բազմութիւն արանց և կանանց. և էր որ մինչև ցծունկսն, և էր՝ մինչև ի մէջսն, և այլ՝ մինչև ի շրթունսն, և կայր՝ մինչև ցգլուխն: Հարցի. Տէր, ո՞վ են սոքա: Ասէ հրեշտակն. Սոքա ոչ գտան ի թիւս արդարոցն, այլ փոխանակ աղօթելոյ, կային անդադար ի մեղս և յիշոցս, և մեռան անխոստովան, և կան ի տանջանս:

Եւ (տեսի) այր մի զի ածէին չորս հրեշտակք ի հուրն և սփռեալ ունէին զձեռս. որդն երթայր ընդ բերանն, և հեծեծելով ասէր. Ողորմեա ինձ: Հարցի. Տէր, ո՞վ է սա: (Եւ ասէ). Այս սարկաւագ էր որ եթող զուսումն Աստուծոյ և շաղախեցաւ շնութեամբ և չարութեամբ:

Եւ տեսի այլ գուբ հրոյ, և ի ներքս արք և կանայք, և որդն ուտէր զնոսա: Հարցի. Տէր, ո՞վ են սոքա: Ասէ հրեշտակն. Որ զշահս առնուն տոկոսի և արծաթոյ, այժմ տանջին:

Եւ տեսի այլ տեղի որ հուրն պարիսպ էր և ծածկէր զնոսա, և կանայք որ ծամէին զլեզուս իւրեանց: Հարցի. Տէր, ո՞վ են սոքա: Ասէ հրեշտակն. Սոքա բամբասողք են:

Եւ տեսի այլ արս և կանայս որ հատանէին զոտս և զձեռս, և ուտէր զնոսա հրեղէն որդն: Հարցի. Տէր, ո՞վ

են որ կին ունին և շնան, և կամ առեալ այր զկին և կին զայրն, և ոչ յիշեցին զՔրիստոս որ վասն նոցա խաչեցաւ. վասն այնորիկ տանջին ի հուրն յաւիտենից:

Եւ տեսի արս և կանայս ի տեղւոջ սառինն և հատեալ զոտս և զձեռս նոցա, և որդունք մեծամեծք ուտէին զնոսա, և էին որդունքն կանգուն երկու. իբրև տեսի լացի և ասեմ. Ո՞վ են սոքա, Տէր: Եւ ասէ. Սոքա են որ զորբս և զայրիս զրկեն ի զուր և ի տունս իւրեանց ժողովեն. վասն այնորիկ տանջին հրով:

Եւ տեսանէի ի պապակի և չտային ըմպել նոցա ջուր և կամ կերակուր. և ասեմ. Ո՞վ են սոքա, Տէր: Եւ ասէ. Սոքա են որ յաւուր կիւրակէի ուտէին զկերակուր իւրեանց և ոչ տային աղքատաց, վասն այնորիկ տանջին:

Եւ տեսի այլ տեղի և անդէն էին արք և կանայք բազումք, և զոյնք նոցա որպէս զարեան, և արկեալ էր զնոսա ի խորխորատ, և

են սոքա: Ասէ. Որ զորբս և զայրիս և զաղքատս լա-
ցուցանէին, և տանջին անխնայ:

Եւ տեսի այլ բազում չարչարանս, արք և կանայք և անձինք ի վերայ մխեանց արկեալ, և լային և ողբային: Հարցի. Տէր, ո՞վ են սոքա: Ասէ. Որ ոչ յուսացան յԱստուած, ոչ աղօթէին և ոչ տային, մեղայ. այլ լուանային նուաձէին զմարմինս իւրեանց յուտել և յըմպել, և ոչ ածէին զմտաւ զայսպիսի տանջանս: Հարցի. Ո՞րչափ է խորութիւն հրոյս: (Ասէ). Ոչ գոյ չափ, այլ եռայ, իբրև զկաթսայ և իբրև զյորձանս հեղեղաց. որպէս քար ընկենու ի ծով և յետ ժամանակաց ապա հասանէ յատակս, նոյնպէս զմի ընկենուն ի հուրս, ութ ամ ապա հասանէ յատակ զորս:

Եւ տեսի այլ այր մի արկեալ ի հուրն և չորս հրեշտակք տանջէին զնա և երկժանի մահճան ի ձեռս նոցա երկաթի, և ածէր ընդ բերանն: Ասացի. Տէր, ո՞վ է սա: Ասէ ցիս. Այս երէց էր և ծուլութեամբ զպատարագն մատուցանէր, ըմպէր ընդ չունս և ընդ պոռնիկս, ընդունի զտանջանս յաւիտենից:

Եւ տեսի այլ այր որ չորս հրեշտակք ծեծէին զերեսս նորա փայլատակմամբք և չտային տալ. Տէր ողորմեա: Հարցի. Տէր, ո՞վ է սա: (Ասէ). Այս հովիւ էր եպիսկոպոս և ոչ հովուէր զհօտ ի բարի, այժմ տանջի յԱստուծոյ:

Տեսի արս և կանայս կախեալ զհերացն իբրև ի

նա լի էր ծծմբով և ի վերայ կարկուտ սաստիկ և օդ սառնամանեաց խաւարի: Հարցի և ասեմ. Ո՞վ են սոքա Տէր: Եւ ասէ. Սոքա են որ զգործ անօրէնութեան գործեցին, վասն այնորիկ անդադար տանջին:

Տեսի անդ և այլ տեղի, և անդ էին արք և կանայք, և թեթև էր տանջանք նոցա. ունէին հանդերձ սպիտակ և աչք նոցա կոյր, և արկեալ զնոսա ի խորխորատ խաւարի. և ասեմ. Ո՞վ են սոքա, Տէր: Եւ ասէ. Սոքա են հեթանոսք որ գործէին զգործս բարիս և զխաչելեալն Աստուած ոչ ճանաչէին, վասն այնորիկ կան ի տանջանս:

Հայեցայ և տեսի արս և կանայս ի վերայ գաղանաց, և էին իբրև զվիշապ և ուտէին զնոսա. և հրեշտակն որ կայր ի վերայ յաւելայր ի տանջանս և ասէր. Իմացարո՞ւք թէ գուցէ զա-

թոնիր բոցոյ, և մուխ թանձր ելանէր ի գբոյն, ա-
սացի. Ո՞վ են սոքա: Ասէ. Այս է որ զարդարէին զանձինս վասն շնութեան և պոռնկութեան:

Տեսի այլ արս և կանայս, և գազանք խածանէին և վիշապք մեծամեծք մանրէին զակերս նոցա: Հարցի. Տէր, ո՞վ են սոքա: Ասէ. Որ զմանկունս կորուսանեն և արք որ ընդ նոսա պոռնկին, և մանկունքն զան առաջի Աստուծոյ և ասեն. Դոքա ետուն զմեզ կերակուր շանց, կոխան անասնոց, արդ տանջեցէք անողորմ և . . . տանջանս:

Եւ տեսի այլ տեղի ցուրտ և սառն, և զօչիւն ցրտոյն էր առաւել քան զհրոյն, և ձայն լալոյ և աղաղակի: Հարցի. Տէր, ո՞վ են սոքա: Ասէ. Այս են որ տա-ցեալ էին զամուսնութիւն և ընդ այլ ոք ապականէին զմարմին իւրեանց, և զԱստուած բարկացուցանէին, և տանջին անողորմ:

Տեսի այլ տեղի տղմով, զի եռայր հուրն, և էին անդ արք, և ելանէր որդն և ուտէր զնոսա և գազանք մեծամեծք կրծէին զմարմինս կանանցն մինչև յոս-կերս, և ձիչ հանէին: Հարցի. Տէր, զի՞նչ արարին սոքա: Ասէ հրեշտակն. Սոքա են որ ընդ անօրէնս

տեսանեն Աստուծոյ: Եւ ասեմ. Ո՞վ են սոքա, Տէր: Եւ ասէ. Կա-նայք են, որ ապականեն զաստեղծուածս սուրբ, պատրելով զմար-դիկ ի կորուստ, և գործել տան զչարիս, և յղանան և սպանանեն զմանկունս յորովայն մօր իւրեանց. և արքն այնոքիկ՝ են ընդ նոսա. և մանկունքն կային առաջի Աստուծոյ և ասէին. Վրէժ առ ի ծնողաց մերոց, զի ետուն զմեզ կերակուր շանց և գա-զանաց:

Եւ հրեշտակն շրջեցուցանէր զիս յամենայն տանջանս մեղա-ւորաց, և տեսանէի զամենայն որ անդ կայր:

Յետ այսորիկ տեսանէի այլ տանջանս. էր անի մի իբրև զբոց հրոյ, և ածէր հրեշտակն արս և կանայս, զարս ի լեզուացն կախեալ և զկանայս ի հերացն, և պապակէին սաստիկ ի հրոյն, և գայր ձայն ի յանի այ անտի որ ասէին միաբան անձինք նոցա. Ողորմեաց մեզ, Տէր, զի այժմ ծանեաք զժամանակ ապաշխարու-թեան: Իբրև տեսի, լացի և ասացի. Լաւ էր մեղաւորաց թէ չէին ծնեալ յերկրի:

Եւ ասէ հրեշտակն. Ե՛կ զկնի իմ, և ցուցից քեզ մեծամեծ

ընակէին և ապականէին յուտելոյ և յըմպելոյ և խօսս անկարգօք, վասն այնորիկ տանջին:

Տեսի այլ տեղի, հրահոսանք եռայր և խճանէր, և կային անդ արք և կանայք, և հրեշտակք թակեղամբ ծեծէին զերեսս նոցա, և ասացի. Տէր, զի՞նչ են որ չար տանջին: Ասէ հրեշտակն. Սոքա մատնողք են և յանհաւատս դատէին, լացուցին զորբս և զայրիս, արդ տանջին յաւիտեան. իսկ հրեշտակն ծեծէր հրեղէն գաւազանաւ զգլուխս նոցա և ասէր. Այդ է հատուցումն:

Դարձեալ տեսի հաց չաղախեալ ընդ արեան, և շուրջ կային երիցունք, և ահագին բոց հրոյ ծածկէր զնոսա և յոյժ աղաղակ ելանէր ի նոցանէ: Հարցի. Տէր, ո՞վ են սոքա: Ասէ. Երիցունք էին և ոչ քարոզէին զպատուիրան Տեառն ժողովրդեանն, այլ էին ծոյլ յաղօթս և պոռնկէին յամենայն չարիս, և զհարկ ժողովրդեանն բռնութեամբ առնէին, այլ ընդ ժողովուրդս խմորեալ և յուտել և յըմպել և անառակել, և հալածէին զհրեշտակ ի սրբոյ սեղանոյն և զհոգին սուրբ տրտմեցուցանէին. այժմ ընդունին զտանջանս զայս:

տանջանս: Եւ ա՛ռ զիս յարևելից կուսէ յամենայն տանջանացն և կացոյց զիս ի վերայ գբի մի, և գուբն կնքեալ էր եօթնպատիկ: Ասէ ցհրեշտակն որ մերձ կայր ի վերայ գբին. Բա՛ց զբերան գբին, զի տեսանէ զդա Պաւղոս սիրելին Աստուծոյ. քանզի հրաման առեալ է զմա զամենայն տանջանս տեսանել: Եւ հրեշտակն ի տեղւոյն ի բաց եկաց, և ասէ. Ոչ կարես ժուժել հոտոյն: Իբրև եբաց զգուբն դժոխոցն, ել հոտն դառն և գժնդակ քան զամենայն տանջանաց. հայեցայ ի գուբն այն և էին ի հուրն գնդակ գնդակի վերայ, և տեսի ի ներքս ի գուբն, այլ գուր ազգի ազգի, և արկեալ էին անդ արս և կանայս շուրջանակի ի տանջանս: Եւ ասէ հրեշտակն որ խօսեցաւ ցիս. Ի մէտ ա՛ռ և տես, զի յորժամ ընկենուն զոք աստ, այնուհետև դնեն զմատանին ի վերայ նորա, և ոչ ելանեն յաւիտեան: Եւ ասեմ. Ո՞վ են սոքա որ արկեալ են ի գուբս այս: Եւ ետ պատասխանի հրեշտակն և ասէ. Սոքա են որ ոչ հաւատացին զՔրիստոս Մարիամու եկեալ յաշխարհս, և աստ տանջին յաւիտեանս:

Եւ ասէ հրեշտակն. Լուարուք ամենեքեան որ ի տանջանս կայք. ես կացի առաջի Աստուծոյ յամենայն ժամ, կենդանի է տէր

Ասէ ցիս հրեշտակն. Ե՛կ զհետ իմ, և ես ցուցից քեզ զտանջանս մեծամեծս:

Եւ գնացի յարևելից կուսէ, և տեսի խորխորատ մի և զրունք պղնձի, և կապար երկաթի գնէր ի վերայ նոցա, և ասեմ. Ո՞յց զդուրսդ, զի տեսից զդատ: Ասէ հրեշտակն. Ոչ կարես համբերել հոտոյն. և երաց զդուռն և ել ժանտահոտութիւն, և երևեցաւ ի ներքս բիւրուց մարդկան, և էր խաւար և լալիւն և հեծիւն, և զարհուրեցաւ ոսկր իմ և մարմին: Հարցի. Տէր, ո՞վ են սոքա: Եւ ասէ ցիս. Բազում մեղաւորք կան աստ, հայհոյողք, արբեցողք և սպանողք և ուրացողք, անհաւատք և զրկողք և բարկացողք, յիշոցնատուքն և գողքն և այլ այսպիսի չարագործք:

Եւ ապա եկն Միքայէլ հրեշտակապետն և ասէ. Լուարուք ամենեքեան որ ի տանջանս էք. ես կայի առաջի Աստուծոյ յամենայն ժամ վասն ձեր, զտիւ և զգիշեր աղաչեմ զԱստուած վասն մարդկան, թերևս դարձցին և ապաշխարեսցեն զմեղս իւրեանց, և դուք ոչ կամեցայք լսել պատուիրանաց. արդ ո՞ւր են աղօթքն ձեր, ո՞ւր են ողորմութիւնք ձեր. բայց արդ լացէք համապազ, ընդ ձեզ լացից, Պաւղոսիւ

զի ոչ թողի զմի օր զտիւ և զգիշեր, զի աղաչեմ վասն ազգի մարդկան, և նոքա ոչ դադարեն ի մեղանչելոյ, զի անցուցին զժամանակ ապաշխարանաց իւրեանց, և ես անդադար աղաչեմ զՏէր, զի առաքեսցէ զանձրև յերկիր և երկիր տացէ զպտուղ իւր: Թէ ոք արասցէ սակաւ մի բարի, ես աղաչեմ փոխանակ նորա և օգնական լինիմ նմա, զի ապրեսցի ի դատաստանացն Աստուծոյ: Եւ ասէ. Աղօթք ձեր ո՞ւր է և բարեգործութիւնք ձեր. բայց արդ լացէք մի անգամ, և ես զձեզ լացից ամենայն հրեշտակօք, և Պօղոս սիրելի Աստուծոյ և ամենայն սուրբք, թերևս ողորմեսցի ողորմածն Աստուած և արասցէ ողորմութիւն մեղաւորաց: Իբրև լուան զբանս զայս, աղաղակէին միաբան լալով և ասէին. Ողորմեաց մեզ, որդի Աստուծոյ: Եւ ես հառաչանօք լացի և ասացի. Որդի Աստուծոյ, ողորմեա ստեղծուածոց քոց: Եւ անկաւ Միքայէլ և ամենայն հրեշտակք Աստուծոյ և ասեն. Ողորմեա ծառայից քոց ազգի մարդկան, ողորմեա ստեղծուածոց քոց:

Եւ տեսի զերկինս շարժեալ իբրև ծառ ի հողմոյ. և երեցունք քսան և չորս, զի երկրպագէին Աստուծոյ. և տեսի զեկեղեցին

հանդերձ, թէ ողորմեսցի ձեզ և տացէ ձեզ հանգիստ ի դառն տանջանացդ: Իբրև լուան զայս, ազատակեցին և ամեն առհասարակ միաբան արտասուօք և հառաչանօք. Ողորմեաց մեզ, հրեշտակապետդ Աստուծոյ. և Քրիստոսի փառք յաւիտեանս յաւիտենից:

և զվարագոյրն և զաթոռ Բարձրելոյն ի Նմա, և վերացան խընդրուածք աղօթիցն մինչև յաթոռն Աստուծոյ, և լուայ ձայն զի ասէր. Վասն ձեր աղաչեն հրեշտակապետքն և պաշտօնեայքն իմ: Եւ ազատակեցին և ասեն. Խնդրեմք ի քէն, տէր, զի տեսանեմք զբազումս ի տանջանս:

Յետ այսորիկ տեսի զերկինս բացեալ և զՈրդի մարդոյ զի իջանէր յերկնից. տեսին զնա որ ի տանջանս կային, համբարձին զձայնս իւրեանց լալով և ասէին. Ողորմեաց մեզ, Որդի Աստուծոյ, զի դու տաս հանգիստ ամենեցուն որ յերկինս են և յերկրի, և մեզ ողորմեա. յորմէ (հետէ) տեսաք զքեզ, հանգեան անձինք մեր: Եւ եղև ձայն Որդւոյն Աստուծոյ առ Նոսա և ասէ. Հանգիստ պարգևեաց ձեզ. և Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս ամէն:

# ԱՅԼ ՕՐԻՆԱԿ ՀԱՄԱՌՕՏ

---

## ՏԵՍԻԼ

### ՍՐԲՈՅՆ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

### ԶՈՐ ԵՏԵՍ (Ի) ՎԵՐԱՆԱԼ ՅԵՐԿԻՆՍ

*Տէր Աստուած զօրութեանց, որ արժանի արարեր զիս տեսանել զամենայն ինչ, ի գիշերի լինել բազում չարիք և մեղք, պոռնկութիւն, շնութիւն, ագահութիւն և զրկանք աղքատաց, գողութիւնք և այլ բազում մեղք մեծամեծք զոր գործեն մարդիկ. արդ հրամայեա և ընկղմեա զմեղաւորսն զի ծանիցեն զքեզ ճշմարիտ Աստուած: Եւ եկն ձայն ի Տեառնէ որ ասէ. Զայդ ամենայն գիտեմ և ոչ ինչ թագչի յինէն, այլ քաղցրութեամբ և երկայնամտութեամբ ներեմ նոցա, մինչև դարձցին և ապաշխարեսցեն և ես թողից նոցա. ապա թէ ոչ դառնան, դատեմ զնոսա ի հուր գեհենին: Աղբերք, ծովք և գետք աղաղակեն առ Աստուած և ասեն. Որդիք մարդկան բազում մեղս գործեն ի վերայ երկրի. զկախարդութիւն, զմոգութիւն, զկաշառ՝ որ է արծաթ Յուդայի, սուտերդմանց: Ո՞չ լսես զձայն մարգարէին որ ասէ. Կորուսանես, Տէր, զայնոսիկ որ խօսին սուտ. և յիշոցնատուն՝ որ է յիշումն ամենայն մեղաց. որպէս Եսայի հրամայէ, եթէ յիշոցնատուն ի մատաղն այնպէս է թէ շուն ոք մորթիցէ, և պիղծ է պաշտքն և աղօթք նորա, նոյնպէս խունկն և պտղմութիւն նորա. և Պօղոս ասէ Աստուծոյ բանիւ, եթէ ամենայն բան աղեղ ի բերանոյ ձերմէ մի ելցէ. զոր ապաշխարութիւն(?) և աս-*

կաւ սակաւ անտի տարածեալ սփռեցաւ ընդ ամենայն տիեզերս. և զայն տեսեալ անօրէն Հսկայն և զազանն արիւնարբու սադայէլ, որ թարգմանի Հակառակ Աստուծոյ և մարդկան, գայ և կազմէ իւր աթոռ երեքոտնի նման գահոյից թագաւորի. և է առաջին ոտն աթոռոյն կռապաշտութիւնն, և երկրորդ ոտն կախարդութիւն, և երրորդ՝ աստեղաբաշխութիւնն. որպէս և գրեալ է մեծ վարդապետն եկեղեցւոյ Աստուծոյ Յոհան Ոսկիբերանն և ամենայն սուրբ Հայրապետք: Եւ բազմեցաւ անիծեալ վիշապն աղբագոյն յաթոռըն այն, և յոյժ զարս և ժամանակս պաշտէին զնա ազգ մարդկան այս երրորդ ախտիւս և չորրորդ արուեստիւս, մինչև ողորմեցաւ ազգի մարդկան ամենահայրն բարի, և առաքեաց զիւր Միածինն Էակից Որդին, որ իջեալ զգեցաւ մարմին և կապեաց զանիծեալ վիշապն՝ զիշխան աշխարհի, և քակեալ կործանեաց զաթոռ նորա և նզովեաց զայն որ չինեալ կանգնեցէ զնա. նոյնպէս և սուրբ առաքեալքն, փառաւորեալ Հայրապետքն մեծ ջանիւ Հանին զնոսա ի սուրբ եկեղեցւոյ, և գրեցին և նզովեցին զկախարդն և զՀարցուկն և զաստեղաբաշխն և զայն որ երթայ առ նոսա և Հաւատայ սուտ և խաբեբայ բանից նոցա. զի Հինն էանց և եղև ամենայն ինչ նոր, և զամենայն ինչ յանուանն Յիսուսի Քրիստոսի արարէք: Բայց ով որդեակք, այժմ ողորմելի եմք, զի տեսանեմք որ դեռ ևս կայ նստեալ պիղծ իշխանն դժոխոց յաթոռն յայն, և այս երեք չար ախտիւքս և դառն արուեստիւս պաշտեն զնա բազումք ի մէջ աշխարհի, և ոչ ոք է որ սաստէ նոցա զի լռեսցեն. քանզի նստեալ աստեղաբաշխն և գրեալ նշան յաւաղն, առնէ ախտացոյցս կենդանակերպօք և ծննդաբանէ և առէ ճակատագիրս և բախտս, և զօրն չար և բարի սահմանէ, զարարիչն ուրանայ և արարածոցս տայ զնախախնամութիւնն Աստուծոյ. և զայս յայտնի և Համարձակ առնեն և քարոզեն, և պատիւս և ընծայս առնուն ի մեծամեծաց. նա և զայս դեռ ևս տեսանեմք, զի կախարդք և չէ (?) Հրամայել զայն ադաեղի է խօսել, Հրամայեաց՝ որ եղին

ջուրք և ծածկեն զերկիր, զի զխառացեն ամենեքեան զզօրութիւն Աստուծոյ մերոյ։ Ասէ բարերարն. Զայդ ամենայն աչք իմ տեսանէ և ականջք իմ լսէ, բայց ես խնայեմ յիմ արարածս վասն մարդկան, զի ապաշխարեսցեն և ես թողից նոցա, ապա թէ ոչ դառնան՝ ես զատեմ զնոսա սատանամանեօք։ Այլ երկիրս և հողս աղաղակեն առ Աստուած և ասեն եթէ, Մե՞ք միայն եմք անարժան քան զամենայն արարածս, զի համբերեմք ամենայն մեղաց զոր գործեն մարդիկ ի վերայ մեր. զրկեն զաղքատս և կողոպտեն կաշառանօք և ոչ երկնչին յԱստուծոյ. պղծեն զանկողինս ընկերաց իւրեանց և զվարձս մշակաց ոչ տան, կուրին որպէս շուն և նախատեն զմիմեանս, ատեն զհրամանս Աստուծոյ եթէ, այր որ բարկանայ եղբօր իւրում՝ մարդասպան է. և ի սրբութեան տեղիս մեղք գործեն, որ է կնունք, և ազգապղծութիւն առնեն։ Քահանայքն ակարք և անարժանք որ ոչ երկնչին և պատարագ մատուցանեն, և զանբարկանալին Աստուած ի բարկութիւն ածեն, զի որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ, դատաստան անձին իւրում ուտէ և ըմպէ, զի ոչ խտրէ զմարմին Տեառն։ Եւ որով աղաղակէ հող երկրի և ասէ. Ես ոչ կարեմ տալ պտուղ չահեկանութեան և զպարարտութիւն վասն մեղաց մարդկան. Հրամայէ Տէր որ ոչ բուսանի ամենայն դալարի, զի խրատեսցին մարդիկ։ Եւ ասէ Տէր. Քաղցրութեամբ իմով ներեմ նոցա զի ապաշխարեսցեն, և ես թողում նոցա, ապա թէ ոչ դառնան, չարաչար տանջեմ զնոսա։ Տեսանէ՞ք, որդիք մարդկան, զի ամենայն եղականք հնազանդին մարդկան, դուք ոչ Աստուծոյ։ Մի արհամարհէք զպատուիրանն Աստուծոյ և զերկայնմտութիւն նորա և զքաղցրութիւն. լերուք ողորմածք և գթածք, երկայնամիտք, խաղաղարարք և անոխակալք, հեզ և քաղցր առ ամենեսեան. ապաշխարեցէք զմեղս ձեր և դարձարուք առ Աստուած, յամենայն ժամ աղօթս արարէք, զի յոյժ զօրաւոր և զմարդիկ իբրև զհրեշտակս առնեն առաջի Աստուծոյ. ամենայն ոք որ ի Քրիստոս հաւատայ՝ հրեշտակ լինի

պաշտպան, և տեսանէ զամենայն ինչ զոր գործեն մարդիկ, եթէ բարի և եթէ չար, զամենայն տեսանէ Աստուած: Ընդ արդարան խնդան հրեշտակք և ընդ մեղաւորան տրտմին, որ գործեն զմեղս յերկրի. զան հրեշտակքն և ուրախ երկիր պագանեն Աստուծոյ և երանեն զմխիկեցունեան և ասեն ցՏէր. Յանդագար յաղօթս են և մաշեն զանձինս ճգնութեամբ վասն սիրոյ քո: Եւ ասէ Տէր. Շնորհք իմ ընդ նոսա է և ես առաջնորդեմ նոցա, զի նոքա են բնակարան Հոգւոյն սրբոյ: Եկին և այլ հրեշտակք լային և ասեն. Գամք յայնցանէ որ սուտ աստուած պաշտեն և ոչ են արարեր արդարութիւն, և չէ արժանի պահել զնոսա, քաղցր և երկայնամիտ: Հրամայէ Տէր. Պահեցէք զնոսա, զի ապաշխարեսցեն, ապա թէ ոչ դառնան՝ զատեմ զնոսա վասն գործոց իւրեանց:

Եւ ասէ ցիս հրեշտակն. Պօղոս ծառայ Քրիստոսի, եկ ցուցից զտեղի արդարոյն և մեղաւորոյն, եթէ յո՞ր տեղի կան: Եւ գնացի զհետ նորա. և եհան զիս յերկինս, և տեսի ես տեղի մի որ անդ էր իշխան չարին և մոլորութիւնք, և անդ էին ամենայն մեղաւորք և զառն չարչարանք, և գեք կափէին զնոսա. և ողորմութիւն Աստուծոյ հեռի էր ի նոցանէ: Եւ ասեմ. Տէր, ո՞վ են սոքա: Եւ ասէ ցիս. Նոքա են որ ոչ են գործել արդարութիւն և զԱստուած կու տրտմեցուցանեն, զի տեսի զի անողորմ կու տանջէին:

Եւ տեսի այլ հրեշտակս որպէս զարեգակն լուսաւոր, կամար ունի ընդ մէջ, և պսակ ունի ընդ ձեռին, և լի քաղցրութեամբ և ողորմութեամբ: Եւ ասեմ. Տէր, ո՞վ են այնք: Եւ ասէ. Այն հրեշտակք արդարոյն է հեզ, և ասէ. Աւետիս ձեզ կամարարք Քրիստոսի, զի Հոգին սուրբ ի ձեզ հանգուցեալ է, մտէք յուրախութիւն ձեր:

Եւ տեսի մեղաւոր մի որ թողեալ էր զյոյսն Աստուծոյ, կերեալ և արբեալ և ի պղծութիւն կացեալ, և եղև մեռանել նմա. և հրեշտակք եկեալ

վայ տային նմա, և ասեն ցայն հրեշտակն. Լուցէք զկորուսեալ մեղաւորդ։ Եւ ասէ հրեշտակն. Հանէք զդա, զի հաս դորա ձանձրացոյց զմեզ։ Եւ տարան առաջի Աստուծոյ, որ արար զնա պատկերակից իւր, և ասէ. Ո՞ւր է պտուղ ապաշխարութեան քո։ Եւ նա ոչ կարէր տալ նմա պատասխանի, զի ոչ էր արարեալ արդարութիւն ամենևին։ Եւ հրամայեաց արդարադատն Աստուած թէ, Կապեցէք ի խաւարն արտաքին, անդ՝ ուր լալն աչաց է և կրճտելն ատամանց։

Եւ ասէ հրեշտակն. Ե՛կ, Պօղոս սիրելի Աստուծոյ, որ հանեմ յերկրորդ յերկինս առ դրան ոսկի։ Եւ տեսի անդ երկու տախտակս լի գրով։ Եւ ասէ հրեշտակն. Երանի՜ քեզ Պօղոս, զի մտանես դու ի դուռս յայս։ Եւ ասեմ. Տէր, զի՞նչ է տախտակս այս և գիրս։ Եւ ասէ հրեշտակն. Արդարոց հոգիքն են և անուանքն որ գրեալ են ի դպրութեան կենաց։

Եւ տեսի հրաշալի այր մի բազմեալ, և ասեմ. Ո՞վ է այս։ Եւ ասէ ցիս հրեշտակն. Սա դպրապետ է արդարոցն։ Եւ տեսի զԵղիա և զԵնովք, և ետուն ինձ ողջոյն և համբուրեցին զիս և լացին։ Եւ ասեմ. Զի՞նչ լայք։ Եւ նոքա ասեն. Զմարդիկ որ զմեղս գործեն և ոչ ապաշխարեն, և զրկին յանբաւ բարութեանցն Աստուծոյ։

Եւ ասէ հրեշտակն ցիս. Մի՛ պատմեր աշխարհի զոր տեսերդ։ Եւ լուայ զբանս անճառս, և զհիմունս աշխարհի ի վերայ ջուրց, և զգայն Աստուծոյ որ էր պայծառ քան զարեգակն։ Եւ ասէ հրեշտակն. Այն է, երկիրպագեաց։ Եւ ասեմ. Տէր, ի յարկս արդարոցն, տեղի քան զտեղի կայ առաւել փառօք։ Եւ ասէ. Որ սակաւ մի հպարտացեալ է կամ նախանձեալ, նա ի մեծութենէ և ի փառացն պակասէ։

Եւ տեսի աթոռ հրեղէն ի մէջ քաղաքին, լուսեղէն զարդարեալ պատկօք, և ասէ հրեշտակն. Այն աթոռ նոցա է՝ որ բնակարան են օծելոյն Աստուծոյ, և իւրեանց բարի գործքն(?) ի միջի վերինն Երուսաղ՛մի, կայ եկեղեցի մի լուսեղէն և այր մի իբրև զարեգակն բազմեալ ի վերայ բեմին, և սաղմոսարանն

ի ձեռին իւրում, և ասէ ալէլուիա. և ձայնն նորա լնոյր զքաղաքն ամենայն, և ամենայն քաղաքն ասէին ալէլուիա. և երգէին հանդիսակից փառաւոր ձայնիւ, և շարժէին հիմունք քաղաքին: Եւ ասեմ. Ո՞վ է սա, Տէր: Եւ ասէ. Դաւիթ մարգարէն: Եւ ասէ. Տէր մեր յորժամ գայ, Դաւիթ մարգարէն առաջի նորա սաղմոսելով և ամենայն արդարք ընդ նմա. և ասեն զալէլուն և Դաւիթ բարձրագոյն քան զամենայն մարգարէքն: Եւ հրամայէ սերովբէիցն. Համբարձէք զգրունս ձեր ի վեր, համբարձցին դրունք յաւիտենից և մտցէ թագաւոր փառաց. և արժանաւորքն երգէին յերկրի զԴաւթի սաղմոսն և զալէլուն, և որք պատարագ մատուցանեն. բայց առանց սաղմոսի ոչ լինի պատարագ:

Եւ գնացի զհետ հրեշտակին ի տեղի տանջանաց մեղաւորացն, և տեսի զբազումս ի մէջ խաւարի, ի տանջանս չարաչարս, յոգւոց հանի լալով և ասեմ ցԲարձրեալն. Ընդէ՞ր ստեղծեր զմարդ: Եւ ասէ հրեշտակն. Ընդէ՞ր լաս. միթէ դու ողորմա՞ծ ես քան զԱստուած:

Տեսի այր մի որ հրեշտակ մի քարշէր ի հուրն անշէջ, և զաղիսն հանէր ընդ բերանն մաղհանով: Եւ ասեմ. Ո՞վ է սա: Եւ ասէ. Երէցն է որ ոչ պաշտէ զցայգ և զցերեկ զԱստուած. արբենայ և փսխէ որպէս շուն, և դարձեալ այլ պատարագ մատուցանէ:

Եւ տեսանէի զեպիսկոպոսն որ թաղեալ մինչև ի գլուխն ի հուր գեհեննին, որ զպոռնկաց զրամն առնոյր և թոյլ տայր և նզովիւք յափշտակէր զաղքատն, և առնոյր զփիլոն քահանային որպէս հրեայքն որ մերկացուցին զՔրիստոս և ողորմութիւն ոչ առնէին:

Եւ տեսի զբազումս որ հարկանէին հրեշտակքն սրով, և զշրթունսն և զլեզուս քարշէին: Եւ ասեմ. Ո՞վ են սոքա: Եւ ասեն. Գրակարդացքն են որ զպատուիրանն Աստուծոյ ասեն և ոչ առնեն:

Եւ տեսի զգուբս բազումս լի հրով, արք և կանայք ի ներքս: Եւ ասեմ. Ո՞վ են սոքա: Եւ ասէ հրեշտակն. Սոքա են որք ոչ հաւատացին գրոց և քահանայից, և ասէին թէ չիք յարութիւն:

Եւ տեսի զբազումս որ չարչարէին և տանուէին զբարի գործս նոցա, և նոքա լալագին կային: Ասէ հրեշտակն. Նոքա են որ զարծաթն ի վարձու են տուել:

Եւ տեսանէի զայլսն ի տանտամանիսն զի լային: Եւ ասէ հրեշտակն. Սոքա երդմնաւորացք են որ եր-դուան սուրանայ զամենայն բան:

Բազում այլս տեսանէի որ արկեալ կային ի գուբ խաւարի, և որդունքն ծամէին զերանսն: Եւ ասէ հրեշտակն. Այն են որ զպարքն ուտէին և յաղօթս ոչ գային:

Եւ այլ տեսանէի որ տանջէին անողորմ: Եւ ասէ հրեշտակն. Այս անողորմքն են:

Բազում արս և կանայս ի տարտարոսի կային և միչաքք ծծէին զաչս նոցա: Եւ ասէ հրեշտակն. Այն են որ ի շաբաթ և կիրակի չեն գնացեր յեկեղեցին և զձայն սուրբ աւետարանին ոչ լսել:

Եւ տեսի արք և կանայք որ ի տանջանս այրային: Եւ ասէ հրեշտակն. Անդարձ մեղաւորք են, որ ոչ ա-պաշխարեցին:

Եւ տեսի որ ոտքն և ձեռքն կապած էր և զա-զանք ուտէին զփորն և զաղիքն: Եւ ասէ հրեշտակն. Սոքա են որ զաղքատն զրկեցին:

Եւ տեսի զբազումս որ կային ի հրացեալ տապակի և զառն կերակուր տային նոցա: Ասէ հրեշտակն. Այն է որ ի շաբաթ և ի կիրակին յառաջ քան զարձա-կել պատարագին ճաշակէին:

Եւ տեսի այլ տեղի տանջանաց խաւար, և բա-զումք նստեալ կային յայն տեղի տանջանացն, և հանդերձք նոցա սպիտակ և պայծառք, և ինքեանք կոյրք ամենեքին: Ասէ հրեշտակն. Հեթանոսք են որ աղքատասէրք էին և աղօթականք, և զխաչն ոչ ճա-նաչէին և զմկրտութիւնն ոչ ունէին, կոյրք են. բայց առանց մկրտութեան անհնար է յարքայութիւն Աս-տուծոյ մտանել:

Եւ տեսի գուբ մի կնքեալ եօթնպատիկ, և ասեմ ո՞վ(...?): Եւ ասէ հրեշտակն ցայլ հրեշտակ. Բա՛ց որ տե-

տանէ Պօղոս։ Եւ ասէ հրեշտակն. Ոչ կարէ բաւել հոտոյ. և երաց զգուբն դժոխոցն. և ել հոտն դժնդակ քան զամենայն մեղաւորացն, և երևեալ հուրն զըն-տակ, և կային ի ներքս այլ գունդս բազումս. և որ հուր էր և բազումք կային ի ներքս։ Ասէ հրեշտակն. Որ մտանէ յայս գուբս, այլ ոչ ևս ելանէ յաւիտեան։ Եւ ասէ հրեշտակն. Նոքա են որ ոչ խոստովանեցան զՔրիստոս մարմնով եկեալ յաշխարհս, և ոչ հաւա-տացին յարութեան նորա։

Եւ տեսի գուբ մի լի որդամբ անմահ, և անդ էր լալ աչաց և կրճել ատամանց, որ և սառնամանիքն, որ թէ լուսն արեգակն ծագէր, ոչ ջեռնոյր։ Եւ համբարձի զձեռս իմ յերկինս և ասացի. Ողորմեա՛, քո արարածք են. և մեղաւորքն լային և ասէին ցիս. բարեխօսեա՛ աղաչեմ։

Յայնժամ բացաւ երկինքն և էջ Գաբրիէլ և Մի-քայէլ հրեշտակն առ իս։ Եւ տեսին մեղաւորքն զԳա-բրիէլ և Միքայէլ. Դուք մատուցէք զաղաչանս մարդ-կան առաջի Աստուծոյ. մեղաք Աստուծոյ, լսէաք թէ ոչ գոյ դատաստան Աստուծոյ, և հոգք աշխարհիս զմեզ ծուլացուցին և ոչ ապաշխարեցաք։ Եւ ասէին հրեշտակքն Գաբրիէլ և Միքայէլ. Կենդանի է Տէր, որ մեք և սուրբ Աստուածածին հանապազ բարե-խօսեմք վասն մարդկան և ոչ դադարեմք զտիւ և զգիշեր վասն աշխարհի և ամենայն մարդկան, և ոչ դառնան մեղաւորք և ոչ զան յուղղութիւն. քև հա-նապազ աղաչեմք զի տացէ անձրև պտուղ աշխարհի արդիւնս զի ապրեսցին. բայց դատաւորն հարցանէ թէ ո՞ւր է ողորմութիւն ձեր և բարի գործքն ձեր և զիրաւամբք դատաստան առնէ։ Բայց լացէք ամե-նայն մեղաւորք, և մեք հրեշտակապետքս բազում հրեշտակօք և Պօղոս սիրելին Աստուծոյ և Աստուա-ծածինն, և լամք ի միասին զի ողորմեսցի ի դալրա-տեանս Պօղոսի։ Եւ ամենեքեան ասացին. Ողորմեա պատկերակցին քում։

Եւ երկինք շարժէր և բարեխօսէր և բազում քա-հանայք արժանաւորք յեկեղեցիս, և աթոռն Աստու-

ծայ բարեխօսէր վասն մարդկան մեղաւորաց. և Տէրն քաղցրաձայն բարբառով ասէր. Վասն է՞ր աղաչէք պաշտօնեայք իմ: Եւ ասեն. Խնդրեմք ի քէն, Տէր, զի տեսանեմք զմեղաւորսն ի ձեռն սատանայի զի (կա) չարչարէ:

Յայնժամ հրամայեաց բարեգութն Աստուած. Վասն մօր իմոյ Աստուածածնի և սիրելւոյ իմոյ Պօղոսի աղաչանօք, ազատեցէք զամենայն մեղաւորսդ և աւերեցէք զանգի տանջանաց նոցա և քարոզեցէք զի մի մեղանչեն մարդիկ:

Եւ ասէ հրեշտակապետն ընդ Պօղոս. Իջուցանեմ յերկիր և գնասցես ի Հռոմ քաղաք և ընդ ամենայն տիեզերս, և քարոզեսցես զտեսիլդ զոր տեսեր, որ հաւատայ ամենայն աշխարհն և դառնան առ Աստուած և փառաւորեն զամենասուրբ Երրորդութիւնն զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:

# ԹՈՒՂԹ[1] ԴԻՈՆԵՍԻՈՍԻ

## ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԱՇԱԿԵՐՏՆ ՊԱՒՂՈՍԻ

## ՅԱՂԱԳՍ ՄԱՀՈՒԱՆ ՊԱՒՂՈՍԻ ԵՒ ՊԵՏՐՈՍԻ

*Ո՛վ աշակերտ աստուածային, որդի հոգեւոր, սիրտ, խորհուրդ և կատարիչ կամաց նորա, և համբերող ի նեղութիւնս վասն[2] նորա, որ[3] գեր ի վերայ էր ամենայն գովեստից, վարդապետին ճշմարտի և հոգեւոր[4] հօրն Պաւղոսի, սիրտ[5] և որդի Տիմոթէոս. յԱստուած՝ Հայր ամենակալ և յՈրդի նորա Յիսուս[6] Քրիստոս և ի Հոգի նորա[7] սուրբ, ողջոյն ընդ քեզ. որ[8] զգեցեալ ես[9] զԱստուած և խաչակցեալ[10] ընդ Քրիստոսի և անօթ ընտրութեան հոգեւորական[11]։ Որ արեգակն իմաստութեան էր և հայր լեզուաց և լու-*

1. Ա և Բ. օր. Թուղթ սրբոյն Դիոնեսիոսի Արիսպագացւոյ՝ յաղագս մահուանն Պաւղոսի եւ Պետրոսի սրբոց առաքելոցն՝ առ Տիմոթէոս: Գ. օր. Թուղթ Դիոնեսիոսի առ Տիմոթէոս, վասն մահու սուրբ առաքելոցն Պետրոսի եւ Պաւղոսի: Զ. օր. Թուղթ սրբոյն Դիոնեսիոսի՝ յաղագս մահուանն Պետրոսի՝ եւ Պաւղոսի առ Տիմոթէոս աշակերտ Պաւղոսի:
2. Ա, Բ, Գ և Դ. օր. չունին վասն: Ե և Զ. օր. այնորիկ:
3. Գ. օր. որ յամենայն վիշտս ամենայն գովեստից արժանաւոր:
4. Ա, Բ և Գ. օր. չունին հոգեւոր:
5. Ամենայն օր. սիրելի:
6. Գ. օր. միածին:
7. Ա, Բ, Գ և Դ. օր. չունին նորա:
8. Ա, Բ, Գ և Դ. օր. յաւելուն Պաւղոս որ:
9. Ամենայն օր. էր:
10. Ա, Բ, Գ, Ե և Զ. օր. խաչեալ: Դ. օր. խաչընկալն էր:
11. Ա, Բ և Դ. օր. Հոգւոյն սրբոյ:

տուրիչ եկեղեցւոյ[1] և խափանիչ[2] կռապաշտու-
թեան, որ տապալէր զզրուծս մեղացն[3], որ վէմ
ադամանդեայ էր ի[4] խորտակել զպատկերս կռոցն,
որ խափանիչ զոհից էր և ցրուիչ դիւաց և մերժիչ
նաւակատեաց նոցա, որ հրեշտակ երկրաւոր[5] էր և
փայլակ երկնաւոր[6], որ հզօր զօրութեամբ[7], յաղ-
թող ի մարտի, որ նմանող Քրիստոսի[8] Աստուծոյ
և պատկեր քրիստոնէութեան, որ սիրող[9] հեթանո-
սաց էր և թլփատիչ[10] Հրէից, որ քակտիչ ժողովրդա-
նոցաց[11] էր և բարձրացուցիչ եկեղեցւոյ, որ[12] հո-
գայր զհոգեւորն և հաստատէր զարդարութիւն, որ
պաշտօնեայ Քրիստոսի էր և քարոզ[13] աւետարանին,
որ ունայնացուցիչ կռոց էր և զարդարիչ[14] եկեղեցւոյ,
որ բերան աստուածային էր և լեզու Հոգւոյն սրբոյ,
որ գտիչ կորուսելոց էր և ձեռնտու ընկղմելոց, որ[15]
հայր որբոց էր և վերակացու այրեաց, որ կանգնիչ
գլորելոց էր և հաստիչ[16] թալկացելոց, որ բժիշկ
հիւանդաց էր և պատիչ վիրաւորելոց, որ քննիչ աշ-

1. Ա, Բ և Գ. օր. յաւելուն սրբոյ: Ձ. օր. եկեղեցեաց սըր-բոց:
2. Ամենայն օր. խաւարիչ (Ե. օր. խաւարեցուցիչ) կռապաշտու-թեանց, որ տապար ձեռնուածո-ղաց (Գ, Ե և Ձ. օր. ձեռ-ձանող) էր փշրել զզրուծս:
3. Գ. օր. մեհենեաց. Ե. օր. մե-ղաւորաց:
4. Ա, Բ, Գ և Դ. օր. առ ի: Ձ. օր. եւ խորտակէր զզրու-ծս մեղաց եւ զպատկեր կռոց:
5. Գ. օր. երկրային:
6. Գ. օր. երկնային:
7. Ամենայն օր. ի զօրութեան էր եւ:
8. Ա, Բ, Գ, Ե և Ձ. օր. Քրիստոսի էր եւ: Գ. օր. նմանեալ Քրիստոսի էր եւ:
9. Ամենայն օր. սիրելի:
10. Ամենայն օր. թլփատի:
11. Ա, Բ, Գ, Ե և Ձ. օր. ժողովրդանոցի:
12. Պակասեն յօր. Ա, Բ և Գ. որ հոգայր . . . զարդարու-թիւն: Ե և Ձ. օր. խոկայր զհոգեւորն եւ վաճառ արդա-րութեան էր:
13. Ամենայն օր. քարոզիչ:
14. Գ. օր. նորոգիչ:
15. Բ. օր. չունի որ հայր . . . այրեաց: Ձ. օր. չունի որ հայր որբոց էր:
16. Գ և Ե. օր. հաստատիչ:

խարհաց[1] էր և խաղաղացուցիչ[2] քաղաքաց, որ նաւավար իմաստուն էր և նաւ[3] հոմանաւոր, որ զհանդերձեալսն[4] հոգայր և զներկայքս[5] պատրաստէր, նա եթող զմեզ յերկիրս[6] չարեաց և գնաց[7] առ Քրիստոս:

Եղբայր[8] իմ Տիմոթէոս, ո՞ւր իցէ հայրն մեր հոգեւոր, ո՞ւր իցէ վարդապետն մեր[9]. ով աշակերտ վարդապետին, այժմ ուստի՞ բերիցես մեզ ողջոյն ի նմանէ, ի ծովէ՞ թէ ի ցամաքէ, ի Գաղատիա՞յ թէ ի Սպանիացւոց[10], յԱսիա՞յ եթէ ի Կորնթոսէ[11]: Այժմ դադարեաց[12] երագագոյն ընթացք քո[13], ո՞յր[14] ոչ գրէ աշխատող և երանելի ձեռօքն առ քեզ, եթէ որդեակ իմ Տիմոթէոս[15]: Ահա եկն[16] եհաս մեզ օր

1. Ա, Բ, Գ, Դ և Զ. որ. աշխարհի:
2. Ա և Բ. որ. քաղաքականից: Գ. որ. քաղաքականից հրեշտակաց:
3. Գ. որ. նաւահանգիստ խաղաղութեան: Ե որ. յաւելու հոգեւոր եւ
4. Ա, Բ և Գ. որ. զհանդերձեալսն: Դ, Ե և Զ. որ. խոկայր:
5. Ա և Գ. որ. զներկեայս: Բ և Զ. որ. զներկայս: Դ. որ. հաստատէր:
6. Գ. որ. յերկիր: Դ. որ. աշխարհիս:
7. Ամենայն որ. զինուորեցաւ:
8. Գ. որ. չունի Եղբայր իմ Տիմոթէոս:
9. Ա, Բ, Դ, Ե և Զ. որ քո: Ա, Բ և Գ. որ. չունին ով աշակերտ վարդապետին: Դ, Ե և Զ. որ. սիրելի վարդապետին:
10. Ա. որ. ի Սպանիայ Բ. որ. ի Սպանիայէ: Գ և Դ. որ. ի Սպանիոյ
11. Պակասի ի բն. Այժմ եղաք որբք զրկեալք, ով եղբայր իմ Տիմոթէոս:
12. Ա և Բ. որ դադարեցին:
13. Գ. որ. Պօղոսի Ե. որ. գնացք:
14. Գ. որ. այժմ
15. Պակասի ի բն. այժմ ոչ առաքէ (Զ. որ. գրէ առ քեզ) զքեզ զի եկեսցես առ մի ի քաղաքաց, Տիմոթէոս եղբայր, ուր լուիցես թէ իցէ հայրն քո Պաւղոս: Այսօր կատարեալ է բան մարգարէին յասել Տեառն (Ա, Բ, Գ, Ե և Զ. որ. բան Տեառն որ ասէ). ցանկալով ցանկացայք տեսանել մի յաւուրց վարդապետին մերոյ (Ա, Բ, Գ, Ե և Զ. որ. ձերոյ), եւ ոչ տեսանէք. եղբայր իմ Տիմոթէոս:
16. Ա, Բ և Գ. որ. չունին եկն:

տրտմութեան և[1] տարակուսի, որ խաւարի և միգի[2]: Ո՞վ ոք տայր[3] զմարգարէին, ո՛ տայր գլխոյ իմոյ ջուր և աչաց իմոց աղբիւրս արտասուաց, զի նստէաք և լայաք ի տուէ և ի գիշերի զլուսաւորիչն եկեղեցւոյ: Այժմ հաւաքեա՛ և ամփոփեա՛[4] զկտակարանս քո, զի այժմ ո՞վ մեկնէ մեզ զծածուկ[5] բանս մարգարէիցն: Այժմ տա՛ ընդ[6] մարգարէին Ամովսայ, հովիւ եմ ես ագէտ: Այլ ոչ է քեզ պիտոյ[7] ապաստաւորել նմա ի կապանս իւր, այլ ոչ ընթեռնուս զերանուէտ թուղթս նորա, այլ[8] ոչ առաքէ առ քեզ եթէ ի բանտի եմ և ի կապանս[9], այլ ոչ փառնգէ զքեզ նեղութիւն նորա, այլ ոչ գրէ առ քեզ Պաւղոս կապեալ Յիսուսի Քրիստոսի[10], այլ ոչ գրէ ի քաղաքս վասն քո եթէ ընկալարուք զդա իբրև զիս: Ով եղբայր իմ Տիմոթէոս, ած ընդ քեզ զԵրեմիաս[11], ցաւակցութեամբ զբանս հեծեա ասելով. որովայն իմ ցաւէ և[12] փոր իմ ճմլի: Ո՞վ ոք ոչ զգենուցու տրտմութիւն, և զո՞վ ոք ոչ

1. Գ. օր. յաւելու որ:
2. Ա, Բ, Գ, Ե և Զ. օր. յաւելուն եւ մառախղի.
3. Ամենայն օր. ոչ ունէ բառ: (Գ և Զ. օր. ընդ):
4. Ամենայն օր. յաւելուն զամենայն:
5. Զ. օր. զամենայն:
6. Ա, Բ և Գ. օր. բառ:
7. Գ. օր. այլ ոչ պիտոշանա ապաստաւորութեան քում:
8. Բն. Գ և Ե. օր. յաւելուն այլ ոչ առաքէ... նորա:
9. Գ. օր. յաւելու այլ ոչ առաքէ առ քեզ թէ ի վիշտս փարանեալ կամ:
10. Ա. օր. յաւելու այլ ոչ է պէտս ապաստաւորութեան: Բ. օր. այլ ոչ խնդրէ զքեզ ի պէտս ապաստաւորութեան: Գ. և Դ. օր. այլ ոչ ունի պէտս ապաստաւորութեան քո. Ե և Զ. օր. այլ ոչ ունի պէտս վասն քո ի ապաստաւորութեան:
11. Ա, Բ, Գ և Ե. օր. զԵրեմիա ի ցաւակցութեան (Ե. օր. զցանկագոյն: Զ. օր. զցաւակցագոյնն) որ ճեծեծէ ասելով: Գ. օր. զԵրեմիայի զցաւակցագոյն բանսն որ ճեծեծէ ողբալով:
12. Ա և Բ. օր. եւ զգայարանք իմ ցաւէ: Գ. օր. եւ զգայարանք իմ զեղուն եւ սիրտ իմ ճմլի: Գ. օր. եւ երիկամունք իմ ճմլին: Ե և Զ. օր. զգայարանք իմ ճմլին:

պաշարեն[1] երկուՆք մաՀու: ՔաՀանայք քրձազգածք[2] եղերուք, ողբացէք[3] և կոծեցարուք սարկաւագուՆք և պաշտօնեայք սեղանոյ. ձայՆ գումեայ ի Հաւմայ[4], լալումն և աշխարումն յոյժ: Երկու Հարուածք[5] ի միում աւուր զաւանագոյն, երկու աղէտք[6] վնասա-կարք անդրժչկելիք ի միում ժամու. երկուս լուրս[7] բօթաբերս ի միում վայրկենի: Այժմ[8] կրկնակի կատարի բանն Յակոբայ՝ եթէ Յովսէփ չիք և Շմա-ւոն[9] չէ ի միջի: Բայց այժմ լուսաւորիչքն եկեղե-ցւոյ և պարծանքն Հաւատացելոց[10] Պաւղոս և Պետրոս Հիմն եկեղեցւոյ և անշարժ աշտարակքն բարձան ի միջոյ: Այսօր կատարի ասացեալն ի մարգարէէն, քարինք սուրբք[11] թաւալին յերկրի մերում: Յայսմ աւուր ըստ մարգարէութեանն Դաւթի, ետուն զդիա-կունս ծառայից Տեառն՝ գէշ թռչնոց երկնից և զմար-մինս սրբոց քոց՝[12] գազանաց երկրի:

Ո՞ւր է ընթացքն Պաւղոսի. այժմ դադարեալ է ի[13] ձանապարՀորդութենէ վաստակոց և Հանգեալ է սուրբ ոտք նորա: Ա՛յլ ոչ արգելեալ[14] լինի կապանօք

1. Ա, Բ Գ, Դ և Ե. օր. պատին: Գ. օր. երկուեան ձեռնպականի:
2. Ա և Բ. օր. քրձազգեստ լերուք: Ե և Զ. օր. քրձա-զգեացք:
3. Գ. օր. գլուխ բացէք:
4. Բ, Գ, Ե և Զ. օր. ի Հռովմայ Յաւելուն (նաև Գ և Զ. օր.) եւ ողբումն:
5. Գ. օր. դիպեցան ի միում աւուր:
6. Գ. օր. աղէկիզմունք եղեն ի միում·
7. Ա. Բ և Գ. օր. լուրս· Գ. օր. լուրս ձեռնեցաւ ի մի-ում:
8. Գ. օր. Այսօր:
9. Գ. օր. Բենիամին:
10. Ե և Զ. օր. Հաւատոյ:
11. Ա, Բ և Գ. օր. շուՆին սուրբք: Գ. օր. բաւալեցան: Ե. օր. բաղին:
12. Ա, Բ, Ե և Զ. օր. Աստուծոյ:
13. Ա, Բ և Գ. օր. ի վաստա-կոյ ձգանց ձանապարՀորդու-թեանց եւ Հանգուցեալ են: Գ. օր. ի վաստակոց ձանապար-Հորդութեանցն:
14. Գ. օր. արգելուցուն:

ի բանտի և ոչ հետևանայ[1] յաշխարհս բարբարոսաց, այլ ոչ մտանէ ի քաղաքս[2] և ի կղզիս, և[3] ի քանի քաղաքս վկայս, յորչափ երկիրս[4] կամ յորչափ ճանապարհս վաստակեաց տկարութեամբ մարմնոյն։ Ո՞ւր իցեն սուրբ ձեռքն որ[5] զայնչափ կապանս ընկալան ի հրէից։ Ո՞վ[6] կապանան որ կապեցար զերկուս ամս յԵրուսաղէմ և ի Հռոմ արձակեցար։ Ո՞ւր իցէ բերանն ճարտար և լեզուն արագ. ո՞ւր իցէ իմաստունն[7] իմաստնոց, ո՞ւր իցէ խորին փիլիսոփայն և անձն զգեցող[8] զԱստուած։ Եղբայր իմ Տիմոթէոս, արասցես տօնս տաւողացն[9] տօնից, արասցես պատարագ այնոցիկ որ մատուցին զինքեանս պատարագ Աստուծոյ. եղիցիս յիշել զյիշատակողս որոցն։ Ո՞վ ոք է որ ոչ լայ, ո՞վ ոք է որ ոչ ողբայ զայնոսիկ[10] որ արժանի են[11] պատուոյ, զի որպէս չարագործս ի մահ մատնեցան։ Ով եղբայր իմ Տիմոթէոս, թէ հանդիպեալ էիր ի զարմանալի նահատակութիւնս նոցա, թերևս պակասեալ էիր ի տրտմութենէդ. չէ քեզ[12] արտմութիւն, զի ոչ տեսեր զնոսա յորժամ ելանէին յասպարէզ կատարմանն։ Ո՞վ ոք էր որ ոչ լայր[13] դառնապէս յորժամ կապե-

1. Ա, Բ, Գ, Դ և Զ. որ. հետևային։
2. Ա, Բ, Գ և Դ. որ. յաւելուն ի գեօղս։
3. Բն. յաւելու եւ ի քանի քաղաքս վկայս։
4. Ա, Բ և Գ. որ. կամ յորչափ քաղաքս։
5. Պակասի ի Բն. որ զայնչափ զբուզրս աստուածայինս գրեաց։
6. Պակասի ի Բն. ո՞ւր իցէ մարմինն սուրբ, որչափ (Զ. որ. որ մինչ) ընդունէր զերաշխեայն։ Յաւելու Բն. Ով կապանան . . . արձակեցար։
7. Ա, Բ և Գ. որ. իմաստութիւն իմաստնոյն։
8. Գ և Դ. որ. որ զգեցեալ էր զԱստուած։ Ա և Բ. որ. զգեցեալ։
9. Ա, Բ, Գ, Դ և Զ. որ. տօնողացն. Ե. որ. տօն տօնողացն տուող տօնից։
10. Ա, Բ և Գ. որ. զընտրեալսն, նոքա որ արժանի են փառաց։
11. Դ, Ե և Զ. որ. էին։
12. Ամենայն որ. մեծ արտմութիւնդ քո (Ա, Բ և Գ. որ. յաւելուն զի ոչ էիր անդ)։
13. Գ. որ. արտասուէր։

ցին[1] գնաց զերկուսեանն[2] որպէս մաշապարս, և բազմութիւն ժողովրդոց[3] այլ քան զայլս ձեպէին[4] տեսանել, յորժամ նախատէին զերանելի առաքեալսն հրեայք և հեթանոսք։ Ո՞վ ոք ոչ լայր ի ժամուն յայնմիկ, յորժամ թքանէին բիւրք բերանալի պիղծ բերանոք[5] յերեսս նորա և հնարէին զանազանս չարաչարս[6] յամենայն կողմանց, և նորա որպէս անմեղ գառին անմռունչ[7] առաջի նոցա։ Ո՞վ ոք տեսեալ զնա յորժամ եառն ողջոյն մխեանց արտասուօք և հրաժարեցին[8] ի մխեանց եղբարքն համաշունչ, մինն ի խաչ և միւսն ի գլխատումն։ Ո՞ր սիրտ էր որ ոչ ճմլէր, յորժամ առէր Պաւղոս[9]. Երթ խաղաղութեամբ բարձրացուցիչ եկեղեցւոյ։ Զարմացաւ երկինք[10] ի վերուստ, զարմացաւ և երկիր ընդունել զարիւն արդարոյն։ Իսկ[11] արդեօք ո՞չ զարմանային հրեշտակք ընդ նահատակութիւն պատուական ծերոյն։ Ո՞վ ոք ապառաժ սրտիւ, տեսեալ[12] զՊետրոս կախեալ զխաչէն գլխիվայր[13] և ոչ զեղոյր արտասուօք[14]։ Եւ եղբայր ոչ էր ընդ Պետրոսի[15], քանզի ընդ Պաւ-

1. Զ. օր. կատարեցին։
2. Բն. և Գ. օր. յաւելուն զերկուսեանն։
3. Ա, Բ, Գ և Զ. օր. ժողովոյն։ Ե. օր. ժողովոցն։
4. Ա, Բ, Գ և Դ. օր. եկանէին տեսանել. ով ոք ոչ լայր յորժամ նախատէին զպատուական ծերոյն (Դ. օր. իմաստունն)։ Ե. օր. նահատակէին զպատուական ծերոյն անօրէն հրէայքն։ Զ. օր. զպատուական ծերոյն։
5. Գ. օր. յաւելու ի սուրբք։
6. Ամենայն օր. եւ չարչարանս։
7. Բն. Գ և Զ. օր. յաւելուն անմռունչ։
8. Գ. օր. հրաժարեալ գնացին։
9. Ամենայն օր. յաւելուն զՊետրոս։
10. Ամենայն օր. երկինք ի վերայ այսոցիկ եւ հիացաւ երկիր։
11. Ա, Բ, Գ և Ե. օր. չունին իսկ արդեօք... ծերոյն։
12. Ա, Բ և Գ. օր. եւես։
13. Ա և Բ. օր. չունին գլխիվայր։
14. Գ. օր. արտասուօք ընդ այն նորա։
15. Պակասի ի Բն. և յօր. Զ. յորժամ խաչեցաւն։ Ե. օր. յորժամ փոխեցաւ։

զաի գնայի[1], զի ոչ ի մի տեղւոջ կատարեցան։ Վա՛յ ինձ, քանզի դառնագոյն էր ինձ ժամն այն, յորժամ հրամայէր զաշխհն Պաւղոսի խոնարհեցուցանել զպարանոցն առաջի սրոյն։ Եւ տեսեալ զսուրն[2] շողացեալ[3], բղխեաց[4] արտասուք նորա, և հայեցեալ յերկինս տեառնագրեաց զսուրբ զերեսն իւր, և կամաւորութեամբ և առանց բռնադատելոյ խոնարհեցոյց զսուրբ[5] զգլուխն։

Աւա՜ղ ժամուն յորում ասուր[6] թաւալէր մարմին նորա յարեանն իւրում։ Ո՜վ հայր իմ հոգևոր, ոչ էիր արժանի այսմ մահուան[7]։ Վա՜յ ինձ զիա՞րդ թողեր զիս[8] միայն, ո՞ւր երթայց կամ ո՞ւր խնդրեցից զքեզ, պարծանքդ քրիստոնէից և լուսաւորիչդ հեթանոսաց[9]։ Ո՞վ լսից զբարբառ[10] քո հոգևոր, ով յօրինիչ և կարգաւորիչ աստուածային[11] գնդին. առ ո՞վ երթայց յաշակերտան քո, ո՛վ վարդապետ արդար և ճշմարիտ. զի՞նչ պատմեցից նոցա զքէն. ի բանտի՞ թէ ի կապանս. զո՞ ի նոցանէ առաքեցից առ քեզ, ո՞ պիտոյ է քեզ, կամ զո՞ խնդրեսցես[12] ի նոցանէ. այժմ և ոչ զմի ոք[13]։ Դաւիթ ողբայր զԱբի-

1. Գ. օր. չոգայ։
2. Գ. օր. Պաւղոսի։
3. Գ. օր. յաւելու երկեաւ եւ։
4. Ա և Բ. օր. բխեին արտասուք։ Գ. օր. բխեցին արտասուքն։
5. Գ. օր. զպարանոցն իւր Յաւելու Ա, Բ, Գ, Դ և Զ. օր. եւ անդէն ընկալաւ (Զ. օր. առ) զկատարումն իւր (Ե. օր. բարի խոստովանութեամբ)։
6. Ա, Բ, Գ և Դ. օր. չաւնին աւուր։ Ե. օր. յորժամ։ Զ. օր. չաւնի աւաղ . . . իւրում։
7. Ա, Բ և Գ. օր. այդպիսի մահու։
8. Գ. օր. զմեզ։
9. Գ. օր. ընդհանուր ազգաց։
10. Գ. օր. զբարբառ բերանոյ քո հայր հոգևոր։
11. Ա և Բ. օր. աստուածայնոց տնկոյ։ Գ. օր. աստուածայնոց դասուց։
12. Ա, Բ, Գ, Դ և Զ. օր խնդրես։
13. Պակասի ի Բն. Ով կապանք որ կապեցար յԵրուսաղէմ զերկուս (Ե. օր. զերիս) ամս եւ ի Հռովմ արձակեցար։

սողոմ, թէ վա՜յ ինձ, վա՜յ ինձ որդեակ։ Բայց այժմ, վա՜յ ինձ վարդապետ իմ. զի չիք զեզ հարուածոց իմոց և ոչ մխիթարութիւն ողբոց իմոց և ոչ բժշկութիւն ցաւոց իմոց։ Ի կեանս ձեր էիք ի թէատրոնի, և ի մահուն ձեր ատեցեալք[1] և մարմինք ձեր անկեալք[2] գազանաց։ Քանի՜ քահանայք[3] ակն ունին թղթի ձերոյ[4] և կամ քանի՜ եկեղեցիք[5] մնան վարդապետութեան ձերոյ։ Այսօր յաղջունէ ձերմէ խապանացան[6] ճանապարհք հռովմայեցւոց։ Այսօր եզեն որբ աշակերտք քո[7]։ Ո՞վ խաղաղեցուցանէ[8] զբարկացեալն, ո՞վ մեկնէ մեզ այժմ զգիրսն, այժմ ոչ առիցեմք[9], եկայք երթիցուք[10] մեք առ Պաւղոս և մեկնէ մեզ զգիրս, այժմ ոչ պիտոյանամք մարգարէիցն, զի ոչ գոյ մեկնիչ գրոյ[11] նոցա։ Ո՞ւմ աւանդեցեր զաշակերտսն[12] քո, ո՞վ վարդապետ ճշմարիտ[13]։ Երանի է Հռովմայ զի արժանի եղեւ մեծաց պարգեւաց, և ճշմարիտ որ[14] են յերուսաղէմ և ի Հռովմ. զի նա եսպան զՔրիստոս և սա զառաքեալսն. նա երկրպագէ խաչելոյն և սա տօնէ առաքելոցն։

Եղբարք իմ, զարմանք մեծ անոր յաւուր[15] յայն-

1. Ա, Բ, Գ և Ե. որ. չունին ատեցեալքն: Դ. որ. եւք դատապարտեալքն:
2. Գ. որ. արկեալ են գազանաց անտառի: Դ. որ. անկեալ դնի գազանաց երկրի:
3. Գ. որ. քաղաք:
4. Ա, Բ, Գ, Ե և Զ. որ. թղթոց ձերոց:
5. Գ. որ. կղզիք: Դ. որ. աշակերտք:
6. Ա, Բ և Գ. որ. զրկեցան: Դ. որ. խաղաղացան:
7. Ա, Բ, Գ և Դ. որ. ձեր:
8. Ա, Բ, Գ, Դ և Զ. որ. խաղաղացուցանէ զբարկացեալսն:
9. Գ. որ. կամ առ ո՞վ առնեմք եկայք:
10. Ա և Բ. որ. երթամք առ:
11. Ա, Բ, Դ, Ե և Զ. որ. գրոց: Գ. որ. գրեալոց:
12. Դ. որ. զաշակերտեալսն:
13. Վ. որ. յաւելու եւ խնամատուն:
14. Ա, Բ, Գ և Զ. որ. որքան Երուսաղէմ (Գ. որ նոյնպէս եւ Հռովմ) Դ. որ. չունի եւ ճշմարիտ . . . զառաքեալսն:
15. Ամենայն որ. յաւուր կատարման նոցա՝ Գ, Ե և Զ. որ. սրբոցն:

մեկ ի կատարման սրբոյն. յորժամ մեկնեցան ի մի-
մեանց՝ տեսի զնոսա, և իբրև դարձայ[1] յետ կա-
տարմանն՝ տեսի զնոսա զի ընդ մի դուռն մտեալ
և կալեալ զձեռանէ միմեանց և զգեցեալ զգեստ
թագաւորական և եդեալ թագս[2] ի գլուխս իւրեանց:
Եւ ոչ միայն ես արժանի եղէ տեսլեանն[3] այնմիկ,
այլ և աղջիկ մի որ էր յազգէն Ներոնի կայսեր, զոր
նոյն ինքն Պաւղոս մկրտեաց: Յորժամ եկանէր ի
վկայութիւնն առնել զքօղն նորա, և ասէ. Ի դառ-
նալն իմում[4] այսրէն բերից, և յորժամ խոնար-
հեցոյց զգլուխն առաջի սրոյն, պատեաց այնու
զերեսն իւր: Եւ իբրև դարձան դահիճքն ասէ ցնո-
սա աղջիկն. Ո՞ւր է[5] Պաւղոս և Պետրոս. և նորա
ասեն. Ահա սպանաք զնոսա և անկեալ կան ի տեղ-
ւոջն որ[6] կոչի Արբերմինոն, և քօղն քո կայ զերեսօքն
Պաւղոսի՝ շաղախեալ արեամբն: Եւ նա ասէ ցնոսա.
Ահա Պաւղոս և Պետրոս եկին այսր[7] և զգեցեալ էին
զգեստ թագաւորութեան, և եդեալ թագս[8] ի գլուխս
իւրեանց, և ահա քօղն իմ զոր ետու ցՊաւղոս աւա-
սիկ, և[9] եցոյց նոցա: Եւ նորա սքանչացեալ օրհնե-
ցին զԱստուած, և բազումք ի նոցանէ հաւատացին
յԱստուած[10]: Բայց այժմ, եղբայր իմ Տիմոթէոս, զոր

1. Ա Բ Գ Ե և Զ. օր. դար-ձան յետ սպանմանն:
2. Ա Բ Գ Ե և Զ. օր. պսակ: Գ. օր. պսակս պար-ծանաց:
3. Ամենայն օր. տեսութեանն:
4. Ա Բ, Գ և Դ. օր. յա-ւելուն առ քեզ:
5. Ամենայն օր. ո՞ւր իցեն:
6. Ա և Բ. օր. որ անուանեալ կոչի Արմինոն: Գ, Ե և Զ. օր. Արմինոն.
7. Գ. օր. այսրէն
8. Գ. օր. թագ պատուական:
9. Գ. օր. յաւելու եւ ասէ իմ ետես:
10. Գ. օր. յաւելու. Եւ եկն Պօ-ղոս յիններորդ ժամուն՝ մին; բազումք շուրջ կային զՆե-րոնաւ փիլիսոփայք եւ սիրե-լիք. եւ ասէ Պօղոս ցՆերոն. Անաւասիկ կամ Պօղոս Աս-տուծոյ զօրականս, ոչ մեռայ այլ կեամ, բայց քեզ լիցի չար յար, վասն զի հեղեր զարիւն արդար:

սիրէիրն՝ փոխեցաւ ի Քրիստոս[1]: Սաւուղ[2] և Յով-նաթան ոչ մեկնեցան ի միմեանց, մինչև մեկնեաց զնոսա սուր: Եւ Պաւղոս և Պետրոս ոչ մեկնեցան ի միմեանց ոչ հոգւով և ոչ մարմնով, զի այսու[3] չէ յուսահատութիւն սաստէն մեկնել ի միմեանց[4], այլ այն է յուսահատութիւն ի հանդերձելումն[5] մեկնել ի միմեանց: Զի հոգիք արդարոցն[6] տեսանեն զմի-մեանս և ունին յիշողութիւն առ ամենայն[7] զգա-յական իշխանութիւնս: Այլ այժմ Պաւղոս և Պետրոս յերանաւէտ[8] օթևանս են և փայլեն[9] յանմահա-կան ի կեանս, ընդ այնոսիկ ուր ոչ ամենեցուն կա-րողութիւն է մերձենալ:

Պաւղոս անարգեալն Աստուծոյ[10] ըստ օրինացն և պատմողն[11] Աստուծոյ տանց օրինացն[12]: Պաւղոս անարգողն[13] հեթանոսաց, բայց արդ կապեալ և ա-նարգեալ[14] և քարկոծեալ վասն հեթանոսաց: Ով խորք զանձից[15] և միտք և իմաստութիւն:

1. Դ. օր. յաւելու յոյսն ամենայնի:
2. Ա, Բ և Գ. օր. Դաւիթ:
3. Ա, Բ և Գ. օր. այս ոչ է: Դ, Ե և Զ. օր. այս ոչ է յուսահատութեամբ մեկնու-թիւն:
4. Ամենայն օր. ի մարդկանէ:
5. Ամենայն օր. ի հանդերձեալ աշխարհին:
6. Դ. օր. յաւելու ի ձեռին Աստուծոյ են եւ:
7. Ա, Բ, Գ, Դ և Ե. օր. Եւ զամենայն զգայութիւն իշխա-նական շարժմանց, առանց մարմնաւորական խօսից (Դ. օր. ախտից): Առ աւարտի Զ. օր:
8. Ե. օր. յաւելու կեանս են եւ:
9. Դ. օր. վարժեալ են:
10. Ա և Բ. օր. անարգողն Քրիստոսի: Ե. օր. եկեղեց-ւոյ Աստուծոյ:
11. Ե. օր. պատուողն եկեղեց-ւոյ Աստուծոյ:
12. Ամենայն օր. յաւելուն Պաւ-ղոս որ մարտնչէր ընդ Քրիս-տոսի թլփատութեամբքն եւ մարտնչէր ընդ հրեութեանն (Դ. օր. հրեայս) եւ ընդ կռապաշտու-թեանն (Դ. օր. կռապարիշտս) սիրով եւ ողորմութեամբ զոր ունէր առ եկեղեցիս:
13. Ա, Բ, Գ և Դ. օր. յաւե-լուն երբեմն եւ կապող:
14. Ամենայն օր. չունին անար-գեալ:
15. Դ. օր. զանձուց եւ իմաս-տութեանց Աստուծոյ: Ա, Բ, Գ և Ե. օր. իմաստութիւն Աստուծոյ:

ի միտ առ ով Տիմոթէոս, տացէ քեզ Տէր իմաստութիւն յամենայնի։ Ո՞ւր իցէ Պաւղոս, ո՞ւր իցէ Պետրոս, ո՞ւր իցեն ճշմարիտ բարեխօսքն առ Քրիստոս։ Արդարեւ Տիմոթէոս վա՜յ իցէ որդւոց այսպիսի[1] հարս կորուսելոցն, դարձեալ վա՜յ իցէ աշակերտաց որ հեռացան[2] յայսպիսի վարդապետաց. վա՜յ իցէ ոչխարաց որ զրկին[3] յայսպիսի հովուաց. ով[4] անչափելի իմաստութիւն իմաստնոց, ով խորք անքննելի։ Պաւղոս պարիսպ անյաղթելի, որ հաւաքէր[5] եւ թաղէր զգանձ ի գիրս սուրբս։

Եթէ զգացուցեալ էիր մեզ, թէ այդպէս փութանակի երթաս[6] առ Քրիստոս, թերեւս ի մօտ[7] եղեալ էաք, եւ մեկնեալ էաք զթուղթսն քո, բայց այժմ զի՞նչ արասցուք[8], զի զրկեցաք յընթերցմանէ սուրբ գրոց։ Եղբայր իմ Տիմոթէոս, մի այսուհետեւ ընթեռնուս զհինան, եւ մի կարծիցես[9] թէ ամենայն աւետարանեալքն ի Պաւղոսէ, կանոնք են աստուածայինք։ Այլ այժմ պահեա եւ[10] յաղօթս կաց արթնութեամբ, եւ աղաչեա զՏէր զի տացէ մեզ զվարդապետութիւնն Պաւղոսի։ Զի թէպէտեւ Եղիսէ[11] կրկին խնդրեաց զհոգին[12], այսինքն զմարգարէութիւնն, գիտեա զի ոչ արգելաւ ի նմանէ խնդրելին։ Ընդէ՞ր զայս ընկալաւ[13].

1. Ա. եւ Բ. օր. զայնպիսի հարս կորուսանել։ Գ. օր. զայսպիսի հարս կորուսեալ իցէ։ Դ. եւ Ե. օր. զայնպիսի հարս կորուսողացն։
2. Գ. օր. զրկին եւ հեռանան։ Դ. օր. զրկին։
3. Գ. օր. մոլորին։
4. Ի Բն. պակասի ծով։
5. Ամենայն օր. հաւաքեցեր զգանձս հոգեւորս եւ թաղեցեր ի գիրս սուրբս։
6. Գ. օր. հանապարհորդես։
7. Ամենայն օր. հոգ ի մտի։
8. Ա., Բ., Գ. եւ Դ. օր. առասցուք։
9. Ամենայն օր. կարծեր եթէ ոչ ամենայն աւանդեալքն (Դ. օ. աւետարանեալքն) ի Պաւղոսէ կանոնք էին աստուածայինք։
10. Գ. օր. եւ զգաստացիր արթնութեամբ։
11. Ամենայն օր. Եղիսէոս։
12. Դ. օր. յաւելու Եղիայի։
13. Բն. Դ. եւ Ե. օր. յաւելուն ընդէ՞ր զայս ընկալաւ։

այլ զի եղև հանգոյ վարդապետին, և ի սկզբանէ ոչ արտաքեցոյց զհոգի նորա, և[1] ամենայն տեսակք գո-ղային ի նմանէ և ամենայն մարդիկ ատէին զնա, և նա ոչ հեռացաւ ի նմանէ ի սկզբանէ: Բազում աշակերտք էին նորա, բայց մի ի նոցանէ ոչ համբերեաց[2] որպէս զՃգնէ: Զի այսպէս ատէին որդիքն խարայեղի. Սա է աշակերտ ապականչին[3] օրինաց, սա է աշակերտ սուտ մարգարէին: Այս աշակերտ[4] Աստուծոյ ոչ հեռացաւ[5] ի նմանէ, վասն որոյ արժանի եղև անչափ պարգևացն Աստուծոյ: Որում[6] արժանի եղիցուք մեք ամենքին, լինելով աշակերտ վարդապետին մերոյ, քարոզել զաւետարանն Տեառն և մեկնելով զվարդապետական թուղթս նորա, յորում[7] զպսակն ընկալցուք[8] ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, որում փառք յաւիտեանս. ամէն:

1. Ա, Բ, Գ և Դ. օր. եւ քանզի ամենայն տեսակ գողայր:
2. Ա, Բ, Գ և Դ. օր. յաւելուն ամենայնի:
3. Գ. օր. ճշմարտին:
4. Գ. օր. յաւելու յաղագս:
5. Ամենայն օր. բողացաւ (Գ. օր. չբողացաւ) ի նմանէ վասն անարգանաց վարդապետին:
6. Գ. օր. ընդ որս եղիցուք արժանաւոր աշակերտ:
7. Ա, Բ, Գ և Ե. օր. ընդ որում (Գ. օր. սրտակցն արժանաւորեսցուք):
8. Գ. օր. առցուք:

# ՆԱԽԱՐԿՈՒԹԻՒՆ

## ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ Ի ՀՌՈՄ

Հարիւրապետին՝ որ տանէր զՊօղոս ի Հռոմ Յուլիոս անուն էր, ի գնդէն որ կոչէր[1] Սեբաստեան. և էին ընդ նմա Ղուկաս և Արիստարքոս. և նաւն էր անդրամիտացի: Մտին ի նաւ ի Կեսարէ մինչև[2] ցՁմիռն լիկիացւոց, և անտի առին աղեքսանդրացի նաւ, մինչև ի Մելիտէս կղզի: Եւ դարձեալ այլ աղեքսանդրացի նաւ գտին, որ ունէր զդիոսկուրացւոց նշանն, յայն մտին և ելին ի Հռոմ:

1. Բ. օր. կոչի:
2. Ա և Գ. օր. մինչև ցԼիւստրոս: Բ. օր. չունի ցՁմիռն լիկիացւոց:

# Բ

## ՅԱՂԱԳՍ[1] ԱՆԴՐԷԻ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԵՒ ՆՈՐԻՆ ՍՔԱՆՉԵԼԵԱՑՆ

## ԶՈՐ ՏԷՐ ԱՐԱՐ[2] Ի ՁԵՌՆ ՆՈՐԱ ԵՒ ՄԱՏԹԷԻ

## Ի ՄԱՐԴԱԿԵՐԱՑ ԱՇԽԱՐՀՆ

*Յետ համբառնալոյ Տեառն յերկինս, և զաւրր զՀոգին առաքեալ, որպէս և ասաց Տէր, որ եկեալ բաժանեաց[3] ըստ ազգաց ազգաց առաքելոյն, և իւրաքանչիւր ըստ իւրում շնորհի[4] քարոզել զարքայութիւնն երկնից[5] յաշխարհս[6] և քաղաքս, և առնել նշանս[7] և զօրութիւնս, և զհաւատացեալսն մկրտել յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, և պահել զպատուիրանս[8] նորա, որք եկեալ[9] քարոզէին ընդ ամենայն աշխարհս։ Եհաս Մատթէի երթալ յաշխարհն մարդակերաց, և էին բնակիչք աշխարհին[10]*

1. Պակասէր խորագիրն ի բնագրին, ունելով զայս և եթ … դակերաց աշխարհին ի ձեռն Նորին եւ Մատթէի. զայս խորագիր առաք յԱ. օրինակէ։
2. Բ. օր. եցոյց։
3. Ա և Բ. օր. յաւելուն զե-գուշ։
4. Ա. օր. յաւելու վիճակել եւ Բ. օր. յաւելու վիճակի։
5. Ա և Բ. օր. Աստուծոյ։
6. Ա. օր. յաւելու եւ ի գաւառս։
7. Ա. օր. յաւելու եւ արուեստս։
8. Ա. օր. յաւելու զոր լուան ի Տեառնէ։
9. Բ. օր. եկեալ։
10. Բ. օր. երկրին շաղախակերք։

այնորիկ չագգակերք որպէս գազանս, և ոչ ինչ փոյթ առնէին զսերմանեաց[1] որպէս և այլ մարդիկ վարել և հնձել և ժողովել յշտեմարանս, և այնու կերակրել, այլ զմեռելոտի և զազրունս[2] ուտէին նոքա[3], և զմարդիկ ծերս աշխարհին և զմեռեալս իւրեանց և զայլս զորս կարէին յափշտակել գաղտ. և յայլ ազգս ընթանային[4] ըմբռնել, որս համարեալ ածէին որպէս արջառ ի սպանումն. զգէրսն զենուին և ուտէին, և զնիհարսն պարարէին. փարէին զաչս նոցա յարժամ ուտէին և զեղ յիմարութեան տալով[5], որ լուծանէր ի մարմնոյն[6] և ի բնութենէ մարդոյ. և զարմսն տային որպէս անասնոյ[7] և ապա զենուին[8]. զի ոչ գիտէին զԱստուած և այնու կերակրէին յանզգայս[9]:

Իսկ Մաթէ իբրև եմուտ ի քաղաքս նոցա և տեսին զնա և ծանեան եթէ օտար է, և[10] կալան զնա իշխանքն, հանին զաչս նորա և ետուն նմա զեղ յիմարութեան և արկին[11] ի զարմանոց, զի այնպէս առնէին զամենայն օտար: Եւ նորա ոչ լուծաւ սիրան ի զեղոյն որպէս զայլոցն, և ոչ եկեր ի զարմանոյն, այլ կայր յաղօթս առ Աստուած և ասէր. Ով Տէր երկնի և երկրի, ընդէ՞ր թողեր զիս[12] անկել անօրինացս զինչ և կամեսցեն[13] որպէս զանասուն. զի դու առաքեցեր զիս քարոզել զքո սուրբ անունդ, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած: Եւ

1. Ա և Բ. օր. զսերմանց:
2. Ա և Բ. օր. յաւելուն եւ զգազանս:
3. Պակասէր ի Բն. նոքա ... յարժամ ուտէին եւ. առաք Ա. օրինակէ:
4. Բ. օր. ուր եւ կարէին:
5. Ա. օր. տային ըմպել:
6. Ա. օր. զմիրտս: Բ. օր. զմիտսն:
7. Ա. օր. յաւելու զերեսուն օ պարարէին.
8. Ա. օր. յաւելու եւ այնպէս կերակրէին եւ ոչ:
9. Ա և Բ. օր. չուտէին յանզգայս:
10. Ա. օր. կալան զնա եւ ածին առ իշխանն. եւ նոքա հրամայեցին հանել զաչս նորա:
11. Ա. օր. յաւելու եւ արկին զնա ի առն բանտին եւ արկին նմա զարման:
12. Ա. օր. յաւելու ի ձեռս:
13. Ա. օր. յաւելու ընդ իս:

ահաւասիկ զաչս իմ խաւարեցուցին ի լուսոյ և պահեն զիս յօր սպանման[1], զի կերիցեն զմարմինս իմ որպէս զգազանս վայրենիս և արիւնարբուս, և դու անտե՞ս Տէր և ներե՞ս, և ո՞չ հատուցանես[2] ցուցանելով զահաւոր աստուածութեան[3] քո զօրութիւն: Եւ ո՞յսպէս քեզ հաճոյ թուեցի երկայնամտել ամպարշտացս[4]: Ո՛վ խորք կամաց քոց, և անհասութեան յարարածոց[5], որ առաւել քան զմիտս զերազանցես[6] զսքանչելիս քո. սքանչացաւ գիտութիւն քո, զօրացաւ, և ոչ բաւեմ բերել զհաճոյս քո յիս. բայց դու Տէր ողորմած[7], լուսով գիտութեան քո առաջնորդեցես ինձ յարդարութիւն, զի մի սասանեսցին միտք իմ ի ճշմարտութենէ կամաց քոց. և եթէ հաճոյ է քեզ ինձ այսպէս մեռանել որպէս զանասուն, և մարմնով իմով կերակրել մարդոց չարաց, եղիցին կամք քո: Զի դու Տէր գիտես զամենայն յամենայնի, առաւել քան զոր խնդրեմք և իմանամք[8]. և քեզ փառք յաւիտեանս. ամէն:

Եւ անդէն[9] լոյս մեծ ծագեաց ի տեղւոջն յորում էին արգելեալ զնոսա[10]. և ձայն ի լուսոյն որ ասէր. Մատթէ սիրելի իմ, համբարձ զաչս քո ի վեր և տես: Եւ[11] հայեցեալ ետես վաղվաղակի զլոյսն և լուսաւորեցաւ: Եւ ասէ դարձեալ. Քաջալերեա՛ և համբեր, զի ընդ քեզ եմ և ոչ թողից զքեզ, և ապրեցուցից զքեզ և ծանուցից սքանչելի զօրութեամբ զանուն իմ՝ գազանամիտ և վայրենաբարոյ ազգիդ

1. Ա. օր. յաւուր սպանութեան:
2. Ա և Բ. օր. չունի՞ս հատուցանես, դնես ցուցանես:
3. Ա. օր. մեծութեանդ:
4. Ա. օր. յաւելու եղիցին կամք քո:
5. Ա և Բ. օր. անհասութիւն յարարածոցս:
6. Ա. օր. զերազանցէ սքանչելեաց գիտութիւն քո յիս որ զօրացաւ յիս:
7. Ա և Բ. օր. ողորմութեան:
8. Ա և Բ. օր. յաւելուն բառ իմաստութեան որ առաւ (Ա. օր. իքեն) մեզ:
9. Ա և Բ. օր. յաւելուն վաղվաղակի:
10. Բ. օր. զնա:
11. Բ. օր. չունի Եւ հայեցեալ . . . համբեր:

այգորիկ. այլ կայ[1] մնա դու զաւուրս քառասուն և ութ[2], և առաքեցից առ քեզ զԱնդրէաս, որ հանէ[3] զքեզ ի բանդէդ, և որ ընդ քեզ արգելեալ կան. խաղաղութիւն ընդ քեզ: Եւ ասէ Մատթէ. Շնորհք քո մնասցեն առ իս և մխիթարեսցեն զիս հանապազ[4]. զի դու ես յոյս իմ Տէր, և քեզ հատուցից զօրհնութիւնս[5] հանապազ: Եւ անդադար սաղմոսէր զթութեամբ[6], և օրհնէր զԱստուած ի տուէ և ի գիշերի Մատթեայ[7], ուր արգելեալն էր: Եւ տեսանէր զի տանէին զմարդիկն ի զենումն[8] ի դարմանոց արգելարանէն: Եւ վասն իւր լսէր Մատթէ ի դահճացն[9], իբրև կատարի երեսուն օր զենցուք զայրս զայս և կերիցուք[10]. զի երեսուն օր պարարէին զարգելեալսն[11] և զենուին:

Եւ երևեցաւ Տէր Անդրէի առաքելոյ ի Թեսաղոնիկէ[12] և ասէ. Արի երթ[13] յաշխարհն մարդակերաց զի հանցես զՄատթէ ի բանդէն և որք ընդ նմա են. և զի այլ ես երեք աւուրք և զենցեն զնա և կերիցեն. և երթիցես աշակերտօքդ և ցուցից քեզ զինչ պարտ իցէ առնել: Եւ ասէ Անդրէաս. Զճանապարհն ոչ գիտեմ և զիա՞րդ ժամանեցից զաւուրս երիս. այլ առաքեա Տէր զհրեշտակ քո, որ առաջնորդեսցէ մեզ ըստ կամաց քոց, զի կարող ես յամենայնի[14] մեծազօրութեամբ քով Տէր Աստուած: Եւ յարուցեալ վաղ-

1. Ա. և Բ. օր. կաց·
2. Ա. օր. քսան եւ եւթն: Բ. օր. քսան եւ ութ:
3. Ա. և Բ. օր. հանցէ:
4. Ա. և Բ. օր. հանապազօր:
5. Բ. օր զօրհնութիւնս:
6. Ա. և Բ. օր. սաղմոսէ զութեամբ:
7. Ա. և Բ. օր. Մատթէ:
8. Ա. օր. զենուլն ի դարմանոցէ արգելանին:
9. Ա. և Բ. օր. յաւելուն զի տանէին (Ա. օր. վասն նորա էր) որպէս (Բ. օր. զի կատարեսցի):
10. Ա. օր. յաւելու քանզի այսպէս ասէին զամենեսեան, զերեսունն:
11. Ա. օր. չունի զարգելեալսն:
12. Բ. օր. ի Թեսաղոնիկէ:
13. Ա. օր. արի եւ գնա դու:
14. Բ. օր. Քրիստոս Աստուած մեր. չունի զյաջորդսն:

վաղակի գնաց աշակերտօքն, և էջ ի ծովեզրն և գտանէ[1] նաւ մի պատրաստական, և նաւապետն և արք երկու որք կազմէին զնաւն, որ էր ինքն Քրիստոս նաւապետն, և երկու հրեշտակքն որք երևեցան: Եւ տեսեալ Անդրէի աշակերտօքն հանդերձ, ուրախ եղև և ասէ. Յուսացեալք ի Տէր զի առաջնորդեսցէ մեզ. և ոչ ծանեան զնաւապետն Քրիստոս և զհրեշտակսն, այլ որպէս պատահումն ինչ նաւի և արանց ըստ յաջողելոյն Աստուծոյ, որպէս և ասաց Տէր: Եւ ապա ողջոյն Անդրէաս նաւապետին, և ընդունէր զխաղաղութիւն[2]: Եւ ասէ Անդրէաս. Ո՞ւր կամիք նաւել ով արք: Ասէ նաւապետն Յիսուս. Յաշխարհն մարդակերաց: Ասէ Անդրէաս. Եւ մեզ նոյն ճանապարհ առաջի կայ, եթէ կամիք ընդունել զմեզ[3], Տէր իմ: Ասէ նաւապետն Յիսուս. Եւ զի ոչ ապրեցուցանեն զմարդիկն զորս ըմբռնեն, դուք զի՞արդ իշխէք երթալ անդր: Ասէ Անդրէաս. Եղբայր մի ըմբռնեցաւ անդր և վասն այնորիկ երթամք թերևս կարիցեմք զերծուցանել զնա ի մահուանէ. արդ եթէ հնար է արարէք մեզ ողորմութիւն: Ասէ Յիսուս նաւապետն. Եթէ այդպէս է, եկայք ելէք ի նաւս, և տարցուք զձեզ յերկիրն մարդակերաց[4]: Ասէ Անդրէաս. Ով բարեգութ նաւապետ, տաս մեզ[5] զճըշմարիտն, վարձս ոչ ունիմք նաւիդ, այլ և ոչ կերակուր որով կերակրին անձինք մեր. զի այսպէս ունիմք հրաման[6] ի Տեառնէ, մի հոգալ զվաղիւն. զի որ կերակրէ զամենայն[7] բանիւ զօրութեան իւրոյ և յաջողէ ի սոյն՝ Աստուած է.[8] զի այսպէս պատուիրեաց մեզ Աստուած որ առաքեացն զմեզ. մի

1. Ա. և Բ. օր. տեսանէ:
2. Ա. օր. յաւելու ի նմանէ:
3. Ա. և Բ. օր. յաւելուն ի նաւդ:
4. Ա. և Բ. օր. շունին մարդակերաց:
5. Ա. և Բ. օր. ասեմ քեզ:
6. Ա. և Բ. օր. պատուէր:
7. Ա. և Բ. օր. զամենեսեան:
8. Ա. և Բ. օր. յաւելու որ կարող է յամենայնի:

բառնայք ոսկի և մի արծաթ, մի հաց և մի մախաղ և մի այլ ինչ. և ոչ[1] երկուս հանդերձս, զի նա կերակրէ զձեզ և յաջողէ[2] որպէս և կամի, և[3] ոչ տայ ի տատանութիւն: Արդ եթէ այսպէս արասցես և ընկալցիս զձեզ մարդասիրապէս, ընկալցիս[4] վարձս ի Տեառնէ մերմէ յաւուր. ապա թէ ոչ, գտանես[5] երթիցուք յայլ նաւ ուր և Տէր յաջողեսցէ: Ասէ Նաւապետն Յիսուս. Արասցուք ձեզ[6] մարդասիրութիւն որպէս արդարև յուսացելոց ի Տէր, որպէս ասացերդ:

Եւ եհան զհացս ի նաւէն, և եդ առաջի նոցա սեղան. և կերան և ուրախ եղեն և գոհացան զԱստուածոյ: Եւ ասէ Անդրէաս ցնաւապետն Յիսուս և ցերկուս[7] հրեշտակն որ պաշտօնէին. Յիսուս ինքն հատուսցէ ձեզ զվարձս բարիս վասն մարդասիրութեան և սիրոյ ձերոյ զոր ցուցէք մեզ:

Եւ անդէն նաւեցին ընդ համառօտ ծովն: Եւ իբրև գնացին աւուր միոյ ճանապարհ, յարեաւ մրրիկ մեծ ի ծովուն, և երկեան աշակերտք նորա[8] երկիւղ մեծ ի խռովել ծովուն. և Յիսուս նաւապետն քաջալերէր զնոսա, և ասէ ցԱնդրէաս. Եթէ արդարև աշակերտ ես Յիսուսի, քաջալերեա զաշակերտսդ քո յանուն նորա զօրութեանն, զի մի[9] զարհուրեսցին ի խռովութենէ ծովուս: Եւ սկսաւ խօսել Անդրէաս ընդ աշակերտսն և ասէ. Որդեակք, եթէ Տեառն եւտուք զանձինս ձեր, յուսացարուք ի նա, և ապրեցուսցէ զձեզ ի խռովութենէ[10] ծովուս և յամենայն խռովութենէ փորձութեանց, զի ծով հնազանդի նմա և ամենայն տարերք, զի արարիչ է ամենայնի և ոչ ոք

1. Ա և Բ. օր. յաւելուն ունել:
2. Ա և Բ. օր. չունին յաջողէ:
3. Ա և Բ. օր. յաւելուն տառապանօք եւ:
4. Ա և Բ. օր. առցես:
5. Ա և Բ. օր չունին գտնես:
6. Ա և Բ. օր. յաւելուն որդրմուրհին եւ:
7. Ա և Բ. օր. չունին ցերկուս:
8. Բ. օր. Անդրէի:
9. Ա և Բ. օր. յաւելուն երկիցեն եւ:
10. Ա և Բ. օր. յաւելուն ալեաց:

ընդդիմացի նմա[1]. քանզի էաք երբեմն և մեք ի ծովուն[2] հանդերձ Յիսուսիւ, և եղև մրրիկ մեծ ի ծովուն[3], և ալիքն ի նաւն գեղոյր և լի իսկ լինէր[4], և երկեաք երկիւղ մեծ[5]: Եւ Յիսուս ննջէր փարձելով զհաւատս մեր, և մատուցեալ բուռն հարաք[6] եթէ կորնչիմք աւասիկ. և յարուցեալ սաստեաց ծովուն և խաղաղացաւ[7], և ասէ. Ընդէ՞ր երկմտեցէք[8], չև ևս ունիք հաւատս: Եւ արդ մի երկնչիք զի Տէր մերձ է, և ոչ թողու[9] զհաւատացեալս իւր, և փրկէ յամենայն վշտաց, և եղիցի ողորմութիւն նորա ի վերայ մեր որպէս և յուսացաք ի նա: Եւ զայս ասացեալ, զադարէր ծովն ի խռովելոյ[10]. և տեսեալ ուրախ եղև, և փառաւորէր աշակերտօքն զԱստուած[11]:

Յայնժամ ասէ Յիսուս ցաշակերտն իւր Անդրէաս. Արդարև աշակերտս ես Յիսուսի, և մեծ է զօրութիւն նորա. զի այսպէս արար[12] զադարել ալեաց ծովուս, յիշելով զնորա զքանչելիսն. և արդ ասէ ասա ինձ մեզմով զամենայնն[13], թերևս[14] որդի Աստուծո՞յ էր, և ո՞րպէս մարմնացաւ և արար նշանս, խաչեցաւ ի Հրէիցն, թաղեցաւ և յարեաւ յաւուր երրորդի, համբարձաւ յերկինս և առաքեաց քարոզել զաստուածութիւն իւր ի ձեռն աշակերտաց իւրոց որպէս ասացերդ, և առնես[15] սքանչելիս յանուն նորա: Պա-

1. Ա և Բ. օր. յաւելուն յարժամ կամեցի յարարածոցս:
2. Ա. օր. ի նաւին:
3. Բ. օր. չունի եւ եղեւ . . . ի ծովուն:
4. Ա և Բ. օր. առնէր:
5. Ա. օր. չունի եւ երկեաք երկիւղ մեծ:
6. Ա. օր. յաւելու զնմանէ:
7. Ա և Բ. օր. յաւելուն ծովն:
8. Բ. օր. երկմտեք:
9. Ա. օր. չունի մի երկնչիք . . . թողու: Ա և Բ. օր. յաւելուն զյուսացեալս եւ:
10. Բ. օր. ի խռովութենէ:
11. Ա. օր. եւ ուրախ եղեն նոքա եւ փառաւոր առնէին զԱստուած աշակերտքն նորա:
12. Ա և Բ. օր. արագ եղեւ դադարումն:
13. Ա և Բ. օր. չունին մեզմով զամենայնն:
14. Ա և Բ. օր. թէ արդարեւ:
15. Ա և Բ. օր. որպէս յանմ եւ առնել:

տախտակի եւ Անդրէաս և ասէ. Բարի Նուագեա և ճշմարտապէս քննող[1] դու և իմաստուն, լուր ինձ և ուսուցանեմ քեզ զՅիսուս Քրիստոս զՈրդին Աստուծոյ[2], ծնեալ[3] անժամանակ և անմարմնապէս[4]. առաքեալ ի Հօրէ վասն մերոյ փրկութեան, և մարմնացաւ ի սրբոյ կուսէն Մարիամայ, և լուեալ[5] ամս երեսուն, և ապա մկրտեալ ի Յովհաննէ[6] ի Յորդանան գետ, և Հոգին սուրբ ի վերայ իջեալ[7], Հայր ի վերուստ վկայէ, դա է Որդի իմ սիրելի, և ցուցանէ զաստուածութիւնն սքանչելեօքն[8], զջուրն ի գինի փոխարկելով, զկոյրս լուսաւորելով, զբորոտս սրբելով, խլից լսել տայ և համրից խօսել[9], զանդամալոյծս առողջացուցանել, զգօսացեալս բժշկել[10], զկաղս գնացուցանել[11], զմեռեալս յարուցանել, զդեւս հալածել, և զամենայն ցաւս մարդկան բժշկել. ի վերայ[12] ծովու զխաւարին մերոյ Պետրոսի հրամայեաց գալ առ ինքն. և ոչ եմ կարող զսքանչելիս նորա պատմել զոր եցոյց զօրութեամբ իւրով. և զայլս բազումս զորս արար[13] ի ձեռն աշակերտաց իւրոց: Եւ եկեալ կամաւորութեամբ ի չարչարանս, և խաչեալ եւ թաղեալ և երեքօրեայ յարուցեալ, և համբարձեալ

1. Ա. և Բ. օր. չունին եւ ճշմարտապէս քննող:
2. Ա. օր. զՅիսուս Քրիստոս: Որդին Աստուծոյ: Բ. օր. Քրիստոս Յիսուս է Որդի Աստուծոյ:
3. Ա. և Բ. օր. յաւելուն ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս:
4. Բ. օր. անմարմնապէս:
5. Ա. և Բ. օր. լուռ եղեալ:
6. Ա. օր. չունի ի Յովհաննէ:
7. Ա. և Բ. օր. իջանէ:
8. Ա. օր. զաստուածութեան զսքանչելիս:
9. Ա. օր. չունի եւ համրից խօսել:
10. Ա. օր. առողջացուցանելով, բժշկելով այսպէս եւ զյաջորդ բայսն: Բ. օր. բժշկէր, յարուցանէր . . .
11. Ա. և Բ. օր. չունին զկաղս գնացուցանել:
12. Ա. և Բ. օր. նա եւ ի վերայ ծովուն գնայր եւ Պետրոսի հրամայէր գալ առ ինքն ի վերայ ծովու՝ զխաւարին մերոյ:
13. Ա. և Բ. օր. չունին զորս արար:

յերկինս։ Եւ եկեալ[1] դարձեալ դատել զազգս մարդկան, և հաւատարիմ հաւատացելոց որոց շնորհէ զարքայութիւնն իւր. և անհաւատից և անարգոց[2] զանվախճան յաւիտենականս ընձեռէ։ Եւ ես և ընկերք իմ երկոտասանք և եօթանասունք առաքք և վկայեմք և քարոզեմք եթէ Աստուած էր և Որդի Աստուծոյ որ մարմնացաւն և չարչարանօք խաչին զարարածս փրկեաց, և եւս մեծ սքանչելիս եցոյց ի կամաւոր մահուանն. արեգակն և լուսին խաւարեցան, և աստեղք ծածկեցին զլոյս իւրեանց, և երկիր շարժեցաւ, վարագոյր տաճարին ցելաւ և վէմք պատառեցան, գերեզմանք բացան, և բազումք ի մեռելոց որոց յարեան, և եղեն վկայք սքանչելի[3] յարութեան նորա եւ աստուածութեանն, և յետ յարութեան նորա երևեցաւ մեզ երկոտասանիցս և եօթանասնիցն, և այլ բազում եղբարց հաւատացելոց[4], ոչ մի անգամ, այլ բազում անգամ. և հրամայեաց մեզ քարոզել զբանն կենաց[5] և զմի աստուածութիւնն, զզօրութիւն և զփառս Հօր և Որդւոյ և ամենասուրբ Հոգւոյն, և աւետարանել յանուն նորա ապաշխարութիւն[6] մեղաց յամենայն ազգս[7]։

Ասէ Նաւապետն Ցխուս. Զայս ամենայն զօրութիւնս զոր պատմեցեր առաջի ամենեցո՞ւն անդէր եթէ ի ծածուկ։ Ասէ Անդրէաս. Սքանչելի այր իմ երեւիս[8] և յայժ քննող. զաւետարանեալդ[9] ընկալ, և մի քններ զխորս Աստուծոյ։ Ասէ Ցխուս. Կամիմ

1. Ա. օր. եկեալ դարձեալ հաւատացելոց . . .։ Բ. օր. եկեալ դատել զտիեզերս հաւատացելոց։
2. Ա. օր. անօրինաց։
3. Ա և Բ. օր. չունին սքանչելի։
4. Բ. օր. չունի հաւատացելոց։
5. Ա և Բ. օր. չունին զբանն կենաց եւ։
6. Բ. օր. յաւելու ի բազումին։
7. Ա և Բ. օր. յաւելուն մարդկան։
8. Ա և Բ. օր. բուիս։
9. Ա. օր. զաւետարանեալն։ Բ. օր. զաւետարանեալդ քեզ։

ստուգել զճշմարտութիւնն[1], դու մի ձանձրանար ի պատմել զզօրութիւն զյայտնեաց և զգաղտնեաց։ Ասէ Անդրէաս. Լո՛ւր որում բաղձաս բարեսէր[2] այր դու. զի բազում էին յայտնիք նշանացն և զօրութեանցն որ ամենեցուն ցուցաւ, և ոչ սակաւ ծածուկքն, որպէս յորժամ ի Թափօր լերինն այլակերպեցաւ, ցուցանելով զաստուածութեանն երևումն, Մովսիսի և Եղիայի հանդերձ, որք խօսէին վասն ելիցն[3] և չարչարանացն զոր կատարելոց էր վասն փրկութեան աշխարհի[4], և ոչ որք ի մէնջ էր ընդ նոսա[5], բայց Պետրոս եղբայր իմ և Յակոբոս և Յովհաննէս որդիք որոտման, որք այսմ տեսլեան հաղորդ եղեն, և վկայութեան ձայնին Հօր[6] որ ասէր. Դա է Որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ, դմա լուարուք. և նորա զարհուրեալք և թմբրեալք յերեսանէ լուսոյ[7] փառաց Որդւոյն Աստուծոյ, անկան ի վերայ երեսաց իւրեանց յերկիր և ոչ կարէին խօսել ինչ և ոչ տեսանել զՅիսուս. և անդէն զլոյս աստուածութեանն ծածկէր, և զնոսա յարուցանէր և զօրացուցանէր, և պատուիրէր մի ումեք ասել զտեսիլն[8] մինչև ի մեռելոց յառնելն. և այլ ես նշանս բազումս արարեալ զաղտնի, և պատուիրէր մի ումեք ասել, և նոքա յայտնէին որոց բժշկութիւնք լինէին. զի[9] ոչ էր ծածուկ որ ոչ յայտնէր, և ոչ գաղտնի որ ոչ գայր ի լոյս մարդկան. և քարոզեալ լինէր ընդ ամենայն աշխարհս: Ոչ այն միայն է որ յաւետարանին պատմի վասն գաղտնեաց և յայտնեաց նշանացն զոր արար Յիսուս, այլ է և ա՛յլ ինչ զոր ա-

1. Ա. օր. կամիմ խօսել զճշմարեան։
2. Աստէն սկսանի Գ. օր.։
3. Ա. օր. վասն փրկչութեան։ Բ. և Գ. օր. չունին ելիցն եւ։
4. Ա. օր. ազգին։ Գ. օր. ազգի մարդկան։
5. Ա և Գ. օր. նմա։
6. Ա. օր. չունի Հօր։
7. Ա, Բ և Գ օր. չունին լուսոյ։
8. Գ. օր. չունի զտեսիլն . . . ասել։
9. Գ. օր. չունի զի ոչ էր . . . մարդկան։

բար[1] բազում, որ եթէ գրեալ էին, և ոչ աշխարհս բաւական էր տանել[2] զգիրս նշանացն. բայց սակաւուք[3] աւետարանեցաւ և գրեցաւ, զի հաւատասցուք եթէ Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ, և զկեանսն յաւիտենականս ընկալցուք յանուն նորա: Եւ[4] դադարեաց Անդրէաս ի խօսելոյ և ի քուն եմուտ աշակերտօքն հանդերձ, և վաղվաղակի եհաս նաւն յերկիրն[5] յոր երթալոցն էին: Եւ յարուցեալ Անդրէաս ընդ առաւօտն, և ոչ զոք տեսանէր, բայց միայն զաշակերտսն իւր ի քուն. և էր նոքօք ի դուրս քաղաքին ուր էրն Մատթէ և ամենայն կալանաւորքն ընդ նմա: Եւ զարհուրեալ հիացմամբ յարոյց[6] զաշակերտսն իւր և ասէ. Տէր էր այն որ նաւապետէր մեզ, և հրեշտակք որ ընդ նմա, և մեք ոչ գիտացաք զնա. և խօսեցաւ ընդ իս որպէս մարդ, և ես ետու նմա պատասխանի որպէս ընկերի: Ո՜վ սքանչելեացս որ վասն մեր յամենայնի ամենայն լինի յաղագս մարդասիրութեան իւրոյ. նմա փառք և գոհութիւն յամենայնի: Եւ ասեն աշակերտք նորա. Տեսանէաք մեք ի տեսլեան զՏէր յաթոռ փառաց, և բազմութիւնք[7] շուրջ զնովաւ որք օրհնէին զՏէր[8] անճառելի ձայնիւ, և երկոտասան դուք առաքեալքդ առաջի նորա. և Աբրահամ և Իսահակ[9] և ամենայն սուրբք առաւել և ընտրեալք որք ընդ նոսին ընդ անմարմնոցն երգէին զհոգևոր երգս ի փառս Աստուծոյ, և չեմք բաւական զասկայլի տեսիլն պատմել

1. Ա, Բ և Գ. օր. չունին բնյ զոր արար:
2. Ա, Բ և Գ. օր. բառնալ:
3. Ա, Բ և Գ. օր. սակաւուց: Գ. օր. յաւետարանեն:
4. Ա. օր. յաւելու յետ այսորիկ:
5. Ա. օր. յաւելու մարդակերաց:
6. Գ. օր. զարթոյց:
7. Ա, Բ և Գ. օր. յաւելուն հրեշտակաց:
8. Ա, Բ և Գ. օր. չունին զՏէր:
9. Ա, Բ և Գ. օր. յաւելուն եւ Յակոբ:

քեզ: Եւ ընկղմեցաւ[1] Անդրէաս ի տեղւոջն որ ցուցաւ[2], և համբարձեալ զձեռս իւր յերկինս եկաց յաղօթս և ասէ[3]. Ո՜վ Տէր զօրութեանց, մեծ են նորասքանչ[4] գործք քո[5], և ոչ գոյ թիւ իմաստութեան քո. դու ածեր զիս ի տեղիս յայս Նաւապետ բարի, և ես ոչ ծանեայ զքեզ. և արդ կամեաց և երևեաւ[6] և ասա ինձ տանել զկամս քո[7] բարիս, և ես ոչ խոտորեցայց ի կամաց քոց բարեսիրաց[8], թէպէտ և մեռանել հասանիցէ: Եւ երևեցաւ նմա Տէր և ասէ. Արի մուտ ի բանդդ, և հանցես զՄատթէ[9] և զամենայն կալանաւորսն, և եդեալ զձեռն[10] քո ի վերայ Մատթէի բժշկեսցի. և առաքեա զՄատթէ աշակերտօք քովք հանդերձ կալանաւորաւքն ի տեղի ինչ[11] անապատ, և անդ կերակրեսցին ի թզոյ անտի որ ի տեղւոջն յայնմիկ, և ուսուսցէ Մատթէ աշակերտօք քովք զկալանաւորսն զամենայն, զհաւատս ճշմարիտս[12] և զգործս արդարութեան, մինչև այցելութիւն եղիցի քաղաքիս այսմիկ[13]. և դու կաց մնա[14] զի չարչարեսցեն զքեզ, և քարշեսցեն և անարգեսցեն, բայց ոչ սպանցեն. զի քև ցուցից զզօրութիւն իմ, և դարձուցից զբնակիչս երկրիդ յաստուածգիտութիւն, և յետ այսր իրաց[15] թողցես զՄատ-

1. Ա. օր. զարհուրեալ երանելի Առաքելոյն Անդրէաս: Ա. և Բ. օր. ի տեսլենէն: Գ. օր. ի տեսլեանցն:
2. Ա. օր. չունի որ ցուցաւ: Գ. օր. ենցա:
3. Գ. օր. այսպէս:
4. Ա. Բ և Գ. օր. չունին նորասքանչ:
5. Ա. Բ և Գ. օր. յաւելուն եւ անեղ սքանչելիք քո:
6. Բ. օր. երեւեցիր:
7. Բ. օր. յաւելու զի ասացեր ինձ ցուցանել զկամս քո:
8. Ա. Բ և Գ. օր. չունին բարեսիրաց:
9. Բ և Գ. օր. զնա: Ա. օր. յաւելու ի բանդէդ:
10. Ա և Բ. օր. զձեռն ի վերայ (Ա. օր. յաւելու ենցա) քո եւ Մատթէի բժշկեսցին:
11. Ա, Բ և Գ. օր. ուրեք:
12. Բ. օր. ճշմարտութեան, չունի զգործս արդարութեան:
13. Ա, Բ և Գ. օր. չունին այսմիկ:
14. Ա. օր. չունի եւ դու կաց մնա:
15. Ա և Բ. օր. յետ այնորիկ: Գ. օր. յետ այսորիկ:

թէ քարոզել[1] ի քաղաքիս, և զաշակերտեալսն ի Նմանէ[2]. զկալանաւորսն ուսուցիչս մարդկանս այսորիկ, և դու դարձեալ գնասցես ի վիճակն քո, որ քեզ հասանացաւ, աշակերտովք քովք: Եւ դու համբեր բազում երկայնմտութեամբ յիշելով զչարչարանսն իմ որ վասն ձեր համբերեցի, զի ընկալցիս հատուցումն[3] ի վերջնումն աւուրն: Եւ Անդրէաս երկիր եպագ Տեառն, և ասէ. Եղիցին կամք քո:

Եւ յարուցեալ աշակերտօքն եմուտ ի բանդն որ ինքնին բացաւ դուռնն. և մտեալ տեսին զՄատթէ զի սաղմոսէր, Աստուած յօգնել ինձ նայեաց և Տէր յընկերել ինձ փութա: Եւ ողջոյն տուեալ միմեանց գոհացան զԱստուծոյ. և պատմեցին միմեանց որ ինչ անցք անցին ընդ նոսա, եթէ որպէս ըմբռնեալ եղև Մատթէոս որպէս գառն ի մէջ գայլոց. և ի Տեառնէ յայտնեալ[4] վասն գալստեան Անդրէի յառաջագոյն ասացեալ. և կամ որպէս Անդրէաս աշակերտօքն նաւեալ ընդ ծովն[5] եհաս անդր նաւապետ ունելով զՔրիստոս զնոյն ինքն Տէր, և խօսել ընդ նմա որպէս մարդոյ զամենայն ստուգութեամբ: Եւ զարմացեալ գոհանային ի վերայ անպատում պարգևացն[6]: Եւ տեսեալ Անդրէի զայսն որ ի բանդին՝ զի էին այնպէս յիմարեալք և կուրացեալք[7], ուսեալ զարմանս որպէս զանասունս. ասէ Մատթէ[8]. Կացցուք յաղօթս առ Տէր, և դիցուք զձեռն ի վերայ նոցա, և բժշկեսցին որպէս և տայց Տէր[9]: Եւ արարին այնպէս, և զգաստացան որպէս զառաջինն, և սիրտ մարդոյ տուաւ նոցա, և[10] փառաւոր առնէին զԱս-

1. Ա. օր. քարոզիչ: Բ. օր. քարոզ:
2. Ա. օր. զաշակերտեան իւր
3. Ա և Գ. օր. յաւիտենական բարի: Բ. օր. քո:
4. Ա, Բ և Գ. օր. չունին յայտնեալ
5. Ա. օր. չունի նաւեալ ընդ ծովն:
6. Ա, Բ և Գ. օր. սքանչելեացն:
7. Ա. օր. չունի և կուրացեալք:
8. Բ և . օր. զՄատթէ:
9. Ա. օր. ի վերայ արանցն չունի զյաջորդդ:
10. Ա Բ և Գ. օր. յաւիտեան լուսաւորեցան այս նոցա և:

տուած, և էին արք երկերիւր, և կանայք քառասուն: Եւ ասէ Անդրէաս ցՄատթէ. Ա՛ռ զաշակերտսն իմ և զկալանաւորս զայդոսիկ զարս և զկանայս և երթիջիք ի տեղին զոր ցուցցէ ձեզ Տէր: Եւ ուսո նոցա զաստուածգիտութիւն և զսրբութիւն[1] մինչև տրասցէ Տէր այցելութիւն, և ապա զհրամայեալսն ի Տեառնէ արասջիք և Տէր կերակրեսցէ զձեզ որպէս ասացն[2]. և չար ի ձեզ ոչ մերձեսցի: Եւ արար Մատթէ զասացեալսն ի Տեառնէ, և երևեալ[3] նոքօք ի ցուցեալ[4] տեղին, ուսուցանէր զնոսա յօրինաց և ի մարգարէից և յաւետարանաց[5]. և յօժարութեամբ լսէին նմա, և[6] հաստատէր զնոսա և ուսուցանէր զաստուածգիտութիւն և զուղղութեան փառս. և կայր նոքօք յաղօթս ի տուէ և ի գիշերի[7]. և կերակրեալ լինէին թզու երկրին ի տեղւոջն յայնմիկ զոր եցոյց նոցա Տէր: Եւ ոչ գիտացին պահապանքն և արք քաղաքին զինչ երբեք կալանաւորքն եղեն, զի անկաւ ի նոսա[8] անտեսութիւն: Եւ Անդրէաս նստէր ի քաղաքին, և մնայր տեսչութեան[9] Աստուծոյ. և ոչ տեսանէին քաղաքացիքն: Եւ խոկոյն եկին իշխանքն ի բանդն, և ոչ զոք տեսին[10] անդ, բայց միայն զպահապանսն[11] յերկիւղէն մեռեալս առ դուրս բանդին արս եւթն. և բարձեալ տարան ի տունս իւրեանց, խորովեցին և կերան. և զարմանային զինչ արդեօք կալանաւորքն եղեն[12], և կամ[13]

1. Ա և Բ. որ. յաւելուն եւ զարդարութեան փառս:
2. Ա. որ. շունչի որպէս ասացն·
3. Ա, Բ և Գ. որ. երթեալ·
4. Բ. որ. յասացեալ
5. Ա. որ. յաւետարանչաց:
6. Ա, Բ և Գ. որ. այնպէս ուսուցանէր զնոսա եւ հաստատէր յաստուածգիտութիւն եւ յուղղութեան փառս:
7. Ա և Բ. որ. յաւելուն եւ օրհնէր զԱստուած:
8. Ա և Բ. որ զնոքօք:
9. Բ և Գ. որ. տեսութեան
10. Ա և Բ. որ. զոքին:
11. Ա և Բ. որ. զպահապանսն մեռեալս ի դուրս բանդին յերկիւղէն եկեալ ուշոյ նոցա եւ էին եւթն այր:
12. Ա և Բ. որ. յաւելուն յանկարծակի:
13. Ա, Բ և Գ. որ. արդ·

ուստի՞ կերիցուք մեք միս մարդոյ, զի ստանց այնր չիք մեզ կեալ: Եւ ասեն[1]. Եկայք ժողովեսցուք զծերս և զպատանիս, և կերիցուք զնոսա, մինչև լիցի մեզ որս մարդկան ի մերձաւոր աշխարհս[2]: Եւ արարին որպէս խորհեցանն, և ժողովեցին զծերս և զպատանիս. և զամն ի ծերոցն յառաջ ածեալ[3], կամէին զենուլ[4] զի կերիցեն, և նա աղաչէր զնոսա և ասէր[5]. Է միամօր որդի իմ, զայն առէք փոխանակ իմ. և արարին զաղաչանս ծերոյն, առին զորդի նորա ընդ նորա[6]. այնպէս պատանւոյն[7] տեսեալ զիրս ծերոյն, զդուստր իւր փոխանակէր ընդ իւր[8]: Եւ ածին զուստր[9] ծերոյն և զդուստր պատանւոյն ի գ՚նումն և նոքա լային զանազանպէս որդի առ հայր և հայր առ որդի, դուստր առ մայր և մայր առ դուստր[10], և ոչ ոք ողորմեցաւ նոցա:

Եւ տեսեալ Ենդրէի զգազանաբարոյ մարդկանն զչարիս և զանօգորոյն[11] զմիտսն. աղաղակեաց արտասուօք առ Տէր և ասէ. Ո՛վ Տէր, ո՞չ քո արարածք են սոքա և մարդիկ, և զի՞րդ այսպէս արտաքոյ բնութեան մարդկան եղեալ են գազանաբարոյ. ուտել զմարմինս մարդկան գազանաբար[12], ո՞չ դու ես

1. Ա. Բ և Գ. օր. չունին Եւ ասեն:
2. Ա. օր. ուրեք Բ. օր. ուստեք Յաւելուն, եւ զայս ասացուք եւ փուրով կազմեսցուք զնաւսն եւ եկցուք յորս մարդկան ի մերձաւոր աշխարհն:
3. Գ. օր. մատուցեալ:
4. Բ. օր. չունի զենուլ:
5. Բ. օր. չունի եւ ասէր:
6. Ա. օր. նմա: Գ. օր. առին զորդին ընդ նմա:
7. Ա. օր. եւ ի պատանւոյն: Բ. օր. պատանւոյն:
8. Ա. օր. փոխանորդէր: Բ. օր. զդուստր իւրեանց փոխանակէին ընդ իւրեանց:
9. Ա. Բ և Գ. օր. ածէին: Ա և Բ. օր. զորդի:
10. Ա. օր. դուստր առ մօր իւրում եւ մայր առ դստերն: Չունի և զյաջորդդ:
11. Բ. օր. զգազանաբարոյ միտս նոցա եւ զչարսն եւ զանօգորոն:
12. Ա և Բ. օր. ուտել (Բ. օր. ուտելով) զմիմեանս անգգայաբար: Գ. օր. չունի մարդկան:

Աստուած և արարիչ ամենայն արարածոց երևելեաց
և աներևութից. մի թողուր զսոսա ի կամս մոլո-
րութեան և ի գործս անօրէնութեան[1], և զերծո ի
թշնամւոյն բանութենէ, զի քո են արարածք, և քեզ
միայն երկրպագուք, զի դու ես փառաց և պատուոյ
արժանի. զերծո զսոսա յիշխանութենէ խաւարի[2] որ
բանացեալ ունի զսոսա հրամանակատարս իւրոց կա-
մացն[3]: Յայնժամ սատանայի ձայն[4] բարձեալ ասէ.
Ո՞վ ես դու որ ասես զհնազանդեալս իմ մերժել
յինէն. ոչ ես զքեզ գիտեմ[5], և զձայնդ միայն լսեմ
որ մարդ ես: Ասէ Անդրէաս. Ես եմ աշակերտ Յի-
սուսի, որ կործանեաց զզօրութիւն քո, և ետ[6] ծա-
ռայից իւրոց հալածել զքեզ ի մարդկանէ, որ բնա-
կեալ[7] ունիս պատրանօք քովք. և այժմ աստի խա-
փանեսցի քո ամենաչար կամքդ, և զօրութիւն
Տեառն դարձուսցէ զսոսա առ ինքն, և դու նկուն լի-
ցիս ի զօրութենէ մեծին Աստուծոյ և փրկչին Յի-
սուսի Քրիստոսի: Եւ անդէն եղեալ շարժումն և ար-
հաւիրք ի քաղաքին. և լուծան ձեռք դահճացն որք
կամէին զենուլ զուստր[8] ծերոյն և զզուստր պատա-
ւուն, և ապրեցան նոքա[9] և պատանեակքն, և ահի-
ւ ըմբռնեալք ասէին. Զի՞նչ պարտ է այսմ այսպէս լի-
նել: Իսկ սատանայ ի ծերոյ կերպարանս[10] եղեալ,
ասէ. Այր ոմն մտեալ ի քաղաքս աշակերտ Յիսուսի
Անդրէաս անուն նորա, նա եհան զկալանաւորսն ի
բանդէն, և նոքա են այս արհաւիրքս որ եղեն ի

1. Ա. օր. յաւելու եւ բռնու-թեան. չունի զյաջորդսն:
2. Բ և Գ. օր. սատանայի:
Ա և Բ. օր. յաւելուն եւ յա-մենայն չար կամաց նորա զի դու ես Տէր եւ արարիչ եւ կարող յամենայնի, մերժ զնա մերժ խափանեսցի ի սոցանէ իշխանութիւն սատանայի
3. Ա և Բ. օր. չարութեան:
4. Գ. օր ճիչ
5. Ա. օր. չունի ոչ ես զքեզ գիտեմ:
6. Ա. օր. յաւելու իշխանու-թիւն.
7. Գ. օր. ըմբռնեալ
8. Ա, Բ և Գ. օր. զորդի:
9. Պակասէ ի Բն. եւ ծերքն:
10. Բ. օր. ի կերպս ծերոյ:

վերայ ձեր, որդ կալջիք զնա և կատաւմաւ սպանէք, և ապա զխրատ լիցի ձեզ[1] զինչ և կամիցիք. զի եթէ նա մեռցի, դուք ապրել ոչ կարէք: Եւ խուզէին[2] զԱնդրէաս ի քաղաքին և ոչ գտանէին:

Յայնժամ ձայն ի վերուստ[3] լսելի եղև որ ասէր. Յայտնեա զքեզ խնդրողաց քոց, և մարտիր զպարուք մարան համբերութեամբ բազմաւ[4]: Յայնժամ կացեալ ի մէջ հրապարակին Անդրէաս և ասէ. Ես եմ զոր խնդրէք առաքեալ Յիսուսի Անդրէաս. եկի դարձուցանել զձեզ ի մոլութենէ յԱստուած ձեր: Եւ խոկոյն կալեալ կապեցին զնա, և ասեն. Մի զենցուք զնա որպէս զայլսն, այլ ածցուք վրէժս չարաչար քարշմամբ մինչև մեռցի, և ապա խորովեալ կերիցուք ի զմանէ ամենեքեան փոխանակ զի արձակեաց զկալանաւորսն, և զմեզ ահիւ պաշարեաց: Եւ քարշեցին զսուրբ առաքեալն ընդ քաղաքամէջն և ընդ փողոցսն յայգուէ մինչև ցերեկոյ, և արիւնն հոսէր ի մարմնոյ նորա[5]. և ոչ մեռաւ ի նմա զօրութիւն, և առաքեալ[6] ընկեցին զնա ի բանտն: Եւ ի գիշերին յայնմիկ ամենաչար զեն ժողովեալ զզօրս իւր[7], ծայր ասէր զնոսա. Որ ասէիր մերժել զմեզ աստի, արդ ընկալ զչարչարանս յիմոց կամարարաց, և այլ եւս չար անցք անցցեն ընդ քեզ: Եւ Անդրէաս աղօթս առ Տէր մատուցանէր, և զնոսա իբրև զոչինչս համարեալ ասելով. Տէր է իմ օգնական և ես ոչ երկեայց[8], Տէր է իմ օգնական և ես տեսից զթշնամիս իմ, և Տէր զօրութեանց վանեսցէ զձեզ, եր-

1. Բ և Գ. օր. յաւելուն զործել:
2. Գ. օր. յուզէին:
3. Ա. օր. ի վերուստ ձայն եղև առ Անդրէաս: Բ և Գ. օր. ձայն ի վերուստ առ Անդրէաս (Գ. օր. լսելի լինէր) որ ասէր
4. Բ. օր. չունի եւ մարտիր . . . բազմաւ:
5. Բ. օր. չունի ի մարմնոյ նորա
6. Ա, Բ և Գ. օր. քարշեալ
7. Ա, Բ և Գ. օր. յաւելուն ի վերայ նորա:
8. Պակասէ ի Բն. զի՞նչ արասցէ ինձ մարդ:

թայք խաւարեայք ի մեծ լուսոյն ի խաւարն արտաքին, զոր պատրաստեալ է Աստուած վասն չարութեան ձերոյ, զի ոչ յագիք չարութեամբ որսալ զորդիս մարդկան ի կորուստ, այլ Տէր պահեցէ զյուսացեալս իւր ի ձէնջ, և զսոսա ապրեցուցէ ըստ մեծի ողորմութեան իւրոյ, և Աստուած փառաւորեսցի, և դուք նկուն լիջիք. և արարեալ զնշան խաչին Քրիստոսի անդէն չքաւորեալ[1] դեւքն. և Անդրէաս յաղօթելն աղաղակէր[2] և օրհնէր զԱստուած և զօրանայր ի Տէր[3]:

Եւ ի միւսում աւուրն դարձեալ քարշէին, և կոծեցին[4] զաւուրբ տաքեալն յայգուէ մինչև ցերեկոյ խառագոյն քան զառաջինն, մինչ զի ոչ մնաց ի նմա տեղի ողջ. և քարշեալ ընկեցին զնա ի բանդ զի մեռցի անդ[5]: Իսկ նա զօրացեալ ի Տեառնէ գոհանայր և օրհնէր զԱստուած որ վասն անուան նորա կրեաց զքարշանսն: Իսկ ամենաչար զևն կրճտէր զատամունս ի վերայ[6], և ապառնայր չարապէս քարշել դարձեալ զնա և կատամաշ սպանանել և ուտել: Իսկ առաքեալն Անդրէաս ասէ. Ոչ կարող են ձեր աներևոյթ[7] ստուերդ զոր ինչ կամիք առնել. զի էք դատապարտեալք և անկեալք[8] յիշխանութենէ, զի Տէր խորտակեաց զձեր որոգայթդ, և զամենեսեան ձգէ առ ինքն զորդիս մարդկան յաղագս մարդասիրութեանն իւրոյ. և դուք հերքիք[9] ի զօրութենէ

1. Ա և Բ. որ. չքատեցան: Գ. որ. չքեցան:
2. Ա և Բ. որ. ես եմ սաղմոսեր ես: Գ. որ. ես Անդրեաս սաղմոսեր ես:
3. Ա և Բ. որ. Տերամբ:
4. Ա, Բ և Գ. որ. չունին ես կոծեցին:
5. Ա. որ. չունի զի մեռցի անդ:
6. Ա, Բ և Գ. որ. զատամունսն իւր (Գ. որ. չունի իւր) ի վերայ նորա:
7. Ա. որ. ոչ է կարողութիւն ձեր երևոյթ ստուերք, յարէ ապա զի էք: Գ. որ. երևոյթ:
8. Ա. որ. պարտեալ ես ընկեցեալ արտաքս: Բ. որ. ընկեցեալք արտաքս:
9. Բ և Գ. որ. հերքեալ: Ա. որ. ես դուք մի կարասջիք կալ հակառակ ճշմարտութեանն ես հերքեալ ի զօրութենէ Տեառն մի ևս կարիցէք կալ:

Տեառն, մի կարասջիք կալ համառակ ճշմարտու-
թեանն, և ինքն օրհնէր զՏէր զգիշերն ամենայն սաղմոսիւք և խնդրէր զդարձ փրկութեան մարդկան:

Եւ յերրորդ աւուրն եկեալ տեսին զնա ողջ և զարմացան. և դարձեալ քարշեցին զնա նոյն չարագոյն մինչև ցերեկուն[1], և ոչ մեռաւ սուրբն. և ասեն. Այսօր եա պահեսցի ի բանտին, եթէ մեռցի[2], վաղիւն սպանցուք զբանտապահ այրդ: Իսկ սուրբն աղաչէր զՏէր և ասէր. Ա՛ռ զոգի իմ յինէն, զի ոչ կարեմ բառնալ անել[3] չարչարանացս և վտանգաւոր մահուն որ սպառնան ինձ: Եկայց առ նմա Տէր և ասէ. Քաջալերեաց և զօրացիր, զի եգև փոխան տանջանաց քոց. և ի վաղիւն ցուցցես նշանս սքանչելի, և հաւատասցեն քեզ և դարձցին յաստուածգիտութիւն ամենեքեան: Եւ[4] երկիր եպագ Տեառն, և գոհացաւ և ասէ. Եղիցին կամք քո. և հանէր ի գլուխ զգիշերն ամենայն յաղօթան Աստուծոյ. և եգև ողջ և զօրացաւ ի Տէր[5]: Եւ ի վաղիւ անդր եկեալ ամենէին զատաքեալն ի սպանումն վտանգաւոր մահուն. և իբրև տարան ի հրապարակն և սքանչացան ընդ առողջութիւն սուրբ առաքելոյն թէ զիարդ կեայ[6], և խորհէին ընդ միմեանս թէ զիա՞րդ[7] սպանցեն զնա: Եւ տեսանէ Անդրէաս արձան մի սիւն մեծ ի մէջ քաղաքին, և անդրի մի ի վերայ նորա, բարբառեցաւ յարձանն և ասէ. Բղխեսցէ ի քէն յորդահոս ջուր և խորտակեսցէ զբնակիչս քաղաքին, զի երկեան[8] և ծանիցեն զԱստուած զարարիչ իւրեանց[9]: Եւ ան-

1. Բ և Գ. օր. ցերեկոյ: Ա. օր. յերեկոյ:
2. Ա, Բ և Գ. օր. յաւելուն կենդանի: Ա. օր. ի վաղիւ:
3. Ա. օր. չունի կարեմ . . . անել: Գ. օր. չունի կարեմ:
4. Գ. օր. չունի Եւ երկիր եպագ Տեառն, և գոհացաւ. այլ դնէ, և ասէ Անդրէաս:
5. Ա. Բ և Գ. օր. ի Տեառնէ:
6. Բ և Գ. օր. կայ:
7. Ա, Բ և Գ. օր. որպէս:
8. Ա, Բ և Գ. օր. երկիցեն:
9. Ա, Բ և Գ. օր. յաւելուն և յուշան ամենեքեան ի յեղուս իւրեանց զամենայն (Գ. օր. զաստացեայն):

դրէն վաղվաղակի բղխեալ ջուր յորդաբուղխ[1] և ելից զքաղաքն ամենայն. և մարդիկն փախեան այսր անդր, և ոմանք ընկղմեցան ի սաստկութենէ ջրոյն[2], և մնացեալքն դիմեցին առ Անդրէաս, և անկան առաջի նորա և աղաչէին մեծաւ երկիւղիւ և ասէին. թող մեզ զյանցանս մեր և ողորմեա մեզ, և հաւատասցուք յԱստուածն քո զոր ոչ զգացաք և ոչ իմացաք, զի նա է Աստուած զոր քարոզես[3]. և կողկողէին առաջի նորա, և նա ինքն յարտասուս եղեալ, աղաղակեաց յարձանն և ասէ. Յանուն Յիսուսի Քրիստոսի արգելցի[4] ի քէն հոսումն ջրոցդ, և կացցես մնացես նոյնպէս ապառաժ. և եղև այնպէս: Եւ առաւելապէս(?)[5], և ցամաքեաց ջուրն: Եւ բազումք մեռան արք և կանայք և[6] անասունք: Եւ ասէ Անդրէաս. ժողովեցէք զդիակունս[7] ամենայն մարդկանդ որ և իցեն՝ ի տեղին ուր բղխեաց ջուրն. և ժողովեցին որպէս ասաց[8] նոցա առաքեալն: Եւ առաքեաց և կոչեաց Անդրէաս զՄաթէ և զաշակերտան[9] և զլուսաւորեալսն ի նմանէ զկալանաւորսն և զիւր աշակերտսն. և իբրև եկին նոքա և տեսին զմեծ զքանչելիսն, և փառաւորեցին զԱստուած. և կացին Անդրէաս և Մաթէ աշակերտօքն իւրեանց և ամենայն բնակչօք քաղաքին. մօտ յարձանն ունէին[10] զդիակունսն ժողովեալ. և եղեալ ծունր ամենե-

1. Ա և Գ. օր. յորդանոս:
2. Գ. օր. յերևաց ջրոյն ի սաստկութենէն:
3. Ա, Բ և Գ. օր. յաւելուն քարոզես զի (Գ. օր. զոր) ոչ զգացաք եւ ոչ իմացաք: Ա և Բ. օր. վասն այնորիկ եկն (Բ. օր եկաս) պատուհաս ի Տեառնէ քումմէ եւ լային եւ կողկողէին:
4. Ա. օր. արգելո՛:
5. Ա, Բ և Գ. օր. չունին եւ առաւելապէս:
6. Ա և Բ. օր. յաւելուն մանկունք եւ:
7. Ա. օր. զմեռեալսդ ամենայն ի տեղին ուր:
8. Ա, Բ և Գ. օր. հրամայեաց:
9. Ա, Բ և Գ. օր. զաշակերտեալսն, չունին և զլուսաւորեալսն:
10. Ա, Բ և Գ. օր. յարձանն ուր էին (Ա. օր. զմեռեալսն. Գ. օր. զդիակոյնսն):

քեամբ կային յաղօթս առ Տէր, բազում հառաչանօք և արտասուօք պաղատէին և աղաչանս ամենատեսան մատուցանէին. և բարբառ ոչ լինէր լսելի, և յերկարեալ զաղօթսն եղև լոյս ի վերուստ, և ձայն որ ասէր. Յարիցեն մեռեալք և լուիցեն քարոզութեանդ, և մեռեալքդ[1] և կենդանիքդ դարձցին առ Աստուած: Եւ անդէն յարուցեալ վաղվաղակի ամենայն զխակունքն զորս ջուրն մեռոյց, և որդի ծերոյն և դուստր պառաւուն[2]. և ծերքն և պառաւունքն միաբան ամենայն կենդանեօքն[3] օրհնէին զԱստուած, և հաւատացին ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ, և հնազանդեցան սուրբ աւետարանին[4]: Եւ թշնամին մարդկան, արդարութեան հակառակն սատանայ եղեւ ի կերպարանս ծերոյ որպէս յառաջն երեւեալ ձիչ բարձեալ ողբայր զանձնն, վայ ասելով ի վերայ վայի, թէ զի՞նչ արարից, ո՞ւր գնացից զորօք խմբք, զի փառքն Աստուծոյ լցին զտիեզերս, և զիս հալածեցին և ոչ գոյ ինձ հանգիստ: Եւ ասէ Անդրէաս. Սաստեսցէ ի քեզ Տէր. և հալածեսցիս և ոչ կարասցես մոլորեցուցանել զհաւատացեալս ի Տէր. և անդէն չիք եղեալ[5]: Եւ ասէ ցժողովուրդն. շինեսջիք տաճար Աստուծոյ և տուն աղօթից ի տեղւոջն բժշկութեան և յարութեան մեռելոց, ուր բղխեաց ջուր և խրատեաց զձեզ: Եւ Մատթէ առաքեալ ձեզ յԱստուծոյ աշակերտօք իւրովք, զորս կամէիք ուտել զմարմինս նոցա, քարոզեսցեն ձեզ զճշմարտութիւնն և մկրտեսցեն զձեզ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. և կերակրեսցեն զձեզ անմահական կերակրովն մարմնով և արեամբ Քրիստոսի. և ուսուցէ ձեզ զամենայն կամս Աստուծոյ. և կացուցէ քահանայս և

1. Բ. օր. չունի եւ լուիցեն քարոզութեանդ եւ մեռեալքդ
2. Ա. օր. յաւելու որ ոչ ի ջրոյն:
3. Բ. օր. ամենեքեան կենդանիքն օրհնեցին: Ա. օր. ամենեքեան միաբան օրհնէին:
4. Ա, Բ և Գ. օր. յաւելուն փրկութեան:
5. Բ և Գ. օր. եղեւ. Ա. օր. եղեն:

սպասաւորս տանն Աստուծոյ յիւրոց աշակերտացն, և հաստատեսցէ զձեզ ի հաւատս սրբութեան և յուղղութեան փառս[1], և ապա թողցէ զձեզ և գնասցէ աշակերտօք իւրովք ուր Տէր հրամայեսցէ․ և դուք սրտի մտօք լուիջիք նմա, և խաղաղութիւն ընդ ձեզ[2]։ Եւ հրաժարեալ ի նոցանէ յամենեցունց յուղարկեցին զնա նաւաւ[3] աշակերտօքն իւրովք[4], և մխիթարէր զնոսա յանուն Տեառն[5]․ և յօժարութեամբ կատարէին զպատուիրեալսն ի փառս ամենասուրբ Երրորդութեանն զօրհանապազ, զի նմա վայել են փառք այժմ և յաւիտեանս, ամէն[6]։

1. Ա. օր. ի ճշմարիտ յուղղութեան եւ ի սրբութեան եւ յարդարութեան փառս։
2. Ա. օր. խաղաղութիւն Աստուծոյ ընդ ձեզ միշտ լիցի։
3. Գ. օր. չունի նաւաւ։ Ա. օր. ի նաւ։ Բ. օր. նաւով։
4. Ա. օր. հանդերձ։ Ա և Բ. օր. յաւելուն եւ բազում լալիւն լինէր ի քաղաքին եւ Մարկ աշակերտովք իւրովք։
5. Ա և Բ. օր. յաւելուն եւ ուսուցանէր եւ նոքա։
6. Աստէն աւարտին Ա և Բ. օր։

# ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ԱՆԴՐԷԻ ԱՌԱՔԵԼՈՑ

## ՈՐ ՉԱՐՉԱՐԵՑԱՒ Ի ՊԱՐՏԷԶՍ

## ՅԱՌԱՋ ՔԱՆ ԶԿԱՂԱՆԴԱՅ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ[1].

Ես եղբարք առաքեալս[2] ի Տեառնէ ի կողմանս յայսոսիկ, որում արժանի արար զիս Տէրն իմ, ոչ ուսուցանել, այլ յիշեցուցանել ամենեցուն[3] որ ազգակից էն մեր բանիւք, որ յառաժամանակեայ չարութեանցն վարիցին, վայելչացեալք ի մխատակարան իւրեանց որ առաջօք երեւին. յորոց ես զձեզ աղաչեցի միշտ ի բաց կալ, և յօրինադրեալսն ձեզ[4] փութալ արժանաւոր յորդորմամբք և յամենայն անցաւորացս հրաժարել: Քանզի տեսանէք զի ոչ ինչ յերեւելեացս աստի կայ հաստատուն, այլ ամենայն ինչ վաղվաղակի փոփոխի. մինչ անգամ խորհուրդք և բանք մարդկան սովորութեամբն[5] հանդերձ. և այս հանդիպի անխրատ անձին որ իւրով իսկ կամօք մոլիցին[6] և գգրուական չարեացն ունիցին յինքեանս. երանի համարիմ զայնոսիկ որ եղեն լսօղք բանի քարոզութեանն Տեառն, և զնորին խորհրդածութիւնն տեսանելով յիւրեանց բնութեանն, յաղագս որոյ ամենայն ինչ խնամարկեցաւ:

Պատուիրեմ ձեզ այժմիկ որդեակք իմ սիրելիք,

1. Գ. օր. Վկայաբանութիւն Սուրբ Առաքելոյն Անդրէի որ չարչարեցաւ ի Սպարդէ յառաջ քան զմի կաղանդացն դեկտեմբերի:
2. Գ. օր. առաքեալ:
3. Գ. օր. ամենայն մարդոյ:
4. Գ. օր. զձեզ փութամ յորդորել եւ յամենայն անցաւորացս հրաժարեցուցանել:
5. Գ. օր. մոլորութեամբն:
6. Գ. օր. մոլորեցան:

զի չինեսջիք ի վերայ հաստատուն հիման, որ կայ անշարժ և ոչ յուզեքէ խախտի. և ամենեքեան որ շինեցարուք ի վերայ այսր հիման, հաստատուն լերուք, անշարժ կացէք և յիշեցէք որոց տեսողն եղերուք, որպէս շրջեցայ ես ի միջի ձերում, և զգործն զոր տեսէք եղեալ ի ձեռս իմ, յորոց չէ պարտ անհաւատ լինել, որ այդքան բազումք նշանաց դուք տեսօղք լեալ, զոր կարծեմ թէ և անխօս բնութիւնն աղաղակէ զբանն զոր ես ձեզ աւանդեցի, ուստի և աղօթս առնեմ զի ընդունելի լիցի ի ձէնջ, որպէս զքին խոկ բանքդ կամեցին: Հաստատուն կացէք յամենայնի սիրելիք զոր տեսէք և լուարուք և որոց հաղորդեցարուքդ. և ձեզ Աստուած՝ յոր դարձարուքն՝ ողորմեսցի, և ի հաճոյս իւրեան կարգեսցէ, և հանգուսցէ զձեզ յամենայն յաւիտեանս: Եւ առաջիկայ պատահումնս որ գիպելոց է ինձ[1] զոր հանդերձեալ եմ կատարել, մի խռովեցուսցէ զձեզ որպէս օտար ինչ զարմանք. վասն զի Աստուած ծառայիցս իւրոց տալոց է վարձս[2] յաղագս գործոց և բանից, որ է եղեռնապէս[3] բնութեամբ ի մարդոյ չարէ, տարապարտ ի մահ զրպարտեալ լինել յայոց ժամանակեայ կենացս. քանզի ոչ ինձ միայն է գիպելոց, այլ և ամենեցուն որ սիրեն զՅիսուս և ի նա են հաւատացեալ[4] և զնա խոստովանին. քանզի զամենեսեան անամօթ բանարկուն զոր[5] խոտորեցուցեալ յԱստուծոյ արար իւր որդիս, զինեալ վասէ, որպէս զի զնորա կամացն զհետ երթիցեն, այլ ոչ եղիցի նմա որպէս ինքն կամի: Եւ նա վասն որոյ[6] յայդ ձեռնարկէ, ես ձեզ ասացից, եթէ դուք ինձ լուիցէք:

1. Գ. օր. չունի որ գիպելոց է ինձ:
2. Գ. օր. ծառայիցս որում Տէրն տացէ զվարձս:
3. Գ. օր. որ եւ ես ուղղապէս բնութեամբ ի մարդոյ չարէ տարապարտ ի մահ զրպարտեալ լինիմ յայս ժամու ի ժամանակեայ կենացս:
4. Գ. օր. յաւելու եւ ի նա յուսացեալ:
5. Գ. օր. չունի զոր:
6. Գ. օր. Եւ երէ յայդ:

Քանզի հրեշտակապետ[1] էր և յառաջ քան զամենեսեան նախաստեղծ, եթէ պարտ իցէ ասել, վասն որոյ անկաւ յերկնից իբրև զփայլակն, զի կորուսցէ զմարդիկ որ յաստուածութենէն[2]. վասն որոյ անըն֊կիզրն և անեղծ Տէրն փառաց եկն յերկիր, զի զնա մերժեսցէ ի մէնջ, և կորուսցէ, որ յամենայն ժամ պատերազմի ընդ սիրողս պատուելոյ[3] խաղաղութեան. քանզի և ինքն օտար է ի խաղաղութենէ, և ընդ այնոսիկ մարտնչի որ ոչ իւրն են. զի ինքն տկար է և անզօր և աներևոյթ տեսլեամբ. պարտէ զմիտս այնոցիկ որ ոչն ճանաչեն զԱստուած: Եւ վասն այնորիկ եկն Տէրն պատերազմեցաւ ընդ նմա, և ընկէց ի փառաց և յիշխանութենէն, զոր կարծեցուցանէր խորասոյզ լեալ[4] յանդունդս դժոխոց. և մեզ ծանոյց արարիչն[5] Աստուած զիւր հայրն փառաց մշտնջենաւոր, զի զնա սիրեսցուք և զպատուիրանս նորա արասցուք. և ես ձեզ բազում անգամ գրեցի զպատիր խորամանկութեան[6] բանսարկուին, վասն որոյ ինքն կարծէր տիրել, զի ինքն թշնամին ոչ երևեցուցանէր զիւր թոյնան նենգաւորս, այլ ի սէրս[7] անառակս և ի չարիս պղծութեան զմարդիկ արկանելով. զի այն իսկ է նորա գործ, զի ի մոլորութիւնս և ի հեղգութիւնս ածցէ զմարդիկ առ ի խոտորեցուցանելոյ յարարչէն մերմէ[8] Աստուծոյ. և հանիցէ յաւիտենական կենացն: Այլ յորժամ սուրբ շնորհաց խորհրդածութիւնն ի մեզ հեղաւ, և կամք քաղցրութեանն Աստուծոյ ի մեզ երևեցաւ, և սուրբ բանին լուսաւորութիւնն ի մեզ ցուցաւ և ազգ մարդկան ազատութիւն եգիտ, որ յառաջ հեշտ ցանկութեամբ բանսարկուին էին գրաւեալք: Իսկ թշնամին տեսեալ

1. Գ. օր. հրեշտակ:
2. Գ. օր. որ յԱստուծոյ ստեղծան:
3. Գ. օր. չունի պատուելոյ:
4. Գ. օր. լինել:
5. Գ. օր. զարարիչն:
6. Գ. օր. խաբէութիւն:
7. Գ. օր. ի փառս:
8. Գ. օր. իւրեանց:

զինքն արհամարհեալ[1] և զիւր պատուիրանն[2] ծաղր եղեալ, դարձեալ սկսաւ զօրաւոր[3] մարտ կռուոյն ընդ մեզ վարել և սերմանել ի մեզ ատելութիւն և թըշնամանս և այլ անաստակ[4] յարուցմունս խորհրդոց[5], զի մեք ընդ միմեանս մարտ կռուի արասցուք, և զայս ոչ միայն բանիւք, այլ ջանայ զի և գործովք կատարել տայցէ. և ոչ դադարէ ի մէնջ մինչև վնասեսցէ[6]: Բայց մեք մի ի բաց կացցուք ի Քրիստոսէ խաբէութեամբ թշնամւոյն, որովհետև[7] յայտնեցաւ մեզ խնամակալութիւն Նորա[8] և լուսաւորեաց զմեզ: Իսկ զթշնամւոյն զօրութիւն և զյանդգնութիւն սկաբացոյց, և զծածուկ Նորա բնութիւն[9] և զկարծեալն առ ի մարդկանէ թէ իցէ ինչ, զայն ինքն Տէրն յանդիմանեաց զնա, և խոստովանել մեզ որպէս և ինքն ուսոյց զիւր աստուածութիւնն: Այսուհետև գիտացեալ եղբարք զառաջակայ եղեալն արթունք եղիցուք և ի բազմահնար որոգայթից[10] Նորա մերժեսցուք առանց զանգայելոյ և առանց խռովութեան. մի ինչ ունելով ի չարաց Նորա յանձինս ձեր, այլ ամենեցուն համբարձեալ զմիտս յամենայն բանս յայսմիկ և զկատարածն մեր խնդութեամբ ընկալցուք փոխելով ի նմանէ, զի յամօթ լիցի երևումն Նորա, և ծանիցի որպէս և էրն, և մեք զփրկութիւն անձանց մերոց անխափան պահեսցուք:

Եւ մինչդեռ խօսէր երանելին զայս ամենայն ընդ եղբարսն ի գիշերին հանդերձ աղօթիւք, և ամենեցուն առ հասարակ ցնծալով և բերկրելով և հաստատելով ի հաւատոն Տեառն. վաղ քաջ ընդ առաւօտն

1. Աստ սկսանի Գ. օր.:
2. Գ և Գ. օր. պաշտօնն:
3. Գ և Գ. օր. զօրավորական մարտն մեզ (Գ. օր. մեր դնել):
4. Գ և Գ. օր. եւ այլանդակ:
5. Գ. օր. թշնամանաց:
6. Գ. օր. չունի եւ ոչ դադարէ . . . վնասեսցէ:
7. Գ. օր. որ:
8. Գ. օր. Արարչին մերոյ:
9. Գ. օր. բանութիւն:
10. Գ. օր. մեքենայից Նորա զերծցուք առանց զայթակղութեան եւ:

իշխանն Եգիպտէս հրամայեաց ածել զսուրբն Անդրէաս ի բանդէն կապանաց և ասէ ցնա. Ահա կատարած քոյոյ վախճանի մերձեցաւ, ով օտար այր դու և օտարացեալ ի կենացս յայսմիկ, և թշնամի առն իմոյ և ապականիչ բոլոր ընտանեաց իմոց. Երբ թուեցաւ քեզ յանդգնել և գալ յայլոյ տեղի[1] և հրապուրել զկին իմ, որ ի սկզբանէ հաճոյ էր ինձ, և չէր ամենևին յայլ ոք յարեալ, զոր այժմ իսկ ուսոյ լուեալ ի Նմանէ զի քո յԱստուածն քո հաւատացեալ, խնդայ պաշտելով զնա՝ զոր մեք ոչ գիտեմք. բայց այժմ վայելեա դու յիմոց պարգեւացս[2]: Եւ հրամայեաց տանջել զնա գաւազանօք, մինչև փոխեցան եօթն այր հարկանել զնա, և յետ այսորիկ առաքեաց զնա ի խաչ հանել. հրամայեաց դահճացն զի պնդեսցեն զոտս նորա ի միխեանս, և այնպէս պրկեսցի[3]. զայրացեալ յոյժ, զի տանել այնու ևս տանջեսցեն զնա: Եւ յայտնի եղեն իրքս այս ամենեցուն, զի հռչակեցաւ յամենայն պատրէզս[4] համբաւս այս[5], թէ որ ի հեռուստ արդարն եկեալ է և ունի զԱստուած ընդ ինքեան, յանիրաւս Եգիպտէ խաչեալ լինի, ոչինչ ումեք յանցուցեալ. և ամենեքեան առ հասարակ բարկանային ընդ իրան: Եւ իբրև ածինն ևս զնա դահճքն ի տեղին զի կատարեսցեն զհրամայեալսն, յայնժամ Ստրատոկղէսի գիտացեալ զիրսն[6] եկն ի տեղին. և տեսեալ զերանելի առաքեալն զի ի դահճացն մերկացեալ[7] և բռնաբար քարշեալ լինէր իբրև զչարագործ[8], բարկացեալ յոյժ յանխնայ[9] տանջեաց զիւրաքանչիւր

1. Գ. և Դ. օր. յայս տեղիս:
2. Դ. օր. չունի զոր մեք . . . պարգեւացս:
3. Դ. օր. չունի ևւ այնպէս պրկեսցի:
4. Գ. և Դ. օր. Սպարդէս:
5 Դ. օր. չունի համբաւս այս: Գ օր. այս ամենեցուն:
6. Դ. օր. յաւելու վաղվաղակի: Դ. օր. ընթացեալ վաղվաղակի:
7. Գ. և Դ. օր. չունին մերկացեալ:
8. Դ. օր. զմահապարտ:
9. Դ. օր. չունի յոյժ յանխնա

ոք[1] ի նոցանէ. և զպատմուճանս նոցա պատառեաց
վերուստ մինչև ի վայր[2], և եհան ի նոցանէ զսուրբն
Անդրէաս առեալ գնաց, թէ և յայգմիկ զնա ե-
բանելւայդ չնորհակալ լերուք զի խրատեաց զիս
ցածչիլ[3] ի բարկութենէն. այլ ունէիք գիտել թէ որ-
չափ Ստրատոկլէս կարող էր առնել ձեզ, և կամ
զինչ է պիղծն Եգեատէս, քանզի ուսաք բառնալ
զբեռն իրերաց: Եւ կալեալ նորա զձեռանէ առա-
քելոյն երթային ի ծովեզրն[4] ի տեղի մի յորում
հանդերձեալ էր պրկել[5] ի խաչին սուրբն: Իսկ զօ-
րականացն երթեալ ցուցին զինքեանս Եգեատեայ,
առեալ նմա զեղեալ իրսն. իսկ նորա պատասխանի
տուեալ նոցա ասէ. Առեալ այլ պատմուճանս հան-
դերձից երթայք անդր ուր հրամայեցի ձեզ զգործն
կատարել[6]. և որ յինէն դատապարտեցաւ ի մահ
որ ինչ իմ կամքն են զայն կատարեցէք, և դուք
արագ վճարեցէք զիրադ զիմ հրամանս լսեալ[7], և
թէ հնար է, Ստրատոկլեայ մի ինչ խնայեսցանէք
որչափ և կարէք[8]. և մի ինչ ընդդիմանայք նմա
զինչ և առիցէ ընդ[9] ձեզ, զի գիտեմ զազատու-
թիւն[10] անձին նորա թէ որպիսի ոք է, քանզի կար-
ծեմ թէ յոչ անսանելոյ զիս զայրացի: Եւ արա-
րին նոքա որպէս Եգեատէսն ասաց: Իսկ Ստրատոկ-
լէս գնաց հանդերձ առաքելովն և եկն[11] յառաջակայ
տեղին և սպառնայր ցասմամբ ի վերայ Եգեատէ, և
դնէր զաղանի[12] թշնամանս. և Անդրէաս պատա-

1. Գ. օր. զմի մի.
2. Գ. օր. վերուստ մինչեւ ի խոնարհ: Գ. օր. չունի:
3. Գ. օր. ոչ ցասել ի բարկութենէ: Գ. օր. ոչ ցասնուլ եւ ոչ դրդուել ի բարկութենէ:
4. Գ. օր. չունի ի ծովեզրն:
5. Գ. օր. ելանել ի խաչ երանելւոյ առաքելոյն:
6. Գ. օր. վճարել:
7. Գ և Գ. օր. կատարելով:
8. Գ. օր. չունի որչափ եւ կարէք:
9. Գ և Գ. օր. չունին ընդ:
10. Գ. օր. զազնուականութիւն:
11. Գ. օր. գնացեալ եկին ի տեղին ուր հանդերձեալ էին ըզգործն վճարել:
12. Գ. օր. չունի զաղանի:

խանի են նմա եւ տայ․ Որդեակ իմ Սարտանկղէ, կամիմ զի անխռով կայցես[1] յայսմհետէ, և մի մնար յայլ ումեքէ[2] լսել ինչ․ այլ քեզէն իսկ իմացիր զայսպիսի իրս, և մի յայտ և մի ի ծածուկ ունիցիս ինչ ցասումն ի միտս քո[3]․ քանզի վայել է ծառայից Յիսուսի զարժանն Յիսուսի խորհել․ այլ ունիմ ինչ ասել ընդ[4] քեզ և առ այլ եղբարսդ որ գան իսկ ընդ մեզ վասն և այլ մարդկութեանս, քանզի դիւաց բնութիւն մինչև ոչ ընդունի[5] զարիւնհեղութիւն չարութեան կերակուրն, և ոչ զառ ի նոցանէ ճաշակն հաստի․ եթէ ոչ սպանցին կենդանի անասունքն նոքա ակարանան և յոչինչ դառնան ամենեքեան[6] իբրև զմեռեալս․ իսկ եթէ արասցէ ոք զկամս նոցա, յայնժամ զօրացեալ լինին լի հեշտութեամբք։ Այսպիսի ինչ պատահէ որդեակք իմ յաղագս ներքին[7] մարդկութեանս որք մեռանին յորժամ ոչ մերձենան ի մեր հաւատս զոր քարոզեմք, այլ յոր ինչ դևքն յորդորեն և վարեն զնոսա ի չար ախտսն։ Ասեմ և այլ ազգ առ ձեզ[8]․ քանզի հասեալ եմք ի կատարած առաջիկայ ճանապարհիս մերոյ, քանզի մարտ եղեալ կռուին ընդ մեզ դևքն յաղագս[9] քաղցր և հեշտ պատուիրանացն Աստուծոյ, քանզի նման է, որպէս ինձ թուի, թագաւորական թռչնոյ արծուոյ, որ թռչի յերկրէ ի բարձունս, արեգական ճառագայթիւքն պայծառացեալ, վայելուչ գեղով երևեալ զարդարեալ յինքեան բնութենէն բարձրաթռիչ լինելով, իսկ եթէ առ երկրաւս թռիցէ այն որ թեթև թևօքն իւրովք բարձրաթռիչ լինէր[10] թողեալ զուղղորդ սովորական թռիչսն լուսա-

1. Գ և Դ․ օր․ կայցեն (Դ․ օր․ իցեն) միտք քո։
2. Գ և Դ․ օր․ յաւելուն այսուհետեւ։
3. Գ․ օր․ ի սրտի քում
4. Գ և Դ․ օր․ չունին ընդ․
5. Դ․ օր․ բնակութիւն մինչեւ ոչ ունի (Գ և Դ․ օր․ զարիւնհեղութեան կերակուր։
6. Դ․ օր․ ամենեւին։
7. Գ և Դ․ օր․ արտաքին։
8. Դ․ օր․ չունի Ասեմ եւ այլ ազգ առ ձեզ։
9. Դ․ օր․ յաւելու փափագելի։
10. Դ․ օր․ չունի իսկ երկ․․․ լինէր։

բնակս, ապականի յերկրէ, ծանրանան նմին թևքն. և[1] այլափոխ է խակ արծուին. զի թէպէտ և իւր բնութիւնն պատշաճ է երկրի, սակայն թևոցն անմայելուչ է նիսան, զի ի քարշելն[2] ընդ երկիր, երևոյթ գնա տեսողացն ցուցանէ[3]: Այսպիսի ինչ եղբարք և մեզ է գիտելի զմերմէ բնութենէս. մինչդեռ զօրէն արծուոյ թռչիցիմք յերկնաւոր լոյսն մեր բնական, և զարդարիցեմք զմեզ լուսեղէն պատուիրանաւն և հոգեղինացն[4] առաքինութեամբք, թեթևացեալ այտաքիւք և պայծառացեալք լիցուք ի բնական լապտերացն[5] և փայլչացեալք անձինք մեր օրինակաւ այսուիկ հրձուեալ լիցուք ի բնական լապտերացն և փայլչացեալք[6] ի վերայ բունոյ անձման գեղեցիկ և հոգևոր թևոց մերոց: Զի զոր օրինակ արծուին զեւս իւրոյ թռչմանն յերկինս ի բարձունս անկիցէ, երևելի ամենեցուն լինի, և յիւր խակ թևս պանծանայ[7] և հաճոյ աչաց հայելոյ, և գեղեցիկ մարդկան երևեալ ի վերուստ ի խոնարհ, նոյնպէս և մեք ի մեր բարձրութիւնն վերասցուք և յընդդիմակացն մերոց ոչ յումեքէ ծանրացեալք, և առաքինութեամբք մերովք բարի վարս ցուցեալ իւրաքանչիւր յարմարեալ գնացիւք. համեստ խորհրդով բնաւիւք երևեացուք, զանազան առաքինութիւնն ի կիր արկանելով. և այս բանք այսպէս չարագծեցին[8], զի իւրովին զիւր օգուտն ծանիցէ մարդն, զի դժնեայ և անարգ[9] է խորհուրդ չարին, և փութայ զմեզ ծոյլս կազմել առ ի կամս աստուածութեանն: Քանզի երկնային օրինօքն եղեալք խրատեալք երկրաւորքս[10] զանց ա-

1. Գ և Դ. օր եւ երևեմամբ այլափոխեիկ է արծուեին:
2. Գ և Դ. օր. քարշելն:
3. Դ. օր. առնէ
4. Գ և Դ օր. պատուիրանացն առաքինութեամբք չունին եւ հոգեղինացն:
5. Դ. օր. լուսոյն.
6. Գ և Դ. օր. չունին ի բնական լապտերացն եւ փայլչացեալք:
7. Դ. օր. պանծայ:
8. Գ և Դ. օր. չարագրեացին:
9. Գ և Դ. օր. անկարգ:
10. Գ և Դ. օր. երկրայինքս:

բառնացուք զչար գործովք, և նորոգեսցուք ի բնութեանս մեր[1] զբարի գործն մեր, թերևս[2] առցուք զօրէն արծուոյ բնութեան որ միւանգամ նորոգի: Դարձեալ զնոյն առակ[3] ես ձեզ առացից, արդ յայնժամ երևեսցի որ[4] ոք իցէ բարեզարդ և վայելուչ, յորժամ ի մեռելոց յարիցէ. յայնժամ երևի մարդն արժանի բոլոր[5] տեսողացն պայծառ գեղով ընդ առաջ վերանալով Տեառն. իսկ եթէ մնացէ յերկրի, արդ երևեսցի ի խոնարհագոյն հաւուցն ծառր եգեալ, վասն զի նմանեցոյց զինքն յետին թռչնոյն: Զայս այժմիկ և յաղագս իմոյ արծուոյս առացից, զի ես այսքան առաքինութիւնս ընդ իս ապաւոր[6] կարգեցի, զօրէն կատարեալ արդարոցն որ առաջի ամենայն աշխարհի են պատկելոց, յորժամ զերկրային մարմինս ի բաց դիցէ, և միւանգամ յարուցեալ զերկնային փառս զգեցցի. և յայնժամ[7] ի փափագելի արքայութիւնն մտցեն ցնծալով ընդ հրեշտակս յանանց ուրախութիւնն Աստուծոյ. մինչև ցայս տեղի է առակս. քանզի և այս տեղի է ժողովեալ միաբանութեան, քանզի ցուցեալ նշան խաչիս ազդէ որ ի տեղւոջս յայսմիկ եղև կանգնեալ առ ի փրկութիւն անձին իմոյ:

Եւ թողեալ զամենեսեան սորայն. մերձեցաւ ի խաչն, և սաէ ի նա ձայնիւ մեծաւ: Խնդա՛ ով խաչ, և արդարև իսկ խնդա. քանզի քաջ[8] գիտեմ հանգուցանել քեզ զիս յայսմհետէ ի բազում աշխատութենէ, որ ցուցեալ և մնաս ինձ[9]. ծանուցեմ զքո մեծութիւնդ վասն որոյ կանգնեցարդ. ուսանիմ զքո

1. Գ. և Դ. օր. մերում
2. Գ. և Դ. օր. թերես
3. Գ. օր. զնոյն առ ամենեսեան ձեզ·
4. Գ. օր. երևեսցի ո ոք
5. Գ. և Դ. օր. երևեւի բանաւոր մարդ արժանի·
6 Գ. և Դ. օր. ապաւորեալ·
7. Գ. օր. յայս Դ. օր. ի յայս·
8. Գ. օր. յառաջ
9. Գ. և Դ. օր. յաւելուն Եկի առ քեզ (Դ. օր. զոր գիտեմ թէ իմ ես, եկի առ քեզ) որ ցանկացարդ ինձ

տեսակդ փառն որոյ կացերդ[1]. տեսի ինձ ի քեզ որպէս և յիս[2] գծագրեալ զքոյդ[3] եթէ զոր իմանամն զոս[4]. զոր և որպէս տեսանեմս սիրեմ, զոր իմանամս, և ըմբռնեմ ի քէն. զի՞նչ ձև է քո, ո՜վ խաչ. զի՞նչ խորհրնակն, զի՞նչ մէջն. զի՞նչ է աներևոյթդ ի քեզ. զի՞նչ է երեւելիդ քո. ո՞րչափ ծածկեալդ[5], ո՞ րքան երևիդ յաղագս ընկերին քո աղաղակի[6], ո որքան երկնեադ, զառանիս[7] որ լսեն քեզ. ո անուն խաչի, լի ամենայն իրօք. զի՞նչ զարմանք[8], զի՞նչ պարտ է տալ քեզ, այլ Անդրէաս. յորժամ ամենայն բնութեանս մերոյ Աստուած Հայր, Յիսուս յորժամ[9] զխորհուրդն իւր ազէտ մարդկան Հաղորդեցայց[10] որ անտառուածք էին յայնմ ժամանակի զատուորքն, ոչ Հուր ունէին, ոչ սուր, ոչ վիրապս և ոչ խեղդելիս, ոչ կապանս, և ոչ սով, ոչ բանդ, և ոչ քարինս[11], և ոչ այլ ինչ մեքենայս. իմացան թէ կատարեցէ, յոր իշխեցին ձեռնարկել, այլ զխաչն: Վա՜յ ով խաչ, կոչեցեալ ամենեքին զօրութիւն: Վա՜յ ձև իմաստուն ի բանէ իմաստնոյ ձևացեալ. Նոքա անգիտանային, բայց մեք ծանեաք, և Նովաւ ազորմութիւն գտաք. որ ցուցանես զքեզ ինձ. այդ յորդորէ[12] տալ ինձ վա՜յ ով խաչ. որ զբաղմամբք[13] աշխարհիս փակեցեր. վա՜յ տեսիլ բանութեան, որ Հանապազ զբուան[14] բանաւորութիւն բանաւորես. վա՜յ կերպարան Հանճարոյ, որ զան-

1. Գ. օր. չունի ուսանիմ . . . կացերդ:
2. Գ. օր. ցցիս:
3. Գ և Դ. օր. զքեզ:
4. Գ. օր. զզաս:
5. Գ. օր. ո՜վ ո՛րչափ ծածուկդ ես: Գ. օր. չունի: Գ և Դ. օր. յաւելուն ո՜ որ երևիս յայնմանէ որ իմանայն.
6. Գ. օր. չունի ո որքան . . . աղաղակի:
7. Գ. օր. զառանել զայնոսիկ որ խնդրենն զքեզ:
8. Գ. օր. յաւելու զին, տեսակ:
9. Գ և Դ. օր. չունին յորժամ:
10. Գ. օր. եցոյց:
11. Գ. օր. քերանս:
12. Գ. օր. զքեզ յազ եւ յորդորես: Դ. օր. զքեզ յայդ յորդորես:
13. Գ. օր. զզբաղմամբք:
14. Գ. օր. չունի զբուան:

կերպարանն կերպարանեցեր. վա՜յ կապ անկապելի որ կապեցեր զառաջին անկապն. վա՜յ աներևութին տանջանաց, որ էրն խիկ յառաջ աներևոյթ և անզննելի[1]. վա՜յ խրատատուիդ, որ խրատէ զանխրատս. վա՜յ քեզ Քրիստոս որ մեռս ինձ պրկիլ ի խաչիս, վասն որոյ դու համբերէիր որում չէիր արժանի. վա՜յ նախատանացդ որ յաղագս մարդկութեան համբերեցեր ընդդէմ անամօթին[2] զի զնա ամաչեցուսցես. վա՜յ որ ոչ փախեար յայնմանէ, որ ոչն կարէր ճանաչել[3] զոր ինքն գործեաց. բարուք համբերեցեր տանջողացն զքեզ, քանզի ոչ գիտէին զինչ գործեցինն. փրկեցեր զթշուառացեալսն, և ոչ ի բաց մերժեցեր զթշնամանիչսն[4] անոխակալութեամբդ քո ծանեաք զշնորհս քո, զի ոչ թշնամանեցեր, այլ յորժամ դարձան առ քեզ ընկալար զնոսա, և ուրախացեալք ի քեզ խոստովանեցին[5] ի քո բարերարութիւնդ: Այլ այժմ ընկալ զմեզ որ յայսմանէ հրաժարեցաք. ընկալ զմեզ զդատապեալս, և ազատեա[6] Տէր որ ի քեզ ապաւինեցաք. այլ մինչև յե՞րբ զայդ առիցեմ, և ոչ զոր դու ցուցանես ո՜ խաչ, կացեալ առաջի քո յանձն առնեմ քեզ զլօզս իմ. քանզի ոչ է մեզ ժամանակ ա՛յլ մերձենալ յերևելիս յայսմ ո՜վ խաչ:

Եւ ասացեալ զայս երանելւոյն մինչդեռ ևս կայր ի վերայ երկրի. և հայեցեալ տեսանէր զխաչն յոր ելանելոց էր ինքն. և հրաժարեալ յեղբարցն[7], զի եկեսցեն զահիճքն[8], և արասցեն զհրամայեալսն իւրեանց, քանզի կային հեռագոյն ևս[9]: Եւ եկեալ

1. Գ. օր. անզնին:
2. Գ. օր. աներևութին:
3. Գ. օր. յայնցանէ որ ոչն կարէր ճանաչել:
4. Գ. օր. ի քեն զքո թշնամիսն:
5. Գ. օր. խոստովանեցան եւ վայելեցին ի քում բարերարութեան:
6. Գ. օր. չունի ազատեա:
7. Գ. և Դ. օր. եւ հրամայեաց եղբարցն:
8. Գ. օր. կոչել զդահիճսն զի եկեսցեն արասցեն:
9. Գ. օր. ի նմանէ.

նոցա կապեցին զոտս և զձեռս սրբոյն ընդ խաչափայտին, բայց ոչ բևեռեցին ոչ զոտս և ոչ զձեռս[1], և ոչ հատին ինչ յանդամոց նորա, քանզի զայն իսկ պատուէր ընկալան յԱնթհիպատոսէն թողուլ զնա պրկեալ ի խաչին, զի ի գիշերին կերակուր լիցի շանց: Եւ բազմութեան եղբարցն շուրջ կային զպատաքելովն, զորոյ զթիւ նոցունց ոչ բաւեմք ասել. և այս ամենեցուն տեսեալ զզաշհիճն գնացեալս ի բաց, ոչինչ արարին նմա որպէս և այլ խաչեալքն չարչարէին[2], այլ ակն ունէին զի այլ ևս լուիցեն բանս ի սուրբ բերանոյ նորա: Եւ մատուցեալ Սարատակղեայ հարցանէր զնա և ասէր, զի՞ ժպտիս ծառայ Աստուծոյ Անդրէաս. քանզի ծաղրդ[3] քո մեզ սուգ է, և լամք և արտասուեմք զի ի քէն[4] մնացեալք լինիմք: Եւ Անդրէաս պատասխանի ետ նոցա. Ո՞չ ծիծաղեցայց որդեակ իմ Սարատակղէս ի վերայ ընդունայն մեքենայիցն Եգիատեայ, որով կարծէն զմեզ տանջել. քանզի ոչ երբեք հաւատաց եթէ օտար եմք ի նմանէ և ի նորին խորհրդոց. ոչ ունի ականջս լսելոյ, և եթէ ունէր, լսէր արդեօք, զի[5] անտանջելի է մարդս Յիսուսի, զի նմա ծանօթ է: Եւ զայս զամենայն ասացեալ, պատասխանի ետ ամենեցուն առ հասարակ և ասէ. արք[6] որ կայքդ առաջի իմ, ծերք և երիտասարդք, կանայք և մանկունք հանդերձ ծառայիւք, ամենեքեան որք կամիք լսել ինձ, եթէ զմահն կատարած կենաց, անցաւոր կեանս[7] համարիցիք լինել, ահա հրաժարիմ ի կենացս յայսցանէ. եթէ զմիաբանութիւն հոգւոյս և մարմնոյս ընդ միմեանս զնիցէք, և առիցէք եթէ յետ բաժանելոյն

1. Գ. օր. չունի ընդ խաչափայտին . . . զձեռս:
2. Գ. օր. չարչարեալ լինէին ի նոցանէ:
3. Գ. և Դ. օր. ծիծաղելդ:
4. Գ. և Դ. օր. յաւելուն որքդ:
5. Գ. օր. յաւելու ոչ գիտէ էր:
6. Գ. օր. արդ: Դ. օր. չունի:
7. Գ. և Դ. օր. կատարած անցաւոր կենացս համարիցիք:

ի մխմեանց այլ ոչ ևս եմք[1], անասունս և վայրենի գազանս հարկ է տալ ձեզ[2]. և եթէ զառժամանակեայ հեշտութիւնս սիրիցէք և զհետ սորին լինիցիք[3], և զաւ ի նոցանէ պտուղն չահիցիք, ուստակայ նմանէք որք յերևելիս միայն յուսացեալ են և ոչ յայլ ինչ. անգիտութեան և անուսմնութեան էք ծառայք. և եթէ առժամանակեայ գիշերային լուսոյ միտ դնիցէք, և յետ այսորիկ ոչ ինչ, ազգական էք գիշերոյս այսորիկ. և եթէ զերկրային կերակուրս միայն ճաշակիցէք[4], որ է յղփութիւն մարմնոյ և այլ զօրութիւն գոյացութեան արեան, միայն մարմնաւորք էք[5]. եթէ զմարմինդ անախտ կարծէք զայլ, և լինել բարերախտիկք, ապա երկրայինք էք իբրև զնոսա. և եթէ առժամանակեայ բարեկեցութիւնքդ ինչ[6] թուի ձեզ երանելի, առայգ թշնամիք[7] էք. և եթէ ամուսնութեան հեշտութիւնք և խառնակութիւնք[8] ուրախացուցանէ զձեզ, և որ ի նոցանէ ապաեղութիւնն է, լի ցաւովք[9] տրտմեցուցանէ զձեզ. և եթէ ծննդեան բազում[10] որդեաց ցանկանայցէք և որ ի նոցանէ ձանձրալի թշուառութիւնն ծնանիցի ձեզ, նեղեսցէ զձեզ. և եթէ զաւելատացութեան մեծութիւնն հեշտութեամբ սիրիցէք ապականութեամբն խլրով, նախատեսցէ զձեզ: Եւ զինչ օգուտ է ձեզ զարտաքին ստացուածս ստանալ և զձեզ ոչ. և կամ զինչ շահ լինիցի ձեզ յազգականաց ձերոց, յորժամ անձինք ձեր զերեալք[11] ցանկութեամբք տաժանցին. և զինչ հեշտութեան և որդեծնութեան ցանկալ յոր-

1. Գ. օր. եմ: Դ. օր իցեմ:
2. Դ. օր. պարտ է անասունս եւ վայրենի գազանս կոչել ըզձեզ: Դ. օր. պարտ է տալ զձեզ:
3. Գ և Դ. օր. զնորին զհետ երթայցէք:
4. Գ և Դ. օր. ճաշակիցիք:
5. Գ և Դ. օր. չունի միայն մարմնաւորք էք:
6. Գ և Դ. օր. արտաքին:
7. Գ և Դ. օր. թշնամականք:
8. Դ. օր. չունի եւ խառնակութիւնք:
9. Գ և Դ. օր. լիցի ցաւք (Դ. օր. եւ տրտմեցուցէ):
10. Դ. օր. բազմորդութեան:
11. Դ. օր. գրաւեալք:

ժամ յետոյ բաժանել ունիմք ես ի միմեանց. քանզի և ոչ գիտէ ոք զինչ ածէ. կամ ո՞վ կնոջ իւրում խնամ տանիցի զբաղեալ տափանօք ցանկութեան. կամ զի՞նչ խնամ այն[1] իցէ որ յարտաքին տապացուածոցն լինիցի յորմէ ակամայ իսկ տոյգ լինիցիմք զրկեալք: Այլ[2] աղաչեմ զամենեսեան զձեզ ի բաց դիցուք զցաւելի[3] իրս կենցաղոյս այսորիկ, զմոլար և զամբարտաւան և զգուզնաքեայ զապականացու կեանս[4], որ հեշտութեան է սիրելի, և տրտմութեան ընդունիչ, և անյագութեան գրաւի, և չար ցանկութեանց ծնիչ, և ժամանակաց ծառայ[5], և արբեցութեան գտակ, և չուայտութեան ընդունակ, արծաթսիրութեան գտիչ և բարկութեան ազդակից, նենգութեան ասպարէզ և ապանման մարտակից, ցանկութեանց[6] կարապետ և բոլոր իսկ թշնամութեան[7] առաջնորդ, ամուսնութեան յառաջախօս և չնութեան[8] իշխիչ. Նախանձու միջնորդ[9] և ապանման ցուցիչ: Աղաչեմ[10] զձեզ զընդունայն իրս[11] փառացս այսորիկ ի բաց թողէք, որ իմ աղագաւ ժողովեալ եկիք յայս տեղի, և փութացարուք հասանել իմոյ անձինս որ ձեպեալս է գնալ ի յաւիտենականն, որ ի վերն է քան զոր լսեմք և իմանամք[12], յանձառելին, ի վեր քան զմարմին, ի վեր քան զդատն հեշտութիւն, ի վեր քան զհեծութիւն[13] և զտրտմութիւն և քան զամենայն կարիս[14] ցաւոց: Եթէ յանկարծ տեսանէիք և

1. Գ. օր. ի խնամոյն. Դ. օր. ի խնամոցն:
2. Գ և Դ. օր. արդ:
3. Գ. օր. զցաւալից: Դ. օր. զցաւալի:
4. Դ. օր. յաւելու աշխարհիս:
5. Դ. օր. չունի ժամանակաց ծառայ:
6. Գ և Դ. օր. թշնամութեան:
7. Գ և Դ. օր. ցանկութեանց:
8. Գ. օր. թշնամութեանց: Դ. օր. չուայտութեան:
9. Գ և Դ. օր. առաջնորդ:
10. Գ և Դ. օր. Արդ աղաչեմ:
11. Գ. օր. զամենայն իմ: Դ. օր. զամենայն իրս:
12. Գ և Դ. օր. տեսանեմք: Դ. օր. չունի յանձառելին ի վեր քան զմարմին, ի վեր քան զդատն:
13. Գ և Դ. օր. չունին հեծութիւն:
14. Գ. օր. կարգս: Դ. օր. ազգս:

դուք այժմ վասն որոյ առեմս[1], մօտք աչաց ձերոց, և զայլք զհետ իմ սերտ սիրոյս[2] որ ընդ ձեզ, և ի միտ առնուիք զիմ զցաւս վասն որոյ այժմս խօսիմս ընդ ձեզ. և տայք զբաւական զմխոդ[3], զի զայն եւ ընդ իս հաղորդեցուցանէի: Արկէք զձեզ ընդ իմով վշտօքս, և բացէք զականջս ձեր[4] լսել ինձ զոր առեմս, և սրբեցէք զմիտս ձեր իմանալ զոր կամիմս. և միանգամայն պարզաբար ի ժամանակացս[5] առաւ փախերուք, և ընդ իս լծակից լինել հետևեցարուք. այլ և այժմ քաջ գիտեմ զձեզ եթէ ոչ ատունկանիցէք յիմոց բանիցս, արդարև հեզս տեսանեմ զձեզ որպէս և կամիմս. ի բաց լինել ձեզ յարտաքին[6] կերպարանաց զի ներքինս[7] մեր միաբան լիցի: Ողջունեմ զձեզ շնորհօքն Աստուծոյ և սիրովն որ առ նա, և տաւել ձերով միաբանութեամբդ[8] որ առ միմեանս, հեռանալ ձեզ ի մեռատկարացն և զիմել ի նա[9] և ի բարին և ի միամտութիւնն որ առ նա է և ի միաբանութիւնն որ ի սոյն. զի և այլ մարդիկ քաջալերեսցին ձեօք և փութասցին ճանաչել զարարիչն[10] Աստուած: Երթամ յառաջագոյն պատրաստեմ ձեզ զանդ[11] ճանապարհն, և այնոքիկ որ ընդ մեզ հաղորդք իցեն սուրբ հաւատովք և գիտութեամբք, և սիրով զինքեանս իցեն պարապեալ[12], այնպիսիքն զհուրն մեռուցանեն, և զխաւարն փախուցանեն, զհնոցն շիջուցանեն, և զորդն սպանանեն, և սպառնալին կարեն, զգետս ըմբերանեն, զիշխանական զօ-

1. Դ. օր. վասն այսր մօտք:
2. Գ և Դ. օր. իմոյ սերտ սիրոյ.
3. Դ. օր. չունի եւ տայք (Գ. օր. տայիք) զբաւական ըզմխոդ:
4. Գ և Դ. օր. լսելեաց ձերոց:
5. Դ. օր չունի պարզաբար: Գ և Դ. օր. ի ժամանակէիցս:
6. Դ. օր. յերկրային.
7. Գ և Դ. օր. ներքին մարդն (Դ. օր. մի անարգ լիցի):
8. Գ և Դ. օր. միակամութեամբք:
9. Գ և Դ. օր. ի լաւն:
10. Գ և Դ. օր. զճշմարիտն:
11. Գ և Դ. օր. զանտի:
12. Դ. օր. պատրաստեալ:

ութիւնս պապանձեցուցանեն և լուծանեն[1], զբան-տարկուն ընթադրեն, զատանոյ հալածեն, զչարութիւն նորա որոշեն, և մերադոյն են քան զամենայն հիւթս։ Իսկ որք ոչ ունին զսէրն Աստուծոյ, այլ հեշտութեամբքն անպատողակք վարին հանդերձ այլանդակ[2] և օտար վարուք, ոչ ևս ակն ունելով փոփոխման կենացս, յետ լուծանելոյ կենցաղոյս այսորիկ, ի վերայ այնպիսեացն այս ամենայն բորբոքի և լուցանի, շարժի և գայ, ընթանայ և կաւի, այրէ և ըմբռնէ, տիրէ և տանջէ և բոցակէզ առնէ անշէջ հրովն, և պաշարէ[3] զնոսա և ոչ թողու զնոսա և ոչ մերանայ ի նոցանէ և ոչ երկնչի ի նոցանէ և ոչ ցածնու, այլ այրէ բռնաբար և ոչ մերժի[4]. քանզի ամենեքեան և որ նման նոցին են անհաւատք և օտարացեալք յԱստուծոյ, պատահէ այս. և արդարք ուրախ լինին և ցնծան, և ծաղր առնեն և հանգչին[5]։ Արդ ձեզ ով մարդիկ, յերկոցունց մասանց յայսցանէ ի ձեր ձեռս է առնելն և ոչ։ Եւ լուեալ բազմութեանն զայս ամենայն ի սրբոյն Անդրէ[6], քաղցրացաւ և հաճոյ էր վարդապետութիւն առաքելոյն, և ոչ կամէին գնալ ի տեղւոջէն, և երանելին ևս յորդորէր[7] խօսել ընդ նոսա քան զոր ասացն։ Եւ այսպէս խօսեցաւ և խրատեաց զնոսա բանին զերիս տիւս և զերիս գիշերս, և ոչ ոք ի նոցանէ ամենեքին մեկնէր ի նմանէ մինչև ի չորրորդ օրն, տեսանելով զքաջութիւնն որ ի նմա և զանփոփոխելի միտսն և զբազմութիւն բանիցն, և զքաղցր յորդորումն նորա, և զհաստատութիւն և զպարկեշտութիւն ոգ-

1. Գ և Դ. օր. յաւելուն զիշխանութիւնս կապեն։
2. Գ. օր. այլըկալ։
3. Գ. օր. անշէք հուրն եւ պաշտէ։ Դ. օր. անշէք հուրն պաշարէ։
4. Գ. օր. անցանէ։
5. Գ. օր. ուրախ լինին եւ ցընծալ եւ հանգչին։ Դ. օր. ուրախ լինին եւ խնդալ եւ հանգչին յարքայութեան։
6. Գ. օր. առաքելոյն։ Դ. օր. Անդրէաս։
7. Գ. օր. եւս առաւել յորդորէր ի հաւատս։

ւոյն, և զանխալ[1] միտս Նորա, և զգեղեցիկ զիրս բանիցն, զայրացեալ ամենեքեան փութային գալ յատեանն: Եւ մինչդեռ Նստէր իշխանն սկսան աղաղակել, զի՞նչ են դատաստանք քո Անթիպատրէ, չարաչար տանջեցեր, չարաչար անիրաւեցար. անտուրք է ատեանդ քո. զի՞նչ վնաս գտաւ յանէղ յայդմանէ[2], զի՞նչ չար գործեաց. քաղաքս խռովեալ է, զամենեսեան զմեզ տրտմեցուցեր. մի՛ մատներ զկայսերական քաղաքս. շնորհեա Աքայեցւոցս[3] զայրդ արդար, շնորհեա մեզ զայրդ աստուածապաշտ. մի՛ ապաՆաներ զայրդ աստուածազգեաց. մի՛ խորհիր չար անդ[4] բարեպաշտի, զի այս չորք աւուրք կախեալ կայ կենդանի ոչ ինչ ճաշակեալ, զի ջամբեաց և յղոյց զմեզ բանիւք կենաց. իջո զայրդ և ամենեքեան իմաստասիրեցաւք[5]. լոյծ զպարկեշտ[6], զի ամենայն ոք ի Նմանէ[7] ողորմութիւն գտեն: Իբրև չլուեալ անէր Եգիպտէս, այլ յառաջ Նշանացի անէր ձեռամբն բազմութեանն մեկնել[8] յիւրաքանչիւր տուն: Իսկ Նոցա զայրագնեալ բարկութեամբ յարձակեցան ի վերայ Նորա, քանզի էր թիւ մարդկանն իբրև բիւրուց երկու: Իբրև ետես Անթիպատոս զնոսա բարկացեալ ի վերայ Նորա, երկուցեալ զի մի՛ չարաչար մեռցի ի Նոցանէ, յարուցեալ յատենէն գնաց ընդ Նոսա խոստովանելով[9] Նոցա արձակել զերանելին Անդրէաս: Եւ ընթանային պատմել զայն առաքելոյն, և զպատճառս իրացն վասն որոյ եկն իշխանն: Եւ խնդացեալ բազմութեանն զի համբերձեալ էր Անդրէաս արձակել. և եկեալ ի տեղին յայն

1. Գ. օր զանոխակալ միտսն:
2. Գ. և Դ. օր. յանեղ յայդմիկ:
3 Գ. օր. քաղաքացեացս:
4. Գ. օր. յաւելու արդարոյ:
5. Գ. և Դ. օր. իմաստնացուք:
6. Գ. օր. զպարկեշտդ: Դ. օր. զպարկեշտն:
7. Գ և Դ. օր. ամենայն Աքայեա ողորմութիւն:
8. Դ. օր. Եւ իբրև ոչ էր լսելոց Եգիպտոս բանից նոցա հրամայեաց նոցա գնալ:
9. Գ և Դ. օր. խոստանալով:

եգիպտեայ և եղբարցն ամենեցուն հանդերձ Մաքսիղիմաւ[1] կնաւ իշխանին, էին ի խնդութեան մեծի:

Եւ լուեալ որբոյն ասաց. Ո՛վ բազում ծուլութիւն այնոցիկ որք լինէին աշակերտեցան. ո՛վ յայտնելոյ ձեզ բազում խորհրդածութիւն. ո՛վ որքան խօսեցաք մինչև ցայժմ, և ոչ հաւանեցայքն[2] զմերն. ո՛վ որչափ սքանչելիք են զի յերկրաւորացս փախիցեն, այլ տաւել յայնոսիկ հարեալ կան. ո՛վ քանի բնաւորութիւն[3] յաղագս մարմնականացս տացան, և առաւել զդոյն կամին. ո՛վ քանիցս անգամ աղաչեցի զի յաղտեղի ամլորութեանցն հանից զնոսա, այլ առաւել յոչինչն յորդորեցան, զի՞նչ է բազումմիտութիւն[4] որ առ մարմինս. և զի՞նչ զբաղումն որ ի Նմս. զի՞նչ է ցանկութիւնն որ ընդ Նմին սերմանեցաւ. զի՞նչ որ ի Նմայն է. զի՞նչ է ամլորութիւնն չար. զի՞նչ աղտեղի կատակքն[5]. դարձեալ զիս կամիցիք որ իմդ էք, քաղաքավարել ընդ այլոց. դարձեալ զի՞ս կամիցիք, զի յապականելիս այսրէն դարձայց. և եթէ գիտացեալ էր ձեր զի ի կապանաց լուծայ և ի ձէնջ[6] կապեցայ, փութացեալ էր և ի ձէնջ[7] ձեր և բազում կապանաց լուծանիլ և ընդ Իմումս կալիլ:

Եթէ գիտացեալ էիք ի բազումսն զմի կապանս, և դուք բազումքդ զմի լուծանելով ազատէիք. եթէ լացեալ[8] իցէ ձեր ի վերայ կապանաց Նորա, զգայիք վարվառակի զնա լուծանել. եթէ տեսեալ էր ձեր զայն որ ոչն էր ինքեամբ կապեալ, լուծանէիք դուք զձեզ, զնա կապեցի[9]. եթէ գիտէիք դուք զնորա կապանսն, ձեզէն զինքեանս լուծանէիք, զի ընդ Նմա կայիցիք[10], և

1. Գ. և Դ. օր Մաքսիմիղաւ:
2. Դ. օր. հաւանեցուցայք զմերս:
3. Գ. օր. ի բնաւորութիւն: Դ. օր. բնորութիւն:
4. Գ. և Դ. օր. սիրելութիւն:
5. Գ. և Դ. օր. կատականքն:
6. Գ. և Դ. օր. ընդ ձեզ:
7. Գ. և Դ. օր. չունին ի ձենջ:
8. Դ. օր. երե լուիցեք ո՞վ եր ձեր: Դ. օր. չունի երե լացեալ... լուծանել:
9. Դ. օր. զի զնա կապեցի: Դ. օր. զի ի նա կապէիք:
10. Դ. օր. պնդիցիք:

զայս ես տացի ձեզ, և զոր ասեմ քաջ գիտեմ զի եղիցի. քանզի կամիմ զձեզ կապել ընդ իս, և զիս ազատել արձակեցից յամենայն միաբանութենէդ ձերմէ, զի երթայց առ այն որ ի վերն[1] է քան զամենեսեան: Արդ քանզի յաւթեամբ մօտ կայ առ իս Եգիպտէս և պաշարեալ[2] կամի զորդեակս իմ, և ես զոր ոչ տացի նմա յայնժամ, ի լուծանելոյ ժամուս տացից. յի՞նչ պատճառս դարձեալ եկեալ ես առ մեզ ով Եգիպտէս, է՞ր աղագաւ օտարացեալդ ի մէնջ մօտիս առ մեզ, զի՞նչ կամեցար յանդգնիլ, զի՞նչ մեքենայել, ո՞ւր զիս յուղարկել. ասեմ քեզ. լոյծ զիս զալարդ քո խրրև զղջացեալ, քանզի ոչ ճշմարտութեամբ է գալդ[3] քո Եգիպտէս. ոչ եղէց քեզ կամակից: Եթէ զամենայն ինչս քո և զկեանս ինձ տացես, և եթէ զխաղլին իսկ տաիցես եթէ քո եմ, ոչ հաւատամ քեզ. լուծանե՞ս Անթհիպատէ զկապեալս, լուծանե՞ս զփախուցեալս, լուծանե՞ս զապատացեալս[4], լուծանե՞ս զծանօթացեալս ի յազգէն քումմէ որ[5] ողորմութիւն եղիտ, որ ոչ քո են, այլ օտարացեալ են ի քէն որ նմայն երևեցաւ միայնոյ[6]. զնա ունիմ հանապազ, ընդ նմա եմ քաղաքակից, յանթիւ յաւեանանն[7], առ նա երթամ, առ նա փութամ. որ և զքեզդ իսկ եղոյց ինձ, որ և տայցն ինձ: Մտա դիր Եգիպտէ[8] նորին պարգևացն, մի երկեցուցանէ զքեզ զմնեայն այն, մի զքեզ ունել կարծիցէ, քանզի եաես[9] թշնամին քո ժանգն և պատրողն, ապականիչն, չարախօսն, չարաթոյն[10], չարայուժ, թշնա-

1. Գ. և Դ. օր. որ ի վեր քան զամենեսեան եղեւ եւ քան զամենայն ի վեր է:
2. Գ. և Դ. օր. պաշարել:
3. Գ. և Դ. օր. զղջումն:
4. Գ. և Դ. օր. զաշխատեալս:
5. Դ. օր. յաւելու ինեւ:
6. Դ. օր. յաւելու զնա ունիմ միայն:
7. Գ. օր. յաւիտեան: Դ. օր. յաւիտենականն:
8. Դ. օր. Եգիպտեայ եւ նորին: Դ. օր. Եգիպտոս այնոցիկ:
9. Գ. և Դ. օր. գիտեմ թշնամի է քո:
10. Գ. և Դ. օր. յաւելուն մօջին, չարայուշն, այպանօղն:

մանիչ, չոգաքորթ[1], գժնդակ, բարկացող, անհամբեր, հանդերձ ամենայն նենգաւոր և խիստ չար գործովքն։ Մինչ գիտիցե՞ս դու թէ իմ յորդորելով զքեզ վճարեմ ի քէն. և գիտեմ՝[2] զի հարկանես ըզքեզ և սգաս. ո՞ առ ո՞վ ասես[3], Անթիպատէ. առ նա երթամ որ ի վերն է քան զամենայն. քանզի լացցես և հարցես զքեզ, կրճեցես[4] զատամունս քո, և արտմեսցես և կոծեսցիս, և թողցես զզօրմելի կեանս քո, և պատրաստեսցիս ընդ ազգականի[5] քում ծախու, զոր և այժմ իսկ տեսանեմ զնա ալեկոծեալ բարկութեամբ, զի նմանի ձեզ և աշխարհի, զի ի ձեռն իմ աւանդեցաւ ձեզ վայելուչ և արդար[6] և սուրբ և ճշմարիտ աստուածային բանի շնորհն ամենայն բարութեամբ լցեալ։

Եւ զայս լուեալ իշխանին կայր հիացեալ. և դարձեալ տեսեալ զնա Անդրէաս ասէ. Ո՞ որ[7] ամենայն բնութեանց ցուցեր զքեզ. ո՛[8] որ ոչ ինչ ընդունայն եղև քեզ, այլ հանդերձեալսն ապագակէ. ո որ ի սկզբանէ երևի, և յաներևոյթն լուծանի. օրինակքն աշեղք. որ լինիք ձկտեալք[9] ի բնութիւն ազգակցին ձերոյ. ո որչափ ցուցաւ[10], զի զոր ցանկայքն[11] տեսցուք[12]. ո որքան երկայնեայց բանս, զի զազգակիցսն թշնամանեացէ. ո որ[13] չարչարեցաւն, զի որ իցէն ցուցցի, քանզի՞ս անգամ համբերեաց, զի մի՛ ի նմանէ յանդիմանեսցի. որքան աշխատեցաւ[14], զի զառ

1. Գ և Դ. օր. յաւելուն դիւր։
2. Գ և Դ. օր. գիտեմ։
3. Գ և Դ. օր. ասեմ։
4. Դ. օր. կրճտեցես։
5. Գ և Դ. օր. ազգակցին։
6. Դ. օր. վայելուչ եւ ճշմարիտ բարի։
7. Գ և Դ. օր. յաւելուն առաքոյ։
8. Դ. օր. չունի ո՛ որ... ապագակէ։
9. Դ. օր. ձգեալք։
10. Գ. օր. ո որչափ չցուցաւ։ Դ. օր. ո որ ոչ ցուցաւ։
11. Գ և Դ. օր. ցանկացաքն։
12. Դ. օր. յաւելու այս որպէսի ինչ եղեւ զի զմեզ ծանիցուք։
13. Դ. օր. ո՛ որքան թշնամանեցաւ եւ չարչարեցաւ
14. Դ. օր. նախատեցաւ։

ի նմանէն իմացի. զի՞նչ է իմացականն[1], ոչ ինչ է ընդ վայր, այլ ամենայն ինչ օրինակաւ եղև. այլ այժմ կացեր տեսանել զմեզ Եգիպտէս իբրև զհեղ և զցած. և զի զայս չունիս ով իշխան. իշխե՞ս իբրև զօրաւոր[2]. քանզի և ես և մեր նմանիք ի այն[3] փութամք թողով զքեզ, զի կացցես որպէս և ես. և զոր ինչ ոչ գիտես դու վասն քո, դիպեսցի քեզ:

Իսկ նա յանդգնէր մերձենալ ի վայրն զի լուծցէ զԱնդրէաս, զի քաղաքն ամենայն խռովեալ էր վասն նորա: Իսկ սուրբն Անդրէաս ասաց. Որ ի քո փայտիս վերայ կախեալ կամ ես Անդրէաս, մի եղիցի ինձ ի սմանէ լուծանիլ Տէր. և որ ի քո խորհրդածութեանս կամ, մի՛ մատներ զմեզ անամօթ[4] բանսարկուին. Յիսուս որ քոյին շնորհօքդ կախեցայ[5], հակառակորդն մի լուծցէ զիս. Հայր սուրբ որ ծանեայ զքո մեծութիւնդ, փոքրն մի խոնարհեցուսցէ զիս. այլ ընկալ զիս Տէր որում ես ցանկացայ, զոր ես սիրեցի, զոր ես գիտեմ[6], զոր ունէիդ իսկ, որոյ եմդ իսկ՝ ընկալ զիս, որպէս զի և իմովս վախճանիւս եղիցի սոցա միաբանակցացս իմոց ժողով հանգստեան ի քումէ մեծութենէդ[7]: Եւ ասացեալ զայս, առաւել ևս փառաւորեալ զՏէր, աւանդեաց զհոգին ի վերայ բազում զթութեանց[8] խաչին:

Եւ յետ վախճանի երանելւոյն, Մաքսիմիլեայ կին իշխանին հանդերձ Ստրատոկղեաւ իջուցեալ զմարմին երանելի առաքելոյն, և իբրև երեկոյ եղև հարկաւոր խնամով պատեալ և թաղեալ ի սուրբ և ի գեղեցիկ[9] գերեզմանի: Եւ էր ի բաց մեկնեալ յեգիպտէ վասն վայրենի անձին նորա և անօրէն կրօ-

1. Գ. և Դ. օր. յաւելուն զի՞նչ ցուցականն, ոչ ինչ է ընդունայն
2. Դ. օր. զմտաւոր:
3. Դ. օր. ի մերն փութամք ճանապարհ
4. Դ. օր. անօրէն:
5. Դ. օր. յաւելու անամօթ:
6. Դ. օր. սիրեմ:
7. Դ. օր. ի քում մեծութեանդ: Դ. օր. ի քումմէ հանգստենէդ եւ ի քումմէ մեծութենէդ:
8. Դ. օր. զոճութեանց: Դ. օր. պճղութեանցն իշխոց ի փառս Աստուծոյ.
9. Դ. օր. ի նոր.

նիցն, և յայնմ հետէ ոչ կարէր[1] անսալ ննջաւոր[2] բանից նորա, զի մի ի կեղծաւորէն[3] խաբեսցի, այլ յանձն առեալ զպարկեշտ և զհեզ[4] վարս սիրողն Աստուծոյ, շնորհօքն Քրիստոսի[5] հանդերձ երանելի եղբարբքն բնակէր. զոր բազում անգամ աղաչեցեալ յԵգիպտեայ, խոստովանելով[6] զի իշխեսցէ ամենայն կենաց իւրոց, և ոչ կարացեալ զնա հաւանեցուցանել, ի գիշերի յարուցեալ գաղտ յիւրոցն ամենեցուն, ելեալ ի բարձրութիւն ապարանիցն[7] և ընկեցեալ զինքն ի խոնարհ, չարաչար մահուամբ մեռանէր[8]:

Իսկ Սարապիոնէս որ էր եղբայր նորա ըստ մարմնոյ, ոչ ինչ կամեցաւ ի մնացելոյ իրս ինչ նորա մերձենալ, քանզի անորդի մեռեալն այն[9] վախճանեցաւ. զայս ասելով՝ Եգիպտէ, ինչք քո ընդ քեզ եղիցի ի կորուստ, այլ ես զՅիսուս միայն սիրեցից: Քանզի ունէր եղբայր նորա բազմութիւն ստացուածոց ներքոյ և արտաքոյ, և զարշելի համարեալ զամենայնն ասելով, թէ ոչ պիտոյ է ինձ այդ ժառանգութիւն, զի այդ ամենայն բանսարկուին մասն է. այլ ինձ եղիցի յայսմհետէ խոկալ յերանելի և ի ցանկալի պատուիրանս Տեառն որ անճառք են և անհասանելիք: Եւ զլուխ[10] ինձ կատարածի այն լիցի զոր և աղօթս առնեմ ի նմին կալ մինչև իսպառ, երևելեաց և աներևութից՝ որ միայն յատուկ մնաց է յայտնի, զի հաւատակիցք իմ զայն ընկալցին հազորդութեամբ[11] և միաբանութեամբ սուրբ աղօթից. զի բացցէ Յիսուս զամենեցուն ականջս առ ի լսել և ընդունել զշնորհս պարգևաց նորա յաւիտենից յաւիտեանս. ամէն:

1. Գ. և Դ. օր. կամէր·
2. Դ. օր. անօրէն բանից ննջաւորին:
3. Գ. օր. ի կեղծաւորութենէն
4. Գ. օր. զսուրբ:
5. Գ. օր. սիրողն Քրիստոսի շնորհօք հոգւոյն Դ. օր. սիրողն Քրիստոսի:
6. Դ. օր. աղաչեալ Գ. և Դ. օր. Եգիպտեայ խոստանալով:
7. Դ. օր. պարսպացն:
8. Գ. օր. սատակէր:
9. Դ. օր. չունի մեռեալն այն:
10. Դ. օր. գլուխ ամենայն կատարածին.
11. Դ. օր. խաղաղութեամբ:

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՑՆ ԱՆԴՐԷԻ ԵՒ ՄԱԹԷՈՍԻ

## ԹԷ ՈՐՊԷՍ ԳՆԱՑԻՆ ՅԱՇԽԱՐՀՆ ՄԱՐԴԱԿԵՐԱՑՆ

*Յորժամ առին հրաման սուրբ առաքեալքն քարո-
զել ընդ ամենայն աշխարհս զաւետարանն Քրիստոսի,
և մկրտել զամենայն հեթանոս յանուն Հօր և Որդ-
ւոյ և Հոգւոյն սրբոյ, եհաս վիճակն Մատթէոսի եր-
թալ յաշխարհն մարդակերաց, զոր առեն ոմանք թէ
Մինուպն իցէ, ի ծովեզերն Պոնտոսի։ Եւ էին բնա-
կիչք քաղաքին այնորիկ մարդակերք, որ ուտէին
զմեռեալս իւրեանց, և զօրս կալէին թմբրադե-
ղաւք հանէին զմարդ ի խելաց, և թափէին ի մը-
տաց, զորոց հանէին զաչս և դարմանէին զաւուրս
երեսուն, և ապա զենուին զնոսա, զմիսն ուտէին և
զարիւնն ըմպէին. եղանէին ի ճանապարհս ծովու և
ցամաքու, և որսացեալ զմարդիկ այսպէս առնէին.
և էր այն սովորութիւն նոցա ոչ վարել և ոչ վաս-
տակել։*

*Եւ յորժամ եմուտ Մատթէոս ի քաղաքն, կալան
զնա որպէս զօտար այր, և տարեալ ի բանտն ար-
բուցին զթմբրադեղն և խաւարեցուցին զաչսն։ Իսկ
նա շնորհօքն Քրիստոսի ոչ ի մտացն անկաւ և ոչ ի
խելացն թափեցաւ և ոչ յաչացն կուրացաւ. այլ աղօ-
թէր զուարթ սրտիւ և գոհանալով զԱստուած փա-
ռաւորէր, և հայցէր ի նմանէ զօգնութիւն և զփըր-
կութիւն անձին իւրոյ։ Եւ ձայն եղև առ նա յերկ-
նից և ասէր. Մի երկնչիր Մաթէ, զի ես ընդ քեզ
եմ, համբերեա աւուրս քսան և եօթն, և ես առա-
քեցից առ քեզ զառաքեալն Անդրէաս, որ հանէ ըզ-
քեզ այտի և զմոլորեալ մարդիկդ դարձուցանէ առ*

խ։ Եւ յետ քան և եօթն աւուրն երևեցաւ Տէրն Անդրէի, և ասէ. Արի և գնա՛ յերկիրն մարդակերաց, և հան զՄատթէոս ի բանտէն։

Իսկ Անդրէաս ծանր համարեցաւ զհրամայեալն նմա ի Տեառնէ, վասն ծերութեան և անկարութեան մարմնոյն։ Եւ երրորդ անգամ երևեցաւ նմա Տէրն, և նա հրաժարեալ ի գնալոյն։ Եւ ապա չորրորդ անգամ երևեցաւ Տէր Անդրէի, և ասաց. Ե՛րթ գնա՛ յօգնութիւն Մատթէի և մի՛ յապաղեր։ Եւ նա յարուցեալ գնաց աշակերտօքն հանդերձ ի ծովեզերն, և եգիտ անդ նաւ մի զոր Տէր պատրաստեաց, և ինքն Քրիստոս երևեցաւ ի կերպարանս նաւապետի, և ա-բար այլ հրեշտակս նաւավարս։ Եւ տեսեալ Անդրէի զնաւն և զնաւապետն նաւավարօքն և ոչ ծանեաւ զնոսա, և հարցեալ զնոսա թէ, ո՞ւր կամիք երթալ. և նոքա ասեն, յերկիրն մարդակերաց։ Ասաց Անդրէաս. Առէք և զմեզ ընդ ձեզ։ Ասէ նաւապետն. Տուք զվարձս նաւինս։ Ասէ Անդրէաս. Ոչ նաւիդ վարձ ունիմք և ոչ հաց որ ուտեմք։ Ասէ նաւապետն. Եւ ո՞րպէս երթայք։ Ասէ Անդրէաս. Ես աշակերտ եմ Յիսուսի Քրիստոսի, Որդւոյն Աստուծոյ, և հրաման ունիմ ի վարդապետէն իմմէ զի ոչ ինչ առից զհետ իմ, ոչ հաց և ոչ դրամ։ Ասէ նաւապետն. (վասն) սուրբ հրամանաց վարդապետին քո, առից զքեզ ի նաւս, բայց զաշակերտաց քոց դու հոգա զկերակուր։ Ասէ Անդրէաս. Եւ սոքա եւս ունին զայս պատուէր ի Տեառնէ մերմէ, ոչ ինչ բառնալ ընդ ինքեանս։ Ասէ նաւապետն. Վասն հրամանաց վարդապետին ձերոյ, եկայք մտէք ի նաւս, և տարայց զձեզ ուր և կամիք, և թէ քաղցենայք և ծարաւիք տաց ձեզ հաց և ջուր։ Եւ մտեալ Անդրէաս ի նաւն և նստաւ։ Ասէ նաւապետն. Տուր զրոյց ի վարդապետէն քումմէ թէ որպիսի մարդ էր նա և կամ զինչ արար ի վերայ երկրի։ Եւ Անդրէաս սկսաւ պատմել նաւապետին և նաւավարացն զամենայն սքանչելիսն զոր արար Քրիստոս։ Ասէ նաւապետն. Դու տեսե՞ր զնա, եթէ յայլոց լուար վասն նորա։ Ասէ Անդրէաս. Այո՛, ես

շրջեցայ ընդ նմա երեք ամ և չորս ամիս, կերայ և արբայ ընդ նմա, և բազում անգամ բերան ընդ բերան խօսեցայ ընդ նմա։ Եւ առաջին աշակերտ եմ ես նորա, եղբայր Պետրոսի գլխաւորի առաքելոյն։

Եւ մինչդեռ խօսէրն Անդրէաս, ննջեաց, և զարթուցեալ գտաւ ի դուռն քաղաքին. և ապա գիտացեալ Անդրէաս, թէ այն որ ի նաւին էր՝ Տէրն էր հրեշտակօքն. և գոհութեամբ փառս ետ Աստուծոյ։

Յայնժամ երևեցաւ Տէրն նմա ի կերպարանս գեղեցիկ մանկան, և ասաց նմա յառաջագոյն զոր ինչ համբերելոց էին նմա փորձանք ի գազանաբարոյ մարդկանէն, և ապա յետ այնորիկ դարձուցանել զնոսա յաստուածգիտութիւն։ Եւ ի մտանելն Անդրէի ի քաղաքն, գնաց ի բանտն ուր էր Մաթէոսն, և աղօթիւքն Անդրէի եղեն պահապանքն իբրև զմեռեալս, և ինքնին բացաւ դուռն բանտին, և մտեալ արձակեաց զՄաթէոս աշակերտօքն ի բանտէն։ Եւ առաքեաց զնոսա ի լեառն ուր էր առաքեալն Պետրոս. և մնացեալ Անդրէաս ի ներքսագոյն բանտն և ետես անդ արս բազումս մերկս և կոյրս և ընդվայրախօսս, որք ուտէին զխոտ իբրև զանասունս։ Եւ բախեալ ըզկուրծս իւր ելաց ի վերայ նոցա, և ձեռն եդեալ կարգաց զանունն Քրիստոսի, և նոյնժամայն բացան աչք և միտք մոլորեալ արանցն, և եհան զնոսա արտաքոյ քաղաքին, և անկեաց անդ զգաւազանն իւր, որ առժամայն արմատացաւ և պտղաբերեաց թուզ։ Եւ ասաց նոցա Անդրէաս ուտել զպտուղ ծառոյն և մնալ ի տեղւոջն և անսալ նմա։ Եւ էին արք երկուհարիւր և ինն, և կանայք քառասուն և ութ, զորս ազատեաց ի մահուանէն և լուսաւորեաց զամենեսեան հոգւով և մարմնով. և որչափ ուտէին ի թզոյն, ևս քան զևս շատանայր պտուղն։

Եւ եմուտ Անդրէաս ի միւս բանտն, և եգիտ ի նմա հնձանս յորում ժողովէին զարիւնս մարդկան և ըմպէին. ետես և զդահիճան որք ունէին զսուրս ի ձեռս իւրեանց և յուզէին զմարդիկն զորս կամէին զենուլ, և ոչ գտանէին։ Իբրև տեսին զԱն-

դրէաս զարհուրեցան և անկաւ սուրն ի ձեռաց նոցա. և սկսան ողբալ և ասեն. Զի՞նչ արասցուք, զի մեռանիմք ի սովու: Եւ կալեալ այր մի ծեր և կամէին զենուլ, և նա ասէր. Ահա ունիմ որդի մի երիտասարդ, զէր և զեղեցիկ, զնա առեալ զենէք և մի զիս. Նոյնպէս և պառաւ մի տայր զդուստր իւր ի զենումն: Իսկ Անդրէաս կայր հիացեալ ընդ զազանաբարոյ միտս նոցա, և աղաչէր զԱստուած տալ նոցա հոգի զգաստութեան:

Յայնժամ երևեցաւ սատանայ իշխանաց քաղաքին և ասէ. Վա՛յ ձեզ և եղուկ կենաց ձերոց, զի մեռանիք ի սովու. արդ ունկն դիք բանից բերանոյ իմոյ, զի խրատ մի տամ ձեզ, եթէ կամիք որ ապրիք, խընդրեցէք զօտար այրն որ եմուտ ի քաղաքս և փախոյց զբանտեալս և զպատրաստեալս ձեր ի զենումն, զնա կալարուք և սպանէք, քանզի զդահիճն ցնորեցոյց և զպատրաստեալս փախոյց: Եւ Անդրէաս կայր և տեսանէր զսատանայ, և լսէր զինչ խօսէր. բայց սատանայ զԱնդրէաս ոչ տեսանէր, այլ զձայնն միայն լսէր, նոյնպէս և մարդիկն ոչ կարէին տեսանել, այլ զձայնն միայն լսէին որ ազօթէր և սաստէր սատանայի:

Յայնժամ հրամայեաց Տէր Անդրէի, և երևեցաւ նոցա, որ կալան զնա և կապեցին զոտիցն պարան, և քարշեցին ընդ փողոցս և ընդ հրապարակս քաղաքին զաւուրս երիս, մինչև կտորեցան ամենայն ոսկերք նորա և հեղաւ բազում արիւն ի մարմնոյն: Եւ Անդրէաս աղաղակեաց առ Տէր, և նոյնժամայն տեսեալ ծառս բուսեալս ի տեղւոջն ուր հեղաւ սուրբ արիւն նորա, լի պտղովք, ընդ որ յոյժ ուրախացեալ, և առ ոչ ինչ համարեցաւ զչարչարանս, և այնպէս տարան արկին զնա ի բանտ: Եւ իջեալ Տէրն ի բանտին, ողջացոյց զամենայն վէրս նորա, և ասաց նմա. Քաջալերեաց և մի երկնչիր, զի ես ընդ քեզ եմ: Եւ ի վաղիւն հանեալ զնա ի բանտէն, և սկսան չարչարել: Եւ էր ի մէջ քաղաքին բարձր բագին մի քարեայ, զոր տեսեալ Անդրէի, ասաց. Երկի՛ր ի խա-

չէն Քրիստոսի յորմէ դողան երկինք և երկիր, և հան ջուր ի բերանոյ քումմէ, զի լինիցի ջրհեղեղ, ի խրատ անխրատ և գազանաբարոյ մարդկան քաղաքիս: Եւ առժամայն ընդ ասել սուրբ առաքելոյն, հեղաւ ի բերանոյ բագնին ջուր աղի սաստիկ և լցոյց զքաղաքն, վերացաւ մինչ ի պարանոցն մարդկան, և բազումք մեռան. և եղեւ ջուրն զքաղաքաւ հրեղէն ամպք, զի մի կարասցեն փախչել: Եւ զայն տեսեալ, անկան առ ոտս առաքելոյն և մեծաւ թախանձանօք հայցէին զթողութիւն անձանց: Յայնժամ ասաց Անդրէաս ցբագինն. Դադարեաց և ցամաքեցո՛ զջուրդ ի բերանոյդ, և առժամայն դադարեաց: Եւ իսկոյն պատառեցաւ երկիր և եկուլ զջուրն և զբագինն և զայլսորն որ եռ փոխանակ իւր զորդին ի զենումն և զչորեքտասան զաւհան և զպատուն, մինչև դադարեաց առաքեալն ի քարոզելոյն և եհան զնոսա: Շիջաւ հրեղէն ամպն որ շրջապատեալ էր զքաղաքաւն, և սկսաւ Անդրէաս քարոզել և ուսուցանել զժողովուրդն, որք հաւատացին ի Քրիստոս, և մկրտեաց զամենեսեան: Եհան և զընկղմեալս անթիւ բազմութիւնս, շինեաց եկեղեցիս և կարգեաց քահանայս, կանգնեաց աւազան մկրտութեան և սեղան քաւութեան, մատոյց զաստուածային պատարագն և հաղորդեաց զնոսա մարմնոյ և արեան Որդւոյն Աստուծոյ, և զամենայն քաղաքացիսն լուսաւորեալ հաստատեաց ի հաւատս Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Եւ յետ եօթն աւուր կատարմանն սուրբ եկեղեցւոյն, ել Անդրէաս անտի և գնաց ի Բուզանդիոյ և անդ քարոզեալ սերմանեաց զբանն կենաց: Եւ ձեռնադրեաց զՍտաքէոս աշակերտն իւր եպիսկոպոս Բուզանդիոյ, որ է մի յեօթանասնից աշակերտացն Քրիստոսի:

Եւ անտի գնաց սուրբ առաքեալն Անդրէաս յԵլլադա, և անդ քարոզեաց զաւետարանն Աստուծոյ: Եւ դատաւորն Եգիատէս էարկ զնա ի բանտ, և բազումք մտանէին առ նա, և նա ուսուցանէր նոցա զհաւատս Քրիստոսի Աստուծոյ. ընդ որ բարկացեալ

դատաւորն, եւ հանել զնա ի խաչ ի պարանէցն: Եւ եկեալ Անդրէաս մերձ առ խաչին, և յոյժ գովեաց զնա, և քարոզեաց ժողովրդեանն զշնորհս որ տուան յԱստուծոյ՝ սրբոյ խաչին: Եւ ապա կալեալ կախեցին զնա ի խաչէն, և այնպէս աւուրս չորս կախեալ ուսուցանէր զբանն կենաց: Եւ դիմեցին բազումք ի վերայ Եգիատեայ դատաւորին զի ապանցեն զնա, և արգել զնոսա սուրբ առաքեալն: Եւ ինքն սկսաւ գոհանալ զԱստուծոյ, և այնպէս յերկար աղօթելով աւանդեաց զհոգին իւր առ Աստուած, ի Նոյեմբերի երեսուն:

Սուրբ առաքեալն Անդրէաս էր ի ցեղէն Նեփթաղիմայ, եղբայր Պետրոսի մեծի և առաջին աշակերտին Քրիստոսի:

# Գ

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼՈՑՆ ՅԱԿՈԲԱՅ

ԹԷ ՈՐՊԷՍ ԳՆԱՑ Ի ՍՊԱՆԻԱՅ ԵՒ ԴԱՐՁԵԱԼ ԵԿՆ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

ԵՒ ԳԼԽԱՏԵՑԱՒ ԵՒ ՄԵՌԵԱԼ ՄԱՐՄՆՈՎ

ԳՆԱՑ ԴԱՐՁԵԱԼ Ի ՍՊԱՆԻԱՅ ՈՐ ԵՒ ԱՅԺՄ Ս. ՅԱԿՈԲ ԿՈՉԻ

*Ճառագայթ արփիահրաշ և անպարագրելի և լոյս համատարած անմատոյց և անշիջանելի և ծագումն անիմանալի, անհետազօտելի յէութենէ Հօր. անժամանակ և անհատուած և անախտ ծնունդ ի սրտէ նորա, խորհուրդ և բան և իմաստութիւն Հօր Աստուծոյ: Աստուած իմ Յիսուս Քրիստոս որ կամախոնարհեցար յանճառելի փառացն հայրենի, և առեր զկերպարանս ծառայի և եղեր մարդ ճշմարիտ առանց մեղաց, աստուածացուցեր զմարմինն յոր միացար՝ քեզ հաւասար, և միով բնութեամբ անշփոթ և անբաժանելի, միով ներգործութեամբ և կամօք, և միով զօրութեամբ կատարեցեր զհայրախնամ տընօրէնութիւնն աստուածացեալ մարմնով քով, զոր հայրական հոգւոյն ազդեցութեամբ սուրբ մարգարէքն կանխաւ ճառեալ ծանուցին, և շրջեցար մարմնով յաշխարհի և կատարեցեր աստուածապէս զահաւոր և զմեծամեծ սքանչելիսն. վկայեցար Աստուած անթերի ի Հօրէ և ի Հոգւոյն սրբոյ ի սուրբն Յորդանան, և ի լեառն Թաբօրական: Փառաւորեցեր և զըն-*

տրեալ զդասս առաքելոց և Նոքօք լուսաւորեցեր զտիե-զերս: Եւ եկիր ի լրումն կատարման ամենայն գրե-լոցն վասն քո, և զարմանագործ խորհրդով համբե-րեցեր անպատում Նախատանաց և հալածանաց և չարչարանաց, և անպարտականդ վասն մեր յանձն առեր կամաւ զխաչն և զմահ. եղար ի գերեզմանի, իջեր ի սորին վայրս մահու, և զմեծահանդէս հիմն ի վեր տապալեցեր զաշտարակս դժոխոցն: Արձակե-ցեր զարգելեալսն ի զաւն բանդէն և կապեցեր զան-օրէն յաղթանդամ հսկայն, և խափանեցեր զզօրու-թիւն մահու և յարեար երեքօրեայ, երևեցար առա-քելոցն և այլոց բազմաց: Հաստատեցեր զյոյս յա-րութեան մերոյ ի լրումն ժամանակաց և ձեռնադրե-ցեր հայրական օրհնութեամբ զառաքեալսն եպիսկո-պոսունս, և առաքեցեր զնոսա քահանայական շնոր-հօք լուսաւորել զխաւարամած աշխարհս և ամբար-ձար լուսեղէն ամպովք և հրեղէն զօրօք, և նստար յահեղակերպ յաթոռն հայրական յորմէ ոչ հեռա-ցար: Եւ առաքեցեր զքո փառակից Հոգիդ սուրբ հայրական, որ իջեալ ի դասս առաքելոցն և հրադի-նեալ մխեաց և պնդեաց զնոսա հրահասան վառեօք և հրեղէն լեզուօք իմաստնացոյց զնոսա. և սուրբ ա-ռաքեալքն արկին վիճակս և բաժանեցին զաշխարհս յերկոտասան մասունս և գնացին յիւրաքանչիւր վի-ճակ քարոզել զբանն:

Գնաց և սուրբ առաքեալն Յակոբոս, եղբայրն Յովհաննու, ի հեռաւոր աշխարհն Սպանիացւոց ի սահ-մանեալ վիճակն իւր. և մտեալ ի գաւառն շրջէր ընդ գաւառս և ընդ գեօղս, քարոզէր զաւետարանն Աս-տուծոյ և ասէր. Եկայք առ լոյս ճշմարիտ Քրիստոս որ ծագեցաւ մեզ արեգակն արդարութեան ի հայ-րական ծոցոյ. քանզի վասն փրկութեան մարդկան Միածին որդին անեղին Աստուծոյ, խոնարհեցաւ յեր-կիր և զգեցաւ մարմին ի կուսէն և եղև մարդ ճշ-մարիտ առանց մեղաց, և աստուածացեալ մարմնովն կատարեաց զբանս մարգարէիցն զոր սուրբ Հոգւովն գրեցին. համբերեաց Նախատանաց և չարչարանաց

խաչի և մահու, թաղեալ և երեքօրեայ յարուցեալ և համբարձեալ նստաւ ընդ աջմէ Հօր իւրոյ յերկինս, և առաքեաց զմեզ քարոզել մարդկան զի ծանիցեն զարարիչն իւրեանց։ Եւ հաւատացելոց իւրոց խոստացաւ առնել յարութիւն յաւուրն վերջին և տալ նոցա զերանաւէտ և զանխախձան փառսն և զհանգիստն՝ որ կատարեն զկամս Հօր նորա սրբութեամբ և բարեգործութեամբ։ Եւ մեք որ էաք աշակերտք նորա, կերաք և արբաք ընդ նմա համարձակ, զի ծածուկ էր աստուածութիւն նորա և տեսաք աչօք մերովք զզարմանալի գործս նորա և զհայրական զանպատում փառս նորա։ Եւ այլ այսպիսի վարդապետութեամբ բանայր և դնէր առաջի նոցա զպատիւ փառացն Քրիստոսի, և զունայնութիւն կենցաղոյս այսորիկ և զճշմարտութիւն հանդերձեալ կենացն և փառացն. և որպէս զժիր մշակ անդադար վարդապետէր և խրատէր զամենեսեան զալ առ լոյսն Քրիստոսի, որ ծագեցաւ առ ձեզ, և ատեցէք զխաւարն յորում նստէիք։

Իսկ անօրէն և անիրաւ ազգն խուժադուժ ընաւ ոչ ընկալան զերանելի առաքեալն Յակոբ և ոչ լուան վարդապետութեան նորա, և ոչ ընդունեցան զանունն Քրիստոսի. այլ հալածեալ ի բաց վանեցին զնա ի գաւառաց իւրեանց։ Եւ կին մի հաւատաց ի Քրիստոս և մկրտեցաւ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. և էր նա հեզ և բարեսէր, և սպասաւոր լինէր սուրբ առաքելոյն Յակոբայ և պաշտէր զնա յընչից իւրոց։ Իսկ իբրև ետես առաքեալն Քրիստոսի Յակոբ զի ընաւ ոչ եմուտ բան նորա ի վերայ ժողովրդեան այնմիկ, վասն զի առանացեալ և բարացեալ էին սիրտք նոցա ի չնչոյ պիղծ դիւացն, վասն այնորիկ խորհեցաւ դառնալ յԵրուսաղէմ, զի անձկայր տեսանել զսուրբ տեղիս տնօրէնութեանն Քրիստոսի և զերանելի կոյսն Մարիամ և զեղբայր իւր Յովհաննէս և զՏեառն եղբայրն ըզՅակովբ։ Քանզի յորժամ կամեցան զնալ առաքեալքն ի վիճակս իւրեանց, նա ըստ հրամանի

փրկչին, զՅովհաննէս Աստուածածնին պաշտօնեայ կացուցին և զՏեառն եղբայրն Յակոբոս՝ եպիսկոպոս Երուսաղեմի: Ասէ ցնա կինն մեծազգի որ հաւատաց ի Քրիստոս. Եկից և ես զհետ քո յԵրուսաղէմ, զի ցանկայր տեսանել զսուրբ կոյսն և զայլ ամենայն անօրինակման Քրիստոսի: Եւ հաճոյ թուեցաւ բանք նորա սուրբ առաքելոյն Յակոբայ, վասն որոյ և անկեալ ի ճանապարհ՝ եկեալ հասին յԵրուսաղէմ մեծաւ աշխատութեամբ:

Եւ կինն այն ետես զսուրբ կոյսն Մարիամ և զայլն ամենայն որում ցանկայր, և ցնծացաւ և բերկրեցաւ և առաւել հաստատեցաւ ի հաւատսն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զոր լուաւ ի Յակոբայ սուրբ առաքելոյն և զօհանալով փառաւորեաց զՔրիստոս Թագաւորն փառաց, որ է օրհնեալ յաւիտեանս յաւիտենից:

Իսկ սուրբ առաքեալն Յակոբոս յորժամ եկն եհաս յԵրուսաղէմ ի վիճակէն իւրմէ, և տեսեալ զսուրբ Աստուածածին և զսուրբ տեղին Քրիստոսի, ուրախացաւ ի փառս Աստուծոյ: Այլ ոչ հեղգացաւ, այլ մեծաւ համարձակութեամբ սկսաւ քարոզել և աւետարանել զՔրիստոս՝ ի մէջ Հրէից յԵրուսաղէմ և շուրջ զնովաւ ի սահմանս Յուդայ և Հրէաստանի մինչև ի Սամարիա, և քարոզէր յամենայն ժողովս Հրէից և ասէր. Հաւատացէք ի Քրիստոս վկայութեամբ սուրբ մարգարէից՝ զոր յառաջագոյն գուշակեցին վասն երևմանն Քրիստոսի ի մէջ մարդկան: Եւ առնէր նշանս մեծամեծս Քրիստոսի զօրութեամբ, և բազումք հաւատացին ի Քրիստոս՝ վարդապետութեամբ սրբոյն Յակոբայ և միաբանեցան յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Նա և սուրբ առաքեալն աւետարանէր նոցա զամենայն զոր ինչ արար Քրիստոս. ստուգէր և ճշմարտէր զոր վասն Քրիստոսի ասացին սուրբ մարգարէքն Հոգւովն սրբով: Եւ անուամբն Քրիստոսի առնէր նշանս մեծամեծս առաջի ամենայն ժողովրդեանն, որով զարմացեալ հիանային Հրեայքն և ոչ կարէին տալ պատասխանի: Վասն

որոյ և ել Համբաւ նորա ընդ ամենայն գաւառն և բազումք երթային ի լուր սքանչելեացն և Հաւատային ի Քրիստոս և մկրտէին։

Եւ ահա էր ի ժամանակին յայնմիկ այր մի՝ որում անուն Հերմոգինէս կոչիւր, և էր նա մոլեալ ի չար ազանդս կախարդութեան և դիւթութեան, և էր աշակերտ նորին կախարդութեամբ որ կոչէր Փիլէդոս։ Եւ նոքա զբազումս զարմացուցանէին դիւթութեամբն. առ աչս մարդկան առնէին սուտ նշանս որպէս Յանէս և Յամբրէս, Կենդարա և Նիկիանէս։ Իսկ յորժամ լուաւ Հերմոգինէս զլուր նշանաց և սքանչելեաց սուրբ առաքելոյն Յակոբայ, յղեաց առ նա զՓիլիդէս աշակերտ իւր և ասէ. Գնա՛ դու առ Յակոբն այն որ ասէ, թէ ես աշակերտ եմ Յիսուսի, կա՛ց յանդիման նորա և տես թէ որպէս առնէ զնշանս և զսքանչելիս, գեղո՞ք թէ արուեստիւք, թէ մերով զօրութեամբս, թէ անուամբ վարդապետին իւրոյ Յիսուսի, և եկեալ պատմեա ինձ։

Եւ աշակերտ նորա յարուցեալ ա՛ռ ընդ իւր այր մի ճարտարարան, և եկեալ առ սուրբ առաքեալն վիճէին և ընդդէմ դառնային վարդապետութեան նորա և Հաւատոյն որ ի Քրիստոս, և նոքա երկմտեցուցանէին զժողովուրդն և ասէին, թէ Յիսուս ոչ է Որդի Աստուծոյ, ընդունայն են բանք աշակերտի նորա։ Եւ յայնժամ զօրացեալ ի շնորհաց սուրբ Հոգւոյն երանելի առաքեալն Յակոբ, վկայութեամբ մարգարէիցն զոր գրեցին վասն Քրիստոսի, զայն առեալ Հաստատէր ի վերայ ժողովրդեանն Քրիստոսի, զի էր ստոյգ և ճշմարիտ Աստուած Յիսուս Քրիստոս և որդի Աստուծոյ և վասն փրկութեան մարդկան առաքեցաւ ի Հօրէ։

Եւ Փիլէդոս դարձաւ առ վարդապետն իւր Հերմոգինէս, և ասէ ցնա, թէ այս գիտութիւն լիցի քեզ՝ թէ բնաւ ոչ կարէ ոք յաղթել Յակոբայ աշակերտին Յիսուսի, քանզի ա՛յլ է լուր ականջաց և այլ է տես աչաց, զի ահա տեսաք և առաջի մեր և ամենեցուն՝ անուամբն Յիսուսի դեւս բազումս եհան ի մարդ-

կանէ, զկոյրս լուսաւորեաց և զբորոտս սրբեաց. նաև լուայ իսկ ի բազմաց որ ասացին, թէ կարող է սուրբ առաքեալն եր ի մեռելոց յարուցանել յանուն Յիսուսի. և այս կարի մեծ և զարմանալի սքանչելիք են:

Եւ արդ եթէ կամիս և ախորժես զկեանս անձին քո, դու լուր ինձ որպէս բարեկամի քո. և թէ լսես, լինի քեզ բարի և փրկութիւն անձին քում. դու փութա և արի անյապաղ գնա առ նա խոնարհ սրբտիւ և հեզ հոգւով, անկիր առ ոտս նորա և աշակերտեա նմա և հայցեա թողութիւն ի նմանէ. ապա թէ ոչ գնասցիս, զի կախարդական արուեստ քո ոչ կարէ յաղթել նմա՝ զոր ես տեսի աչօք իմովք, այլ դու զբարին քո ընտրեա: Ապա այս յայտնի լիցի քեզ, զի ես ոչ կամիմ նստել ի խաւարի, որովհետև տեսի զլոյսն ճշմարիտ. այլ կամիմ գնալ առ նա և լինել աշակերտ ճշմարտութեան և հաւատոց նորա. քանզի այս անմտութիւն է, զլոյսն տեսանել և ի խաւարի նստել: Յայնժամ Հերմոգինէս մոգ խռովեցաւ յոգի իւր անհնարին զայրութեամբ, յորժամ լուաւ զայս ի Փիլէտոսէ, և դիւաշունչ արուեստիւ իւրով կապեաց զՓիլէտոս և այլ ոչ կարէր շարժել ի տեղւոջէն ուր կայր, և ասէ. Ահա տեսից թէ իցէ կարող Յակոբն քո զոր սիրեցեր, և ունի՞ զօրութիւն գալ արձակել զքեզ ի կապանաց իմոց: Եւ նոյնժամայն առաքեաց Փիլէտոս ի մանկանց իւրոց առ սուրբ առաքեալն Յակոբ ցուցանել նմա զչար պատահումն որ ըմբռնեաց զնա: Եւ եկեալ ասէ, թէ կապեաց Հերմոգինէս զՓիլէտոս կախարդական արուեստիւ, քանզի գովեաց զգործս քո և ինքն կամեցաւ գալ աշակերտել քեզ: Եւ իբրև լուաւ զայս ի մանկանէն սուրբն Յակոբ, ետ զպարեգօտն իւր ի մանուկն և ասէ. Երթ դու առ Փիլէտոս և ասա՛ այսպէս. Աստուած ի Յիսուս Քրիստոս որ խոնարհեցար վասն փրկութեան մարդկան, զմեռեալս յարուցեր և զկապեալս արձակեցեր, և այժմ արձակեա զՓիլէտոս ի չար կապանաց յայսմանէ:

Եւ յորժամ ընկալաւ մանուկն ի ձեռս իւր զպարէգօտն սուրբ առաքելոյն, ի նոյն ժամն լուծան կապանքն՝ Քրիստոսի զօրութեամբն արձակեցաւ Փիլէգոս և փութով եկն առ Յակոբ: Եւ իբրև ետես զայս մոգն Հերմոգինէս վիրաւորեցաւ յոյժ, վասն զի տկարացաւ չար դիւթութիւնն և ոչ կարաց կալ ընդդէմ ճշմարտութեանն. և ի ժամն այն կոչեաց առ ինքն զչար դևսն և ասէ ցնոսա. Ասացէք եթէ այս ընդէ՞ր է զի անկեալ տկարացայք. և դևքն ոչ ետուն պատասխանի նմա. ապա իմացան որ Քրիստոսի զօրութիւն քակեաց զչար մեքենայս նոցա. և Հերմոգինէս ափշեալ և յիմարեալ և նոյն ժամայն զամենայն դևսն առաքեաց առ սուրբն Յակոբ, և ասէ. Կալեալ կապեցէք և բերէք առ իս զՅակոբն զայն և ընդ նմա զՓիլէգոս աշակերտն իմ, զի հատուցից նմա ըստ արժանաւորութեան նորա, զի մի և այլ ընկերք նորա զնոյն գործեն: Ապա եկեալ հասին դևքն ի տեղին ուր կայր սուրբ առաքեալն յաղօթս, և տարածեալ ընդ արևելս զբազուկս իւր, և կացեալ դևքն ի վերայ յօդս՝ սկսան աղաղակել և վա՜յ գոչել ի վերայ անձանց իւրեանց, և ասեն, թէ ողորմեաց մեզ սուրբ առաքեալ Քրիստոսի. քանզի ահա սաստիկ տագնապեալ տանջիմք չարաչար յառաջ քան զժամանակն մեր: Եւ սուրբն ասէ. Ո՞վ չարութեան և մոլորութեան հոգիք, վասն որո՞ց իրաց եկեալ էք աստ. և դևքն ասեն. Մոգն Հերմոգինէս առաքեաց զմեզ առ քեզ զի կապեալ տարցուք առ նա, նոյնպէս և զՓիլէգոս. իսկ յորժամ եկաք աստ, նա հրեշտակ Տեառն կապեաց զմեզ չարաչար և կիզիմք յանշէջ հրոյս: Իսկ սուրբ առաքեալն ամբարձեալ զձեռսն ասէ. Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ արձակեսցէ զձեզ հրեշտակ տեառն իմոյ. և առժամայն լուծան կապանք նոցա:

Եւ ասէ ցնոսա սուրբ առաքեալն Քրիստոսի. Գընացէք առ Հերմոգինէս և բերէք զնա առ իս: Եւ յորժամ լուան զհրաման սուրբ առաքելոյն, գնացին առ Հերմոգինէս, և առնէին զնա կապանօք և նա-

խատանօք. ասէին, դու առաքեցեր զմեզ ի տեղի չարչարանաց, մինչև ողորմեցաւ սուրբ առաքեալն Քրիստոսի Յակոբոս, և եթէ ոչ էր մեզ հրամայեալ՝ չարչարէաք զքեզ: Իբրև բերին զմոգն առ սուրբն Յակոբ, ասէ ցնա սուրբն Աստուծոյ. Ա՛յ ափշեալ և յիմարեալ քան զամենայն մարդիկ Աստուծոյ, ատելի և թշնամի արդարութեան, որ դու քո կամաւ լինիս ընկեր բանսարկուին. և արդ՝ ասա ինձ թէ ընդէ՞ր առաքեցեր զդևսն հակառակ ինձ, որ թէ այժմ մատնէի զքեզ ի ձեռն դոցա, սատակէին զքեզ որպէս և վայել է քեզ: Իբրև լուան չար դևքն զաղաղակ բարձին և ասեն. Ով սուրբդ Աստուծոյ, տուր մեզ հրաման ի վերայ դորա զի առցուք զվրէժ նախատանաց քոց: Եւ ասէ սուրբ առաքեալն Քրիստոսի. Ահաւադիկ Փիլէտոս կայ առաջի ձեր, ընդէ՞ր ոչ ըմբռնէք զդա և տանջէք: Իսկ դևքն ետուն պատասխանի. Մեք զմի մժղուկ ոչ կարեմք վնասել որ կայ ընդ հովանեաւ յարկի քո: Յայնժամ ասէ ցՓիլէտոս՝ առաքեալն Քրիստոսի. Որպէս զի ծանիցէ Հերմոգինէս և ի միտ առցէ զբարի և զանոխակալ քաղցր վարդապետութիւն Քրիստոսի Աստուծոյ մերոյ և զսուրբ հրամանս նորա, վասն այսորիկ ոչ վայել է աշակերտաց Քրիստոսի հատուցանել չար փոխանակ չարի. այլ արասցուք նմա բարի փոխանակ իւր չարին զոր արար մեզ, ըստ հրամանի Փրկչին մերոյ, որպէս և նա հրաման ետ զիւացն կապել զմեզ, նոյնպէս և դու հրամայեա զիւացն ի բաց կալ ի նմանէ և արձակեա զնա: Իսկ յորժամ արձակեցաւ մոգն այն ի կապանաց զիւացն, անկաւ յերկիւղ: Եւ ասէ սուրբ առաքեալն. Առե՞ր զփորձ սիրելեացն քոց, այժմ ունիս հրաման, գնա ուր և կամիս, զի ոչ հրամայեաց մեզ Քրիստոս բռնութեամբ դարձուցանել զոք առ նա, այլ զայն՝ որ լսէ հրամանաց նորա: Եւ ասէ Հերմոգինէս. Եւ զիա՞րդ իշխեմ երթալ, զի ահա տեսանեմ զբարկութիւն զիւացն ի վերայ իմ, զի թէ նշան ի քէն ոչ ունիցիմ, սատակեն զիս: Եւ ասէ սուրբ առաքեալն. Ահա ընկալ ըզ-

զաւազանս իմ և կալ ի ձեռս քո և անվնաս մնաս յամենայն տեղիս ուր և երթիցես զօրութեամբն Քրիստոսի:

Եւ առեալ զգաւազանն որդոյն Յակոբայ եկն ի տուն իւր, և ահա ծագեաց ի սիրտ նորա լոյս աստուածային, և եդ զգաւազանն ի վերայ պարանոցի իւրոյ և աշակերտացն, և նոյնժամայն առեալ զարկղըն ուր կային գրեանք դիւաշունչք կախարդութեան իւրոյ և բերեալ եդ առաջի սուրբ առաքելոյն և լուցեալ հուր՝ կամեցաւ այրել զնոսա: Եւ ասէ սուրբն Յակոբ. Դիցուք յարկղ կապար և երկաթ և քարինս և ընկեցէք ի ծովն մեծ. և կատարեաց Հերմոգինէս զսուրբ առաքելոյն հրամանն: Եւ ինքն անյապաղ եկեալ անկաւ առ ոտս առաքելոյն և աղաչէր զնա ասելով թէ, ով փրկիչ և նորոգող խաւարեալ ոգւոց մարդկան, ընկալ սիրով զապաշխարանս իմ և զդարձ մեղաւորիս, զի այնչափ մեղայ առ քեզ, քանզի թերահաւատութեամբ կացի հակառակ ընդդէմ քո: Ասէ ցնա սուրբ առաքեալն Յակոբ. Եթէ ի բոլոր սրտէ և ջերմեռանդն սիրով հաւատաս և ճշմարիտ դաւանութեամբ գաս առ ճըշմարիտ լոյսն Քրիստոս, առցես զողորմութիւն և զթողութիւն մեղաց: Եւ ասէ Հերմոգինէս. Ով սուրբդ Աստուծոյ, և դու տեսեր զի այսպէս անարատ և հաստատուն հաւատացի ի Քրիստոս, որ և զամենայն գրեանս աղանդոյն իմոյ ընկեցի ի խորս ծովուն ըստ հրամանի քում, ուրացեալ զամենայն ըստ կախարդութեան, քանզի չարք էին և խաւարեցուցիչք հոգւոց մարդկան: Եւ ասէ սուրբ առաքեալն. Եղիցի ընդ քեզ իմոյ հոգւոյս զօրութիւն և գնա ի տուն նոցա և զոր չար բանիւք խաւարեցուցանէիր՝ այժմ քարոզեա և ասա. Եկայք առ լոյսն ճշմարիտ Քրիստոս, և զոր յառաջն ասէի, սուտ էր և խաբէութիւն սատանայի. և զինչսն զոր ժողովեցեր անօրէնութեամբ, դու ի կամս Աստուծոյ բաշխեա աղքատաց զնա. ապա դու հեռացիր յամենայն չարէ և ստացիր զբարութիւն և լեր նոր փոխանակ հնոյ, և բարի

օրինակ ի մէջ մարդկան ի փառս Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Եւ արդ վարդապետութիւն սուրբ առաքելոյն քաղցրացաւ ի սիրտ մոգին Հերմոգինէ, և անկեալ ի սիրտ նորա երկիւղն Աստուծոյ և բազում շնորհս ետ Նմա Աստուած՝ ի ձեռն աղօթից սրբոյն Յակոբայ առաքելոյն:

Եւ արդ՝ յորժամ տեսին Հրեայքն զի կախարդն այն որ միացեալ էր ընդ սատանայի ամենայն չարութեամբ՝ այսպէս հնազանդեցաւ սուրբ առաքելոյն Յակոբայ, խորհեցան և ասեն, թէ աշակերտք և բարեկամք և ազգականք նորա հաւատան ի Քրիստոս: Եւ ըստ սովորութեան իւրեանց՝ առեալ արծաթ մատուցին կաշառս երկուց հազարապետացն որ էին յԵրուսաղէմ, որոց անուանքն Լիզիաս և Գիոքիատէ. առեալ հրաման արկին ի բանդ զսուրբ առաքեալն Յակոբ: Եւ պատմեցաւ բանս այս ժողովրդեանն և ասեն ժողովուրդքն, եկեսցէ Յակոբ ի հասարակաց տաճարն, և լուիցուք ի Նմանէ և լցցի դատաստան ըստ օրինացն:

Իսկ յորժամ բերին զՅակոբ յատեանն, ասեն փարիսեցիքն. Զինչ իցէ վարդապետութեան բանս այս զոր քարոզէ Յակոբ ի մէջ ժողովրդեանն. քանզի ահա տեսաք և գիտեմք ամենեքեան զՔրիստոս ընդ մահապարտ աւազակս խաչեալ և մեռեալ իբրև զմի ոք ի մահապարտաց: Եւ յայնժամ լցեալ սուրբ Հոգւովն առաքեալն Յակոբ, և բացեալ զբերան իւր ասէ. Լուարուք ամենեքեան զբանս Նահապետացն և սուրբ մարգարէիցն զոր գրեցին և վկայեցին վասն Քրիստոսի մարդեղութեանն և չարչարանացն, խաչելութեան և մահուն և թաղմանն, յարութեանն և համբարձմանն և Նստելն ընդ աջմէ Հօր. զայս ամենայն մարգարէքն յայտնապէս գրեցին և վկայեցին ի վերայ Քրիստոսի:

Եւ արդ՝ իբրև կատարեաց սուրբ առաքեալն զբանս զայսոսիկ, և այլ բազում բանք հոգեշահէք և մխիթարականք՝ լցեալ գիտութեամբ և իմաստութեամբ Հոգւոյն սրբոյ. յայնժամ ետ Աստուած զօրու-

թիւն և շնորհք ի բան նորա և լոյսն Աստուծոյ ծագեաց ի սիրտս նոցա և ի հոգիս, և ամենեքեան իբրև ի միջէ բերանոյ աղաղակէին ասելով. Մեղաք, անօրինացաք և յանցաւոր գտաք առաջի Աստուծոյ. և արդ ծանո մեզ թէ զինչ գործեսցուք ով ծառայ Աստուծոյ կենդանւոյ:

Եւ սուրբ առաքեալն քաղցրալուր բանիւ ասէ. Մի անյուսիք, այլ միայն հաւատացէք և մկրտեցարուք յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. և նա քաղցր է և ողորմած, ջնջէ զմեղս ձեր: Եւ ժողովուրդք որ անդ պատահեցան՝ հաւատացին ի Քրիստոս և մկրտեցան, և եղև ուրախութիւն մեծ: Եւ յետ սակաւ աւուրց, եհաս լուր համբաւոյն և սքանչելեացն առ Աբիաթար քահանայապետ տաճարին այնորիկ: Յանժամ լցեալ բարկութեամբ և սրտմտութեամբ, յարոյց ի վերայ սուրբ առաքելոյն բազում ամբոխս և խռովութիւնս: Եւ ահա այր մի, յոյժ ատամբակ ի փարիսեցւոց անտի, որպէս դպիր նոցա, եկեալ կալաւ և կապեաց զսուրբ առաքեալն, և ածեալ տարաւ յապարանս Հերովդէի թագաւորի: Քանզի այս Հերովդէս որդի էր Արքեղայոս թագաւորի, և Արքեղայոս որդի էր առաջին Հերովդէի մանկակոտոր վիրագին. և այս Հերովդէս յոյժ չարաբարոյ էր և հակառակ աշակերտացն Քրիստոսի, վասն որոյ կամեցաւ հաճել զմիտս Հրէիցն: Եւ հրաման գլխատել զսուրբ առաքեալն Յակոբ՝ զեղբայրն Յովհաննու աւետարանչի. և ահա տանել տանէին զսուրբն ի տեղի կատարման իւրոյ: Իսկ նա երթայր ցնծալով որպէս ի հարսանիս, և ասէր ցանձն իւր, թէ, ահա ժամանակ համբերութեան, զի կատարես զդաշն ուխտին՝ որ առ քեզ խոստացար կատարել:

Եւ ահա անդամալոյծ մի որ յերկիր անկեալ դնէր անշարժ, աղաղակեաց զհետ սրբոյն Յակոբայ ասելով. Սուրբդ Աստուծոյ արձակեա զիս ի կապանաց աստի. և սուրբ առաքեալն ասէ. Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ և յանուն Յիսուսի Քրիստոսի վասն որոյ երթամ ես ի գլխատումն յօժարու-

թեամբ, արի և գնա առողջ անդամօք և անարատ մարմնով. և առժամայն ընդ բանին յարեաւ եկաց ի վերայ ոտից իւրոց և սկսաւ վազել և գնալ որպէս թէ բնաւ չէր տկարացեալ, և գոհանալով փառաւորէր զՏէր մեր Յիսուս Քրիստոս: Եւ զայս տեսեալ դպրին չարաբարոյ, որ տանէր գլխատել զերանելի սուրբ առաքեալն, և էր անուն դպրին Յովսիաս, և հիացեալ զարմացաւ ընդ ահեղ սքանչելիսն: Վասն որոյ և անկեալ առ ոտս սրբոյն Յակոբայ ասէ. Ով սուրբդ Աստուծոյ աղաչեմ զքեզ, վասն Նորա՝ որով առնես զզարմանալի սքանչելագործութիւնդ, շնորհեա թողութիւն ողորմելի անձին իմոյ, որպէս զի և ես եղէց արժանի՝ առնուլ մասն և բաժին ընդ քեզ: Իբրև ետես սուրբն Յակոբ զի ծագեաց աստուածային շնորհքն ի սիրտ և ի հոգի նորա, ասէ ցնա. Հաւատա՞ս ի Քրիստոս Աստուած ճշմարիտ և Որդի Աստուծոյ զոր Հրեայքն խաչեցին: Եւ Յովսիաս ասէ. Յօժար կամօք հաւատամ և խոստովանիմ զՔրիստոս Աստուած ճշմարիտ և Որդի Աստուծոյ ի բնութենէ Նորա և համագոյ սուրբ Հոգւոյն: Եւ Աբիաթար քահանայապետն հրամայեաց ունել զնա, և ասէ ցնա. Եթէ ոչ ուրասցիս զՅիսուս՝ հատցի և գլուխ քո այժմ ընդ մահապարտիդ Յակոբայ: Յայնժամ Յովսիաս դպիր ասէ. Դու եղիցիս նզովեալ և ամենայն որ ինչ քո է, և պատուական անուն Քրիստոսի զոր Յակոբ քարոզէ՝ օրհնեալ և փառաւորեալ, և դու նկուն լիցիս և անուն քո կորիցէ ի դժոխս:

Եւ բարկացեալ Աբիաթար քահանայապետն, եհար զբերան Յովսիաս դպրի, խորտակեալ զկզակս նորա: Եւ առաքեաց Աբիաթար առ Հերովդէս ծանուցանել նմա զիրսն, և խնդրեաց ի նմանէ զի և զգլուխն Յովսիայ հատցի ընդ գլխոյն Յակոբայ. և նա ետ հրաման: Եւ առեալ տարան ի տեղի կատարման զսուրբ առաքեալն Յակոբ. և նա աղաչեաց զդահիճն բերել սակաւ մի ջուր, և բերեալ ամանով ինչ, և ասէ սուրբ առաքեալն առ Յովսիաս. Հաւատա՞ս ի բոլոր սրտէ քումմէ ի Հայր և յորդի և ի

Հոգին սուրբ։ Եւ Յովսիա ասէ. Այո՛, հաւատացի և հաւատամ և խոստովանիմ ուղիղ դաւանութեամբ ի Հայր և յՈրդի և ի սուրբ Հոգին. և սուրբ առաքեալն առեալ զջուրն տեառնագրեաց և եհեղ ի վերայ Յովսիայ, և ասէ. Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. և ասէ. Ընկալ Քրիստոս Թագաւոր զդարձումն ծառայի քո ի թիւ ընտրելոց քոց։ Եւ դարձեալ ասէ սուրբ առաքեալն. Որդեակ Յովսիա այժմ համբուրեա զիս ի համբոյր սրբութեան իբրև զեղբայր։ Եւ իբրև համբուրեցին զմիմեանս, եդ ձեռն ի վերայ նորա սուրբ Առաքեալն և տեառնագրեաց զդէմս նորա Քրիստոսի նշանաւ և գոհացեալ փառաւորեցին զԱստուած։

Իսկ դահիճն զարմանայր ընդ գործս նոցա, եւ սուրբն Յակոբ յառաջ մղէր ընդդէմ սրոյն զՅովսիա և քաջալերէր զնա ոչ երկնչել ի մահուանէ և ասէր. Ով որդեակ, այս մատուցանէ զմեզ ի հանգիստ արքայութեան Աստուծոյ. և դահիճն հանեալ զսուրն վերացոյց։ Եւ ասէ սուրբ առաքեալն. Ով որդեակ մի յապաղեր, կատարեա զհրամայեալն քեզ։ Եւ երկոքեան տեառնագրեցին զանձինս իւրեանց և կամաւ խոնարհեցուցին զպարանոցս իւրեանց առաջի սրոյն մեծաւ ուրախութեամբ. և դահիճն եհատ զգլուխս երանելեացն և ընդ բղխումն արեանն հոտ անուշութեան բուրեաց։

Եւ արդ այսպէս կատարեցան երանելի մահուամբ սուրբ առաքեալն Յակոբ և Յովսիա դպիր յամսեանն յուլիսի քսան և եօթն։ Եւ ի նոյն ժամն հրեշտակ Տեառն առեալ զգլուխ սրբոյն Յակոբայ լուսեղէն պատառուկալու և բերեալ եդ առաջի Տեառնեղբօր սրբոյն Յակոբայ՝ յեպիսկոպոսարանի անդ, և նա կոչեաց զՅովհաննէս զեղբայր սրբոյն Յակոբայ և տրտմեցան ընդ պատահումն եղբօրն. ապա դարձեալ ուրախացան յետ սակաւ արտասուացն և մխիթարեցին զինքեանս գոհանալով զԱստուծոյ, զի կատարեաց սուրբն Յակոբ զընթացս իւր բարւոք ի Քրիստոս, և էառ զբաժակն ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. և ըզ-

գլուխն եդին ի պաշտօնի՝ մեծ պատուով ի նոյն յա-
թոռն Յակոբայ Տեառնեղբօրն, զի միացաւ ի գլուխն
ամենեցուն Քրիստոս։

Իսկ երանելի և մեծազգի կինն այն որ ի
Սպանիոյ ընդ սրբոյն Յակոբայ եկն յԵրուսաղէմ,
յետ զկատարման սրբոյն՝ եկն առ Տեառնեղ-
բայրն Յակոբոս և Յովհաննէս աւետարանիչն եւ
փափագանօք խնդրեաց ի նոցանէ զպատուական
մարմին սրբոյն Յակոբայ զի զիցէ ի նաւ եւ
տարցէ ի վիճակ իւր, քանզի կամեցաւ ինքն երթալ
ի հայրենի գաւառն իւր. և նոքա ետուն ի ձեռս
նորա զմարմին սրբոյն. և նա ուղիղ հաւատով եւ
յուսով զմբռնեաց և պատեաց զսուրբ մարմինն սուրբ
կտաւովք և անուշահոտ խնկօք և ծածկարար իջոյց
զնա ի Յոպպէ, և յեզր քաղաքին ի կողմն հարաւոյ
յեզր ծովուն պահեաց զնա ի ջուրն, կապեաց զնա ի
սիւն մարմարեայ մինչև գացէ նաւարկութեան ժա-
մանակ։

Իսկ անօրէն Հրեայքն իմացան զգործս զայս և
տաքեցին զհետ կնոջն արս օրինապահս զի առցեն
զմարմին սրբոյն և այրեսցեն հրով և կամ ի ծովն
ընկեսցեն. և Աստուած ի նոցանէ ծածկեաց զսուրբ
մարմինն և նոքա դարձան յԵրուսաղէմ ունայն. և
այս հրաշագործեցաւ ի վերնական խնամոցն վասն
վիճակին իւրոյ։ Եւ քրիստոնեայ կինն մեծազգի զը-
նեալ ժամանակ նաւարկութեան, պատրաստեալ զա-
մենայն պէտս ճանապարհին և եկեալ ի գիշերի աս-
տուածասէր արամբք զի առցէ զմարմին սրբոյն և
զիցէ ի նաւ, և իբրև ոչ եգիտ զմարմինն՝ մեծա-
չափ խռովեցաւ և լայր դառնապէս։ Եւ սուրբն երե-
ւեցաւ նմա և ասէ. Մի տրտմիր զի եկեսցես և գըտ-
ցես զիս ի Սպանիա ի վիճակն իմ։ Քանզի յորժամ
պահեաց ի ծովն զսուրբ մարմինն և ինքն գնաց ե-
մուտ ի քաղաքն, ի նոյն ժամն հրեշտակք Աստուծոյ
վերացուցին զնա և զսիւնն, և տարան հանդէպ վի-
ճակի իւրոյ։ Եւ ահա գետ մի գայր ընդ մէջ վիճակի
նորա և իջանէր ի ծովն. և հրեշտակքն դարձուցին

զխուցն ուր կայր կապեալ սուրբ մարմինն և ընդ փտակս գետոյն ի վեր տարան: Եւ էր գեղ մի յեզր գետոյն, և դադարեցուցին առաջի շինին զսուրբ մարմինն. և զի մերձ էր շէնն ի գետն, վասն որոյ և էջ կոյր մի ի շինէն զի լուացի ի գետն. և առեալ զձեռս իւր զի առցէ ի ջրոյն և շօշափեալ ըզսուրբ մարմին առաքելոյն արկեալ զջուրն զերեսօքն, և զօրութեամբն Տեառն բացան աչք նորա և նա զարմացաւ ընդ բարի պատահումն և աղաղակեաց բարձրագոչ ձայնիւ ի խնդութենէ սրտին, ետես և զսուրբ մարմինն, վասն որոյ և ժողովեցան առ նա բնակիչք տեղւոյն և տեսեալ զնա զարմացան, զի խմացան որ նախաւ բացան աչք կուրին:

Իսկ ի շէնն յայն և այլ կոյրք և կաղք և ախտամէտք և ամենեքին բժշկեցան շնորհօք Տեառն ի ձեռն սուրբ առաքելոյն Յակոբայ: Եւ նոքա զարհուրեալ երկրպագեցին սուրբ մարմնոյն և օրհնաբանեալ փառաւորէին զնա, և ասէին, թէ անգլուխ աստուած ողորմեցար և իջեր առ մեզ, փրկեա և կեցո զմեզ: Եւ յայնժամ առաքեցին շուրջանակի յամենայն գաւառս, թէ եկայք և տեսէք նոր զարմանս և սքանչելի նշան. քանզի աստուած ոմն ողորմեցաւ և էջ առ մեզ, և է անգլուխ և ոչ գիտեմք թէ ո՞վ է նա յաստուածոց, կամ թէ ո՞ր աստուած առաքեաց զնա և գթացաւ ի մեզ. զի նա առաջի աչաց մեր եբաց զաչս կուրաց մերոց, և բժշկեաց զամենայն հիւանդութիւնս և զախտամէտս որ էին ի շէնս մեր: Եւ լուեալ զայսպիսի հրաշալի գործ նշանաց և ի ձայն համբաւոյն, ժողովեցաւ բազում և անթիւ ժողովուրդք մարդկան առ սուրբ մարմին առաքելոյն Յակոբայ. և Աստուծոյ զօրութեամբն բժշկեցան ամենայն հիւանդք և ախտամէտք և ցաւոտք: Եւ առեալ զնա՝ եդին զնա պատուով և փառօք և պաշտէին զնա ջահօք և խնկօք և երկրպագութեամբք. և հնչեաց համբաւն ես քան զես ընդ բազում գաւառս և ասէին թէ աստուած ոմն անգլուխ երևեցաւ մեզ յաշխարհիս մեր և նորոգեաց զմեզ:

Եւ ասի բան թէ այսպէս մնաց մինչև լուսաւորեցաւ մեծն Հռոմ և սահմանքն իւր ի սուրբ առաքելոցն Պետրոսի և Պաւղոսի, և ընդարձակեցաւ քարոզութիւն և վարդապետութիւնն Քրիստոսի մինչև ի սահմանս աշխարհին Սպանիացւոց։

Իսկ ի շրջելն Պաւղոսի և ի քարոզելն, լուաւ զբարի համբաւն զայն և գնաց անդ և տեսեալ ծանեաւ թէ Յակոբ է եղբայրն Յոհաննու։ Եւ քարոզեաց նոցա, թէ ոչ է սա առաքեալ որպէս եւ դուք կարծէք ագիտութեամբ, այլ է աշակերտ Քրիստոսի որ առաքեցաւ լուսաւորել զմեզ. եւ Քրիստոս առնէ զնշանագործութիւնս ի ձեռն դորա։ Եւ սկսեալ կարգաւ վարդապետեաց նոցա զիջումն Որդւոյ ի Հօրէ և զմարմնանալ Բանին Աստուծոյ և թէ որպէս շրջեցաւ յաշխարհի, և կատարեաց զգրեալն վասն իւր, և համբարձաւ յերկինս ուստի էջ. և այսպէս հաստատեաց զնոսա ի հաւատն Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Կարգեաց եպիսկոպոսունս և քահանայս և եկեղեցիս և լուսաւորեցան շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ ընդ Հօր և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ։

Ասի բան թէ սուրբ առաքեալն այս Յակոբ խնդրեաց ի Քրիստոսէ զի թէ ոք աշխատասիրաբար գնասցէ ի վիճակ իւր և ի սուրբ գերեզմանն, ինքն իւրովքն հանդերձ ոչ մնասցէ ի մեղաց դատաստան՝ այլ փրկի ի յաւիտենական հրոյն և տանջանացն։

# Դ

## ՎԱՐՔ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ

յաստուածային ծառանգութիւն հայրորդս և ծառանգակիցս ամենայն զմարդիկ, ամենագով սուրբ առաքելոյն Յոհաննու աստուածաբանին և աւետարանչին Տեառն եղբօր: Վասն որոյ իբր ամենասուրբ բերանովն աստուածամարբ ի վերայ խաչին ասէ ցամենասուրբ եւ ցփառաւորեալ ծնողն իւր եւ ցաի... (?) ցի ամենասուրբ աստուածածինն անա Որդի քո և դարձեալ ցՅովհաննէս եւս անա Մայր քո, յաղագս այսորիկ անուն առի Յոհաննէս աստուծոյ եղբայր. և արդ սկիզբն արացուք:

Յետ համբառնալոյ Տեառն մերոյ[1] Յիսուսի Քրիստոսի յերկինս, ժողովեալ սուրբ առաքելոցն յԵրուսաղէմ ժուժկալութեամբ պահել[2] զգրանն տեսանն և զլսասուր վարդապետութիւն նորա՝ պահօք և աղօթիւք: Եւ յետ ժամանակի ինչ անցանելոյ[3] և փոխելոյ աստուածամօրն, երթեալ նոցա ի Գեթսեմանի[4]. և յայնժամ[5] ասէ Պետրոս ցառաքեալսն[6]. Գիտէ՞ք եղբարք եթէ Տէր[7] և կենարար վարդապետն, պատուիրեաց մեզ գնալ յամենայն աշխարհ, քարոզել և մկրտել զամենայն հեթանոս յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, բառ ընդկելոյ շնորհաց նորա ի մեզ[8], բայց միայն զհրամայեալսն առ ի նմանէ կատարել մեզ, որպէս հրա-

1. Ա. Օր. չունի Տեառն մերոյ:
2. Ա. Օր. պահելով:
3. Ա. Օր. անցելոյ, չունի եւ փոխելոյ աստուածամօրն:
4. Ա. Օր. ի Գեթսեմանի:
5. Ա. Օր. չունի յայնժամ:
6. Ա. Օր. յաւելու ցայլ:
7. Ա. Օր. յաւելու մեր:
8. Ա. Օր. յաւելու եւ այլ ոչ ինչ խնդրել մեզ:

մայեաց փրկչին և վարդապետին մեր: Եւ արդ եկայք եղբարք[1] սիրեցեալք ի շնորհաց սուրբ Հոգւոյն, առաքեցուք զանձինս մեր ըստ պատուիրանաց պարգևաւորին մեզ[2] շնորհս փրկութեան, ասելով ցըմեզ՝ թէ ահաւասիկ առաքեմ զձեզ իբրև զոչխարս ի մէջ գայլոց, և եղերուք խորագէտք իբրև զօձս և միամիտք իբրև զաղաւնիս: Քանզի[3] յորժամ կամիցի ոք ապանանել զօձ, զամենայն մարմինն[4] ի տուրս տայ և զգլուխն միայն թագուցանէ. և մեք պարտիմք այժմ զմեզ յանձն առնուլ և զՔրիստոս ոչ ուրանալ: Այնպէս և աղաւնի, որչափ բազում անգամ զձագս նորա առնուցուն[5], այլ նա զբոյն իւր ոչ ուրանայ: Եւ Տէր մեր վասն այնորիկ յառաջագոյն ասաց մեզ, եթէ զիս հալածեն[6] ապա և զձեզ հալածեսցեն, և բազում վիշտք և նեղութիւնք գալոց են ի վերայ ձեր, այլ յառաջակայքն բարի եղիցի տրտմեցելոցն[7] վասն անուան իմոյ:

Պատասխանի ետեալ Յակոբոս եղբայր Տեառն և ասէ. Բարւոք է մեզ հայր Պետրէ հօտալ յաղագս այսորիկ, զի մերձեալ է ժամ[8] ատացելոցդ ի քէն և գիտիմք ամենեքեան զինչ հրամայեաց Փրկիչն և վարդապետն մեր: Եւ ասէ ցնա Պետրոս. Եւ զայս գիտեմք ամենեքեան մեք, եթէ դու ստա յԵրուսաղէմ վիճեցար[9] և ոչ է քեզ հնար թողուլ զոր ընկալար ի Տեառնէ:

Յայնժամ արկեալ նոցա վիճակս, և հասեալ[10] Ասիայ վիճակ Յովհաննու. և արտմեալ Յովհաննու յոյժ և հառաչեալ երիցս անգամ արտասուօք, և անկեալ ի վերայ երեսաց իւրոց առաջի եղբարցն

1. Ա. Օր. իմ սիրելիք շնորհօք:
2. Ա. Օր. մերոյ զշնորհս:
3. Ա. Օր. Զի յորժամ:
4. Ա. Օր. անձն իւր:
5. Ա. Օր. առնուն:
6. Ա. Օր. հալածեցին:
7. Ա. Օր. չունի տրտմեցելոցն վասն անուան իմոյ:
8. Ա. Օր. ժամանակ. չունի ատացելոցդ ի քէն:
9. Ա. Օր. վիճակեցար:
10. Ա. Օր. եհաս:

երկիր պագանելով նոցա ամենեցուն[1]։ Եւ կալեալ Պետրոսի զձեռանէ նորա յարոյց զնա ասելով, մեք իբրև զՀայր ունէաք[2] զքեզ Հայր Յովհաննէս և հաւատասութիւն[3] ամենեցուն զքո համբերութիւնդ։ Եւ այժմ զոր արարեր չփոթեցեր զմիտս[4] մեր։ Եւ նորա պատասխանի տուեալ արտասուօք ասէ. Մեղայ առաջի Տեառն ի ժամուս յայսմիկ, և հանդերձեալ եմ ի ծովու ալէկոծել։ Զի ի հասանել ինձ վիճակ Ասիա, արամեցայ և ոչ յիշեցի զասացեալն ի Տեառնէ մերմէ, թէ և հեր գլխոյ ձերոյ թուեալ իցէ[5], և մի ի նոցանէ ոչ կորիցէ։ Եւ արդ աղաչեցէք սիրելիք զԱստուած՝ որպէս զի թողութիւն շնորհեսցէ[6] ինձ յանցանացս այսմիկ։

Յայնժամ յարուցեալ նոցա առհասարակ, կացեալ ընդդէմ արևելից հայցելով ի Տեառնէ յաղագս այնորիկ։ Եւ ասեն զՅակոբոս եղբայր Տեառն, թէ աղօթս մատո. և նորա մատուցեալ զաղօթսն, համբուրեցին զմիմեանս ըստ իւրաքանչիւր աստիճանի, և աղօթս արարեալ[7] միմեանց չոգան խաղաղութեամբ յիւրաքանչիւր վիճակսն. և առեալ իւրաքանչիւր ումեք ի նոցանէ ապաստաւորս յեթանասուն[8] աշակերտացն։ Եւ հասի ես Պրոխորոս[9] Յովհաննու գնալ զհետ նորա։ Եւ ի գնալն մեր յԵրուսաղեմէ[10] ի Յոպպէ առ ի նաւել մեզ ի կողմանս Ասիացւոց, և արարաք աւուրս երեք ի ծովեզերին անդ։ Եւ յայնմ հետէ եկեալ նաւ մի եգիպտացի ունելով զլխութիւն կառուաց, կամելով նաւել ի կողմանս արևմտից, և[11] զազարեալ նորա ի Յոպպէ,

1. Ա. Օր. չունի ամենեցուն
2. Ա. Օր. ունիմք։
3. Ա. Օր. յաւելու մեր։
4. Ա. Օր. զսիրտն։
5. Ա. Օր. է։
6. Ա. Օր. արասցէ ինձ։
7. Ա. Օր. խնդրեալ ի միմեանց։
8. Ա. Օր. յեւթանասունն եւ երկու։
9. Ա. Օր. եւ եհաս Պրոքորոսի գնալ զկնի Յովհաննու։
10. Ա. Օր. յԵրուսաղեմէ յԱսիա արարաք ամիսս երեք ի ծովեզերին եւ ապա եկեալ նաւ մի յԵգիպտոսէ...
11. Ա. Օր. մտաք ի նաւն ի Յոպպէ։

չոգաք մտաք ի Նաւն յայն ։ Եւ սկսաւ Յոհաննէս արտասուել և տալ ցիս. Որդեակ Պրոխորէ, միչաք և ալէկոծութիւն մեծ հանդերձեալ[1] է ինձ, և բազում տագնապ է յոգւոյ իմում, զի վասն կենաց կամ մահու ոչ յայտնեաց ինձ Աստուած. և դու այժմ[2] որդեակ Պրոխորայ, եթէ այժմ կեցցես յալէկոծութենէ ծովուդ, ընթացիր[3] յԱսիա և մնա յԵփեսոս, և դադարեա անդ ամիս երիս. եթէ եկից[4] ես մինչև յերից ամսոց ժամանակաց, արտացուք[5] ըստ պատուիրանացն Տեառն, ապա թէ ոչ եկից՝ դարձիր, որդեակ, յԵրուսաղէմ առ Յակովբոս եղբայր Տեառն, և զոր ինչ ասասցէ քեզ արտացես ։

Եւ մինչդեռ զայս ասէր ցիս Յոհաննէս, գնայր Նաւն ի տասներորդ ժամու աւուրն, և ահաւասիկ հողմոյ[6] սաստիկ եղեալ և բարձրացեալ ալիք ծովուն իբրև զլեառս առ ի կործանել զնաւն յայժ. ի տասներորդ ժամէ աւուրն մինչև ցերկրորդ[7] պահ գիշերայն։ Եւ փշրեալ զնաւն և իւրաքանչիւր ոք ի մէնջ բուռն հարեալ զկահուց Նաւուն և Նորօք ալէկոծութեամբ ի վեցերորդ ժամու աւուրն ձգեալ զմեզ ծովն արտաքս[8] առ բերան գետոյ միոյ՝[9] հինգ մղոնաւ մերձ յԱնտիոք[10] Սելեւկիացւոց. և էաք ի Նաւին անձինք քառասուն և հինգ՝ զատ ի Յոհաննէ։ Եւ ի ձգել[11] զամենեսեան ի ցամաք առ հասարակ, և ոչ կարելով խօսել[12] ընդ միմեանս ի բազում աշխատութենէ անտի. քանզի երիցս անգամ չուրջ առեալ Նաւն ի վերայ մեր. թէպէտ[13] և բարի հովին

1. Ա. օր. հասանելոց։
2. Ա. օր. չունի այժմ։
3. Ա. օր. երթ։
4. Ա. օր. կեցցեմ։
5. Ա. օր. յաւելու անդ։
6. Ա. օր. յաւելու հնչումն հողմոյ յայժ։
7. Ա. օր. ցերեկն։
8. Ա. օր. յաւելու նորօք հանդերձ։
9. Ա. օր. ինչ։
10. Ա. օր. ի քաղաքն. չունի յԱնտիոք։
11. Ա. օր. ձգեալ զմեզ զամենեսեան ի միում տեղւոջ, եւ ոչ։
12. Ա. օր. հայել։
13. Ա. օր. չունի թէպէտ։

Աստուած որպէս զոչխարս իւր հովուեալ պահեաց զմեզ։ Եւ կացաք [1] մեք ի գետեզերի անդ, եղեաք իբրև զմեռեալս մինչև ցիններորդ ժամ աւուրն. և յանմշեալ դարձեալ [2] իւրաքանչիւր ումեք ի մէնջ ոգի յինքեանս. և առեն զմիմեանս. Եկայք երթի-ցուք ի գեօղ ուրեք առ ի խնդրել մեզ [3] կերակուր։ Եւ յարուցեալ չոգաք ի քաղաքն Մելեկեայ, խըն-դրեցաք հաց և [4] կերեալ զօրացաք։ Եւ յայնժամ սկսեալ չարախօսութիւն [5] խորհել զինէն, առեալ զիս, եթէ ընկերն քո՝ որ էրն ընդ մեզ ի Նաւին, կախարդ էր և կախարդական արուեստիւք արար ընդ մեզ զայդ, կամելով յինքեան յափշտակել զաստ-ուածս մեր զոր ունէաք ի Նաւին, որպէս զի [6] առեալ հանդերձ Նաւովն գնայ. և ոչ գիտեմք յոր կողմն գնաց. և արդ տուր մեզ կախարդ զկախար-դակիցն քո, թէ ոչ՝ մի ելցես ի ձեռաց մերոց և ի քաղաքէս յայսմանէ, քանզի պարտական [7] ես մա-հու։ Եւ արդ ցոյց մեզ ուր իցէ չար արուեստակիցն քո, քանզի ամենեքեան որ էաք ի Նաւին աւասիկ եմք. և Նա միայն եղև աներևոյթ ի մէնջ։ Եւ բանիւքս՝ [8] այսոքիւք յարուցեալ Նոցա զամենայն քաղաքացիսն ի վերայ իմ առ ի հաւանեցուցանել զՆոսա յաղագս այս-րիկ. և յայնժամ բուռն հարեալ Նոցա զինէն արկին ի բանդ։ Եւ ի միւսում աւուրն առեալ տարան զիս ի տեղւոջ հրապարակի, առաջի դատաւորաց քաղաքին այնմիկ. և Նոցա սկսեալ խօսել բանիւք առ ի քըն-Նել զիս ասելով. թէ ուստի իցես և կամ ո՞ր կրօնից. կամ զի՞նչ արուեստի [9] գիտակ, և զի՞նչ անուն է

1. Ա. օր. մնացաք ի գետե-զերն որպէս մեռեալք։
2. Ա. օր. ոգի առեալ իւրա-քանչիւր ոք ի մենջ։
3. Ա. օր. հաց ի կերակուր։
4. Ա. օր. առեալ կերաք եւ։
5. Ա. օր. չարութիւն խորհել նոցա։
6. Ա. օր. եւ առեալ նաւովն իւկ գնաց։
7. Ա. օր. պարտապան։
8. Ա. օր. եւ այսպէս յարուցին զքաղաքն ի վերայ իմ։
9. Ա. օր. արհեստի։

քո, պատմեա՛ մեզ զամենայն յառաջ քան զանջելն զքեզ չարաչար։ Եւ սկսաւ պատմել. Քրիստոնեայ եմ ի Հրէական[1] գաւառէ, և անուն իմ Պաոխորն, և պատաՀեցայ ի Նաւաբեկութեան[2] յորս դատապարտիմս։ Եւ աստ գտի մի ոմն ի դաստաւորացն, թէ քանի անձինք էիք ի Նաւին զոր յընկերէն քումմէ, քանզի ասեն զոքա թէ կախարդք էիք[3], և կախարդական արուեստիւք յափշտակեաց ընկերն քո զնաւն զոցա[4], անելով զատացեալդ, առեալ զնաւն առացուածովք զոցա, և գնաց աներևոյթ. և դու՝ կամօք[5] փան անկասկածութեան չարարուեստ գործոյդ այդորիկ[6] եկիր ընդ Նոսա, և աշխատին պարտապան ես արեան անպարտից այդոցիկ. և չար[7] գործ քո բերին զքեզ այսր, որպէս զի չարիւ տանջեսցիս. և արդ պատմեա մեզ[8] զգուշութեամբ յաղագս ամենայնի, թէ ո՛ւր իցէ ընկերն քո։ Եւ սկսաւ արտասուօք և Հառաչանօք ասել ցնոսա, եթէ քրիստոնեայ եմ, և աշակերտին Քրիստոսի՝ ՅովՀաննու աշակերտ։ Եւ ինքն Քրիստոս այսպէս պատուիրեաց աշակերտաց իւրոց առաքելոցն[9], գնալ ընդ ամենայն տիեզերս, քարոզել և մկրտել զամենեսեան որ Հաւատան յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Եւ յետ Համբառնալոյ Նորա յերկինս՝ վիճակս արկին առաքեալքն, և ի Համանել իւրաքանչիւր ումեք վիճակ իւր, և վարդապետին իմոյ ՅովՀաննու՝ եՀաս կողմանս[10] ասիացւոց. և Նորա տրամեալ[11] յաղագս այսորիկ և յայտնեալ Նմա առ ի Հոգւոյն սրբոյ, թէ մեզար, և վասն այնորիկ եկեալ է ի վերայ քո վր-

1. Ա. օր. ի Հրէաստանէ։
2. Ա. օր. ի նաւաբեկութենէն յոր եւ դատապարտիմս։
3. Ա. օր. էք։
4. Ա. օր. եւ զաստացուածսն։
5. Ա. օր. չունի կամօք։
6. Ա. օր. մնացեր. անաշատիկ։
7. Ա. օր չարիք քո ածին զքեզ աստ։
8. Ա. օր. մեզ զամենայն զգուշութեամբ եւ թէ ուր իցէ։
9. Ա. օր. չունի առաքելոցն։
10. Ա. օր. կողմանքս։
11. Ա. օր. յոյժ վասն։

տանդ այէկոծութեան ծովու: Եւ իբրեւ մտաք ի նաւ՝[1] զամենայն որ ինչ լինելոց էր, ճշմարտապէս պատմեաց. եւ հրամայեաց ինձ երից ամսոց ժամանակ մնալ յԱսիա՝ եթէ այրեսցի եւ երեւեսցի մինչեւ ցայն ժամադրութիւն. եւ թէ ոչ[2] դարձիր անդրէն յԵրուսաղէմ առ Յակոբոս եղբայր Տեառն եւ եղիցիս ընդ հրամանաւ նորա: Իսկ յաղագս կախարդութեան եւ չար արուեստից, անպարտ եմք ես եւ վարդապետն իմ, այլ եմք քրիստոնեայք եւ ծառայք[3] Աստուծոյն բարձրելոյ:

Եւ զայս լուեալ այր մի իշխան Սելեւկացի, որում անուն էր Սկոփինաոփոս, որ եկեալ էր նորա յԱնտիոքայ[4] յաղագս ինչ հոգոց իւրոց. եւ առժամայն խնդրեաց[5] ի դատաւորացն եւ առեալ զիս արձակեաց: Եւ եկեալ[6] իմ ի քաղաքէն յայնմանէ եւ ի քառասուն օր հասի յԱսիա՝ ի գիւղ մի ի ծովեզերին՝ որում անուն էր Կաղնիք[7]: Եւ մինչդեռ կայի դադարեալ ի ծովեզերի անդ, ննջեալ ի բազում աշխատութեանց եւ յաղենալ ինձ ի քնոյ անտի, բացի զաչս իմ եւ նայեցեալ ի ծովուն՝ տեսի այր ինչ[8] մեծ գալով հնչմամբ մեծաւ եւ ձգեալ զՅոհաննէս յեզր ծովուն. եւ ես առժամայն ընթացայ գիտելով թէ Յոհաննէս իցէ: Եւ մատուցեալ արձակեցի զձեռն իմ զաջ եւ բուռն հարեալ յարուցի զնա. բայց ի հասանել ի նա ձեռին իմոյ ինքնին իսկ յարուցեալ[9], եւ յայնժամ արկեալ զիրկս զպարանոցօք միմեանց արտասուելով, փառաւորեցաք զԱստուած որ

1. Ա. օր. ի նաւն զամենայն զոր ինչ եւ լինելոց էր, զամենայն ճշմարտապէս պատմեաց ինձ:
2. Ա. օր յաւելու ասէ:
3. Ա. օր. պաշտօնեայք:
4. Ա. օր. յԱնտիոք վասն ինչ հոգոց իւրոց:
5. Ա. օր. յաւելու զիս:
6. Ա. օր. գնացի ի քաղաքն Սելեւկացւոց:
7. Ա. օր. Կալենիք:
8. Ա. օր. մի մեծ գոլով հրեմամբ բազմաւ:
9. Ա. օր. յարեաւ եւ արկեալ

տանէ զաշտար և զմեծամեծ սքանչելիս զփառաւորեալս և զամբաւս [1] : Զի այնչափ առողջ և հաստատուն և անչփոթելի միօք, որչափ ամենեւին ոչ զարհուրեալ Յոհաննէս յայնչափ ժամանակաց ալէկծութեանց, զքառասուն տիւ և զքառասուն գիշեր ի վերայ ալեաց ծովուն ծփելով, պաշտպանեալ և կերակրեալ [2] ի Հոգւոյն սրբոյ:

Յայնժամ [3] Յոհաննէս սկսաւ պատմել ինձ, թէ որպէս հովանաւորեալ Նմա զօրութիւն [4] Հոգւոյն ի ծովուն. այնպէս և ես պատմեցի Նմա զամենայն եղեալսն առ իս: Եւ յայնժամ եկաք ի գեղն յայն, խնդրեցաք հաց և տանել կերաք և չոգաք յԵփեսոս:

Եւ ի մտանելն [5] մեր ի քաղաքն՝ երթեալ դադարեցաք յեզր քաղաքին, ի տեղւոջ անուանելոյ Արտեմիդոս. և կայր բաղանիք մի ի տեղւոջն յայն, ամենին գլխաւորն քաղաքին, որում անուն էր Պէտոկրիդոս: Եւ սկսեալ Յոհաննէս ուսուցանել զիս ասելով ցիս. Որդեակ իմ Պռոխորէ, մի ոք գիտասցէ ի քաղաքիս յայսմիկ, թէ վասն է՞ր առաքեցաք այսր և կամ թէ ո՞վ իցեմք մեք, մինչև Աստուած յայտնեսցէ զմեզ, և յայնժամ ունիմք համարձակութիւն: Եւ զայս ասելով Նորա ցիս, ահաւասիկ եկն մի այրանձն [6], հաստակու մեծ, ունելով զբաղանիսն ի փարձու, և էր ամուր և զօրաւոր յոյժ ձեռօք իւրովք, և յաղագս անձնահաճութեան իւրում տանել զբաղանիսն ի փարձու: Քանզի ձեռօք իւրովք հարկանէր զփարձկանսն զոր ունէր ի բաղանիսն, և ոչ ոք կարէր հանդուրժել Նմա. և ասէին զնմանէ թէ և ի հրապարակս [7] պատերազմաց գտեալ և քաջագործութեամբ ոչ վրիպէր,

1. Ա. օր. յաւելու որ ոչ գոյ բիւ:
2. Ա. օր. յաւելու չինէր:
3. Ա. օր. եւ պատմեաց ինձ որպէս:
4. Ա. օր. յաւելու սուրբ:
5. Ա. օր. եւ մտեալ ի քաղաքն:
6. Ա. օր. առնամձն:
7. Ա. օր. ի հրապարակն ի պատերազմունս:

և էր ի մարմնական ախտից պարկեշտ։ Իսկ տեսակ երեւաց նորա զարհուրելի, առ[1] ի հայել աչօք զբազումս զարհուրեցուցանէր։ Եւ գալով նորա ի բաղանեացն, ետես զմեզ որ նստեալ կայաք և մերձեցաւ առ մեզ, և հայեցեալ ի զգեստ աղքատութեան[2] մերում, գիտաց ի միտս իւր թէ օտարք[3] իցեն, և այսպէս ածեալ զմտաւ, թէ Հայք խնդիրք[4] են և միայն Հայք հաւանին ծառայել բաղանեացս իմ գործոյն[5] սաստիկ վարձու։ Եւ ասէ ցՅոհաննէս. Ուստի՞ իցես այր դու։ Եւ ասէ[6]. Յօտար աշխարհէ ի Հրէաստանէ։ Եւ ասէ. Ո՞ր կրօնից։ Եւ ասէ ցնա Յոհաննէս. Յազգէ հրէականէ, իսկ շնորհիւ քրիստոնեայ, և պատահեցաք ի նաւաբեկութիւն։ Եւ ասէ ցնա կինն. Կամի՞ս[7] թէ առից զքեզ ի ծառայութիւն բաղանեացս՝ ի հրավառութեան գործ, և տաց քեզ զպէտս կերակրոց քոց և զայլ պէտս անձին քո։ Ասէ Յոհաննէս. Այո, ես արարից զայդ։ Եւ դարձեալ նայեցաւ յիս և ասէ. Եւ դու ուստի՞ իցես։ Եւ ասէ Յոհաննէս. Եղբայր իմ է։ Եւ ասէ կինն. Պէտք է ինձ և դա ի գործ բաղանեպանութեան։

Եւ առեալ տարաւ զմեզ ի բաղանիսն և կացոյց զՅոհաննէս ի գործ հրավառութեան բաղանեացն և զիս բաղնապան[8]. և տայր մեզ ամենայն աւուր երեք լումա հացի։ Եւ եղեւ ի չորրորդումն աւուրն վրիպեալ Յոհաննու ի գործ հրավառութեան. և եկեալ կինն այն Ռոմանեայ և տեսեալ զայն, զան հարեալ[9] զՅոհաննէս և ասէ ցնա. Վայրաչուրջ[10], աքսորած և անարժան կենաց, ընդէ՞ր յանձն առեր զգործդ՝ մինչ այդպիսի անպիտան ես, մանաւանդ

1. Ա. օր. զի ի։
2. Ա. օր. տկարաշրեան մերոյ։
3. Ա. օր. օտարականք են։
4. Ա. օր. ճգնախնդիրք։
5. Ա. օր. ի գործ բաղանեացն իմ։
6. Ա. օր. յաւելու Յոհաննէս։
7. Ա. օր. կամիմ զի։
8. Ա. օր. բաղանեպան։
9. Ա. օր. եհար։
10. Ա. օր. շրջաչուրջ։

յօժարամտութեամբ վստահացուցանել[1] զիս. բայց գիտեմ թէ փորձկանութեամբ եկիր ծառայել Ռոմանեայ: Եւ արդ գիտացիր թէ յայտնեալ է ծառայ իմ ես, և ոչ կարես ելանել ի ձեռաց իմոց, և թէ փախիցես յինէն, այնչափ խնդիր արարից[2] մինչև գտից զքեզ և չարիւ սատակեցից: Ահաւասիկ ի կերակուր և յըմպելի պատրաստ ես և ի գործ քո կեղծաւորութեամբ գտանիս. զգոյշ լեր չարարուեստ, փոխեա զբնութիւնդ, քանզի Ռոմանեայ ի ծառայութեան ես: Եւ լուեալ իմ ի նմանէ զայսպիսի բանս ընդ Յոհաննէս, տեսանելով և զսէրն զոր եդ յանձին նորա զան հարկանելով, բազում տրտմութիւն և վիշտք անկան ի վերայ իմ, թէպէտ և դեռ չէի խօսեցեալ ընդ Յոհաննու: Իսկ նորա գիտացեալ հոգւոյն որով զխորհուրդս մտաց իմոց ասէ ցիս. Գիտացի, որդեակ, զտրտմութիւն մտաց քոց, և դու իսկ գիտես թէ որպիսի վտանգ նեղութեան եկին ի վերայ մեր[3] վասն յանցանաց իմոց, և ոչ մեզ միայն այլ և արանցն այնոցիկ անպարտիցն պատժոց, և այնչափ ժամանակ[4] ասուրց արարի ի ծովուն, մինչև Աստուածն մեր որում մեզայն՝ կամեցաւ հանել զիս ի ցամաք. և այժմ դու վշտանաս ի վերայ փորձութեան իմոյ, և վաստակաւորութիւն բերես հոգւոց մերոց. և արդ գնա ի վստահացեալ գործն քո և արա զնա զգուշութեամբ. քանզի և Տէրն մեր Յիսուս Քրիստոս, որ[5] Տէր է յամենայնի՝ աղքատացաւ և անարգեցաւ և չարչարեցաւ և խաչեցաւ և ամենայնի համբերեաց, որպէս և գրեալ է[6], վասն զի և զմեզ յայսմ յօժարեցուսցէ, քանզի յառաջագոյն պատուիրեաց մեզ այսմ ամե-

1. Ա. օր. յօժարութեամբ վստահացուցանելով:
2. Ա. օր. խնդրեցից:
3. Ա. օր. եկն ի վերայ իմ:
4. Ա. օր. յալեկոծութեան կացի ի ծովուն:
5. Ա. օր. որ արարիչն է երկնի եւ երկրի:
6. Ա. օր. եւ մեզ յառաջագոյն . . . :

նույնի համբերել. և զայս ասելով նորա ցիս՝ գնացի ի գործն իմ վաստակեցեալ: Եւ եկեալ Ռոմանեայ[1] անդրէն առ ցնա. խնդրեմ յինէն զամենայն պէտս կերակրոց քոց, և ես տաց քեզ, և զգործ քո զգուշութեամբ արա: Եւ ասէ ցնա Յոհաննէս. Զկերակուրդ զոր առնուցումք[2] ի քէն՝ բաւական է մեզ. իսկ զգործդ իմ պատրաստեալ ունիմ զգուշութեամբ: Եւ ասէ Ռոմանեա. Ո՞չ գիտես թէ ամենեքեան անգամնեն[3] որպէս զանպիտանի գործ քո: Եւ ասէ Յոհաննէս, թէ նոր եմ զես ի գործս և յաղագս արգիտութեան վրիպիմ. բայց յետ սակաւ ժամանակի հաճել ունիս ի գործս իմ, քանզի ամենայն արուեստ ի սկզբանէ[4] յաճախ սխալ է: Եւ զայս ասացեալ Յոհաննէս, գնաց Ռոմանէ ի տուն իւր:

Յայնժամ բարկացեալ զեւն եղեալ ի կերպարանս Ռոմանեայ՝ եկեալ առ Յոհաննէս ասելով ցնա. Ընդէ՞ն արամեցուցանես զիս ի գործդ, չարարուեստ փորձական, աւերելով զգործ բազմնեացդ. արդ ոչ կարեմ ինչ հատուցանել քեզ վասն այգորիկ, բայց այժմ վառեա՛ զհրագործութիւն[5] բազմնեացդ և արկից զքեզ այդր և այլ մի ես տեսցես զայս՝ զի չես արժանի, և ոչ ես ինձ այլ պիտոյ. և արդ զի՞նչ արարից. Ել սատի և փորձկանակից ընկերն[6] քո և զնա յաշխարհն՝ ուստի հալածեալ վարեալ[7] զքեզ չար արուեստ քո: Եւ զիւրն առեալ զկազ հրամաուութեանն ի ձեռինն՝ ասելով ցՅոհաննէս. Ամասատակեմ զքեզ չար արուեստական[8]. Ել զնա սատի զի ոչ կամիմ զքեզ ի ծառայութիւն իմ, փախիր, թէ ոչ չարաչար սանջանօք սատակեմ զքեզ:

1. Ա. օր. յաւելու առ Յովհաննէս:
2. Ա. օր. առնումք:
3. Ա. օր. զքեզ ի գործդ քո որպէս անգիտանն:
4. Ա. օր. ի սկզբանն յաճախ սխալի:
5. Ա. օր. զգործ:
6. Ա. օր. փորձկանն ընկերակից
7. Ա. օր. վարեցար վասն յայ արուեստից քոց:
8. Ա. օր. յարարուեստ, եր ոչ առանձնաք...

Իսկ Ցոհաննէս գիտացեալ Հոգւովն սրբով, թէ զեւ էր յԱրամեմեղի մեջենիցն, առէ ցնա զանուն Քրիստոսի եւ ամժամայն հաւատեցաւ նմա[1]: Եւ յայնմհետէ եկեալ[2] Ռամանեայ եւ առէ ցՑոհաննէս, թէ հեղգաս ի գործս քո՝ որպէս կամեցայ թէ մարեցից զքեզ այսր, բայց ոչ կարես[3] յայսմհետէ ելանել ի ձեռաց իմոց, եւ մի ածեր զմտաւ փախչել յինէն, եւ[4] զամենայն զոր յառաջագոյն ասացի՝ կատարեմ առ քեզ սաստիկ հատուցմամբ: Եւ[5] զամենայն լուեալ ի նմանէ Ցոհաննու եւ ամենեւին ոչինչ պատասխանի տուար[6] նմա, առ ի բազում ժուժկալութենէ եւ համբերութենէ լուեալ[7] հեղաբար. եւ նորա ասաւել եւ տրամութեամբ[8] սկսաւ ասել ցՑոհաննէս. Ո՞չ խօսիս չարաբուեստ. միթէ չե՞ս ծառայ իմ, ասա՛ ինձ, պատասխանի ունիս տալ ինձ, ասա՛ ինձ: Եւ ասէ Ցոհաննէս. Այո՛ ծառայք[9] եմք. եւ Ցոհաննէս հրովատս, եւ Պրոխորոն բազմեապանն: Իսկ Ռամանեայ պատմեալ էր ամենեն սիրելեաց[10], թէ երկուս ծառայս ունէի որ ի ծնողաց իմոց թողեալ ինձ, եւ երբեմն փախեան յինէն եւ յետ ամրեաց գտի զնոսա, բայց զթուղթ ծառայութեան ոչ ունիմ զի կորուսի զնա, այլ նոքա խոստովանին թէ ծառայք քո եմք. եւ արդ է՞ ինձ հնար այնպիսի[11] թուղթ առնել. եւ նորա ասացեալ, թէ խոստովանին առ ի ծնողաց քոց թողեալ զինքեանս ծառայք քեզ, կարես հաստատել վկայիւք առնել զայդ առաջի նոցա զգուշութեամբ: Իսկ Ցոհաննու գիտացեալ

1. Ա. օր. հաւատեաց զնա:
2. Ա. օր. սկսեալ Ռոմանեայ ասել:
3. Ա. օր. եղջես յայսմհետէ:
4. Ա. օր. բեւ ոչ զամենայն:
5. Ա. օր. զայս ամենայն:
6. Ա. օր. ասացեալ:
7. Ա. օր. առ բազում ժուժկալութեան լսելով:
8. Ա. օր. եւս ասաւել տրամբեալ ասէ:
9. Ա. օր. յաւելու զո:
10. Ա. օր. իւրոյ երկ. ծառայս ունիմ:
11. Ա. օր. յաւելու այլ:

զայն ամենայն ի շնորհաց սուրբ Հոգւոյն՝ ասէ ցիս. Որդեակ Պախոմայ, կինդ այդ խորհի ծառայընութեան[1] խոստովանութիւն առնուլ ի մէնջ, որպէս թէ ծնողական ծառայք նորա եմք. և խորհուրդ արարեալ ընդ ամենին սիրելեաց իւրում յաղագս այսորիկ վկայս կացուցանելով ի վերայ մեր. և դու մի տրտմիր ի սրտի քում, այլ ուրախութեամբ արասցուք նմա զայն: Քանզի վասն այդորիկ Աստուած փառաւորի և վաղվաղակի ցուցանէ կնիք այդմիկ թէ ո՞վ իցեմք: Եւ զայս ասելով Յոհաննէս ցիս, առժամայն եկեալ Ոսմանեայ և զան հարեալ զՅոհաննէս ասելով ցնա. Չարարուեստ[2] մարդիկ, զիա՞րդ ոչ յառնես ընդ առաջ՝ յորժամ տեսանիցես զտիկին քո գալով և երկիր պագանես. միթէ ազա՞տ համարիս զանձն քո, ո՞չ գիտես եթէ ծառայ ես Ոսմանեայ. և դարձեալ անդէն[3] ապտակեաց զՅոհաննէս: Եւ ասէ Յոհաննէս. Ո՞չ յառաջագոյն ասացի քեզ թէ ծառայք եմք ես Յոհաննէս Հրովասո և Պախոմոն բաղդադայն[4]: Եւ ասէ Ոսմանէ. Ո՞ւմ ծառայք էք չարարուեստք: Եւ ասէ Յոհաննէս. Ո՞ւմ կամիս զի[5] ասացից թէ ծառայք եմք: Եւ ասէ. Իմ ծառայք էք: Եւ ասէ Յոհաննէս. Խոստովանիմք թէ ծառայք[6] եմք գրով և առանց գրոյ: Եւ նա ասէ. Գրով կամիմ առաջի երից վկայից: Ասէ ցնա Յոհաննէս. Մի հոգս ունիր[7] վասն այդորիկ, զի արասցուք որպէս և կամիս: Յայնժամ առեալ նորա զմեզ, տարաւ ի տեղւոջ հրապարակի առաջի հաւատարիմ վկայից և արարեալ գիր ծառայութեան մեր, խոստովանու-

1. Ա. օր. ծառայութեան:
2. Ա. օր. ծառայ չար եւ:
3. Ա. օր. անդրէն ապտակեալ զՅովհաննէս, եւ ասատելով ասէ ցնա. ո՞չ տաս պատասխանի թէ ծառայ ես:
4. Ա. օր. բաղդադեցւոց:
5. Ա. օր. թէ ասասցուք. եւ նա ասէ. թէ իմ ծառայք էք:
6. Ա. օր. յաւելու. քո:
7. Ա. օր. հոգար:

թեամբ մերում, և անդէն տանել[1] տարաւ կացոյց յիւրաքանչիւր գործ։

Եւ էր դիւական սովորութիւն ի բաղանիսն այնմիկ, յամենայն տարւոջ երիցս[2] խեղդել ի նմա պատանի կամ աղջիկ պատանուհի․ զոր և Դիոսկորոս[3] բաղանեացն տէրն՝ գրով գիտութեամբ զչար աւուրն[4] զայնասիկ գիտէր և զգուշանայր յառաջս զաւակի իւրոյ․ քանզի ունէր մի զաւակ պատանի ութուտասնամեայ[5], և էր գեղեցիկ յոյժ, և սովորութիւն էր նմա[6] յառաջս նախանձու մարդկան՝ միայն լուանալ՝ յորժամ գայր ի բաղանիսն։ Եւ յետ լինելոյ մեզ երից ամսոց ժամանակաց ի գործ բաղանեացն, ի միում աւուր եկեալ պատանին ըստ սովորութեան և մտեալ ի բաղանիսն, տաի և ես զկնի ծառայութեան և մտի ընդ նմա․ և[7] պատահեալ պիղծ դեւն և խեղդեաց ըզպատանին․ և զայն տեսեալ ծառայիցն[8] եկեալ լալով պատմեցին այլ ընկերացն, թէ տէրն մեր մեռաւ զինչ արասցուք։ Եւ լուեալ Սամանեայ երաց զգլուխ իւր, և տարեալ զչերացն առ ի կոծել և յողբալ ասելով, թէ և արդ զինչ պատասխանի տաց տեառն իմոյ Դիոսկորիդի ես տկարս և ողորմելիս․ քանզի թէ զայս լսէ[9] առժամայն և նա մեռանի, զի ոչ ունէր զայլ ոք՝ բայց միայն զտէրն իմ զԴէոմեդոս[10]․ և արդ մեծդ Արտեմիս եփեսացւոց աստուածդ, օգնեա և ցոյց զզօրութիւն քո ի միամօր[11] պատանիս մեռեալ, քանզի գիտեմք ամենեքեան եփեսացիք, թէ

1. Ա. օր. զմեզ եւ տանել կացոյց։
2. Ա. օր. երեք անգամ խեղդել կամ սպանանել։
3. Ա. օր. Դեոսկորիդոս։
4. Ա. օր. արուեստին զայնորիկ։
5. Ա. օր. տասնեչորամեայ։
6. Ա. օր. նորա։
7. Ա. օր. յանկարծակի պատահեալ պիղծ դիւին։
8. Ա. օր. նորա եկին։
9. Ա. օր. լուիցէ։
10. Ա. օր. զԴիոմեդոս։
11. Ա. օր. չունի միամօր։

ամենայն ինչ հնարաւոր է առ ի զօրութենէ քումմ մեծամեծ[1]. և արդ յարո՛ զծառայն քո զԳինամին և հաւատասցեն[2] ամենեքեան եթէ դու ես աստուած և չիք այլ ոք բաց ի քէն: Եւ զայս ասացեալ և առաւել քան զայս արձակեալ զհերս գլխոյ իւրոյ, ամբառնալով զձեռս իւր ի վեր յերրորդ ժամէ[3] մինչև ցիններորդ ժամ աւուրն, և այնչափ ողբալով ի վերայ պատանւոյն մինչև բազմաց[4] զարմանալ ընդ աշխատութիւն Թամանեայ: Իսկ Յոհաննէս ձգնեալ յաղօթս և թողեալ զգործս իւր մերձեցաւ առ ի տեղւոյ, որդեակ Պախորոս, զի՞նչ է աշխատութիւն կնոջդ: Եւ ասեալ Թամանէ, որպէս խօսէր ցիս Յոհաննէս, ընթացեալ բուռն հարեալ զնմանէ ասելով. Կախարդ, աշակերտիկ զառն կախարդութիւնք քո զոր առնես ի տան իմում. քանզի[5] յարմէհեան մանր ի տուն իմ և աստուածքն մեր թողին զմեզ. մանաւանդ զի ասեն, թէ քրիստոնեայ եմ. կամ[6] յարո՛ զորդի տեառն իմոյ, եթէ ոչ ստասցեմ զքեզ չարաչար տանջանօք: Եւ ասէ Յոհաննէս. Պատմեա ինձ, զի՞նչ է ողբումդ այդ: Եւ նորա բարկացեալ ապտակեաց զնա յայժ ասելով. Ծառայ չարաբարեան[7] հալածական, ամենեքեան գիտացին որք իցեն ի քաղաքիս Եփեսոս զեղեալդ, և դու եկիր ցի՞ս հարցանել. և խնդալով ասես, թէ ոչ գիտեմ զպատահեալդ[8] տեառն իմոյ Գէանոսի, որպէս խեղդեցաւ[9] ի բաղանիսդ քոյոց չարաբարեանիցդ[10]: Եւ զայս ամենայն լուեալ Յոհաննէս ի Թամանէ, և[11] դարձեալ

1. Ա. օր. յաւելու սքանչելիք:
2. Ա. օր. հաւատասցուք:
3. Ա. օր. յաւելու աւուրն:
4. Ա. օր. ամենեցուն:
5. Ա. օր. զի յարմէհեան մըտեր զու ի տան իմում ես:
6. Ա. օր. արդ:
7. Ա. օր. չարագործ:
8. Ա. օր. զեղեալսդ զպատահումն զաւակի տեառն:
9. Ա. օր. դիզեցաւ:
10. Ա. օր. ի քոց չար արուեստիցդ:
11. Ա. օր. յաւելու ուրախ եղեալ ի Տէր հոգւով զիտացեալ. ես փոքր մի եա զնացեալ ի Թամնէ ես..:

եմուտ ի բաղանիսն և հալածեաց զչար[1] դևն և արկեալ զհոգի պատանւոյն ի նմա և կալեալ ի ձեռանէ նորա յարոյց զնա, և հանեալ արտաքս աւելով զՍոմոնեա. Առ զորդի տեսան քո: Եւ տեսեալ Սոմոնէ զեղեալն ի նմանէ, այնչափ սքանչացեալ՝ զի ահ և զարումն կալաւ զնա, որ[2] ոչ ամենևին իշխէր ամբառնալ զաչս իւր յերեսն Յոհաննու, յիշելով զչարիսն զոր արարեալ էր առ նա, ամօթալից պատկառանօք մածեալ սիրտ նորա որպէս զվէմ և ապականեալ երեսաց նորա առ յանկանել նմա յերկիր և մեռանել: Եւ տեսեալ զնա Յոհաննու այնպէս, մերձեցաւ և կալեալ զձեռանէ նորա տեառնագրեաց զերեսս նորա երիցս անգամ, և դարձաւ ոգի և միտք նորա ի նմա, և առժամայն անկեալ նորա առ ոտսն Յոհաննու, աղաղակով ասէր. Ո՛վ մարդ զօրաւոր և սքանչելի, աղաչեմ զքեզ պատմեա ինձ, ո՞վ ես դու, ապաքէն Աստուած ես դու կամ որդի Աստուծոյ և վասն այսորիկ այսպէս[3] գործս գործես: Եւ ասէ ցնա Յոհաննէս. Ոչ եմ Աստուած և ոչ որդի Աստուծոյ, այլ ես եմ Յոհաննէս առաքեալ և աշակերտ Որդւոյն Աստուծոյ, որ և զլանջօք նորա անկայ, և զանճառելի խորհուրդն լուայ ի նմանէ զոր պատմեմ քեզ. եթէ հաւատաս ի նա՝ եղիցիս և դու նորա ազախին, որպէս և ես ծառայ: Եւ ասէ ցնա Սոմոնեա, մեծ ահիւ և պատկառանօք. Արդ նախ ինձ թողութիւն ծառայ Աստուծոյն ճշմարտի, որ անչափ ամպարշտեցայ առ քեզ բանիւք և գործովք զազրութեամբ: Ասէ ցնա Յոհաննէս. Հաւատա ի Տէրն մեր Յիսուս Քրիստոս, և այն ամենայն թողցին քեզ: Եւ ասէ Սոմոնեա. Հաւատամ յամենայն բանս բերանոյ քոյ, ծառայ Աստուծոյ բարձրելոյ: Եւ մի ոմն ի ծառայից Դիոսկորիդի ընթացեալ պատմեաց նմա յաղագս մահուան որդւոյ նորա, նախ քան զյարուցա-

1. Ա. օր. զպիղծ:
2. Ա. օր. որչափ ոչ իշխէր:
3. Ա. օր. այսպիսի զօրաւոր գործս:

Նոյն զնա Յոհաննու: Եւ ի լալ Դիոսկորիդի զայն, առժամայն անկեալ վախճանեցաւ: Եւ դարձեալ անդրէն ծառային այնմիկ ի քաղաքին և տեսեալ[1] զԴէոմնոս կենդանի և զՅոհաննէս առ յուսուցանել զնա, աղաղակեաց[2] ի ձայն բարձր. Տէր իմ Դէոմնոս, երանի ինձ զի յարեար. բայց ահաւասիկ և տէրն մեր Դիոսկորիդոս վախճանեցաւ առ ի լալ յինէն զվիշտ մահու քո:

Եւ լուեալ զայսպիսի դառն պատմութիւն[3] Դէոմնոսի, անկեալ առ ոտսն Յոհաննու, հեղմամբ արտասուօք աղաչէր զնա ասելով. Տեառն Աստուծոյն ճշմարտի, զոր ի մահուանէ կենդանացուցեր մեծաւ զօրութեամբ և կարողութեամբ քո առ ի բարձրելոյն Աստուծոյ. և այժմ աղաչեմ զքեզ, օգնեա ծառայիս քո, քանզի լուեալ հօրն իմ յաղագս մահուան իմոյ՝ առժամայն և նա վախճանեցաւ. և թէ տեսանեմ զնա մեռեալ ի մահիճս՝ զուցէ անդրէն մեռանիմ: Եւ ասէ ցնա Յոհաննէս. Մի տրտմիր, քանզի մահ հօրն քո զկեանս յաւիտենից պատրաստեսցէ[4] ձեզ հասարակաց: Եւ առեալ զձեռանէ Դէոմնոսի՝ գնաց[5] ի տուն նոցա, և Թամաննեա զհետ[6] նոցա և այլ ժողովուրդք բազումք. և ի մտանելն Յոհաննու ի տունն, մերձեցաւ ի դագաղն[7] և կալեալ զաջոյ ձեռանէ Դիոսկորիդի, ասէր. Դիոսկորիդէ, յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի արի. և առ ժամայն յարուցեալ: Եւ զայն տեսեալ ժողովրդեանն զարմացան յոյժ ասելով զմիմեանս բազմաց ի նոցանէ, թէ Աստուած է դա, և այլք՝ եթէ կախարդ է, բայց կախարդն մեռեալս ոչ կարէ յարուցանել: Իսկ Դիոսկորիդոս եկեալ ի միտս իւր ասէ ցՅոհաննէս. Տեառն Աստու-

1. Ա. օր. գտեալ:
2. Ա. օր. ասելով:
3. Ա. օր. զդառն զլուր:
4. Ա. օր. պատրաստէ քեզ եւ հասարակաց:
5. Ա. օր. չոգաւ:
6. Ա. օր. զկնի:
7. Ա. օր. չունի մերձեցաւ ի դագաղն:

ծոյ բարձրելոյ[1] որ զորդեակդ իմ յարուցեր, ընդ նմին և զիս կենդանացուցեր: Եւ ասէ Յովհաննէս. Յիսուս Քրիստոս քարոզեալն յինէն, նա յարոյց զձեզ:

Յայնժամ անկեալ Դիոսկորիդի առ ոտսն Յովհաննու ասէր ցնա. Զի՞նչ գործեցից առաջնորդ բարի, զի և ես եղէց ծառայ Նորա: Եւ ասէ ցնա Յովհաննէս. Հաւատա և մկրտեաց յանուն Տեառն[2] մերոյ Յիսուսի Քրիստոսի և Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, և թողցին քեզ մեղք քո և եղիցիս ծառայ Նորա: Եւ ասէ Դիոսկորիդոս. Ահաւասիկ ես և որդեակս իմ և ամենայն ինչք մեր ի ձեռս քո. և առեալ եցոյց նմա զամենայն ստացուածս իւր ասելով, զայդ ամենայն ընկալ, միայն սրա՛ զիս և զորդեակս իմ ծառայ Աստուծոյն քում: Ասէ Յովհաննէս. Ոչինչ[3] պիտոյ են ինչք քո ինձ, և ոչ Աստուծոյն իմոյ, քանզի և մեք թողաք զինչս և զստացուածս մեր և գնացաք զհետ[4] Նորա: Եւ ասէ ցնա Դիոսկորիդոս. Ո՞ւր գնացէք զհետ Նորա: Ասէ Յովհաննէս. Լուր Դիոսկորիդէ յաղագս գթութեան Աստուծոյ, զոր ունի առ ամենայն որդիս[5] մարդկան. քանզի խաբէութիւնք մարդկան ի դիւական պատրանաց բազմացեալ ի վերայ երկրի, պաշտելով փոխանակ արարչին իւրեանց զդևս, և փոխադրեցին[6] զերկրպագութիւն իւրեանց յԱստուծոյ, առ ի մատուցանել կռոց պղծոց և դիւաց[7]. և զայն տեսեալ մարդասէրն և ամենարարին Աստուած, առաքեաց զՈրդին իւր միածին, զգենուլ մարմին յամենասուրբ կուսէն Մարիամու Աստուածածնէն անապականաբար, առեալ զմարդկային բնութիւնս խառ-

1. Ա. օր. դո՞ւ ես ծառայ Աստուծոյ կենդանւոյ որ զորդիդ:
2. Ա. օր. չունի Տեառն... եւ:
3. Ա. օր. ոչ ինձ:
4. Ա. օր. զկնի:
5. Ա. օր. ազգս:
6. Ա. օր. փոխեցին:
7. Ա. օր. յաւելու զզոհս:

նեալ և միաւորեալ [1] ընդ աստուածութեանն իւրում, ուսուցանել զմարդիկ ճանաչել զիւր ճշմարիտ աստուածութիւնն և որոշել ի դիւական մոլորութեանց։ Վասն այսորիկ և Հրեայքն [2] յաղագս օրինապահութեան իւրեանց յանդիմանեալք ի նմանէ, բուռն հարին [3] ի նա և դատապարտել խաչեցին. և զայս կամաւ [4] յանձն առեալ վասն մերոյ փրկութեան. և յերրորդ աւուր յարուցեալ ի մեռելոց՝ ազատեաց զամենեսեան որք ըմբռնեալք էին ի դժոխս, և յետ յարութեանն երևեցաւ մեզ երկոտասան առաքելոցս՝ ուտելով և ըմպելով ընդ մեզ որպէս ճշմարիտ մարդ, մարմնաւորական և հոգևորական. և այսպէս պատուիրեաց մեզ գնալ յամենայն [5] աշխարհ ուսուցանել և մկրտել յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, և որ հաւատայ [6] և մկրտի՝ կեցցէ, և որ ոչն հաւատայ՝ դատապարտեսցի։

Եւ զայս լուեալ ի նմանէ Դիոսկորիդէ անկաւ առ ոտս նորա աղաչելով և ասելով. Ծառայ Աստուծոյ բարձրելոյ, մկրտեա զիս և զորդեակս իմ յանուն Աստուծոյն քում։ Եւ ասէ Յոհաննէս. Արձակեա զամենեսեան [7] որ ժողովեալ են այսր. և արարեալ նորա այնպէս և պատրաստեալ [8] առ ի մկրտել։ Եւ ահաւասիկ Ռամանեա ունելով զթուղթ ծառայութեան [9] մերոյ ի ձեռին՝ անկեալ առ ոտն Յոհաննու ասելով. Ընկալ զթուղթ ազատութեան իմոյ և թող [10] ինձ զմեղս իմ, և տուր ինձ զառ ի Քրիստոս կնիքն։ Եւ առեալ Յոհաննու [11] ճղեաց զնա, և առժամայն մկրտեաց զԴիոսկորիդէ և զորդի

1. Ա. օր. միացուցեալ։
2. Ա. օր. Հրէից դպիրքն։
3. Ա. օր. մահու դատապարտեալ։
4. Ա. օր. կամաւորապէս։
5. Ա. օր. ընդ ամենայն։
6. Ա. օր. յաւելու ի նա։
7. Ա. օր. զամենայն ժողովուրդս, եւ։
8. Ա. օր. պատրաստ եղեալ։
9. Ա. օր. ծառայութեանն ի ձեռին իւրում եւ։
10. Ա. օր. թողութիւն արա ինձ։
11. Ա. օր. յաւելու զբուշքն։

նորա զԴէոմինոս և զՌոմանոս. և առեալ զնոսա գնա-ցաք ի բաղանիսն ուր գործէաքն. և մտեալ Յօհան-նու հալածեաց զդեւն որ ըստ սովորութեանն խեղ-դէր զմարդիկ: Եւ յայնմհետէ առեալ զմեզ Դիոս-կորիդէ, և դարձաք անդրէն ի տուն նորա, և եդեալ մեզ սեղան և գոհանալով զԱստուծոյ ընկալաք կե-րակուր և դադարեցաք ի տան նորա:

Եւ յետ սակաւ ինչ աւուրց, եղեալ[1] ժողով ի մեհե-նատուն կոյսն Արտեմիդի, ըստ սովորութեան հասա-րակաց կռապաշտիցն, և կայր հանդէպ մեհենատանն բարձր տեղի մի, և ի վերայ նորա բագին մի ի կռոց անտի. և յաւուր յորում մատուցանէին ի նմա զոհս, ամենեքեան զգենուին զգեստս սպիտակս և այնպէս ելանէին անդ: Եւ ժողովեալ[2] նոցա անդ ի տեղւոջն այնմիկ, չոգաւ և Յօհաննէս և ել եկաց անդ[3], զի պատ-մուճան նորա սեւացեալ էր ի հրախառութենէ բա-ղանեացն: Եւ կալով նորա ընդ աջմէ[4] բագնին այնո-րիկ, յանկարծակի լցեալ սիրտք նոցա բարկութեամբ սկսան ամենեքեան քարաձիգս առնել ի վերայ Յօհաննու սաստելով. և ի ձգել նոցա զքարինսն առ ի դարկնել[5] Յօհաննու՝ հանդիպէին ամենայն քա-րինքն նոցա ի բագինն, մինչև փշրել զնա: Եւ ասէ ցնոսա Յօհաննէս. Արք Եփեսացիք, զի՞ պշարիք ընդ խ յաղագս զդիւական կռոց պղծոց[6]. թողէք զԱս-տուած արարիչ ամենայն էութեան եւ լինելու-թեանց[7], զպարգեւողն մեզ ամենեցուն զհոգի կեն-դանական և բանաւորական, և երթեալ էք զհետ[8] կամաց դիւաց՝ որք ուրախանան ընդ կորուստ ձեր: Քանզի ահա աստուածք ձեր ի քարանց ձերոց փշր-

1. Ա. օր. եղեւ ժողով մեծ:
2. Ա. օր. ի ժողովելն:
3. Ա. օր. յաւելու եւ ծանու-ցեալ զնա մանաւանդ զի:
4. Ա. օր. յաւելու կողմանէ:
5. Ա. օր. զարկանել:
6. Ա. օր. պղծութեան, թողեալ:
7. Ա. օր. յաւելու եւ զՏէր զօ-րութեանց եւ փառաց:
8. Ա. օր. զկնի եւ ըստ կա-մաց սատանայի:

ըեցան. արդ օգնեցէք նմա, և տարարէք զդա ադ՛ որպէս էրն, և կամ աղօթեցէք[1] առ նա և ցուցէ զզօրութիւն իւր առ ի սանջել զիս, զի և ես տեսից զզօրութիւն նորա, և հաւատացից[2] թէ բարւոք պաշտէք զդա։ Եւ զայս ասացեալ Յոհաննու, սկսան անդէն քարաձիգ առնել ի վերայ նորա. և ոչ մի ի քարանցն յայնչափ բազմութեանցն հանդիպել[3] նմա. և նոցա աւելի ես բարկացեալ, պատառեցին զհանդերձս իւրեանց, կրճտելով զատամունս ի վերայ նորա ։ Եւ տեսեալ Յոհաննու զայնչափ արտմութիւն[4] նոցա առ ի ատամնայէ, ասէ ցնոսա. Արք Եփեսացիք, զի՞ չարամտիք ի վերայ իմ. միթէ կամի՞ք տեսանել զզօրութիւն Աստուծոյն իմոյ՝ զոր ասացի ձեզ. ընկալարուք զբանս իմ առանց չարութեան[5], և տեսէք զկարողութիւն ճշմարտի Աստուծոյն իմոյ. և զայս ասացեալ՝ լռեալ դադարեցին աղաղակն։ Յայնժամ Յոհաննէս ամբարձեալ զձեռս իւր ի վեր, մատուցեալ աղօթս[6] հաւատանոք այսպէս ասելով.

Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ ունիս իշխանութիւն մահու և կենաց, և չափով խրատես զարարածս քո, քոյին բազում գթութեամբդ, և այժմ հաւանեցո զմոլորեալ ժողովուրդս զայս՝ առ ի ճանաչել եթէ դու միայն ես ճշմարիտ Աստուած, և չիք այլ ոք բաց ի քէն։ Եւ զայս աղօթելով Յոհաննու՝ առժամայն ընդ բանս նորա եղեալ եասցումն երկրի յոյժ, և անկեալ ի բազմութեանց անտի արք իբրև ութ հարիւր. և զայն տեսեալ այլոցն, ահ մեծ և զողումն կալաւ զնոսա. և[7] եկեալ աղաղակ ան-

1. Ա. օր. տարարէք առ իենքն աղօթս։
2. Ա. օր. գիտացից եթէ բարեպաշտ է դա։
3. Ա. օր. հանդիպեսցէ նմա։
4. Ա. օր. արտմտութիւն։
5. Ա. օր. չարամտութեան։
6. Ա. օր. աղօթս՝ ասէ։
7. Ա. օր. անկեալ ի վերայ երեսաց իւրեանց յերկիր առ ոտսն Յոհաննու՝ աղաչէին զի ։

կանէին տաճարի Յովհաննու յերկիր՝ ի վերայ երեսաց իւրեանց, աղաչելով որպէս զի դադարեսցէ սպառնալիք հասցման երկրին այնմիկ[1]:

Եւ ասէ ցնոսա Յովհաննէս. Ով անմիտք և հեղգամիտք առ ի հաւատալ ի ճշմարիտ Աստուած կենդանի. քանզի թէ յարիցեն և սոքա, սիրաք ձեր խաւարեալ են որպէս փարաւոնին՝ պատրանօք սատանայի, առ[2] ի չհաւատալ տեսանելով զզօրութիւն Աստուծոյ: Եւ զայս լուեալ նոցա, դարձեալ անկան ի վերայ երեսաց իւրեանց ասելով. Հաւատամք յԱստուածն քո թէ յարիցեն դոքա: Յայնժամ Յովհաննէս ամբարձեալ զաչս իւր ի վեր[3] ասելով. Որ եղ ընդ Հօր յէութեան, Աստուած յաւիտենական, Տէր Յիսուս Քրիստոս, որ երեւեցար ի փրկութիւն ազգի մարդկան և շնորհող[4] թողութեան հաւատացելոց ի քեզ. շնորհեա[5] և այժմ զթողութիւն մեղաց դոցա և յարո՛ զանկեալսդ զայդոսիկ, և հաստատեա որպէս զի հաւատասցեն ի քեզ. և տուր ծառայիս քո համարձակութիւն առ ի պատմել զբանս քոյին ճշմարտութեանց: Եւ զայս ասացեալ Յովհաննու, անդրէն եղեալ հասցուածն երկրին այնորիկ և ձգեալ արտաքս զութ հարիւր մեռեալսն զայնոսիկ կենդանիս: Եւ եկեալ նոցա անկան առ ոտսն Յովհաննու[6]. և առեալ զկարգ երախայութեան, մկրտեցան ամենեքեան. և այլք բազումք ի ժողովրդոց անտի տեսանելով զեղեալսն, քանզի ամենայն Եփեսացւոց յայտնապէս[7] եղեալ գործն այն, և այլոց յարտաքուստ գաւառաց լուեալ զայն, գային և մկրտէին ի Յովհաննէ:

1. Ա. օր. յաւելու եւ դարձեալ յարուսցէ զմեռեալսն զայսոսիկ:
2. Ա. օր. չունի առ... Աստուծոյ:
3. Ա. օր. յերկինս:
4. Ա. օր. շնորհեա:
5. Ա. օր. չունի շնորհեա.... դոցա:
6. Ա. օր. յաւելու ասելով ողորմեա մեզ:
7. Ա. օր. յայտնի եղեալ գործոյն այնմիկ:

Եւ եղեալ ի միուսում աւուր ելանել մեզ[1] ի տանէ Գրիգորիդեայ, և[2] երթեալ ի տեղւոջ իմն անուանելոյ դէպ քաղաքի. և էր անդ եղեալ այր մի անդամալոյծ երկոտասան ամաց[3], ոչ կարելով կալ ի վերայ ոտից իւրոց: Եւ տեսեալ նորա զՅոհաննէս, աղաղակեաց ասելով. Ողորմեաց ինձ աշակերտ Աստուծոյն բարձրելոյ. և մերձեցեալ Յոհաննու առ նա ասէ. Յանուն Յիսուսի Քրիստոսի արի: Եւ առժամայն յարուցեալ ամենեւիմբ առողջ փառաւորելով զԱստուած:

Եւ տեսեալ դիւին որ դադարեալն էր ի մեհենատանն Արտեմիդի զեղեալն ի Յոհաննէ, գիտացեալ թէ և մեհենատունն հանդերձեալ է անկանել և կործանել ի Յոհաննէ և ինքն հալածելոց է, յայնժամ եղեալ նմա[4] ի կերպարանս մարդոյ և զգեցեալ զգեստ զինուորական և նստեալ ի նշանաւոր տեղի[5] ունելով և թուղթ առ ի ցուցանել մարդկան լալով և արտասուօք: Եւ տեսեալ[6] զզգեստ նորա երկու զինուորաց, մերձեցան առ նա ասելով. Զի՞ լաս, ընկեր. պատմեա՛ մեզ վասն տրտմութեան քո. և նորա ոչ տուեալ նոցա պատասխանի, այլ հառաչեալ դառնապէս. և նոցա անդէն հարցեալ զնա, թէ պատմեա՛ մեզ զտրտմութիւն քո, թերեւս կարասցուք մխիթարութիւն ինչ տանել քեզ: Եւ յայնժամ սկսեալ նորա լալով և ողբալով պատմել նոցա, թէ այնչափ վիշտք անկան[7] ի վերայ իմ որ չէ ինչ հնար պատմելոյ. այլ ասեմ՝ երթայց խեղդեցից[8] զանձն իմ. և արդ թէ կարող էք օգնել ինձ պատմեցից ձեզ զամենայն, ապա թէ ոչ կարէք օգնել, ընդէ՞ր պատմեմ[9] զխորհուրդ մահուան իմոյ: Եւ ասեն ցնա.

1. Ա. օր. ի միւսում աւուր ելեալ մեր արտաքս:
2. Ա. օր. չունի և… քաղաքի:
3. Ա. օր. երկոտասանամեայ:
4. Ա. օր. նորա:
5. Ա. օր. տեղւոյ ունելով թուղթ ի ձեռին:
6. Ա. օր. զնա երկու…:
7. Ա. օր. եկին:
8. Ա. օր. խեղդեցայց, և արդ…
9. Ա. օր. յայտնեմ ձեզ:

Ձգեաս քո զինուորի է. և մեք զինուոր եմք, և գիտես որչափ կարեմք քեզ օգնել: Եւ ասէ դեւն. Թէ կամիք՝ կարող էք. բայց կամիմ զի երդնուցուք ինձ ի մեծն Արտեմիդէ, թէ զանձինս ձեր դնէք ի վերայ օգնականութեան իմոյ, որպէս ի վերայ մերձաւորի սիրելւոյ [1], և զվարձս ձեր տաց ձեզ և զանձն իմ կեցուցէք: Եւ նոցա առժամայն փութապէս երդուեալ նմա, թէ և զանձինս մեր դիցուք ի վերայ օգնականութեան քո, առ ի հոգալ և ճգնել որպէս ի վերայ անձանց մերոց: Եւ յայնժամ հանեալ զիւին երկուս [2] ծրարս զանձի, եցոյց նոցա, ասելով, դառնապէս լալով [3]. Սիրելիք բարիք [4], ջանացարուք և ահաւասիկ վարձք ճգնութեան ձերոյ: Եւ զայն տեսեալ նոցա առաւել ևս ստիպել [5] զնա, ասելով. Պատմեա մեզ սիրելի զգործ տրտմութեան քո և եղիցիս անհոգս: Եւ ասէ դեւն. Ես ի Կեսարիա Պաղեստինացի [6] եմ. և իշխան Կոմենտարիաս ողորմելիս. և տուան յիս երկու արք կախարդք, միոյն անուն Յոհաննէս և միւսոյն Պօղոս. և ես առեալ պահեցի զնոսա ի բանդի աւուրս երիս, և ի չորրորդում աւուրն՝ առեալ զնոսա յինէն զատաւորն, և տանջեալ զնոսա ըստ չարարուեստ գործոց իւրեանց, և անդէն տուան յիս ի բանդի, զի կրկնակի տանջեսցէ զնոսա: Եւ առեալ իմ զնոսա տանելով ի բանդ. և յանկարծակի զերծեալք յինէն եղեն աներևոյթք: Եւ յայնժամ երթեալ պատմեցի իշխանի վերակացութեան [7] իմոյ Գեմեստի՛ոսի՝ զպատահումն ինձ, և նորա ողորմելով ասէ ցիս. Փախիր ողորմելի և ընթացիր զհետ [8] նոցա. և թէ

1. Ա. օր. մերձաւոր սիրելւոյ ձերոյ:
2. Ա. օր. մէն մի ծրար զանձով:
3. Ա. օր. դառնապէս լալով եւ ասելով:
4. Ա. օր. բարւոք:
5. Ա. օր. ստիպէին:
6. Ա. օր. Պաղեստինացւոց:
7. Ա. օր. չանի վերակացութեան իմոյ Գեմեստիկոսի:
8. Ա. օր. զնա զկնի:

կալցես զնոսա՝ ա՛ռ և դարձիր. և թէ ոչ՝ և դու աներևոյթ[1] լեր, թէ ոչ չարիւ մեռցիս դու. քանզի գիտէր զարամութիւն դատաւորին ի վերայ նոցա: Զայս ասելով դեւն ցերկու զինուորսն, անդէն ցուցանէր նոցա զծրարս զանձին ասելով, թէ զայս միայն առի ի տանէ իմմէ, թողեալ զկին իմ և զորդիս առ ի չգիտել[2] նոցա յաղագս կենաց կամ մահուան իմոյ. և ցուցանէր նոցա զթուղթ արձաբացն ասելով, թէ լուայ ի բազմաց թէ ի քաղաքիս յայսմիկ են նոքա. աղաչեմ[3] զձեզ ողորմել օտարութեան իմում:

Եւ ասեն զինուորքն. Մի՛ տրտմիր սիրելի, քանզի արքն այնոքիկ զոր դու խնդրես՝ այդր[4] են: Եւ ասէ ցնոսա. Երկնչիմ սիրելիք բարիք[5], թէ զուցէ գիտացեն զինէն և կախարդական արուեստիւք աներևոյթ լինին ի քաղաքէս յայսմանէ: Աղաչեմ զձեզ, եթէ կարող էք, դի՛ք զնոսա ի տան բանդի[6] ուրեք մեկուսի, առ ի չտեսանելոյ զնոսա ումեք. և յայնժամ[7] սատակեցէք զնոսա և առէք յինէն զտակառ ինչքս զոր ունիմ ընդ իս, զոր ցուցի ձեզ: Ասեն ցնոսա զինուորքն. Լաւ է քեզ թէ կալցուք զնոսա՝ քան թէ սատակել. քանզի թէ մեռանին նոքա՝ զիա՞րդ կարասցես[8] դառնալ անդրէն ի տան քում: Եւ ասէ ցնոսա դեւն. Սատակեցէք զնոսա սիրելիք և ոչ տեսից[9] զսիրելիսն իմ: Եւ նոքա խոստացան նմա սպանանել զմեզ և տանել[10] ի նմանէ զարհաւիրաց զգանձն:

Յայնժամ գիտացեալ Յոհաննէս ազդմամբ սուրբ Հոգւոյն զնիւթ խորհրդոյ դիւին, ասէ ցիս. Դանու-

1. Ա. օր. անձեռ:
2. Ա. օր. ոչ գիտելով:
3. Ա. օր. չունի աղաչեմ . . . իմում:
4. Ա. օր. աստ:
5. Ա. օր. չունի բարիք:
6. Ա. օր. ի բանտի ի տան ուրեք առ . . .:
7. Ա. օր. անդ:
8. Ա. օր. ո՞րպէս կարես դու:
9. Ա. օր. եւ ոչ կամիմ տեսանել զմայրենիսս:
10. Ա. օր. եւ առնուլ զգանձսն:

զանեմ [1] քեզ առ ի պատրաստել զանձն քո ի փոր-ձութիւն, քանզի բազում մրրիկ և փորձութիւն հանդերձեալ է յարուցանել ի վերայ մեր սատանայ, որ բնակեալ է ի մեհենատանն Արտեմիդի: Զի ա-հաւասիկ յարայց երկու այր ի վերայ մեր զի-նուորք [2]. և Տէր յայտնեաց ինձ զամենայն. և արդ զօրացիր և քաջ լեր [3] և պատրաստեա զանձն քո: Եւ մինչդեռ զայս ասէր [4] ցիս Յոհաննէս, եկին երկու զօրականքն [5] և բուռն հարին զմէնջ ի տե-ղւոջ հրապարակին, և Դիոսկորիդէ ոչ հանդիպէր առ մեզ: Ասէ Յոհաննէս ցզինուորսն. վասն է՞ր պատ-ճառանաց ըմբռնէք զմեզ: Եւ ասեն նոքա. Յաղագս կախարդական չարարուեստից: Եւ ասէ Յոհաննէս. Ո՞վ է դատախազն մեր վասն դատապարտութեանդ այդմիկ: Եւ նոքա ասեն. Առէք այժմ ի բանդի և ապա տեսանէք զդատախազն ձեր: Եւ քարշեալ նո-ցա զՅոհաննէս, ոչ տարան ի բանդի, այլ ուրոյն ի տան իմն զաղտնի, և զիս ընդ նմա, կամեցեալ սատակել ըստ կամաց զիւրեն: Եւ զայն իմացեալ [6] Ռոմանեայ, ընթացեալ [7] պատմեաց Դիոսկորիդեայ: Եւ նորա արագ հասեալ, առեալ արձակեաց զմեզ [8] ասելով, թէ ո՞րպէս տարէք զայդ առանց դատախազի դատապարտութեան և դատաւորի հրա-մանաց՝ արկանել զնոսա ի բանդ, մանաւանդ զաղ-տաբար և ոչ յայտնապէս: Եւ արդ՝ երթայք բերէք զդատախազն և ես բերեմ զդոսա առաջի դատաւո-րին և ըստ օրինացն դատեսցին: Եւ երթեալ զի-նուորացն [9] ի խնդիր զիւրեն և ոչ գտին զնա, և անկան ի տրտմութիւն բազում առ ի չգտանել

1. Ա. օր. գիտացնեմ:
2. Ա. օր. երկու զինուորս. չունի երկու այր:
3. Ա. օր. քաջալերեա:
4. Ա. օր. խօսէր:
5. Ա. օր. զինուորքն:
6. Ա. օր. գիտացեալ:
7. Ա. օր. երթեալ:
8. Ա. օր. յաւելու եւ զնոսա բշնամանեաց:
9. Ա. օր. յաւելու ճգնեալ:

զղեւն։ Եւ Դիոսկորիդոս փոքր ինչ գայթագղեալ ի մեզ[1], այլ վասն երաշխաւորութեան իւրում զմեզ, ժուժկալութեամբ[2] զգուշանայր ի վերայ մեր։ Եւ յետ սակաւ ինչ աւուրց՝ անդէն յայտնեալ դեւն երկուց զինուորացն նոյն կերպարանօք և պատմեալ զպատճառս Թադասի իւրոյ[3]։ Ասեն զինուորքն. Ե՛կ զհետ մեր ի տան Դիոսկորիդի, զի երթիցուք առցուք զնոսա։ Յայնժամ[4] սկսեալ նորա գնալով զհետ նոցա լալով յոյժ, ունելով ի ձեռին զթուղթ արհաւիրացն առ ի վկայութիւն իւր մոլորեցուցիչն։

Եւ ի գնալ նոցա առ մեզ, ժողովել զկնի նոցա ժողովուրդ բազում[5], և նորա սկսեալ առ ի պատմել նոցա առհասարակ՝ զոր և զինուորացն էր տացեալ, որպէս թէ և զնոսա հաւանեցուցէ ընդ զինուորացն ի վկայութիւն իւր։ Եւ եկեալ նոցա ամենեցուն ի տան Դիոսկորիդոսի, և բախեալ զդուրս գաւթի[6] նորա, մեծաւ սրտմտութեամբ աղաղակեցին[7] առհասարակ. Դիոսկորիդէ, ընդ քաղաքիս անիս վէճ. տուր մեզ զկախարդդ, թէ ոչ՝ հուր արկանեմք և այրեմք զքեզ զորօք ի տան քում։ Քանզի ամենայն քաղաքս արտանջեն զքէն, վասն բնակելոյ դոցա ի տան քում, որպէս ի դարանի և ի նաւահանգստի, այդպիսի չարարուեստ արանցդ[8] և խաբեբայիցդ։ Եւ տեսեալ Յոհաննու զայնչափ բազմութիւն ժողովրդեան և զաղաղակ նոցա, ասէ ցԴէոսկորիդոս. Սիրելիք, ոչ կամիմ թէ վասն մեր զանձինս ձեր կորուսանէք կամ զինչս կամ զտուն. քանզի մեք վար-

1. Ա. օր. յաւելու. յերկուշանալով, բեկեա եւ ոչ յայտներ մեզ։
2. Ա. օր. չունի զմեզ ժուժկալութեամբ։
3. Ա. օր. չունի եւ պատմեալ... իւրոյ։
4. Ա. օր. Եւ եկեալ նորա զկնի նոցա լալով։
5. Ա. օր. եւ ժողովուրդ բազում գայր զկնի նոցա. եւ նա սկսեալ...։
6. Ա. օր. չունի գաւթի։
7. Ա. օր. աղաղակէին։
8. Ա. օր. չարարուեստականացդ։

զապետեալք եմք ի Տեառնէ մերմէ, ամենայն աւուր առնուլ զխաչ մեր և գնալ զհետ նորա։ Ասէ Դէոս-կորիդոս ցՅոհաննէս. Ահաւասիկ պատրաստ եմք առ ի յայրել, ես և որդեակս իմ, և ամենայն[1] ինչ և է մեր, վասն հաստատելոյ մեզ սիրոյն Քրիստոսի։ Եւ ասէ ցնա Յոհաննէս. Ո՛չ դու և ո՛չ որդիդ քո և ո՛չ հեր մի ի գլխոյ ձերմէ կորիցէ, բայց տուր այժմ զմեզ ի նաւս։ Եւ ասէ ցնա Դիոսկորիդոս. Թէ տաց զձեզ, տաց և զորդի իմ ընդ ձեզ։ Եւ ասէ Յոհաննէս. Բազմութիւն[2] ժողովրդեանդ այդոցիկ զբազումս ի դոցանէ ի բարի գործ ածցէ. հա՛ն տո՛ւր զմեզ ի նաւս, և դուք լուեալ դադարեցէք ի տան ձերում մինչև[3] տեսանէք զզօրութիւնն Աստուծոյ։

Եւ զայս ասացեալ Յոհաննու, առժամայն իջուցեալ զմեզ ի տանէ անտի և եա ի նաւս. և նոքա քարշեալ զմեզ տարան ի մեհենատունն Արտեմեայ։ Եւ ասէ Յոհաննէս. Ո՞ւմ է տաճարս այս մեծ։ Եւ ասեն նոքա. Տուն սրբութեան մեծին Արտեմեայ։ Եւ աղօթեալ Յոհաննու, առժամայն կործանեցաւ տաճարն հանդերձ մեհենօք։ Եւ[4] ասէ դարձեալ Յոհաննէս. Քեզ ասեմ ոգի չար և պիղծ, ել ի տեղւոջէս յայսմանէ. և առժամայն եղև դևն աներևոյթ։ Եւ զայս տեսեալ ժողովրդոցն, զահի հարեալ ցրուեցան ամենեքեան, և միայն այնոցիկ ժուժկալեալ դադարեցին՝ որք կապանօք ունէին զմեզ։ Բայց նախ քան զցրուել ժողովրդեանն և հալածել դիւին, եհարց Յոհաննէս զդևն առաջի ամենեցուն, թէ քանի՞ ժամանակ է քո մինչև բնակեալ ես ի մեհենատանդ. և նորա ասացեալ[5] երկերիւր և յիսուն ամ։ Եւ ասէ ցնա Յոհաննէս. Դո՞ւ յարուցեր զզխնուորան ի վերայ մեր. և նորա ասացեալ[6], թէ այո՛ ես։ Եւ

1. Ա. օր. ամենայն ինչք մեր վասն սիրոյն Քրիստոսի։
2. Ա. օր. առ բազումս ի ժողովրդոց այդոցիկ բարիս գործեալ է մեր, առէք զմեզ։
3. Ա. օր. եւ.
4. Ա. օր. չունի. Եւ ասէ... հալածել դեւին։
5. Ա. օր. նա ասէ։
6. Ա. օր. դեւն ասէ։

յայնմհետէ[1] ասացեալ Յոհաննու զանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, կործանեաց զաճարն և հալածեաց զդեւն, այլ մի ես բնակել քեզ ի քաղաքիս յայսմիկ: Իսկ որ կապանօք ունէին զմեզ, տեսեալ զեղեալսն, անկեալ[2] առ ոտսն Յոհաննու աղաչելով զնա վասն թողութեան մեղաց իւրեանց, և ընդունել զփրկութիւն քարոզութեան նորա. և տուեալ նոցա Յոհաննէս զպատուէր մկրտութեան և զկենացն յաւիտենից, արձակեաց զնոսա: Եւ յայնմհետէ բազմութիւնք ժողովրդոցն[3], որք ոչ էին հաւատացեալ ի զօրութիւն Աստուծոյ, սքանչանային առեն զմիմեանս, թէ զի՞նչ է գործ եղելութեանս այս՝ զոր տեսանեմք յաւուրս յայսմիկ[4], և ոչ կարեմք գիտել որպէս է. բայց եկայք անդէն կալցուք[5] զնոսա և տարցուք անդրէն առ դատաւոր քաղաքիս, և ըստ օրինաց դատեսցի զնոսա: Եւ մի ոմն ի նոցանէ Հրեայ՝ անուն Մաւէոն, ասէ, թէ ես առեմ զատաւորին թէ կախարդք են և չար գործոց արուեստականք, և պարտ է չարիւ սատակել զնոսա: Եւ զայս[6] ասելով, յարոյց զժողովուրդն ի վերայ մեր, կամելով սատակել զմեզ. և ոմանց ոչ հաւանեալ կամաց նորա, ասէին. Ոչ սատակեմք զդոսա թէպէտ և չար արուեստականք իցեն, այլ օրինօք դատեսցին: Յայնժամ եկեալ նոցա բուռն հարին զմէնջ և տարան առաջի դատաւորին: Եւ նորա[7] ասացեալ ցնոսա, թէ վասն ո՞յր վնասու տայք զդոսա ի մեզ: Եւ ասեն նոքա. Վասն կախարդական չար ա-

1. Ա. օր. եւ առ Յովհաննէս. Քեզ առեմ ոգի չար եւ պիղծ, ել ի քաղաքէ աստի եւ այլ մի՛ եւս մտանիցես աստ: Իսկ որ...:
2. Ա. օր. անկան:
3. Ա. օր. Եւ ժողովրդոցն ըսքանչացեալ ասէին զմիմեանս:
4. Ա. օր. յաւուրս յայսմանէ:
5. Ա. օր. բայց արդ եկայք դարձեալ կալցուք:
6. Ա. օր. չուէի զայս ասելով... եկեալ նոցա:
7. Ա. օր. Եւ դատաւորն ասէ ըն որո՞յ:

րուեստից։ Ասէ դատաւորն. Եւ զի՞նչ գործեցին դո-քա այդպիսի արուեստիւք։

Յայնժամ Մաշտոն կացեալ առաջի նորա[1] սկսեալ, թէ ոմն զինուոր[2] եկեալ ի Հայրենեաց դոցա, առ ի խնդիր չար գործոց նոցա, ունելով թղթի վկայութիւն այդորիկ[3]։ Եւ ասէ դատաւորն. Դու տես զայդ. արդ արկցուք զդոսա ի բանդի մինչեւ ածէք զզինուորն զայն, և Հաւանեցուցէ զմեզ վասն ամենայնի ճշմարտութեամբ։ Եւ[4] առեալ տարան զմեզ ի բանդ և արկեալ զոտս մեր ի կոճեղս զգուշութեամբ. և նոցա երթեալ ի խնդիր զինին, քարոզեալ ընդ ամենայն քաղաքն և ոչ գտին զնա։

Եւ յետ երից աւուրց եկեալ ասացին դատաւորին, թէ ոչ գտաք զդատախազն նոցա զզինուորն։ Եւ ասէ ցնոսա դատաւորն, թէ առ ի չգտանել դատախազի, և յայտնեալ ճշմարտապէս զասացեալսդ ի ձէնջ, մեք ոչ իրաւանամք զոտար զարսն զայնոսիկ ունել ի բանդի։ Եւ[5] յայնժամ առաքեալ տարան զմեզ կացոյց առաջի Հրապարակին, և զան Հարեալ զմեզ և սպառնալեօք պատուիրեաց մեզ՝ այլ մի ևս ուսուցանել ումեք զվարդապետութիւնդ զայդ[6], այլ և Հրամայեաց Հանել[7] զմեզ ի քաղաքէն յայնմանէ։

Եւ եկեալ մեք յԵփեսոսէ չոգաք ի Զմիւռնիա, և ի Հասանել մեզ անդ, ժողովեալ քաղաքացւոցն առ Հասարակ[8] վասն լսման գործոցն այնոցիկ։ Եւ այր ոմն ի գլխաւորաց քաղաքին՝ որում անուն Անթիպատոս՝ մատուցեալ առ Յովհաննէս ասելով. Ծառայ Աստուծոյ, բազում և մեծամեծ բարիս լուայ՝ զոր արարեր յԵփեսոս. և ահաւասիկ տամ քեզ տուն

1. Ա. օր. դատաւորին ասէ։
2. Ա. օր. զինուորք ոմանք։
3. Ա. օր. թուղթ վկայութեանց այդոցիկ։
4. Ա. օր. չունի եւ առեալ... զգուշութեամբ։
5. Ա. օր. չունի եւ յայնժամ... Հրապարակին։
6. Ա. օր. զվարդապետութիւնն մեր։
7. Ա. օր. յաւելու ձայածել։
8. Ա. օր. յաւելու առ մեզ։

բիւր դաշնկանս, քանզի ունիմ երկու որդիս որ ի ծննդենէ իւրեանց մինչև ցայսօր վիրաւորք ի սատանայէ՝ տագնապին, և են այժմ ամք երեսուն և չորս[1]. և ի հասանել չարին եթէ ի բաղանիս հանդիպին և թէ յուտել և թէ ի գնացս և թէ ի ժողովրդեանն՝ առհասարակ անկանին երկրին տաժելով[2], և այնչափ մեծամեծ արք թարշամեալք ի չարէ անտի, առ ի տագնապել զնոսա ամենայն աւուր. և արդ աղաչեմ զքեզ ողորմել ծերութեան իմոյ, քանզի ի տղայական հասակին չափով տագնապէր զնոսա չարն, իսկ զօրով Նոցա ի չափ հասակի՝ աճեալ եւս զօրանայ[3] չարն ի վերայ Նոցա. արդ ողորմեաց Նոցա և խնամ ծերութեանս: Եւ ասէ Յոհաննէս. Իմ բժիշկն վարձս ոսկւոյ և արծաթոյ ոչ առնու, այլ ձրի բժշկէ զհիւանդացեալս հոգւով և մարմնով, և ոչ ինչ խնդրէ ի մարդկանէ՝ բայց միայն զպտղաբերութիւն[4] հաւատոյ արդարութեան: Քանզի զի՞նչ կարես հատուցանել Անթիպատէ Աստուծոյ յաղագս բժշկութեան որդւոց քոց, եթէ ոչ զանձն[5] քո ընծայեցուցես ըստ կամաց Նորա, և փոխան այսորիկ ընկալցիս զորդիսն քո առողջս զօրութեամբն Քրիստոսի: Եւ ասէ ցնա Անթիպատոս. Մինչև ցայժմ[6] ոչ ես դու զանց արարեալ զամեքէ և ոչ զորդւովք իմովք առնես, քանզի երկնչիմ ես յաղագս կանանց[7] իմոց, թէ փոխան բժշկութեան Նոցա նախանձելով՝ չար արուեստի[8] տատակեն զնոսա, փոխան անգանելոյ[9] զլուսաւորական հաւատոց առ ի քէն. բայց որովհետև եկիր այսր հաւատարիմ բժշկիդ

1. Ա. օր. ամաց երեսուն եւ չորից:
2. Ա. օր. տաժեալք:
3. Ա. օր. զօրացաւ:
4. Ա. օր. պտուղ բարութեան եւ արդարութեան՝ հաւատա-ւոյք:
5. Ա. օր. զի՞նչ ընծայես:
6. Ա. օր. ցայսօր:
7. Ա. օր. յազգականաց իմոց, եւ յաղագս:
8. Ա. օր. չարաւ:
9. Ա. օր. ընդունելոյ զլուսա-ւոր:

Աստուծոյ կարող ես օգնել։ Եւ յայնժամ գթացեալ հոգւով[1] ի նոսա Յոհաննէս և արարեալ աղօթս այսպէս. Տէր մեր Յիսուս Քրիստոս որ լոյս ես յամենայնի հոգւոց՝ խոնարհեաց[2] առ յաղաչել զքո մարդասիրութիւնդ, և ոչ երբէք առնես անտես զաղաչանս[3] ծառայից քոց, առաքեա և այժմ ի զօրութենէ քումմէ առ ի հալածել զհոգիս պիղծս[4] ի յորդւոց Անթիպատոսի։ Եւ զայս աղօթելով Յոհաննու, առժամայն հալածեցան դեւքն[5] յորդւոց Անթիպատոսի. և հրամայեաց ածել զնոսա Յոհաննէս առաջի իւր։ Եւ տեսեալ զնոսա հայրն իւրեանց ամենեւիմբ առողջացեալ, անկաւ առ ոտսն Յոհաննու գոհանալով և փառաւորելով զԱստուած։ Եւ ուսեալ նոցա Յոհաննէս զկարգս երախայութեան, մկրտեաց զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, և պատուէր ուսեալ նոցա հօրն Անթիպատոսի առնել ողորմութիւն յաղքատս[6] և ի կարօտեալս, արձակեաց զնոսա օրհնելով և փառաւորելով զԱստուած։

Եւ[7] յետ ժամանակի ինչ առ ի լինելոյ մեզ անդ վարդապետելով, յաւելան շնորհքն Տեառն առ ի հաւատալ բազմաց ի սքանչելագործութեանց Յոհաննու։

1. Ա. օր. չունի հոգւով։
2. Ա. օր. խոնարհեաց։
3. Ա. օր. զաղաղատանս։
4. Ա. օր. եւ հալածեա զհոգին պիղծ։
5. Ա. օր. մերժեալ հալածեցաւ դեւն։
6. Ա. օր. առ աղքատս եւ առ...
7. Ա. օր. Եւ լինել մեզ յետ ժամանակաց վարդապետելով եղեալ շնորհքն։
8. Ա. օր. վասն սքանչելագործութեանցն։

# ՅԱՂԱԳՍ ԱՔՍՈՐԱՆԱՑ ՍՐԲՈՅՆ ՅՈՀԱՆՆՈՒ

Իսկ ի միւսում աւուր երեւեալ նմա ամենատէրն տեսլեամբ և ասէ ցնա. Դարձիր անդրէն և մուտ յԵփեսոս, և վարդապետեա աներկիւղ զբանն ճշմարտութեան, քանզի ընդ քեզ եմ. բայց յետ բազում ժամանակաց աքսորեսցիս ի Պատմայի կղզւոջն. քանզի և նոցա պիտոյ է քո վարդապետութիւնդ:

Եւ ըստ բանին Տեառն դարձաք յԵփեսոս, և արարաք անդ ամ մի ուսուցանելով. և հաւատալ բազմաց արանց և կանանց, շինեաց եկեղեցի հանդերձ ուխտաւորօք, ոչ միայն յԵփեսոս՝ այլ և յարտաքին քաղաքն և ի գաւառն, և մեհենատանց կործանել առհասարակ աղօթիւքն Յոհաննու, մանաւանդ զԱրտեմեդի տաճարացն: Եւ տեսեալ կապաշտիցն զայնչափ կործանումն և զնուազումն իւրեանց, արարին թուղթ պաղատանաց առ թագաւորն Դոմետիանոս, չարախօսութիւն զմէնջ պատմելով այսպէս. Եթէ Յոհաննէս վարդապետ քրիստոնէական կրօնիցն, հանդերձ աշակերտաւ իւրով Պրոխորաւ, եկեալ այսր՝ զամենեսեան մոլորեցուցին զկնի վարդապետութեանն իւրեանց, որոշելով յաստուածոց մերոց, և զմեծ տաճարս Արտեմեդի՝ առ հասարակ կործանեցին կախարդական արուեստիւք, և զհայրենական զհաւատս մեր աւերելով գերեցին:

Եւ զայս գիտացեալ թագաւորին, հրամայեաց աքսորել զմեզ, գրեալ առ նոսա հրովարտակ ունելով ի նմա այսպէս.

Թագաւոր Դոմետիանոս մեծ, յաղթական ինքնակալ արքայ, առ Եփեսացւոց իշխանսդ և որք ընդ իշխանութեամբ, ամենեքեան ուրախ լերուք:

Քանզի զամպարիշտ և զչարարուետ զարդ զայրօ-սին՝ զքրիստոնէից վարդապետ զՅոհաննէս և զՊրո-խորոն, որք բարերար աստուածոց մեղանչեն, յարաժամ անարգելով և յանդիմանելով. այնպէս և զօրէնս և զհաւատ թագաւորութեանս մերոյ ար-համարհեն. հրամայէ թագաւորութիւնս մեր աքսո-րել ի Պատմոյ ի կղզւոջն. բազում արամութեամբ լինել նոցա անդ՝ մինչև յիշատակեսցեն զմեծամեծ աստուածոց, և յաղագս զոցա այլք պարկեշտա-նայցեն :

Եւ ընթերցեալ զհրովարտակն առաքեալքն ի թագաւորէն, և բուռն հարեալ զմէնջ, և եդեալ եր-կաթս յառն Յոհաննու և զգուշութեամբ մեծաւ ունէին, ածելով զմխեանս. Այս է սքանչելի մարե-ցուցին որ զկախարդութիւնն անէր. և արդ զգուշութեամբ կալցուք զդա. և յաղագս աշակերտի զորա անհոգ եղիցուք և թողցուք զդա ընդարձակ առ մեզ. և յամենայն աւուր խատարան և զան հար-կանելով զարհուրեցուցուք և առանց կապանաց եղիցի ընդ մեզ: Եւ էին առաքեալքն ի թագաւորէն արք վեց, մեծամեծք իշխանութեամբ, և ունէին ընդ ին-քեանս այլ արս տասն պատուիրատոք. և արարեալ զգուշութիւն ի վերայ Յոհաննու, և զան հարին զնա յոյժ և բանիւք սպառնալեօք խստանային ի վերայ նմ: Եւ առեալ նոցա զմեզ, մտաք ի նաւն և նաւա-իւրաքանչիւր յայս կողմ և յայն կողմ ի նաւին, և զմեզ նաւաստեացն ի մէջ ամենեցուն . և տային մեզ ամենայն աւուր լիտր մի հաց և քացախ և կոյժ մի ջուր, և յայնցանէ ընարէր առաքեալն Քրիստոսի երկու նուկի[1] հաց և զութերորդ մասն ջրոյն՝ տայր ինձ: Եւ յերրորդում աւուրն, նաւուն թագաւորա-կանքն ի ճաշ, ունելով բազմութիւն կերակրոց. և յետ ուտելոյն և ըմպելոյն, սկսան զուարճանալ ան-կարգութեամբ և այնպէս ախախելով նոցա ընդ միմեանս:

1. Թուի լինել երկու ուեկի:

Մի ոմն ի զինուորացն պատանի, արշաւելով ի կողմն մի Նաւին, անկաւ ի ծովն և եղև աներևոյթ. և էր հայր պատանւոյն ընդ նմա ի Նաւին. և եղեալ յաղագս այնորիկ ողբումն և աշխարումն յոյժ առ հասարակ ամենեցուն որք էին ի Նաւին:

Իսկ հայր պատանւոյն ի բազում տրտմութենէն զմտաւ ածեալ ձգել զանձն իւր ի ծովն և խեղդել զկնի որդւոյն իւրոյ. և իմացեալ ընկերաց նորա, բուռն հարեալ զգուշանային, և եկեալ տանէին պատրիքատոսքն ուր կայր ի կալս Յոհաննէս, և ես կայի առ նմա, և ասեն ցնա. Ահաւասիկ մեք յողբումն և յաշխարումն եմք վասն չարին որ պատահեցաւ մեզ, և դու անփոյթ կաս և ոչ լաս, այլ զուարթագին ես յաղագս վշտի մերոյ:

Ասէ ցնոսա Յոհաննէս. Եւ զի՞նչ կամիք թէ արարից: Եւ նոքա ասեն. Եթէ կարող ես օգնեա: Եւ ասէ Յոհաննէս ցմեծագոյնն ի նոցանէ. Զո՞ր աստուած պաշտես: Եւ նա ասէ. ԶԱպողոն և զԴիոս և զՀերակլէս: Ասէ և ցերկրորդն ի նոցանէ. Եւ դու զո՞ր աստուած պաշտես. Եւ նա ասէ. ԶԱսկղեպիոս և զմեծն Արտեմիս: Սոյնպէս և իւրաքանչիւր ոք ի նոցանէ պատմեցին Յոհաննու զիւրեանց մոլորութեան զանուանսն:

Եւ ասէ ցնոսա Յոհաննէս. Այդչափ աստուածքդ ո՞չ կարեն հանել զպատանին կենդանի ի ծովէդ, և ածել այսր և զձեզ աստի տրտմութեան պահել: Եւ ասեն ցնա. Վասն զի ոչ եմք սրբեալ զանձինս մեր առ նոսա, վասն այնորիկ տրտմեցուցանեն և ոչ օգնեն մեզ:

Եւ զայս ամենայն խօսել նոցա ընդ միմեանս և նաւն ի գնալ, և հեռացեալ ի տեղւոջէն յորում անկաւ պատանին, չափ երիւք մղոնաւք:

Եւ տեսեալ Յոհաննէս զայնչափ ողբումն նոցա, տրտմեցաւ, և ասէ ցիս. Որդեակ Պրոխորեայ, տուր ինձ զձեռն քո և յարո զիս. և արարի այնպէս. և յարուցեալ եկաց յաջակողմն Նաւին, և հնչեցին երկաթքն յոտից նորա. և աղօթս արարեալ առ Տէր

սէ. Տո՛վ, ծո՛վ. հրամայէ քեզ Որդին Աստուծոյ որ գնաց ի վերայ ալեաց քոց իբրև ընդ ցամաք, վասն որոյ և ես զերկաթս զայսոսիկ բարձեալ կրեմ ծառայս Նորա, բեր զպատանիս առ մեզ:

Եւ ընդ բանս Յոհաննու՝ եղև եռացումն մեծ ի ծովուն, և հնչումն բազում և ահագին, մինչև վրտանգեալ զնաւն և զամենեսեան, և բարձրացեալ ալիս մեծ յաջմէ կողմանէ նաւին և ձգեալ զպատանին կենդանի առ ոտսն Յոհաննու. և զայն տեսեալ ամենեցուն, եկեալ անկան առհասարակ ի վերայ երեսաց իւրեանց՝ առ ոտսն Յոհաննու ասելով, եթէ ապաքէն ճշմարիտ Աստուած՝ քո Աստուածն է, և Տէր երկնի և երկրի և ամենայն շնչոց: Եւ մատուցեալ արագ լուծին զերկաթս յոտից Նորա:

Եկաք ի ծովեզերն ի գեօղ մի՝ որում անուն էր Բնակութիւն, և դադարեցաք անդ: Եւ ի մտանել արեգականն ժողովեցան ամենեքեան ի նաւն, և ուղղեալ գնացաք անտի: Եւ ի հինգերորդ պահու գիշերոյն եղեալ ալէկոծութիւն մեծ ի ծովուն առ ի փշրել զնաւն. և տեսեալ զայնչափ վտանգ մահուան, անկան առ ոտսն Յոհաննու և աղաչէին զնա տասնեքին պռոտիքտոոսքն ասելով. Ծառայ Աստուծոյ բարձրելոյ, զպատանին ի խորոց ծովուն կենդանի եհան խնդրողացս ի քէն. հայցեմ յԱստուծոյն քումմէ փրկել զմեզ յայսպիսի մեծ վտանգէ զի մի կորիցուք: Եւ ասէ ցնոսա. Լռեալ դադարեցէք յիւրաքանչիւր տեղւոջ. և լռեցին: Եւ ալէկոծութիւնն առաւել սաստկանայր, և դարձեալ առհասարակ աղաչեցին զնա. Ողորմեաց մեզ ծառայ Աստուծոյ: Եւ ասէ ցնոսա. Ասացի ձեզ եթէ լռեցէք, զի ոչ ոք կորիցէ ի նաւէս յայսմանէ, և ոչ հեր գլխոյ ումեք ի ձէնջ: Եւ յարուցեալ եկաց յաղօթս. և առժամայն ամենևին դադարեաց ալէկոծութիւնն: Եւ ուղղեալ գնացաք զաւուրս երեք, և հասեալ ի տեղւոջ անուանելոյ Եպիկուռոս: Եւ պատահեալ անդ այրն այն երրայեցի՝ Մառեոն, որ յԵփեսոս զապանութեան խորհուրդն յարուցանէր ի վերայ մեր. և տեսեալ

նորա զմեզ ի նաւին, եհարց զոմն ի նաւորդացն, եթէ ո՞վ են նոքա: Եւ նորա ասացեալ, եթէ քրիստոնեայք են, երկու արք հաճոյացեալք Աստուծոյ, քանզի մեծ փրկութիւն եղև ի նաւիս ի ձեռն նոցա: Եւ նա ասէ. Զի՞նչ անուանք են դոցա: Եւ նա ասէ. Վարդապետին՝ Յոհաննէս, և աշակերտին Պռոխորոս: Եւ զայն լուեալ Մառեոն, ընթացեալ եկն ի նաւն և ծանուցեալ զմեզ, սկսաւ աղաղակել մեծաձայն, ասելով. Զի՞նչ առնէք այսր կախարդք: Եւ էր ոմն ի թագաւորականացն առ մեզ, հանդերձ զօրականօքն, առ ի պահել զմեզ, զի այլոցն ամենեցուն ելեալ էր ի ցամաքն. և ասէ թագաւորականն, որ էր առ մեզ, ցՄառեոն. Ե՛րթ գնա այր դու լռելով ի գործ քո և մի՛ դատախազիր ընդ արս ընդ այդոսիկ, որ հրամանաւ թագաւորին տանիմք զդոսա ի Պատմայի կղզւոջն. ապա թէ ո՛չ՝ չարաւ դատեսցիս: Եւ զայս լուեալ ի նմանէ Մառեոն, ել ի նաւէն, և հանեալ ձգեաց զհանդերձ իւր և սկսաւ աղաղակել մեծաձայն. Արք եղբարք որ բնակեալ էք յԵպիկուայ հասէք օգնեցէք: Քանզի Մառեոնի բնակութիւնն անդ էր, և նա էր մեծատուն յոյժ, ունելով աստուածս բազումս. և վասն զի կերակրէր զբնակիչս գեղջն այնմիկ, ամենեքեան որպէս զգլխաւոր և զառաջնորդ ունէին զնա. և յաղաղակելն նորա ժողովեցան առհասարակ, և թագաւորականքն որ ելեալ էին ի նաւէն՝ առեն ցՄառեոն. Զի՞նչ է աղաղակ քո: Եւ նա սպառնալով ասէ. Ի ժամու յայսմիկ տաց ձեզ պատասխանի վասն ամենայնի. և դարձեալ ասէ ցժողովուրդն. Արք ամենեքեան որ բնակեալք յԵպիկուայ՝ հասէք օգնեցէք. քանզի արքս այսոքիկ կախարդք են ազանդաւորք, և այնչափ տանջանս և չարչարանս արարին առ բնակիչս Եփեսացւոց. կախարդական և չար արուեստիւք զամենայն տաճարս հաւատոյ նոցա կործանեցին, և զամենայն քաղաքս նոցա մոխրեցուցին և կործանեցին. և այժմ հալածեալք անտի եկին այսր, զի և առ մեզ զնոյն չարիս արասցեն. բայց արդ եկայք ամենեքեան, արկցուք հուր և այ-

բեցուք զնաւդ հանդերձ պղծովքդ այդօքիւք։ Եւ նոցա ամենեցուն հաւանեալ չար բանից նորա առ ի յայրել զնաւն և զմեզ։ Եւ տեսեալ Թագաւորականացն զայնպիսի անկարգութիւն նոցա, ասեն ցնոսա. Արք Եպիկուացիք, մի ինչ փոյթ առնէք ի նաւդ և որ ի դմա. քանզի հրամանաւ Թագաւորին եմք առ ի յաքսորել զնոսա ի Պառամայի ի կղզւոջն, ցուցանելով նոցա զհրովարտակ Թագաւորին՝ յաղագս զառն աքսորանաց մերոց. և ընթերցեալ զնա առաջի նոցա, հազիւ կարացին լռեցուցանել զնոսա առ ի չայրել զնաւն և զմեզ։ Եւ ասէ Մառեոն ցԹագաւորականն. Եթէ մինչ այդպէս է, զիա՞րդ ոչ ունիք զդոսա ի կապանս, քանզի թերևս աներևոյթ փախիցեն ի ձէնջ և տագնապիք դուք յաղագս դոցա. քանզի բազում կախարդութեանն հմուտք են, դոքա ամենապիղծքդ. և ի ձեռն չարարուեստութեան դոցա և արհաւիրք գործոց, բազումք մոլորեցան և կորեան։ Եւ արդ տեսէք զի՞նչ գործէք, բնակիչք տեղւոյս այսորիկ, զի մի գուցէ և այր կորուսէ զձեզ, մանաւանդ խաբեբայդ Յովհաննէս, որ և ամենայն չարեաց և զատապարտութեանց արժանի է։ Եւ զայս ամենայն լուեալ ի նմանէ Թագաւորականքն, և դարձեալ նորա բազում աղաչեալ զնոսա, մինչև տարաւ զնոսա ի տան իւրում և կերեալ և արբեալ ընդ նոսա, չար բանիւք զայթակղեցուցեալ զնոսա։

Եւ յետ ուտելոյն և ըմպելոյն, յարուցեալ համբուրեցին զնա և եկեալ մտին առ մեզ ի նաւն զագանատես երեկօք, և առժամայն բերին զերկաթն և եդին յոտն Յովհաննու որպէս յառաջագոյն, և մեկնեալ զմեզ ի միմեանց՝ ունէին զգուշութեամբ։

Եւ ուղղեալ անտի գնացաք զաւուրս երկուս և հասաք ի տեղւոջ անուանելոյ Միւռոնի. և անդ դադարեցաք զաւուրս ութն. քանզի հիւանդացեալ մի ոմն ի պառակքտասացն ի փորոյն՝ առ ի մերձենալ ի մահ. և յութերորդումն սկսան վիճաբանել ընդ միմեանս ասելով ոմանց ի նոցանէն, եթէ ոչ է մեզ բարւոք այլ ևս յամել աստ, զի հրաման Թագաւորին փու-

թափէս պաշանջի. և այլք ի նոցանէն ասէին, եթէ ոչ է բարւոք մեզ թողուլ զընկերս մեր և գնալ, կամ ի նաւդ արկանել զդա այդպիսի նեղութեամբ. և յաղագս այդորիկ եղեալ ի մէջ նոցա բազում վիճաբանութիւն։ Եւ լուեալ Յոհաննու կոչեաց զիս և ասէ. Որդեակ Պոռխոռեայ, երթ ասա հիւանդին, եթէ ասէ քեզ առաքեալն Քրիստոսի Յոհաննէս. Արի առողջ յանուն Յիսուսի Քրիստոսի և եկ առ իս։ Եւ չոգայ ասացի, և ընդ բանին Յոհաննու առժամայն յարուցեալ նորա ամենևին առողջ, և եկեալ առ Յոհաննէս գոհանալով զնմանէ։ Եւ ասէ ցնա Յոհաննէս. Երթ առ ընկերացն քոց, զի ուղղեալ գնասցուք աստի։ Եւ երթեալ նորա կերեալ և արբեալ յոյժ, քանզի զայնչափ աւուրս չէր ինչ ճաշակեալ, և յանմիջեալ առեալ զընկերս իւր առ ի նաւել, և գնալ վաղագոյն։

Եւ յանժամ ուղղեալ անտի գնացաք զվեց օր, և հասաք ի տեղւոջ անուանեալ Լոփոս. և դադարեցաք այլ ևս աւուրս վեց յաղագս ալէկոծութեան ծովուն։ Եւ էր տեղին այն անջրդի, ոչ գտանելով ջուր առ ի ըմպել և զօրանալ, և տագնապէին ի ծարաւոյն այնչափ՝ մինչև ոմանց ի նոցանէն նուաղեալք և անկեալք մերձ ի մեռանել։ Եւ զայն տեսեալ Յոհաննու ասէ ցիս. Որդեակ Պոռխոռեայ, առ զամանն ջրոյդ և լից զդոսա ի ծովէդ այտի յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Եւ արարի այնպէս. և առժամայն լի եղեն ամենայն ամանքն քաղցր ջրով, որչափ և կային ի նաւին։ Եւ կոչեաց Յոհաննէս զամենեսեան որք էին ի նաւին, ասելով ցնոսա. Յանուն խաչելոյն առէք և արբէք և զօրացարուք. և առեալ ամենեցուն արբին և զարձան ոգիք նոցա ի նոսա։ Եւ տեսեալ թագաւորականացն զայն ևս զեղեալն, ասեն ցմիմեանս. Զի՞նչ արասցուք զսքանչելի զայրս զայս, որ այսչափ բազում սքանչելագործութեամբ բարիք տեսաք ի սմանէ եղեալ առ մեզ. բայց արդ եկայք զերկաթն հանցուք յոտից դորա, զի հանգիցէ ի դժուարու-

թենէ անտի. զի մի հուր իջուցէ յերկնից և այրեսցէ զմեզ զամենեսեան: Եւ եկեալ Նոցա առաջի Յոհաննու առեն զնա. Ծառայ Աստուծոյ բարձրելոյ, մի բարկանար մեզ ծառայիցս քոց, քանզի հրամանք Թագաւորին դժուարինք են և սաստիկք, և ոչ կարեմք զանց առնել զհրամանօք Նորա. իսկ յայսմհետէ և զմահ արհամարհեմք և զամենայն ինչ, զի այժմ հանեմք զերկաթդ ի քէն, և ահաւասիկ աշխարհս ամենայն առաջի քո է, ընդ որ և կամիս գնա, և մեք Նուեալ գնամք յաշխարհն մեր: Ասէ ցնոսա Յոհաննէս. Եթէ զայդ առնէք՝ ո՞րպէս կարէք դառնալ յաշխարհն ձեր. զի Թագաւորն ձեր վասն իմ առաքեաց զձեզ, և ես զերկաթս զայսոսիկ ոչ ինչ աշխատութիւն համարիմ. այլ ուրախութեամբ ընդունիմ վասն Տեառն իմոյ խաչելոյն: Եւ արդ տարէք կարգեցէք զիս ըստ հրամանաց Թագաւորին ձերոյ, և դուք համարձակաբար գնացէք առ Նա խաղաղութեամբ: Եւ Նոցա աղաչելով հանին զերկաթսն ի Նմանէ:

Յայնմհետէ սկսաւ Յոհաննէս բանալ և մեկնել Նոցա յաստուածային պատուիրանաց, ուսուցանելով զնոսա յաղագս Որդւոյն Աստուծոյ. և Նոցա ընկալեալ զբանն ճշմարտութեան՝ աղաչեցին զնա մկրտել զնոսա. և Նորա մկրտեալ զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Եւ ուղղեալ ի տեղւոջէն Լափայ, չոգաք ի կղզւոջն Քատմայի, և դադարեցաք ի քաղաքի մի՝ որում անուն Ջահաւոր: Եւ ետուն զմեզ Թագաւորականքն յորս հրամայեալ էր Թագաւորին. և աղաչեցին զՅոհաննէս, եթէ մի մոռանար զմեզ յաղօթս քո, և Նա ասէ. Որդեակք իմ, ի շնորհացդ զոր ընկալայք՝ մի անկանիք, և զօրութեամբ Նորա եղիջիք պահպանեալք. և զայս առացեալ զնոսա, երկիր պագին Նմա և գնացին յիւրաքանչիւր տան իջևանի իւրեանց: Եւ յետ այնորիկ արարին առ մեզ աւուրս տասն ուրախութեամբ, վարդապետեալք ի Յոհաննէ զաւուրն զայնոսիկ. և ապա օրհնեալք ի Նմանէ և յուղարկեալք, գնացին ի տունս իւրեանց փառաւորելով զԱստուած:

## ՅԱՂԱԳՍ ՄԻՌՈՆՈՍԻ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՏԱՆ ՆՈՐԱ ԵՒ ԵՂԵԼՈՅՆ Ի ՁԵՌՆ ՅՈՀԱՆՆՈՒ·

Քանզի այր մի էր ի քաղաքին յայնմիկ Ջահաւոր, որոյ անուն Միռոնոս, և կնոջ նորա փանի անուն. և ունէին նոքա երիս որդիս ուսեալս, հմուտ փիլիսոփայական ուսմանց. և էր երէց որդի նորա այսահար՝ տագնապեալ յարաժամ չարաչար: Եւ ծանուցեալ Միռոնոսի յաղագս սքանչելագործութեանցն Յոհաննու, առեալ զմեզ ի տուն իւրում: Եւ իմացեալ ոգին պիղծ, եթէ հալածելոց է զնա Յոհաննէս յորդւոյն Միռոնոսի, և ստիպեալ հալածեաց զնա ի քաղաքէն յայնմանէ յայլ քաղաք, առ ի չգիտել ծնողաց նորա զնմանէ վասն կենաց կամ մահու: Եւ զայն տեսեալ Միռոնոսի, ասէ ցկին իւր. Եթէ բարեգործք էին արքս այսոքիկ՝ զորս ածի ի տուն մերում, ոչ էր պատահեալ այդ, բայց ապաքէն որպէս ասեն մարդիկ, եթէ կախարդք են դոքա, և այժմ չարարուեստիւք իւրեանց հալածեցին զպատանին մեր յաչաց մերոց: Եւ արդ, ով որդեակ իմ, ո՞րչափ հանդուրժեմ յայսպիսի մեծի արտմութեան, որ վասն քո կորստեան ածի զկախարդսդ զայդոսիկ ի տուն իմում: Եւ ասէ ցնա կին իւր, եթէ որովհետև այդպիսիք են, ընդէ՞ր ոչ մերժես զդոսա ի տանէս մերմէ, զի թերևս և զայս երկու որդիս մեր չար արուեստիւքն իւրեանց հալածեն յաչաց մերոց, և վախճանիմք խաւարեալ աչօք և չար և դառն արտմութեամբ: Եւ ասէ ցնա Միռոնոս. Ո՛չ մերժեմ զդոսա՝ որ այդպիսի չարիս արարին ընդ մեզ, այլ արկանեմ զդոսա ի տեղւոջ արտմութեան, մինչև ածցեն զորդին մեր, և կացուսցեն առաջի մեր կենդանի՝ որպէս մերժեցին, և ապա տանջեցից զդոսա դառնապէս:

Եւ էր Միհրնոս դատաւորի քաղաքին այնր՝ հայր կնոջ նորա. և ոչ միայն քաղաքին էր նա դատաւոր, այլ և ամենայն կղզւոյն Բատմայի: Եւ Յովհաննու ծանուցեալ ի Հոգւոյն սրբոյ զամենայն խորհուրդն Միհրնոսի, ասէ ցիս. Որդեակ Պրոխոռեայ, գիտասջիր զի բազում չարիս խորհի զմէնջ Միհրնոս. քանզի ոգին պիղծ որ բնակեալ էր յաւագ որդի նորա, գիտացեալ եթէ հալածելոց էր ի նմանէ ի ձեռն մեր. և գոլով մեր ի տան նորա, չարաչար բռնութեամբ ստիպեաց և հալածեաց զնա ի տանէ իւրեանց, երթալով յայլ քաղաք. և վասն այսորիկ են խորհուրդք Միհրնոսի չարութեամբ ի վերայ մեր. բայց մի տրտմիր վասն ամենայն իրաց պատահելոց մեզ. զի յորժամ եկեսցէ ի վերայ մեր տրտմութիւն ի Միհրնոսէ, յայնժամ հաւատասցէ դա և ամենայն տուն դորա ի քարոզութիւն մեր: Եւ մինչդեռ խօսէր ցիս Յովհաննէս, ահաւասիկ հասեալ թուղթ առ Միհրնոս յորդւոյ նորա. և ունէր թուղթն գրեալ այսպէս. ի յԱպողոնիդէ փիլիսոփայէ ողջոյն հօրդ իմ: Գիտութիւն լիցի քեզ վասն Յովհաննու կախարդի՝ զոր ածեր ի տունդ մեր, և դա չար արուեստիւք իւրովք հալածեաց զիս ի տանէդ մերմէ, և եկեալ իմ ի քաղաքիս յայսմիկ՝ բազում տագնապեցայ, մինչև գտի զքրմապետն Կենոպաս, և պատմեցի նմա յաղագս պատահման իմոյ. և նա ասէ ցիս. Որդեակ Ապողոնիդէ, եթէ ոչ լինի գազանակուր Յովհաննէս՝ քրիստոնէից վարդապետն կախարդն, ոչ է քեզ հնար դառնալ ի տուն քո, և ոչ ի քաղաքին յայնմիկ բնակել: Եւ արդ, հայր իմ, հայցեմ ի քէն, զի օգնեսցես զաւակի քում, ի վերայ չարարուեստ կախարդին Յովհաննու. որպէս զի փութապէս արժանաւորեցայց տեսանել զհայրդ իմ և զմայրդ հանդերձ քաղցր եղբարբք:

Եւ ընկալեալ Միհրնոսի զթուղթն և ընթերցեալ, առժամայն զգուշութիւն արար ի վերայ մեր. և ինքն չոգաւ առ փեսայն իւր՝ առ դատաւորն, և ետեալ ի նա զթուղթն և նորա ընթերցեալ զնա,

բազում տրտմութիւն և չփոթումն վառեալ ի սիրտ նորա, վասն բանիցն Ապողոնիդեայ և կախարդին Կենոպասայ. զի ամենայն կղզին Պատմայի իբրև զԱստուած ունէին զԿինոպաս, վասն կախարդական գործոց նորա: Եւ հաւանեալ դատաւորն բանից Թըղթոյն և Միռոնոսի, հրամայեաց զՅովհաննէս զէչ արկանել գազանաց: Եւ առաքեալ ի տուն Միռոնոսի և առեալ զմեզ առաքեալքն ի դատաւորէն՝ տարան ի բանտ. և յետ երից աւուրց առաքեաց դատաւորն և տարաւ զմեզ առաջի իւր՝ ի տեղւոջ հրապարակին: Եւ ասէ դատաւորն ցՅովհաննէս. Ո՞չ ապաքէն դատաւորն զանց արար զհատուցումն մահու ի քէն, և ոչ հատոյց քեզ ըստ չարարուեստ գործոց քոց, որպէս զի պարկեշտասցիս. և դու եկեալ այսր յաքսորանս՝ առաւել ևս առնես քան զոր յԵփեսոս: Եւ արդ ընդէ՞ր հալածեալ մերժեցեր չարարուեստիւք քո զորդի աներոյ իմոյ՝ զեղբայր կնոջ իմոյ ի տանէ իւրեանց, տո՛ւր ինձ պատասխանի փութապէս ամենայն ճշմարտութեամբ յառաջ քան զտանջելն զքեզ չարաչար. և արա՛ եղբօր կնոջ իմոյ դառնալ և գալ անդրէն ի տուն իւր: Եւ դարձեալ դատաւորն ասէ ցՅովհաննէս, եթէ յո՞ր կրօն իցես և զի՞նչ արուեստի գիտակ և կամ յո՞ր քաղաքէ:

Եւ ասէ ցնա Յովհաննէս. Ի կրօնից՝ Քրիստոսի ծառայեմ խաչելոյն և թաղելոյն վասն քաւութեան ազգի մարդկան, և յարուցելոյն ի մեռելոց յաւուր երրորդի, որ և առաքեաց զմեզ քարոզել յամենայն հեթանոս և հաւատացուցանել ի նա:

Եւ ասէ դատաւորն ցնա. Թագաւորն մեր բարեպաշտ՝ վասն քարոզութեանցդ այդոցիկ առաքեաց զքեզ այսր, և այդրէն դու այդպիսի՞ բանս խօսիս. և արդ՝ յայսմհետէ ուսիր, պի՛ղծ անարժան, պաշտել զաստուածքս մեր զանմահքս, և հաւանեալ թագաւորական օրինացն և մի՛ խաբեր զմարդիկ յաղագս մարդոյ մեռելոյ և բազում անկարգութեանց նորա:

Եւ ասէ Յոհաննէս. Ես զանմահն պաշտեմ և զնա քարոզեմ, որք կամին սրբութեամբ և արդարութեամբ և առաքինութեամբ ընդունել:

Եւ ասէ դատաւորն. Ոչ է մեզ պիտոյ շատաբանել և լսել ի պիղծ բերանոյ քումմէ, այլ հրամայեմ քեզ, որոշեա՛ զանձն քո ի վարդապետութենէդ քումմէ յայդմանէ. և բեր զեղբայր կնոջ իմոյ զԱպողոնիդեայ և կացո զնա առաջի քաղաքացւոցս ի տան իւրում:

Եւ ասէ ցնա Յոհաննէս. Ի վարդապետութենէս յայսմանէ ո՛չ է ինձ հնար որոշել, դատաւոր, յորում և ճշմարտութեան յոյն առաջի կայ ինձ. իսկ յաղագս Ապողոնիդէի փիլիսոփայի որդւոյ Միտոնոսի, ոչ եմ նմա պարտապան չարի՝ որպէս դատապարտէր զիս. բայց հրամայեա ինձ, դատաւոր, և առաքեցից զաշակերտս իմ և գայ ածէ զնա առ քեզ, և նա զոր գիտէ վասն մեր՝ հաւանեցուսցէ զքեզ. քանզի առանց յանդիմանելոյ Նորա զմեզ և կացուցանելոյ զչարիս մեր առաջի քո՝ ոչ կարես սպանանել զմեզ:

Եւ զայս լուեալ դատաւորին, հրամայեաց այնպէս առնել, և տանել անդրէն զՅոհաննէս ի բանտ և դնել զնա ի կրկին շղթայս:

Եւ ասէ Յոհաննէս. Թող նախ գրեմ թուղթ և ապա տանին դնել զիս յերկաթս: Եւ հրամայեաց դատաւորն տալ նմա թուղթ և թանաք, զի այսպէս էած զմտաւ, եթէ զկախարդութիւնն կամի լուծանել գրով: Եւ առեալ Յոհաննու զքարտէսն, գրեաց ի նմա այսպէս.

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. Ես առաքեալս Յիսուսի Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ, պատուիրեմ քեզ, դև տագնապող, որ բնակեալդ ես յԱպողոնիդէ փիլիսոփայ, ել ի ստեղծուածոյդ Աստուծոյ և այլ մի ես մտաներ ի դմա. այլ մերժեաց արտաքս ի կղզւոյս յայսմանէ և մի մերձենար այլ ես ի մարդ. այլ երթ դադարեա յանջրդին տեղւոջ ուր ոչ կամիս: Եւ արդ, ես Յոհաննէս, յանուն Հօր

և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ պատուիրեմ քեզ, դև տագնապող, այդպէս ելանել:

Եւ առեալ իմ զթուղթն՝ չոգայ ի քաղաքին յորում էր Ապողոնիդէս, քանզի ոչ էր հեռագոյն բայց միայն վեց մղոնաւ. և ի հասանելն ինձ անդ, խնդիր արարեալ տեղեկացայ յորում տեղւոջ օտարաբար դադարեալ էր: Եւ ի մերձենալն իմ առ նա, առժամայն մերժեալ հալածեցաւ ի նմանէ դևն: Եւ ասէ ցիս Ապողոնիդէ. Վասն է՞ր եկիր այսր՝ բարի աշակերտ բարի վարդապետի: Եւ ասեմ ցնա. Ջհանձար քո զպրութեանդ եկի տեսանել, և տանել զքեզ առ ծնողսն քո և ի տուն քում և առ դատաւոր քաղաքին քում:

Եւ յելանել ի նմանէ դիւին, այնչափ եղեալ Ապողոնիդէ հաստատուն ամենայն իմաստութեամբ և հանճարով լի, առ ի սքանչանալ ինձ. և առժամայն պատրաստեալ նորա ինձ ջորէգրաստ, և իւր ձիագրաստ, և նստեալ ի վերայ նորա՝ գնացաք: Եւ ի հասանել մեզ առ դուռն քաղաքին, եհարց ցիս ասելով. Ո՞ւր իցեն դադարք վարդապետին. և ասացի, թէ դատաւորն վասն քո ի կրկին չղթայս էարկ զնա և եդեալ ի դժուարարնակ բանտի: Եւ զայս լուեալ Ապողոնիդէ՝ ոչ երթեալ ի տուն իւրում և ոչ խօսեցեալ ընդ ումեք յազգականաց իւրոց, այլ առժամայն առեալ զիս չոգաք ի բանտն. և աղաղակեալ ասաց ցբանտապետն, թէ բաց. և տեսեալ զնա Ապողոնիդեայ, անկաւ ի վերայ երեսաց իւրոց, երկիր պագանելով նմա. Եւ ասէ ցնա Յոհաննէս. Արի՛ որդեակ, օրհնեսցէ զքեզ Աստուած: Եւ յարուցեալ Ապողոնիդեայ եհան զերկաթսն ի Յոհաննէ. և առեալ զնա ելաք արտաքս: Եւ ասէ Ապողոնիդէ ցբանտապետն. Եթէ ոք ասէ ինչ ցքեզ վասն մարդոյս այսորիկ, ասա՛, թէ Ապողոնիդէս արձակեաց: Եւ առեալ զմեզ, տարաւ ի տուն իւր, մինչդեռ նստեալ կային ծնողքն նորա և եղբարքն, տրտմութեամբ և լալով վասն օտարանալոյ նորա. և յանկարծակի տեսեալ նոցա զԱպողոնիդէ՝ յարուցեալ

ամենեքին համբուրեցին զնա արտասուօք: Եւ ասէ հայր նորա Միանոս. Զի՞ եղև քեզ որդեակ, զի՞ փախեար ի տանէս քումմէ և արարեր մեծ վիշտ ծնողացս և եղբարցդ քոց և ամենայն ազգականաց: Եւ ասէ ցնա Ապողինարիդէ. Բազում մեղօք լի գոլով տունս մեր յոյժ, և մտանելով ի սմա Յոհաննու առաքելոյդ Քրիստոսի, անգիտացաք զառաքիչ դորա թէ ո՞վ է, և կամ ո՞վ առաքեալդ ի նմանէ. և յաղագս այսորիկ եղև ինձ այս, հայր իմ, որպէս զի ծանիցուք զառաքիչն և զառաքեալդ յառաքողէն:

Եւ զայս լուեալ Միանոսի յԱպողինարիդեայ որդւոյ իւրոյ, հաւատաց բանից նորա և ասէ. Եթէ այդպէս իցէ որդեակ՝ երթիցուք պատմեսցուք զատաւորին. զի վասն թղթոյն քո զոր գրեալ էիր առ իս և ես ցուցի նմա, և նա իմ խորհրդակցութեամբ արկ զՅոհաննէս ի շղթայս և եդեալ ի բանտի: Եւ ասէ ցնա Ապողինարիդեայ. Վասն այդորիկ, հայր իմ, զմտաւ հոգս ինչ մի ածեր. զի զատաւորն փեսայ մեր է, և զոր ինչ ասեմք՝ նա հաւանի և կամի, և զոր ասեմք առնէ: Եւ դարձեալ Ապողինարիդեայ ասէ ցՅոհաննէս. Վարդապետ բարի, բանս ինչ ի պատուիրանաց քոց ուսո մեզ յօգտակարացդ յայդցանէ:

Ասէ ցնա Յոհաննէս. Ասա նախ դու մեզ որդեակ, եթէ ընդէ՞ր մերժեցար ի տանէս քումմէ և ի քաղաքէս քումմէ, յոստր քաղաք երթալով: Եւ ասէ Ապողինարիդեայ ցՅոհաննէս. Պատճառ փախստեան իմոյ ստոյգ այս է. քանզի գիտէին ծնողք իմ, եթէ մինչդեռ երեք ամաց էի ի տղայական հասակին, ի միում աւուր եդեալ կայի ի մահիճս խորագին քնով, և եկեալ ի կերպարանս մարդոյ իմն, կացեալ ի ձախոյ կողմանէ, և շարժեալ նորա զիս, զարթեայ ի քնոյ անտի, և նայեցեալ տեսի զնա, և էին աչք նորա իբրև զկայծակունս, և երեսք նորա իբրև զստուեր, և ասէ ցիս. Բաց զբերան քո, և ես բացի, և մտեալ նորա ընդ բերան իմ, և դադարեալ ի փորի իմում. և յայնմհետէ ծանուցանէր ինձ պատմելով, զամենայն զոր ինչ լինելոց էր ի տան

մերում՝ յաղագս բարւոյ կամ չարի. և գոլով քո այր, ասէ ցիս. Եւ փախիր աստի Ապողոնիդէ, զի մի չարաւ մեռցիս. քանզի այրդ այդ Յոհաննէս որ եկեալ դադարեալ է ի տան ձերում՝ կախարդ է, և խնդրէ սպանանել զքեզ: Եւ այնչափ ատիպեալ նորա զիս, մինչև հալածեալ մերժեցայ. և տարեալ զիս ի քաղաքին յայնմիկ, այլ ոչ ես տայր ինձ թոյլ դառնալ աստ, ասելով, եթէ մինչև ցմեռանել Յոհաննու չարիս, ոչ է հնար դառնալ քեզ ի տուն քո և ի քաղաքին քում. և տարեալ զիս առ Կինոպս. Հարցի ցնա վասն այսորիկ, և նա զնոյն ասաց: Իսկ գոլով աշակերտիդ քո ի քաղաքին յայնմիկ ի տեղւոջն՝ յորում էի դադարեալ, և ի տեսանելն իմ զդա՝ առժամայն գեն որպէս ի տղայական հասակին դիւրագոյն մնեալ ընդ բերան իմ, ըստ նմին օրինակի դիւրագոյն փութապէս արտաքս ել ի փորոյ իմմէ. և ի մերժելն նորա յինէն՝ ի բազում ծանրութենէ թեթևացաւ անձն իմ. և բազում յաջողութիւն հանճարոյ ընկալան միտք իմ և բարի կամաց՝ յաղագս գալստեան աշակերտիդ քո:

Եւ ասէ Յոհաննէս. Կամիս, որդեակ Ապողոնիդէ, տեսանել զզօրութիւն խաչելոյն. ո՞րպէս ոգին պիղծ, որ բնակեալ էր ի փորի քում և տագնապէր զքեզ, ի գալ մեր ի տան ձերում գաղի հարաւ ի զօրութենէն Քրիստոսի, և ոչ կամելով մերժել ի քէն, յաղագս այնորիկ ատիպեաց և հալածական մերժեաց զքեզ ի տանէս քումմէ: Եւ արդ լուր և գիտասջիր որդեակ Ապողոնիդէ, թէ ոչ միայն առ ի տեսանել ոգին չար և պիղծ արտաքսեալ հալածի անուամբն Քրիստոսի, այլ և թղթովք զօրութեամբ նորա աներևոյթ հալածեմ զնոսա:

Եւ առեալ Յոհաննէս յինէն զթուղթն՝ զոր տուեալ էր յիս յաղագս հալածանաց դիւին, եցոյց Ապողոնիդեայ, և առեալ ընթերցեալ զնա և կալեալ զթուղթն առ իւր: Եւ առեալ Ապողոնիդէ զՅոհաննէս և զիս և զհայրն իւր և զեղբարսն իւր, և չոգաք առ դատաւորն. և պատմեաց նմա յաղագս ամենայնի

որ ինչ պատահեալ էր նմա ի դիւէն. սոյնպէս և զբարեգործութիւնն Յոհաննու որ առ նմա. և զայն ամենայն լուեալ ի նմանէ դատաւորն, յայնմհետէ գութ մեծ և սէր անկեալ ի սիրտ նորա, ի վերայ վարդապետին իմոյ Յոհաննու. և առեալ զմեզ ի տանէ դատաւորին՝ դարձաք ի տուն իւրեանց, և էաք անդ բազում համարձակութեամբ:

Եւ առեալ Յոհաննէս յաստուածական պատուիրանաց, սկսաւ ուսուցանել զամենեսեան որք էին ի տանն Միռնոսի, և նոցա մեծաւ ուրախութեամբ ուսեալ յաստուածային գրոց զկարգս հաւատոյ քրիստոնէութեան, աղաչեցին միաբան զՅոհաննէս մկրտել զնոսա, և նորա մկրտեալ զնոսա զամենեսեան յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ:

Եւ զայն տեսեալ կնոջ դատաւորին՝ դստերն Միռնոսի, թէ որպէս լուսաւորեցաւ տուն հօր նորա առհասարակ ի Յոհաննէ հաւատովն որ ի Քրիստոս, և ցանկացեալ վարդապետութեան նորա յոյժ, ասէ ցայրն իւր. Ահաւասիկ տուն հօր իմոյ ամենեքին առհասարակ հաւատացին ի Քրիստոս Յիսուս՝ յԱստուածն խաչեցեալ ըստ վարդապետութեանն Յոհաննու, և արդ կամեաց տէր զի փառաւորեսցի և մեր տունս որպէս և տուն հօր իմոյ: Եւ ասէ դատաւորն ցկին իւր. Խռուսիպէ. ոչ գիտես կին, եթէ որչափ յիշխանութեանս յայսմիկ եմ, ոչ կարեմ զայդ առնել: Ասէ ցնա Խռուսիպէ կին իւր, մանաւանդ յիշխանութեանդ կարես զայդ առնել. և պարիսպ և ամրութիւն լինել մեզ ամենեցուն և վարդապետին մերոյ Յոհաննու՝ ընդդէմ հալածչաց մերոց: Եւ ասէ ցնա դատաւորն. Գիտասջիր կին, զի ատելի է հաւատ քրիստոնէից ոչ միայն թագաւորաց այլ և ամենայն մարդկան. և եթէ մկրտիմ այժմ, սկսանիմ հակառակ լինել վասն ձեր՝ ընդդէմ հրամանաց թագաւորին և ամենայն կռապաշտից, և կորնչիմք ամենեքեան առհասարակ. և կամ երթան առ թագաւորն դատախազել զմէնջ, և նա տանջէ զմեզ զամենեսեան. բայց թէ իցեմ և ես ի կրօնս

յայսոսիկ, որպէս թերածու երեւիմ կռապաշտացդ յաչս մարդկան, այլ ոչ եթէ յայսմհետէ ընդդիմանամ Քրիստոսի, այլ պահեմ ի ծածուկ զպատուիրանս Նորա, և լինիմ օգնական և խնամածու որ հաւատան ի Քրիստոս. և յետ այսորիկ գտանելով ինձ ժամանակ աներկիւղ ի թագաւորէն, լինիմ և ես քրիստոնեայ յանդիման ամենեցուն։ Եւ արդ դու կին, ո՛վ զուգիդ մեր, և երթ ի տուն հօր քո, և անդ ուսարուք ի Յոհաննէ և լուսաւորեցարուք մկրտելով ի Նմանէ առ ի պահել ձեզ ճշմարտապէս զպատուիրանն Քրիստոսի, և զգոյշ լեր կին, մի՛ ինչ բան մի ի պատուիրանացն Յոհաննու արհամարհեր, այլ և զխորհուրդս իմ մի՛ յայտներ ումեք, մինչև լինել ինձ կատարեալ քրիստոնեայ. քանզի կռապաշտական օրէնքն տանջեն որ զխորհուրդ աստուածական յայտնեն. որչափ ես տառել օրէնք քրիստոնէականք և քարոզ Յոհաննու յաղագս Քրիստոսի տաքողի Նորա։ Եւ արդ տես կին, զգոյշ լեր յամենայն բանս բերանոյ Նորա քեզ և որդւոյդ մերում միաւորի։

Եւ զայս ամենայն լուեալ Խոսրովիդի կին զատաւորին յանէն իւրմէ, առժամայն մեծաւ ուրախութեամբ առեալ զորդին իւրեանց, չոգաւ ի տուն հօր իւրոյ Միանոսի։ Եւ ի հասանել Նորա անդ, նախ Յոհաննու երկիր եպագ, և ապա հօր և մօր իւրոյ և եղբարց։ Եւ ասէ ցնա Յոհաննէս. Վասն է՞ր պատճառանաց եկիր առ մեզ դուստր Խոսրովիդի։ Եւ նա ասէ. Վասն այսորիկ եկի ի տուն հօր իմոյ, վարդապետ, որպէս զի փառաւորեսցի տուն իմ ի քէն, որպէս և տունս հօր իմոյ։ Եւ ասէ ցնա Յոհաննէս. Քաջալերեցուցէ Աստուած զսիրտ քո և զսան քո ի խորհրդդ յայդմիկ, և զորդւոյն ձերում, որպէս և զտուն հօր ձերոյ։ Եւ դարձեալ անկաւ Խոսրովիդի ի վերայ երեսաց իւրոց երկիր պագանելով Յոհաննու և ասէ. Վարդապետ բարի, տուր ինձ և որդւոյս իմում զառ ի Քրիստոս զկնիքն, զի համարեսցուք ի թիւ տանս հօրս մերոյ։ Եւ ասէ

ցնա Յովհաննէս. Երթիցուք և խօսեսցուք ընդ տան քո. և կամօք նորա արասցուք զայդ: Յայնժամ խաւսխղի պատմեաց Յովհաննու զամենայն զոր լուեալ էր յանէ իւրմէ. և նա ուրախ եղեալ յոյժ, զի կամօք գատաւորին եկեալ կին նորա ի մկրտութիւն. և ուսուցեալ նմա զամենայն կարգս պատուիրանաց զգուշութեամբ պահել, և մկրտեաց զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Եւ տեսեալ Միանոսի զմկրտել զտերն իւրոյ և զորդւոյ նորա, ուրախութեամբ մեծաւ ցնծացաւ հոգի նորա. և առեալ ինչս բազումս և բերեալ եդ առ ոտս առաքելոյն Յովհաննու, և ասէ ցդուստրն իւր. Ահաւասիկ ինչս բաւականս ի պէտս ձեր, և ի սեղան իմ կերէք և արբէք, և մի այլ ես մերժիք ի տանէս մերմէ, զանեալ անդրէն առ զատաւորն, զի մի երբէք արհամարհիցէք զպատուիրանն Քրիստոսի: Եւ ասէ ցՄիանոս դուստրն իւր. Եղիցին ինչք քո հայր իմ ի տան քում, և ես և որդիդ իմ երթամք ի տան իմում, և կայ մեր ոսկի և արծաթ բազում և այլ ինչք, և զայն առնումք և գամք դադարեմք աստ: Եւ զայս լուեալ Յովհաննու, ասէ ցՄիանոս. Ոչ զքո բանդ ընդունիմք, և ոչ զդստեր քում. զի ոչ առաքեաց զմեզ Քրիստոս բաժանել զկանայս յարանց կամ զայրս ի կանանց. մանաւանդ զի դուստրն քո միաբանութեամբ առն իւրոյ հաւատաց ի Քրիստոս. և արդ երթիցեն խաղաղութեամբ ի տունն իւրեանց դուստր քո և որդի իւր. քանզի հաւատամ ի Քրիստոս առաքիչն իմ, վասն որոյ քարոզեմ զսքանչելիս նորա, եթէ և այր դորա եղիցի քրիստոնեայ: Իսկ զինչս քո զոր ընծայեցեր զդստեր քոյ և դա ոչ ընկալաւ, տուր փոխ Քրիստոսի, որպէս ասէ բանն ճըշմարտութեան. Թէ որ ողորմի աղքատի փոխ տայ Աստուծոյ. և որք կերակրեն զաղքատս կարօտեալս՝ ընկալցին զհատուցումն բարի, և արարէք այցելութիւն այնպիսեացն, որպէս ասաց Տէր մեր Յիսուս Քրիստոս, եթէ ողորմեցարուք ողորմեալք, տուք և տացի ձեզ, և որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ:

Եւ զայս վարդապետեալ նոցա Յոհաննու, արձակեաց զխոռուսիպի ի տուն իւր։

Եւ ի միասում աւուրն առեալ Միւռոնոսի ինչս բազումս, և բերեալ եդ առ ոտսն Յոհաննու ասելով. Ա՛ռ զայդ վարդապետ բարի և տուր աղքատաց։ Ասէ ցնա Յոհաննէս. Ահաւասիկ ընկալայ զյօժարութիւն քո, զի փորձեցի զքեզ ըստ կամացն Աստուծոյ, և արդ զքոյդ դու տուր քոյին ձեռօքդ։ Եւ յայնմհետէ սկսեալ Միռոնոս բաշխել զամենայն՝ յօժարութեամբ յաղքատս և ի տնանկս և ի կարօտեալս. և Քրիստոս օր ըստ օրէ յաւելոյր ի բարութիւնս նորա, բղխելով որպէս յանսպառ աղբերէ, վասն զի խնդութեամբ տայր Աստուծոյ, որում փառք յաւիտեանս։

## ՅԱՂԱԳՍ ՎԱՍԼԻ ԵՒ ԿՆՈՋ ՆՈՐԱ

## ԹԷ Ո՞ՐՊԷՍ ԼՈՒՍԱՒՈՐԵՑԱՆ Ի ՅՈՀԱՆՆԷ

Քանզի այր ոմն էր մեծատուն ի քաղաքին յայնմիկ, որոյ անուն Վասիլ, և կնոջ նորա անուն՝ Շնորհք. և էր ամուլ, ոչ երբէք զաւակ արարեալ: Եւ ի միում աւուր եկեալ Վասիլ առ քեռորդին Միռոնոսի, որում անուն Ռուդոնիոս, և նա մեծատուն յոյժ և տակաւին ևս կռապաշտ էր: Եւ ասէ ցնա Վասիլ. Զի՞նչ ասես յաղագս քեռւոյն քո Միռոնոսի, ո՞րպէս հաւանեցան ամենեքեան նոքա առհասարակ՝ քարոզութեանն առն այնմիկ օտարի, և այնչափ լաւութեամբ որոշեցան ի մէնջ, առ ի չմերձենալ նոցա առ մեզ, ի նստել կամ յառնել կամ ի խօսել ընդ մեզ. և արդ պատմեա ինձ, եթէ զի՞նչ է վարդապետութիւն նորա: Եւ ասէ Ռուդոնոս ցՎասիլ. Զվարդապետութիւն նորա ոչ գիտեմ, բայց զքանչանան ամենեքեան վասն նորա ասելով, եթէ զոր ասէ՝ ոչ վրիպի բան մի ի բերանոյ նորա: Եւ ասէ ցնա Վասիլ, եթէ խօսեաց ընդ նմա, թերևս արասցէ կին իմ զաւակ: Ասէ ցնա Ռուդունոս. Եթէ որպէս պատմեն զսքանչելագործութիւն նորա մարդիկ, ասեմ՝ թէ և զայդ կարող է առնել: Եւ զայս լուեալ Վասիլ՝ նոյնժամայն ել ի տանէն Ռուդունոսի, չոգաւ ի տունն Միռոնոսի խօսել ընդ Յոհաննէս. և գոլով նորա անդ, եհարց զմի ոմն ի ծառայիցն Միռոնոսի, եթէ ո՞ւր է աշակերտն Քրիստոսի Յոհաննէս: Եւ նա ասէ. Աստանօր է: Եւ ասէ ցնա Վասիլ, եթէ կամիմ խօսել ընդ նմա: Եւ նորա երթեալ պատմեաց Միռոնոսի, և նա ասաց Յոհաննու, եթէ Թագաւորական ոմն առխոյն, Վասիլ, որ

վերակացու է զրան քաղաքիս, եկեալ այսր՝ կամի խօսել ընդ քեզ։ Եւ զայս լուեալ Յոհաննու՝ ամամայն յարեաւ, եւ ընդ առաջ նորա. և տեսեալ զնա Վասիլ՝ անկեալ երկիր եպագ նմա։ Եւ ասէ ցնա Յոհաննէս. կատարեսցէ Աստուած զամենայն խնդրուածս քո, և երանեալ է այր որ ոչ փորձեաց զԱստուած ի սրտի իւրում. սակայն, Վասիլ, երբեմն և Իսրայելացիքն փորձեցին զԱստուած ի սիրտս իւրեանց, որ անփորձն է, որ և զապառաժ վէմն հերձեալ՝ բղխեալ նոցա զգետս ջրոց, որպէս զի արբցեն ի նմանէ և յագեսցին անհաւանեալքն. այնպէս և զհաց՝ յերկնից առաքէր նոցա, որպէս զի կերիցեն անգոհացողքն՝ առանց աշխատանաց. այնպէս և զմխս լորամարգին տայր նոցա առատաբար, ըստ իւրաքանչիւր մտաց ցանկութեանց նոցա, այլ նոքա ոչ հաւատացին ի տուողն յայսմ ամենայնի ի Քրիստոս, անզգամքն և ամպարիշտքն և խստացեալքն և կորացեալքն սրտիւք։

Եւ արդ ով Վասիլէ, մի փորձեր զԱստուած, և ոչ եկեսցէ ի վերայ քո փորձութիւն չարեաց, այլ հաւատա ի նա, և նա կատարէ զամենայն խնդրուածս սրտի քո։ Եւ տեսեալ Վասիլ եթէ զամենայն խնդրուածս սրտի նորա ծանուցեալ էր Յոհաննու, զարհուրեալ սիրտ նորա յոյժ։ Եւ կալեալ Յոհաննէս զձեռանէ նորա ասէ ցնա. Որդեակ Վասիլ, հաւատա ի Քրիստոս և նա ստուգապէս կատարէ զխնդրուածս սրտի քո։ Եւ ասէ Վասիլ. Հաւատացի և հաւատամ. բայց աղաչեմ զքեզ, վարդապետ բարի, խնդրել քեզ յԱստուծոյ զի արասցէ կին իմ զաւակ։ Եւ ասէ Յոհաննէս. Եթէ հաւատաս՝ տեսցես զփառսն Աստուծոյ։ Յայնժամ ընկալեալ ի նմանէ Վասիլ զկարգ երեխայութեան և երկիր պագեալ նմա, եւ գնաց ի տուն իւր, և պատմեաց կնոջ իւրում զոր առ և ընկալաւ ի Յոհաննէ։

Եւ ի միւսում աւուրն, առեալ նորա զկին իւր և եկեալ ի տուն Միոնոսի՝ առ Յոհաննէս, և մտեալ

երկիր պագին նմա: Ասէ Յոհաննէս ցկին Վասիլ. Շնորհք՝ շնորհքն Քրիստոսի լուսաւորեսցէ զմիտս քո և զմիտս տան քոյ, և տացէ քեզ Աստուած պտուղ բարի յորովայնէ քումմէ: Զայս ասացեալ նոցա, և այլ բազմադակ վարդապետեալ նոցա յաստուածային պատուիրանաց, և առժամայն հանգեաւ շնորհքն Աստուծոյ ի վերայ նոցա, և աղաչեցին զՅոհաննէս մկրտել զնոսա. և նորա մկրտեալ զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Եւ աղաչեաց Վասիլ երթալ մեզ ի տուն նոցա. և առեալ զնա Յոհաննէս չոգաք ի տուն նոցա, և օրհնեաց Յոհաննէս զտուն նոցա. և դարձաք ի տունն Միանոսի: Եւ յայնմ հետէ ընկալեալ կինն Վասիլ զյղութիւն և ծնաւ որդի, և անուանեցին զնա ծնողքն նորա Յոհաննէս, նախ քան զծնանելն նորա: Եւ առեալ Վասիլ ինչս բազումս՝ եբեր առ Յոհաննէս վասն սրբոց աղքատաց. և ասէ ցնա Յոհաննէս. Ե՛րթ որդեակ, զքոյդ զու տուր, և զանձեսցես զանձս յերկինս. և արտաքեալ Վասիլ այնպէս:

Եւ յետ անցանելոյ երկու ամաց, անկաւ յիշխանութենէ զաւաւորն Լաւրենդ՝ փեսայն Միանոսի, և եկեալ ի տուն աներոյ իւրոյ, ասէ ցՅոհաննէս. Վարդապետ բարի, զբոանք աշխարհիս խեղդեալ էր զմիտս իմ, և արգելեալ զիս յօգտակար վարդապետութենէ քումմէ. և արդ աղաչեմ զքո սրբութիւնդ, զի և զիս լուսաւորեսցես և սրբեսցես, յառաջագոյն ներկեալ ապաեղութեանցս: Եւ առեալ Յոհաննէս յաստուածակամ պատուիրանացն ուսոյց զնա. և առեալ նմա զկարգ երեխայութեան՝ խոստովանելով զխաչեցեալն, և ապա մկրտեաց զնա ամենայն տամբ իւրով, ծառայիւք և աղախնիւք, յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. և գնաց ի տունն իւր ցնծութեամբ և ուրախութեամբ մեծաւ փառաւորելով զԱստուած յաւիտեանս ամէն:

## ՅԱՂԱԳՍ ԽՌՈՒՍՈՍԻ ԵՒ ԿՆՈՋ ՆՈՐԱ՝

## Ե Թ Է  Ո՛ Ր Պ Է Ս  Լ Ո Ւ Ս Ա Ւ Ո Ր Ե Ց Ա Ն

## Ի ՅՈՎՀԱՆՆԷ

Քանզի էր այր մի ի քաղաքին յայնմիկ՝ անուն նորա Խռուսոսի, և անուն կնոջ նորա Լուսին, և ունէին որդի մի միամօր, այսահար տագնապեալ. և էր Խռուսոս իշխան ի քաղաքին, և զայնչափ նշան սքանչելեաց լուեալ նորա ի Յոհաննէ, առ ի զօրութենէ խաչելոյն. և առեալ զորդին իւր և եկեալ ի տուն Միանոսի: Եւ տեսեալ զնա Յոհաննէս, ասէ ցնա. Ո՛վ Խռուսոսի, մեղք քո մահացուցանեն զորդիդ քո, և արդ մերժեա ի քէն զկաշառս առնուլ և ունիցիս զմիութիւն յԱստուծոյ. ապա թէ ոչ՝ և դու չարիւ տանջեսցիս: Եւ ասէ Խռուսոս ցՅոհաննէս. Կամիմ վարդապետ զի եկեսցես ի տուն ծառայիս քո: Եւ ասէ Յոհաննէս. Ոչինչ պիտոյ է մեզ ի տանէ քումմէ, բայց միայն անձինք ձեր: Եւ ասէ Խռուսոս. Վարդապետ բարի, զի՞նչ արարից զի սրբեսցես զորդի իմ յոգւոյն չարէ: Եւ ասէ ցնա Յոհաննէս. Եթէ հաւատաս ի խաչելեալն՝ սրբեսցի որդիդ քո: Եւ ասէ Խռուսոս. Հաւատամ, մանաւանդ եթէ սրբեսցի որդիդ իմ:

Եւ կալեալ Յոհաննէս զաջոյ ձեռանէ որդւոյ նորա, և տեառնագրեաց երիցս անգամ զճակատ նորա, և առժամայն մերժեցաւ ի նմանէ ոգին պիղծ: Եւ զայն տեսեալ Խռուսոսի, անկաւ ի վերայ երեսաց իւրոց և երկիր եպագ Յոհաննու: Եւ ա-
ռեալ Յոհաննէս յաստուածական պատուիրանաց ա…
ուսոյց նմա. և առեալ նմա զկարգ երեխայութե…

հաւատալ ի Քրիստոս: Եւ նորա ընկալեալ ուրախութեամբ չոգաւ ի տուն իւր, առեալ զկին իւր և ինչս բազումս և եկեալ անդրէն ի տուն Միանոսի, և ասէ ցՅովհաննէս. Վարդապետ բարի, ա՛ռ զինչս զայսոսիկ, և տո՛ւր ինձ և կնոջս իմ և որդւոյդ իմ զքրիստոնէական կնիքն: Եւ ասէ Յովհաննէս. Քրիստոնէական կնիքն ոչ խնդրէ վարձս և ընչից ցանկալ առնուլ, բայց միայն հաւատ բարի. և արդ գնա, տո՛ւր զայդ ի պէտս կարօտելոց, և դու ընկալ քեզ զշնորհսն Աստուծոյ. և վարդապետեալ նոցա, մկրտեաց զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, և արձակեաց զնոսա ի տունս իւրեանց:

Եւ եղեալ մեզ ի տունն Միանոսի երեք ամսոց ժամանակ, զամենայն հաւատացեալսն ի Քրիստոս անդր մկրտելով: Եւ յետ երից ամսոց, առեալ զիս Յովհաննէս և չոգաւ ի տեղւոջ հրապարակին՝ մերձ առ մեհենատունն Ապողոնոսի. և ժողովեալ անդր բազում ժողովրդոց: Եւ նորա սկսեալ ի վարդապետել, և բազումք հաւատացին ի վարդապետութիւն նորա, և ոմանք ոչ հաւատացին. քանզի քահանայք մեհենատանն յերկուացուցանէին զնոսա ասելով, եթէ մի՛ ընդունիք զբանս խաբեբայից այդորիկ, որ յաղագս չարարուեստ կախարդութեան իւրոյ աքսորեցաւ ի կղզիս յայս, և կորացան սիրտք ձեր ամենեցուն անզգամանալով զճանապարհն ճշմարտութեան, և հաւատալ բանից մերոց աքարելոյ, և անարգել զմեծամեծ աստուածս և արհամարհել զհրամանս թագաւորաց:

Եւ զայն լուեալ Յովհաննու, ասէ ցքահանայսն Ապողոնի. Եկիցի տունդ Ապողոնոսի աւեր. և ընդ բանսն Յովհաննու, անկեալ կործանեցաւ տաճարն Ապողոնոսի ի հիմանէ, ոչ մնալով քար ի քարի վերայ, և ոչ ոք վնասեցաւ յանկանել տաճարին:

Զայն տեսեալ քահանայիցն, բուռն հարին ի Յովհաննէս և զան հարին զնա յոյժ և վէրս ի վերայ եդին, և տարեալ արկին զմեզ ի խաւարային բանտի, և եդին պահապանս պահել զմեզ. և ին-

քեանք չոգան պատմեցին դատաւորին, եթէ Ցոհան-նէս աքսորեալն ըստ հրամանաց թագաւորին, այժմ չարարուեստ կախարդութեամբն իւրով կործանեաց զտաճար մեծի աստուծոյն Ապողոնի: Եւ զայն լուեալ դատաւորին տրտմեցաւ յոյժ, և առաքեաց ածել արկանել զմեզ ի բանտ. և եդեալ զՅոհաննէս յերկաթս՝ մուծին զմեզ ի ներքագոյն բանտին:

Եւ զայս լուեալ Միռոնոսի, փութապէս երթեալ առ դատաւորն Ակիւղաս, որ փոխանակ փեսայի նո-րա ընկալեալ էր զդատաւորութիւնն. և էր նա ի Սինոպէ Պոնտացւոց, իսկ հաւատով ի կռապաշտա-կան կրօնից ի պաշտօնատարութիւն Ապողոնի: Եւ մտեալ Միռոնոսի և որդւոյ նորա Ապողոնիդեայ, ա-սեն ցդատաւորն, եթէ բազում բարիս գործեալ է առ ամենայն մարդիկ, բայց եթէ այժմ ապանանես զայր՝ որ ամենայն վտանգելոց ի պէտսպէս ախտից և հիւանդութեանց արագ բժիշկ գտեալ և զառողջու-թիւն պարգևեալ առ ամենայն նեղելոս և վիրաւո-րելոս առանց վարձու և կեղծաւորութեան, և այն-չափ բարեգործութեան քո մի զատնիր պարտաւոր վնասու յամենայն հիւանդացելոս. աղաչեմք և հայ-ցեմք ի քո վայելչարար մեծութենէդ, յաղագս ան այնորիկ օտարի, որպէս զի տացես զնա մեզ: Եւ եթէ ունի ոք ընդ նմա ասել ինչ, կացուսցէ առաջի քո իշխանութեանդ, և եթէ արժանի են, մահու պարտաւորեսցին, և եթէ անպարտ են պատժոց՝ ի մէնջ ունիս խնդրել զնոսա յորժամ և կամիս: Եւ ասէ դատաւորն. Լուայ զնմանէ ի բազմաց եթէ կա-խարդ է, և զամենայն մարդիկ կախարդէ. եթէ առնուք զնոսա, թերևս աներևոյթ լինին ի ձէնջ չար-արուեստ կախարդութեամբ, և ապա զի՞նչ ունիք ասել: Եւ ասէ Ապողոնիդէ ցդատաւորն, եթէ գլուխք մեր լիցին ընդ Ցոհաննու ի պարտաւորութիւն մա-հու, վասն փախչելոյ նոցա, և ոչ միայն գլուխք, այլ և ամենայն ինչք մեր:

Եւ զայս լուեալ ի նմանէ դատաւորն, հրամա-յեաց տալ զմեզ ի նոսա, քանզի էին նոքա վեհա-

գոյնք ի քաղաքին յայնմիկ։ Եւ եկեալ Ապողինիդեայ՝ առ զմեզ ի բանդէն և տարաւ ի տունն իւրեանց։ Եւ ասէ Միանոս ցՅոհաննէս, եթէ յայսմհետէ նիստ ի տան ծառայիս քո և մի ելաներ ի քաղաքդ. զի չար մարդիկ և անգգամ կան ի քաղաքիս յայսմիկ, և երկնչիմ եթէ գուցէ երբէք սպանանիցեն զքեզ։ Եւ ասէ ցնա Յոհաննէս. Ո՛վ Միանոս. ո՛չ առաքեաց զիս Քրիստոս լսել ի տան ուրուք, և ոչ պիտոյ է ինձ տուն ումեք. այլ առաքեաց յանգգամ և ի չար մարդիկ՝ որպէս տեսեր. քանզի առաքելով զմեզ՝ այսպէս պատուիրեաց. Եթէ աշակերտիկ առաքեմ զձեզ իբրև զոչխարս ի մէջ գայլոց, և մի երկնչիք ի նոցանէ. և դարձեալ ասաց, եթէ ի ձեռն բազում վշտաց և նեղութեանց հանդերձեալ էք մըտանել յարքայութիւն Աստուծոյ. վասն զի և մեք ունէաք տունս և ստացուածս ոչ սակաւս. ասելով զմեզ Յիսուսի՝ Թողէք զայդ և եկայք զկնի իմ, և թողեալ զամենայն գնացաք զկնի նորա։ Եւ այժմ վասն անուան նորա պատրաստ եմք անարգանաց և գանից և բանտից և հալածանաց, և մինչև յանձն առնուլ և ի նմանէ ոչ որոշել. քանզի վասն ամենայն նեղութեանցս այսոցիկ փրկեսցուք ի հանդերձեալ դատաստանացն և յաւիտենական տանջանացն, զոր պատրաստեալ է այնոցիկ որ ոչ հաւատան ի նա։

Եւ զայս ասացեալ Յոհաննու, առ զիս և չոգաք ի տեղւոջ անուանեալ Դիքին. և անդ էր անդամալոյծ մի եղեալ, և յանցանել մեր առ նովաւ, ասէ ցՅոհաննէս. Վարդապետ քրիստոնէից, մի զանց առներ զծառայէս քումմէ։ Եւ ասէ ցնա Յոհաննէս. Զի՞նչ կամիս։ Եւ նա ասէ. Հայր մի ունիմ և ողկոյզ մի փոքր, և արդ մի զարշիր ի ծառայէս քումմէ, այլ նիստ և կերիցուք զայդ, քանզի և ես օտար եմ. և գոլով ինձ ի տեղւոջս յայսմիկ, հասին ի վերայ իմ մեղք իմ և մեղք հարց իմոց, և գօսացուցեալ զիս արարին այսպէս. և այժմ տեսանելով իմ զձեզ մխիթարեցաւ սիրտ իմ։ Եւ զայս լուեալ Յոհաննու տրտմեցաւ, և արտասուելով ասէ ցնա.

Առ ի քէն ճաշակեսցուք այսօր և ուրախ եղիցուք ընդ միմեանս. և զայս ասացեալ գնացաք ի նմանէ:

Եւ հանդիպեալ մեզ կին մի այրի և ասէ ցՅոհաննէս. Տէր իմ, ցոյց ինձ, թէ ո՞ւր է տաճարն Ապողոնի: Եւ ասէ ցնա Յոհաննէս. Եւ ընդէ՞ր խնդրես զտաճարն: Եւ նա ասէ. Որդի մի ունիմ միամօր և ոգի չար մտեալ բնակեցաւ ի նմա, տագնապելով զնա յոյժ. և այժմ եկի հայցել ի սրբասենեայն Ապողոնէ բժշկել զնա: Եւ ասէ ցնա Յոհաննէս. Յորմէ՞ քաղաքէ ես: Եւ նա ասէ. Ոչ եմ ի քաղաքէ՝ այլ յագարակէ, և ոչ երբեք մտեալ եմ ի քաղաքիս յայսմիկ: Ասէ ցնա Յոհաննէս. Ո՞րչափ ժամանակ է յորմէհետէ մտեալ է ի նա ոգին չար: Եւ կինն ասէ. Այս քառասուն օր է: Եւ յայնմհետէ անըմբռնելի է և ոչ ոք կարէ բուռն հարկանել զնմանէ, և զագարեցուցանել ի վայրագնաց շրջելոյն տագնապելով զնա: Եւ ասէ ցնա Յոհաննէս. Գնա՛ կին դու ի տուն քո՝ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, որդին քո մաքրեցաւ ի յոգւոյն չարէ: Եւ զայս լուեալ կնոջն՝ համարեցաւ թէ ի քահանայիցն Ապողոնայ է, հաւատացեալ բանից նորա գնաց, և գտեալ զորդին իւր սրբեալ յայսոյն չարէ:

Իսկ մեք դարձաք առ անդամալոյծն, և ասէ ցնա Յոհաննէս. Ահաւասիկ եկաք առ քեզ ի ճաշել, և արդ ո՞վ արասցէ մեզ սպասաւորութիւն: Եւ ասէ ցնա անդամալոյծն. Տէր իմ, մանաւանդ յաշխատութիւն ածի զքեզ այսր, որպէս զի դուք ինձ սպասաւորէք. և ասէ ցնա Յոհաննէս. Ոչ այդպէս եղիցի, այլ արի յանուն Յիսուսի Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ, սպասաւորեա՛ մեզ, և կալեալ զձեռանէ նորա յարոյց զնա ամենեւին առողջ. և սպասաւորեալ նորա մեզ, փառաւորելով զԱստուած, կերաք և արբաք առ նմա:

Եւ յարուցեալ չոգաք ի տունն Միռոնոսի և գտաք զքեռորդի նորա անդ՝ զՍուդոնոս, և աղաչեաց զՅոհաննէս որպէս զի տացէ նմա զառ ի Քրիստոս զկնիքն. և ուսուցեալ զնա յաղագս Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ մկրտեաց զնա:

Եւ ի միւսում աւուրն եկեալ այրն այն անդամալոյծ՝ երկիր պագեալ Յովհաննու. և տեսեալ զնա ամենեցուն որք էին ի տանն Միռոնոսի, սքանչանային յոյժ վասն առողջութեան նորա, զի ճանաչէին զնա որպէս եղեալ կայր անդամալոյծ, և հարցանէին ցնա զպատճառս բժըշկութեանն. և նա պատմեաց նոցա զեղեալսն ի Յոհաննէ. և աղաչեալ նորա զՅովհաննէս ասելով. Վարդապետ բարի, տո՛ւր ինձ զառ ի Քրիստոս զկնիքն. և ուսուցեալ զնա մկրտեաց յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ:

Եւ ի միւսում աւուրն ելաք ի տանէն Միռոնոսի և չոգաք ի տեղւոջ անուանելոյ Վըռկոյ. և էր տեղին այն ի ծովեզրն արուեստականաց կոչեգործաց: Եւ անդ էր այր մի Հրեայ կոչեգործ, անուն Կառէոս. և սկսեալ նորա վիճաբանել ընդ Յովհաննու ի Մովսիսեան օրինացն, բանս բազումս հակառակելով ընդ նմա. և նորա զաղաղեալ և լուեալ զամենայն բանս Հրէին Կառէոսի: Եւ սկսեալ Յովհաննէս զօրութեամբ և շնորհօք սուրբ Հոգւոյն մեկնել նմա, թարգմանելով զամենայն պատուիրանս սրբոց մարգարէիցն յաղագս Որդւոյն Աստուծոյ մարմնաւորութեանն և չարչարանացն և խաչելութեան և թաղմանն և յարութեանն ի մեռելոց և համբարձմանն յերկինս, նստելոյ ընդ աջմէ Հօր յաթոռ փառաց և հանդերձեալ փառաւոր գալստեան նորա: Զայս ամենայն լուեալ Կառէոսն և ոչ հաւանեալ, այլ բազում հայհոյութիւն ասացեալ ամպարշտին: Եւ ասէ ցնա Յովհաննէս. Լռեա՛ թշուառական. և առժամայն կարկեալ բերան նորա և եղեալ համր ոչ կարելով հանել բան ընդ բերանն իւր: Եւ զայն տեսեալ ամենեցուն սքանչանային ամենեքեան, զի զերկուս ժամս այնպէս պապանձեալ կայր Հրեայն Կառէոս: Եւ Յովհաննէս ասէ ցժողովեալսն. Զի՞ զարմանայք ընդ այդ, որ ինքնին ածեալ ի վերայ անձին իւրոյ, հայհոյելով զճշմարիտ որդին Աստուծոյ. քանզի բանք ամբարտաւանք և հայհոյութիւն՝ այսպէս պարտաւորեն զասացօղս: Եւ մի

ամն ի ժողովրդենէն փիլիսոփայ, որում անուն էր Մաւխոն, առէ ցՅովհաննէս. Վարդապետ՝ մեղ՛ր քաղցրութիւն զդառնութիւն ոչ ճանաչէ. և ոչ կաթն զչարութիւն. զայս առակս ասացեալ նմա. և կառէսս Հրեայն ակնարկեաց նմա անկանել առ ոտսն Յովհաննու, այնպէս անկաւ և ինքն. և աղաչէր փիլիսոփան ասելով. Վարդապետ բարի, որպէս կապեցեր այնպէս և գթալով արձակեա: Եւ առէ Յովհաննէս. Անուամբ Յիսուսի Քրիստոսի խցաւ բերան նորա, և այժմ անուամբ նորա բացցի, և առժամայն ընդ բանն Յովհաննու խօսեցաւ Հրեայն կառէսս :

Եւ դարձեալ անտի չոգաք ի տունն Թոդոնոսի քեռորդւոյն Միռոնոսի. և եղեալ մեր զօրն զայն անդ: Եւ ի միւսում աւուրն եկեալ կառէսս ի խնդիր մեզ, և մտեալ անկաւ ի վերայ երեսաց իւրոց երկիրպագանելով Յովհաննու, ասելով. Վարդապետ գիտեմք ի պատուիրանաց զի հարքն մեր զառնցուցին զԱստուած, և նա իւր բարեգթութեամբն թողութիւն շնորհեաց նոցա. և ես մեղայ և անօրինեցայ առ Աստուածն որ առաքեացն զքեզ, և արդ հայցեմ թողութիւն ի նմանէ և ի քէն. աղաչեմ որպէս զի տացես ինձ զքրիստոնէական կնիքն: Եւ տուեալ նմա զկարգ երեխայութեան, և մկրտեաց զնա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, որում փառք յաւիտեանս ամէն:

# ՅԱՂԱԳՍ ԿԻՆՈՊԱՍԱՅ

# ԵՒ ՉԱՐԱՐՈՒԵՍՏ ԿԱԽԱՐԴՈՒԹԵԱՆՑ ՆՈՐԱ

# ԶՈՐ ԱՐԱՐ ԱՌԱՋԻ ՅՈՀԱՆՆՈՒ

Քանզի էր անդ ի Պատմոսի կղզւոջն կախարդ՝ որոյ անուն Կինոպաս, և էր բնակեալ նա յայրի մի՝ հեռի ի քաղաքէն քառասուն մղոնօք, ի տեղւոջ անապատի, ի բնակարանս դիւաց. և ամենայն կղզին այնպէս ունէին զնա որպէս զԱստուած, յաղագս արհաւիր գործոցն զոր առնէր ի ձեռն դիւացն: Եւ տեսեալ քահանայիցն որպէս համարձակաբար քարոզէր Յոհաննէս, և ոչինչ հատոյց նմա դատաւորն յաղագս տաճարին կործանման Ապողոնի, չոգան առ Կինոպաս և ասեն ցնա. Ահաւասիկ ի բազում ամաց հետէ ունիմք զքեզ օգնական ի կղզւոջս յայսմիկ, ով արքայանեալդ Կինոպաս. և այժմ հայցեմք ի քոց օգնականութեանցդ, որպէս զի օգնեսցես մեզ ի տրտմութեանս մերում, առ ի Յոհաննէ օտարէ և աքսորելոյ ի կղզւոջս յայսմիկ. քանզի չարարուեստ կախարդական գործովքն իւրովք՝ զմեծամեծս քաղաքին մերոյ յինքն յափշտակեաց, որոշելով ի մեծամեծ աստուածոց մերոց, առ ի հաւատալ յօտարոտի հաւատս. և բազում համարձակութիւն ունելով առ նոսա, այնչափ անկարգութիւնս արարեալ նորա ի կղզւոջս յայսմիկ, որչափ և զտաճարն Ապողոնի կործանեաց. և մեք յաղագս այսորիկ բուռն հարաք զնմանէ հանդերձ բազում ժողովրդօք, և տարաք առ դատաւորն, պատմելով նմա զամենայն եղեալն առ ի նմանէ. և նորա եդեալ զնա ի բանտի. և յայնժամ երթեալ Միանոսի և որդւոյ նորա Ապողոնի-

դեալ, երաշխաւորեալք առին ի Նմանէ և արձակեցին. և այժմ անուն քո ոչ յիշատակի ի մարդիկ, զի ամենեքեան գնացին զկնի մոլորութեան Նորա:

Եւ զայս լուեալ Կիպրիանոսայ ի քահանայիցն Ապողոնի, ասէ ցնոսա. Դուք գիտէք որ ոչ եմ երբեք ելեալ ի տեղւոջէս յայսմանէ, և ոչ է ինձ արժան մերժիլ ի կղզւոյս յայսմանէ և գալ անդ. բայց աւասիկ ի վաղորդեան աւուր առաքեմ առ Նա հրեշտակ չար ի տունն յորում է, և պահանջեմ զոգի Նորա, և տաց զնա ի տանջանսն յաւիտենականսն: Եւ զայս լուեալ քահանայիցն ի Կիպրիանոսայ, անկան և երկիր պագին Նմա և գնացին զճանապարհս իւրեանց:

Եւ ի միւսում աւուրն կոչեաց Կիպրիանոս զմի ոմն յիշխանական դիւացն՝ չար և տագնապող, և ասէ ցնա. Պատրաստեա զանձն քո երթալ ի քաղաքն Ջահուորեալ՝ ի տունն Միանոսի, և անդ գտանես զաքարեալն Յոհաննէս. պահանջէ՛ զհոգի Նորա և բեր առ իս, զի զառեցից զնա որպէս կամիմ: Եւ չոգաւ դևն ի տունն Միանոսի առ Յոհաննէս, կատարել զհրամանս Կիպրիանոսայ. և ի մտանել դևին ի տունն, գիտաց Յոհաննէս ազդմամբ սուրբ Հոգւոյն զամենայն: Եւ ասէ ցդևն. Հրամանաւն Քրիստոսի անշարժ լեր ի տեղւոջդ, մինչև պատմեսցես ինձ եթէ վասն է՞ր եկիր այսր. և ի բանիցն Յոհաննու եղեալ դևն որպէս կապեալ և դողալով զարհուրեալ: Եւ ասէ ցնա Յոհաննէս. Ասա՛, ոգի չար և պիղծ, եթէ վասն է՞ր եկիր այսր: Եւ պատասխանեալ դևն ասէ. Քահանայքն Ապողոնի եկին առ Կիպրիանոս, ամբաստանելով զքէն, բազում չարիս պատմելով վասն քո, և աղաչեցին զնա որպէս զի եկեսցէ ի քաղաքիս յայսմիկ և սատակեսցէ զքեզ. և Նա ասաց, եթէ դուք գիտէք որ ի բազում ամաց ոչ եմ ելեալ աստի. և այժմ ոչ է ինձ արժան վասն միոյ խաբեբայի ելանել և գալ անդ. բայց գնացէք դուք, և ես առաքեմ հրեշտակ չար և պահանջէ զոգի Նորա և տամ զնա ի տանջանսն յաւիտենականս:

Եւ ասէ Յովհաննէս. Եւ այլ երբեք առաքեա՞լ է նորա զքեզ և պահանջեալ զոգի մարդոյ և տարեալ առ նա: Եւ ասէ դևն. Բազում անգամ առաքեալ ի նմանէ, և սատակեալ եմ զմարդիկ. բայց զոգի ումեք ոչ եմ տարեալ առ նա:

Եւ ասէ Յովհաննէս ցդևն թէ, և ընդէ՞ր հնազանդիք դուք նմա: Եւ ասէ դևն, եթէ ամենայն զօրք սադայելի անդ են բնակեալ, և ամենայն իշխանական դևք հնազանդին նմա կատարելով զհրամանս նորա:

Եւ ասէ Յովհաննէս ցնա. Լո՛ւր ոգի չար. հրամայէ քեզ առաքեալն Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ Յովհաննէս, այլ մի՛ ևս դառնալ ի տեղւոջն յայնմիկ, և ոչ ի սատակումն ումեք երթալ. այլ ելանել արտաքս ի կղզւոյս յայսմանէ, և մի երբեք դադարել քեզ, այլ հալածական լինել քեզ ի տեղւոջէ ի տեղի: Եւ առժամայն հալածեցաւ դևն ի կղզւոյն Պատմայի:

Եւ տեսեալ Կինոպասայ զյամել դևին և ոչ դառնալ առ նա, կոչեաց զմի ոմն յայլ դիւացն և պատուիրեաց նմա ըստ նմին օրինակի. և առաքեաց զնա:

Եւ Յովհաննէս գիտացեալ ի շնորհաց սուրբ Հոգւոյն, ասէ ցոգին պիղծ. Վասն է՞ր եկիր այսր ոգի չար: Եւ ասէ ցնա դևն, եթէ Կինոպաս առաքեաց զիս. վասն զի յառաջագոյն առաքեաց զմի ոմն յիշխանական դիւացն առ ի սատակել զքեզ, և նորա այլ ոչ ևս դարձեալ առ նա. ապա կոչեալ այժմ զիս ասէ, եթէ գնա սատակեա զՅովհաննէս. վասն այսորիկ եկի:

Եւ ասէ Յովհաննէս. Յանուն Քրիստոսի պատուիրեմ քեզ, ել ի կղզւոյս յայսմանէ. և առժամայն հալածեցաւ դևն:

Եւ տեսեալ Կինոպաս, թէ և ոչ այն ևս դևն դարձաւ առ նա, կոչեալ նորա այլ ևս երկուս իշխանական դևս առաքեաց զնոսա ասելով. Երթայք առ Յովհաննէս, և մի մնանէք երկոքեանդ առ նա,

այլ մինչ միայն մնացէ, և միւսդ կացցէ արտաքոյ
և լուիցէ զասացեալսն ի նմանէ ցայն՝ որ մնանէ
առ նա, և գիտասցէ զամենայն եղեալսն։ Եւ եկեալ
դիւացն արարին այնպէս։

Եւ գնացեալ Յուստինէս և զայն ևս, ասէ
ցդեւն որ եմուտ առ նա, եթէ պատուիրեմ քեզ,
ոգի չար, յանուն խաչելոյն այլ մի դառնալ քեզ
առ Կիպրիանոս, այլ ելանել հալածական ի կղզւոյս
յայսմանէ. և առժամայն հալածեցաւ դեւն ըստ ա-
ռաջնոյն օրինակի։ Եւ տեսեալ միւս դեւն որ ար-
տաքոյ կայր, թէ որպէս պարտեցաւ ընկեր նորա,
դարձի հարեալ փախեաւ, և երթեալ պատմեաց Կիպրիա-
նոսայ վասն այնորիկ։ Եւ զայն գիտացեալ Կիպրիա-
նոս, ոչ իշխեաց զոք ի դիւացն առաքել առ նա.
այլ կոչեաց զամենայն դեւսն առհասարակ և ասէ
ցնոսա. Բազում տրտմութիւն է մեզ, զի ահաւասիկ
զընկերսն ձեր պարտեաց Յուստինէս, և հանդեր-
ձեալ եմք մեք ամենեքեան չարիւ տուժիլ ի նմանէ.
և չփոթումն մեծ կայ առաջի մեր. և արդ եկայք
ամենեքեան երթիցուք ի քաղաքին յայնմիկ. և դուք
կացէք արտաքս ի տեղւոջ ուրեք առ ի պահել զպա-
տուէր իմ յաղթեամբ, և ես մտանեմ առ նա և չա-
րաւ սատակեմ զնա։

Եւ առեալ Կիպրիանոս զբազմութիւն դիւացն
մինչև ցերեսուն հազար, և տարեալ դադարեցոյց
ի տեղւոջ ուրեմն արտաքոյ քաղաքին. և ինքն ա-
ռեալ երեք միայն ի նոցանէն՝ ի սպասաւորութիւն
հրամանաց իւրոց. և մտեալ ի քաղաքն յայտնապէս։

Եւ զայն գիտացեալ բազմութիւն կռապաշտիցն,
ժողովեցան առհասարակ ամենեքեան, մանաւանդ զի
այլ ոչ երբեք մտեալ էր Կիպրիանոս ի քաղաքին
յայնմիկ. և յոյժ փափաքանօք ընթանային յերկրպա-
պագութիւն և ի պատիւ նմա. և նա հեզաբար պա-
տասխանատրէր ամենեցուն ըստ խօսից իւրեանց։

Եւ գիտացեալ Յուստինէ վասն այնորիկ, ասէ
ցիս. Որդեակ Պօղոսեայ, գիտացիր զի ահաւասիկ
Կիպրիանոս եկեալ է ի քաղաքս. և բազում արդ-

մութիւն կամի ածել ի վերայ մեր, բայց մի՛ նուաղիր այլ քաջալերեա և զօրացիր։

Եւ էին հաւատացեալքն ժողովեալ առ մեզ ի տունն Միանոսի, վարդապետեալք ի Յովհաննէ, և աղաչէին զնա ասելով. Մի՛ ելաներ արտաքս ի տանէ աստի, քանզի չփոթմունք մեծամեծք են և ժողովք բազումք ի քաղաքիս յայսմիկ յաղագս Կինոպասայ։ Եւ ասէ ցնոսա Յովհաննէս. Փոքր մի ներեցէք եղբարք, և տեսանէք զփառսն Աստուծոյ. քանզի որչափ ժողովին առ նա բազմութիւնք, սքանչանալով ընդ արհաւիրս նորա, այնչափ առաւել ունին սքանչանալ ընդ կորուստ նորա։ Եւ յետ այսորիկ արարաք աւուրս տասն, ոչ ելանելով արտաքս ի տանէն Միանոսի։ Եւ ապա յարուցեալ չոգաք ի տեղւոջ անուանելոյ Վլաբիս, և անդ նստաւ Յովհաննէս. և ժողովեցան առ նա բազումք առ ի վարդապետել ի նմանէ։ Եւ զայն լուեալ Կինոպասայ, թէ որպէս նստեալ Յովհաննէս ուսուցանէ զբանն ճշմարտութեան ամենեցուն յայտնապէս, առժամայն մատեաւ առ Յովհաննէս, և տեսեալ զբազմութիւն ժողովրդեան, առ ի հաւատալ բանից վարդապետութեան նորա, լցեալ սրտմտութեամբ յոյժ, ասէ ցժողովուրդն. Ով մոլորութեան արանց ժողովելոց այսր, մոլորեալք և կորուսեալք. այդչափ հաւատալ ձեզ ասացելոցդ Յովհաննու, որպէս թէ զճանապարհ ճշմարտութեան և արդարութեան ուսուցանէ ձեզ. և արդ արասցէ դա զոր ասեմ դմա և ապա գիտեմ թէ ճշմարիտ է, և հաւանիմ և ես ամենայն բանից վարդապետութեան դորա։ Եւ զայս ասելով Կինոպասայ ցժողովուրդն, և բուռն հարեալ ի մի ոմն պատանի ասէ ցնա. Կենդանի՞ է հայր քո եթէ վախճանեալ է։ Եւ նա ասէ. Վախճանեալ է։ Եւ ասէ Կինոպաս. Ո՞րպէս վախճանեցաւ։ Եւ ասէ պատանին. Ի վասնզի աղէկոծութեան ծովու պատահեալ նաւաբեկութեան և խեղդեալ ի ծովու։ Եւ դարձեալ ասէ ցՅովհաննէս. Եթէ ճշմարիտ է վարդապետութիւն քո, ահաւասիկ ցոյց ի պատանիս, և հան կենդանի զհայր սորա ի

ծովէն։ Եւ ասէ Յոհաննէս. Ոչ առաքեաց զիս Քրիստոս զայդ առնել, այլ զմոլորեալ մարդիկ ուսուցանել առ ի հաւատալ և լուսաւորել ճշմարիտ լուսով նորա։ Եւ զայս լուեալ Կինոպաս, ասէ ցբազմութիւն ժողովրդեանն. Եւ ոչ դեռ չհաւատայք բնակիչք Ֆաւոր քաղաքիս, եթէ կախարդ է դա և կախարդական խաբէութեամբ մոլորեցուցանէ զձեզ. բայց արդ ըմբռնեցէք զդա և ածէք զկնի իմ ի ծովեզերն, և ես հանեմ ի ծովէն զհայր պատանւոյն կենդանի, և կացուցանեմ առաջի ձեր ամենեցուն։

Եւ զայս լուեալ ի Կինոպասայ, բուռն հարին զՅոհաննէ և տարան զմեզ ի ծովեզր. յայնժամ վերացուցեալ Կինոպաս զձեռս իւր եհար զծափս, և այնչափ մեծաձայն ճայթք եղեալ՝ առ ի զարհուրել ամենեցուն. և Կինոպաս եղեալ աներևոյթ։ Եւ սկսան աղաղակել ամենքեան, եթէ մեծ ես դու ով որբանեալդ Կինոպաս. և ահա յանկարծակի ելեալ Կինոպաս ի ծովէն՝ ունելով ընդ իւր զմի ոմն ի դիւացն՝ ի կերպարանս հօր պատանւոյն։ Եւ զայն տեսեալ ամենեցուն զարմացան, և ասէ ցնոսա. Ո՞ր է պատանին. և պատանին մատեաւ եկաց առաջի նորա։ Եւ ասէ ցնա Կինոպաս. Ա՞յս է հայր քո։ Եւ նա ասէ. Այո տէր. և անկեալ ամենեցուն երկիր պագին Կինոպասայ և խնդրեցին սպանանել զմեզ։ Եւ նա ասէ. Մի, մինչև տեսցեն զմեծամեծ սքանչելիս իմ, և ապա չարաւ սատակեսցուք զդոսա։

Եւ դարձեալ ասէ ցմի ոմն ի ժողովրդենէն. Ունի՞ս որդի. և նա ասէ. Ունէի մի որդեակ, և մի ոմն վասն չարութեան սպան զնա։ Եւ ասէ Կինոպաս. Ես յարուցից զնա։ Եւ աղաղակեաց Կինոպաս յանուանէ կոչելով զմեռեալն և զմահապարտն, և ի նմին ժամու կացուցեալ երկուս դևս, զմինն ի կերպարանս մեռելոյն և զմին ի մահապարտին։ Եւ ասէ ցհայր մեռելոյն. Ա՞յս է որդին քո։ Եւ նա ասէ. Այո տէր։ Նոյնպէս յաղագս մահապարտին տասցեալ, թէ սա՞ է, և նորա զնոյն վկայեալ, եթէ ճշմարիտ սա է։ Եւ ասէ Կինոպաս. Ո՞չ զարմանա

ընդ այս։ Ասէ Յոհաննէս. Ես ընդ այդ ոչ զարմանամ։

Եւ ասէ Կինոպաս. Եթէ ընդ այդ ոչ զարմանաս, տեսցես մեծագոյնս քան զայս, և ապա զարմանաս. զի թէ ոչ հաւանեցուցից զքեզ ի սքանչելիս իմ, ոչ սատակեցից զքեզ։ Ասէ Յոհաննէս. Սքանչելիքդ քո փութապէս լուծանին։

Եւ զայս լուեալ ժողովրդոցն, ասեն ցՅոհաննէս. Ո՞չ լսես աքսորած, այլ հայհոյութիւն խօսիս ի սըրբանեալն Կինոպաս։ Եւ եղեալ իբրև զգազանս վայրենիս՝ դիմեցին ի վերայ Յոհաննու, և այնչափ զան հարին զնա, մինչև համարեալ զնա ամենեցուն՝ եթէ մեռաւ։ Եւ ասէ ցնոսա Կինոպաս. Թողէք զդա այդր՝ զի թռչունք երկնից և գազանք երկրի կերիցեն զդա, և տեսցուք եթէ Քրիստոսն զոր քարոզէ՝ յարուցանէ՞ զդա։ Եւ համարեալ նոցա եթէ մեռաւ Յոհաննէս, գնացին յիւրաքանչիւր տունս իւրեանց։

Եւ Յոհաննէս անկեալ կայր ի տեղւոջն անխօս իբրև զմեռեալ. և ես կայի արտաքոյ ի տեղւոջ թաքուցեալ, և գաղտաբար գիտէի վասն նորա։ Եւ յերրորդ պահու գիշերոյն ի խաղաղել ամենայն ումեք, յարուցեալ գնացի առ Յոհաննէս, և գտի զնա զի յաղօթս կայր. և ասէ ցիս. Որդեակ Պրոխորեայ։ Եւ ասեմ. Զի՞նչ հրամայես տէր։ Եւ ասէ ցիս. Երթ ի տունն Միրոնոսի, քանզի եղբարքն մեր անդր ժողովեալ են առ ի յողբալ զիս. և ասա ցնոսա, թէ մի արտմիք, զի ոչ գոյ վնաս ի Յոհաննէս։ Եւ չոգայ գտի զնոսա որպէս ասաց ինձ. և ի բախել իմ զդուրս զաւթին, համարեցան եթէ ի կռապաշտացն է հրամանաւ Կինոպասայ, և յահի եղեալ ոչ իշխէին բանալ, ի բազում բախել և յաղաղակել ինձ զբազում ժամս. և ապա մի ոմն ի ծառայիցն Միրոնոսի, ծանուցեալ զձայն աղաղակի իմոյ, ասէ. Պրոխորոս է, աշակերտն Յոհաննու։ Եւ մատուցեալ ոմն առ դրանն՝ ծանեաւ, և բացեալ եմոյծ զիս, և տեսեալ սքանչացան, քանզի համարէին թէ և զիս

ընդ Յոհաննու զան հարեալ սպանին: Եւ ասեմ ցնոսա. Մի՛ տրտմիք եղբարք, Յոհաննէս կենդանի է, և նա տարեաց զիս: Եւ զայս լուեալ, ոչ ներեցին այլ բան ինչ լսել յինէն. այլ փութապէս առեալ նոցա զիս՝ չոգաք ի տեղւոջն ուր էր Յոհաննէս, և գտաք զնա յաղօթս՝ որպէս թողեալ էի զնա. կացաք ընդդէմ արեւելից մինչև կատարեաց զաղօթսն, և տացաք զամէնն. և կոչեալ Յոհաննէս համբուրեաց զամենեսեան:

Եւ ասէ ցնոսա. Եղբարք, մի՛ ոք խաբեսցի ի ձէնջ յաղագս Կինոպայ, որ արհաւիրս անէ կախարդական արուեստիւք. զի ահաւասիկ փութապէս ունիք տեսանել զկորուստ նորա և զփառսն Աստուծոյ. և զայս ասացեալ արձակեաց զամենեսեան:

Եւ ի միւսում աւուրն ընդ առաւօտն, եկեալ կռապաշտիցն և տեսեալ զՅոհաննէս և զիս առ նմա նստեալ ի տեղւոջ անուանելոյ Քարաժողով. և երթեալ պատմեցին Կինոպայ: Եւ նա կոչեաց զդեն զայն՝ յորոյ ձեռն զայլ երկուս դեւն ի կերպարանս մեռելոցն ցուցանէր, և ասէ ցնա. Պատրաստեա զանձն քո, ահաւասիկ Յոհաննէս կենդանի է ի տեղւոջ Քարաժողովին: Եւ զայս ասելով, առեալ զնա Կինոպս և եկեալ առ մեզ, և զկնի նորա ժողովուրդք բազումք: Եւ ասէ ցՅոհաննէս. Եւ դեռ ես ո՞չ հաւատաս աքանչելեաց իմոց. ահաւասիկ արարից առաւել ես նշանս մինչև ամաչել քեզ, և ապա տաց զքեզ ի տանջանս: Եւ ասէ ցժողովուրդն. Ածէք զՅոհաննէս և ածէք զկնի իմ ի ծովեզրն, զի տեսցէ զզօրութիւնս իմ և ամաչեսցէ. և յայնժամ տաց զդա ի տանջանս յաւիտենականս:

Եւ զայս լուեալ ի Կինոպայ, բուռն հարին և տարան զմեզ ի ծովեզրն, յորում տեղւոջ յառաջագոյն զարհաւիրսն արարեալ էր, և էին անդ բազմութիւն արանց և կանանց առ ի յաղօթել. և ի խնկարկել Կինոպայ և երկիր պագանելով ի վերայ երեսաց իւրեանց, այնպէս և դեւքն որ ի կերպարանս մեռելոցն էին, և յայնժամ զծափս հարեալ

կինոպոս ընկէց զինքն ի ծովն, և աղաղակեցին բազմութիւնքն մեծաձայն ասելով․ Մեծ ես դու որբանեալդ Կինոպոս։ Եւ ասէ Յովհաննէս ցդևսն, որ ի կերպարանս մեռելոցն կային անդ, եթէ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, պատուիրեմ ձեզ դևք, մի շարժել ի տեղւոյդ՝ մինչև ի կորուստն Կինոպասայ։

Եւ համբարձեալ զձեռս իւր՝ ասէ ձայնիւ մեծաւ․ Տէր Յիսուս Քրիստոս, որ ի ձեռն Նշանիս այսորիկ ետուր յաղթութիւն Մովսիսի ի վերայ փարաւոնի և Ամաղեկայ, ընկղմեա զԿինոպաս յանդունդս խորոց ծովուդ, և այլ մի տեսցէ զլոյս։ Եւ ընդ բանսն Յովհաննու, եղեալ հնչումն մեծ ի ծովուն, և պտոյտ առեալ ջուրքն ի տեղւոջն՝ յորում անկաւ Կինոպաս և այլ ոչ ել ի ծովէն։ Եւ դարձեալ ասէ ցդևսն որ ի կերպարանս մեռելոցն պակուցեալ կային ի տեղւոջն՝ յորում հրամայեաց նոցա անշարժ լինել․ Պատուիրեմ ձեզ յանուն խաչելոյն, ելէք հալածական ի կղզւոյս յայսմանէ․ և առժամայն աներևոյթք եղեալ դևքն յաչաց ամենեցուն՝ հալածեցան ի կղզւոյն ։

Եւ զայն տեսեալ բազմութեանցն, արտմեցան ի վերայ Յովհաննու՝ յաղագս կորստեան կարծեալ յարուցեալ մեռելոցն ի Կինոպասայ․ մանաւանդ այնոցիկ՝ որ մին զհայրն իւր կարծէր և միւսն՝ զմիւս զեն՝ զորդին իւր․ և բուռն հարեալ ի Յովհաննէս ասեն․ Բեր կախարդ զմեռեալսն մեր, զոր յարոյց որբանեալն Կինոպաս․ պատանին՝ զհայրն խնդրելով, և միւս ես այրն՝ զորդին իւր․ ընդ նմին և բազմութիւնքն աղաղակէին ընդդէմ Յովհաննու, եթէ բարի մարդ էիր դու, զմեռեալս և զկորուսեալս հաւաքէիր, որպէս պղծալիցն Կինոպաս․ բայց ապաքէն կախարդ ես, վասն այնորիկ զհաւաքեալսն ի Կինոպասայ հալածեալ կորուսանես․ և արդ բեր, կացո զնոսա որպէս կորուսեր։ Եւ բարկանային ի վերայ Յովհաննու և խորհէին սպանանել զնա․ և ոմանք՝ յաւագոյնքն ի նոցանէ՝ խափանէին ասելով, եթէ մի ինչ փնտ

տանէք զմա. քանզի այսպէս պատուիրեաց մեզ Կինոպաս, եթէ մի ինչ վնաս գործէք ի Յոհաննէս մինչև ես գամ, և ապա տաց զդա ի դատաստանն յաւիտենից տանջանացն: Եւ զայս լուեալ հաւանեցան բանիցս այսոցիկ, և ժուժկալեալ անդ աւուրս երեք անսուաղս ի կերակրոց, աղաղակելով և ասելով, եթէ սրբասնեալդ Կինոպաս օգնեա մեզ. և այնչափ ակարացեալ ի սովոյ և յաղաղակելոյ՝ կոչելով զԿինոպաս, մինչև երեք ի նոցանէ անկեալ սատակեցան: Եւ զայն տեսեալ Յոհաննէս, արտասուեաց աղօթելով այսպէս. Յիսուս Քրիստոս որ վասն անուանդ քո այսմ ամենայնի համբերեմ, արկ առողջութիւն բարուց ի սիրտ ժողովրդոցս այսոցիկ, զի մի կորիցէ ոք ի սոցանէ: Եւ ասէ ցբազմութիւն ժողովրդեանն. Արք եղբարք, ահաւասիկ այս չորրորդ օր է անսուաղ՝ մնալ Կինոպասայ, որ ոչ է գալոց, քանզի յանդարձ կորուստն գնաց. և արդ աղաչեմ զձեզ, լուարուք ինձ և երթայք յիւրաքանչիւր տունս ձեր ընկալարուք կերակուր: Եւ զայս ասացեալ, մերձեցաւ առ երեք մեռեալսն. և այնչափ տապակէր արեւ ի տեղւոջն յայնմիկ, առ ի տագնապել բազմաց ի նոցանէ մերձ ի մեռանել: Եւ աղօթս մատուցեալ ասէ. Տէր Յիսուս Քրիստոս, որ ի վախճան աւուրց յահագին գալստեան քում, ի ձայն փողոյ յարուցանես զյաւիտենից ննջեցեալսն, առաքեա և այժմ ի զօրութենէդ քումմէ և կենդանացո զերեք արքս զայսոսիկ: Եւ առժամայն յարեան նոքա. և տեսեալ բազմութեանցն՝ անկան ի վերայ երեսաց իւրեանց, առ հասարակ երկիր պագանելով Յոհաննու և ասեն ցնա. Բարի վարդապետ, այժմ ստուգապէս գիտացաք, եթէ յԱստուծոյ առաքեցար մեզ: Եւ ասէ ցնոսա. Երթայք յիւրաքանչիւր տունս ձեր, ընկալարուք կերակուր և զօրացարուք. և ես երթայց ի տուն ծառային Քրիստոսի Միրոնոսի, և դարձեալ գամ ի մէջի ձերում խօսել ընդ ձեզ ընդ ամենեսեան:

Եւ զայս լուեալ նոցա չոգան յիւրաքանչիւր տունս իւրեանց, և մեք գնացաք ի տունն Միրոնոսի.

և ի մտանելն մեր անդ, եղև ուրախութիւն մեծ. և բերեալ եդին առաջի մեր սեղան և ընկալաք կերակուր ։

Եւ ի միւսում աւուրն ժողովեցան ամենայն քաղաքն առհասարակ, և եկին ի տունն Միանոսի, աղաչելով և ասելով. Միանոս արժանաւոր գովութեանց, բեր առ մեզ զհասարակաց վարդապետդ մեր, զի և մեք օգտեսցուք ի լուսաւոր վարդապետութենէ դորա։ Եւ զայս լուեալ Միանոսի, կարծեաց եթէ խորամանկեն սպանանել զՅոհաննէս։ Եւ ասէ Յոհաննէս ցՄիանոս. Զի՞ չփութիս միաք և խորհուրդք սրտի քոյ. հաւատա՛ ի խաչելեալն, եթէ ոչ գոյ նենգութիւն ի սիրտ ժողովրդեանդ։ Եւ զայս ասացեալ Յոհաննու, յարեաւ ել ի տանէն Միանոսի. և տեսեալ զնա բազմութեանցն, անկեալ ի վերայ երեսաց իւրեանց երկիր պագին նմա և ասեն ցնա. Դու ես առաջնորդ հոգւոց մերոց, և մեծ Աստուած մեր՝ որ լուսաւորես զմեզ անմահական լուսովն։ Եւ զայս լուեալ Յոհաննու, անկաւ ի վրայ երեսաց իւրոց, և առեալ հող յերկրէ արկ ի վերայ գլխոյ իւրոյ. և նոցա տեսեալ զայն սքանչացան։ Եւ յարուցեալ Յոհաննէս, ազդ արար նոցա զադարել յաղաղակելոյ. և նոցա լռեալ։

Եւ ելեալ Յոհաննէս եկաց ի վերայ բարձրագոյն տանեաց և ժողովեալ ամենեցուն շուրջ զտանեաւն այնմիկ, և ասէ ցնոսա Յոհաննէս. Լուարուք եղբարք բանից բերանոյ իմոյ. և սկսեալ ի Մովսիսէ և յամենայն մարգարէից մեկնել նոցա, զոր յաղագս Որդւոյն Աստուծոյ մարգարէացան։ Եւ ասէ. Նա է ճշմարիտ Աստուած, և առաջնորդ հոգւոց ամենայն մարդկան որ հաւատան ի նա. և նա է լուսաւորիչ ազգի մարդկան, լուսաւորել անմահական լուսովն և նորոգել ի կեանս յաւիտենից. զի յաղագս խարէութեան և մոլորութեան մարդկան ի դիւական պատրանաց, առաքեաց Աստուած զՈրդին իւր միածին՝ ծնանել ի կնոջէ ի սուրբ կուսէն Մարիամայ՝ մարդկային բնութեամբ և մարմնով առանց

մեզայ: Եւ գայր ի կարգի վարդապետեաց նոցա մի բառ միոջէ զամենայն վասն ճշմարիտ հաւատոյ: Եւ իջեալ ի տանեաց անտի, եմուտ ի տունն Միանոսի, և ամենք ի ժողովրդենէն զկնի նորա, խընդրելով զքրիստոնէական կնիքն. և նա դարձեալ վարդապետեալ նոցա. մկրտեաց ի նոցանէն երեսուն:

Եւ ի միւսում աւուրն, ելեալ ի տանէն Միանոսի և չոգաք ի տեղւոջ Պատմի, և երեսուն մկըրտեալքն զկնի մեր. և հանդիպեալ ի տեղւոջն յայնմիկ այր ոմն հրեայ վարդապետ, որոյ անուն Փիլէոն. և սկսեալ նորա բանս քննութեան հարցանելով ի մովսիսեան պատուիրանաց և յայլոց մարգարէից: Եւ Յոհաննիսի մեկնել նմա, և նորա ժուժկալեալ միաբանելով, մինչև միաբանեալ տեսաւ վարդապետն Փիլէոն ըստ մեկնութեան Յոհաննու բարւոք միաբանութեամբ: Եւ ասէ ցնա Յոհաննէս. Փիլէոն, ոչ է պիտոյ աստուածական պատուիրանացն չառաբանութիւն, այլ սիրտ սուրբ և հաւատ ուղիղ. և ի հեռանալ մեզ անտի փոքր մի ժամանակաւ, անկաւ Փիլէոն ի հիւանդութիւն, ըմբռնեալ զնա ջերման յոյժ. և պատանի ոմն սպասաւորեալ նմա: Իսկ Յոհաննէս դարձեալ ընդ նոյն տեղի՝ յորում անկեալ կայր Փիլէոն, և ժողովուրդք բազում զկնի նորա. և տեսեալ զնա պատանւոյն ասէ. Ծառայ Աստուծոյ, երդմնեցուցանեմ զքեզ յԱստուածն որ քարոզես՝ ողորմեա անկելոյս այսորիկ, և վերացո՛ ի սմանէ զահագին ջերմութիւնս զայս: Եւ մերձեցեալ Յոհաննէս ասէ. Յանուն Աստուծոյն յոր ես քարոզեմ՝ արի և գնա առողջ ի տուն քում. և ի նմին ժամու յարուցեալ Փիլէոն ամենևին առողջ, երկիր եպագ Յոհաննու և չոգաւ ի տուն իւրում:

Յետ այնորիկ ելեալ Փիլէոն կալեալ զձեռանէն Յոհաննու՝ ասէ ցնա. Վարդապետ հարցանեմ: Ասէ ցնա. Ասա դպիր: Ասէ Փիլէոն. Զի՞նչ է սէր: Ասէ Յոհաննէս. Սէր՝ Աստուած է. զի որ ունի սէր՝ ունի զԱստուած: Ասէ Փիլէոն. Եթէ այդպէս է, ապա ցոյց զսէր վասն Աստուծոյ, և եկ երթիցուք ի տուն

իմ, կերիցուք հաց և արբցուք ջուր, զի եղիցի Աստուած ընդ մեզ:

Եւ զայս լուեալ Յովհաննու, չոգաւ զկնի նորա, և մտեալ ի տուն նորա կերաք և արբաք: Եւ սկսաւ Յովհաննէս վարդապետել և ուսուցանել զամենեսեան որք էին ի տանն Փիլէանի: Եւ էր կին նորա բորոտ՝ սպիտակ իբրև զձիւն. և ընկալեալ կինն զքրիստոնէական կնիքն ի Յովհաննէ, առժամայն սրբեցաւ ի բորոտութենէ անտի: Եւ զայն տեսեալ Փիլէան, անկաւ առ ոտսն Յովհաննու ասելով. Վարդապետ բարի, լուսաւորեա՛ և զիս զբժշկեալս ի քէն, և տուր ինձ զքրիստոնէական կնիքն: Եւ տուեալ նմա Յովհաննէս զկարգ երեխայութեան, և մկրտեաց զնա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ:

Եւ ի միւսում աւուրն ելաք ի տանէն Փիլէանի և չոգաք ի ծովեզրն. և ժողովեցան ժողովուրդք բազումք՝ ունկն դնելով վարդապետութեան նորա. և եկին քահանայքն Ապողոնի, որք զխինդապաս յարուցին ի վերայ Յովհաննու, վասն կործանման տաճարին Ապողոնի, և ասէ մի ոմն ի նոցանէ փորձելով զՅովհաննէս. Վարդապետ, որդի ունիմ կաղ, ողջացո՛ զնա և հաւատամ ի խաչելեալն: Ասէ ցնա Յովհաննէս. Եթէ հաւատաս՝ եղիցի որդին քո ողջ: Ասէ քահանայն. Առողջացո՛ և ապա հաւատամ: Եւ ասէ Յովհաննէս. Զի՞ փորձես զանփորձն, և հայհոյես չարաչար. արդ յանուն խաչելոյն՝ եղիցիս և դու կաղ ընդ որդւոյն քում. և առժամայն լուծան անդամք նորա, և անկաւ ի տեղւոջն ոչ կարելով կալ ի վերայ ոտից իւրոց: Եւ դարձեալ ասէ Յովհաննէս ցընկեր նորա. Գնա ցո՛յց զորդին դորա աշակերտիդ իմոյ: Եւ ասէ ցիս. Որդեակ Պռոխոռեայ, երթ ասա՛ ցորդի քահանայիդ Ապողոնի, եթէ, ասէ քեզ Յովհաննէս, յանուն Որդւոյն Աստուծոյ՝ խաչեցելոյն առ Պոնտացւոյ Պիղատոսի, արի եկ առ իս: Եւ չոգայ ասացի նմա ըստ հրամանին Յովհաննու, և առժամայն ընդ բանին իմ յարուցեալ ամենևին առողջ, և եկեալ զկնի իմ և անկեալ երկիր եպագ

Յովհաննու. և տեսեալ զնա հայր նորա բժշկեալ՝ աղաղակեաց մեծաձայն ասելով. Յովհաննէս ողորմեաց ինձ, աշակերտ Աստուծոյ բարձրելոյ։ Եւ մերձեցեալ առ նա Յովհաննէս՝ տեառնագրեալ երիցս անգամ, յարոյց զնա առողջ, և անկեալ երկոքին երկիր պագին Յովհաննու, և աղաչեցին զնա մկրտել զնոսա, և նորա վարդապետեալ մկրտեաց զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Եւ առեալ նորա զմեզ, տարաւ ի տուն իւրում, և արարաք զօրն զայն առ նա։

Եւ ի միւսում աւուրն ելաք ի տանէ նորա, և չոգաք ի տեղւոջ անուանեալ Գէոմեսխա. և ժողովեցան բազումք առ նա։ Եւ էր ընդ նոսա այր մի ջրգողեալ, ունելով զցաւն զայն ամս վեշտասան, ոչ կարելով գնալ ոտիւք, և ոչ բան ինչ խօսել բերանով իւրով, բայց միայն ակնարկելով և ձեռամբ նշանակէր զինչ և կամէր խօսել։ Եւ տեսեալ նորա զՅովհաննէս, նշանակեալ ազգ արար այնոցիկ որ սպասաւորէին նմա, խնդրելով թանաք և քարտէզ, և նոքա պատրաստեալ բերին նմա. և առեալ գրեաց այսպէս, եթէ և տկարացեալս ի ցաւոց՝ աղաչեմ զքեզ՝ ողորմեա՛ ինձ։ Եւ առեալ Յովհաննէս զթուղթն ընթերցաւ և գրեաց պատասխանի այսպէս. Վասն մարդոյդ այդորիկ ախտացելոյդ ի ջրգողական ցաւոցս արտմեցայ յոյժ, ես առաքեալս Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ. և արդ պատուիրեմ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյ սրբոյ՝ լուծանել ի հիւանդութեանցդ այդոցիկ տկարացելոյդ։ Եւ ընկալեալ հիւանդին զթուղթ պատասխանւոյն, ընթերցաւ, և առժամայն մերժեալ ի նմանէ ցաւքն. և յարուցեալ առողջ և անարատ յախտէն յայնմանէ, և եկեալ անկաւ առ ոտսն Յովհաննու աղաչելով և խնդրելով զքրիստոսական կնիքն. և նորա ուսուցեալ մկրտեաց զնա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյ սրբոյ։ Եւ զայն տեսեալ բազմութեանցն, առաւել ևս սքանչանային, և ջերմեռանդն ոտիւք ընթանային ի վարդապետութիւն Յովհաննու, փափագանօք ուսանել։

Եւ մինչդեռ Յոհաննէս վարդապետէր բազմութեանցն, աշտարակ այր մի առաքեալ ի դատաւորէն, ասէ ցՅոհաննէս. Վարդապետ, դատաւորն կոչէ զքեզ ասելով. Ծառայ Աստուծոյ հասիր այսր, զի կին նորա յերկունս էր մերձ ի ծնունդ և տագնապի և ոչ կարէ ծնանել. և չոգաւ Յոհաննէս փութով եմուտ ի տուն դատաւորին. և ի նմին ժամու ծնեալ կին դատաւորին հեշտաբար: Եւ ասէ Յոհաննէս. Վասն է՞ր ածեր զմեզ այսր: Ասէ դատաւորն. Որպէս զի օրհնեսցի տուն իմ ի քէն: Եւ ասէ ցնա Յոհաննէս. Եթէ հաւատաս ի Քրիստոս Յիսուս Որդին Աստուծոյ, եղիցի տուն քո օրհնեալ և ամենայն ինչ որ քո է: Եւ ասէ դատաւորն. Հաւատացի և հաւատամ յայն՝ որ առաքեացն զքեզ ի փրկութիւն մարդկան ի կղզւոջս յայսմիկ. քանզի նա միայն է ճշմարիտ Աստուած: Եւ զայս լուեալ Յոհաննէս ցնծացեալ հոգւով, և ուսուցեալ զնա յաստուածական պատուիրանաց, զկարգ լուսաւորութեան հաւատոց, մկրտեաց զնա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. և աղաչեաց կին նորա խնդրելով զքրիստոնէական կնիքն, և նա ասէ. Ոչ է արժան մինչև ի կատարել քառասուն աւուր:

Եւ ելեալ ի տանէ դատաւորին չոգաք ի տունն Միրոնայ, և ժողովեցան բազմութիւն քաղաքին ամենայն աւուր լուսաւորել ի նմանէ. մինչև հաստատել ամենայն բնակչաց քաղաքին առհասարակ ի քրիստոնէական հաւատն. քանզի արարաք անդ ամս երկուս: Եւ յայնմհետէ ելաք ի Ջահաւոր քաղաքէ և չոգաք ի միւս քաղաք՝ որոյ անուն Ջմիւռնոս կոչի, որ էր հեռաւոր ի Ջահաւոր քաղաքէ յիսուն մղոնօք. և էր նա փոքր քաղաք, բայց լի բազմութեամբ կռոց, յամենայն ումեք ի տան առանձին էին բազմութիւն կռոցն պղծոց. սոյնպէս և մեհեանք բազում էին ի քաղաքին և գայր գետ շուրջ զքաղաքաւն և պատէր:

## ՅԱՂԱԳՍ ԴԻՒԻՆ

## ՈՐ ԵՂԱՆԷՐ Ի ԿԵՐՊԱՐԱՆՍ ԳԱՅԼՈՅՆ

## ԵՒ ԵՐԵՒԷՐ Ի ՔԱՂԱՔԻՆ ՅԱՅՆՄ

Եւ ի ժամանելն մեզ անդ, ոչ ոք ճանաչէր զմեզ ի բնակչաց քաղաքին. և էր օրն այն սկիզբն ամսոց ըստ թուոյ նոցա: Եւ եղև երթալ մեզ ի տեղւոջ անուանելոյ Ունելութիւն. և պատահեալ զաւք ի տեղւոջ յայնմիկ զնախարարս քաղաքին, ունելով կապանօք երկոտասան պատանիս զգուշութեամբ ի կապանս երկաթիս: Եւ տեսեալ Յոհաննէս եհարց զմի ոմն ի սպասաւորաց նախարարացն, եթէ զինչ պատճառ վնասու է կապելոցդ այդոցիկ յերկաթս: Եւ նա ասէ. Յամենայն ամսոց սկիզբն, սովորութիւն է քաղաքացւոցս այսոցիկ, ըմբռնել երկոտասան պատանիս կոյս՝ առ ի մատուցանել առաջնորդին մերոյ գայլոյն: Եւ ասէ Յոհաննէս. կամիմ իմանալ ի քէն, եթէ ով է գայլն այն, զի անծանօթ եմ նմա և քաղաքիս այսմիկ: Եւ նա ասէ. Ահաւասիկ չորրորդ ժամ է աւուրս, և գան քահանայքն մեր հանդերձ ժողովրդօք բազմօք, և տանուն զդոսա և զենուն նմա զոհս. եթէ կամիս տեսանել, եկ զկնի իմ և տես զգայլն զայն, որպէս և զզոհն զոր մատուցանեն նմա: Եւ ասէ ցնա. Ամենեքին իմաստուն տեսանեմ զքեզ, և արդ որովհետև այդպիսի մարդ հանդիպեցար մեզ, ցոյց ինձ զգայլն, քանզի օտար եմ ի նմանէ: Եւ նա ասէ. Գայլն առհասարակ երևի ամենեցուն բնակչաց քաղաքիս և օտարաց: Եւ ասէ Յոհաննէս. Եկ երթիցուք ի տեղւոջն յայնմիկ, զի ցանկամ տեսանել զգայլն, և եթէ ցուցանես ինձ զնա, ունիմ մարգարիտ մեծա-

գին՝ որչափ ոչ կարէ ոք հատանել նմա գին, զայն քեզ տաց: Եւ զայս լուեալ ի Յոհաննէ, ուրախութեամբ մեծաւ առեալ տարաւ զմեզ ի տեղւոջն՝ ուստի մերձ էր ելանել զայլն ի գետոյն: Եւ ասէ ցՅոհաննէս. Ահաւասիկ ածի զքեզ ի տեղւոջս՝ յորում զգուշութեամբ ըստ կամաց քոց տեսանես զգայլն, և արդ տուր զմարգարիտն: Եւ ասէ Յոհաննէս ցնա. Մի թերահաւատեր յինէն, ցոյց զգայլն և տաց քեզ զմարգարիտն: Եւ մինչդեռ զայս ասէր Յոհաննէս, ահաւասիկ դեն ի կերպարանս գայլոյ ելեալ ի գետոյն մերձ առ մեզ: Եւ տեսեալ զնա Յոհաննէս, ասէ ցնա. Լո՛ւր ոգի չար, քեզ հրամայեմ. քանի՞ ամ է քո՝ մինչև բնակեալ ես ի տեղւոջս յայսմիկ: Եւ դաշի հարեալ զաղաբեաց դեն ի տեղւոջն, և ասէ ցՅոհաննէս. Այս վաթսուն ամ է իմ աստ: Եւ ասէ Յոհաննէս. Պատուիրեմ քեզ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, ել ի կղզւոյս յայսմանէ, և առժամայն եղեալ դեն աներևոյթ յաչաց ամենեցուն:

Եւ տեսեալ այրն այն զեղեալսն ի Յոհաննէ, անկաւ ի վերայ երեսաց իւրոց առ ոտսն Յոհաննու աղաչելով զնա, թէ ողորմեա և ասա՛, ո՞վ ես դու և կամ ուստի՞, որ այսպիսի զօրաւոր գործս գործես, և աստուածոցդ այդպէս հրամայելով սաստես, և նոքա հաւանին հրամանաց քոց: Եւ ասէ ցնա Յոհաննէս. Ես եմ Յոհաննէս՝ աշակերտ Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ ճշմարտի, և զոր ի կարգին էր պատմեաց նմա. իսկ զայլդ զոր դուք աստուած համարիք, նա ոգի չար և պիղծ էր, կորուսիչ հոգւոց և մարմնոց մարդկան, և վասն այսորիկ առաքեաց զիս Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ՝ ճշմարիտն Աստուած, որպէս զի հալածիցեմ զդևս, և ուսուցանեմ մարդկան զճանապարհս արդարութեան և ճշմարտութեան: Եւ զայս լուեալ այրն այն՝ անկաւ ի վերայ երեսաց իւրոց և ասէ. Ծառայ Աստուծոյ ճշմարտի, արա և զիս արժանի Քրիստոսին քոյ: Եւ առեալ Յոհաննէս յաստուածական պատուիրանաց

ուսոյց նմա, և նորա եւս առաւել աղաչեալ, խնդրելով զքրիստոսական կնիքն։ Յայնժամ տարեալ զնա Յովհաննէս ի գետն՝ մկրտեաց զնա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, ասելով ցնա. Ահաւասիկ առեր զանգին մարգարիտն, զգուշութեամբ պահեա զդա։

Եւ առեալ զմեզ անտի, եկաք ի տեղւոջն՝ յորում հանապազ զոհէին դիւին զպատանիսն. և ահաւասիկ եկեալ քահանայիցն բազում ժողովրդօք բերելով զերկոտասան պատանիսն, եդեալ երկաթի կապանօք ի տեղւոջն յայնմիկ, և առեալ զսուրսն ի ձեռսն իւրեանց՝ մնալով գալստեան գայլոյն, զի յորժամ գայր դևն, նախ զարհուրեցուցանէր զնոսա սարսելով և գոչելով, և ապա յայնմհետէ մատուցանէին նմա զնուէրս առ ի զենումն։

Եւ մատուցեալ Յովհաննէս ասէ ցնոսա. Ով արք ագէտք ճանապարհաց ճշմարտութեան. ընդէ՞ր մնայք գալստեան դիւին՝ զոր ես հալածեցի ի կղզւոյս յայսմանէ անուամբն Յիսուսի Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ. քանզի ոգի չար և պիղծ էր նա ի մոլորեցուցանել զձեզ և ի կորուսանել զոգիս ձեր և զպատանեացդ զոր զոհէիք նմա։ Եւ զայս լուեալ ի Յովհաննէ քահանայիցն և բազմութեան ժողովրդոցն, զահի հարեալ ոչ ոք իշխէր տալ պատասխանի Յովհաննու։ Բայց դարձեալ անդրէն ի միտս իւրեանց թերահաւատէին, խորհելով եթէ ոչ է այդպէս, այլ թերևս բարկացեալ է ի վերայ մեր առաջնորդն մեր գայլն, և վասն այնորիկ յամէ առ ի չընդունել զզոհս. և երկնչէին ի միտս իւրեանց, եթէ եկցէ սրտմտութեամբ ի գետոյդ, և զամենայն քաղաքս գետատար արասցէ ի ծով։

Իսկ Յովհաննէս ի շնորհաց սուրբ Հոգւոյն գիտացեալ զամենայն խորհուրդս նոցա, ասէ ցնոսա. Արձակեցէք զմանկունս ի կապանաց, և թողէք զդոսա երթալ խաղաղութեամբ ի տունս իւրեանց. քանզի զայլակերպ դիւին՝ որում ակն ունիք, զնա ոչ տեսանէք յայսմհետէ, զի ես հալածեցի զնա ի

կզզւոյս յայսմանէ հրամանաւն Աստուծոյ իմոյ. և նոքա ի բազում աքանչմանէն ոչ իշխէին պատասխանի տալ նմա: Յայնժամ մատեաւ Յոհաննէս և եղոյծ զպատանին ի կապանաց անտի առեալ ցնոսա. գնացէք բարւոք յիւրաքանչիւր տունս ձեր և առ ծնողս, զի ոչ ոք եկեալ էր զկնի նոցա յազգականաց իւրեանց: Եւ դարձեալ Յոհաննէս առեալ զսուրն ի ձեռաց քահանայիցն, և զաչի հարեալ ամենեցուն ոչ իշխէին հանել բան ի բերանոյ իւրեանց, այլ պակուցեալ կային առհասարակ:

Յայնժամ առեալ անտի Յոհաննէս զմեզ, եմուտ ի քաղաքն և դադարեաց ի տեղւոջ անուանելոյ Առդրացն: Եւ անդ ժողովեցան առ նա բազմութիւնք ժողովրդոց, և նա յաստուածական պատուիրանաց ուսուցանէր նոցա յաղագս Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. և բազումք հաւատացին բանի նորա, և ամենք թերահաւատեցին առ վայր մի. և դարձեալ վասն հալածանաց և կորստեան զայլոյն ամենեքին հաւանեցան, գոհանալով զՅոհաննէ վասն փրկութեան պատանեացն, զոր ըստ սովորական մոլորութեան իւրեանց զոհէին նմա: Իսկ քահանայքն միայնոյ արոչեալք ի Յոհաննէ, ոչ մերձենալով առ նա լսել զբանս նորա:

Եւ կայր բաղանիք ի մէջ քաղաքին, յորում եկեալ էր բնակել դեւն այն՝ զոր յԵփեսոսի բաղանեացն հալածեալ էր Յոհաննէս. և մի ոմն ի քահանայիցն որում անուն Գիոս, ունէր որդի՝ որում անուն Մոկոս. և երթեալ նորա մտեալ ի բաղանիսն՝ խեղդեցաւ ի դիւէն յայնմանէ, յորմէ Գէոմոս որդին Գէոսկորիդեայ խեղդեցաւ: Զայն լուեալ քահանային, ընթացեալ ի բաղանիսն և գտեալ զորդին իւր մեռեալ, յայնժամ ընթացեալ եկն առ Յոհաննէս աղաղակեաց ասելով. Զրի բժիշկ քրիստոնէից, ահաւասիկ մերձեալ է ժամանակ հաւատալ ինձ ի քարոզեալն առ ի քէն. քանզի որդին իմ խեղդեցաւ ի բաղանիսն յոգւոյ չարէ, և գիտեմ եթէ կամիս՝ կարող ես յարուցանել զնա և տալ ինձ կենդանի:

Ասէ ցնա Յոհաննէս. Հաւատա՞ս եթէ կարող եմ
յարուցանել: Եւ նա ասէ. Այո՛ տէր հաւատամ:
Յայնժամ առեալ զձեռանէ մեր, տարաւ ի բաղանիսն,
և կալեալ Յոհաննէս զձեռանէ մեռելոյն, ասէ ցնա.
Յանուն Յիսուսի Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ արի.
և առժամայն յարեաւ: Եւ ասէ ցնա Յոհաննէս.
Զի՞նչ պատահեցաւ քեզ: Ասէ ցնա պատանին. Տէր իմ,
մինչդեռ նստեալ լուանայի ի բաղանիսդ, յանկարծակի
ելեալ այր մի եթէովպացի ի տեղւոջէդ՝ յորմէ
զջուրն լնուաք և խեղդեաց զիս: Իսկ Յոհաննու
գիտացեալ եթէ այն դեւն է, և առժամայն աղաղա-
կեաց ասելով ոգին պիղծ. Յոհաննէս աշակերտ
Քրիստոսի, ի Տէրն քո երդմնեցուցանեմ զքեզ, մի
հալածեր զիս ի տեղւոջէս յայսմանէ. քանզի նա՛ եմ
ես՝ զոր դու հալածեցեր յԵփեսոսէ, ի բաղանեացն
Դէոսկորիդեայ, վասն խեղդելոյ զԴէմնոս որդի նո-
րա: Ասէ ցնա Յոհաննէս. Քանի՞ ամ ունիս ի բա-
ղանիսդ: Ասէ ցնա դեւն. վեց ամ միայն է: Ասէ
ցնա Յոհաննէս, եթէ յանուն Յիսուսի Քրիստոսի ել
ի կղզւոյս յայսմանէ, և այլ մի՛ ես բնակեսցես ի
մէջ մարդկան, այլ յանջրդի տեղւոջ. և առժամայն
հալածեցաւ դեւն: Իսկ քահանայքն տեսեալ զեղեալսն,
անկան առ ոտսն նորա ասելով. Տէր իմ, ահաւա-
սիկ ես և որդիս իմ և ամենայն տուն մեր և ազ-
գականք՝ առաջի քո եմք, պատրաստեալ ի հրամանս
կամաց քոց: Ասէ Յոհաննէս. Ոչ այլ ինչ կամիմ՝
բայց հաւատալ ձեզ ի Քրիստոս յՈրդին Աստուծոյ և
ընդունել զկեանսն յաւիտենից: Եւ ասէ քահանայն.
Հաւատացի և հաւատամ: Եւ առեալ զմեզ տարաւ ի
տուն իւրում. և դարձեալ անկաւ առ ոտսն նորա
աղաչելով և ասելով. Տէր, տուր ինձ և որդւոյ ի-
մում և ամենայն տան իմում զառ ի Քրիստոս
զկնիքն: Եւ առեալ յաստուածական պատուիրանաց
ուսոյց զնոսա, և մկրտեաց զնոսա ամենայն տամբ
իւրով, յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Եւ
արարաք առ նմա աւուրս երեք, ցնծութեամբ և
ուրախութեամբ փառաւորելով զԱստուած, վասն ա-

մենայն սքանչելագործութեանցն զոր առնէր Աստուած ի ձեռն Նորա։

Եւ ի չորրորդում աւուրն եկաք ի տանէ Նորա, և չոգաք ի տեղւոջն անուանեալ Բոցանխութ. և անդ ժողովեցան ամենայն քաղաքն առ Յոհաննէս, ունկն դնելով վարդապետութեան Նորա։ Եւ ընթացեալ կին մի ի ժողովրդենէ անտի անկաւ առ ոտսն Յոհաննու ասելով. Երդմնեցուցանեմ զքեզ յԱստուածն քո՝ յոր հաւատաս և պատմես՝ ողորմեա՛ց ինձ։ Եւ ասէ ցնա Յոհաննէս. Զի՞նչ կամիս։ Ասէ ցնա կինն. Որդի եթող ինձ այրն իմ երեք ամաց, և բազում ջանիւք ձգնեցայ և հասուցի զնա ի չափ հասակի, և պատահեալ Նմա ոգի չար՝ առ ի տագնապել զնա չարաչար, և ծախեցի զինչս իմ ի չարարուեստ մարդիկ վասն բժշկութեան նորա, և ոչինչ օգտեցայ. և արդ, աղաչեմ զքեզ առաքեալ Քրիստոսի, գթացի՛ր յիս և բժշկեա զորդեակն իմ։ Ասէ ցնա Յոհաննէս. Երթ ած զնա առ իս, և Քրիստոսն իմ բժշկէ զնա։ Եւ նորա առեալ մանկունս վեց, բուռն հարկանել զնմանէ և ածել. և չոգան բուռն հարին զնմանէ ասելով, եկ երթիցուք առ Յոհաննէս աշակերտն Քրիստոսի, որպէս զի հալածեսցէ ի քէն զդեւ. և զայս ասացեալ առժամայն հալածեցաւ դեւն և եղեւ նորա ամենեւին պարկեշտ. և եկեալ զկնի նոցա՝ անկաւ առ ոտսն Յոհաննու հանդերձ ծնողիւն իւրով, աղաչելով և խնդրելով զքրիստոնեական կնիքն։ Եւ առեալ զնոսա, չոգաք ի տուն նոցա. և անդ վարդապետեալ մկրտեաց զնոսա ամենայն տամբ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. և արարաք առ նոսա աւուրս երեք։

Եւ ելեալ չոգաք ի նոյն դադարան. և ժողովեալ առ Յոհաննէս բազմութիւնք ժողովրդոց. և կայր ի տեղւոջն յայնմիկ մեհենատուն Դիոսի. և սովորութիւն էր ժողովել ի Նմա յաւուր տօնի նոցա, և ընբեալ անդ բազմութիւն կերակրոց և գինւոյ առ ի յուտել և յըմպել արանց և կանանց անկարգութեամբ, և յետ ուտելոյն և ըմպելոյն, փակէին զդրունս պիղծ

տաճարին այնորիկ և անդ խառնակէին պղծութեամբ որպէս զանասունս։ Եւ պատահեալ ժողով պղծութեանն այն՝ յաւուր յորում վարդապետէր Յոհաննէս. և եկեալ երկոտասան քահանայից մեհենատանն ասեն ցՅոհաննէս. Ո՛վ մարդ, չատ է քեզ անօգուտ բանդ զոր սերմանեցեր ի տգէտ մարդիկ. և արդ մերժեաց ի տեղւոջէ աստի, զի տօն մեծ է աստուածոյն մերոյ Դիոսի, զի մի՛ չարիւ տանջեսցէ զքեզ։ Եւ Յոհաննէս վարդապետէր զբանն ճշմարտութեան այնոցիկ՝ որ շուրջ կային զիւրեաւ. և տեսեալ քահանայիցն, եթէ ո՛րպէս անփոյթ կայր Յոհաննէս ոչ անսալով նոցա, սրտմտեալ բուռն հարին զՅոհաննէ, և քարշեցին զնա արտաքս ի տեղւոջէ անտի, և վէրս բազումս եդին ի վերայ նորա հարկանելով, և թողին զնա կապանօք, և ինքեանք չոգան ի մեհենատունն։ Եւ կարգ էր նախ քահանայիցն ուտել և ըմպել յառելի անկարգութենէ անտի, և ապա ժողովրդոցն. և ի մտանելն նոցա ի մեհենատունն, հառաչեաց Յոհաննէս սրտմտութեամբ և ասէ. Տէր Յիսուս Քրիստոս, կործանեա՛ զտաճարդ զայդ. և առժամայն կործանեցաւ մեհենատունն Դիոսի և սատակեցան քահանայքն։

---

## ՅԱՂԱԳՍ ՄՆՈՏԻԱՆՈՍԻ

## ԹԷ Ո՛ՐՊԷՍ ՀԱՒԱՏԱՑ Ի ՔՐԻՍՏՈՍ

## Ի ՁԵՌՆ ԵՐԱՆԵԼՈՅՆ ՅՈՀԱՆՆՈՒ

*Քանզի էր այր ի քաղաքին յայնմիկ Զմիւռնիա, և ունէր երկուս որդիս, անուն միոյն Ռուփոս և միւսոյն Պօղիկարպոս, և իւր անուն Մնոտիանոս. և էր հմուտ կախարդական արուեստից, ունելով գրովք պատմութեամբ բազմօք գրեալ աղանդ արուեստին այնորիկ դիւական վարդապետութեամբ: Եւ տեսեալ նորա թէ որպէս կործանեաց զտաճարն Դիոսի, և ապականեաց զքահանայսն, լցեալ դիւական սրտմտութեամբ ի վերայ Յոհաննու. զի ամենայն հաւատացեալ բազմութեանն եկեալ անկեալ էին առաջի Յոհաննու, ի վերայ երեսաց իւրեանց աղաչելով զնա, թէ մի բարկանար ի վերայ մեր, զի մի իջցէ հուր և այրեսցէ զմեզ. և զայս ասելով լուծին զնա ի կապանացն, և սկսան վարդապետիլ ի նմանէ:*

*Յայնժամ մերձեցեալ Մնոտիանոս ասէ ցնա. Վարդապետ, ահաւասիկ ամենեքեան սիրեմք զքեզ վասն բժշկութեանցդ եղելոց առ ի քէն. և այժմ կամիմ զի յարուցես զքահանայսն մեր, որ աղօթիւք կործանեցեր զտաճարն. և հաւատամ և ես ի խաչելեալն:*

*Ասէ ցնա Յոհաննէս. Ոչ էին նոքա կենաց, զի թէ արժանիք էին, ոչ էին մեռեալ: Եւ Մնոտիանոս ասէ ցնա. Ո՞չ կամիս յարուցանել. ես յարուցանեմ և դու դատապարտիս որպէս մահապարտ: Եւ զայս ասելով, Մնոտիանոս գնաց, և շուրջ առեալ զաւերակօք տաճարին մեհենատանն կախարդական արուես-*

տիւք, և ամժամայն կացուցեալ երկոտասան դեւս ի կերպարանս երկոտասան քահանայիցն, ասելով. Արդ եկայք զկնի իմ, զի երթիցուք անդ ի տեղւոջն յորում նստեալ է Յոհաննէս, և տեսցեն զձեզ ժողովուրդն ի կերպարանս քահանայիցն, և սատակեսցեն զՅոհաննէս: Եւ ասեն դեւքն. Ոչ է մեզ կարողութիւն մերձենալ ի տեղւոջն յորում հանգչի Յոհաննէս, այլ երթ դու և ա՛ծ զժողովուրդն այսր, զի տեսցեն զմեզ և երթիցեն սատակեսցեն զՅոհաննէս:

Եւ հաւանեալ Անտոխանոս բանից դիւացն, և թողեալ զնոսա առ աւերակի մեհենատանն, և եկեալ ինքն առ է ցժողովուրդն՝ որ շուրջ կային զՅոհաննու. աղաղակեաց մեծաձայն և ասէ. Արք եղբարք, ընդէ՞ր ընդունիք զբանս խաբեբայիդ այդորիկ, ո՞չ առաջի ձեր ամենեցուն ասացի ցդա, թէ յարո՛ զքահանայսն մեր որ սատակեցան ի կործանել տաճարին Գիոսի, և ես հաւատամ ի խաչելեալն. ապա թէ ոչ՝ ես յարուցանեմ զնոսա և դատապարտես ի սատակումն. և դորա ասացեալ, եթէ ոչ են նոքա արժանի կենաց. զի թէ արժանիք էին՝ ոչ էին մեռեալ: Եւ արդ ահաւասիկ ես յարուցի զնոսա, և հանդերձեալ եմ վաղվաղակի կանգնել զտաճարն Գիոսի, արդ թողէք զդա և զաշակերտ դորա ի տեղւոջդ և դուք եկայք տեսէք զքահանայսն, և դարձարուք սատակեցէք զդոսա: Եւ զայս լուեալ ի նմանէ բազմութեանցն խաբեցան ի Յոհաննէ, և գնացին առհասարակ զկնի նորա՝ տեսանել զդեւսն և դառնալ սատակել զմեզ:

Եւ զայս գիտացեալ Յոհաննէս ի մերժել նոցա անտի, առեալ զիս և ընթացեալ ընդ այլ ճանապարհ, յառաջեաց զնոսա ի տեղւոջ աւերածի մեհենատանն, և ի մերձենալ մեզ անդ՝ աներեւոյթ հալածեցան դեւքն. և դարձեալ անտի, թաքեաք ի տեղւոջ իմն՝ առ աւերածի մեհենատանն: Եւ եկեալ նոցա, ոչ գտեալ անդ զոք ի դիւացն: Եւ սկսաւ Անտոխանոս աղաղակել, կոչելով զդեւսն մի ըստ միոջէ ըստ անուանց քահանայիցն, և այնպէս ամօթալից պատ-

կտտանօք դադարեալ Անտոնիանոս ի տեղւոջն ժողովրդօքն, ի չորրորդ ժամէ աւուրն մինչև ցտասներորդ ժամն, և ապա անյոյս եղեալ: Եւ ասէ Յոհաննէս. Արի որդեակ, երթիցուք ի տեղւոջն յարում էաք, զի հանդերձեալ են ժողովուրդք դառնալ և գալ առ մեզ. և յարուցեալ գնացաք:

Իսկ ժողովրդոցն լցեալ սրամտութեամբ ի վերայ Անտոնիանոսի, և ասէին, եթէ կամելով քո արհաւիրս ցուցանել մեզ և մոլորեցուցանել զմեզ ի յուսոյն յաւիտենից, որոշեցեր զմեզ ի լուսաւոր վարդապետութենէն Յոհաննու, և թշնամանէին և խորհէին սպանանել զնա. և ամենք ի ժողովրդենէն ասէին. Մի սատակեսցուք զդա առանց հրամանի վարդապետին մերոյ Յոհաննու. այլ տարցուք զդա առաջի նորա, և որպէս հրամայէ՝ այնպէս չարաչար տանջելով սատակեսցուք զդա, զի խաբելով յարոյց զմեզ ի վերայ վարդապետին մերոյ: Եւ բուռն հարեալ ածին զԱնտոնիանոս առաջի Յոհաննու ասելով. Վարդապետ, սա մոլորեցոյց զմեզ ի ճշմարիտ և յուղիղ ճանապարհէն զոր ցուցեր մեզ. և արդ հրամայեա, որպիսի՞ տանջանօք կամիս զի սատակեսցուք զնա: Եւ ասէ Յոհաննէս. Թոյլ տուք որդեակք երթալ խաւարին՝ ի խաւարն. զի դուք որդիք լուսոյ եղիջիք, և խաւարն ձեզ մի տիրեսցէ, զի ճշմարտութիւնն Քրիստոսի ի ձեզ է. և այսպիսի բանիւք հաւանեցոյց զնոսա: Եւ ապա աղաչեցին զՅոհաննէս, եթէ արժանաւորեա զմեզ ընդունել զքրիստոսական կնիքն: Եւ ասէ ցնոսա. Երթայք յիւրաքանչիւր տունս ձեր, զի տարաժամեալ է օրս. և վաղիւն եկայք ընկալարուք զպարգևսն Քրիստոսի, և արարեալ նոցա այնպէս:

Եւ ի վաղիւն եկեալ աղաչէին զՅոհաննէս, խնդրելով զքրիստոսական կնիքն: Եւ նորա առեալ զնոսա, տարեալ ի գետն առ մկրտել զնոսա, և յայնժամ Անտոնիանոս չարարուեստ կախարդութեամբ դարձոյց զջուր գետոյն յարիւն. և տեսեալ բազմութեանցն զարմացան: Իսկ Յոհաննէս մատուցեալ

*աղօթս այսպէս. Տէր Յիսուս Քրիստոս որ ի սուրբ է բնակութիւն քոյ, և հանապազ առաքես ի սրբութենէ քումմէ յարժանաւորս և ի հաւատարիմ ծառայս քո, սրբեա՛ և այժմ զջուր գետոյս՝ ըստ իւրում սովորական բնութեան և զՍնտոխանոս խորտակեա, զի մի կարասցէ շարժել ի տեղւոջէն: Եւ ի նմին ժամու սրբեցան ջուրք գետոյն, և Սնտոխանոս կուրացեալ ի տեղւոջն յորում կայր:*

*Եւ առեալ Յոհաննէս զհաւատացեալսն, մկրտեաց զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ արս երկերիւրս: Յայնժամ աղաղակեաց Սնտոխանոս մեծաձայն և ասէ. Ողորմեա՛ց ինձ առաքեալ օրհնեալդ Քրիստոսի, և լուսաւորեա զխաւարեալ աչս իմ վասն բազում անօրէնութեանս իմոյ: Եւ Յոհաննէս մերձեցաւ ի նա, և կալեալ զձեռանէ նորա ած առ ափն գետոյն, և վարդապետեալ մկրտեաց զնա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, և առժամայն լուսաւորեցան աչք նորա: Եւ առեալ զմեզ, տարաւ ի տան իւրում. և ի մտանելն Յոհաննու, անկեալ փշրեցան բազմութիւնք կռոցն՝ որք կային ի տան նորա, առհասարակ որպէս զհող և զփոշի. և զայն տեսեալ Սնտոխանոս, առաւել ևս հաստատեցաւ ի քրիստոնէական հաւատն. այնպէս և կին նորա և որդիքն եկեալ հաւատացին և մկրտեցան ի Յոհաննէ, և ամենայն տուն նորա: Եւ արարաք առ նմա աւուրս տասն, ուրախութեամբ փառաւորելով զԱստուած յաղագս բարեգործութեանցն զոր եցոյց Աստուած ի ձեռն Յոհաննու ի տուն նոցա:*

*Եւ ուսուցեալ զնոսա զամենեսեան առհասարակ, ելեալ գնացաք ի Զմիռնոս քաղաքէ՝ յայլ քաղաք, որոյ անուն Կառայ. և նա էր մերձ ի Զմիռնոս տասն և երեք մղոնօք: Եւ ի մտանել մեր անդ՝ հանդիպեցաւ մեզ այր մի Հրեայ պարկեշտ, որոյ անուն Փափոսոս, և առեալ նորա զմեզ՝ տարաւ ի տան իւրում. և առեալ Յոհաննէս յաստուածական պատուիրանաց ուսոյց զնա և զամենայն տուն նորա, և մկրտեաց զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, և դադարեցաք առ նմա ամ մի:*

## ՅԱՂԱԳՍ ՍՈՍԻՊԱՏՐՈՍԻ
## ԵՒ ՄՕՐ ՆՈՐԱ ՊԱՏՐՈԿՂԻԱՆԷ
## ԵՒ ԵՂԵԼՈՑՆ Ի ՅՈՀԱՆՆԷ

Յանկանել դատաւորին կղզւոյն Պատմայի ի դատաւորութենէ անտի, եկաց փոխանակ նորա ոմն անթիւպատոս՝ որոյ անուն Մակոնոս. և էր նա կռապաշտ չարարնութիւն և անգութ յաղագս քրիստոսական հաւատոյս: Եւ ելեալ նորա ի Ջահաւոր քաղաքէն՝ յաղագս տեսութեան յայլ քաղաքսն. և տեղի նստելոյ դատաւորութեան նորա Ջահաւոր քաղաքն էր: Եւ գոլով նորա ի քաղաքին կառայ, և էր անդ կին ոմն այրի մեծատուն և գեղեցիկ տեսակաւ, որոյ անուն Պատրոկղիանէ. և ունէր որդի ամաց քսան և չորից, և նա առաւել ես գեղեցիկ քան զբնութիւն մարդկան՝ տեսակաւ և պարկեշտութեամբ նմանապէս Յովսեփայ, և անուն նորա Սոսիպատրոս: Եւ անկեալ ի խայթոցէ սատանայի պիղծ և չար ախտ ցանկութեան ի մայր նորա ի Պատրոկղիանէ՝ ցանկալ որդւոյն իւրոյ, և այնչափ կործանեալ զմիտս նորա սատանայ՝ մինչև լրբեալ յայտնեաց ասելով ցՍոսիպատրոս զորդին իւր, եթէ որդեակս Սոսիպատրէ, գիտացիր զի ահաւասիկ ինչք և բարիք բազում ունիմք, և ես ոչ ինչ եմ կարի ծերագոյն, այլ մանկագոյն և գեղեցիկ, և ի՞նչ փոյթ է մեզ այլ օտար կին ածել քեզ ի կնութեան՝ ի տուն մեր. այլ կերիցուք զբարիս մեր մեք, և արբցուք և ուրախ եղիցուք, ունելով զիս քեզ փոխանակ կնոջ, և ես զքեզ փոխան առն, և մի՛ դու ինձ տացես զօտար այր մուծանել ի տուն մեր, և ոչ ես քեզ զօտար կին. և էր նա ամենեւին գեղե-

ցիկ, և այնչափ մոլեալ ի գիւտական ախտից առ ի պատրել զորդին իւր. և ոչ զմտաւ ածէր զայնպիսի կորուստ ի սատանայէ։

Այլ մարգարէրն Աստուած ոչ ներեաց պիղծ խորհրդոյ կամացն սատանայի. և մինչդեռ Յոհաննէս նստեալ կայր ի տեղւոջ հրապարակի, և շուրջ զնովաւ բազմութիւնք ժողովրդոց առ ի լսել ի նըմանէ, եկեալ Սոխպատրոս եկաց առ ոտանս ի ժողովրդենէ անտի, որք ասէին վասն Յոհաննու, եթէ ընդունայն է վարդապետութիւն դորա։ Իսկ Սոխպատրոս թողեալ զնոսա, և եկեալ եկաց առ Յոհաննէս ունկն դնելով նմա։ Եւ տեսեալ զնա Յոհաննէս և ծանեաւ շնորհօք սուրբ Հոգւոյն զխորհուրդն սատանայի և զպատրանսն առ մայր նորա։ Եւ ասէ ցՍոխպատրոս. Սոխպատրոս, Սոխպատրոս. և նա ասէ. Զի՞նչ հրամայես վարդապետ։ Ասէ ցնա Յոհաննէս. Կին ոմն ի քաղաքի ուրեմն որդի ունի միամօր, և անուն կնոջն Պատրող, և անուն որդւոյն ոչ Պատրեալ. և էին նոքա մեծատունք յոյժ և երևելիք ի քաղաքին. և ոմն թշուառական թշնամի նախանձեալ ընդ նոսա, առ ի պատրել զՊատրողն՝ զմայր ոչ Պատրելոյն, և կորուսանել ապականելով զչՊատրեալն. Պատրեալն պատրէր, իսկ չՊատրեալն ոչ պատրէր. և յետ ժամանակաց ինչ, առխպեալ Պատրողին զորդին իւր զչՊատրեալն, և բազում մաչեալ զանձն իւր ցանկութեամբ թշնամւոյն, ի մահ արկանել զորդին իւր զչՊատրեալն, և զառաքինութիւնն նորա խառնակել ի պատրանս իւր. իսկ տուողն առաքինութեան՝ հրամայէ չՊատրելոյն զազանամարտ լինել ընդդէմ պատրանաց պատրողին. քանզի վերնական դատաարանն զուրբն որբէ և զխաւարային ապականութիւնն մերժէ։ Եւ արդ, ասա՛ ինձ Սոխպատրոս, եթէ ո՞վ է զոլութեանցն արժանի, մա՞յրն եթէ որդին։

Եւ յայնժամ որպէս երկիր ծարաւի առ ի յընդունել զցօղ քաղցրութեան պաղարերելով, այսպէս ընկալեալ Սոխպատրոսի զբանսն Յոհաննու,

յաղագս պատրանաց մօր նորա՝ ի սատանայէ պղծոյ։ Եւ ասէ ցՅոհաննէս. Արժանի է որդին գովելոյ և մայրն անգանելոյ։ Եւ ասէ ցնա Յոհաննէս. Ե՛րթ որդեակ ի տան քում և ընկալ զմայր քո որպէս ծնօղ և մի որպէս պատրօղ, և վերնական շնորհքն հովանի եղիցի քեզ։ Զայս ասացեալ Յոհաննու, և անկաւ Սոսիպատրոս առ ոտս նորա աղաչելով. Տէր եթէ արժանի եմ, եկ ի տուն ծառայիս քոյ, կերիցուք հաց և արբցուք ջուր և օրհնեսցի տուն ծառայիս քոյ ի քէն։ Եւ գնացաք զկնի նորա. և ի մտանել մեզ ի տուն նոցա, տեսեալ զՅոհաննէս Պատրոկղիանէ, և լցեալ բարկութեամբ ի վերայ Սոսիպատրոսի, և ակնարկեալ կոչեաց զնա մեկուսի և ասէ ցնա. Ո՞չ ասացի քեզ որդեակ, եթէ մի՛ տար օտար ան ի տունս մեր մտանել, և ոչ ես՝ կնոջ այլում առ քեզ. և այժմ ընդէ՞ր ածեր այր զարդ զայգամիկ զխաբեբայող։ Եւ ասէ ցնա Սոսիպատրոս. Մի՛ այդպէս համարիր զարդ զայգոսիկ, այլ դիցուք սոցա սեղան և կերիցեն և արբցեն և երթիցեն զճանապարհս իւրեանց, և ես զոր ինչ կամիս մայր իմ արարից։ Եւ զայս լուեալ Պատրոկղիանէ, հաւանեցաւ. և եդեալ Սոսիպատրոսի մեզ սեղան ձեռօք իւրովք, և ինքն միայն նստեալ ընդ մեզ ի սեղանն ի սպասաւորութիւն մեզ։

Իսկ Պատրոկղիանէ յաղագս չար ցանկութեանն այնմիկ, երկնչէր ի Յոհաննէ վարդապետութենէն, եթէ ուսուցանելով զՍոսիպատրոս, խափանումն լինի պիղծ ցանկութեանն այնմիկ. և նստեալ ի տեղւոջ թագստի մերձ ի սեղանն, ունկն դնելով ցասացեալն ի Նմանէ։ Եւ Յոհաննէս գիտացեալ զչարութիւն կնոջն, ոչինչ խօսեցաւ ընդ Սոսիպատրոս։ Եւ յետ ուտելոյն և ըմպելոյն մեր՝ ասէ Յոհաննէս. Արի, որդեակ Սոսիպատրոս, հան զմեզ արտաքոյ ապարանից քոց։ Եւ յարուցեալ Սոսիպատրոս զկնի մեր յուղարկել զմեզ. Իսկ Պատրոկղիանէ եկեալ զկնի նորա, զի փութապէս դարձուցէ զնա կատարել զպիղծ ցանկութիւն նորա։ Եւ եկեալ մեր արտաքոյ

դրաց տանն նոցա, զմտաւ ածեալ Սոփիպատրոս ոչ դառնալ ի մէնջ, այլ գալ զկնի մեր՝ լսել բանս բարիս ի Յոհաննէ, մանաւանդ զի ի տանն իւրում ո՛չ ինչ լսաւ ի Յոհաննէ։ Յայնժամ բուռն հարեալ զնմանէ Պատրոկղիանէ, ասելով ցնա. Ոչ տամ որդեակ եղանել քեզ արտաքս ի տանէս քումմէ։ Ասէ ցնա Սոփիպատրոս. Թոյլ տուր ինձ մայր իմ երթալ սակաւիկ մի զկնի դոցա, և վաղվաղակի դառնամ և գամ առ քեզ։ Եւ Պատրոկղիանէ ունելով յինքեան զսերմանումն սատանայի, ասէ ցՍոփիպատրոս. Ոչ տաց քեզ թոյլ, որդեակ, եղանել ի տանէս քումմէ, մինչև կատարեսցես զկամս մօր քոյ։ Եւ Սոփիպատրոս զխրատեալ զանկարգ և զպիղծ մտածումն մօր իւրոյ, անչափ բազում ճգնեալ պէսպէս աղաչանօք, եթէ թոյլ տուր ինձ մայր իմ և մուտ ի տուն քո և ես վաղվաղակի գամ, և նա ոչ անսայր։ Յայնժամ Սոփիպատրոս որպէս զքաջ նահատակ՝ ունելով յանձին զաստուածական պահպանութիւնն առ ի փրկել ի մահաբեր պատրանաց մօր իւրոյ, զխմամարտ եղեալ ընդ նմա բանական զօրութեամբ, և զերծեալ ի նըմանէ, փրկեցաւ որպէս ճնճղուկ յորոգայթէ որսողաց, ըստ մարգարէական բանին, և ընթացեալ եկն զկնի մեր։ Եւ արարեալ առ մեզ աւուրս երեք, վարդապետեալ ի Յոհաննէ ոչ դառնալ ի տուն իւրում, վասն ապիրատ և անկարգ ցանկութեան մօր իւրոյ։ Եւ ի չորրորդում աւուրն, բորբոքեալ իբրև զհուր ի նիւթոյ սատանայի մայր նորա, և ելեալ ի խնդիր Սոփիպատրոսի ի տեղւոջ հրապարակին, ուր Յոհաննէս նստեալ կայր. և Սոփիպատրոս առժամայն ոչ հանդիպեալ առ մեզ. և նայեցեալ նորա ի ժողովուրդն և ոչ տեսեալ զՍոփիպատրոս և դարձեալ նորա ի մէնջ, և հանդիպեալ Սոփիպատրոսի, և բուռն հարեալ զհանդերձից նորա։ Եւ նա ասէ ցնա. Թոյլ տուր ինձ մայր իմ և ես կատարեմ զամենայն կամս քո. և նա ոչ անսայր նմա։ Եւ մինչդեռ այսպէս աղաչէր զնա Սոփիպատրոս զերծանել ի նմանէ, ահաւասիկ պատահումն եղեալ ի ժամուն յայնմիկ անցանել անթիպատոսին ի տեղւոջն յայնմիկ։

Եւ տեսեալ զնա Պատրոկղիանէ, աղաղակեաց մեծաձայն ասելով. Ողորմեաց ինձ անթիւպատէ. և ձգեալ զծածկոցն ի գլխոյն իւրմէ և առեալ զհերացն, և այնչափ բազում արտասուս հեղոյր առաջի նորա ի սատանայական ջերմութենէ անտի: Ասէ ցնա անթիպատոսն. Զի՞ է քեզ կին, զի՞նչ կամիս, տուր պատասխանի հեզաբար: Ասէ ցնա Պատրոկղիանէ. Կին այրի եմ ես, և սա որդի իմ է, և թողեալ զսա առն իմ չորք ամաց, և բազում մաշելով զանձն իմ, ձգնեալ հասուցի զսա ի չափ հասակի, և է այժմ ամաց քսան և չորից. և այս տասն օր է որ ստիպէ զիս ասելով, եթէ մայր ննջեա՛ ընդ իս. և զայս ասելով առաւելապէս հեղոյր զարտասուսն: Եւ զայս լուեալ անթիպատոսն, բարկացաւ ի վերայ Սոսիպատրոսի, և հրամայեաց բերել զալար կաշիս և նոքօք պատել զմարմին նորա, և արկանել ընդ մարմնով նորա խիժ և քարբս, և այլ ևս մահաբեր զժնեակս և եղջիւրաւորս, որպէս զի չարամահ եղիցի. և բերեալ նոցա զկաշին արկանել զմարմնովք նորա:

Եւ ընթացեալ Յովհաննէս, աղաղակեաց մեծաձայն ասելով ցանթիպատոսն. Զպարկեշտ պատանիդ անիրաւ դատես ով անթիպատէ: Եւ սկսեալ Պատրոկղիանէ ձայնիւ մեծաւ ասել յաղագս Յովհաննու, եթէ զորա խրատով եղայց որդիդ իմ առ իս զայսպիսի չար մտածմունս. քանզի եկեալ զորա ի տան իմում, եկեր և արբ և առեալ զորդիդ իմ գնաց, և ուսոյց զմա զայսպիսի պիղծ և զազիրատ ցանկութիւնս: Եւ զայս լուեալ դատաւորին, հրամայեաց ըմբռնել զՅովհաննէս և նովին պատժովք սատակել ընդ Սոսիպատրոսի:

Եւ յայնժամ համբարձեալ Յովհաննէս զաչս իւր յերկինս լի արտասուօք և ասէ. Տէր Յիսուս Քրիստոս եղիցի շարժումն և եռացումն երկրի ի տեղւոջս յայս, վասն անիրաւ դատաստանի անթիպատոսիդ: Եւ ընդ բանին Յովհաննու եղեւ շարժումն յոյժ և եռացումն ի տեղւոջն յայնմիկ. և որպէս վերացուցեալ էր զաջ ձեռն իւր անթիպատոսն առ ի դատա-

պարանել զՅովհաննէս՝ այնպէս մնաց ի վեր՝ զօսացեալ. այնպէս և ձախ ձեռն նորա զոր ի խոնարհ ունէր, և աչք նորա շրջեալ, և նա պակուցեալ ի տեղւոջն՝ մնաց որպէս զվէմ: Իսկ այլքն ամենեքեան որպէս և կային ի տեղւոջն՝ անկեալ յերկիր մեռան յահագին շարժմանէն և յեռացմանէն , և ոչ մնաց այլ ոք կենդանի, բայց միայն Յովհաննէս և ես և Սոփպատրոս, մերձ առ պատրաստեալ կաչին և առ մահաբեր զազանն: Եւ յետ բազում ժամու, աղաղակեաց անթիպատոսն ասէր. Առաքեալ և աշակերտ օրհնելոյն Քրիստոսի, ողորմեա ինձ և առողջացո զաչս իմ և հաստատեա զիս ի նոյն բնութիւնն խաղաղութեամբ, և հաւատամ յԱստուածն առ ի քէն քարոզեալ: Եւ դարձեալ համբարձեալ զաչս իւր յերկինս Յովհաննէս և աղաղակեաց ասէր. Որդի Աստուծոյ Տէր Յիսուս Քրիստոս, որ զայսպիսի զօրութիւնս ցուցեր ի տեղւոջս յայսմիկ առ ի խրատել զանզգամ մարդիկ, և այժմ առաքեա ի բազում գթութեանց քոց, որպէս զի յաղթեսցէ բարերար մարդասիրութիւն քո յանցանաց մարդկան այսոցիկ :

Եւ զայս աղօթեալ Յովհաննու, առժամայն դադարեաց շարժումն և եռացումն երկրին տեղւոյն այնորիկ. և մեռեալքն ամենեքին զգեցան զկենդանութիւն առողջութեամբ որպէս յառաջագոյնն էին. այնպէս և ձեռք անթիպատոսին հաստատեցան ի նոյն: Եւ ասէ Յովհաննէս. Գիտասջիք որդեակք զի Աստուած արար զշարժումն, և Աստուած դադարեցոյց. և նա մահացոյց զձեզ և նա կենագործեաց առողջութեամբ: Եւ ասէ ցնա անթիպատոսն. Ծառայ Աստուծոյ բարձրելոյ. եկ երթիցուք ի տուն իմ և կերիցուք հաց ի միասին. և առեալ նորա զմեզ տարաւ ի տուն իւրում, և եդեալ սեղան և կերաք և արբաք. և դադարեցաք զօրն զայն առ նա:

Եւ ի միւսում աւուրն աղաչեաց անթիպատոսն զՅովհաննէս և ասէ. Տէր, եթէ արժանի եմ, տուր ինձ զքրիստոսական կնիքն: Եւ առեալ Յովհաննէս

յաստուածական պատուիրանաց, ուստի զնա և մկրտեաց յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Եւ զայն տեսեալ կնոջ անթիպատոսի՝ առեալ զորդին իւրեանց և եկեալ անկեալ առ ոտսն Յովհաննու ասելով ցնա. Ծառայ Աստուծոյ օրհնեալ, որպէս փառաւորեցաւ այր իմ, փառաւորեա և զիս և զորդիս իմ. և վարդապետեալ մկրտեաց զնա Յովհաննէս հանդերձ ամենայն տամբ իւրեանց ծառայիւք և աղախնայիւք, և յայնմհետէ կերաք և արբաք առ նոսա, և ուրախ եղաք փառաւորելով զԱստուած յաղագս ամենայն տան նոցա։

Եւ յելանել մեր անտի, ասէ Յովհաննէս ցՍոփպատրոս. Եկ որդեակ Սոփպատրոս երթիցուք ի տուն քո. քանզի այսպէս զմտաւ ածեալ Սոփպատրոսի այլ ոչ ևս դառնալ ի տուն իւրում, վասն անհաւատութեան մօր իւրոյ։ Եւ ասէ ցՅովհաննէս. Վարդապետ, գամ զկնի քո ընդ որ և երթաս, իսկ ի տուն իմ՝ վասն մօր իմոյ այլ ոչ երբեք դառնամ, այլ ուրանամ զամենայն ինչս իմ զոր ունիմ և ընդունիմ զբանն Քրիստոսի, զքարոզեալն ի քէն։ Եւ ասէ ցնա Յովհաննէս. Մի յիշատակեր որդեակ զչարութեան բանս մօր քո, քանզի մերժեցաւ ի նմանէ խայթոց մահաբեր թունից սատանայի, և այլ ոչ ևս լուիցես բանս չարս ի բերանոյ նորա, զի բազում զղջմամբ խոկայ յաղագս Քրիստոսի, ապաշաւելով յաղագս դիւական չարեաց զոր եցոյց առ քեզ, և արդ յայսմհետէ այլ մի ևս հոգար վասն խորհրդոց չարաց։

Եւ զայս ամենայն ասացեալ Յովհաննու և առեալ զձեռանէ նորա չոգաք ի տուն նոցա, և գտաք զՊատրոկղիանէ անկեալ ի վերայ երեսաց իւրոց յերկիր, լալով և ապաշաւելով բազում զղջմամբ, յաղագս դիւական եղելոցն առ նա։

Եւ լուեալ նորա յաղագս գալստեանն Յովհաննու, յարուցեալ փութապէս անկաւ առ ոտս նորա ի վերայ երեսաց իւրոց ասելով ցնա. Վարդապետ բարի, այնչափ մեղայ և այնչափ զայրացայ առ մեծ Աստուածն քո Քրիստոս՝ առ քարոզեալն ի քէն, որ-

չափ չեմ ապրելոյ. և արդ, աղաչեմ և հայցեմ ի քէն, ծառայ սիրելի օրհնելոյն Աստուծոյ, մի՛ բարկանար ի վերայ աղախնոյ քո, զի ահաւասիկ խոստովանիմ զյանցանս իմ վերաբերելով զվարս չարեաց խորհրդոց իմոց, առաջի քո բարի բժիշկ, զոր պատրանօք սատանայի՝ ցուցի առ որդիդ իմ։ Եւ արդ պաղատիմ առաջի քո կարողութեանդ, բժշկել զանբժշկելի վէրս հոգւոյ իմոյ. քանզի բազում ժամանակաց հարան յիս խայթոցք դիւականք առ ի պատրել զորդիդ իմ, և դա ոչ հաւանեալ ինձ, և յայնմհետէ բազում սրտմտութիւն արկեալ սատանայի ի խորհուրդս մտաց իմոց, վասն չար և պիղծ ցանկութեանն առ ի խոտնակել զորդիդ իմ յիմ դիւական մոլորութեան կորուստ. և ի հանդիպել ինձ անթիպատոսին ջանացայ կորուսանել զդա, և արդ, ողորմեա՛ ինձ և աղաչեա զԱստուած, զի մի՛ հատուցանէ ինձ և տանջեսցէ զիս ըստ եղկելի վարուց իմոց։ Եւ առեալ Յոհաննէս ուսոյց բաւանդակ զՊատրոկղիանէ յաղագս ապաշխարութեան և հաւատոյ. այնպէս և որդւոյ նորա Սոսիպատրոսի և ամենայն տան նոցա. և մկրտեաց զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Եւ առեալ Պատրոկղիանէ ինչս բազումս, եբեր եդ առ ոտսն Յոհաննու, ասելով ցնա. Տէր, ա՛ռ զայդ ի պէտս կարօտելոց։ Եւ ասէ ցնա Յոհաննէս. Ունի՛ս և այլ ևս ի տան քում։ Եւ ասէ. Այո՛, տէր, ունիմ և այլ ինչս բազումս։ Եւ ասէ ցնա Յոհաննէս. Որովհետև Աստուծոյ նուիրեցեր զայս. տար դիր առ այլոցն ի տան քում և օրըստօրէ տուր քոյին ձեռօք։ Եւ ընկալեալ նորա զպատուիրանն ըստ ամենայնի ճշմարտապէս, և յամենայն աւուր սկսեալ նորա կալ արտաքոյ դրաց տան իւրոյ և տալ անդադար յաղքատս և ի տնանկս ։

Եւ դադարեցաք աւուրս բազումս ի տան նոցա, տեսանելով զպտղաբերութիւն նոցա, ոչ միայն ըղտրոց բարեգործութեան, այլ պահօք և աղօթիւք տկարացուցանելով զանձինս՝ աղաչելով զԱստուած

յաղագս յանցանացն Պատրոկղեանէ. և այսպէս ընկալեալ նոցա յանձինս իւրեանց կատարել առ Աստուած հանապազ բարեգործութիւնս, և ոչ երբեք փակեալ դրաց տան նոցա յողորմութենէ, քանզի այսպիսի ողորմութիւն և բարի գործք ապաշխարութեան, մերժեալ հալածեն զդիւական ախտս ի մարդկանէ, և մաքրեն զաղտեղութիւն հոգւոց և մարմնոց, մուծանելով զմեզ յարքայութիւնն Աստուծոյ, որում փառք յաւիտեանս։

## ՅԱՂԱԳՍ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

## ԹԷ ՈՐՊԷՍ ԳԱՏՄԵՑԱՒ Ի ՅՈՀԱՆՆԷ

## ԿԱՄ ԹԷ ՅՈՐՈՒՄ ՏԵՂԻՈՋ ԸՆԿԱԼԱՆ

Յետ հաւատալոյն ամենայն կղզւոյն Պատմոյ, և վախճանելոյ Թագաւորին Դոմետիանոսի, որ աքսորեաց զմեզ ի Պատմոյ ի կղզւոջն, ընկալեալ զԹագաւորութիւն Ներուա, որ ոչ արգելոյր զքրիստոնէական վարդապետութիւնն, և ոչ ընդդիմանայ և հակառակել ընդ ումեք յամենայն աշխարհս հաւատացելոց ի Քրիստոս: Եւ վասն այսորիկ լուեալ նորա, եթէ ի Պատմոյ այր առաքինի և սուրբ է, և ամենայն ասացեալքն ի նմանէ ճշմարիտ է և բարիք. և զայս գիտացեալ Թագաւորին, արար թուղթ առ Յոհաննէս յաղագս լուծման աքսորանաց մերոց: Եւ ընկալեալ Յոհաննու զայն, զմտաւ ածեալ դառնալ մեզ անդրէն յԵփեսոս. քանզի մինչև ցայն վայր ամենայն կղզին Պատմոյ հաւատացեալ էին ի Քրիստոս. և գիտացեալ ամենայն բնակչաց կղզւոյն այնորիկ զխորհուրդն մեր, ժողովեալ գային առ Յոհաննէս գաւք գաւք, և աղաչէին զնա որպէս զի մի մեկնեսցի ի նոցանէ զամենայն աւուրս կենաց:

Եւ ասէ ցնոսա Յոհաննէս. Մի այդպէս ծանրութիւն բառնայք հոգւոյ իմոյ որդեակք. Քրիստոս առաքեաց զիս առ ձեզ և որպէս կամեցաւ լուսաւորեաց զձեզ. և այժմ նա հրամայեաց ինձ դառնալ անդրէն յԵփեսոս, վասն բազում հիւանդութեանցն անկելոց անդ յեղբարսն մեր: Եւ զայս

լուեալ ի Յօհաննէ եղբարցն, գիտացին եթէ ոչ հաւանի բանից աղաչանաց նոցա, կամելով նաւել յԵփեսոս: Եւ յայնժամ անկեալ նոցա ամենեցուն առհասարակ ի վերայ երեսաց իւրեանց առաջի Յօհաննու, և արտասուելով աղաչէին զնա և ասէին, եթէ վարդապետ բարի, որովհետև առեցեր զկղզիս Պատմայի և զմասու ածեր որք թողուլ զմեզ, տուր մեզ գրով պատմութեամբ զամենայն նշանս և զարուեստս զոր տեսեր յՈրդին Աստուծոյ, և զբանսն զոր լուար ի սուրբ բերանոյ նորա, որպէս զի մի մոլորելով որոշեցուք ի նմանէ, և ի լուսաւոր վարդապետութենէդ քումմէ. այլ հաստատունք և անխախտելի եղիցուք. քանզի երկնչիմք եթէ մոլորեցի ոք յեղբարցս և հետեւօղ լինի սատանայի և բերէ զամենեցուն զայթագղութիւն և չփոթումն զխուական: Եւ ասէ ցնոսա Յօհաննէս. Լուարուք որդիք լուսոյ յաղագս նշանացն զոր արար Որդին Աստուծոյ առաջի աչաց մերոց, և բանս զոր խօսեցաւ ընդ իս և ընդ այլ առաքեալսն առ ի վարդապետել մեզ. և մեր ընկալեալ ի նմանէ յաղագս աստուածութեան նորա. քանզի այս բաւական է առ ի պատրաստել ձեզ զկեանսն յաւիտենից: Եւ գիտացեալ նոցա, եթէ ոչ կամեցաւ Յօհաննէս գրով պատմութեամբ տալ նոցա յաղագս Քրիստոսի, այլ միայն բանիւք պատմել. յայնժամ դարձեալ անկան ի վերայ երեսաց իւրեանց, աղաչելով զնա բազում արտասուօք և ասելով. Հայր մեր, որովհետև կամիս որբ թողուլ զմեզ, աղաչեմք և հայցեմք ի քէն, տուր մեզ յաղագս Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ: Յայնժամ տեսեալ Յօհաննէս զայնպիսի արտմութիւն է զհեղումն արտասուաց նոցա, մեծաւ գթութեամբ ասէ ցնոսա. Երթայք որդեակք յիւրաքանչիւր տունս ձեր, և ես հայցեմ ի Տեառնէ. եթէ հրամայէ ինձ, տամ զխնդրուածս ձեր: Եւ զայս լուեալ նոցա ի Յօհաննէ, երկիրպագին նմա ի վերայ երեսաց իւրեանց և գնացին իւրաքանչիւր ոք ի տուն իւրեանց:

Եւ առեալ զիս Յօհաննէս եկաք ի քաղաքէն արտաքոյ մերձ մղոնաւ մի ի տեղւոջ լռութեան,

քանզի և անուն տեղւոյն այնորիկ կոչէր Դադարումն. և կայր անդ լեառն մի փոքր. և ելեալ մեր անդ՝ դադարեցաք աւուրս երեք: Եւ արարեալ Յոհաննէս զաւուրսն զայնոսիկ առանց կերակրոյ, առ ի յաղօթել և հայցել յԱստուծոյ զբարի աւետարանութիւն եղբարցն: Եւ ի չորրորդում աւուրն ասէ ցիս. Որդեակ Պրոքորոն: Եւ ասեմ Նմա. Զի՞նչ հրամայես վարդապետ: Եւ Նա ասէ ցիս. Ընթացիր և երթ ի քաղաքն, և թանաք և քարտէս բեր այսր փութապէս. և մի՛ գիտասցէ ոք յեղբարցն եթէ յորում տեղւոջ եմք, և դարձեալ ասէ ցիս. Արա անդ աւուրս երկուս, և ապա եկ այսր. բայց մի՛ պատմեր ումեք վասն իմ եթէ ուր իցեմ: Եւ երթեալ արարի այնպէս. և եկեալ գտի զնա կալով յաղօթս: Եւ ասէ ցիս. Առ զթանաքդ և զքարտէսդ և կաց ընդ աջմէ իմմէ. և արարի այնպէս: Եւ եղև փայլատակումն և որոտումն յոյժ, մինչև շարժել տեղւոյն այնմիկ, և ես յահի եղեալ անկայ ի վերայ երեսաց իմոց պակուցեալ մերձ ի մեռանել: Եւ յայնժամ խոնարհեալ Յոհաննէս և կալեալ զձեռանէ իմմէ յարոյց զիս, և ասէ ցիս. Նիստ ի վայր: Եւ Նստուցեալ զիս ընդ աջմէ կողմանէ, և արարեալ աղօթս. և կատարեալ զաղօթս, ասէ ցիս. Տես որդեակ զգուշութեամբ զոր ինչ և լուիցես ի բերանոյ իմոյ՝ գրեսցես ի քարտիսիդ:

Եւ համբարձեալ զաչս իւր յերկինս և բացեալ զբերան իւր սկսաւ ասել այսպէս. Ի սկզբանէ էր Բանն. և Բանն էր առ Աստուած. և Աստուած էր Բանն. և որ ի կարգին էր, զամենայն աւետարանութիւնն աւետարանեաց յառն կալով, և ես Նստեալ գրեցի:

Եւ ի կատարել մեզ զաստուածական գրանն, առեալ զիս Յոհաննէս մտաք ի քաղաքն և չոգաք ի տուն Սոփպատրոսի, և ընկալեալ Նոցա զմեզ բազում ցնծութեամբ և եդեալ մեզ սեղան և բազմութիւն կերակրոց, կերաք և արբաք զպէտս մեր:

Եւ ի միւսում աւուրն, ասէ Յոհաննէս ցՍոփպատրոս. Որդեակ Սոփպատրէ: Եւ նա ասէ. Զի՞նչ

հրամայես վարդապետ։ Եւ ասէ ցնա Յոհաննէս. Գնա՛ որդեակ և արա խնդիր սուրբ և գեղեցիկ մագաղաթից և բեր առ մեզ յաղագս սրբագրութեան աստուածային աւետարանացն։ Եւ երթեալ նորա պատրաստեալ եբեր։ Եւ ասէ ցիս Յոհաննէս. Ա՛ռ որդեակ Պռոխոռնեա զմագաղաթդ և նիստ ձեռա, և սրբագրեա ի դոսա զաւետարանդ զայդ։ Եւ առեալ իմ զմագաղաթն նստայ ի տուն նոցա, և ձեռեալ սրբագրեցի զնա ամենայն զգուշութեամբ։

Յայնմհետէ ուսուցեալ Յոհաննէս, կարգեաց եպիսկոպոսունս և քահանայս և սարկաւագունս եկեղեցւոյք և ուխտաւորօք ի կղզւոջն յայնմիկ։ Եւ առեալ զաւետարանն տարեալ եդ յեկեղեցւոջն, և հրամայեաց Յոհաննէս ժողովել եղբարցն. և ժողովեալ նոցա, ասէ ցիս. Որդեակ Պռոխոռնեա, ա՛ռ զաւետարանդ և ընթերցիր զդա առաջի ամենայն եղբարցդ։ Եւ առեալ ընթերցայ ի լուր ամենեցուն, և նոցա ընկալեալ մեծաւ ցնծութեամբ փառաւորելով զԱստուած։

Եւ ասէ ցնոսա Յոհաննէս. Առէ՛ք եղբարք և փոխադրեցէք ըստ նմին օրինակի, և դիք յամենայն եկեղեցիս ձեր ի կղզւոջս յայսմիկ. և առեալ նոցա զոր ի տետրակին էր սրբագրեալ արարին այնպէս։ Իսկ զոր ի քարտէսն էի գրեալ, կալաք առ մեզ։

Եւ ասէ ցիս Յոհաննէս. Ե՛կ որդեակ Պռոխոռնեա, ելցուք արտաքս ի գաւառդ, վարդապետել և ուսուցանել նոցա յաղագս սուրբ աւետարանին, նախ քան զուղղելն մեր յԵփեսոս։ Եւ առեալ նորա զիս, ելաք առ ի շրջել և ուսուցանել աշակերտակ ամիս վեց։ Եւ էր ի գեղ մի ոմն քահանայ դիւական մեհենաց՝ ի Թաքուստ ունելով զկապաշտութիւն. և կայր որդի մի նորա կոյր, և մերձեցեալ նորա առ Յոհաննէս ունկն դնելով վարդապետութեան նորա. և յանկարծակի աղաղակեաց ասելով ձայնիւ մեծաւ. Վարդապետ բարի, երդմնեցուցանեմ զքեզ յԱստուածն զոր պաշտես և քարոզես, արա՛ առ նա ա-

զօթս և լուսաւորեա զաչս իմ, զի աշխատիմ ցանկամ տեսանել զքեզ և ընդունել զքո լուսաւոր վարդապետութիւնդ . և արդ արա զիս արժանի ուրբ պատկերի քոյ: Եւ զայս նորա ասացեալ, կալեալ զաջոյ ձեռանէ նորա Յովհաննէս, ասէ. Յանուն Յիսուսի Քրիստոսի լուսաւորեաց. և առժամայն լուսաւորեցան աչք նորա. և զայն տեսեալ քահանային հօր նորա, անկաւ առ ոտսն Յովհաննու աղաչելով և ասելով. Ծառայ Աստուծոյ բարձրելոյ, տուր մեզ զճշմարտակաց զառ ի Քրիստոս զկնիքն. և առեալ զմեզ՝ չոգաք ի տուն նոցա. և վարդապետեալ մկրտեաց զնոսա հանդերձ ամենայն տամբ իւրեանց յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ . և դարձեալ մտաք ի քաղաքն:

Եւ յետ ժամանակաց ինչ առեալ զիս Յովհաննէս ելաք արտաքս ի քաղաքէն մղոնաւ մի ի տեղւոջ լռութեան. և գտեալ անդ այր մի, և մտեալ դադարեցաք ի նմա աւուրս տասն. և կայր ի ներքս ի յայրն յայն ջուր: Եւ ի կատարել տասն աւուրն, մտի ես ի քաղաքն, իսկ Յովհաննէս մնաց ի տեղւոջն առ ի կատարել զպաշտամանս իւր առ Աստուած, զամենայն աւուրսն առանց կերակրոյ հայցելով ի Տեառնէ, որպէս զի յայտնեսցին նմա զինչ պարտ է առնել: Եւ եղեալ առ նա ձայն ի վերուստ ասելով ցնա. Յովհաննէս: Եւ նա ասէ. Զի՞նչ հրամայես Տէր: Եւ նա ասէ, վերնական ձայնիւ. Ժուժկալեա ի տեղւոջդ յայդմիկ այլ և տասն օր, և յայտնեսցին քեզ խորհուրդք մեծամեծք: Եւ արարեալ անդ Յովհաննէս այլ ևս տասն օր: Եւ յանժամ եղեալ առ նա հիացումն մեծ՝ տեսանելով նմա զօրութիւնս մեծամեծս և զօրս հրեշտակաց իջանելով պատմելով նմա բանս անճառս: Եւ երթեալ իմ առ նա, և դարձաք ի քաղաքն:

Եւ ի միւսում աւուրն, երթեալ Յովհաննէս և նստեալ ի տեղւոջ հրապարակի, և ժողովեալ առ նա ամենեցուն, և ասէ ցնոսա Յովհաննէս. Տեսէք եղբարք և որդիք, զգուշութեամբ պահեցէք զլուսաւոր

վարդապետութիւնդ զոր ընկալայք յինէն ամենայն սրտի մտօք. առողջութեամբ կատարել զպատուիրանս Քրիստոսի. և եղերուք կատարելապէս որդիք լուսոյ. քանզի ահաւասիկ մերձեալ է ժամանակ հրաժարելոյ ինձ ի ձէնջ և նաւել յԵփեսոս առ եղբարսն այնոսիկ: Եւ լուեալ նոցա ի Յովհաննէ անգրէն յաղագս գնալոյն մերոյ, և անկան առհասարակ ի վերայ երեսաց իւրեանց, և բազում արտասուօք աղաչէին զնա և ասէին. Հայր մեր բարի, մի թողուր զմեզ զծառայքս և զորդիքս քո: Իսկ Յովհաննէս ասէ ցնոսա. Սիրելիք ուստերք և դստերք, բարեմիտ և ուրախ լերուք ի Քրիստոս. քանզի նա հրամայեաց ինձ երթալ յԵփեսոս: Եւ զայս ասացեալ ցնոսա Յովհաննէս, լռեցին ի լալոյ անտի:

Եւ միւսում աւուրն պատրաստեաց նաւ որ երթայր յԵփեսոս, և կոչեաց Յովհաննէս զամենեսեան և համբուրեաց առհասարակ, և աղօթս արարեալ նոցա մտաք ի նաւն, և ի տասն և ի չորս օր հասաք ի տեղւոջ՝ մերձ տասն մղոնօք յԵփեսոս. և ելեալ մեր ի ցամաք՝ հետևեալ չոգաք և մտաք ի քաղաքն. և լուեալ եղբարցն ժողովեցան առ մեզ մեծաւ ուրախութեամբ ի տեղւոջ՝ յորում նստեալ հանգչէաք:

Եւ եկեալ Դիոսկորիդէի որդին Դէմնոս, առեալ զմեզ տարաւ ի տուն իւրում, քանզի հայր նորա վախճանեալ էր, և եդեալ նորա մեզ սեղան՝ կերաք և արբաք, և դադարեցաք առ նմա: Եւ անդ գային եղբարքն ամենեքեան և վարդապետէին ի նմանէ, մինչև հաւանեալ ամենայն Եփեսացւոց բանից և գործոցն Յովհաննու, և ոչ մնայր անդ ումեք յանհաւատութեան:

Քանզի յետ գալոյն մեր յաքսորանացն, արարաք յԵփեսոս ամս քսան և վեց. և ի Պատմոս կըղզւոջն յաքսորանսն արարաք ամս իննևտասն. և նախ քան զաքսորելն մեր՝ յԵփեսոս ամս հնգետասան և արտաքոյ յԵփեսոսէ ամս ինն. և յորժամ եկաք յԵրուսաղեմէ յԱսիա, էր Յովհաննէս ամաց յիսուն և ինն. և ես ամաց երեսուն, և երեք ամաց:

Եւ յետ այնորիկ եկեալ Յոհաննէս ի տանէ Գէոմնոսի, և առեալ զիս և այլ ևս աշակերտս վեց, և ասէ ցմեզ. Առէք բրիչս ի ձեռս ձեր և եկայք զկնի իմ. և առեալ նորա զմեզ և հեռացեալ ի տեղւոջ լռութեան, և ասէ ցմեզ. Նստարուք ի տեղւոջդ յայդմիկ մինչև ես երթայց կացից յաղօթս: Եւ նստաք մեք ի տեղւոջն, և մեկնեալ նորա քարաձիգ մի, և անդ դադարեալ նորա յաղօթս, մինչև ի միւսում աւուրն: Եւ կատարեալ զաղօթսն, կոչեաց զմեզ և ասէ. Բրեցէք որդեակք ի տեղւոջդ: Եւ անկեալ ի վերայ նորա և համբուրեալ, լացաք դառնապէս մինչև ի ծագել արևուն, և ապա աւանդեաց զհոգին. և քարշեցաք զհողն ի վերայ երեսաց նորա, և ծածկեցաւ յաչաց մերաց:

Եւ երթեալ մեր ի քաղաքն, տեսին զմեզ եղբարքն և ասեն ցմեզ. Ո՞ւր է վարդապետն մեր: Եւ պատմեցաք նոցա վասն ամենայն եղելոցն. և նոքա ոչ հաւատային մեզ մինչև առեալ նոցա զմեզ՝ չոգաք ի տեղւոջն, և վերաբերեցաք զդիրսն Յոհաննու, և ոչ գտաք ի նմա զուրբ մարմին նորա. և զարհուրեալ յայժ՝ լացաք բաւանդակաբար. և դարձեալ կացաք յաղօթս առ ուրբ դիրս նորա. և յետ կատարելոյ զաղօթսն, խոնարհեալ համբուրեցաք զուրբ դիրսն և չոգաք ի քաղաքն, փառաւորելով զԱստուած հայր անսկիզբն և զՈրդին միածին և զսուրբ Հոգին, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն:

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼՈՑՆ ՔՐԻՍՏՈՍԻ

## ՅԱԿՈԲԱՅ ԵՒ ՅՈՀԱՆՆՈՒ

## ՈՐԴԻՈՑՆ ՈՐՈՏՄԱՆ[1]

Սիրելի աշակերտքն Յիսուսի[2] Յակոբոս և Յովհաննէս, քոյր[3] որդիք էին Յիսուսի. քանզի Սողոմէ մայր սոցա, դուստր էր Յովսեփայ, որ անուանեցաւ[4] այր Մարիամու[5] և հայր Քրիստոսի, վասն պահպանութեան կուսին և սպասաւորելոյ ծննդեանն: Զի որպէս որդիքն Յովսեփայ՝ եղբարք ասացան Յիսուսի, նոյնպէս և դստերքն քորք: Սողոմէ մայր սոցա առեալ զսոսա և մատուցեալ առ Յիսուս ասաց. Տուր մեզ, Տէր, զի նստցին սոքա երկու որդիքս իմ, մին ընդ աջմէ[6] քումմէ և միւսն յահեկէ ի փառս քո, որպէս զՄովսէս և զԵղիա երևեալ ի Թաբօր: Նա ետ պատասխանի և ասէ, թէ կարէ՞ք զբաժակն իմ ըմպել, զոր ես ըմպելոց եմ, և կամ զմկրտութիւնն մկրտել զոր ես մկրտելոց եմ. և նոքա ասեն[7], թէ կարող եմք, զոր և արդեամբք իսկ կատարեցին: Զի Յակոբոս վասն յայտնի և համարձակ յանդիմանելոյ զՀրեայսն, գլխատեցաւ ի Հե-

1. Ա. օր. Պատմութիւն սուրբ առաքելոցն Յակոբայ եւ Յովհաննու:
2. Ա. օր. Քրիստոսի:
3. Ա. օր. քըշեր:
4. Ա. օր. անուանեցեալ կոչե-ցաւ:
5. Ա. օր. Մարեմայ:
6. Ա. օր. յաջմէ:
7. Ա. օր. ասացին:

ըոլգիէ [1]: Եւ կին ոմն մեծազգի ի Սպանիոյ, հաւատացեալ ի Քրիստոս քարոզութեամբն Յակոբայ, և ընդ նմին եկեալ յԵրուսաղէմ, ի տեսանել զմայր Տեառն, և երկրպագեալ տնօրինականացն և տեղեացն Յիսուսի. և յորժամ գլխատեցաւ Յակոբոս, կինն այն առեալ զսուրբ մարմինն տարաւ ի Յոպպէ, եդ ի փայտեայ տապանի, և ամրացոյց յեզր ծովին, մնալով նաւարկութեան զի տարցէ զնա ի վիճակն իւր: Եւ յայնմ գիշերի զերծեալ տապանն սուրբ մարմնովն, և ալիք ծովուն տարեալ [2] հասուցին զնա ի գետն ի Սպանիա: Եւ այր ոմն կայր [3] էջ խարխափելով յափն գետոյն, առ ի լուանալ զերեսն, և հասեալ [4] ձեռն կուրին ի մարմին սուրբ առաքելոյն [5], բացան աչքն և ետես զսուրբ մարմինն անգլուխ. ձայն երարձ և աղաղակէր. Եկայք տեսէք զաստուածս անգլուխ, որ երաց զաչս իմ: Եւ ժողովեցան անդ բազմութիւնք մարդկան, և բարձեալ մեծարանօք զսուրբ մարմինն [6] պատուեցին, և հանապազօր զոչէին նմա, անուանելով անգլուխ աստուած. մինչև գնաց առաքեալն Պօղոս և քարոզեաց նոցա զՔրիստոս և ասաց, թէ աշակերտ է և առաքեալ Յիսուսի Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ: Իսկ զգլուխ սրբոյն Յակոբայ [7] յափշտակեաց Հրեշտակ Տեառն աներևութաբար և [8] տարեալ յԵրուսաղէմ,

1. Ա. օր. ի Հերովդէէ սրով. եւ զմարմինն ընկեցեալ ի ծովն աւազ. չունի Եւ կին ոմն... սուրբ մարմնովն:
2. Ա. օր. տարեալ զնա ի Սպանիայ, վիճակն իւր հաւատացեալ յառաջագոյն. եւ ալի զալի հարեալ ուղղեցին զմարմին Յակոբայ առաքելոյն եւ հասուցին...
3. Ա. օր. յաւելու աչօքն:
4. Ա. օր. հպեալ:
5. Ա. օր. յաւելու եւ հարեալ զջուրն յերեսն:
6. Ա. օր. զմարմինն սուրբ մեծարանօք:
7. Ա. օր. յաւելու յորժամ գլխատեցաւ:
8. Ա. օր. եւ բերեալ եդ առաջի սուրբ Աստուածածնին եւ Յակոբայ Տեառն եղբօրն եւ Յովհաննու եղ-

եղ աստչի սուրբ Աստուածածնին, մինչ էին նստեալ սուրբ Տիրամայրն և Յակովբոս Տեառն եղբայրն և Յովհաննէս աւետարանիչն և հօգայրն փառն Յակո-բայ, զի լուան թէ կոչա գնա Հերովդէս և եղ ի բանտ: Ի նմին ժամու բերեալ հրեշտակն եղ բղ-գլուխն աստչի նոցա, և նոքա լացին և ածին կոծ մեծ ի վերայ նորա. և պատեալ եդին ի պատուա-ճաւոր անդուղջն, և յետոյ շինեցաւ ի վերայ սուրբ գլխոյն հայակապ [1] և մեծափառ եկեղեցի յանուն սրբոյն Յակոբայ, և է վանք և ժողովատեղ Հայոց ուխտին, ի փառս Քրիստոսի Աստուծոյ [2] մերոյ:

Իսկ Յովհաննէս, սուրբն և սիրեցեալն ի Քրիս-տոսէ, պատուսորեալ սուրբ Աստուածածնին ամս եր-կոտասան որպէս և յանձնեցաւ նմա ի Քրիստոսէ մինչ էր ի խաչին: Եւ յետ փոխման սուրբ Կուսին, գնաց յԱսիա քարոզել զՔրիստոս՝ հրամանաւ Հոգւոյն սրբոյ և Պետրոսի վիմին հաւատոյ: Եւ զի դժուա-րացաւ Յովհաննէս, ընդդէմ դարձաւ Պետրոսի, և ոչ կամէր գնալ յԱսիա, վասն որոյ խորտակեալ նաւին անկաւ ի ծովն. և [3] ապա յետ քառասուն աւուրն եհան զնա ալիք ծովուն յԵփեսոս, և եկեալ անդ եղև աշակերտն իւր զՊրոխորոն: Եւ զի ոչ ներգործէր քարոզութիւն աւետարանին, հնարեցան մտանել բաղնապան: Յովհաննէս [4] զհուրն վառէր ի քուրայն և Պրոխորոն կայր ի սպասու սորանցն, որք մտանէին սա ի լուանալ զինքեանս: Եւ այնպէս կե-ցեալ տարի մի, և յետ տարւոյն ապա խեղդեալ

բօրն նորին, մինչ աղօթէին ի միասին. եւ նոքա առեալ լացին ի վերայ նորա, եւ արարին կոծ մեծ. եւ ապա պատեալ ամփոփեցին:

1. Ա. օր. չունի հոյակապ:
2. Ա. օր. չունի Աստուծոյ մերոյ:
3. Ա. օր. յաւելու եւ զա-ւուրս քառասուն տատանե-ցաւ ի վերայ ալեաց ծովուն եւ յետ:
4. Ա. օր. յանձին կալ զհրա-վառութիւն եւ Պրոխորոն կայր ի բաղանիսն ի սպա-սու:

գեն զորդի իշխանին ի բաղանիսն, զոր յարոյց Յովհաննէս անուամբն Քրիստոսի, և ապա եղև հնար[1] քարոզութեան սուրբ աւետարանին։ Եւ յետոյ տուաւ ի յաքսորս ի Դոմետիանոսէ կայսերէ ի Պատմոս կղզին, ուր և գրեաց[2] զաստուածային տեսիլն և զսուրբ աւետարանն։

Եւ յետ հաւատալոյ կղզւոյն, եկն դարձեալ յԵփեսոս, հրամանաւ Ներուասայ արքայի, և քառասուն հազար այր մոլորեալ մարդիկ դարձոյց յաստուածգիտութիւն. շինէր եկեղեցիս և առնէր ձեռնադրութիւնս միոյ միոյ եկեղեցւոյ, որպէս և հոգին սուրբ ցուցանէր նմա։ Եկն նա Յովհաննէս[3] ի քաղաք մի որ ի գաւառն Եփեսոսի, և շահեցոյց զեղբարսն ամենայն[4] հոգևոր շահիւք։ Եւ ետես անդ երանելին Յովհաննէս երիտասարդ մի զօրագոյն մարմնով և գեղեցիկ տեսլեամբ, որ եռայր հոգւով ի լսել զբանն Աստուծոյ զոր քարոզէր[5] Յովհաննէս։ Իսկ Յովհաննէս ուսոյց նմա զհաւատս Քրիստոսի[6], և մկրտեալ ետ զնա յեպիսկոպոսն որ անդ էր, և ասաց. Առ քեզ յանձն եղիցի դա, յանդիման եկեղեցւոյն և[7] վկայութեամբն Քրիստոսի, զի հոգասցէ[8] վասն դորա ճշմարիտ ուսմամբ։ Եւ նա ընկալաւ և ասաց[9] առնել զպատուիրեալսն վասն նորա. և Յովհաննէս ելեալ գնաց անտի։ Եւ եպիսկոպոսն առ[10] ընկալաւ զերիտասարդն և տարաւ ի տունն իւր, և կերակրէր զնա և զգուշանայր նմա և գթայր ի վերայ նորա. և յետոյ անխոյթ արարեալ ի բաղում

1. Ա. օր. տեղի եւ ճնար։
2. Ա. օր. զաւետարանն եւ զաստուածականն տեսիլն։
3. Ա. օր. չունի Յովհաննէս։
4. Ա. օր. յաւելու իւիք։
5. Ա. օր. աւետարանէր։
6. Ա. օր. չունի Քրիստոսի։
7. Ա. օր. չունի եւ։
8. Ա. օր. հոգացես։
9. Ա. օր. խոստացաւ։
10. Ա. օր. առ զերիտասարդն առ ինքն։

հոգաբարձութենէ անտի[1] խուժէ։ Իսկ երիտասարդն այն իբրև առ համարձակութիւն, եկին յարեցան ի նա ընկերքն իւր զատարկք և ընդվայրահարք, որք ընկղմեալ էին ի սովորութիւնս չարեաց։ Եւ նախ զառաջինն ատնէին զնա ի ճաշ և ի խրախութիւնս, և յետ այնորիկ միաբանեալ ընդ իւրեանս, և ի գիշերի տեառագերծ կողոպտէին[2] զմարդիկ։ Եւ դար-ձեալ հրապուրէին զնա գործել ընդ նոսա ինչ որ չարագոյն է քան զնոսա[3]։ Իսկ նա առ սակաւ սա-կաւ սովորէր և ընդելանայր չարեացն, և ի ձեռն կրթութեանն և զօրութեան բնութեանն[4] ապստամ-բեաց։ Եւ իբրև զձի թերավարժ խստերախ[5], որ բերանով սանձակոտոր առնէ ի հարթ ճանապարհի, և ի բաց ընկենու զհեծեալն, նոյնպէս և նա զանձն ի կորուստ ընկենոյր. և եհատ զյոյս կենաց իւրոց որ առ Աստուած՝ ապառապուռ։ Եւ ոչ փոքր ինչ խորհէր նա զչար. և արար նա զունդս աւազակաց, և եղև աւազակապետ, և կայր այնպէս անառակու-թեամբ ի չարիս[6]։

Անցին ժամանակ ընդ մէջ, և եկն դարձեալ Յովհաննէս ի քաղաքն յայն վասն իրիք ինչ. և իբ-րև ուղղեաց զայն, ասէ ցեպիսկոպոսն. Ո՞ւր է աւանդն իմ զոր ետու ցքեզ յանդիման եկեղեցւոյս վկայութեամբն[7] Քրիստոսի։ Եւ նա զարմացեալ[8] թէ զինչ իցէ[9] այն։ Ասէ սուրբն Աստուծոյ[10]. Զանձն երիտասարդին խնդրեմ։ Յայնժամ յոգւոց եհան ե-պիսկոպոսն, ելաց զառնապէս և ասաց. Տէր իմ, նա մեռաւ զմահ մեղացն։ Ասէ սուրբն[11]. Զի՞արդ և որ-պիսի՞ օրինակաւ։ Ասէ եպիսկոպոսն. Եղ ի նա այսն

1. Ա. օր. չունի անտի։
2. Ա. օր. առնէին։
3. Ա. օր. զսոսա։
4. Ա. օր. չունի բնութեանն։
5. Ա. օր. խիստ։
6. Ա. օր. չարին։
7. Ա. օր. չունի վկայութեամբն։
8. Ա. օր. ապուշ մնացեալ։
9. Ա. օր. է որ խնդրէ ի նր-մանէ։
10. Ա. օր. յաւելու Յովհաննէս։
11. Ա. օր. ցնա երանելին։

չար և պիղծ և փարեցաւ ընդ չարս. և[1] ի լերինս շրջի, և այլ ևս չար միաբանեցանքն գործել դչարիս: Իսկ սուրբն Յոհաննէս եկաց դառնապէս[2] և ասաց. Ով պահապան, որ թողի երիտասարդին. և ասէ. Ածէք ինձ ձի և այր որ ցուցանէ ինձ զկորուսեալն: Եւ իբրև եհաս ի տեղին[3] այլակերպեալ[4] զինքն Յոհաննէս, կալան զնա ընկերքն նորա, և ասաց. Առ ձեզ իսկ եկեալ եմ[5], ածէք զիս առ աւագն ձեր. և ոչ ծանեան զերանելին այլքն: Եւ երիտասարդն վառեալ զինու՝ կայր և մնայր գալստեան[6] Նոցա: Իբրև մերձեցաւ Յովհաննէս, ծանեաւ երիտասարդն և փախեաւ ի նմանէ. և սուրբն Յովհաննէս զհետ մտեալ յամենայն զօրութենէ իւրմէ ունել զնա, և մոռանայր[7] զծերութիւն իւր, աղաղակէր և ասէր. Զի՞ փախչիս որդեակ ի ծերունի հօրէս քումմէ, ողորմեաց ինձ և[8] գթա ի ծերութիւնս իմ: Դարձիր դարձիր որդեակ իմ. դարձիր առ իս[9], և մի՛ յուսահատիր. զի վասն քո եկի այսր. ես տաց վասն քո պատասխանի Քրիստոսի, որդեակ, և թէ մեռանել հասանիցէ՝ ես մեռայց վասն[10] քո որդեակ իմ, որպէս և Քրիստոս մեռաւ վասն իմ[11]: Մի՛ փախիր որդեակ, ասէր[12], որ Տէրն ողորմի քեզ. դարձիր առ Քրիստոս, զի Նա առաքեաց զիս առ քեզ:

Յայնժամ[13] երիտասարդն զաեղի առ, և ի բաց ընկենոյր յինքենէն զզէնսն, և կայր գլխիկոր, և

1. Ա. օր. յաւելու եւ եղեւ նա աւազակապետ, եւ փոխանակ բարւոյ եղեւ նա չար:
2. Ա. օր. չունի դառնապէս:
3. Ա. օր. պակասէր ի բն. եդաք ըստ Ա. օր.:
4. Ա. օր. այլափոխեալ:
5. Ա. օր. եկի, առէք:
6. Ա. օր. չունի գալստեան:
7. Ա. օր. մոռացեալ:
8. Ա. օր. չունի եւ գթա ի ծերութիւնս իմ:
9. Ա. օր. չունի դարձիր առ իս:
10. Ա. օր. քեզ:
11. Ա. օր. մեր:
12. Ա. օր. չունի ասէր, որ Տէրն ողորմի քեզ:
13. Ա. օր. Իսկ:

լայր զաւանապէս և ոչ կարէր հայել ի վեր և խօսել ինչ: Եւ իբրև մօտեցաւ [1] սուրբ առաքեալն Յովհաննէս, անկաւ զպարանոցաւ նորա և համբուրէր զնա. ողջէր և ասէր. Ընդունի Քրիստոս զքեզ ի ձեռն պղջման [2] և խոստովանութեան. մի անյոյս լինիր որդեակ, ասէր [3], որ ողորմի Տէրն քեզ, յորժամ դառնաս [4] և ապաշխարես: Եւ առեալ տարաւ զնա յեկեղեցին և անդադար աղօթս մատուցանէր վասն թողութեան նորա. և հանապազ ծգնէր նովաւ, և ազգի ազգի բանիւք մխիթարէր զնա ի Քրիստոս՝ աւետարանիչն Յովհաննէս [5]: Եւ հաստատեաց զնա ի կարգս ուղղութեան, և ետ դարձեալ յեպիսկոպոսն, և զգուշացոյց զի մի անփոյթ արասցէ զնմանէ :

Զայս եղոյց աստուածաբանն Յովհաննէս [6] օրինակ դարձի և ապաշխարութեան մեղուցելոց, և խնամոց քահանայից և առաջնորդաց ի ձեռն ողորմութեան Աստուծոյ: Եւ ինքն Յովհաննէս եկն անդրէն յԵփեսոս:

1. Ա. օր. մօտ եղեւ:
2. Ա. օր. խոստովանութեան եւ ապաշխարութեան. եւ նա ոչ կարէր խօսել ինչ. այլ միայն լայր եւ կոծէր զանձն եղուկ ասելով: Իսկ սուրբն երաշխաւոր լինէր թողութեան առնուլ նմա ի Քրիստոսէ, ի ձեռն իւրոյ աղօթիցն եւ նորին յուսոյ եւ պնդութեան: Մի անյոյս...
3. Ա. օր. չունի ասէր որ:
4. Ա. օր. դղջաս:
5. Ա. օր. չունի աւետարանիչն Յովհաննէս:
6. Ա. օր. չունի աստուածաբանն Յովհաննէս:

# Ե

## ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

### ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՅՆ ՓԻԼԻՊՊՈՍԻ

### ՈՐ ՎԿԱՅԵԱՑ ՅԵՊԻՓԻՄԷՍ ՔԱՂԱՔԻ

*Մինչդեռ էին սուրբ առաքեալք Փիլիպպոս և Բարթողոմէոս յեպիփիմէս քաղաքի՝ հանդերձ Մարեմաւ, և պատմէին զբանն Տեառն, լուաւ Նիկանորա կին իշխանին, և ելեալ գաղտ յառնէն իւրմէ եկն առ սուրբ առաքեալսն Տեառն. և տեսեալ զնոսա՝ համարձակեցաւ առաջի նոցա և ամենայն հաւատացելոցն, և ասէ. Ես Եբրայեցի եմ և դուստր Եբրայեցւոյ, խօսեցարուք ընդ իս բարբառով հարցն իմոց. քանզի լուայ յառաջագոյն զքարոզութիւն ձեր*

## ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

### ՍՐԲՈՅՆ ՓԻԼԻՊՊՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

### ԵՒ ԱՇԱԿԵՐՏԻՆ ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍԻ

### ԵՒ ՓԻԼԻՊՊՈՍԻ ՔՈՐՆ ՄԱՐԻԱՄՆԻ

*Մինչդեռ էին սուրբ առաքեալքն Փիլիպպոս և Բարթողիմէոս և Մարիամն յԵպափրիմէս քաղաքի և պատմէին զբանն Աստուծոյ, լուաւ Նիկանովրա կին իշխանին, և ելեալ գաղտ յառնէ իւրմէ, եկն առ սուրբ առաքեալսն. և տեսեալ զնոսա համարձակեցաւ առաջի ամենայն հաւատացելոցն, և ասէ. Ես Եբրայեցի եմ դուստր Եբրայեցւոյ, խօսեցարո՛ւք ընդ իս բարբառով հարցն իմոց. քանզի լուայ յառաջագոյն քարոզութեան*

և հաւատացի ի Քրիստոս և բժշկեցայ յախտէն իմմէ: Եւ արդ փառաւորեմ և երկիր պագանեմ բարերարին Աստուծոյ, որ առաքեաց զձեզ ի հեռաւոր երկիրս յայս, վասն ճշմարիտ և պատուական քարին՝ զոր եկուլ մեծ վիշապն. այլ Տէր կենդանի արար՝ ողորմելումս, զճշմարիտ քարինս հաւատոյ ճըշմարիտ մկրտութեամբն, և փրկեաց իւրով գթութեամբն և ելոյծ յիշխանութենէ խաւարի իւրով կատարմամբն. և կոչէ ազատութեամբ յաշխարհն կենդանեաց՝ որ է Տէր և Աստուած:

Եւ մինչդեռ նա զայս խօսէր, եկն եհաս իշխանն արագապէս, և բուռն հարեալ զհանդերձից կնոջ իւրոյ և ասէ. Ով կին դու, ո՞չ հիւանդ թողի զքեզ ի մահիճս քո. ուստի՞ գտեր այդպիսի զօրութիւն, մինչև կարել գալ առ կախարդդ այդոսիկ. զիա՞րդ բժշկեցար վաղվաղակի ի հարելոյ թունաւոր օձին. այժմ ասա ինձ զբժիշկն քո և զանուն նորա, ապա թէ ոչ ասասցես՝ բազում խոշտանգանօք տանջեցից զքեզ և ոչ ողորմեցայց քեզ ամենևին: Եւ պատասխանի Նիկանորա կին իշխանին և ասէ. Ով բռնաւոր, ի բաց կաց ի բռնութենէ քումմէ և իմացիր զմեծամեծս Աստուծոյ, և տես զչար զգործս քո և թող զցաւօք լի զկեանս քո, և ի բաց արա

ձերում և բժշկեցայ յախտէն իմմէ: Եւ արդ փառաւորեմ և երկիր պագանեմ բարերարին Աստուծոյ ձերոյ, որ առաքեաց զձեզ ի հեռաւոր աշխարհս յայս:

Եւ մինչդեռ նա զայն խօսէր, եկն եհաս իշխանն մեծաւ փութով, և բուռն հարեալ զհանդերձից կնոջ իւրոյ, ասէ. Ով կին դու, ո՞չ հիւանդ թողի զքեզ ի մահիճս քո, ուստի՞ գտար զայդպիսի զօրութիւն, մինչև կարող լինել քեզ գալ առ կախարդդ այդոսիկ. զիա՞րդ բժշկեցար ի հարուածոց թունաւոր օձին. այժմ եթէ ոչ ասիցես ինձ զբժիշկն քո, թէ զի՞նչ է անուն նորա, տանջեցից զքեզ բազում և մեծամեծ տանջանօք, և ոչ ողորմեցայց քեզ ամենևին: Եւ Նիկանովրայ պատասխանի տուեալ ասէ. Ո՛վ բռնաւոր, ի բաց դիր ի քէն զբռնաւորութիւն քո և մոռացիր զչար գործս քո, և թո՛ղ զլի ցաւօք կեանս քո, զի անցանէ իբրև զստուեր, խնդրեա զմնացականն և մոռացիր զանցաւորս. ի բաց արա ի քէն զվայրենի բարս, այսինքն զգործս պղծութեան, որ է ան-

զառամանելեայ և զնոսին ուրախութիւնս, զի անցանէ որպէս զստուեր երազոյ. խնդրեա զմնացականն և մնացիր զանցաւորս, զորս համարեսջիր զգործ պղծութեան, ցածո՛ զփայլենի զբարդ և լոյծ զԹշնամութիւնս, չիջո՛ զապանութիւն և զցանկութիւն վիշապին և հրաժարեա՛ ի խառնակութեանց որ է անդաստան մահու և զուր խաւարին. կործանեա զկրճիմն ապականութեան և առացիր զկեանս պարկեշտս և անաղտս, զի լիցուք հանապազ ի սրբութիւն. զի այդպիսի ախտ ապականութեան՝ նորոգէ զապականութիւն հոգւոց և մարմնոց. նա է իբր զեղեալ ի վերայ երեւելի արարածոց՝ որ ծնանի զմեղս. նա է ամենայն չարեաց գործարան որ զհոգիս շլացուցանէ և զմարմինն ապականէ ի կորըստեան վիհն մահու. նա է ախորժելի զինուց; անմաքուր ախտիւք բերեալ և շարժեալ պէս պէս վատշտութեամբ. նա է սկիզբն խառնութեան արարչին առ արարածս, զի փառս ցանկութեան ընկալան զանէծս և զպատուհաս ազգ մարդկան, յամենեցունց Տեառնէն :

Եւ իբրև լուաւ զայս ամենայն իշխանն, բուռն հարեալ զհերաց կնոջն, քարշէր ընթադրելով և ասէր. Լաւ լիցի ինձ սպանանել զքեզ սուսերաւ իմով,

դաստան մահու և ցանկ խաւարի. կործանեա զկրճիմն ապականութեան, առացիր քեզ կեանս պարկեշտս և անաղտս, զի լիցուք հանապազ ի սրբութեան, զի ախտք ապականութիւն են հոգւոց և մարմնոց:

Եւ իբրև լուաւ զայս բռնաւորն, բուռն հարեալ զհերաց նորա, քարշէր զնա ընթադրելով և ասէր. Յայժ լաւ է ինձ սպանանել զքեզ սուսերաւ իմով, քան եթէ ի ձեռն քո նախատ լինել ի մարդկանէ. քանզի տեսանեմ զքեզ ի մոլորութեան եղեալ՝ զհետ արանցդ այդոցիկ, որք հրապուրեցին զքեզ ի բաց կալ յինէն, և ես սպանանեմ չարապէս զմոլորեցուցիչսն քո: Եւ շրջեալ յետս բարկութեամբ, ասէ ցդահիճսն. Հանէք արտաքս զխաբեբայսդ զայդոսիկ: Եւ դահճացն ընթացեալ ի տունն Սոփեայ, կալան զՓիլիպպոս և զԲարթողիմէոս և զՄարիամն, և հանեալ զնոսա արտաքս՝ քարշէին: Եւ իբրև եւես զնոսա բռնաւորն, սկսաւ կրճտել զատամունս իւր և

քան եթէ ի ձեռն քո նախատ լինել ի մարդկանէ. զի տեսանեմ զքեզ ի մոլորութեան եղեալ, և զկնի օտար արանցդ այդոցիկ հետևեալ, որք հրապուրեն զքեզ ի բաց կալ յինէն, որպէս խոտեցարդ. և զգոստ զատն անձկանօք բառնամ յերկրէ մաշուածս՝ որպէս զմոլորեցուցիչս քո: Եւ շրջեալ յետս բարկութեամբ, ասէ ցդահիճսն. Հանէք արտաքս զխարեբայսդ զայդոսիկ ի տանէ Աստուծոյ, և տանջեցէք որպէս մահապարտս, զի հրապուրեցին զկանայս մեր և զկուսս, ոչ բնակել ընդ առնս և ոչ լինել արանց. և ասեն զինքեանս աստուածապաշտս և սուրբս, և սուրբ արութիւն ուսուցանեն մեզ: Եւ հրամայեաց փոկովք կապել և քարշել տանել ի դուրս մեհենին ընդ հրապարակն. և արարին որպէս հրամայեաց նոցա իշխանն: Եւ բազումք ժողովեցան տեսանել զայն ամենայն, և գրեթէ ամենայն քաղաքն արք և կանայք, ծերք և տղայք, երիտասարդք և կուսանք. և նոքա խօսէին զբանն Աստուծոյ ամենայն համարձակութեամբ: Եւ փեսայ և հարսն որ դեռ ևս յառագաստի նստէին, յայն որ ի սուգ նստէր, և լսէին սրբոյն, և ծանուցանէին զյիմարութիւն մոլորութեան նոցա՝ որ պաշտէին զիժն աստուածս և զօձն նմանապէս. և ամենք ի նոցանէ հաւատացին և ի բաց կացին

ասէ. Քարշեցէք զկախարդդ զայդոսիկ՝ որք մոլորեցուցանեն զբազում կանայս և զկուսս և ասեն, եթէ աստուածապաշտք եմք: Եւ հրամայեաց կապել զնոսա փոկովք և քարշել ի դրանէ քաղաքին ընդ հրապարակն ամենայն՝ մինչև ի դուռն մեհենին: Եւ բազումք ժողովեցան ի տեղին յայն, և գրեթէ ամենեքին ոչ ոք մնաց ի տան իւրում, ի ծերոց մինչև ցատընդիացն, և փեսայ և հարսն որ դեռ ևս ի հարսանիս էին, մինչև ցայն՝ որ ի սուգ նստէր. և ամենք ի բազմութենէն հաւատացին ի բանս առաքելոցն և ի բաց կացին ի սեղանոյ օձիցն՝ զոր պաշտէին քուրմքն:

Եւ քուրմքն իբրև տեսին զառաքեալսն աղաղակեցին և ասեն. Բարձէք զմոլորեցուցիչսդ. քանզի ամենեքեան ժողովեցան ի միասին որք էին ի գաւառին յայնմ և եղեն բազմութիւն յոյժ, և պաշտէին նոքա ամենեքեան զիժն: Եւ միաբան մեծաձայնիւ ասեն ցիշխանն. խնդրեա զվրէժ մեր յօտար արանցս յայս-

ի պաշտաման է իժին և օձին, նաև զայն ևս տեսանէին որ նոքօք օձք սատակէին և ամենայն թունաւորք, և ախտաժետաց բժշկութիւնք լինէին բանիւ միայն։

Իսկ քուրմքն զաղաղակ բարձին առ իշխանն և ասեն. Բարձ յերկրէ զմոլորեցուցիչսն, և խնդրեա զվրէժ մեր յօտար արանցդ յայդցանէ, որք մոլորեցուցին զմեր ժողովուրդս, արհամարհելով զպաշտօնս մեր. զի յորմէհետէ մտին այսր՝ լցաւ քաղաքս խռովութեամբ. սպանին զօձս և զպաշտօն իժիցն խափանեցին, կործանաւ սպասաւորութիւն մեր, և արգելաւ նուէրք ժողովրդոցս. և ոչ գտանեմք գինի իժին զի արբցէ և հանգիցէ ի մաշիճս իւր. սպանին նոքա զօձսն զերկոսեան՝ որք պահէին զքաղաքս մեր յօտար թշնամեաց. և ոչ ինչ վնասեալք ի նոցանէ և ոչ յայլոց թունաւոր իժից։ Եւ իշխանն առաւել տրամեալ ի վերայ ասացելոցն, մանաւանդ զոր ունէր վասն կնոջ իւրոյ Նիկանորայ։

Եւ հրամայեաց մերկացուցանել զՓիլիպպոս և զԲարթողոմէոս, և զննել և խուզել թերևս գտանիցեն ինչ ի նոսա կախարդիչս, որովք զայս առնէին. և ոչ ինչ գտին որպէս կարծէին մոլարքն։ Եւ հրամայեաց ծակել զպճղունս Փիլիպպոսի և երկաթի օղս անցուցանել և կախել զգլխիվայր զծառոյն որ

ցանէ՝ յանխրատիցդ՝ որք մոլորեցուցին զամբոխդ. քանզի յորմէհետէ են այսր, լցաւ քաղաքս անպիտանօք, սպանին և զօձս՝ զորդիս իժին, որ էին աստուածք մեր, քակեցին և զմեհեանս մեր, կործանաւ սպասաւորութիւնն մեր, աւերեցաւ սեղանն մեր. ոչ ևս գտանեմք գինի իժին, զի արբեալ հանգիցէ ի մաշիճս իւր։ Բազում հարուածք չոգան առ նոսա փախուցեալք յարանց իւրեանց, վասն որոյ աղաչեմք՝ խնդրեա զվրէժ մեր ի նոցանէ. ոչ միայն զայդ, այլ և կախարդութեամբ իւրեանց չվնասեալք յօձիցն որ յագարակսն, և յերկուց օձիցն որք պահէին զքաղաքս մեր յօտար թշնամեաց, այլ և սպանին ևս զնոսա։ Զայս ամենայն և ևս քան զայս ասացին քուրմքն առաջի բռնաւորին. և նորա լուեալ բորբոքեցաւ սրտմտութեամբ մեծաւ, մանաւանդ վասն Նիկանովրայ կնոջ իւրոյ, զի հաւատաց ի բանս նոցա։

Յայնժամ հրամայեաց մերկացուցանել զՓիլիպպոս և զԲարթողիմէոս և զՄարիամնի, և տեսանել թերևս գո՞յ ինչ ի նոսա

կայր առաջի դրաց մեհենին և ցից վարեալ յորմ մեհենին, և կապեցին զոտս և զձեռս, կախեցին և զԲարթողոմէոս գլխիվայր, վասն զի ժողովքն տեսցեն զվտանգաւոր մահ սրբոց առաքելոցն: Իսկ զՄարիամ մեկուսի առեալ քարշէին՝ մերկացուցանել կամելով, զի գիտասցեն ամենեքեան եթէ կին մարդ է և որպէս այր շրջի ընդ արս: Եւ մերկացուցին զՄարիամ զի ստուգեսցեն վասն նորա ժողովքն ամենայն. և նոյնժամայն եղև Մարիամ տապանակ ապակեղէն, լի լուսով և հրով առաջի ամենեցուն, և զաշի հարեալ ոչ կարէին հայել ի նա. թողին զնա և փախեան ի տեղւոջէն՝ մեծաւ երկիւղիւ և դողութեամբ:

Խօսել սկսաւ Փիլիպպոս եբրայեցւոց բարբառովն և ասէ ցԲարթողոմէոս. Ով սքանչելի երկայնմըտութեանն Աստուծոյ, զի և ի Մարիամ կամեցան ձեռն արկանել, և զտունն Սատանայ՝ որ զմեզ ընկալաւ, այրել կամեցեալք: Ո՞ւր է Յովհաննէս յաւուր վշտի մերում. քանզի ահա լուծանիմք ի մարմնոյ աստի, և ոչ ոք ամփոփեսցէ զմեզ ըստ օրինի հաւատացելոց, և արասցէ աղօթս վասն մեր առ Տէր. և արդ արասցուք աղօթս, խնդրելով ի Տեառնէ իջանել հուր և այրել զանաստուածս քաղաքիս այսորիկ, զմարդիկ զապստամբս յԱստուծոյ, զի կորիցեն ամենեքեան որք գործեն զանօրէնութիւնս:

կախարդինս. և մերկացուցին զահիճքն նախ զՓիլիպպոս և զԲարթողիմէոս, իսկ զՄարիամնի մեկուսի առեալ քարշէին և ասէին. Մերկացուք զմարմին դորա զի գիտասցեն ամենեքեան թէ կին մարդ է և շրջի ընդ նոսա իբրև զայր: Եւ հրամայեաց իշխանն ժողովել զամենեսեան զարս և զկանայս զի տեսցեն զկինն որ յառն կերպարանս շրջի ընդ նոսա: Եւ հրամայեաց ունել զՓիլիպպոս և ծակել զպճղունս նորա և կախել զնա ընդ ծառոյն՝ որ էր առաջի դրան մեհենին՝ մերկ: Եւ իբրև մերկացուցին զՄարիամնի, հայեցան զի տեսցեն զմերկութիւն նորա, և նա փոխեցաւ և եղև տապանակ ապակեղէն, լի լուսով և հրով առաջի նոցա, և ոչ կարէին հայել ի նա ամենեքին, և փախեան ամենեքեան յերեսաց նորա:

Խօսել սկսաւ Փիլիպպոս ընդ Բարթողոմէոս եբրայեցի լեզուաւ և ասէ. Ո՞ւր է Յոհաննէս այսօր յաւուր վշտի մերում. քանզի ահա լուծանիմք ի մարմնոյ մերոց, և ոչ ոք է որ աղօթս ա-

Եւ մինչդեռ Փիլիպպոս խօսէր, Յովհաննէս եմուտ ի քաղաքն, և եկեալ ի ժողովն՝ հարցանէր զնոսա վասն այնորիկ իբրև զմի ի քաղաքացեացն. և ասեն ցնա արք ամբոխին. Զօրեարս զայսոսիկ զորս տեսանես կախեալ, մտին ի քաղաքս մեր և քարոզեն այլ իմն աստուածս և օրէնս, և վրդովեցուցին զքաղաքս ամենայն, զկանայս յարանց մեկնելով, զարս համոզելով, և զկոյս ուսուցանեն մնալ առանց արանց. և հարսունք թողեալ զփեսայս յառագաստի և զհետ նոցա ուսմանն գնացին, արհամարհելով զզարդս ոսկւոյ և արծաթոյ և զքարանց պատուականաց և զպատմուճանս հանդերձից և զհոտ իւղոց և խնկոց անուշից. և ունին կախարդի իմն, որ բանիւ զօձս սպանանեն ի ձեռն աստուծոյն իւրեանց, զոր չէք մեք լուեալ. և վասն կալեալ ի տանն Ստաքեայ կուրի, որ բժշկեցաւ թքով կնոջն՝ զոր ունին ընդ ինքեանս յանուն աստուծոյն իւրեանց զոր կամեցաք ունել զկինն և մերկացուցանել և տեսանել զմերկութիւն նորա. և սքանչելի իմն փոփոխեալ, եղև իբրև զլոյս հրոյ յապակեղէն աման, որ թուի թէ նմա ամենայն զօրութիւնքն լինին. որք յորժամ տեսին զզարմանալին, փախեան յերեսաց նորա ամենեքեան. բայց արքն կախեալ

բացցէ ի վերայ մեր. քանզի և ի Մարիամ ձեռնամուխ եղեն և ի տունն Ստաքեայ հուր ընկեցին՝ որ ընկալաւն զմեզ. և այժմ եկ խնդրեացուք իջանել հուր և այրել զդոսա:

Եւ մինչդեռ Փիլիպպոսասէր զայս, Յոհաննէս եմուտ ի քաղաքն, և շրջէր որպէս զմի ի քաղաքացեացն, և տեսեալ զամբոխն՝ հարցանէր ցնոսա և ասէր. Զի՞նչ է որ եղեն, և ո՞վ են արքն, և վասն է՞ր իրեք խոշտանգին: Եւ ասեն ցնա. Արքն այնոքիկ մտին ի քաղաքս մեր և խռովեցուցանեն զքաղաքս վասն կանանց և դստերաց իւրեանց. քանզի բազում կանայք մեկնեցան յարանց իւրեանց, և բազում կոյսք մնացին առանց արանց. և հարսունք թողին զփեսայս և ընթացան առ նոսա. զիւղս անուշունս և զխունկս ցանկալիս ընկեցին յերեսս մարց իւրեանց, փշրեցին զանօթս իւղեփեցացն, փակեցին զդրունս մեհենին. և ի վերայ այսր ամենայնի կախարդութիւն իմն ի ձեռս ունին, և սպանանեն զօձս՝ որ ի քաղաքիս մերում, ի ձեռն

կան զլխիվայր, եկ և տես։ Եւ եկն առ նոսա Յովհաննէս։

Իսկ Փիլիպպոսի տեսեալ ի կախաղանին զՅովհաննէս, առէ ցԲարթողոմէոս. Ահա մեծ քահանայն և սիրեցեալն ի Քրիստոսէ Յովհաննէս եկն ի մխիթարել զմեզ որպէս յուսացաք ի Տէր, զի տարեսցէ առ մեզ և օժանդակեսցէ մեզ ի նեղութեանս յորում կամքս։ Եւ Յովհաննէս իբրև ետես զՓիլիպպոս և զԲարթողոմէոս կախեալ զլխիվայր, առէ ցնոսա. Ով սքանչելի խորհուրդ այնորիկ՝ որ ծածկեալն է, որ կախեցաւն ի վեր զլխոյն յերկինս, և յերկիր ի խոնարհ, բաժանելով ի շրջանակս օդոց սքանչելապէս ըստ անհասութեան մարմնաւորաց։ Ասէ և ցմարդիկն. Ով արք, որքան է անօրէնութիւնդ յորում էքդ, որքան է մոլորութիւնդ ձեր և յիմարութիւն, որպիսի արիւնարբու և թունաւոր օձն պաշտէք և խեժս և քարինս, զի մոլորեցոյց զձեզ կամակոր վիշապն և օձն դառնաշունչ՝ որ յամենայն ժամ խոցոտէ զապստամբս և զանծանօթս յԱստուծոյ, և հեղու զթոյնս իւր ժանտս, որք ոչ զգօնանան ի տուէ և ի գիշերի. հինգաշարժ արբեցութեամբքն՝ հինգ զգայութեանցս մածանել զմահ, ճարակեալ զթոյնն երիւք օրինակօք, զբովանդակ անձն մարդոյն, զհոգի

ստար անուան զոր չէք երբեք մեր լուեալ. և վասն կալեալ նոցա ի տանն Ստաքեայ կուրի՝ զոր բժշկեցին թքով բերանոյ կնոջ միոյ որ շրջի ընդ նոսա. կարծեմք թէ նա է որ ունի զամենայն կախարդութիւնն. ահա տես և դու զիրադ զայդ և եթէ ո՞չ խափեցիս։ Եւ դարձեալ առեն ցնա վասն խժին, եթէ նա է աստուած մեր զոր պաշտէ ամենայն քաղաքս, ահա և քուրմք մեհենին գրգռեալք ի նոցանէ, բարկացան նոցա, երկուցեալք՝ թէ գուցէ և նոքա մեռանիցին ի նոցանէ, քանզի թշնամիք են օձից։ Ասէ ցնոսա Յոհաննէս, եկայք ցուցէք ինձ զնոսա. և ածին զնա ի դուռն մեհենին, և էր անդ բազմութիւն յոյժ, և իշխանն և քուրմքն։

Եւ Փիլիպպոսի տեսեալ զՅոհաննէս զի գայր, մինչդեռ կայր ի կախաղանին, և առէ ցԲարթողոմէոս. Ով եղբայր Բարթողիմէա, ահա մեծ քահանայն և սիրեցեալն Քրիստոսի Յոհաննէս եկն զմեզ մխիթարել։ Եւ Յոհաննու տեսեալ զնոսա այնպէս կա-

և զմարմին կորուսանելով անհաւատութեամբ, անսրբութեամբ, ամենաչար նենգութեամբ, որ անիծու յապստամբելն իւրում՝ լինելով չար. և անիծեալք լինին որսացեալքն ի նմանէ ի նորա կամս, և ոչ մի ինչ կենդանութիւն և կամ խաղաղութիւն ունի յինքեան. քանզի ամենայն շտեմարանք լանջաց նորա լի են չարութեամբք, սրտմտութեամբք, բարկութեամբ, և ծուխ և խաւար և հուր է յամենայն անդամս նորա. և գալարուն է և ծուռ՝ սողոսկելով ի կորուստ մարդկան մոլորելոց ի ճշմարտութեան ճանապարհէն: Եւ արդ է՞ր մոլորիք, ով արք անհանճարք, պաշտել զթունաւորս, և ոչ լուարուք քարոզութեանն արանցդ՝ որ կախեալ կան զլխիվայր առանց իրիք յանցանաց, որք զձեզ ի մահուանէ ի կեանս ձգեն: Եւ ես զնոյն աւետարանեմ ձեզ. դարձարուք ի մոլորութենէդ ի ճշմարտութիւն աւետարանին Քրիստոսի, և մի՛ սիրէք զմահ և ատեայք զճշմարտութիւն: Իբրև լուան քուրմքն զասացեալն ի Յովհաննէ, կամեցան ունել զնա և ըստ նմին օրինակի տանջել. և ոչ կարացին ունել զնա, զի անկաւ զնոքօք անտեսութիւն:

Մինչ ահա այս այսպէս, եկն Մարիամ ի տեղին ուր էր Յովհաննէս. և խօսէին ընդ միմեանս վասն

խեալս առէ ցնոսա: Ով խորհուրդ այնորիկ որ կախեցաւ ի վերայ գլխոյն յերկինս ի վեր և յերկիր ի խոնարհ, բաժանելով զշրջանակս օդոց սքանչելապէս, ըստ անհասութեան մարմնաւորացս: Ասաց և ցամբոխն. Ով մարդիկ, ո՞րքան է անօրէնութիւնդ ձեր յորում էքդ, ո՞րքան մոլորութիւնդ ձեր և յիմարութիւնդ. որպիսի՛ արիւնարբուս և թունաւորս և իժս և քարբս պաշտէք աստուածս. քանզի մոլորեցոյց զձեզ կամակոր վիշապն և օձն դառնաշունչ, որ յամենայն ժամ խոցոտէ զանծանօթսն Աստուծոյ, և ընկէց ի ձեզ զմեռեալ թարախն, զոր մղեցոյց յիւր մեռեալ բունոյն. կուրացոյց զձեզ երիւք օրինակօք. այսինքն՝ զհոգի և զմարմին և զշունչ, և լցարուք կուրութեամբ. օձն թունաւոր որ անիծեալն յապստամբելն իւրում լեալ չար, և վասն այնորիկ գալարուն է և ծուռ, և ոչ մի ինչ կեանս ունի յինքեան. քանզի ամենայն տեղի ի գլխոյ և ի լանջաց նորա՝ լի է դառնութեամբ չարեօք, սրտմտութիւն և բարկութիւն և

ամենայն անցիցն անցելոց, և ամբոխն ոչ տեսանէր զնոսա: Ապա կամեցան քուրմքն քամել զարիւնս որոցն, որ էին կախեալ գլխիվայր, զի արբցէ իժն: Յայնժամ ասէ Փիլիպպոս ցՅովհաննէս. Ով եղբայր, ո՞ւր է Տէրն մեր Յիսուս Քրիստոս փրկիչն, որ վասն մեր պատուհասեցաւ յանօրինացն. զարթուսցէ զզօրութիւն իւր, և եկեսցէ կեցուցանել զմեզ: Իսկ Մարիամ և Յովհաննէս սկսան մխիթարութիւն մատուցանել Փիլիպպոսի և Բարթողոմէոսի, և յիշեցուցանել զՔրիստոսի չարչարանսն և զբևեռելն ի խաչին և զկամաւոր մահն և զխնդրելն ի Հօրէ զթողութիւն խաչահանուացն. որպէս յառաջ քան զխաչն, ասէ, յորժամ երթայք յԵրուսաղէմ պատրաստել զճանապարհացն Տեառն, և ոչ ընկալան զմեզ ի քաղաքսն, խնդրեցաք հուր իջանել ի Տեառնէ յերկնից և կորուսանել զնոսա, և սաստեաց մեզ Տէր, ասելով. Ոչ գիտէք որոյ հոգւոյ էք դուք. ի կեցուցանել եկի և ոչ ի կորուսանել: Եւ արդ երկայնամիտ լերուք և համբերութեամբ ձերով ստասջիք զոգիս ձեր:

Եւ Փիլիպպոս խնդրէր վրէժխնդրութիւն ի Տեառնէ անօրինացն որք չարչարեցին զնոսա, ասելով. Կորիցեն մեղաւորք յերկրէ, և ամպարիշտք մի ևս գտցին ի քաղաքիս, և հաւատացեալք օրհնես-

խաւար է յանդամս նորա: Եւ արդ՝ ընդէ՞ր խոշտանգէք զարդ զայդոսիկ, զի սատցին ձեզ զճշմարիտն: Եւ նոցա լսեալ զբանս զայսոսիկ ի Յոհաննէ, արկին ի նա ձեռս և ասեն. Մեք կարծէաք եթէ քաղաքացի մեր իցես. և այժմ խօսք քո յայտ արարին զքեզ թէ կցորդ ես նոցա, և յոր մահ նոքա երթան՝ և դու երթաս: Եւ ասեն քուրմքն. Քամեսցուք զարիւն նոցա, և արկցուք իժին զի արբցէ:

Եւ մինչդեռ նոքա զայս խորհէին, ահա Մարիամնի եկն ի տեղին ուր էր Յոհաննէս. և քուրմքն ձգեցին զձեռս իւրեանց զի կալցեն զՅոհաննէս և ոչ կարացին, զի արկաւ զնոքօք անտեսութիւն: Յայնժամ խօսեցաւ Փիլիպպոս ընդ Յոհաննու և ասէ. Ո՞ւր է Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ վասն մեր պատուհասեցաւ. զարթուսցէ զզօրութիւն իւր և եկեալ կեցուսցէ զմեզ: Իսկ Մարիամնի և Յոհաննէս մխիթարէին զՓիլիպպոս զի երկայնամիտ լինիցի:

ցեն զՏէր Աստուած արարիչն իւրեանց մեօք հանդերձ: Եւ ոչ հաւանեցաւ և ի Յովհաննու առաքելոյն: Յայնժամ գնացին Մարիամ և Յովհաննէս տանց ուրուք տեսանելոյ:

Իսկ Փիլիպպոս եբրայեցերէն սկսաւ խօսել. Հայր ամենակալ, ի քո աջաւոր անուանէդ զօրան երկինք և երկիր և որ ի նոսա արարածք իցեն. որ է կարող զօրութիւնդ քո և ճշմարիտ յամենայնի. պատուար արդար և բառ արժանեաց հաւատացելոց. և սուրբ անունդ քո գնայ ի զօրութենէ ի զօրութիւն և փառաց ի փառս, և օրհնեալ ես յաւիտեանս ամէն: Բանիւ քո երկինք և երկիր հաստատեցան, և հոգւով բերանոյ քո ամենայն զօրութիւնք նոցա: Հրեշտակք և հրեշտակապետք, աթոռք և զօրութիւնք, տէրութիւնք և պետութիւնք, սերովբէք և քերովբէք և ամենայն զինուորութիւնք անմարմնոց զամենասուրբ Երրորդութիւնդ օրհնեն և փառաւորեն ամենեքեան անլռելի ձայնիւ: Դու Տէր զօրութեանց, և ի մարդկանէ հողեղինացս (հանեցար) ընդունել զօրհնութիւնս: Եւ յամենայն արարածոց յերկնաւորաց և յերկրաւորաց օրհնիս անճառելի օրհնութեամբ, որ յամենայնի բարձրացեալդ ես և փառաւորեալ յամենայն յարարածոց, և միշտ իր-

Եւ Փիլիպպոս ոչ հաւանէր բանիցն Մարիամայ և Յոհաննու, այլ ապաւինայր անհաւատիցն որք տանջէին զնա, և ասէր. Ի բաց կացէք յինէն զի ոչ ես անսամ, վասն զի կախեցին զիս գլխիվայր, և զԲարթողիմէոս կապեալ պրկեցին, նաև ի Մարիամի ձեռն արկեալ քարշեցին զնա մերկ, և անարժան բանս տային զնմանէ. ահա և դու նոյնպէս յանդիմանեցեր զնոսա բազում բանիւք և ոչ անսացին: Յայնժամ Յոհաննէս ել ի քաղաքէն և գնաց տանց ուրուք տեսանելոյ:

Եւ Փիլիպպոս սկսաւ ասել այսպէս. Հայր իմ, հայր մեծութեան, յորոյ անուանէ երկնչին ամենայն յաւիտեանք, որ ես զօրութիւն յամենայնի. ճշմարիտ դատաւոր, օրհնեալդ յաւիտեան, քո հրամանաւդ հաստատեցան երկինք և դողան ի քէն իշխանութիւնք և պետութիւնք. որ թագաւորդ ես՝ պատուէաք, որոյ անուանդ եհաս առ զազանս անապատի և դադարեցին վասն քո, լուր մեզ յառաջ քան զխնդրելն ի քէն և հայեաց ի մեզ յառաջ

նմանս տեսչութեամբ զամենայն արարածս քո, և հեղուս ողորմութեամբ քո զգթութիւնս քո յազգս մարդկան, որք գտանան ի կամակոր մտաց՝ ի հնազանդութիւն աւետարանին, և զապստամբս բարկութեամբ սպառես: Եւ այժմ ցո՛յց զահաւոր զօրութիւնդ քո անաստուած բնակչաց քաղաքիս այսորիկ, և ընկլո՛ զսոսա շարժմամբ ի խորս երկրի, որպէս զԴաթան և զԱբիրոն՝ որք հակառակ կացին Մովսէսի, այնպէս և սոքա հակառակ կացին ճշմարտութեանն, և կոչեն զանուն քո սուրբ ի վերայ օձից և իժից, և զմեզ՝ որք զքեզ Աստուած աւետարանեմք, տանջեն յանխնայ:

Եւ անդէն վաղվաղակի լինէր շարժումն սաստիկ յոյժ, և պատառեցաւ երկիրն և եկուլ զիժն և զքուրմն և զիշխանն և զամբոխն անաստուածից. և ապրեալք լինէին ամենայն հաւատացեալքն և տունն Սատքեայ և կին իշխանին Նիկանորայ երրայեցի և կանայք հաւատացեալք մեկուսացեալք յարանց քսան և չորք, և քառասուն կոյսք որք ոչ գիտէին զայր, որք լուացեալք էին ջրով մկրտութեամբ ի սուրբ առաքելոյն: Եւ Փիլիպպոս և Բարթողոմէոս նոյնպէս կային ի կախաղանին և մնային տեսչութեանն Աստուծոյ:

քան զգտանալն առ քեզ, որ գիտես զխորհուրդս մեր, որ յամենայնից ես կատարեալ միտք. որ առաւել բարձրացեալդ ես փառօք, որ առեր զմեզ քեզէն՝ ամենեւին լոյս, որով լի են ամենայն տոհմք, որ Տէրդ ես տերանց, որ քեզէն արկանես առաջի զամենայն զգթութիւնս քո անչափս: Բացցէ զբերան իւր ցանկ յաւիտենիս որ է խորխորատ, և կորուսցէ զանաստուածս զայսոսիկ, որք ոչ կամեցան ընդունել զբանն ճշմարտութեան:

Եւ զայս ասացեալ, վաղվաղակի պատառեցաւ երկիրն ամենայն յորում նստէր իշխանն, և ընկղմեցան իշխանն և իժն և ամբոխն և քուրմքն, և մնաց տունն Սատքեայ, և Նիկանովրա կին իշխանին, և կանայք քսան և չորք որք մեկնեալ էին յարանց իւրեանց, և կոյսք քառասուն որք ոչ գիտէին զայր, նոքա միայն ոչ իջին ի խորսն, և եղեն շարժմունք մեծամեծք և ահագինք.

Եւ երեւեալ Փրկչին, ասէ ցՓիլիպպոս. Ո՞վ ոք արկանէ ձեռն զմահճով և հայեսցի յետս, եթէ ուղղեալ իցէ ի նա ակօսն, որ լուծանէ զխոտ երկիրն. և կամ ո՞վ է որ սերմանէ յօտար երկիր, և զիւրն թողացուցանէ փշաբեր մեղկութեամբ. ո՞վ է որ այլոց լոյս ծագէ ի խաւարչտին տեղւոջ, և ինքն ի խաւարի մնայ և ի ստուերս մահու. կամ ո՞վ է որ արձակեալ քաջութեամբ Տեառն իւրոյ, և ինքն ի կապանս մնայ որպէս մահապարտ. ո՞վ ոք քարոզէ զխաղաղութիւն և զհաշտութիւն թողութեամբ, և ինքն նոյնպէս կայ մնայ. և կամ ո՞վ ոք է որ ի պատերազմի յորդորէ զզօրս, և համբերութիւն առձայնէ, և ինքն ոչ ժուժկալէ. ո՞վ ոք է որ զայլս ուսուցանէ անոխակալ և երկայնամիտ լինել, և ինքն այնպէս անպիտան մնայ. կամ ո՞վ ոք է որ յիւր տեառնէն իւրոց պարտուցն թողութիւն խնդրէ, և ընկերաց պարտուցն զպատուհաս. ո՞վ ոք ծառայ ոչ ելից զպաշտաւորութիւն տեառն իւրոյ, և վարձուց ակն ունի ի տեառնէն. կամ ո՞վ ոք ընթանայ ի ստադինն, և ոչ առնու զբրաբիոնն. ո՞վ ոք ցանկայ արքայութեանն, և ոչ ըստ օրինին մարտիցէ. կամ ո՞վ ոք բաղձայ պսակացն, և ոչ օրինօք նահատակեսցի առ հանդէսն. ահա մերձ է արքայութիւնն և ուրա-

Եւ երեւեալ Փրկիչն, ասէ ցՓիլիպպոս. Ո՞վ է որ եդ զձեռն ի վերայ արօրոյ և դարձաւ յետս, միթէ ուղի՞ղ եղև ակօսն. կամ ո՞վ է որ տայ զճրագ իւր այլում և ինքն ի խաւարի մնայ. և կամ ո՞վ է որ բնակէ յայլս և զիւր բնակութիւնն թողու օտարաց. և կամ ո՞վ է որ դնէ զհանդերձս իւր և ինքն երթայ մերկ յաւուրս ձմերայնոյ. ո՞վ ոչ ուրախ լինի յուրախութիւն ատելեաց իւրոց, զի վարձք իւր բազում են յերկինս. և կամ ո՞ր զինուոր երթեալ ի պատերազմ անզէն և եւ բարուոքապէս. կամ ո՞ր ծառայ ելից զպաշտաւորութիւն տեառն իւրոյ և ոչ կոչեցաւ ի նըմանէ յընթրիսն, և կամ ո՞վ ընթանայ ի ստադին և ոչ առնու զբրաբիոնն. ո՞վ յառաջէ լուանայ զհանդերձս իւր և ոչ զգենու: Ով Փիլիպպէ հարսանիքն պատրաստ են և երանի որ գտանի անդ սուրբ և պայծառ հանդերձիւք: Քանզի նա է որ առնու զպսակն յաղթութեան ի գլուխ իւր. ահա զընթրիսն կազմեն, այլ երանելի է կոչեցեալն և պատրաստեալն ամենայնիւ, ի գալն

խութիւնն անապատ. երանի որ գտանիցին անդ սուրբ և ազատ յամենայն չարութենէ, զի առնուցուն զպսակն լուսոյ շնորհաց ի գլուխս իւրեանց, և փայլեսցեն զանանց կեանսն՝ ուր ոչ գոն ցաւք և հեծութիւնք և տառապանք:

Զայս ամենայն լուաւ Փիլիպպոս ի Տեառնէ, և ասէ ցՏէր. Տէր, ո՞չ հրամայես անաստուածիցն կործանել, որք ոչ կամեցան զքեզ թագաւորել ի վերայ իւրեանց. զի քարոզեցաւ սուրբ անուն քո ի նոսա, և նոքա ոչ լուան. թոյլ տուր կոտորել զդոսա, զի բարձրասցի և բարեբանեսցի զօրութիւն աստուածութեանդ քո, զի խստացուցին զսիրտս իւրեանց չերկնչել ի քէն, յորմէ դողան արարածք ամենայն՝ որ ինչ յերկինս ի վեր և որ ինչ յերկիր ի խոնարհ. և զեւք տարփին ի քումմէ զօրութենէդ, և սոքա նանրացան ի խորհուրդս իւրեանց և ոչ կամեցան դառնալ առ քեզ. խրատեսցես զսոսա բարկութեամբ մահու, զի մնացեալքն երկիցեն ի յահեղ փառաց քոց Տէր:

Յայնժամ ասէ ցնա Տէր. Վասն զի թողեր զպատուիրանս իմ կալ հակառակ չարի, մնասցես միայն ի կախաղանիդ զքառասուն օր՝ ոչ եղեալ ի տեղւոջ հանգստեան, փոխանակ զի ոչ լուար. և

առ այն որ կոչեացն զնա. շատ են հունձք ագարակի, այլ երանելի է պսակն զօրաւոր. ահա շուշանն վայրենի ծաղկէ, և մշակ այրի նախանձեալ է ի նմանէ:

Իբրև լուաւ Փիլիպպոս զբանս զայսոսիկ ի Փրկչէն, պատասխանի ետ և ասէ ցնա. Եւ ընդէ՞ր ոչ հրամայես Տէր սատակել զնոսա, որք ոչ կամեցան թագաւորել զքեզ ի վերայ իւրեանց. քանզի գիտեմ եթէ ոչ ըստ արժանի քում անուանդ քարոզեցաւ անուն քո ամենայն աշխարհի: Քանզի իշխանութիւնդ քո բարձր է քան զամենայն աստուածս, և վասն քո եկի ի քաղաքս յայս, յորում ոչ ունէի ի մտի գալ, և դու առաքեցեր զիս այսր քարոզել զաստուածութիւնդ քո, զի յանդիմանեցից զմոլորութիւն կռոցն և զպիղծ զօրութեանցն. և իբրև մտաք այսր, նոյնժամայն դեւքն փախեան յերեսաց մերոց՝ վասն անուանդ քո սրբոյ. վիշապք ցամաքեցան և օձք մերժեցան, և խաղաղութիւն եղև ամենայն բնութեան զազանաց. և նոքա ոչ ընկալան

Բարթողոմէոս յայլ ազգս լինի քարոզ ինձ, և խաչի անդ վասն անուան իմոյ. և Մարիամ զմարմին իւր դիցէ ի Յորդանան գետ անյայտ ի մարդկանէ:

Եւ յետ այսց բանից, դարձաւ Տէր և ձգեաց զձեռն իւր ի վերայ այնոցիկ՝ որք ընկղմեցան ի խորսն, և նշմարեցաւ խաչ մի լուսաւոր ի վերայ տեղւոյն այնորիկ, և ամենայն բազմութիւն մարդկանն ի վեր գային ի խորոցն, բայց միայն իշխանն և իժն և քուրմքն զոր պաշտէին, և Տէր աներևոյթ լինէր: Եւ ոչ ոք ետես զՏէր, բայց միայն Փիլիպպոս և Բարթողոմէոս և Նիկանորա և Ստաքեայ. և լուեալ զոր ասացն, և տեսեալ զքանչելիսն՝ օրհնէին զԱստուած ահիւ և դողութեամբ: Եւ բազմութեան մարդկանն ելեալք ի խորոցն աղաղակէին և ասէին. Մեծ է Աստուածն քրիստոնէից՝ զոր քարոզեն սուրբ առաքեալքս, և մեծ է զօրութիւն նորա և չիք այլ Աստուած բայց ի Նմանէ. այժմ հաւատամք յարարիչն ամենայնի, միայն ընկալցի զմեզ ըստ մեծի ողորմութեան իւրոյ ի ձեռն ապաշխարութեան, զի արժանի լիցուք լուսաւոր մկրտութեան, և ժառանգորդք եղեալ արքայութեանն՝ զոր քարոզեցին սուրբ առաքեալքն յառաջ քան զպատուհասն: Եւ տեսեալ զեռ եռ ի կախաղանի զսուրբ զառա-

զլոյսն, վասն այնորիկ և ես խարշեցայ խոնարհեցուցանել զնոսա ըստ անզգամութեանն իւրեանց:

Ասէ ցնա Փրկիչն. Վասն զի Թողեր զպատուիրանն իմ, ահա ըմբռնեցիս ի տանջանս մահու. և Բարթողիմէոս ունի վիճակ ի Լիկոնիա և խաչի անդ. և Մարիամին դնէ զմարմին իւր ի Յորդանան գետ:

Եւ յետ բանիցս այսոցիկ դարձաւ Փրկիչն և ձգեաց զձեռն իւր, և նշմարեաց խաչ մեծ յօդս, որ հասանէր ի խոնարհ մինչև ի խորս, և ունէր յինքեան աստիճան ըստ նմանութեան սանդղոց. և ամենայն բազմութիւն իջելոցն ի խորսն՝ ելին ի վեր ընդ սանդուղս լուսեղէն խաչին. և ոչ ոք ի նոցանէ մնաց ի խորսն, բայց միայն իշխանն և իժն զոր պաշտէին. և յորժամ ելին ամբոխ քաղաքին, հայեցան և տեսին զՓիլիպպոս կախեալ նոյնպէս գլխիվայր, և զԲարթողիմէոս յօրմ մեհենին, զորին և զՄարիամ զի ունէր զառաջին զօրինակն իւր: Եւ Փրկիչն ել յերկինս, և

քեալսն, ընթացան լուծանել զաւրսն: Իսկ Փիլիպ-
պոս ոչ առնայր յանձն լուծանել, և Տէր, ասէ, Հրա-
մայեաց ինձ այսպէս կալ մնալ մինչև ի ժամանակս
ինչ, փոխանակ չարի չար հատուցանել՝ զոր ցուցէք
մեզ, և զփոխարէնս ընկալարուք. և Տէր օգնեցաւ
ձեզ, և ես բարկութեան Տեառն համբերից՝ զի մե-
ղայ նմա, մինչև արասցէ ինձ այցելութիւն:
Բայց Բարթողոմէոս լուծցի ի կապանաց և դուք ի
միա ասէք զմեծամեծս Աստուծոյ ամենակալի: Եւ
զԲարթողոմէոս լուծին ի տանջանացն. և Փիլիպպոս
եկաց մնաց նոյնպէս, և բազմութեանն անկեալ ա-
ղաչէին զի լուիցէ և իջցէ ի կախաղանէն, և զոր
ինչ տացէ արասցեն: Եւ ասէ Փիլիպպոս. Արք
եղբարք և ամենայն բնակիչք քաղաքիս, լուարուք
ինձ մինչդեռ եմք ի կախաղանի աստ զլխիվայր.
ծաներուք զԱստուած որ եցոյց զսքանչելիս իւր, և
մեծ արար զաւնել իւր ընդ մեզ. և եղեաք փըր-
կեալք, վասն զի ողորմեցաւ մեզ և գթացաւ ի ձեզ.
խրատելով խրատեաց զձեզ և ի մահ ոչ մատնեաց:
Արդ փառաւորեցէք զարարիչն ձեր, և մերձեցարուք
առ Տէր, և լուսաւորեսցէ զձեզ վերստին ծննդեամբ
հոգևոր աւազանին: Գիտէք ամենեքեան՝ յորժամ
եկաք ի քաղաքս յայս, ոչ ինչ առաք յումեքէ ոսկի

ամբոխն աղաղակէին և ասէին. Մեծ է Աստուածն զոր քարոզեն
սուրբ առաքեալքն ճշմարտութեամբ, մեծ է Աստուած որ առա-
քեաց զձեզ ի փրկութիւն մեզ, այժմ ապաշխարեմք վասն մեծ
մոլորութեանն յորում էաք յառաջ. ահա այժմ հաւատամք յոր-
ժամ տեսաք զսքանչելիսս: Եւ ոմանք ի նոցանէ ընկեցին զին-
քեանս յերկիր, և այլք խոնարհեցուցին զգլուխս իւրեանց ի
ծունկս. աղաղակէին ողորմութիւն գտանել յերկիր. և կէսն զմը-
տաւ ածէին փախչել: Եւ մինչդեռ կայր Փիլիպպոս կախեալ զըլ-
խիվայր, ձգեաց զձեռն իւր և ասէ ցնոսա. Արք քաղաքիս լուա-
րուք ինձ, մինչդեռ եմ ի կախաղանիս, ուսարուք թէ որչափ են
զօրութիւնն Քրիստոսի Աստուծոյ և սքանչելիքն զոր տեսէք. զի
շարժումն մեծ եղև, և կորեաւ ամենայն քաղաքս ձեր. բայց
միայն տունն Ստաքեայ ոչ կորեաւ և ոչ եղև խռովութիւն նմա,
քանզի հաւատաց յԱստուած ճշմարիտ և ընկալաւ զծառայս նո-
րա: Եւ ոմանք ի նոցանէ ընթացան լուծանել զՓիլիպպոս ի կա-

կամ արծաթ կամ այլ ինչ ստացուած մարմնաւոր. զի այսպէս պատուիրեաց մեզ Տէր տանել և ուսուցանել: Արդ հաւատացէք յաւետարանն, և ծաներուք զճշմարիտն Աստուած, և եղիջիք ազատեալք յիշխանութենէ խաւարին: Վասն զի հաւատացաւ ի Տեառնէ ինձ քարոզել զաւետարանն արքայութեան երկնից, և վասն այսորիկ կամ կախեալ, և աստէն հանգիստ ստացայ ի Տեառնէ. և մի տրտմիք զի այսպէս կախեալ կամ գլխիվայր, զի օրինակաւ առաջին մարդոյն՝ բերեալ լինիմ գլխիվայր ի բարձրութենէ ի խոնարհ, որ ոչ պահեցի զպատուիրանսն որպէս նայն: Եւ այսու օրինակաւ դարձեալ տանում զթողութիւն, և զխոստումն արքայութեանն երկնից ի ձեռն չարչարանացս որ երեւին ձեզ, զի բազում նեղութեամբք պարտ է մեզ մտանել յարքայութիւնն երկնից: Եւ դուք նմանեալք մեզ, ծածկեալ խորհրդոյն՝ որ յայտնեցաւ մեօք առ ձեզ, զգուշացարուք տանել զամենայն և լուսով արդարութեամբ, հաւատովք և անարատութեամբ վարեսջիք զկեանս ձեր և զցանկութիւն մի կատարէք: Մի չար փոխանակ չարի հատուցանէք, որպէս զիս տեսանէք, զի որով դատապարտնաւ դատիմք, դատելոց եմք յարդար դատաւորէն Քրիստոսէ: Ողջեղէք

խաղանէն, և նորա պատասխանեալ՝ ասէ ցնոսա. Արք եղբարք, որք լուսաւորեցայք Տերամբ, լուարուք ինձ. գիտէք դուք զի ոչ եկի ի քաղաքս յայս վաճառել ինչ աշխարհական, և ոչ էր գալն ըստ կամաց իմոց, այլ ըստ կամաց Փրկչին մերոյ Աստուծոյ, որ փրկեաց զամենայն աշխարհս. նա առաքեաց զիս ի քաղաքս յայս, յորում կախեալ կամ ստորագլուխ. քանզի վիճակեցաւ ինձ ելանել ի մարմնոյս ի քաղաքիս յայսմիկ. արդ մի տրտմիք զի կախեալ կամ գլխիվայր. քանզի ի կերպ իմ առաջին մարդոյն որ անկայեալ գլխիվայր. այժմ լնում զբանն Աստուծոյ որ ասացաւ ձեզ խորհրդիւ. եթէ ոչ դարձուցջիք զվերինն ի ներքին, այսինքն զներքինն ի վերին, և զձախն յաջ, և զաջն ի ձախ, և եթէ ոչ համարեսջիք զանարգն իբրև զպատուական, և եթէ ոչ արասջիք զօրինակս զայս վասն արքայութեանն երկնից, ոչ կարէք մտանել ի նա. զայս օրինակ կալայ ես ըստ նմանութեան ի սկզբանէ եղեալ խորհրդոյն: Եւ արդ եղբարք իմ մնացէք ինձ ի ծածկեալ

զսիրտս ձեր լուսով երանելի արդարութեան որ կոչեացն զձեզ յիւր սքանչելի լոյսն և ի փառս անուան իւրոյ։ Մի՛ մոլորիք ի լուսոյ աստուածգիտութեանն, զի աղբիւր է ամենայն բարութեանց. արդ դիք ի սիրտս ձեր զերկնաւոր փառսն և զերանութիւնն, և ծառայեցէք արդարութեամբ, զի ընկալջիք զբարի հատուցումն ի Քրիստոսէ։ Զի վասն բազում մարդասիրութեան իւրոյ եկն փրկել զմեզաւորս, հաւատովն որ ի Հայր և յՈրդի և ի սուրբ Հոգին վերստին ծննդեամբ սուրբ աւազանին. զի մարդացաւ վասն մեր Որդին Աստուծոյ և չարչարանօք խաչի և մահու և երեքօրեայ յարութեամբն փրկեաց զորդիս մարդկան յանիծիցն Ադամայ. և կոչէ բարձր քարոզութեամբ յիւր արքայութիւնն և ի փառսն. որք հաւատան յամենասուրբ Երրորդութիւնն և որք հաւատան սուրբ աւետարանին և դաւանեն յերկրպագութիւն միոյ աստուածութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, և մերժեն զինքեանս ի չար խորհրդոց և ի գործոց անօրէնութեան, ժառանգորդ առնէ իւր անսպառ բարեացն զոր պատրաստեաց նոցա։ Իսկ որք ոչ կամեցան լսել սուրբ աւետարանին, այլ մոլորեցան ի հակառակորդէն, և կուրացան անմտութեամբք սիրտք նո-

օրինակիս յայս, քանզի փոխեսցի աշխարհս այս, և ամենայն հոգի որ ծնանի ի սմա, դառնայ զլխիվայր և գայ ի մարմին, և զի մի՛ ընկալցի յինքեան զերկնային զլոյսն, այլ լիցի ի մոռացման յամենայն ժամ. արդ դուք որ առէք և ունիք զերկնաւոր զփառսն, և զերանութիւն ճշմարիտ լուսոյն, մի՛ լինիք անհաւատք յայսմհետէ, այլ հաւատացէք ի տէր և թողջիք մեղանց։ Քանզի էր անուն իմ արգելումն ճշմարիտ առնենին, զի ընաւ փոխարէնս հատուցի այնոցիկ որ տանջէինն զիս, և ետու զայթագղութիւն յուղղութեան իմում, և նոյն ձեռօք նոցա երթամ առ Տէրն. և արդ մի՛ տրտմիք զի ելանեմ ի մարմնոյս, այլ մանաւանդ ուրախ լերուք, զի թողում զընակութիւնս վիշապին. զի տանջէ զամենայն ոգիս որ մեղանչեն ի նա։ Եւ դարձեալ ասէ. Ձեզ ասեմ որ դարձարուք ի մեռելոց և ի դժոխոց, և ի խուզմանէ խորոց, զոր լուսեղէն խաչին եհան ի բարձունս վասն իւրոյ բարերարութեանն. նա Աստուած էր և վասն մեր մարդ եղև,

ցա, զի մի ծագեսցէ ի նոսա լուսաւորութիւն աստուածգիտութեանն, պատրաստեալ նոցա տանջանս յաւիտենականս:

Եւ յորժամ կատարեաց Փիլիպպոս զայս ամենայն զբանս իւր առ ժողովուրդն, ասէ ցԲարթողոմմէոս. Ով եղբայր իմ, որ կցորդ եղեր ինձ յամենայն նեղութիւնս իմ դու և Մարիամ, այլ որպէս Տէր եցոյց, ելք քո յաշխարհէս՝ անկայտ ի ձեռն վկայութեան ի Լիկոնիոն հրամայեցաւ, և Մարիամ ի Յորդանան գետ՝ հրաժարումն յաշխարհէս անկայտ յերկրէ: Եւ այժմ պատուիրեմ ձեզ, յետ իմոյ ելանելոյ յաշխարհէ, դիք զխաղաղութիւն ձեր ի քաղաքիս յայսմիկ ի վերայ հաւատացելոց, զոր Տէր զիւր խաղաղութիւնն եցոյց և յայտնի արար ի քաղցրութեան իւրում, ամենեցուն ցուցանել ըստ իւրում շնորհացն ի ճանապարհս արդարութեան. որք ի փառս աշխարհի և որք կուսութիւն խոստանան պահել, որպէս պարտ է հաճոյ լինել Աստուծոյ: Եւ ամենայն կուսանքս այսոքիկ, որք նուիրեցին զանձինս իւրեանց կուսութեամբ և սրբութեամբ կեալ, հպատակ կացցեն աղօթից և պահոց և զմիմեանս սիրելոյ. խոնարհք և երկիւղածք յԱստուծոյ, և մի մեկնել ի միմեանց, այլ պահել զմիաբանու-

անմահ էր և մահկանացու եղև վասն մեր, և մահուամբն իւրով յարոյց զմեռեալս. անմարմին էր և մարմնացաւ, զի յանդիմանեսցի մարմին մեղացն. մեծ էր և եղև փոքր, զի աճեցուսցէ զփոքունս և տանիցի ի մեծութիւն իւր. նա էր որ ունէր զամենայն քաղցրութիւնս և թքին ի նա՝ և համբերէր, զի դարձուսցէ զզառանցեալս ի քաղցրութիւն. արդ ճանաչեցէք զնա և մի թողուք, և նա տայ ձեզ զկեանսն յաւիտենից:

Եւ յորժամ կատարեաց զբանս զայս, ասէ ցնոսա դարձեալ. Լուծէք զԲարթողոմէոս. և նոցա լուեալ զայն, լուծին զնա վաղվաղակի: Եւ ասէ ցնա Փիլիպպոս. Ով Բարթողոմէոս եղբայր իմ, գիտե՞ս զի Տէր առաքեաց զքեզ ընդ իս ի քաղաքս յայս և կցորդ եղեր ընդ իս յամենայն վիշտս դու և Մարիամնի, այլ որպէս գիտացի ի Տեառնէ, ելք քո յաշխարհէս հրամայեցաւ ի Լիկոնիա լինել, և Մարիամու ի Յորդանան գետ: Եւ այժմ պատուիրեմ քեզ, զի յետ իմոյ ելանելոյս, դիցէք զխաղաղութիւն

թիւնն որ ի Տէր. և ի տես հիւանդաց և աղքատաց, և յայլ ինչ պէտս հոգևոր կարգաց, երկու երկու առաքեսցին, ամօթխածութեամբ զարդարեացին, և ընդ պատանիս ամենևին մի խօսել, զի մի փորձեսցէ փորձիչն և լուծանէ զբարեկարգութեան և զբարեձևութեան կրօնս, և զխոստումն լուսաւոր առագաստին, որ ուրախ առնէ փեսայն երկնաւոր. ամենայն համեստութեամբ և սրբութեամբ, օրինակ առեալ ինքեանց զվարս սրբոյն Մարիամու: Եւ զաշխարհականս խրատեցէք, զի զգաստութեամբ և արգասութեամբ կեցցեն յաշխարհիս և ակն կալցեն յուսոյն, որ արժանաւորացն ի Քրիստոսէ է պատրաստեալ, զի ոչ յայտ է երբ Տէր գայցէ:

Եւ արդ, աղաչեմ զքեզ, եղբայր իմ, հանդերձ հաւատացեալ ժողովրդովքդ զոր Տէր փրկեաց, աղօթս արարէք վասն իմ՝ զի թողութիւն լիցի ինձ ի Տեառնէ, որ հատուցի չար փոխանակ չարի, ըստ օրինացն և ոչ ըստ Յիսուսի Քրիստոսի: Եւ յաւանդել ինձ ի Տէր որ ետ զսա, զմարմինս իմ իջուցեալ ի կախաղանէս, թաղեցէք զիս յեկեղեցւոջն՝ զոր շինեցի յանուն Տեառն. և զպաշտօնն առ Աստուած անդադար կատարեցէք, և պատարագ զաւուրս քառասունս վասն փրկութեան հոգւոյ իմոյ և թողութիւն մեղացն զոր արարի:

ձեր ի վերայ քաղաքիս այսօրիկ, որպէս և Տէրն ետ զիւր խաղաղութիւնն: Լինիցին ի տան միում ամենայն կուսանքն, պահելով զամենայն օր, և մի մեկնեսցին ի միմեանց, և եթէ երթիցեն ի տես հիւանդաց՝ երկու երկու երթիցեն ամենայն խոնարհութեամբ. և ընդ պատանիս ամենևին խօսք նոցա մի լինիցին, զի մի փորձեսցէ զնոսա սատանայ, քանզի այնպէս սողեցաւ օձն յԵւայ և նախ կործանումն եղև Ադամայ ի մահ. նոյնպէս և այժմ լիցի: Եւ զյանդգուննս խրատեցէք ձերով պարկեշտ գնացիւքն, օրինակ առնելով զՄարիամն: Բայց աղաչեմ զձեզ եղբարք իմ և քորք ընտրեալք ի Տեառնէ, զի թողութիւն լիցի ինձ, զի մեղայ առ ի հատուցանել չար փոխանակ չարի: Եւ յաւանդելն իմում զհոգիս՝ այսպէս արարէք. իջուցէք զմարմինս իմ ի կախաղանէ աստի և թաղեցէք յեկեղեցւոջն զոր շինեցաք յանուն Տեառն, և զպաշտօն առ Աստուած անդադար կատարեսջիք, և զպատարագն յաւուրս քառասունս վասն փրկութեան հոգւոյ իմոյ մատուցէք, ի թողութիւն մեղացն զոր արարի:

Այլ Տէրն մեր և Աստուած՝ որ կենդանացոյց զմեզ պատուական մարմնով և արեամբն զոր ետ մեզ ի . . . . .[1] աճէր և զօրանայր ըստ քարոզութեան առաքելոյն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որում փառք յաւիտեանս ամէն:

Այլ Հայրն ամենակալ և Որդին միածին Յիսուս Քրիստոս, հանդերձ սուրբ Հոգւովն, որ կենդանացոյց զձեզ և ողորմեցաւ ձեզ, նոյն անկեսցէ և արմատացուսցէ առ ի նա հաւատով, աճեցուսցէ և պտղաբերս արասցէ զձեզ որպէս և ինքն կամեսցի:

Եւ դարձեալ ասէ. Տէր տերանց զվաստակս իմ դու գիտես և հատո՛ ինձ զվարձս իմ, զի փառաւորեալ է անուն քո յաւիտեան. և ամենեցուն տացեալ զամէնն:

Եւ ասէ. Տէր իմ Յիսուս Քրիստոս քաւիչ իմ լեր և ընկալ զոգի իմ. և նոյն ժամայն աւանդեաց զհոգին ի ձեռս Աստուծոյ: Եւ եղև ձայն յերկնից յետ քառասուն աւուրն կատարման սրբոյն. Փիլիպպոս առաքեալն պսակեցաւ անթառամ պսակաւն:

Եւ բանն Աստուծոյ աճէր և բազմանայր շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:

1. Պակասին 12 տողք:

# ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

## ՍՐԲՈՅ ԱՌԱՔԵԼՈՅՆ ՓԻԼԻՊՊՈՍԻ
## ՈՐ Է ՄԻ ՅԵՐԿՈՏԱՍԱՆԻՑՆ
## ԵՒ ՔԵՌՆ ԻՒՐՈՅ ՄԱՐԻԱՄՆԻ
## ԵՒ ԲԱՐԹՈՂՈՄԷՈՍԻ ՈՐ ԷՐ ՅԵՒԹԱՆԱՍՆԻՑ ԱՆՏԻ[1]

Յաւուրս ժամանակաց[2] ամպարիշտ արքային Տրայիանոսի, սուրբ առաքեալն[3] գնաց[4] ի Լիւդիա և յասիացւոց քաղաքս և ի գաւառս, և ուսուցանէր զաւետարանն Քրիստոսի։ Եւ երթեալ ի քաղաքն Յերապոլիս, եգիտ զոմն հաւատացեալ, որում անուն էր Ստաքէոս[5]։ Եւ էին ի միասին Մարիամնի[6] քոյրն Փիլիպպոսի և Բարթողոմէոս մի[7] յեօթանասնիցն և այլք յաշակերտաց[8] իւրոց․ ուսուցանէին զժողո-

1. Ա և Գ. օր. Վկայաբանութիւն Փիլիպպոսի առաքելոյն եւ Բարթուղիմէոսի (Գ. օր. եւ Մարիամնի)։ Բ. օր. Վկայաբանութիւն Փիլիպպոսի եւ Բարդուղիմէոսի առաքելոցն եւ Մարեմնի։
2. Ա. Բ և Գ. օր. ի ժամանակս։
3. Ա. Բ և Գ. օր. առաքեալն Քրիստոսի (Բ և Գ. օր. սուրբն) Փիլիպպոս։
4. Ա. Բ և Գ. օր. գնաց ի սահմանս Ասիացւոց Յերապոլիս քաղաք, եւ գտեալ զոմն։
5. Ա. Բ և Գ. օր. Եւստաքէոս։
6. Ա. Բ և Գ. օր. Մարիամ։
7. Ա. Բ և Գ. օր. մին։
8. Ա. Բ և Գ. օր. յաշակերտացն Փիլիպպոսի, քարոզէին (Ա. օր. գրէին) զաւետարանն Քրիստոսի եւ ուսուցանէին։

*վարդս*[1] *քաղաքին որք պաշտէին զիժս*[2] *և զքարս և զօձս. և զբազումս դարձուցին ի Քրիստոս:*

*Եւ կինն բդեշխին Նիկանովրայ ի ժամանակաց*[3] *բազմաց անկեալ հիւանդութեամբ յանձնէ և յաչացն, որ ամենևին կանգնել կամ տեսանել*[4] *ոչ կարէր: Եւ յորժամ լուաւ*[5] *վասն սուրբ առաքելոյն Փիլիպպոսի, բարձեալ ի ծառայից իւրոց*[6] *արծաթեղէն պատգարակաւք գայր առ նա. և հաւատացեալ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս և առժամայն առաքինեալ ողջանայր ի ցաւոց իւրոց: Եւ լուեալ զայն առն նորա բդեշխին*[7] *և ընթացեալ երիվարաւն, բուռն եհար ի Նիկանովրա կինն իւր և գանեաց զնա ուժգին և ասէր. Ո՞ր կախարդ խաբեաց զքեզ և ողջացոյց աղանդօք*[8] *և կամի պռնկել*[9]*. Նախ զքեզ սպանից և ապա զկախարդն*[10]*. և հրամայեաց զօրականաց և հանին արտաքս զՓիլիպպոս և զԲարթողոմէոս և զՄարիամնի, և այնչափ գանեցին*[11] *զնոսա մինչև*[12] *ասել բազմաց եթէ մեռան: Եւ*[13] *կապեցին զոտս նոցա և քարշեցին ընդ մէջ քաղա-*

1. Գ. օր. ժողովրդեանն որք մոլորեալ (Ա. և Բ. օր. մոլորեալ):
2. Ա. Բ և Գ. օր. զիժն եւ զօձն. որոց քարոզութեամբն բազումք դարձան (Ա. օր. հաւատացին) ի Քրիստոս:
3. Ա. օր. բազում ժամանակս: Բ և Գ. օր. ի բազում ժամանակաց:
4. Գ. օր. չունէր կամ տեսանել:
5. Ա. Բ և Գ. օր. զՓիլիպպոսէ:
6. Ա. Բ և Գ. օր. իւրոց գընաց (Ա. օր. եւ տարան) առ Փիլիպպոս, հաւատաց ի Քրիստոս եւ ողջացաւ:
7. Ա. Բ և Գ. օր. բդեշխն այր իւր, կալաւ զՆիկանովրա (Բ. օր. եւ գանեալ ուժգին: Գ. օր. սաստիկ գանեաց զնա եւ ասէ):
8. Ա. Բ և Գ. օր. չունին աղանդօք:
9. Ա. Բ և Գ. օր. յաւելուն ընդ քեզ. արդ ես նախ:
10. Ա. Բ և Գ. օր. զկախարդն զայն. եւ ես հանել:
11. Ա. Բ և Գ. օր. հարին:
12. Բ. օր. մինչ զի կարծել թէ մեռան: Գ. օր. մինչ զի ասել ոմանց թէ մեռաւ:
13. Ա. Բ և Գ. օր. եւ ապա կապեցին զպարան յոտս նոցա:

քին, մինչև ի գուռն մեհենին[1]. և արգելին[2] զնոտա ի տաճարին ընդ քրմացն խուեանց: Եւ յաղօթելն նոցա՝ շարժեցաւ տաճարն և բագինք իժիցն[3] և օձիցն խախտեցան: Եւ ելեալ քրմացն պատմեցին բդեշխին. և նորա հրաման տուեալ՝ հանին զնոսա ի տաճարէն և մերկացուցին զերեսանն[4]. և Մարիամնի ամպով և մգով ծածկեցաւ, և[5] մարմինն ոչ երևէր մարդկան: Եւ զփիլիպպոս կախեցին զլըխիվայր ընդ ծառով[6] մի ընդդէմ տաճարին, և զԲարթողոմէոս[7] ընդդէմ փիլիպպոսի, և բևեռեցին զձեռան ընդ գուռն տաճարին: Եւ տեսեալ զմխեանս փիլիպպոս և Բարթողոմէոս ժպտեցան, զի ոչ էին որպէս ի չարչարանս: Կամեցան[8] և զՄարիամնի կախել, և տեսին զնա[9] բոց վառեալ, թողին և փախեան:

Ասէ փիլիպպոս ցԲարթողոմէոս. Աղաչեսցուք զԱստուած[10] և առաքեսցէ հուր յերկնից և այրեսցէ զսոսա[11]: Ասեն Բարթողոմէոս և Մարիամնի[12]. Տէր մեր Յիսուս Քրիստոս պատուիրեաց[13] օրհնել զթշնամիս և ոչ անիծանել, և ոչ հատուցանել չար փոխանակ[14] չարի. և[15] ինքն չարչարեցաւ և գանեցաւ և ապտակեցաւ և խաչեցաւ[16], և ոչ հատոյց չար[17]. այլ

1. Ա. Բ և Գ. օր. տաճարի դիցն (Բ և Գ. օր. իւրեանց):
2. Ա. Բ և Գ. օր. արկին (Ա. օր. արկեալ) զնոսա ի տաճար կռոցն:
3. Ա. Բ և Գ. օր. իժին եւ օձին (Գ. օր. խորտակեցան): Եւ ճանեալ զնոսա...:
4. Ա. Բ և Գ. օր. զերեսեանն:
5. Ա. Բ և Գ. օր. որ ոչ երեւեցաւ մերկութիւն նոյա:
6. Ա. Բ և Գ. օր. զծառով:
7. Ա. Բ և Գ. օր. բևեռեցին (Ա. օր կախեցին) զփայտէ: Եւ տեսեալ...:
8. Ա. Բ և Գ. օր. կամէին:
9. Բ և Գ. օր. յաւելուն իբրեւ: Ա. օր. որպէս:
10. Ա. Բ և Գ. օր. զՏէր:
11. Ա. Բ և Գ. օր. զնոսա:
12. Գ. օր. յաւելու ցփիլիպոս:
13. Գ. օր. պարգեւեաց մեզ:
14. Ա. Բ և Գ. օր. ընդ:
15. Ա. Բ և Գ. օր. զի եւ: Ա. օր. չունի եւ գանեցաւ... խաչեցաւ:
16. Բ և Գ. օր. յաւելուն եւ մեռաւ:
17. Ա. Բ և Գ. օր. յաւելուն փոխանակ չարի:

աղօթէր առ Հայր և ասէր. Հայր, թող սոցա զի ոչ գիտեն զինչ գործեն։ Ասէ փիլիպպոս. Թոյլ տուր ինձ, զի ոչ հանդուրժեմ[1] դոցա ի գլխիվայր կախաղանիս։ Եւ սկսաւ անիծանել զժողովուրդն[2] երբայեցերէն, և ասէ. Բացցէ[3] անդունդք զբերան իւր և կլցէ զանօրէն[4] զժողովուրդս զայս[5]։ Եւ յասել փիլիպպոսի զբանն[6], բացան անդունդք և[7] ընկղմեաց զտաճարն յորում էին քուրմքն և բագինքն, և զքուրմսն և զրդեշխն և այլ բազումս անձինս եօթն հազարս։ Եւ տեղին յորում էին սուրբ[8] առաքեալքն և Ստաքէոս և Նիկանովրա և[9] հաւատացեալքն՝ անշարժ մնաց[10]. և լուան ձայնս ողբոց յանդնդոց որ ասէին. Ողորմեա մեզ խաչեալ Աստուած փիլիպպոսի, Յիսուս Քրիստոս երևեցիր[11] մեզ և օգնեա մեզ և հան զմեզ ի կենդանի սատակմանէս, և հաւատասցուք յանուն քո։ Եւ[12] երևեցաւ Տէր փիլիպպոսի և ասէ. Ով փիլիպպէ, ո՞չ լուար ի պատուիրեալն իմում, թէ մի հատուցանէք չար փոխանակ չարի, և դու այդչափ ոգիս[13] կորուսեր անխնայաբար։ Ասէ փիլիպպոս. Ընդէ՞ր բարկանաս ինձ Տէր, զի[14] անիծեցի զթշնամիս քո, որ ոչ կա-

1. Ա. Բ և Գ. օր. ժուժեմ։
2. Ա և Գ. օր. զնոսա։ Բ. օր. չունի։
3. Ա. Բ և Գ. օր. բանայ (Գ. օր. բացցէ) երկիր։
4. Ա. Բ և Գ. օր. չունին զանօրէն։
5. Ա. Բ և Գ. օր. յաւելուն յանդունդս։
6. Բ. օր. չունի զբանն։
7. Ա. Բ և Գ. օր. եւ եկուլ զտաճարն բագնօք եւ քրմօքն, եւ զրդեշխն եւ այլ բազում (Բ. օր. եւ անձինս)։
8. Ա. Բ և Գ. օր. չունին սուրբ։
9. Ա. Բ և Գ. օր. յաւելուն այլ։
10. Ա. Բ և Գ. օր. մնացին, եւ ձայն ողբոց գայր յանդնդոց։
11. Ա. Բ և Գ. օր. երեւեցո զերեսս քո ի մեզ (Գ. օր. մեզ) եւ ողորմութեամբք քով փրկեա զմեզ ի կենդանի սատակմանէս, զի հաւատամք։
12. Ա. Բ և Գ. օր. Յայն ժամ։
13. Գ. օր. զայնչափ ժողովուրդն։
14. Ա. Բ և Գ. օր. զի ընդանամեաց իմոց անիծեցի, զի ոչ ընկալան զբանս իմ եւ ոչ հաւատացին։

մեցան քեզ թագաւորել ի վերայ իւրեանց, և ոչ ընկալան զքաղցրութիւն բանից իմոց և հաւատացին յանուն քո։ Աւաղ Տէր. վասն զի [1] ոչ պահեցեր զպատուիրանս իմ և անփթեցեր զթշնամիս [2] քո, արդ յետ կատարման քո, արգելցիս արտաքոյ հանգըստեան [3] արդարոց, ոչ եղեալ ի տեղւոջ հանգստեան, և յետ քառասուն աւուր ի հանգստեան եղիցիս ի չարչարանաց այտի. և Բարթողմէոս երթիցէ ի Սինոփայ և անդ խաչեսցի, իսկ Մարիամի մարմինն թաղեսցի ի Յորդանան գետ։

Եւ [4] արար Տէր ձեռօք իւրովք զնշան խաչին ի վերայ երկրի, և բացան անդունդք, և ձայնեաց. Ելէք ամենեքեան զկնի [5] լուսաւոր [6] խաչիդ որ էջ առ ձեզ. քանզի [7] առաքեալն Փիլիպպոս զթացաւ առ ձեզ։ Եւ ելին ամենայն բազմութիւնքն յանդընդոց [8], և մնաց միայն ի դժոխս բդեաշխն և բագինքն [9]։ Եւ յորժամ [10] ելին ի լոյս, տեսին զՓիլիպպոս կախեալ գլխիվայր և զԲարթողմէոս բեւեռեալ [11], և [12] գնացին իջուցանել զՓիլիպպոս և ոչ

1. Ա. Բ և Գ. օր. յաւելուն դու։
2. Ա. Բ և Գ. օր. թշնամեաց քոց։
3. Ա. Բ և Գ. օր. դրախտին քառասուն օր, հրակիզեալ ի հրեղեն դասուցն, եւ ապա բացցի քեզ դուռն փառաց եւ մնասցես ի դրախտին կենաց. եւ Բարթողոմէոս։
4. Ա. Բ և Գ. օր. եւ տեսանագրեաց Տէր ձեռօքն իւրովք եւ խաչակնքեաց զերկիր, եւ առժամայն բացան անդունդք, եւ Տէր ձայնեաց եւ ասաց։
5. Ա. Բ և Գ. օր. զհետ։
6. Բ. օր. լուսեղէն։
7. ԲՆ. յաւելու. քանզի... առ ձեզ։
8. Ա. Բ և Գ. օր. յաւելուն անտի։
9. Բ. օր. յաւելու իժին եւ օձին։ Գ. օր. իժիցն եւ քարբիցն եւ օձիցն։
10. Ա. Բ և Գ. օր. որք։
11. Ա. օր. յաւելու զփայտն։ Բ և Գ. օր. ի փայտի։
12. Ա. Բ և Գ. օր. եւ չանացին զի իջուցեն։

ես Նոյա թոյլ [1], զի անդ կատարեցի. և կոծեցան ժողովուրդքն կոծ մեծ։

Տեսին և զՄարիամն և զՄատքէոս և զամենայն հաւատացեալսն շուրջ զՓիլիպպոսի, և աղաղակէին [2]. Մե՛ծ է Աստուածն քրիստոնէից [3], զոր քարոզեն արքս [4] այսոքիկ. ճշմարտութեամբ մի է Աստուած որ առաքեաց զդոսա վասն մերոյ փրկութեան. զղջանամք ընդ մեծ [5] մոլորութիւնն մեր. այժմ [6] հաւատամք զոր տեսաք [7] մեծ սքանչելիս, որ եհան զմեզ յանդնդոց [8]։ Եւ [9] անկան ամենեքեան և երկիրպագին Փիլիպպոսի, և [10] երկնչէին թէ մի երբեք այլ ինչ չար արասցեն Նոյա։

Եւ Փիլիպպոս ի կախաղանէն [11] ասէ. Եւ վասն ձեր քառասուն օր արտաքոյ [12] հանգստեան եղէ, և արար առ ձեզ Քրիստոս ողորմութիւն, և եհան ի խաւարէ ի լոյս, և [13] այլ բազում վարդապետութեամբ ուսոյց Նոյա և հաստատեաց ի հաւատն

1. Ա. Բ և Գ. օր. յաւելուն այլ ասաց, թէ սա կատարեցայց հրամանաւ Տեառն իմոյ Յիսուսի Քրիստոսի (Բ. և Գ. օր. արարչի եւ վարդապետի)։ Յայնժամ կոծեցան կոծ մեծ ամենայն ժողովուրդն ի վերայ Փիլիպպոսի առաքելոյն (Ա. օր. զՓիլիպպոս), որ էր գլխիվայր ի կախաղանին, եւ ոչ եւս թոյլ իջուցանել զնա ի վայր (Ա. օր. չունի եւ ոչ.. ի վայր)։
2. Ա. Բ և Գ. օր. աղաղակեցին ասելով։
3. Բն. յաւելու քրիստոնէից։
4. Ա. Բ և Գ. օր. սոքա ճշմարտապես։
5. Ա. օր. չունի մեծ։
6. Ա. Բ և Գ. օր. հաւատացաք (Բ և Գ. օր. եւ հաւատամք)։
7. Ա. Բ և Գ. օր. յաւելուն աչօք մերովք զմեծ։
8. Պակասի ի Բն. գոհանամք զշնորհաց նորա։
9. Ա. Բ և Գ. օր. Յայնժամ։
10. Ա. Բ և Գ. օր. վասն զի երկնչէին զի մի (Ա. օր. այլ) ինչ չար արասցէ նոցա։
11. Բն. յաւելու ի կախաղանէն։
12. Ա. Բ և Գ. օր. արգելայ արտաքոյ դրախտին։
13. Բն. յաւելու եւ այլ ... Քրիստոսի։

Քրիստոսի. և Հռոմայեաց և լուծին զԲարթողոմէոս ի կապանացն և ի բեւեռացն[1]:

Եւ ասէ Փիլիպպոս[2]. Եղբայր Բարթողոմէէ, թաղեա զիս ի տեղւոջս յայսմիկ[3], և մի՛ կառուցք պատեր զիս[4]. և գրեա զպատմութիւնս ի քարտիսի և այնու պատեա զմարմին իմ, և պնդեա պրտուով[5] և շինեա ի տեղւոջս[6] եկեղեցի. և պատուիրեա ժողովրդեանդ զի ծառայեսցեն Նիկանովրայ մինչև ցմահ իւր. և Ստաքիոս ձեռնադրեսցի եպիսկոպոս. և քառասուն օր վասն իմ աղօթս[7] արարէք, մինչև բացցի ինձ դուռն արքայութեանն. և աղօթեաց առ Աստուած ի բազում ժամս[8]: Եւ ի կատարել եօթն աւուրն ի կախաղանին գլխիվայր, աւանդեաց զհոգին իւր առ Աստուած, ի նոյեմբերի ամսեանն[9] ի ԺԴ: Եւ[10] Բարթողոմէոս և Մարիամնի իջուցին զառաքեալն Քրիստոսի[11] Փիլիպպոս և թաղեցին ի նոյն տեղւոջ[12] որպէս և հրամայեաց[13]: Եւ բուսաւ բարունկ[14] և երեր[15] պտուղ: Եւ[16] զքառասուն օր ուխտ

1. Բն. յաւելու եւ ի բեւե-ռացն:
2. Ա. Բ և Գ. օր. ցԲարթո-ղոմէոս. Եղբայր թաղեա:
3. Ա. Բ և Գ. օր. ի տեղիս յայս:
4. Պակասէր ի Բն. մի՛ . . . պատեր զիս. եդաք ըստ Ա. Բ և Գ. օր:
5. Ա. Բ և Գ. օր. յաւելուն և թաղեա:
6. Ա. Բ և Գ. օր. ի տեղիս յայս եկեղեցի յանուն իմ, եւ զԵւստաթէոս (Ա և Բ. օր. զՍտաքէոս) ձեռնադրեա ե-պիսկոպոս, եւ զՆիկանովր կինն իշխանին՝ արա՛ սարկա-ւագուհի, եւ պատուիրեա ժողովրդեանդ զի ծառայես-ցեն Նիկանովրայ եւ քառա-սունն:
7. Ա և Բ. օր. յաւելուն եւ պա-տարագս: Գ. օր. պաղատանս:
8. Ա. Բ և Գ. օր. յերկար:
9. Բն. յաւելու ամսեանն:
10. Ա. Բ և Գ. օր. Իսկ:
11. Բն. յաւելու Քրիստոսի:
12. Ա. Բ և Գ. օր. տեղին:
13. Պակասի ի Բն. նոցա:
14. Ա. Բ և Գ. օր. յաւելուն ի վերայ գերեզմանին նորա:
15. Ա. Բ և Գ. օր. բերէր:
16. Ա. Բ և Գ. օր. եւ կատա-րեցին ի վերայ նորա զփրկա-կան պատարագն ուխտիւ մե-ծաւ եւ նուիրօք զաւուրս

կատարեցին ի վերայ գերեզմանին ըստ հրամանի առաքելոյն. և ձայն եղև յերկնից, եթէ փիլիպպոս առաքեալն պսակեցաւ անթառամ պսակաւք[1], և հաւատաց ամենայն քաղաքն Յերապաւլիս ի Քրիստոս: Եւ հրամայեաց[2] Բարթողոմէոս Ստաքեայ եպիսկոպոսին և մկրտեաց զամենեսեան[3]: Եւ[4] յետ կատարելոյ քառասուն աւուրն, երևեցաւ Տէր Բարթողոմէոսի և Մարիամնի և ասէ[5]. Բացաւ դուռն արքայութեանն և նմուտ փիլիպպոս. երթիջիք[6] և դուք ի հանգիստ ձեր: Եւ թողին ի քաղաքին զՍտաքէոս և զՆիկանովրայ յեկեղեցին, և ելեալ անտի գնացին Բարթողոմէոս ի Լիկաոնիայ և Մարիամնի ի Յորդանան գետ[7], և անդ[8] կատարեցան ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն:

քառասունն. եւ ի կատարման քառասունն աւուրն, ձայն եղեւ յերկնից որ ասէր. Առաքեալն Փիլիպպոս:

1. Ա. Բ և Գ. օր. պսակաւն, եւ նմուտ ի դրախտն լուսոյ. եւ զայս լուեալ փառս ետուն Աստուծոյ եւ հաւատացին...

2. Պակասի ի Բն. առաքեալն:

3. Ա. Բ և Գ. օր. զնոսա:

4. Ա. Բ և Գ. օր. Եւ այս երեւեալ Քրիստոս Բարթողոմեոսի:

5. Պակասի ի Բն. զնոսա:

6. Ա. Բ և Գ. օր. գնացէք (Բ. և Գ. օր. երթայք) դուք ի տեղիս ձեր. եւ նոքա գոհացեալ զԱստուծոյ, երկիրպագին Տեառն եւ ելեալ անտի գնացին. Բարթողոմեոս ի Լիկաոնիայ...

7. Պակասի ի Բն. ըստ հրամանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Ա. օր. հրամանի:

8. Բն. յաւելու եւ անդ կատարեցան ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր:

## ԿԱՆՈՆՔ

## ՓԻԼԻՊՊՈՍԻ[1] ԱՌԱՔԵԼՈՅՆ

Յաղագս քառասունս պահելոյ՝ տեառն փիլիպպոսի հրամայեալ է ունել քառասունս, զոր կարգեաց հրամանօք[2] Նորա Յովհաննէս աւետարանիչ՝ մօր Տեառն բարեխօսել[3] Նմա, նախառաջին[4] յաղագս ինքեան թողութեան, որ զանհաւատ[5] քաղաքն կործանեաց փիլիպպոս, և յանդիմանեցաւ ի Տեառնէ վասն բարկացողութեանն, և[6] ի Նմանէ ընկալան մենկունք եկեղեցւոյ:

Երիցս[7] անգամ արժան է, և աւելի ոչ հրամայեմք: Բայց զատչմանեալ աղօթսն՝ անխափան կատարեսցէ մատուցողն, և ի մէջ կանոնացն կարգացմունք առաքելականք[8] և մարգարէականք[9], և խունկ[10] արկանել, և յամենայն աւուր սպաս[11] առնել եկեղեցւոյն, և յամենայն տանեակս գիշերապաշտօն առնել և սաղմոսել[12] անդ ձայնիւ:

Իսկ[13] զքառասունս հրամայեաց ունել զաւուրս քառասուն և ութ՝ վասն թողութեան մեղաց կեն-

1. Բ. Դ և Ջ. օր. Տեառն Փիլիպոսի:
2. Բ. Գ. Դ և Ջ. օր. հրամանաւ:
3. Դ. օր. բարեխօսեալ:
4. Ա. օր. նայ առաջին:
5. Բ. Դ և Ջ. օր. զանհաւատ:
6. Բ. Գ. Դ և Ե. օր. յետոյ կարգեն զյետինն մասնս զկընի բանիցն սաղմոսել ընծայիւք, կամ ձայնիւ:
7. Բ. Գ. Դ և Ջ. օր. Երիս միանգամ արժան է եւ այլ ոչ:
8. Գ. օր. չունի առաքելականք:
9. Ա և Ե. օր. չունին եւ մարգարէականք:
10. Ա և Ե. օր. եւ խունկս արկանել ի մէջ կանոնացն:
11. Բ. Գ. Դ և Ջ. օր. սպաս:
12. Ա և Ե. օր. սաղմոսել ընծայիւք:
13. Բ և Ջ. օր. Եւ հրամայեաց առնել զքառասունսն:

գանեայ և մեռելոյ, ըստ քառասուն և ութ քաղաքաց Ցեռուայ, որովք ապրէին մահապարտքն[1] ի նոսա ապաստանեալք: Իսկ դհան[2] հրամայեալ է քառասուն և ութ երկրամեան տալ յեկեղեցին, ըստ կատարման[3] աւուրցն խորհրդոյ, զոր յանդրանկացն պահանջէր Աստուած՝ տալ քահանայական ազգին ղևտացւոցն. զոր խւր անուանեաց փոխանակ Եգիպտացւոցն անդրանկաց կործանելոյ. զի ապաւաւորք[4] էին: Իսկ եթէ յաղագս աղքատութեան պակասիցէ քան զքառասուն և ութ երկրամեան՝ հաւանութեամբ քահանային արժան է:

Քանզի[5] մեծ հնարաւոր է ուխտս այս առ մեռեալս և առ կենդանիս. քանզի այսպէս հաւատայ եկեղեցի Աստուծոյ՝ թէ յանդունդս տարտարոսաց լինիցի գրաւեալ ոգին, և առան կնքով կնքեալ իցէ, զի մի ոք կարասցէ յիշատակել առաջի Աստուծոյ ի փրկութիւն: Բայց որք սրբութեամբ և ազօթիւք կատարեն զուխտս զայս՝ կարեն փրկել զմեռեալսն՝ և կարեն խզել զառան կնիքս Աստուծով, զներքին դժոխոցն ի վեր յերկինս թռուցանէ զհոգին, եթէ ի հաւատս միայն իցէ վախճանեալն, և ոչ յանաստուածութեան և ի հայհոյութեան: Վասն որոյ և ամենայն գունդք հրեշտակաց բազմութեան՝ այսպիսի անուշահոտ ցանկութեանց վարդագոյն արեանն Քրիստոսի սուրբ զենմանն զաոթ տուեալ ի վերուստ խաւսափելով անդ հասանեն ի սպասաւորութիւն: Եւ լինի յայնմ աւուր տուն պատարագին՝ տուն Աստուծոյ և բնակութիւն հրեշտակաց[6]:

1. Բ և Ջ. օր. մահապարտքն ի նոսա (Գ և Դ. օր. եօ) ապաւինեալք:
2. Գ. օր. եւ հրամայեալ է զհացն քառասուն եւ ութ երկրորդ ամին տալ յեկեղեցին խորհրդոյն:
3. Բ. օր. զամանման:
4. Ա. Գ և Դ. օր. ապաւ աւորք:
5. Բ. Գ. Դ և Ջ. օր. չունին զայս հատուած:
6. Ե. օր. յաւելու եւ Քրիստոսի փառք ամէն:

# ՆՈՐԻՆ ԿԱՆՈՆՔ[1]

## ԳԼՈՒԽՔ Ը

ա. Կին եթէ ամուլ գիպեսցի անգիտաբար ամուսնանալով, անմեղք են, մի որոշեսցին ի միմեանց[2]: իսկ զոր այլոց արանց փորձեալ իցեն[3], և յետոյ այլք առնուցուն զկանայս անպատուս, նոքա են ըստ նմանութեան քաղից և խողից՝ որք զվայրանալն[4] կամիցին, պարտապան[5] եղիցին Աստուծոյ, նոյա[6] զարուագիտացն դատաստանն գիցեն ի վերայ. եօթն ամ արտաքոյ եկեղեցւոյ ապաշխարեսցեն, տասն[7] ամ յեկեղեցի մնացէ և ելցէ ընդ ապաշխարողս և ապա հաղորդեսցի օրինաց:

բ. Շուն եթէ փոխանակեսցի ընդ[8] ոչխարի, մի պատարագեսցի ոչխարն, զի[9] գինք շան են:

գ. Էշ թէ փոխանակեսցի ընդ ոչխարի[10] կամ ընդ արծաթոյ, պատարագեսցի ոչխարն՝ զի որբեցաւ ի վերայ նստելով Տեառն, բայց ինքն[11] ոչ ուտիցի[12]:

1. Յետագայ կանոնքս որպէս և ցանկն պակասին ՃԱ և Ե. օր.: Բ և Զ. օր. յաւելուն փիլիպոսի: Գ. օր. կանոն:
2. Գ. օր. չունի ի միմեանց:
3. Գ և Դ. օր. իցէ... առնուն:
4. Բ և Զ. օր. զվերանալ: Գ. օր. զվարանեալն:
5. Գ և Դ. օր. պարտական:
6. Գ և Դ. օր. նոքա.. ընկալցին:
7. Դ. օր. ի տասն ամ մնցէ եւ ելցէ:
8. Գ և Դ. օր. չունին ընդ:
9. Դ. օր. չունի զյետին հատուածդ:
10. Դ. օր. եւ թէ էշ... ոչխարաց կամ արծարոյ:
11. Դ. օր. ոչ ուտիցի էշն:
12. Բ. օր. ոչ ուտի: Զ. օր. ոչ ուտուի:

Դ. Իսկ[1] որ զենուն զնա՝ և զվերարկու նորա վաճառեսցեն՝ որոշեսցին յեկեղեցւոյ. և որ զանմաքուրն ի գազանաց և յանասնոց[2] զենցեն, և զվերարկուս նոցա վաճառեսցեն հեթանոսաց և զարծաթն կերիցեն, այնպէս է՝ որպէս թէ[3] շուն ոք կերիցէ. նոքա որոշեսցին յեկեղեցւոյ, զի հեթանոսական սովորութիւն է:

Ե. Որսորդք որ զմաքուր անասունս որսայցեն, և վիրաւորեալ և առանց զենման ուտիցեն, նոքա որոշեսցին[4]. ապա թէ զվերարկուն հանցեն, կամ թէ լոկ մերձեսցին ի մեռեալ մարմինն, զի և այս հեթանոսական սովորութեան[5] չարիք են:

Զ. Կանանց որ ըստ ամսական սահմանաց լինիցին ըստ ապականածնութեան[6] արեանն, այրն մի մերձեսցի ի նա ամուսնանալով. ապա թէ մերձեսցի, նզովեալ եղիցի:

Է. Կանանց եթէ նոյն ծորումն լինիցի ախտակրական[7], և խափանէ զայգոյն և զերեկոյին աղօթսն մերձ կալով յեկեղեցին, արհամարհելոց նա զմկրտութեան ջրմն, նզովեալ եղիցի[8]:

Ը. Եւ ամենայն այր կամ կին կամ մանկունք պատարկացեալք ի գործոց[9], և յայգուն և երեկունն խափանեսցեն զաղօթսն՝ ոչ ժամանելով յեկեղեցի՝ ունկն դնելով սահմանական կարգաց, նզովեալ եղիցի:

1. Բ և Զ. օր. իսկ որ զվերարկուն հանեն եւ զենուն զինքն եւ վաճառեն զմորթն:
2. Բ. օր. անսուրբք անասնոց... եւ զմորթն վաճառեսցեն:
3. Գ. օր. որպէս զէշ շուն ուտիցեն:
4. Բ. Գ. և Զ. օր. որոշեսցին եկեղեցւոյ:
5. Զ. օր. սովորեալ: Բ. օր. չունի:
6. Գ. օր. ապականի ծննդութեան:
7. Գ. օր. եւ ախտակրական արեան:
8. Գ. և Դ. օր. նզովեալ է:
9. Դ. օր. ի գործոյն յեկեղեցին ունկն դնելով այլ ոչ ժամանելով յեկեղեցին եւ սահմանական կարգաց ունկն դնելով:

# Զ

## ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## ՍՐԲՈՅ ԱՌԱՔԵԼՈՅՆ ԲԱՐԴՈՂՈՄԷՈՍԻ [1]

*Գլխաւորք սրբոց առաքելոցն՝ [2] երկոտասան աշակերտքն, միաձայնեցան յազգս ազգս՝ [3] յիջանելն ի նոսա Հոգւոյն սրբոյ ի վերնատանն, երկնագործել [4] տարբերութեամբ լեզուացն հրեղինաց ի ձայն [5] հողմոյ. և ընկալան ձեռնադրութիւն [6] երիցութեան, առնել իշխանութիւն զմեղս թողուլ [7] և ունել, և առնել նշանս և արուեստս [8]. և շնորհել լուծումն ախտից, և բարձումն ցաւոց [9], և հալածումն սատանայի, և քակումն ի մեղաց և ազատութիւն ի ծառայութենէ ապականութեան՝ յազատութիւն փառաց որդւոյն Աստուծոյ, և գնալ ի պատուիրանս [10]*

1. Ա. օր. Վկայաբանութիւն սրբոյն Բարթողոմէոսի առաքելոյն: Բ. օր. Պատմութիւն Բարթողիմէոսի առաքելոյն եւ վկայութիւն կատարման նորա յերկոտասանիցն: Գ. օր. Պատմութիւն վասն քարոզութեան եւ պատմութեան սուրբ առաքելոյն Բարթողոմէոսի:
2. Ա. օր. յաւելու ընտրեալ: Բ. օր. գլխաւորք սրբոց ընտրեալ երկոտասանն: Գ. օր. գլխաւորք սուրբ առաքելոցն ընտրեալ:
3. Ա և Գ. օր. յազգս: Բ. օր. յազգս ազգաց:
4. Բ և Գ. օր. երկնագործել:
5. Ա. օր. ի ձայն հրեղինաց հողմոց:
6. Ա. Բ և Գ. օր. զձեռնադրութիւն:
7. Ա և Գ. օր. թողուլ զմեղս:
8. Բ. օր. արուեստս եւ նշանս:
9. Ա և Գ. օր. շնորհին եւ բարձումն ցաւոց:
10. Գ. օր. ի ճանապարհս:

նորա, և արժանի լինել խոստացելոց պարգևացն, և որ անդ են բարութիւնքն [1]: Եւ ըստ առաջնորդելոյ [2] Հոգւոյն սրբոյ՝ սփռեցան գնացին յազգս ընդհանուր լեզուաց [3] քարոզել զբանն կենաց [4], և լուսաւորել զնոսա ծննդեամբ սուրբ աւազանին, և վերակացութեամբ [5] Հոգւոյն սրբոյ արարչական զօրութեամբ [6] :

Գնաց և երանելի առաքեալն Բարդողիմէոս [7], որ էր մի յերկոտասանիցն [8]. երթեալ մտանէ յիւր վիճակ առաքելական ընտրութեանն [9]. և ի սկզբան քարոզութեանն իւրոյ՝ եկն մտանել նմա ի քաքաքն Եղեմ [10] կոչեցեալ՝ մերձ ի սահմանս [11] Հնդկաց, ընդ Թովմայի առաքելոյ. և անցեալ ընդ չինամէջ քաղաքին՝ նստաւ առ աղբեր մի, յորում աղդմունք գիւթականք [12] հմայեալ [13] կատարէին. յայտնութիւնք [14] գիւաց ի բաջաղանս պատիր խաբէութեան [15] մոլար պաշտաման, ձայնեալ [16] յաղբերն իբրև առ աստուծոյ ումեմն [17]. յորում անդւոջ բազումնուէրք և զոհք մատչէին յանուն աղբերն: Ուստի [18] առաքել-

1. Ա և Գ. օր. բարեացն, որք անդէն պարգևք:
2. Գ. օր. առաջնորդութեանն:
3. Ա. օր. ազգս լեզուաց ընդհանուր: Գ. օր. յիւրաքանչիւր ազգս լեզուաց:
4. Գ. օր. զբանն Տեառն ի ծերանոսս: Ա. օր. յաւելու ի ծերանոսս:
5. Ա. և Գ. օր. վերագրութեամբ:
6. Գ. օր. յարէ նաեւ երանելին Բարթողոմէոս, որ էր յերկոտասանիցն անտի:
7. Ա. օր. գնացեալ եւ երանելին Բարթողոմէոսի առաքելոյ:
8. Բ. օր. երկոտասան առաքելոցն Քրիստոսի:
9. Գ. օր. քարոզութեանն:
10. Ա. օր. Եղեմովն: Բ. օր. Եղոմ: Գ. օր. Եղիմոն:
11. Ա. օր. ընդ սահմանօք: Գ. օր. առ սահմանօք:
12. Ա և Բ. օր. դիւթականք:
13. Բ. օր. հմայեալ:
14. Ա. օր. յայտնութեամբ:
15. Գ. օր. յաւելու զոր պաշտէին:
16. Ա և Բ. օր. ձայնեալ: Գ. օր. ձօնեալ:
17. Բ. օր. ուրեմն:
18. Ա և Գ. օր. սնոտի:

լարանելով՝ իբրեւ այն թէ ինքնիշխանութեամբ ունիցի զըղխումն, եւ ընդ անուցողական[1] զօրութեամբ բուսոց եւ տնկոց եւ սերմանց[2], եւ ազգի ազգի ծառոց[3] եւ զանազան ծաղկանց, համովք եւ հոտովք[4], եւ անուանէին զանուն աղբերն դուստր Նեղոսի: Եւ իբրեւ օր մի լինէր, յորում բազմութիւն քաղաքին հաւանէր ի զոշել, եւ ընծայել ծախս ոսկւոյ եւ արծաթոյ եւ ականց պատուականաց[5], եւ հանդերձս մեծագինս եւ պատուականս[6], եւ զխուցն[7] բարբառ արձակեալ ընդ ակն աղբերն[8] եւ պղպջակաձեւ[9] զջուրն ի վեր մղելով՝ յեռանդն հրոյ բարկութեան[10] հողմոյ սաստիկ հնչմամբ ահ արկանելով լսողացն[11] եւ տեսողացն, ի փայլիւն հրոյ եւ ի հնչիւն հողմոյ[12]. եւ ի լինել արհաւրաց՝ զաղաղակ բարձեալ մեծաձայն եւ ուժգին զոչմամբ կարդային զանուն աղբերն, իբրեւ զաստուած՝ որ կարիցէ օգնել եւ պարգեւս ընդունել[13] ի նմանէ: Իսկ սուրբ առաքեալն կայր հիացեալ եւ զարմացեալ ընդ միտս իւր[14], մեծաւ արտմութեամբ ըմբռնեալ[15] վասն մոլորու-

1. Ա. որ. իբրեւ այնց եթէ յինքեանն ունիցի ինքնիշխանութիւն զըղխումն, եւ ըզ-անուցողական զօրութիւն: Գ. որ. յինքեանն ունիցի ինքնիշխանութեամբ զանուցանողական զօրութիւն:
2. Բ և Գ. որ. սերմանեաց:
3. Ա և Գ. որ. յաւելու՛ն մրգաբերաց:
4. Ա և Բ. որ. յաւելու՛ն գունովք զանազանեալք: Գ. որ. հոտովք եւ գունովք զանազանեալք:
5. Գ. որ. չու՛նի ականց պատուականաց:
6. Բ. որ. պատուականս եւ զեղեցիկս:
7. Բ. որ. յաւելու մեծ անագին:
8. Գ. որ. չու՛նի ընդ ակն աղբերն:
9. Ա և Գ. որ. պղպջաձիգ:
10. Ա և Բ. որ. բռնութեամբ:
11. Ա և Բ. որ. չու՛նին լսողացն:
12. Բ. որ. պակասի ի փայլիւն հրոյ եւ ի հնչիւն (Ա. որ չայլիւն. Գ. որ. չնչիւն) հողմոյ:
13. Գ. որ. չնորհել:
14. Բ. որ. չու՛նի ընդ միտս իւր:
15. Բ. որ. չու՛նի ըմբռնեալ:

թեան [1] Նոյա և աղտեղի [2] գործոյն, զուր աշխատութեանցն և անուղղայ գնացիցն, և անօգուտ ծախիցն [3] և տարապարտ աղապակին. զի ժղորեալ հոլանեալ էին [4] արք և կանայքն իբրև զձձիս և զզազրատեսիլ զեռունս [5] ի ողմուտ վայրս կայտռեալ [6] խլրտէին ի պատիւ աղբերն, ի պատրանս [7] դիւաց կեղծաւորութեան [8]։ Յայնժամ երանելի առաքեալն դիմեաց ի մէջ Նոյա ի վերայ աղբերն. և հանեալ զաղաբողանն՝ զոր արկեալ ունէր զինքեամբ, պարզեալ ձգեաց ընդդէմ ջրոյն, և կարդաց յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի, և ասէր ի ձայն մեծ. Ջուրս այս ցամաքելով ցամաքեսցի, և մի ամենևին կացցէ ունել [9] ոյժ խոնաւութեան։ Եւ առժամայն [10] ցամաքեցաւ [11] վտակն յորդահոս ջրոյն և եղև իբրև զվէմ ապառաժ [12]. և ձայն որոտման հրոյն [13], և փայլիւն կերպարանեալ հողմոյն [14] ի ձև լուսոյ, կորեաւ և դադարեաց [15]։ Եւ դևքն զաղազակ հարեալ [16], ճիչ բարձին մեծակական [17] ողբովք [18], հառաչէին և ասէին. Ով Յիսուս Նազովրե-

1. Գ. օր. յաւելու կուրութեան։
2. Բ. օր. անուղղայ։
3. Բ. օր. չունի անուղղայ գընացիցն։ Ա. օր. չունի անօգուտ ծախիցն։
4. Ա. օր. աղմկէին։ Բ. օր. չունի հոլոնեալ էին։ Գ. օր. հոլանի լինէին։
5. Բ. օր. որդունս։
6. Բ. օր. չունի կայտռեալ։
7. Գ. օր. պարծանս։
8. Ա. օր. կեղծաւոր խաբէութեանց։ Բ. օր. պատրանօք դիւաց կեղծաւորեալ։
9. Ա. օր. կալցի ոյժ ունել։ Բ. օր. մի եւս կարասցէ ամենեւին ունել ոյժ։
10. Ա և Գ. օր. յաւելուն անդէն։ Բ. օր. նոյնժամայն։
11. Ա և Բ. օր. արգելաւ։
12. Բ. օր. չունի եւ եղեւ իբրեւ զվէմ ապառաժ։
13. Ա. Բ և Գ. օր. հողմոյն։
14. Ա. օր. չունի հողմոյն։ Բ. օր. լուսոյն։ Գ. օր. հրոյն։
15. Բ. օր. չունի ի ձեւ լուսոյ, կորեաւ եւ դադարեաց։
16. Ա. օր. բարձեալ։ Գ. օր. չունի հարեալ։
17. Ա. օր. ճիչ հարեալ մեծաձայն։ Գ. օր. մեծապան։
18. Ա. օր. յաւելու խանչէին։ Բ և Գ. օր. յաւելուն հաչէին։

ցի, մինչև յե՞րբ չտայ տագնապի հառուցանես ի վերայ մեր, և ոչ տաս[1] կալ միում յանդուղս ջր-բոց[2], և ի տեղւոջ բնակութեան մերոյ. յամենայն յերկրէ հալածականս արարեր զմեզ խաչիւ քով[3], և այժմ ի ձեռս աշակերտաց[4] քոց նեղեալ հալածես, և չարչարես և վտանգես յառաջ քան զժամանակն՝ որ գալոց է ի վերայ մեր։ Յայնժամ սուրբ առա-քեալն ասացեալ[5] ի նոսա՝ ասէ. Ո՜վ պիղծք, դըժ-նեայք և մարդատեացք[6], թշնամիք արդարութեան, և[7] վարդապետք մոլորութեան[8], ահա ասացեմ ի ձեզ յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, մի կարիցէք[9] միում ի տեղւոջս յայսմիկ։ Եւ իսկ և իսկ կորեան և սպառեցան, և ջնջեցան և բարձան ի մի-ջոյ, իբրև զմոմ զի ոչ կարասցէ կալ առաջի հրոյ՝ այնպէս վատնեալ պակասեցան[10]։ Եւ տեսեալ բազ-մակայտ ամբոխին դարձան առ առաքեալն մե-ծաւ ահիւ ըմբռնեալ, անկան առաջի սրբոյ առաքե-լոյն[11] վասն մեծաց սքանչելի իրացն՝ որ գործեցան յայգերն. և կէսքն ընթացեալ շուրջ զկողմամբքն և զտեղեաւն՝[12] հաշակէին զիրացն զայնոցիկ, զմեծ և

1. Ա. օր. յաւելու մեզ։
2. Ա և Գ. օր. ջրոյս այսո-րիկ։ Բ. օր. եւ ոչ տաս մեալ մեզ յաղբերս ջրոյս։
3. Բ. օր. չունի խաչիւ քով եւ այժմ։
4. Ա. օր. աշակերտովք քոյաւք նեղեալ վտանգեալ չարչարես զմեզ յառաջ քան զժա-մանակն որ գալոցն է։ Բ. օր. եւ աշակերտաւքս քո չարչարես զմեզ յառաջ քան զժամանակն որ գալոցն է։
5. Գ. օր. չունի ասացեալ։
6. Ա. օր. դժնդակք, մարդա-խոշոշք։ Բ. օր. եւ ժանտք եւ մարդախոշոշք։
7. Ա և Բ. օր. յաւելուն գտօղք։
8. Գ. օր. չունի վարդապետք մոլորութեան։
9. Ա. օր. յաւելու կալ։ Բ. օր. կալ ի տեղւոջդ յայդ-միկ։
10. Բ. օր. կորեան։
11. Գ. օր. չունի անկան առա-ջի սրբոյ առաքելոյն։ Բ. օր. նորա։
12. Ա. օր. տեղեաւքն եւ զկող-մամբքն այնոքիւք։ Բ. օր. զկողմամբք տեղւոյն այնորիկ։

զզարմանալի զգործն, և Նշանացն հրաշափառագունից որ կատարեցան[1] ի ձեռն առաքելոյն. և զայն ամենեքեան ի տեսիլ[2] ակնչելեացն. քանզի բազում ժամանակս ձայնեալ[3] էին յաղբերն, և զի այն ինչ յական քթթել ցամաքեալ ապառեցաւ յորդահոսք ջրոյն[4]:

Եւ սկսան Նեղել ի ծարաւոյ բազմութիւնք քաղաքին. և առեալ վիրգս ի ձեռն[5] կամէին արկանել ի վերայ առաքելոյն, և հարեալ քարամբքն զմխմեանս սատակէին[6]. և յանդուգն և ի խուռն քարանց ձգելոց[7] սատակեցան[8] ոգիք իբրև երեսուն: Եւ մերձեցեալ սուրբ առաքեալն ի մեռեալսն՝ եդ ձեռն և աղօթս արարեալ ի վերայ Նոցա՝ դարձան ոգիք Նոցա ի Նոսա, և կանգնեցան կացին կենդանիք[9]. և փութացեալ իւրաքանչիւր ոք ի Նոցանէ բերէին[10] զհիւանդս և զնեղեալս յայսոց, և ի պէսպէս ախտից և ի ցաւոց[11], և զանդամալոյծս և և զկոյրս և զկաղս և զմխակողմանիս[12] և զխուլս և զհամերս և զլուսնոտս և զամենեսեան որ Նեղեալ

1. Բ. օր. ճոխականն զմեծ եւ զզարմանալի գործ նշանին որ կատարեցաւ:
2. Բ. օր. ի տեղի:
3. Ա եւ Բ. օր. ձաւնէին: Գ. օր. անգամ ձաւնեալ էին:
4. Ա. օր. ապառեալ պակասեցաւ ցամաքելով յորդաբուղխ ջուրցն: Բ. օր. յական թօթափել ցամաքեցաւ յորդահոս վտակ ջրոյն: Գ. օր. այնչափ յական թօթափել բապառեալ ցամաքեցան յորդահոսանք ջրոյն:
5. Բ. օր. չունի ի ձեռն: Գ. օր. ի ձեռս:
6. Բ. օր. վիրաւորէին:
7. Ա. օր. չունի ձգելոց: Գ. օր. ձգելոյ:
8. Ա. օր. յաւելու ի նոցանէ:
9. Բ. օր. չունի եւ կանգնեցան կացին կենդանիք:
10. Ա. Բ եւ Գ. օր. յաւելուն առ նա:
11. Ա եւ Բ. օր. զնեղեալս ի պէսպէս ցաւոց: Գ. օր. զնեղեալս յայսոց չարաց:
12. Ա. օր. չունի զկաղս եւ զմխակողմանիս: Բ. օր. չունի եւ զանդամալոյծս... ի պէսպէս ցաւս:

էին ի պէսպէս ցաւս[1], և բժշկեաց զամենեսեան[2]։ Յայնժամ սկսաւ քարոզել Նոցա զաւետարանն Մատթէոսի[3] կարգաւ. և լուեալ[4] խնդութեամբ ընդունէին զքարոզութիւն[5] սուրբ աւետարանին։ Եւ եկեալ սուրբ առաքեալն յեզր քաղաքին ի տեղի մի[6] դաշտական յապառաժուտ վայրս, եդ ծունր, եկաց յաղօթս և գոհանայր զշնորհացն Քրիստոսի[7], որ եբաց զմիտս Նոցա իմանալ և լսել[8], և ընդունել զբանն կենաց, և հաւատալ ի[9] Տէր Յիսուս Քրիստոս, որ է ճշմարիտ Աստուած և կեանք յաւիտենականս։ Եւ տարածեալ անդ զնշան խաչին[10], և կարդաց ի ձայն մեծ. և ահա՛ շարժումն և թնդիւն ահեղ[11] սաստկան, և խախտեալ[12] տեղին պատառեցաւ, և բղխեալ աղբիւր ջրոյ[13] յորդաբուղխ քաղցրահամ վտակաց, և շուրջ բակ առեալ հանդարտ և հեզ շարժմամբ, և սկսան[14] ուրախ լինել։ Եւ իջուցեալ զնոսա ի ջուրն[15] մկրտեաց[16], և լուսաւորեաց լուսով[17] Հոգւոյն սրբոյ. և կատարեալ զխորհրդական պատարագն՝ հաղորդեցոյց զնոսա[18] կենդանարար[19]

1. Ա. օր. ախտս:
2. Գ. օր. յաւելու անուշամբ Տեառն Յիսուսի: Բ. օր. բժշկեաց զնոսա:
3. Ա և Գ. օր. Մատթէոսեան: Բ. օր. Մաթէան:
4. Ա. օր. առեալ:
5. Ա. օր. զքարոզ: Բ. օր. զքարոզ կենսաբեր: Գ. օր. լուին զքարոզութիւն սուրբ աւետարանին:
6. Ա. օր. յաւելու տափարակ:
7. Բ. օր. գոհանայր զԱստուծոյ: Գ. օր. Աստուծոյ:
8. Ա. օր. ճանաչել զշնորհսն Աստուծոյ: Բ. օր. չունի եւ լսել եւ ընդունել:
9. Ա. օր ի մի Տէր:
10. Ա. օր. խաչին Քրիստոսի, եւ կարդացեալ ձայնիւ մեծաւ:
11. Ա. օր. ահաւոր:
12. Ա և Բ. օր. եւ բախեալ (Ա. օր. զտեղին) պատառեցաւ տեղին:
13. Ա և Բ. օր. չունին ջրոյ:
14. Ա և Գ. օր. յաւելուն ուրախութեամբ:
15. Ա և Բ. օր. յաւելուն կենդանի:
16. Ա. օր. լուսաւորեաց մկրտութեամբ:
17. Գ. օր. ի նուր:
18. Ա. օր. զնոսա ի մարմին եւ յարիւն Որդւոյն Աստուծոյ: Բ. օր. զնոսա ի մարմնոյ եւ արեանն Տեառն:
19. Ա և Բ. օր. չունին: Գ. օր. կենարար:

*մարմնոյ և արեան որդւոյն Աստուծոյ ի թողութիւն
մեղաց [1], որ է կեանք և կեցուցիչ [2], և հաւատա–
ցուցիչ սուրբ Երրորդութեանն [3]: Եւ կացոյց անդ
երիցունս ի սպանելոյն որ կենդանացան ի ձեռն [4]
սուրբ առաքելոյն, և հաստատեաց [5] զնոսա ի հա–
ւատս ճշմարտութեան:*

*Եւ [6] գնաց ի կողմանս [7] Մարաց և Ելիմացւոց,
և անընդունակ եղեալ ի նոցանէ՝ ոչ կարաց անդ
կատարել զօրութիւնս, բայց սակաւուց ի նոցանէն՝ [8]
որոց քարոզեաց [9] զաւետարանն մատթէոսեան [10]. և
հաւատացին բանին, և թողին զամենայն ինչս աշ–
խարհիս [11], և գնացին զհետ [12] նորա [13] յամենայն
տեղիս ուր և երթայր: Եւ անտի դարձեալ [14] եմուտ
ի Բոստր [15] քաղաք խորին Ասորւոց. և եղև ի մը–
տանել նորա ի քաղաքն՝ [16] բարձեալ բերէին [17] պա–
տանի մի մեռեալ, որդի հազարապետին Բոստրա–
ցւոց, որում անուն ճանաչիւր [18] Անդրոնիկոս, և էր
ամաց երկոտասանից [19]. և բազում լալականք զհետ
նորա փողովք և քնարիւք, և դասք դասք պարուց,*

1. Ա և Բ. օր. չունին ի թո- ղութիւն մեղաց:
2. Ա. օր. սրբոց իւրոց: Բ. օր. մարդկան:
3. Ա և Բ. օր. չունին հաւա- տացուցիչ սուրբ Երրորդու- թեանն:
4. Գ. օր. աղօթից նորա:
5. Ա. Բ և Գ. օր. հաստա- տեալ:
6. Ա և Գ. օր. ել:
7. Բ. օր. ի սահմանս:
8. Ա և Բ. օր. ի սակաւուց:
9. Բ. օր. լուեալ:
10. Ա. օր. արքայութեանն: Բ. օր. չունի:
11. Ա և Բ. օր. որ ինչ յաշ- խարհի:
12. Գ. օր. զկնի:
13. Բ. օր. եւ շրջէին ընդ նմա ուր եւ երթայր:
14. Բ. օր. գնացեալ: Գ. օր. յարձակեալ:
15. Ա և Գ. օր. Բոստր: Բ. օր. Բոստրիա:
16. Ա. օր. ընդ դուռն քաղա- քին: Բ. օր. չունի ի քա- ղաքն:
17. Ա և Բ. օր. տանէին:
18. Ա. օր. էր:
19. Բ. օր. չունի եւ էր ամաց երկոտասանից:

որ կոծելով մրմնջէին և յորդահոս արտասուս[1] հեղուին[2] ի վերայ պատանւոյն[3]։ Նոյնժամայն ընթացեալ[4] առաքեալն ընդ մէջ հրապարակին ձգեաց զձեռն իւր՝ մերձեցաւ ի դագաղն ուր կայր պատանին[5] մեռեալ՝ և ասէ[6]. Պատանի դու, քեզ ասեմ, արի կաց[7] յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Եւ առժամայն կանգնեցաւ[8] մեռեալն. և որ բարձեալ տանէին՝ զանգի առին։ Եւ հայեցեալ բազմութեանն ընդ երեսս սուրբ առաքելոյն, և տեսին զի հուր ցոլացաւ[9] ի բերանոյ սուրբ առաքելոյն[10], և մտանէր ի բերան պատանւոյն, և[11] կենդանացաւ. և աղաղակեցին միաբան[12] և ասեն. Աստուած ոմն երևեցաւ[13] ի միջի մերում. և բուռն հարեալ երիտասարդացն զսրբոյ առաքելոյն, բարձին ի վերայ բազկաց[14] իւրեանց. և այլքն զոհս և պատարագս փութացուցանէին[15]։ Իսկ սուրբ առաքեալն վազեաց[16] ի ձեռաց նոցա, և փախեաւ[17] յամբոխէ անտի, աղաղակեաց և ասէ. Ես ծառայ Տեառն ամենակալի եմ և որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի և Հոգւոյն[18] սրբոյ՝ յորոյ անուն[19] կենդանացաւ պատանիդ[20] այդ մեռեալ. և առաքեցայ ես առ ձեզ քարոզել զաւետարանն արքայութեան[21],

1. Ա. օր. յաւելու արտասու-րագոյ։ Բ. օր. փոխս ար-տասուաց։
2. Գ. օր. արկանէին։
3. Բ. օր. չունի ի վերայ պա-տանւոյն։
4. Բ. օր. սպրդեալ սրբոյ ա-ռաքելոյն։
5. Բ. օր. չունի պատանին։
6. Ա. օր. չունի եւ ասէ... մեռեալն։
7. Բ. օր. չունի արի կաց։
8. Գ. օր. կենդանացաւ։
9. Ա և Բ. օր. ցոլացեալ։
10. Գ. օր. նորա։
11. Ա և Բ. օր. որ։
12. Բ. օր. չունի միաբան։
13. Ա և Բ. օր. գտաւ։
14. Ա. օր. ձեռաց։ Բ. օր. ու-սոց։
15. Գ. օր. մատուցանէին։
16. Բ. օր. զերծեալ։
17. Ա. օր. արտաքոյ։ Բ. օր. չունի եւ փախեաւ յամբոխէ անտի։
18. Ա. օր. յաւելու նորա։
19. Գ. օր. ձեռն։
20. Ա. օր. պատանեակդ։
21. Բ. օր. զարքայութիւնն Աս-տուծոյ։

զի ընկալեալ ձեր զբանն կենաց՝ կեցջիք և դարձջիք յընդունայն[1] պաշտամանէդ ձերմէ[2], զոր պաշտէքդ առ տգիտութեան ձերոյ և անհաւատութեան[3]. և ծանիջիք զմիայն[4] ճշմարիտն Աստուած զՏէր մեր Յիսուս Քրիստոս, որ արար զերկինս և զերկիր, զծով և զամենայն որ ի նոսա: Եւ զրեաց նոցա զմատթէոսեան[5] աւետարանն, զոր[6] առեալ էր օժանդակ ի քարոզութեանն[7]: Եւ[8] մինչև յաւուրս երիս հազիւ լռեցոյց[9] զժողովուրդն[10] ի չզոհելոյ իւր[11]: Յայնժամ առեալ զպատանին՝ մկրտեաց զնա ի լուսաւորութիւն[12] Հոգւոյն սրբոյ ի հուրն հոգևոր[13] և ի մաքրութիւն ջրոյն, հանդերձ հազարապետաւ հարբ մանկանն[14], և ամենայն ընտանեօք նորա և ազգականօք[15]: Եւ կոչեաց զանուն[16] պատանւոյն Մատթէոս՝ ըստ անուան սրբոյ աւետարանչին, և ետ նմա ձեռնադրութիւն յամս ութևտասն առաքելական որոշմանն[17]:

1. Ա և Գ. որ. յաւելուն եւ ի սնոտի: Բ. որ յունայն:
2. Բ և Գ. որ. պաշտամանց ձերոց:
3. Գ. որ. անգիտութեան:
4. Գ. որ. չունի միայն:
5. Բ. որ. զաւետարանն Մատթեան:
6. Ա. որ. յաւելու առաւել:
7. Ա. Բ և Գ. որ. օժանդակ քարոզութեանն (Բ և Գ. որ. իւրոյ) ըստ կանխեցելոյ (Բ. որ. կանխասացելոյ) ընտրութեանն Հոգւոյն սրբոյ:
8. Ա. որ. յաւելու Եւ ի մաքրութիւն ջրոյն հանդերձ հազարապետաւն հարբ մանկանն:
9. Բ. որ. հաւանեցոյց:
10. Ա և Գ. որ. զնոսա: Բ. որ. չունի:
11. Բ. որ. նմա: Ա և Գ. որ. չունին:
12. Ա. որ. ի լուսաւորութիւն աւազանին եւ ի հուր Հոգւոյն սրբոյ: Բ. որ. լուսով սուրբ Հոգւոյն:
13. Գ. որ. հոգւոյն: Բ. որ. չունի ի հուրն հոգևոր:
14. Բ. որ. հարբն իւրով: Գ. որ. չունի:
15. Գ. որ. չունի եւ ազգականօք:
16. Ա. որ. յաւելու նորոգեալ: Գ. որ. զանուն մանկանն:
17. Ա որ. ձեռնադրութիւն առակաւագութեան մինչեւ յամս երեսնամեան ի շնորհս եւ ի յայտնութիւն առաքելական որոշմանն: Բ. որ. ձեռնա-

Իսկ որ էին ելեալ ի քաղաքէն[1] զհետ պատանւոյն, իբրև տեսին զսքանչելին[2], և[3] եթէ հաղորդեալ և ամենայն ազգն[4] հաւատացին ի Քրիստոս՝ բանիւք և նշանօք սուրբ առաքելոյն, եկին և նոքա կամակար[5] յօժարութեամբ, մկրտեցան ի հոգին սուրբ և ի մահ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի ջուրս[6] աւազանին: Եւ էին ի քաղաքին յայնմիկ եօթն բագինք, և էին ի նոսա կուռք կռեալք և քանդակեալք[7] ի նմանութիւն մարդոյ, ի ձև Արեսի[8] և ի չափ Արամազդայ, զոր հաղորդեալ ըստ հրամանի առաքելոյն խորտակեալ կործանեաց[9], և բաշխեաց տնանկաց[10] և կարօտելոց: Եւ[11] բազում զօրութիւնս կատարեաց սուրբ առաքեալն ի վերայ հիւանդաց և ախտացելոց ի պէսպէս[12] ցաւս և ի չարչարանս, և դևս բազումս եհան, և արար հալածական ի քաղաքէն յայնմանէ տեղացն: Եւ ուղղեալ անդ սեղան՝ և եթող զմի ոմն անդ յաշակերտաց իւրոց քահանայա-

դրութիւն սարկաւագութեան մինչ յամս ութեւտասն շնորհքս եւ ընտրութիւն առաքելական որոշմանն: Գ. որ. ձեռնադրութիւն սարկաւագութեան մինչեւ յամս ութեւտասն ի շնորհս եւ յաւանդութիւն առաքելական կոչմանն:

1. Ա. որ. չունի ի քաղաքէն:
2. Ա. որ. զնշանան: Գ. որ. չունի:
3. Բ. որ. Իսկ քաղաքացիքն իբրեւ տեսին թէ հաղորդեալ եւ ամենայն տունն նորա հաւատաց ի Քրիստոս, եկին նոքա կամակար մտօք եւ յօժարութեամբ:
4. Ա. եւ Գ. որ. տունն նորա:
5. Ա. եւ Գ. որ. մտօք եւ:
6. Ա. Բ. եւ Գ. որ. յաւելուն սուրբ:
7. Բ. որ. յաւելու յոսկւոյ: Գ. որ. յոսկի:
8. Բ. որ. արուի:
9. Բ. որ. մանրեաց: Գ. որ. մանրեալ կործանեաց:
10. Բ. որ. չունի տնանկաց: Գ. որ. տկարաց:
11. Ա. եւ Բ. որ. յաւելուն այլ:
12. Գ. որ. ի բազում: Բ. որ. չունի ի պէսպէս ցաւս եւ ի չարչարանս:

նալ նոցա, և զպատանին՝ ըստ [1] ձեռնադրութեանն զոր ընկալաւ ի լոյս Հոգւոյն սրբոյ։

Եւ եղև իբրև հաստատեաց զնոսա ի հաւատս կրօնից սրբութեան [2], ել [3] գնաց յաշխարհն Գերմանիկեցւոց ըստ [4] վիճակի ընտրութեան Հոգւոյն սրբոյ. և եղև ի մտանել նորա անդր՝ ել համբաւ [5] զնմանէ ընդ ամենայն երկիրն [6] ընդ այն. և [7] նշանք և արուեստք որ կատարէին ի ձեռն սուրբ առաքելոյն [8], իբրև զճառագայթս արեգական սփռեալ տարածանէին ընդ ամենայն [9] երեսս երկրին. և փութային ամենեքեան գալ [10] առ նա, և բարձեալ բերէին [11] զհիւանդս [12] ի պէսպէս ցաւս [13], և զօրութիւն Տեառն էր ի բժշկել զնոսա։ Եւ բազումք ի յանցս ճանապարհացն նստէին, և սպասեալ ակն ունէին նմա, որպէս [14] զի յանցանել նորա՝ [15] գոյեն զառողջութիւն հարուածեալքն [16] յախտից հիւանդութեանց [17] և ի տանջանացն դիւականաց [18]։

1. Ա և Գ. օր. զպատանին զոր ընկալաւ (Գ. օր. ընկալան ըստ շնորհաց Հոգւոյն սրբոյ) ձեռնադրութիւն։
2. Բ. օր. կրօնաւորութեան։
3. Բ. օր. եւ։
4. Ա. օր չունի ըստ վիճակի... սրբոյ։
5. Ա. օր. յաւելու նորա եւ քարոզութիւն։
6. Ա. օր. յաւելու ընդ ամենայն աշխարհն։
7. Բ. օր. չունի եւ նշանք... երկրին։
8. Գ. օր. եւ նշանացն եւ արուեստիցն որք կատարէին ի ձեռն սրբոյն որ իբրեւ զճառագայթս արեգական տարածէին ի վերայ երկրի։
9. Ա. օր. ընդ ամենայն աշխարհն։
10. Գ. օր. գնալ։
11. Ա. օր. բերելով։ Գ. օր. բարձեալ բերելով։
12. Ա. Բ և Գ. օր յաւելուն եւ զնեղեալս։
13. Բ և Գ. օր. ախտից։
14. Ամենայն օր. չունին եւ սպասեալ ակն ունէին նմա որպէս։
15. Բ. օր. առաքելոյն։
16. Ա. օր. հարուածոց. Բ. օր. ախտից իւրեանց։ Գ. օր. ցաւոց։
17. Գ. օր. հարուածոց։
18. Գ. օր. չունի դիւականաց։

Եւ եղեւ իբրեւ լուաւ Թագաւոր նոցա զլուր անչափ աքանչելեաց նորա [1], խանդացաւ յոյժ, և տառաքեաց զծառայս իւր և հրամայեաց [2] դնել զնա [3] ի բանդի մինչև յաւուրս հինգ։ Եւ յետ անցանելոյ հինգ [4] աւուրցն նստաւ յատենի հանդերձ մեծամեծօք իւրովք, և գլխաւոր իշխանօք Գերմանիկեցւոց [5], և հրամայեաց ածել զնա։ Եւ իբրև չոգան ի բանտն՝ [6] գտին [7] բազմութիւն չուրջ փակեալ զտեղօքն [8], և լոյս սաստիկ ծագեալ [9] արտաքոյ բանտին՝ [10] իբրև զլոյս [11] արեգական ի միջօրէի, և ահ կալաւ զկոչողսն [12] որ եկեալ էին [13] զսուրբն տանջել յատենի [14] ի տեղի խոշտանգանաց։ Եւ դարձան անդրէն փութանակի ահիւ [15], և պատմեցին Թագաւորին և որք ընդ նմա՝ [16] զմեծամեծ ըսքանչելիսն զոր տեսին [17]։

Յայնժամ յարուցեալ Թագաւորն ցասմամբ մեծաւ [18] և որք ընդ նմա նստէին մեծամեծքն, և [19] հրաման ետուն զի հրկէզ արարեալ զբանդն՝ ընդ

1. Ամենայն օր. չունին նորա։
2. Գ. օր. եղ։
3. Ա. օր. կալեալ զնա հրամայեաց դնել։
4. Ա. օր. չունի հինգ։ Բ. օր. աւուրց հնգից։
5. Բ. օր. Գերմանեցւոց. Ա. օր. յաւելու և դատաւորօք իւրովք։
6. Ա. օր. չունի բանտն։ Բ. օր. անդ։
7. Ա և Բ. օր. գտին։
8. Գ. օր. և իբրև չոգաւ ի տեղին՝ բազմութիւն յոյժ պատեալ էր զերանելեաւն։
9. Ա և Բ. օր. ծաւալեալ։ Ա. օր. յաւելու չուրջ։
10. Գ. օր. զնովաւ։
11. Գ. օր. զճառագայթս։
12. Ամենայն օր. զկոչաւղս։
13. Բ. օր. որ եկեալ էին զերանելին, և պակասի մինչև խոշտանգանաց։
14. Ա և Գ. օր. տանել յատեան։
15. Ամենայն օր. յաւելուն մեծաւ։
16. Ա և Գ. օր. եւ որոց ընդ նմա։ Բ. օր. չունի։
17. Ա. օր. զոր արար։ Բ. օր. չունի։
18. Գ. օր. չի ցասմամբ։
19. Ա. օր. յաւելու յիմարութեամբ։ Բ. օր. յամառութեամբ։ Գ. օր. չի սրտմտութեամբ։

նմին այրեսցեն[1] զսուրբն Աստուծոյ։ Իսկ նա ազօթս առնէր զամենայն աւուրսն ի բանդին, զի գթացեալ Աստուծոյ յարարածս իւր՝ և դարձցին ի մոլորութենէ անտի[2], յոր անկեալ դնէին[3] ի խաւարի անգիտութեան[4] ի խորս կորստեան[5] ի պատրանս սատանայական խաբերայ մոլորութեան[6], զի պաշտէին զարարածս և զգործս ձեռաց[7] իւրեանց[8]։ Եւ մինչ նոքա զայս զմտաւ ածեալ խորհէին[9] զսրբոյն, եղև յանկարծակի աՀեղ որոտումն և ճայթումն յամպոց Հրացան փայլատակմամբք[10], անկան յերկիր և յապուշ կրթեցան միտք նոցա. և եղեն իբրև զանխօս անասունս՝ որ ոչ գոյ ի նոսա իմաստութիւն[11]։ Իսկ սուրբ առաքեալն եկեալ արտաքս ի բանդէն[12] եդ ձեռն ի վերայ միոյ միոյ ուրուք ի

1. Ա և Գ. օր. ապանցեն։ Բ. օր. ապանցի։
2. Գ. օր. չունի։
3. Բ և Գ. օր. էին։
4. Բ և Գ. յաւելուն ընկղմեալ։ Ա. օր. ըմբռնեալ։
5. Գ. օր. յարութեան։
6. Ա. օր. ի պատրանս սատանայի կեղծաւոր խաբէբայից (Գ. օր. չունի խաբեբայ) մոլորութեան։ Բ. օր. չունի։
7. Բ. օր. զձեռագործս։ Գ. օր. զձեռագործս ձեռաց։
8. Ամենայն օր. յաւելուն օտարացեալք ի կենաց անտի Աստուծոյ (Բ. օր. չունի Աստուծոյ) արարչին իւրեանց։
9. Բ. օր. զայն խորհէին։
10. Գ. օր. եղեն յանկարծակի ճայթիւնք յամպոց և Հրացան փայլատակմունք։ Բ. օր. Հրացայտ փայլատակմանց։ Ա. օր. յաւելու և ճարան կուրութեամբ, ի սաստիկ լուսոյն շլացեալք ի փայլատականցն և լքան։ Բ. օր. և ճարան կուրութեամբ շլացեալք ի սաստիկ լուսոյն և լքան։ Գ. օր. և Հրբնկեցութիւնք և շլացեալք եղեն ի սաստիկ փայլատականցն և լքեալք։
11. Ա. օր. զօրութիւն իմաստութեան։ Բ. օր. զօրութիւն և իմաստութիւն։ Գ. օր. իմաստութեան զօրութիւն։
12. Ա. օր. չունի արտաքս։ Գ. օր. չունի ի բանտէն։

*նոցանէն, և կազդուրեցան կացին[1] ի վերայ ոտից իւրեանց[2], և միտք իւրեանց դարձաւ[3] ի Նոսա. և խնդրեցին[4] ի սորոյ առաքելոյն գտանել ողորմութիւն[5], և հայցել[6] զգթութիւն[7] ի Տեառնէ Աստուծոյ, և ընդունել[8] զբժշկութիւն ի վերայ[9] հարուածոցն՝ որ հասին նոցա: Իսկ սուրբն[10] Աստուծոյ ասէ. Որոց բաց են աչք մարմնոյս՝[11] զլոյս աշխարհիս միայն տեսանեն, այլ[12] ոչ զլոյսն ճշմարիտ՝ որ լուսաւորէ[13] զամենայն մարդ որ գալոց[14] է յաշխարհ: Արդ եթէ հաւանիք բանից իմոց[15] և հաւատասջիք քարոզութեան աւետարանին փառաց միածնի որդւոյն Աստուծոյ՝[16] զոր ես ձեզ աւետարանեմ, ընդունիջիք[17] զբժշկութիւն հարուածոցդ՝[18] զոր հայցէք[19] ի Տեառնէ ի ձեռն իմոյ բարեխօսութեան, և կեցցեն անձինք ձեր. և լինիջիք լուսոյն անստուերի ժառանգորդք[20] և անանց[21] կենացն*

1. Գ. օր. կանգնեցան:
2. Բ. օր. չունի ի վերայ ոտից իւրեանց:
3. Ամենայն օր. դարձան:
4. Գ. օր. եւ աղաչէին եւ խնդրէին:
5. Բ. օր. բողոքիւն մեղաց:
6. Ա. օր. խնդրել: Գ. օր. չունի:
7. Բ. օր. չունի եւ հայցել զգթութիւն:
8. Գ. օր. չունի ընդունել:
9. Բ և Գ. օր. զբժշկութիւն հարուածոցն որ հասին (Ա. օր. եհաս) ի վերայ նոցա:
10. Գ. օր. սուրբ առաքեալն:
11. Ա և Գ. օր. մարմնոյ: Բ. օր. մարմնոցն:
12. Բ. օր. այլ դուք ծանէրուք զլոյսն:
13. Ա և Բ. օր. լուսաւոր առնէ:
14. Բ. օր. մարդ եկեալ յաշխարհս:
15. Ա. օր հաւանել բանից իմոց կամիք: Բ. օր. հաւանեալ բանից իմոց: Գ. օր. հաւանել իմոց բանիցս կամիցիք:
16. Գ. օր. նորա:
17. Բ. օր. զի ընդունեսջիք ի Տեառնէ:
18. Գ. օր. չունի հարուածոցդ:
19. Բ. օր. հայցեսջիք: Գ. օր. զոր իմով բարեխօսութեամբ տացէ ձեզ Քրիստոս:
20. Բ. օր. արժանի:
21. Ա. օր. անաղօտ: Գ. օր. չունի եւ անանց կենացն յաւիտենից:

յաւիտենից, զոր որդին Աստուծոյ Յիսուս[1] տացէ ձեզ, եթէ հաւատասջիք յանուն նորա աներկբայ խոստովանութեամբ[2]: Պատասխանի ետուն և ասեն. Հաւատամք յԱստուածն քո, յոր դու հաւատացեալ պատմես մեզ[3]. միայն կեցցեն անձինք մեր, և լուսաւորեսցես զմեզ[4]: Եւ առաքեալն[5] որպէս յամենայն տեղիս, և անդ քարոզեաց զաւետարանն Մատթէոսի, և զմարգարէութիւնն[6] Եսայեայ տեսանողի, և զմեկնութիւն[7] նոցա որ կայր յառակսն, և զճառս[8] խորհնս որ էր ի մարգարէութեանն[9] և ի սուրբ աւետարանի անդ: Եւ անդէն ստիպել սկսան զսուրբ առաքեալն՝ թագաւորքն[10] և մեծամեծքն և նախարարքն, և ասեն. փութա կատարել ի մեզ զքարոզութիւն[11] աւետարանին աւետեաց՝ զորմէ ասացեր մկրտութեամբ հաստանել թողութեան մեղաց և երկնից արքայութեանն, զի եղիցի բժշկութիւն հարուածոցս հասելոց ի վերայ մեր: Արդ մի՛ դանդաղիր զօգուտն[12] որ վասն մերոյ փրկութեանն՝ տալ մեզ, զոր ուսաք բերանով քով, և խրատու պատուհասի՝ որ ժամանեաց մեզ[13]. զի գիտացաք այժմ և ծանեաք եթէ Աստուած քո՝ նա է Աստուած[14], և չիք ոք բայց ի

1. Ա. Բ և Գ. օր. յաւիտեան Քրիստոս:
2. Գ. օր. սրտիւ:
3. Ա. օր. յաւելու եւ մի կորիցուք, միայն զի կեցցեն:
4. Բ. օր. լուսաւորեսցին անձինք մեր: առ Բ և Գ. օր. յաւելուն եւ մի կորիցուք:
5. Ա. Բ և Գ. օր. չունին առաքեալն:
6. Գ. օր. զմեկնութիւն:
7. Բ. օր. առաջնորդութիւն նոցա յառակս:
8. Ա. Բ և Գ. օր. ի ճառս:
9. Գ. օր. ի մարգարէս:
10. Ա և Գ. օր. թագաւորն եւ որ ընդ նմա մեծամեծք եւ նախարարազունք (Գ. օր. նախարարք): Բ. օր. չունի մեծամեծք:
11. Բ. օր. ի մեզ զխորհուրդս կենարար աւետարանին զորմէ: Գ. օր. զխորհուրդ կենարար:
12. Գ. օր. զօգտակարն վասն:
13. Բ օր. չունի եւ խրատու... մեզ.
14. Ա. օր. երէ է՛ Աստուած Աստուածն քո:

նմանէ, և մեք նմա ծառայեսցուք և հնազանդեսցուք[1]. զի նա է Աստուած ճշմարիտ և կեանք յաւիտենական[2] և փրկիչ աշխարհաց։ Յայնժամ[3] սուրբ առաքեալն ած զնոսա ի վտակն որ իջանէր[4] ի փոքր ձորակէ միոջ ի հարաւակողմ կուսէ, և իջուցեալ ի ջուրն[5] մկրտեաց զնոսա. և նոցա բացան աչք և տեսին զՀոգին սուրբ զի[6] շրջէր ի վերայ ջուրցն քաղցր օդով և պարզ լուսով. և լուսաւորեալ[7] զնոսա՝ զգեցուցանէր նոցա զլոյսն իբրև զհանդերձ. և իսկ և իսկ ուղղեաց սեղան, և կերակրեաց զնոսա յերկնաւոր[8] հացէն և յարենէ Որդւոյն Աստուծոյ. և աղօթս արարեալ՝ եդ ձեռն ի վերայ նոցա, զի կացցեն հաստատուն[9] ի հաւատն զոր ընկալան, և լուսաւորեցան ի լոյս Հոգւոյն սրբոյ[10]։ Եւ նոքա աղաչէին զսուրբ առաքեալն լինել առ[11] նոսա, և հովուել զնոսա[12] զի անքակ լիցին ի նմանէ։ Իսկ նա պատասխանեալ ասէ. Եւ այլոց քաղաքաց պարտ է ինձ աւետարանել[13], որպէս ասաց Քրիստոս. Գնացէք[14] յամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն[15] Հօր և Որդւոյ և Հոգ-

1. Բ. օր. չունի եւ հնազանդեսցուք։
2. Ա և Բ. օր. չունին Աստուած։ Ա. Բ և Գ. օր. չունին եւ կեանք յաւիտենական։
3. Ա. օր. Նոյնժամայն։
4. Բ. և Գ. օր. եջանէր։
5. Ա. օր. ի ջուր անդր մկրտութեան։
6. Ա. օր. իջեալ շրջէր։ Գ. օր. իջանէր։
7. Բ. օր. մկրտեալ։
8. Ա. օր. յերկնաւոր զմարմին եւ զարիւն։ Բ. օր. երկնաւոր կերակրովն. չունի զյաջորդան։ Գ. օր. կենարար մարմնով եւ արեամբ։
9. Գ. օր. չունի հաստատուն։
10. Բ. օր. չունի եւ լուսաւորեցան ի լոյս Հոգւոյն Սրբոյ։ Գ. օր. Հոգւով սրբով։
11. Ա. և Բ. օր. ընդ։
12. Ա և Բ. օր. չունին հովուել զնոսա։ Գ. օր. հովուել զնոսա մինչեւ ի մահ։
13. Ա. օր. քարոզել։ Բ. օր. յաւելու զարքայութիւնն։
14. Ա և Բ. օր. յաւելուն աշակերտեցէք զամենայն։
15. Բ. օր. չունի յանուն Հօր եւ... սրբոյ։

ւոյն սրբոյ։ Այդ ինքն[1] Քրիստոս յոր հաւատացէք և լուսաւորեալ[2] կնքեցայք Հոգւով Նորա, Նա եղիցի ընդ ձեզ. և մեք զի յանձն արար մեզ զհեթանոս՝ մի ստունգանեցուք հրամանին Նորա։ Եւ ունկնդիր եղեալ թոյլ ետուն Նմա։

Եւ գնացեալ անտի սրբոյն[3] եհաս[4] յերկիրն Պարթևաց և Մարաց[5] ի Ելիմացւոց և քարոզէր Նոցա զբանն կենաց։ Բազումք ի Պարթևացն[6] դարձան ի Տէր զօրութեանց՝[7] նշանօք և արուեստիւք և պէսպէս բժշկութեամբ, զոր ընկալան ի սուրբ առաքելոյն, զառողջութիւն[8] ախտից ողորմութեամբ և գթութեամբ[9] Տեառն։ Եւ լուսաւորեալ անդ զբազումս, գնաց ի կողմանս[10] Պարսից և Մոգուց, և սկսաւ քարոզել Նոցա զանխորական[11] վարդապետութեանն իւրոյ[12] զմատթէոսեան աւետարանն, և որ ինչ վասն մոգուցն հանդամանք էին՝ եդ առաջի Նոցա։ Եւ հասեալ մինչև ի տեղի պաշտամանն կրակարանի Նոցա[13], զոր պաշտէին օրինօք մոգութեանն, և համբարձեալ զձեռս իւր յարևելս[14] ընդդէմ արեգականն՝ զոր պաշտէին[15], և

1. Բ. օր. չունի ինքն։
2. Ա. օր. եւ կնքեցայքն եւ լուսաւորեցայք։ Բ. օր. լուսաւորեալ կնքեցարուք լիցի ընդ ձեզ։ Գ. օր. լուսաւորեալ մկրտեցայք յանուն նորա։
3. Գ. օր. սուրբ առաքեալն։
4. Ա. օր. եկն։
5. Բ. օր. չունի Մարաց։ Չունի եւ քարոզէր... կենաց։
6. Գ. օր. յաւելու հաւատացին եւ։
7. Ա. Բ և Գ. օր. զօրութեամբ եւ։
8. Գ. օր. բուժումն։
9. Բ. օր. չունի գթութեամբ։
10. Բ. օր. ի սահմանս։
11. Գ. օր. չունի զանխորական։
12. Ա. Բ և Գ. օր. վարդապետութիւնն իւր։
13. Ա. օր. Եւ հասեալ ի տեղի պաշտամանն, մինչեւ ուր էր կրակարանն նոցա։
14. Ա. օր. զձեռս ընդ արեւելս։ Գ. օր. չունի յարեւելս։
15. Բ. օր. յոր ձօնէին։ Գ. օր. չունի զոր պաշտէին։

արգել զնա և զզօրութիւնն ճառագայթից նորա պակասեցոյց[1] մինչև ցվեց ժամ աւուրն։ Եւ նշան յերկնից սիւն հրոյ[2] եկաց ընդ մէջ կրակարանին, յանդիմանել զմոլորութիւն նոցա՝ արհաւրօք և սաստիկ հիացմամբ[3], փոխանակ զի սպաս տանէին Հելիու, և Սեփայ, և Արեսի, և Պոենայ[4]։ Այլ թէպէտ և այնչափ[5] մեծ սքանչելիք և նշանք զարմանալիք ցուցան ի վերուստ, սակայն ոչ զանգիտեցոյց[6] զնոսա դառնալ յերկրպագութենէ տարերցն, և յոր[7] վրիպեալ էին մնոտի առասպելաբանութեամբ բարձրայօն պարծանօք[8]. բայց միայն ոգիք[9] ութ, զոր առեալ[10] լուսաւորեաց, և հանեալ զնոսա ի միջոյ կործանելոցն խուժադուժ[11] ազգին։

Եւ անցեալ[12] գնաց ի Գողթն գաւառ Հայոց, և[13] փութացաւ հասանել[14] ի վիճակ Թադէոսի[15], ըստ հրամանի Հոգւոյն սրբոյ. և քարոզեալ անդ զբանն կենաց, և նոքա ընկալեալ[16] խնդութեամբ և մեծայօժարութեամբ[17] հաւանեցան և հնազանդեցան և լու-

1. Գ. օր. զոր ունէր, մինչեւ ցմեծ ժամ աւուրն։
2. Գ. օր. լուսոյ եկաց ի վերայ (Բ. օր. ի մէջ)։
3. Բ. օր. ճնչմամբ։ Գ. օր. արհաւիրք եւ սաստիկ հիացումն։
4. Ա. օր. եւ Պասեփայ եւ Արեսի եւ Եպեռնեա։ Բ. օր. Հեղոյի եւ Փասեքա։ Գ. օր. Հեղոս եւ Պասեփայ եւ Արեսի եւ Ապեռնեայ։
5. Բ. օր. չունի թէպէտ եւ այնչափ։ Գ. օր. այսչափ սքանչելիք եւ նշանք։
6. Բ. օր. ոչ ինչ հաւանեցոյց։ Գ. օր. ոչ ինչ օգտեցոյց։
7. Բ. օր. որք. Գ. օր. յորս։
8. Բ և Գ. օր. չունին բարձրայօն պարծանօք։ Ա. օր. բարձրացաւ նազանօք։
9. Բ. օր. արք։
10. Գ. օր. յաւելու մկրտեաց եւ։
11. Ա և Բ. օր. յաւելուն բարբարոս։ Գ. օր. ի միջոյ կործանելոցն խուժադուժ բարբարոսացն։
12. Գ. օր. յարուցեալ։
13. Բ. օր. յոր։
14. Գ. օր. մտանել։
15. Բ. օր. յաւելու առաքելոյ։
16. Գ. օր. լուեալ։
17. Բ. օր. յաւելու ընկալեալ։

սուրբեցան մկրտութեամբ [1] աւազանին: Եթող անդ նոցա երիցունս [2] ի մօտոյ անտի՝ որ [3] աշակերտեցան սուրբ առաքելոյն. և բազում զօրութիւնս կատարէր Աստուած ի ձեռն արանցն այնոցիկ յամենայն տեղիս [4], ուր և հասանէին ոտք նոցա. և զբազումս դարձուցին ի Տէր ի սնոտի պաշտամանէն [5], և շնորհք առաքելականք եղեն ի վերայ նոցա:

Ի քսանևիններորդ [6] ամի Սանատրկոյ թագաւորին [7] եմուտ սուրբ առաքեալն Բարդողիմէոս ըստ հրամանի Հոգւոյն սրբոյ ի Հայս, որ ընտրեաց զնա [8] յառաքելութիւն կոչմանն [9] հեթանոսաց. և Թովմայի ըստ վերակացութեան առաջնորդութեանն [10] իւրոյ գրեալ առ նա, զի մի՛ զանց արասցէ զնոքօք, քարոզել [11] զաւետարանն արքայութեան, որպէս և յամենայն տեղիս [12], փոխանակ Թադէոսի առաքելոյն՝ որ էր յեօթանասնից [13] անտի:

Եւ եկեալ սուրբ առաքեալն ի բլուրն Արտաշու [14], հանդիպեցաւ այլ ումն յերկոտասանիցն՝ Յուդա Յակոբեան. և կանգնեցին ի տեղւոջն ուր պատահեցան [15] միմեանց՝ զնշան տէրունական խաչին, և հրաժարեցին ի միմեանց մեծաւ ուրախութեամբ. և գնացեալ [16] Յուդայի յիւր տեղին [17]: Բայց Բարդո-

1. Բ. օր. մկրտեցան լուսաւորութեամբ սուրբ:
2. Ա. Բ և Գ. օր. վարդապետս:
3. Բ. օր. որք աշակերտեալ շրջէին ընդ նմա: Գ. օր. հնազանդեցան նմա:
4. Ա. օր. չունի յամենայն տեղիս:
5. Բ. օր. պաշտպանէն:
6. Ա և Գ. օր. ի քսան եւ ինն: Բ. օր. ի քսաներորդ:
7. Բ. օր. թագաւորութեան Սանատրկոյ:
8. Բ. օր. զնոսա:
9. Բ. օր. չունի կոչմանն:
10. Գ. օր. չունի առաջնորդութեանն:
11. Ա. Բ և Գ. օր. յաւելուն նոցա:
12. Բ. և Գ. օր. չունին որպէս եւ յամենայն տեղիս:
13. Գ. օր յերկոտասանից:
14. Ա. Բ և Գ. օր. Արտաշատու:
15. Ա. օր. հանդիպեցան:
16. Ա և Բ. օր. գնաց:
17. Բ. օր. ի տեղի իւր: Գ. օր. յիւր վիճակն:

դէոս գնացեալ [1] եմուտ ի Հեր և ի Զարևանդ [2] գաւառ Հայոց, և արար նշանս և արուեստս ի վերայ հիւանդաց. և դևս բազումս եհան, և լուսաւորեալ անդ զբազումս և մխիթարեալ բանիւ վարդապետութեամբ սուրբ աւետարանին, և եդեալ նոցա վկայութիւն՝ զի կացցեն հաստատուն ի հաւատսն զոր ընկալան, և հաւատարիմ եղեն [3]. և եդեալ միոյ միոյ ձեռն՝ [4] յանձն արար զնոսա շնորհացն Աստուծոյ: Եւ ինքն գնացեալ եկն յՈւրբխանոս [5] քաղաք Հայոց [6]. և գային [7] առ նա ամենայն նեղեալք որ ի պէսպէս ցաւս և ի տանջանս, և բժշկեաց զամենեսեան [8], և լուսաւորեաց մկրտութեամբ սուրբ աւազանին:

Լուաւ զնմանէ Ոգոհի [9] քոյր թագաւորին Սանատրկոյ, որ էր որդի [10] քեռ Աբգարու, և եկն առ նա ի ծածուկ, և լուեալ ի նմանէ զբանն կենաց՝ [11] հաւատաց ի Տէր մեր Յիսուս Քրիստոս ինքն և իւրքն ամենայն. և զգեցեալ հանդերձ կուսութեան [12], ի բաց մերկացեալ զփառս աշխարհի և աշակերտեալ առաքելոյն՝ շրջէր զհետ նորա: Եւ լուեալ թագաւորին զիրսն որ եղեն [13], և զայրացեալ մեծաւ ցաս-

1. Ա և Բ. օր. եկն եմուտ:
2. Ա. օր. Զարաւանդ:
3. Բ. օր. չունի եւ հաւատարիմ եղեն: Գ. օր. յաւելու եւ հաւատացեալ եւ հաւատարիմ եղեալ:
4. Բ. օր. եւ եդեալ ի վերայ նոցա ձեռն: Գ. օր. եւ եդեալ ի վերայ միոյ միոյ ձեռն:
5. Ա. օր. յՈվրխանոս: Բ. օր. յՈւրբխանոս քաղաք (չունի Հայոց):
6. Ա. Բ և Գ. օր. յաւելուն ի տեղին Բարձ (Ա. օր. Բարձն) կոչեցեալ. եւ էլ հանդէպ զնմանէ ընդ ամենայն երկիրն Հայոց (Գ. օր. ընդ այն):
7. Գ. օր. գնային:
8. Գ. օր. յաւելու բանիւ շնորհացն Աստուծոյ:
9. Ա. օր. Աշագուշի: Բ. օր. Ոգողուշի:
10. Բ. օր. դուստր:
11. Ա. Բ և Գ. օր. չունին զբանն կենաց:
12. Գ. օր. փրկութեան:
13. Ա օր. յաւելու եւ զի ա՛րդ աշակերտեցաւ քոյր իւր: Գ. օր. եւ զի ա՛րդ աշակերտեցաւ նմա քոյր նորա:

մամբ իբրև զգազան կատաղեալ արիւնարբու[1], յղեաց զՀազարապետն Տերենտիոս[2], և որք ընդ նմա[3]. և իբրև եկն առ նա[4] Հազարապետն ըստ հրամանի թագաւորին, և տեսեալ զսուրբն Աստուծոյ՝ գթացաւ ի նա. և նա[5] սկսաւ քարոզել նմա զաւետարանն արքայութեան. և Տէր եբաց զմիտս[6] նորա անսալ[7] բանից նորա: Եւ ինքն անկեալ էր յախտ բորոտութեան. և առեալ զնա սրբոյ առաքելոյն՝ ի գիշերի մկրտեաց. և ահա ամպ լուսաւոր[8] հովանի եղև ի վերայ տեղւոյն[9], և լոյս հրոյ շուրջ փակեալ զաւազանն սրբարար[10]: Եւ եղև ընդ ելանել նորա ի ջրոյն՝ անկաւ ի նմանէ մորթն խաստացեալ[11] իբրև զկեղև ծառոյ և իբրև զաներև որթոյ, և լոյս զգեցաւ իբրև զհանդերձ[12]. և տեսեալ զքանչելիսն որ եղեն, բազումք հաւատացին ի Տէր: Եւ եղև իբրև եհաս լուր սքանչելեացն այն[13] առ թագաւորն, առաւել զայրացեալ անհանդուրժելի[14] բարկութեամբ, և փութացեալ յղեաց զայլ ոմն ի նախարարացն[15], զի

1. Բ. օր. չունի արիւնարբու:
2. Ա. օր. Տերանտիոս: Գ. օր. Տերենտէոս: Ա. Բ և Գ. օր. յաւելուն զի սպանցէ զնա սրով (Գ. օր. չունի) եւ զքոյրն իւր:
3. Ա և Գ. օր. եւ զորս ընդ նմա էին:
4. Բ. օր. առ նոսա: Ա. օր. չունի:
5. Ա. օր. նոյնժամայն:
6. Ա և Բ. օր. զմիտս:
7. Գ. օր. իմանալ:
8. Բ. օր. լուսոյ:
9. Գ. օր. գետոյն:
10. Բ. օր. չունի եւ լոյս հրոյ շուրջ փակեալ (Ա. օր. փակեալ): Գ. օր. փակեալ զնոքօք սրբարար իբրեւ զճառագայթս արեգականն: Բ. օր. ի վերայ սրբարար աւազանին:
11. Գ. օր. ճաստացեալ:
12. Բ. օր. չունի եւ իբրեւ զաներեւ որթոյ, եւ լոյս զգեցաւ (Ա. օր. յաւելու զնոփաւ) իբրեւ զհանդերձ:
13. Ա. օր. սքանչելեացս այսորիկ: Գ. օր. չունի:
14. Բ. օր. չունի անհանդուրժելի:
15. Գ. օր. փութով: Ա. օր. յղել զայլս: Բ. օր. զայլս ի սպասաւորացն:

փութով զրաւ արասցէ [1] նոցա, և մի՛ թուլասցին [2] մնալ աւել անդ նոցա։ Եւ առեալ [3] զսուրբ տապաքեալն հանդերձ կուսիւն և հազարապետովն, և այլովք աշակերտելովքն ածին յատեանն։ Եւ տանջեալ զսուրբ տապաքեալն քքքօք իբրև ժամ մի [4] արք վեց, և համարէին զնա մեռեալ, և քարշեցին ընկեցին զնա արտաքոյ քաղաքին. բայց սուրբ տապաքեալն [5] կայր կենդանի զօրութեամբ և ուժով [6] Տեառն իւրոյ [7] յոր յուսացեալն էր։ Եւ իբրև ժամս երիս [8] այսպէս անկեալ դնէր [9], և շուրջ [10] զնովաւ յոյժ [11] բազմութիւն ի քաղաքէն [12] և յամենայն սահմանաց նորա. և յետ անցանելոյ երից ժամուցն, խլրտեաց ձեռամբն [13], և ձգեալ [14] բուռն հարին զնմանէն, և յարեաւ նստաւ կանգուն, և համբարձեալ զձեռս իւր յերկինս՝ [15] ասէ. Տէր Աստուած [16] Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, մի՛ թողուր ի ձեռանէ զվիճակս զայս խնդրուածովք Թադէոսի և Թովմայի և Յուդայի, և իմ [17] Բարդողոմէոսի, որ հոգացաք [18]

1. Բ. օր. արասցեն։ Գ. օր. զի արագ սպանցեն զնոսա։
2. Ա և Գ. օր. թողացի։ Բ. օր. թողեսցեն (չունի զյաջորդան)։
3. Բ. օր. իսկ զսուրբ տապաքեալն հանդերձ հազարապետաւն եւ այլովք աշակերտեցելովքն (Ա. օր. աշակերտովքն։ Գ. օր. բազմօք)։
4. Բ. օր. չունի իբրեւ ժամ մի։
5. Ա և Գ. օր. սուրբն Աստուծոյ։ Բ. օր. չունի։
6. Գ. օր. չունի։
7. Բ. օր. Տեառն Աստուծոյ որ զօրացոյցն զնա։
8. Գ. օր. ժամս երեքս։
9. Բ. օր. կայր։
10. Ա. օր. յաւելու կային։
11. Բ և Գ. օր. շուրջն յոյժ։
12. Բ. օր. ի քաղաքին։ Գ. օր. քաղաքին։
13. Բ. օր. չունի խլրտեաց ձեռամբն։
14. Բ. օր. շարժեալ զձեռն (Գ. օր. ձգեալ զձեռն) եւ բուռն հարեալ յարուցին զնա եւ նստաւ կանգուն։
15. Ա. օր. չունի յերկինս։
16. Բ. օր. Տէր Աստուած ամենակալ մի՛ թողուր։
17. Ա. օր. չունի։ Բ. օր. իմոյ։
18. Ա. օր. որք հոգացան։

*վասն աշխարհիս [1] այսորիկ. և մի՛ ոտնհար լիցի ի թշնամւոյն [2]. այլ տուր սոցա զշնորհս ողորմութեան [3], եւ դարձցին յերկրպագութենէ [4] կռոցն սնոտեաց, որ զուր [5] և տարապարտ մոլորեալ են ի տգիտութենէ անհաւատութեան։ Եւ տուր սոցա հովիւ և առաջնորդ, զի [6] ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած, և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս. և զիս ընկալ, Տէր իմ, և զհաւատացեալքս ի քեզ պահեա [7]։ Զայս իբրև ասաց շարժեցաւ տեղին, և ահա կամար լուսեղէն եկեալ եկաց ի վերայ սրբոյն. և նորա հայեցեալ ի վեր յերկինս՝ աւանդեաց [8] զհոգին, և բուրեաց հոտ անուշութեան. և սուրբ առաքեալն Թադէոս իբրև այն թէ [9] մարմնաւոր տեսլեամբ գայր ընդ առաջ նորա. և դարձան ընդ նոյն ուստի եկն սուրբն Աստուծոյ [10] Թադէոս։ Եւ ահ կալաւ զամենեսեան, և հաւատացին յաւուր յայնմիկ ոգիք երկու [11] հազարք, և ամենեքեան փառաւոր առնէին զԱստուած ի վերայ եղելոցն. և եկաց լոյսն կամարաձև [12] ի վերայ մարմնոյն աւուրս երկոտասան [13]։*

1. Գ. օր. վիճակիս։
2. Բ. օր. ոտն լիցի թշնամին։ Ա. օր. թշնամին։ Գ. օր. սոցա թշնամին։
3. Բ և Գ. օր. յաւելուն զի զղջացեալ ապաշաւեսցեն (Գ. օր. ապաշխարեսցեն)։
4. Բ. օր. չունի կռոցն։ Գ. օր. յերկրպագութենէ սատանայի։
5. Բ. օր. որ ճոփացար վասն աշխարհիս այսորիկ։ Գ. օր. զոր տարապարտ մոլորեալ են ի տգիտութեան անհաւատութեանն։
6. Ա և Բ. օր. յաւելուն դարձցին եւ։
7. Ա և Բ. օր. յաւելուն հաստատուն ի հաւատս։ Գ. օր. եւ հաստատեա ի հաւատս։
8. Ա. Բ և Գ. օր. փչեաց։
9. Բ. օր. չունի իբրեւ այն թէ։ Գ. օր. իբրեւ թէ։
10. Գ. օր. չունի սուրբն Աստուծոյ։ Ա. օր. սուրբ առաքեալն։
11. Ա և Բ. օր. իբրեւ ութ հազար։ Գ. օր. իբրեւ երեք։
12. Գ. օր. չունի կամարաձեւ։
13. Բ. օր. զաւուրս երկուս։

Իսկ զերանելին Ոգուհի [1] և զՀազարապետն Լապան [2] որով, և զայլս բազումս ընդ Նոսա։ Եւ տեսեալ [3] զմարմին սրբոյ առաքելոյն՝ փոխեցին ի Հանգիստ ի Նմին տեղւոջ, Նոյնպէս [4] և զայլոց վկայիցն [5] ի փառս ամենասուրբ Երրորդութեանն [6]։ Իսկ իրբև [7] եղև որոտումն՝ լուան խուլքն և բժշկեցան, տեսին կոյրք և լուսաւորեցան, և Համերքն խօսեցան, և ամենեքեան [8] յիւրաքանչիւր ախտից բուժեցան. որք Հաւատացին ի Տէր մեր Յիսուս Քրիստոս [9] ի ձեռն սրբոյ առաքելոյն Բարդուղիմէոսի։ Եւ Համբարձեալ զձեռս իւրեանց միաբան Հաւատացելոցն, ի մի բերան փառաւորէին [10] զՏէր մեր Յիսուս Քրիստոս. ընդ որում Հօր և Հոգւոյն սրբոյ [11] վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

1. Ա. օր Աշագուշի։ Բ. օր. Ոգողուշի։ Գ. օր. Աշգուշի։
2. Ա. Բ և Գ. օր. սպանին։
3. Ա. Բ և Գ. օր. առեալ։
4. Գ. օր. չունի Նոյնպէս։
5. Բ. օր. զայլ սրբոցն։
6. Գ. օր. չունի ի փառս ամենասուրբ Երրորդութեանն։ Ա և Բ. օր. փառաւորելով զՀայր եւ զՈրդի եւ զսուրբ Հոգին այժմ եւ միշտ եւ յաւիտեանս ամէն։ Աւարտի աստ Բ. օր։
7. Գ. օր. յաւելու. Եւ եղեւ որոտումն եւ սաստիկ արհաւիրք եւ լոյս մեծ ծագեաց ի վերայ գերեզմանի առաքելոյն եւ բազումք Հաւատացին ի Տէր։ Իբրեւ եղեւ...
8. Գ. օր. յաւելու ամենեքեան որ էին ի պէսպէս ցաւս յիւրաքանչիւր։
9. Ա և Գ. օր. չունին Յիսուս Քրիստոս։
10. Գ. օր. զՀայր եւ զՈրդի եւ զՀոգին սուրբ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից։
11. Ա. օր. սրբոյ Հոգւոյն փառք եւ պատիւ յաւիտեանս ամէն։

# ԱՅԼ ՕՐԻՆԱԿ ՀԱՄԱՌՕՏ

## ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## ՍՐԲՈՑՆ ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍԻ ԵՒ ՅՈՒԴԱՅԻ

## ԱՌԱՔԵԼՈՑՆ ՔՐԻՍՏՈՍԻ

*Գլուխն ամենեցուն Քրիստոս Աստուած մեր, ընտրեաց երկոտասան առաքեալս և առաքեաց զնոսա քարոզել զաւետարանն արքայութեան ընդ ամենայն տիեզերս. գնաց և սուրբ առաքեալն Բարդողիմէոս ի Խորասան Պարսից, և մտեալ ի քաղաքն Եզեմն, նստաւ առ այրերն, յորում ազգմունք դիւականք կատարէին. և իբրև Աստուծոյ բազում նուէրք և զոհք մատչէին յանուն այրերն. որք և առասպելաբանէին թէ ինքն յինքենէ բղխէ, և անուցանէ զամենայն բոյս և զտունկս ծառոց մրգաբերաց. և անուանէին զաղբիւրն զուստր Նեղոսի, և դիւացն բարբառ արձակեալ ընդ ակն այրերն, և պղպջաձև զջուրն ի վեր մղելով որպէս զեռանդ հրոյ և բանութեամբ հողմոյ սաստիկ հնչմամբ, ահ արկանէ տեսողացն և լսողացն. և ի լինել արհարացն զաղաղակ բարձեալ մեծաձայն, և կարդային զանուն այրերն որպէս զաստուած որ կարիցէ օգնել նոցա: Իսկ սուրբ առաքեալն Բարդողիմէոս կայր հիացեալ ընդ միտս իւր մեծաւ տրտմութեամբ վասն մոլորութեան նոցա: Յայնժամ սուրբ առաքեալն հանեալ զաղաբողնն իւր, այսինքն զփիլոնն, զոր արկեալ ունէր զինքեամբ, և պարզեալ ձգեաց ընդդէմ այրերն և կարդաց զանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի ասելով. Ջուրս այս ցամաքելով ցամաքեսցի: Եւ նոյնժամայն արգելաւ յորդառատ վտակ ջուրցն, և եղև տեղին իբրև ցապառած. և ձայն որոտմանն*

և փայլիւնն կորեաւ։ Յայնժամ դեւքն զաղաղակ բարձեալ մեծակական ողբովք ճչելով հառաչէին և ասէին. Ով Յիսուս Նազովրեցի, մինչև յե՞րբ ոչ տաս մեզ թոյլ կալ յանդունդս ջրոց։ Իսկ սուրբ առաքեալն սաստեաց ի նոսա և ասէ. Ով թշնամիք արդարութեան, մի՛ կարասջիք կալ և մնալ ի տեղւոջս յայսմիկ։ Եւ ընդ ասելն զայս սուրբ առաքելոյն, սատակեցան և կորեան ի միջոյ, որպէս հալի մոմ առաջի հրոյ։ Զայն տեսեալ բազմակոյտ ամբոխին, ահիւ մեծաւ անկան առաջի սուրբ առաքելոյն ասելով. Ողորմեաց մեզ, սքանչելի այրդ և ծառայդ Աստուծոյ բարձրելոյ։

Եւ իբրև սկսան նեղել ի ծարաւոյն, որք առին զվէմս ի ձեռս և կամէին քարկոծել զառաքեալն և հարեալ զմիմեանս վիրաւորեցին, յանդուգն և ի խուռն քարանցն ձգելոց սատակեցան ի նոցանէ ոգիք երեսուն։ Եւ սուրբ առաքեալն մերձ կացեալ մեռելոցն, և կարդաց ի վերայ նոցա զանունն Քրիստոսի, և առժամայն դարձան ոգիք նոցա և կենդանացան։ Զայն իբրև տեսին փութացան ամենեքեան բերել առաջի նորա զամենայն հիւանդս և զնեղեալս ի պէսպէս ցաւս, և նոյնժամայն բժշկեաց զնոսա։

Եւ սկսաւ քարոզել զաւետարանն Մաթէոսի կարգաւ զամենայն. և զհանգամանս[1] մոգուցն մեկնէր առաջի նոցա, և նոքա ընկալան և հաւատացին ի Քրիստոս Աստուած։ Յայնժամ առեալ զնոսա սուրբ առաքեալն և ել արտաքոյ քաղաքին՝ ի տեղի մի դաշտային և ապառաժուտ. և անդէն ծունր եդեալ գոհանայր զԱստուծոյ որ եբաց զմիտս նոցա ընդունել զբանն կենաց։ Եւ արարեալ անդ զնշան սուրբ խաչին և կարդաց ի ձայն մեծ զանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և ահա եղև շարժումն և որոտումն ահեղ թնդման. և պատառեցաւ տեղին ուր հասին ծունկք սուրբ առաքելոյն, և բղխեաց աղբիւր յորդառատ ջրոյ քաղցրահամ վտակաց, և շուրջ բակ առեալ հանդարտ և հեզ շարժմամբ։

1. յօր. համագամանս։

Յայնժամ սկսան ամենայն բազմութիւն ամբոխին ուրախութեամբ օրհնել զԱստուած և փառաւորել զսուրբ առաքեալն Նորա։ Իսկ Բարդողիմէոս իջոյց զնոսա ի ջուրն և մկրտեալ լուսաւորեաց զամենեսեան ի Քրիստոս անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. և պատարագեալ զփրկական խորհուրդն, հաղորդեաց զնոսա ի պատուական մարմնոյ և արեան Որդւոյն Աստուծոյ։ Եւ ձեռնադրեաց նոցա քահանայս և սարկաւագունս ի մեռելոց անտի որք կենդանացան, և հաստատեաց զնոսա ի հաւատս Քրիստոսի։

Եւ ապա ել և գնաց ի կողմանս Մարաց և Իլամացւոց, և անընդունակ եղեալ ի նոցանէ, ոչ կարաց անդ կատարել զօրութիւնս. բայց ազիք ութ հաւատացին բանի Նորա, և թողեալ զամենայն ինչս, գնացին զհետ Նորա և շրջէին յամենայն տեղիս ընդ Նմա։

Եւ եկն գնալ սուրբ առաքելոյն ի Բասար քաղաք խորին Ասորւոց. և ի մտանելն Նորա ընդ դուռն քաղաքին, և ահա ելանէր մեռեալ պատանի մի, որդի հազարապետին, և բազում լալականք զհետ Նորա փողովք և քնարիւք։ Յայնժամ սպրդեալ սուրբ առաքեալն եմուտ ի մէջ լալականացն և ձգեալ զձեռն իւր մերձեցաւ ի դագաղն ուր կայր մեռեալ պատանին, կալաւ զձեռանէ Նորա և ասաց. Պատանի դու, քեզ ասեմ, արի կաց յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. և առժամայն դարձաւ ոգի Նորա և կենդանացաւ։ Իսկ որք բարձեալ տանէին, զանեղի առին. հայեցեալ ամբոխին ընդ երեսս սուրբ առաքելոյն, և տեսին զի հուր ցոլացեալ ի բերանոյ Նորա և եմուտ ի բերան պատանւոյն։ Յայնժամ միաբան աղաղակեցին ամենեքեան, թէ Աստուած ոմն երևեցաւ ի միջի մերում. և այլք ասէին, թէ աստուածք նմանեալ մարդկան իջին առ մեզ. և բուռն հարեալ երիտասարդացն, բարձին զԲարդուղիմէոս ի վերայ բազկաց իւրեանց, և այլք զօհս և պատարագս մատուցանէին։ Եւ սուրբ առաքեալն վազեաց ի ձեռաց նոցա, փախեաւ յամ-

բոխէ անտի, աղաղակեաց և ասաց. Ես ծառայ եմ Աստուծոյ և Որդւոյ Նորա Յիսուսի Քրիստոսի, յորոյ անուն կենդանացաւ պատանիդ: Եւ քարոզեաց նոցա զՄաթէոսեան աւետարանն, զոր առեալ էր օժանդակ առաքելութեան իւրոյ. և զերիս աւուրս ուսուցանելով նոցա զբանն Աստուծոյ, և հազիւ լռեցոյց զնոսա ի գոհելոյ նմա: Եւ առեալ զպատանին մկրտեաց, և անուանեաց զնա Մաթէոս, յանուն աւետարանչին, և օրհնեաց զնա սարկաւագ, զի էր ամաց երկոտասանից: Մկրտեաց և զհազարապետն ամենայն ընտանեօքն իւրովք. և զքաղաքն ամենայն շինեաց եկեղեցիս և կարգեաց քահանայս, և հաստատեաց զնոսա ի հաւատս Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

Եւ ելեալ գնաց յերկիրն Գերմանիկեցւոց. և եղև ի մտանել նորա անդ, ել համբաւ զնմանէ ընդ ամենայն երկիրն ընդ այն, և բերէին առ նա զամենայն հիւանդս և զնեղեալս ի պէսպէս ցաւս. և զբազում ցաւագնեալս ի յանցս ճանապարհաց դնէին, զի գոնէ ընդ անցանելն առաքելոյն զոյգն զառողջութիւն. և զօրութիւն Տեառն էր ի բժշկել զնոսա ընդ ամենայն տեղիս: Եւ անդ քարոզեաց զաւետարանն Մաթէոսի և զմարգարէութիւն Եսայեայ, և այնու լուսաւորեալ հաստատեաց զնոսա ի հաւատս Քրիստոսի:

Եւ անտի ել գնաց յերկիրն Պարթևաց և Մարաց, և անդ քարոզեաց զՔրիստոս. և արար բազում սքանչելիս, յորոց և բազումք հաւատացին ի Քրիստոս, և ընկալան զառողջութիւն ախտից ողորմութեամբ Տեառն:

Եւ անտի դարձեալ գնաց ի կողմանս Պարսից և Մոգաց. և երթեալ ի տեղի պաշտաման կրակարանի նոցա. և համբարձեալ զձեռս իւր յարևելս ընդդէմ արեգականն յոր ձօնէին՝[1] արգել զնա և զճառագայթս նորա խաւարեցոյց մինչև ցվեց ժամ աւուրն, վասն որոյ բազումք հաւատացին ի Քրիստոս, և լուսաւորեցան մկրտութեամբ սուրբ աւազանին:

1. յոր. ձանէին:

Եւ անտի անցեալ սուրբ առաքեալն գնաց ի Գողթն գաւառ Հայոց. և ըստ հրամանաց Հոգւոյն սրբոյ եմուտ ի վիճակն Թադէոսի սուրբ առաքելոյն. որք ընկալան հաւատով զքարոզութիւն աւետարանին, և լուսաւորեցան ի նմանէ շնորհօք մկրտութեանն:

Ի քսան և եօթն ամին թագաւորութեանն Սանատրկոյ, եմուտ սուրբ առաքեալն Բարդողիմէոս ի Հայս, պաշտանօք Թումայի առաքելոյն, որ գրեաց առ նա մինչ էր սուրբն Բարդողիմէոս ի Խորասան: Քարոզեաց զաւետարանն Քրիստոսի փոխանակ Թադէոսի եղբօրն Թումայի, որ էր յեօթն աշակերտացն մի. և ինքն Թադէոս յընկերաց սրբոյն Ստեփանոսի: Եւ եկեալ առաքեալն Բարդուղիմէոս և քարոզեաց ի Հայս ի բազում տեղիս: Եւ յերթալն ի Սալամաստ, հանդիպեցաւ նմա Յուդա Յակոբեանն, որ էր մի յերկոտասանիցն գլխաւորացն: Եւ յերթալն Բարդողիմէոսի ի յԱղբակ, տեսեալ զմիմեանս, ողջագուրեալ համբուրեցին զիրեարս և յոյժ ուրախացան: Եւ կանգնեցին ի տեղւոջն ուր պատահեցան միմեանց՝ զնշան տէրունական սուրբ խաչին, ի վէմն որ անդ կայր. և ապա հրաժարեցան ի միմեանց մեծաւ ուրախութեամբ. և գնացեալ Յուդա յՕրմի քաղաք Հայոց: Այս Յուդաս Ղեբէոսն է, որ անուանեցաւ Թադէոս. և կոչի Յուդա Յակոբեան: Սա որդի էր Յովսեփայ աստուածահօրն և եղբայր Յակոբայ Տեառն եղբօրն. վասն որոյ ասի Յուդա Յակոբեան. սա գնաց ի քաղաքն յՕրմի և անդ կատարեցաւ: Իսկ Բարդողիմէոս գնաց ի Սալամաստ և անդ քարոզեաց զբանն կենաց. և ապա եկն անտի յՕրբանոս քաղաքն՝ ի տեղին որ կոչի Բարմ և այժմ ասի Աղբակ: Եւ եկեալ համբաւ զնմանէ ընդ ամենայն երկիրն ընդ այն. և գային առ նա ամենայն հիւանդք որ նեղեալ էին ի պէսպէս ցաւս ախտից. և նա ողջացուցանէր[1] զամենեսեան և լուսաւորէր զնոսա մկրտութեամբ սուրբ աւազանին:

1. յօր. ողջացեն:

Լուաւ զնմանէ Ագուրհի քոյր թագաւորին Սանատրկոյ, որ էր քեռորդի մեծին Արգարու, եկն առ նա ի ծածուկ և հաւատաց ի Քրիստոս. և մկրտեցաւ ինքն և իւրքն ամենայն, և աշակերտեալ որդոյ առաքելոյն, և շրջէր զհետ նորա։ Զոր լուեալ թագաւորն զայրացաւ ցասմամբ մեծաւ և լցեալ զհազարապետն Տերենտիոս զի սպանցէ զքոյրն իւր և զառաքեալն և զորս ընդ նմա։ Իբրև եկն հազարապետն և տեսեալ զուրբն Աստուծոյ զթացաւ ի նա. և նա սկսաւ քարոզել զաւետարանն Աստուծոյ. և Տէր երաց զսիրտ նորա անսալ բանից նորա և հաւատալ ի Քրիստոս. և էր նա անկեալ յախտ բորոտութեան։ Եւ առեալ զնա սուրբ առաքեալն մկրտեաց ի գիշերի. և ահա ամպ լուսաւոր հովանի եղև ի վերայ տեղւոյն, և լոյս հրոյ շուրջ պատեալ զսրբարար աւազանաւն։ Եւ ընդ ելանելն նորա ի ջրոյն, անկաւ ի նմանէ մորթն խտացեալ. և բազմաց զայն տեսեալ հաւատացին ի Քրիստոս. վասն որոյ բարկացեալ թագաւորին, ետ ածել զսուրբ առաքեալն յատեանն, և տանջեցին զնա յերկար՝ զալար բրօք արք վեց, մինչ զի համարէին մեռեալ, և քարշեալ ընկեցին զնա արտաքոյ քաղաքին։ Իսկ նա կայր կենդանի շնորհօքն Քրիստոսի. և այնպէս անկեալ զնէր ժամս երեք. և ժողովեալ կային շուրջ զնովաւ բազմութիւնք հաւատացելոցն. և յետ երից ժամուց յարուցեալ նստաւ կանգուն, և տարածեալ զձեռս իւր յերկինս և ասաց. Տէր Աստուած, մի թողուր զվիճակս զայս ի ձեռաց քոց, բարեխօսութեամբ սուրբ առաքելոց քոց Թադէոսի և Յուդայի Սիմոնի և Թովմայի և իմոյս Բարդուղիմէոսի, որ հոգացաք վասն աշխարհիս այսորիկ. Մի անտես առներ զսոսա, այլ տուր սոցա հովիւ և առաջնորդ, զի դարձցին ի մոլորութենէ և ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս։ Եւ յարուցեալ եկաց ի վերայ ոտից իւրոց և սկսաւ քարոզել նոցա զբանն կենաց. զոր կալեալ անհաւատիցն ընկեցին յորսայս և մորթեալ քերթեցին զկաշին և տիկ հանին յանձնէն. և

նա կեայր կենդանի դեռ եւս շնորհօքն Քրիստոսի և ոչ դադարէր ի քարոզելոյ զբանն կենաց։ Եւ յետ այնորիկ արկին զնա ի բանտ և բազումք մտանէին առ նա և լսէին զբանն կենաց. ընդ որ մոլեալ Սանատրուկ արքայ և ետ զնա ի խաչ հանել. և անտի ևս ոչ մեռաւ, այլ մնայր կենդանի զօրութեամբն Քրիստոսի։ Եւ ապա հրամայեցաւ վեց արանց խստասրտաց հարկանել զնա քքով, որ է ուռագակուռ գանիչ. և այնչափ հարին զսուրբ առաքեալն՝ մինչև բազմաց իսկ ասել թէ մեռաւ, և թողին այնպէս և գնացին. բայց հաւատացեալքն կային մերձ առ նմա։ Եւ յետ երկուց ժամուց ձգեալ զձեռն իւր և յարուցեալ նստաւ. և սկսաւ աղօթել յերկար, և ընդ աղօթականն բանիցն ասաց, թէ և զիս ընկալ Տէր և զհաւատացեալս ի քեզ պահեա հաստատուն ի հաւատս։

Եւ զայս իբրև ասաց, շարժեցաւ տեղին և կամար լուսեղէն կապեցաւ ի վերայ սրբոյն. և նա հայեցեալ ի վեր փչեաց զհոգին. և առժամայն բուրեաց հոտ անուշութեան և բուրումն քաղցրութեան։ Եւ սուրբ առաքեալն Թադէոս որպէս թէ մարմնաւոր տեսլեամբ գայր ընդ առաջ նորա, և զայն տեսեալ ամենեցուն սքանչացան, և հաւատացին յաւուրն յայնմիկ ոգիք ութ հազար. և մեծապէս փառաւոր առնէին զԱստուած ի վերայ եղելոցն։ Եւ եկաց սիւն լուսոյ կամար ի վերայ սուրբ մարմնոյն զաւուրս երկոտասան։

Իսկ զերանելի քոյր թագաւորին զԱգրուհի և զհազարապետն Տերենտիոս ապանին սրով, և զայլսն զորս ընդ նոսա։ Եւ առեալ հաւատացելոց զմարմին սուրբ առաքելոյն և թաղեցին ի նոյն տեղին, նոյնպէս և զայլ վկայիցն։

## ԳԻՒՏ ՆՇԽԱՐԱՑ

## ՍՐԲՈՑ ԱՌԱՔԵԼՈՑՆ ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍԻ [1]

Յամս Յազկերտի փոքու, Պարսից արքայի, այր մի անուն Մարութայ, ազգաւ ասորի, քրիստոնեայ ճշմարիտ, բարեպաշտօն [2] և վկայասէր. այր սքանչելի փիլիսոփայական ուսմամբ [3], առաւել [4] տեղեակ նորոց կտակարանաց [5] քրիստոսատուր աւետեաց աւետարանին, նախանձաւոր վարուց սրբութեան, որ և արժանի եղեւ ի վերին [6] շնորհացն առնել նշանս եւ արուեստս ի վերայ հիւանդաց, և իւրաքանչիւր ցաւոց շնորհէր [7] առողջութիւն յամենայնի [8]: Սա խնդրեաց [9] յարքայէ շինել արքայական [10] քաղաք Մարտիրոսաց, Նփրկերտ կոչեցեալ, որպէս կայ ի պատմութեան իւրում: Եւ ժողովեաց հաւաքեաց անդ գնչխարս մարտիրոսացն, զորս եգիտ ի Պարս և ի Հայս [11] և յԱսորիս, երկերիւր և եօթանասուն [12] հազար, և եդ ի ներքս ի քաղաքին՝ զոր շինեաց [13] յանուն վկայիցն: Եւ եղեւ խնդիր [14]

1. Ա. օր. Գիւտ նշխարացն Բարթողոմէոսի:
2. Բն. յաւելու ճշմարիտ:
3. Ա. օր. չունի փիլիսոփայական ուսմամբ:
4. Ա. օր. յաւելու հմուտ եւ:
5. Ա. օր. չունի նորոց կտակարանաց:
6. Ա. օր. վերին:
7. Ա. օր. շնորհել:
8. Ա. օր. չունի յամենայնի:
9. Ա. օր. խնդրեալ ... շինեաց:
10. Ա. օր. չունի արքայական:
11. Ա. օր. չունի եւ ի Հայս:
12. Ա. օր. ութսուն:
13. Ա. օր. չունի զոր շինեաց:
14. Ա. օր. ի խնդիր:

վասն Բարթողոմէոսի առաքելոյ[1], և բազում ցանկութեամբ եկ ի Հայս և խնդրեաց[2] զտեղի կատարման նորա. և եգիտ զնա վկայեալ ի Ցորխանոս քաղաք ի Հայս՝ ի տեղին որ կոչի Բարմ: Եւ խնդրեալ զտեղի կատարման նորա, վասն զի անուանեալ էր տեղին յանուն սրբոյ առաքելոյն. և հասեալ անդ արար աւուրս երկոտասան: Եւ զի էին նշխարք սրբոյ առաքելոյն[3] ի պահեստի, ծածկեալ ի ներքըս[4] ի բեմի անդ[5], և ոչ կարէր համարձակ[6] և յայտնի լնուլ զփափագումն տենչմանն: Ապա զաւուրս երկոտասան անսուաղ անցուցեալ[7] զցայգ և զցերեկ մեծաւ աշխատութեամբ, և յաղօթս ապաւինեալ երկու ճգնաւէր[8] արամբք, որ ընդ իւրն[9] էին, և խնդրեաց ի Տեառնէ զի լուիցէ աղօթից նոցա, և յայտնեսցէ նոցա[10] և ցուցցէ զտեղին՝ ուր[11] սուրբ նշխարքն իցեն, և լցցէ զբարեպաշտութիւն ցանկութեան նոցա, առանց խռովութեանց աշխարհին[12] Հայոց: Եւ Տէր լուաւ աղօթից նոցա, զի զկամս երկիւղածաց իւրոց առնէ Տէր, և աղօթից նոցա լսէ և կեցուցանէ զնոսա:

Եւ զկնի երկոտասան աւուրն, յանկարծակի եղեւ շարժումն ի մէջ գիշերին, և պատառեցաւ տեղին՝ յորում կայր գանձն աստուածային[13], և լոյս սաստիկ ընդ փապ[14] պատառուածին արտաքս հանէր[15]: Իսկ երանելին Մարութայ մեծաւ երկիւղիւ և ցնծու-

1. Ա. օր. յաւելու Հայոց մեծաց:
2. Ա. օր. չունի խնդրեաց... առաքելոյն:
3. Ա. օր. չունի առաքելոյն:
4. Ա. օր. չունի ի ներքս:
5. Ա. օր. յաւելու որ չէր անուն շինեալ էր եկեղեցին:
6. Ա. օր. համարձակեալ:
7. Ա. օր. անսուաղութեամբ անցուցանէր:
8. Ա. օր. երկու եւս ճգնաւոր:
9. Ա. օր. իւր. եւ խնդրէին ի Քրիստոսէ:
10. Ա. օր. չունի նոցա:
11. Ա. օր. ուր կային նշխարք սրբոյն:
12. Ա. օր. աշխարհին:
13. Ա. օր. գանձ աստուածութեան ծածկեալ:
14. Ա. օր. լոյսն ընդ փապար:
15. Ա. օր. ելանէր:

թեամբ[1] տարածեալ զնափորան, և ձգեալ զձեռն իւր ի ներքս ի տեղին[2] ընդ պատառեալ փայտն, և ժողովեալ զնշխարսն ի կապերտն, և թողեալ ի որբայն[3] մասն ինչ. և նոյնժամայն ծածկեցաւ տեղին որպէս[4] զառաջինն, և ոչ ոք գիտաց զիրան որ եղեն[5] ըստ տեսչութեանն Աստուծոյ:

Եւ ելեալ փութանակի ի քաղաքէն ի մէջ գիշերի, և հրեշտակ Աստուծոյ առաջնորդեալ նմա[6] իբրեւ յանուրջս, ի նմին[7] ժամու գիշերին ի քաղաք իւր: Եւ իբրեւ եմուտ ընդ դուռն քաղաքին, ծագեաց լոյս և բուրեաց հոտ անուշութեան, և լի եղեւ քաղաքն ի լուսոյն և ի բուրմանէ անուշահոտութեանն[8]: Եւ ընդոստուցեալք ի քնոյն բազմութիւն քաղաքին, հասին փութանակի[9] ըստ խաղացման լուսոյն յեկեղեցի մի, և ստուգեալ վասն իրացն եղելոց, և եթէ որպէս գործեցաւ առաջնորդութիւն ճանապարհին յերթալն և ի դառնալ նորա: Եւ[10] իբրեւ ի մի բերան փառս ի վեր առաքեցին Քրիստոսի հանդերձ Հարբն և Հոգւոյն[11] սրբով, այնպիսի բարեաց պարգեւողին այժմ[12] և յաւիտեանս ամէն:

Եւ բազումք ընկալան զառողջութիւն[13], և լոյսն առ փոքր փոքր նուաղեցաւ, մինչեւ ի ծագել արեգականն[14]. և ի ծագել արեւուն՝ փութանակի յակւոյ տապան[15] գործեցին, և եդին ի ներքս զնշխարս

1. Ա. օր. ցնծալից ուրախութեամբ:
2. Ա. օր. ընդ տեղին պատառեալ եւ ժողովեալ:
3. Ա. օր. ի տեղւոյն:
4. Ա. օր. իբրեւ:
5. Ա. օր. եղեւ:
6. Բն. նոցա. ուղղեցաք ըստ Ա. օր:
7. Ա. օր. ի նոյն ժամ մինոյ գիշերոյն եկն ի քաղաք իւր:
8. Ա. օր. յանուշահոտ բուրմանէն:
9. Ա. օր. վաղվաղակի ըստ ճայեցման լուսոյն յեկեղեցին:
10. Ա. օր. յաւելու ամենեքեան:
11. Ա. օր. Հոգւոյն:
12. Ա. օր. չունի այժմ եւ յաւիտեանս ամէն:
13. Ա. օր. յաւելու ախտից:
14. Ա. օր. արեւուն. եւ ընդ ծագ արեգականն:
15. Ա. օր. գործեցին տապանակ յակւոյ:

սուրբ առաքելոյն. և զտապանակն եդին ի մարմա-րիոնէ վիմի զոր փորեցին ըստ չափոյ պիտոյիցն. և զօրն զայն տօնախմբեցին մեծաւ ցնծութեամբ ի դեկտեմբերի, որ օր երկոտասան էր ամսոյն, փա-ռաւորապէս[1] ի Հայր և յՈրդի և ի սուրբ Հոգին, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

1. Ա. օր. փառաւորելով ըզ-սուրբ Երրորդութիւնն, ո-րում փառք իշխանութիւն եւ պատիւ այժմ.. :

# Է

## Ի ՅԻՇԱՏԱԿ

## ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՅՆ ԹՈՎՄԱՅԻ

## ԹԷ Ո՛ՐՊԷՍ

## ՅԵՐՈՒՍԱՂԷՄԷ Ի ՀՆԴԻԿՍ ԶՈԳԱՒ[1]

Ի ժամանակին իբրեւ էին ժողովեալ[2] առաքեալքն յԵրուսաղէմ, Պետրոս եւ Յակոբոս, Յովհաննէս եւ Անդրէաս, Փիլիպպոս եւ Բարթողոմէոս, Թովմաս եւ Մատթէոս, Յակոբոս Ալփեայ եւ Յուդա Յակոբեան, եւ հոգային[3] առ միմեանս, թէ ո՛րպէս քարոզեսցեն զպատուէր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, արկին վիճակս ի մէջ իւրեանց, եհաս վիճակ եւ բաժին Թովմայի առաքելոյ երթալ ի Հնդիկս: Եւ նա ոչ կամէր երթալ[4], քանզի ասէր, թէ ոչ կարեմ համբերել[5] տօթոյ աշխարհին այնորիկ, քանզի հիւանդոտ[6] եմ ես. եւ ես եմ այր եբրայեցի, զիա՞րդ կարեմ հաճեցուցանել զլսելիս[7] նոցա եւ ուսուցանել:

Իբրեւ զայս ասաց, յայտնեցաւ նմա Քրիստոս եւ ասէ. Յուդա Թովմա[8], մի երկնչիր, զի շնորհք իմ ընդ քեզ են ուր երթայցես: Ասէ Թովմա. Տէր ո՛ւր եւ կամիս առաքեա զիս, այլ ի Հնդիկս ես չեմ տեղեակ երթալոյ: Իբրեւ լուաւ զայս Յիսուս, պատահեաց առն միոյ վաճառականի, որ եկեալ էր ի

1. Ա. որ. Պատմութիւն սրբ- ոյ Առաքելոյն Թովմայի, եւ վկայութիւն նորին:
2. Ա. որ. յաւելու սուրբ:
3. Ա. որ. հոգային զգայութեան..:
4. Ա. որ. յաւելու անդր:
5. Ա. որ. հանդուրժել:
6. Ա. որ. հիւանդ եմ եւ տը- կար:
7. Ա. որ. հանել զմիտս:
8. Ա. որ. չունի Յուդա Թովմա:

Հնդկաց, եւ անուն նորա Աբեննէս՝[1] յղեալ զնա Գնդափառայ արքային Հնդկաց, և պատուիրեալ վասն հիւսան և քարկոփի ճարտարի, զի տարցէ նմա:

Եւ տեսեալ զնա Յիսուս ասէ ցնա. Այր դու զի՞նչ խնդրես, միթէ հիւսն պիտոյ է քեզ: Եւ նա ասէ. Այո Տէր: Ասէ ցնա Յիսուս. Ես ունիմ ծառայ հիւսն որ գիտէ բազում ճարտարութիւն: Եւ եցոյց նմա[2] զԹովմաս ի հեռաստանէ և վաճառեաց զնա ընդ երեսուն դահեկանի, և գրեաց նմա գիր այսպէս. Յիսուս Նազովրացի, որդի Յովսեփայ ի Բեթղեհեմէ, վաճառեցի զԹովմաս ծառայ իմ՝ առ վաճառականի Աբեննէսի, և առի ի նմանէ երեսուն դահեկան, արդ մի՛ ոք վարբու[3] լիցի զմա, և ձեռնարկեալ[4] ի գիրն Պետրոս և Անդրէաս: Զօրաւ կալաւ զնա Աբեննէս և ած զնա առ Յիսուս: Ասէ Յիսուս[5]. Այդ է ծառայն իմ: Ասէ վաճառականն. Գնոյ գնեցի ես զքեզ ի Տեառնէ քումմէ ընդ երեսուն դահեկանի: Եւ Թովմաս լուռ եւեթ կայր. և տարաւ զնա ի վանս իւր:

Եւ ի մէջ գիշերին յաղօթս եկաց Թովմաս և ասէ. Գոհանամ զքէն Տէր իմ Յիսուս Քրիստոս, զի մեռար և զբազումս կեցուցեր, վաճառեցեր զիս և բնաւ զբազումս գնեցեր, արդ արա՛ որպէս հաճոյ է քեզ[6]:

Եւ իբրեւ եղեւ առաւօտ, յարուցեալ գնացին երկոքեանն ի միասին[7]. և գտին նաւ մի որ երթայր ի Հնդիկս: Եւ մտեալ ի նաւն, ել հողմն քաղցրաշունչ և երթայր նաւն լի փառօք և գովութեամբ[8]: Եհարց վաճառականն ընդ Թովմաս և

1. Ա. օր. Աբբանէս:
2. Ա. օր. յաւելու Յուդա:
3. Ա. օր. վարբատ լիցի:
4. Ա. օր. ձեռնագրեալ:
5. Ա. օր. ասէ ցՅիսուս. սա՞ է ծառայն քո. ասէ. այո՛ դա է...:
6. Ա. օր. արդ որպէս հաճոյ է քեզ, եւ ոչ զիմեմ:
7. Ա. օր. յաւելու իբրեւ ճա-նին ի ծովեզրն:
8. Ա. օր. չունի գովութեամբ:

տալ. Զի՞նչ ճարտարութիւն գիտես։ Ասէ Թովմաս. Հիւսն եմ ճարտար և ծառայ հիւսան և աշակերտ եմ շինողի։ Ասէ վաճառականն. Զի՞նչ գիտես առնել ի գործ փայտի։ Ասէ Թովմաս. Ի գործս փայտի՝ ճարտար եմ ես առնել լուծս և արօրս և զմաշիճս և զկշիռ և զեկս նաւուց որով վարեն զնաւս, և ի քարկոփութիւն, աշտարակ և տաճար և սիւնս խոյակօք և շիրիմս թագաւորաց։ Եւ ուրախ եղեւ վաճառականն և ասէ. Եւ թագաւորն մեր այսպիսի այր խնդրէ։

Իբրեւ անցին նոքա յայնկոյս ծովուն և հասին ի քաղաքն [1], լուան զձայն փողոյ [2] և ցնծութեան։ Ասէ Թովմաս ցվաճառականն. Զի՞նչ է այն ձայն ցնծութեան։ Ասէ վաճառականն. Դուստր թագաւորին միամօր է, և տան [3] զնա այսօր առն, այն ձայն է ցնծութեան. և պատուիրակս թողեալ [4] է ընդ չորեսին անկիւնս [5] քաղաքին՝ թէ ամենայն [6] ոք որ լսիցէ, ի հարսանիս եկեսցէ տեարք և ծառայք, ճոխք և աղքատք, օտարք և մանկունք քաղաքիս, և որ ոչ եկեսցէ պատիժս կրեսցէ։ Ասէ [7] վաճառականն ցԹովմաս. Եկ և մեք երթամք ի հարսանիսն, զի մի պատիժս հասցէ մեզ։ Եւ գնացին երկոքեանն ի հարսանիսն, և անց սուրբ առաքեալն և բազմեցաւ ի մէջ բազմականին, և Աբենէս յայլ տեղւոջ։ Իբրեւ կերան և արբին, Թովմաս ոչ ինչ ճաշակեաց. տեսին զնա սեղանակիցքն. Այր դու, զի՞ եկիր այսր, զի ոչ ուտես և ոչ ըմպես։ Ասէ սուրբ առաքեալն. Վասն իրաց՝ որ առաւել է քան զուտել և զըմպել՝ եկեալ եմ ես. զի լուայ եթէ պատուիրակք թողեալ է [8],

1. Ա. օր. ի քաղաք մի։
2. Ա. օր. յաւելու զսրնգի, զթմբկի եւ զքնարի եւ զձայն ցնծութեան եւ ուրախութեան։
3. Ա. օր. հարսնացուցանեն։
4. Ա. օր. հանեալ։
5. Ա. օր. կողմ։
6. Ա. օր. չունի ամենայն ոք… որ ոչ եկեսցէ։
7. Ա. օր. չունի Ասէ վաճառականն… հասցէ մեզ։
8. Ա. օր. յաւելու թագաւորին։

թէ ամենայն ոք որ լսիցէ, ի Հարսանիս եկեսցէ. և եկի զի կատարեսցի կամք Թագաւորին, և ոչ յուտել և յըմպել: Յայնժամ վարձակն[1] շրջէր առ ամենեսեան և երգէր[2]. իբրև եկն առ Թովմաս, կայր առ նմա և երգէր: Մի[3] ոմն ի մատռուակացն ած ապտակ առաքելոյն. հայեցաւ ընդ նա սուրբ առաքեալն և ասէ. Տէր Յիսուս Քրիստոս թողցէ[4] քեզ յայնմ աշխարհին որ գալոց է. բայց ի յայսմ աշխարհիս ցուցցէ ինձ զզօրութիւն աստուածութեան իւրոյ. ձեռն որ եհար զիս, տեսանիցեմ զգա զի քարշեսցեն շունք: Եւ ինքն սկսաւ օրհնել ի դէմս եկեղեցւոյ երրայեցւոց բարբառովն. Մեծ դուստր լուսոյ սուրբ եկեղեցի, վայելչութիւն Թագաւորաց քո է, ցանկալի և երանելի և վայելուչ տեսիլդ քո, զարդք նմանեն քեզ զոյն առ զոյն զարդուց, և զգլուխդ զոր ունիս զԹագաւորաց և զվայելչութեան առաջի սըրտիդ. բերան քո բացեալ է ի սաղմոս ասել և օրհնել, և ամենայն օրհնութիւնք քեզ վայել է. երկուք և երեք պաշտեն զքեզ. առագաստ քո լուսաւոր է և հոտ խնկոյ ելանէ այտի. բուրվառ պատրաստեալ են ի նմա, զմուռ և տաշխ[5] ծխին ի նմա, և զրունք նորա եղեգամբ զարդարեալ են եւ փեսաւէրք շուրջ են զնովաւ և փառաւոր առնեն զՏէրն կենդանի. և մեք ժամանեսցուք ի Հարսանիսն երկնաւոր և արբցուք զգինին ուրախարար, և լիցուք մեք ընդ նմա յուրախութեանն յաւիտենից. խոստովան եղիցուք զդշխոյէն արեւելից:

Իբրև նա զայս այսպէս օրհնէր, ոչ ոք լսէր, բայց միայն վարձակն, քանզի երրայեցի էր: Եւ հատաւ ջուր ի սափորանացն, և սա մատռուակն զսափորն և չոգաւ զջրոյ. եւ առիւծ մի յանտառէն,

1. Ա. օր. վարձկանն:
2. Ա. օր. յաւելու փողովն:
3. Ա. օր. յաւելու մատուռ առ նմա մի:
4. Ա. օր. մի համարեսցի:
5. Ա. օր. զաշխս:

երեկ զմատռուակն և արար անդամ անդամ. և բարձեալ շուն մի թուխ զաջ բազուկն նորա և բերեալ ընկէց ի մէջ բազմականին։ Յայնժամ վարձակն զփողն խորտակեաց և անկաւ առաջի[1] առաքելոյն և ասէ. Այրս այս կամ աստուած է կամ առաքեալ նորա, զի ես լուայ զինչ ասաց մատռուակին, թէ ձեռք որ եհար զիս, տեսանիցեմ զի քարշեսցեն զդա շունք։ Եւ կէսք ի նոցանէ հաւատացին ի բան վարձակին և կէսք չհաւատային։ Իսկ թագաւորն իբրև լուաւ զայս, լուռ[2] եկն և անկաւ առաջի առաքելոյն և ասէ. Եկ ընդ իս տէր և օրհնեա զիս, զդուստր իմ միամօր է և տամ զնա այսօր առն։ Իսկ սուրբ առաքեալն ոչ կամէր երթալ, զի չէր տեսեալ[3] զՔրիստոս յաշխարհին յայնմիկ. և բռնադատեաց զնա, և յարուցեալ գնաց։ Իբրև եմուտ ի սենեակն, դրունք սենեկին փակեալ էին և ոչ ոք էր անդ, բայց միայն հարսն և փեսայն[4]. և եհան թագուհին[5] արտաքս զամենեսեան զփեսաւէրսն և զհարսնաքորսն։ Եւ նստաւ սուրբ առաքեալն և վարդապետեաց[6] նոցա զՔրիստոս, և եդեալ զձեռն իւր ի վերայ նոցա և օրհնեաց զնոսա և ասէ ցնոսա. Լիցի ընդ ձեզ Քրիստոս, և ինքն ել արտաքս։

Եւ[7] տեսեալ փեսայն զՔրիստոս ի նմանութիւն առաքելոյն, զի խօսէր ընդ նոսա[8], ասէ ցնա փեսայն. Ո՞չ դու վաղ ելեր, արդ աստ զիա՞րդ կաս։ Ասէ Տէրն. Ես ոչ եմ առաքեալն, որդեակ, որպէս դու կարծես, այլ եղբայր եմ նորա[9]. և հրամայեաց նստել յաթոռն։ Եւ ասէ Տէրն ցնա. Յիշեցէք որդեակք իմ զինչ պատուիրեաց ձեզ եղբայրն իմ և

1. Ա. օր. առ ոտս։
2. Ա. օր. չունի լուռ։
3. Ա. օր. ոչ էին տեղեկացեալ։
4. Ա. օր. յաւելու եւ քոյր եւ եղբայր։
5. Ա. օր. չունի թագուհին։
6. Ա. օր. քարոզեաց։
7. Ա. օր. յաւելու յանկարծակի։
8. Ա. օր. հարսինն։
9. Ա. օր. յաւելու եւ նստաւ Յիսուս ի մահիճսն։

ում յանձն արար զձեզ. և առժամայն եթէ մեկնիք դուք ի հաղորդութենէ պղծութեան, եղերուք[1] դուք տաճար սուրբ և լինիք ժառանգորդ արքայութեանն և պատուաւոր երկնաւոր հարսանեացն[2], թէ երբ տեսցուք զհարսանիսն զգուշութեան[3] և լիցուք նմա փեսաւէրք և ուրախ եղիցուք ընդ նմա: Յայնժամ լուան նոքա բանի նորա, և խոնարհեալ երկիր պագին Քրիստոսի և յանձն արարին նմա զանձինս իւրեանց[4]. և եղեւ ի նոցանէ աներեւոյթ:

Իբրեւ եղեւ ժամ[5], ելից թագաւորն[6] զսեղան և եմուտ ի սենեակն, և ետես զնոսա զի նստէին բաց երեսօք[7]: Ասէ մայրն[8]. Զի՞ նստիս այդպէս բաց երեսօք և ոչ ամաչես, որպէս թէ բազում ժամանակ անցեալ է քո և դորա: Պատասխանի ետ հարսնն և ասէ. Գիտեմ զոր խօսիդ, ով մայր իմ, բայց ի սէր երկնաւոր փեսային եմ անձկացեալ, և յաղօթս կամ առ Տէր իմ և սպասեմ այնմ յուսոյն՝ որ յայտնեցաւ յայսմ գիշերի. և զի ոչ սքօղիմ ես, զի քօղ ապականութեան բարձաւ յերեսաց իմոց, զի գործ ամօթոյ հեռի եղեն յինէն, և զի ուրախ եմ ես, զի օր ուրախութեան գայ ես. և զի անարգեցի ես զայր իմ և զհարսանիս զայս, զի յերկնաւոր հարսանիսն հրաւիրեցայ. զի ոչ ամուսնացայ ես ընդ առն անցաւորի[9], զի առն երկնաւորի սպասեմ[10]: Նոյնպէս խօսել սկսաւ փեսայն և ասէ. Խոստովանիմ առ քեզ, Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ

1. Ա. օր. լինիք:
2. Ա. օր. յաւելու Եւ ասեին:
3. Ա. օր. չունի զզուշութեան:
4. Ա. օր. յաւելու Եւ եղեալ Յիսուսի զձեռն ի վերայ նոցա, օրհնեաց զնոսա, եւ ասէ. լիցի ընդ ձեզ Քրիստոս:
5. Ա. օր. լուսացաւ:
6. Ա. օր. եւ բազումին զնեղանն եւ տարան ի ներքս առաջի փեսային եւ հարսին:
7. Ա. օր. չունի բաց երեսօք:
8. Ա. օր. յաւելու ցդուստրն:
9. Ա. օր. երկրաւորի:
10. Ա. օր. յաւելու զի յերկնաւոր հարսանիսն հրաւիրեցայ:

եկիր առ մեզ ի ձեռն առն օտարի. փառաւորեմ զքեզ Քրիստոս որդի Աստուծոյ, որ քարոզեցար մեզ ի ձեռն առն եբրայեցւոյ, որ քարոզեաց մեզ զկեանս, զլոյս, զփրկութիւն[1], և ի բաց արար ի մէնջ զգործս խաւարի, և սերմանեաց ի մեզ զյաւիտենից խորհուրդն՝ այն[2] որ եցոյց ինձ զանձն իւր և իմացոյց զաքանչելի խորհուրդն, այն որ զիմ մեղսն հեռի արար յինէն, և զարդարութիւն[3] որ ոչ էր իմ՝ եցոյց ինձ, և զոր ես ոչ գիտէի նա խնդրեաց զիս, վասն զի սէր նորա եհաս յիս:

Յայնժամ թագաւորն պատառեաց զհանդերձն և ասէ. Ելէք ածէք ինձ զայրն կախարդ, զի ես ածի օրհնել զորդեակքս իմ, և նա եկն ատելութիւն արկ ի մէջ զոցա. այր որ զացէ զնա և ածիցէ, մեծամեծ պարգևս տացի[4] նմա: Ելին և շրջէին ընդ քաղաքն և ոչ գտին, քանզի գնացեալ էին նոքա: Իբրև չգտան յօթեվան ինչ, գտին զվարձակն զի լայր, զի ոչ տարան զնա ընդ իւրեանս: Եւ գնաց վարձակն առ հարսն և առ փեսայն և աշակերտեաց զթագաւորն և զթագուհին և զամենայն քաղաքն:

Յայնժամ եմուտ Թովմաս ի Հնդիկս ընդ Աբենէս վաճառականի: Իբրև եմուտ Աբենէս վաճառականն, ետ ողջոյն արքային Հնդկաց Գնդափառայ և ասէ, թէ այր ճարտար ածի: Եւ կոչեաց զնա առաջի իւր, եհարց նա[5] և ասէ. Այր դու, զի՞նչ ճարտարութիւն գիտես: Եւ ասէ սուրբ առաքեալն. Հիւսն եմ ճարտար և ծառայ հիւսան. աշակերտ շինողի: Ասէ թագաւորն. Եւ զի՞նչ եւս գիտես առնել դու զգործ փայտի: Ասէ սուրբ առաքեալն. Ի գործս փայտի ճարտար եմ ես առնել լուծս և արօրս և

1. Ա. օր. զյարութիւն:
2. Ա. օր. ի ձեռն առնս այս որ:
3. Ա. օր. զարդարութիւն իւր ծանոյց, զոր ես ոչ գիտէի, նա անդր գրեաց զիս:
4. Ա. օր. տացից:
5. Ա. օր. զնա:

մաշխձս և կշխաս և զեկս նուաց որ վարեն զնաւս, և ի քարկոփութիւն՝ աշտարակս և տաճարս և սիւնս խոյակօք և շիրիմս թագաւորաց։ Եւ եղեւ ուրախալից թագաւորն և ասէ. Եւ ինձ այդպիսի այր պիտոյ էր. արդ շինեա՛ ինձ տաճար արժա՛ն թագաւորութեան։ Ասէ սուրբ առաքեալն. Ես շինել եկեալ եմ և ի կատարել։ Եւ առեալ զսուրբ առաքեալն թագաւորն, գնաց ի տեղի մի մարգագետին և ջրակոյտ, և ասէ թագաւորն. Աստ կամիմ ես շինել տաճար։ Ասէ սուրբ առաքեալն. Տեղիս արժան է տաճարի. Եւ սա սուրբ առաքեալն և լարագիր արար տաճարին. և եթող նա դրունս[1] ընդ արեւելեան լուսոյն և պատուհանս ընդ արեւմուտս հողմոբերս և հողմաշունչս, և մատաուակոցս[2] ընդ հարաւակողմն, և ջրմուղս ընդ հիւսիսոյ։ Եւ ասէ թագաւորն. Արդարեւ արժանի ես դու զթագաւոր պաշտել։ Եթող նմա թագաւորն ծախս բազումս շինուածոց, և ինքն չոգաւ յայլ կողմն իշխանութեանն։

Իսկ սուրբ առաքեալն առեալ զգանձն բաշխեաց քաղաքացեացն[3] և ինքն քարոզէր զօէր Յիսուս Քրիստոս, զհիւանդսն բժշկէր, զդեւսն հալածէր, զբորոտսն սրբէր և նշանս մեծամեծս առնէր մինչեւ զարմանալ ամենայն աշխարհին[4] որք տեսանէին։

Իբրեւ անցին աւուրք բազում, առաքեաց առ սուրբ առաքեալն թագաւորն և գրեաց[5], եթէ գրեա առ իս վասն շինուածոցդ յինչ չափու է։ Եւ գրեաց սուրբ առաքեալն, եթէ տաճարս շինեալ է, բայց յարկով չէ յարկեալ, թոշակս ճարտարաց նուագեցան։ Եւ ետ բերել[6] նմա թագաւորն երկու բեռ դահեկան և արծաթ բազում, և գրեաց եթէ զտաճարդ յարկեա, ես գալոց եմ տեսանել։ Եւ սա

1. Ա. օր. յաւելու ընդարձակս։
2. Ա. օր. մատուռն։
3. Ա. օր. աղքատաց։
4. Ա. օր. տեսանել բնակչացն եւ զարմանալ։
5. Ա. օր. խնդրեաց։
6. Ա. օր. տանել։

սուրբ առաքելոյն զայն ամենայն զանձն [1] բաշխեաց աղքատաց, և ինքն ոչ դադարէր քարոզել զՏէր Յիսուս և մխիթարել զորբս և զայրիս:

Իբրև եկն Թագաւորն ի քաղաքն, կոչեաց զմտերիմսն, եհարց զնոսա և ասէ. Եթէ յի՞նչ չափու է տաճարն: Եւ նոքա ասեն. Նորա տաճար չիք շինեալ, և ոչ գիտեմք զի՞նչ զոսկին արար կամ զարծաթն, այլ շրջի նա ընդ քաղաքս և ընդ գաւառս, ուսուցանէ Աստուած զմի պաշտել. զդևս հալածէ, զհիւանդս բժշկէ, զբորոտս սրբէ և նշանս բազումս առնէ, և ինքն ուտէ հաց չոր և աղ, և հանդերձ անպիտան ագանի, և ինչս ի մարդոյ ոչ առնու, և որ ինչ իցէ՝ այլում տայ. եթէ մոգ իցէ, ոչ գիտեմ[2], կամ թէ առաքեալ՝ ոչ գիտեմ: Իբրև զայս լուաւ Թագաւորն, պատառեաց զհանդերձն[3] և ասէր. Ելէք ածէք առ իս զայրն կախարդ, և զվաճառականն որ ած զնա: Եւ իբրև ածէին նոքա զվաճառականն, յոյժ երկեաւ: Եւ ասէ սուրբ առաքեալն. Մի երկնչիր, միայն հաւատա և տեսցես զքանչելիսն Աստուծոյ: Իբրև ածին առաջի Թագաւորին, եհարց և ասէ. Շինեցե՞ր զտաճարն: Եւ նա ասէ. Այո շինեցի զտաճարն գեղեցիկ զոր չիք ուրուք[4] տեսեալ ի մարդկանէ: Ասէ Թագաւորն. Ե՞րբ երթամք տեսանել: Ասէ սուրբ առաքեալն. Այժմ ոչ կարես տեսանել դու զնա: Ասէ Թագաւորն. Եւ յո՞րում ժամանակի տեսանեմք: Ասէ սուրբ առաքեալն. Յորժամ վախճանիս հրամանաւն Աստուծոյ, յայնժամ տեսանես: Յայնժամ[5] ցասեաւ Թագաւորն և ասէ. Ի կենդանութեան ոչ տեսից, յորժամ մեռանիմ զի՞արդ տեսանեմ: Եւ հրամայեաց առնել զնա ի բանդ[6]. մինչև տեսից թէ զի՞նչ ա-

1. Ա. օր. ինչսն:
2. Ա. օր. գիտեմք:
3. Ա. օր. յաւելու եւ ձեռօքն զբարձսն ծեծէր:
4. Ա. օր. ուրեք:
5. Ա. օր. Եւ յոյժ:
6. Ա. օր. յաւելու եւ ասէ. տարեք զդա ի բանդ մինչեւ ճանգեայց եւ տեսից:

բար դա զգանձն իմ։ Իբրեւ երթայր[1] Թովմաս ի բանտն, քաջալերէր զվաճառականն զի մի երկնչիցի։ Իբրեւ արկին[2] ի բանտ, յայնմ գիշերի եղբայր թագաւորին հիւանդացաւ, և նա տրտմեալ էր յինչսն, զի յայսն նոցա յինչսն էր. և ասէ. Կոչեցէք առ իս զտէր իմ արքայ։ Եւ եկն թագաւորն։ Ասէ[3] Գնդափառ ընդ եղբայր իւր. Տէր իմ արքայ, տուն իմ և որդիք իմ քեզ լիցին յանձին. բայց զայս աղաչեմ զքեզ, զի չարչարանօք մահու սպանցես զնոսա և հանգուցես զոգի իմ, զի վատնեցին զգանձս մեր[4]։ Եւ ասէ թագաւորն. Եւ իմ զայդ խորհեալ զգիշերս ամենայն, եղբայր իմ. և զայս ասացեալ Գնդափառ[5] վախճանեցաւ։ Եւ առին հրեշտակք զհոգին, և տարեալ[6] ցուցին զտեղի չարագործացն և բարեգործացն. եցոյց[7] նմա և զտաճարն զոր շինեաց սուրբ առաքեալն Գնդափառայ և եղբօր նորա։ Արդ անկեալ Գնդափառ առ ոտս հրեշտակին՝[8] ասէ. Աղաչեմ զքեզ տէր, ողորմեա ինձ վարանելոյս[9] և դարձո զիս առ եղբայրն իմ, զի գնեմ ես զտաճարդ զայդ ի նմանէ. զի նա ոչ գիտէ զգեղեցկութիւն դորա, և տայ ինձ զդա գնոյ։

Իսկ Տէրն որ յամենայնի գթած և ողորմած, հրամայեաց դարձուցանել զհոգին Գնդափառայ ի կենդանութիւն։ Եւ մինչդեռ զարդարէին զդին, եկն հոգին ի մարմինն, և յարեաւ նստաւ։ Եւ պատմեցին թագաւորին, թէ եղբայրն քո կենդանացաւ. և

1. Ա. օր. իսկ սուրբ առաքեալն ուրախ էր ընդ երթալն ի տունն բանտին։
2. Ա. օր. ածին զնոսա։
3. Ա. օր. ասէ ցնա Գնդափառ եղբայր թագաւորին։
4. Ա. օր. որք վատնեցին զինչսն մեր։
5. Ա. օր. Գնդափառայ եղբօր թագաւորին վախճանեցաւ յաշխարհէս։
6. Ա. օր. տարան առաջի աստուածութեանն եւ։
7. Ա. օր. ցուցին։
8. Ա. օր. հրեշտակաց։
9. Ա. օր. տառապելոյ տարակուսիս։

յարուցեալ փառս ետ Աստուածոյ իւրոյ[1] և եկն առ եղբայր իւր: Խօսել սկսաւ մեռեալն կենդանացեալ[2] ընդ եղբայր իւր և ասէ. Խնդրեմ ի քէն խնդիրս ինչ, եղբայր իմ, տուր ինձ: Ասէ թագաւորն. Զոր ինչ խնդրես, տաց քեզ[3], զի այժմ տեսի զքեզ կենդանացեալ: Եւ ասէ. Տուր ինձ զտաճարն քո զնոյն որ յերկինսն է: Ասէ թագաւորն. Տաճար ինձ յերկինս ո՞վ ետ: Ասէ Գնդափառ. Այն որ չինեաց այրն քրիստոնեայ առաքեալն Տեառն: Ասէ թագաւորն զարմանալով. Ենէ՞ ենէ՞, եղբայր, և դու տեսե՞ր զտաճարն զայն: Ասէ. Այո՛ տեսի: Եւ ծագեաց շնորհ ողորմութեանն Աստուծոյ ի սիրտ թագաւորին և ասէ. Զայն ոչ կարեմ տալ քեզ, եղբայր իմ, այլ խնդրեմ[4] ես ի Տեառնէ զի արժանի եղէց տեսանել[5] և բնակել ի տաճարին յայնմիկ. և դու թէ կամիս շինել տաճար, ահա Գադաս[6] ճարտարն կայ ի ձեռս քո, շինէ քեզ բարի քան զիմն:

Եւ վաղվաղակի առաքեաց թագաւորն և եհան զնոսա ի բանտէն: Եւ անկեալ թագաւորին առ ոտս առաքելոյն և ասէ. Կացո զմեզ առաջի Աստուծոյն քո և թող մեզ զմեղս մեր զոր մեք ընդ քեզ արարաք: Եւ ասէ սուրբ առաքեալն. Գթած ողորմած է Տէր[7], և ոչ յիշէ զմեղսն զոր յանգիտութեան գործեցէք[8]: Եւ ասէ թագաւորն. Արդ փութա՛ և տուր մեզ կնիք[9], զի լուաք եթէ Աստուածն զոր դուն քարոզես, իբրև կնիք առնուն, ապա ճանաչեն զնա: Եւ հրամայեաց թագաւորն պահել զբաղանիսն եօթն օր, և յաւուրն ութերորդի մտեալ ի բաղանիսն ա-

1. Ա. օր. աստուծոյ իւրոյ:
2. Ա. օր. ի մեռելոց յարուցեալ եղբայրն ընդ:
3. Ա. օր. յաւելու թէ եւ զբարգաւաճութիւնս իմ խնդրեսցես:
4. Ա. օր. խնդրեմ.
5. Ա. օր. մտանել:
6. Ա. օր. Գաղատիոս ճարտարապետն:
7. Ա. օր. յաւելու երկայնամիտ եւ բազումողորմ:
8. Ա. օր. արարաք:
9. Ա. օր. տուր ինձ մկրտութիւն:

առաքեալն և թագաւորն և մեծամեծքն ամենայն, և եկաց սուրբ առաքեալն ի վերայ աւազանին և արկ զիւղն ի վերայ գլխոյ նորա և ասէ. Եկեսցէ անուն քո սուրբ, Քրիստոս, եկեսցէ ողորմութիւն և զօրութիւն քո ի բարձանց, եկեսցէ պարգեւս բարձրելոյդ, եկեսցէ հաղորդութիւն անդրանկաց, եկեսցէ ի վերայ սոցա խորհուրդ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, եկեսցէ ի վերայ սոցա աղաւնին միամիտ և ծնցէ զսոսա աղաւնիս[1] միամիտ: Եւ զայս ասացեալ, մկրտեաց զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ:

Եւ ընդ ելանել նորա ի ջրոյն, երեւեցաւ նոցա պատանի մի, որ ի ձեռին իւրում ունէր ղամբար[2] մի պայծառ և ասէ ցնոսա. Ողջոյն ինձ ընդ ձեզ եղբարք: Եւ նոքա զձայնն լուան և[3] հաստատեցան ի հաւատս: Եւ մկրտեաց զամենայն քաղաքն. և զայլն ի կողմանց կողմանց ի մկրտել, և առնուին փրկութիւն անձանց:

Եւ եղեւ ի միում աւուր մինչդեռ աղօթէր սուրբ առաքեալն յաւուր կիրակէի, երեւեցաւ նմա Քրիստոս և ասէ. Թովմաս, արի՛ և կանխեա ի պաշտօն առաւօտու, և ել դու ի ճանապարհն արեւելից, և ցուցանեմ քեզ անդ սքանչելիս. և հաւատասցեն յիս բազում մարդիկ և եկեսցեն ի տուն ապաւինի: Եւ իբր այգ եղեւ[4], ասէ Թովմաս ցթագաւորն. Տէրն մեր Յիսուս Քրիստոս կամի երեւել մեզ այսօր. արդ եկայք կամք[5] յաղօթս, թէ զինչ վասն մեր լինիցի: Եւ կատարեալ զպաշտօն գիշերի[6] ժամուցն՝ հաղորդեցոյց զնոսա մարմնոյ և արեանն Տեառն. և յարուցեալ գնացին ընդ ճանապարհն արեւելից: Իբրեւ գնացին[7] մղոնս երիս, մեկնեցաւ Թովմաս սակաւիկ մի ի ճանապարհէն, և եգիտ անդ պա-

1. Ա. օր. յորդիս:
2. Ա. օր. լուսոյ:
3. Ա. օր. յաւելու առաւել:
4. Ա. օր. իբրեւ լուսացաւ:
5. Ա. օր. կացցուք:
6. Ա. օր. երից ժամուցն:
7. Ա. օր. ճեմացան մղոնս երկուս:

տանի մի մեռեալ և իմացայ եթէ վասն այնորիկ առաքեաց զիս Տէր։ Եւ համբարձեալ զձեռս իմ յերկինս առ Տէր և ասէ. Աղաչեմ զքեզ, եկեսցէ հոգի պատանւոյս այսորիկ, զի խնդրեմ ի քէն վասն ժողովրդեանս։ Իբրեւ զայս ասաց, եկն եւ օձ մի սեւ ի քարանձաւէ անտի և զգլուխն ընդ գետինն ծեծէր[1] և եկն անկաւ առաջի առաքելոյն և ասէ. Աւասիկ եմ տէր առաջի քո, թէ վասն էր սպանի զդա։ Կին մի էր ի քաղաքին որ ընդդէմ կայր մեր, իբրեւ տեսի ես զկինն և սիրէի զնա, իբրեւ չոգայ ես առ նա, տեսի ես զի կայր դա առ նմա և տայր ողջոյն ընդ նմա, և այլ եւս գործ պղծութեան գործէր ընդ նմա զոր ամօթ է քեզ ասել, զի ես գիտեմ՝ դու սկիզբն ես հաւատոյն Քրիստոսի. և զի ոչ սպանի ես զդա ի ժամանակին յայնմիկ, իբրեւ եկն անցաւ առ ինեւ երեկունն, հարի և սպանի ես զդա զի օրն կիրակէ էր։ Եւ ասէ սուրբ առաքեալն. Իշխանութիւն ունէի՞ր դու զմարդ սպանանել՝ Աստուծոյ անուամբն, որ մինչեւ ցայսօր պատերազմ (?) եկաց ձեզ վասն որդւոց մարդկան. արդ երթ բարձ զթոյն-սըն յերիտասարդէն և լցի կենդանի։ Ասէ օձն. Զի՞ նեղես զիս եթէ բարձ զթոյնսն յերիտասարդէն. զի հայրն իմ յորժամ հարկանէր զմարդն եւ բառնայր զթոյնսն՝ մեռանէր։ Ասէ սուրբ առաքեալն. Ցոյց ինձ զզօրութիւն հօրն քո։ Եւ ոչ կամեցաւ օձն։ Եւ սաստեաց սուրբն Թովմաս և ասէ. Բարձ զթոյնսն յերիտասարդէն։ Եւ եկն օձն և եդ զբերանն իւր ի վերայ մեռելոյն հարուածոյն և եբարձ զթոյն-սըն և յարեաւ պատանին, և օձն ուռուցեալ հերձաւ և ուր անկաւ թոյն օձին, եղեւ վիհ մեծ։ Եւ ասէ Թովմաս. Լցէք զվիհդ և շինեցէք ի վերայ դորա տուն օտար անցաւորաց։ Եւ արարին որպէս հրամայեաց նոցա։ Եւ երիտասարդն յոյժ ճգնեցաւ, և ամենայն բազմութիւնքն սքանչացեալ զարմացան։ Եւ իբրեւ կամեցաւ դառնալ ի քաղաքն, եկն մըտ-

1. Ա. օր. եւ զառւան խածանէր. չունի մինչեւ բարձ զթոյնդ:

բուկ մի իշոյ եկաց առաջի առաքելոյն և ասէ [1]. խորագիտութիւն Քրիստոսի, առաքեալ բարձրելոյն. ունիս զխորհուրդս ծածկեալ որդւոյն Աստուծոյ, ազատն որ եղեւ վասն մեր ծառայ, զի զմեզ ազատեսցուսցէ. եղեր դու սմա կեանս երկրիս Հնդկաց, նշանակ առձեռն առ որդիս մարդկան. զի նորա մոռացան զքեզ վասն մոլորութեան իւրեանց, և այժմ ի տեսիլ և ի բան աստուածութեանդ քո դառնան: Հայեցաւ ի նա սուրբ առաքեալն և ասէ. Յորմէ՞ ազգէ ես դու, զի բերան քո զարմանալի խօսի: Պատասխանի ետ մորուկն և ասէ. Ես յայնմ ազգէ եմ որ զՖառաւոնն պաշտէին, և Տէր Յիսուս նստաւ ի վերայ ազգին իմոյ. և ես այսօր առ քեզ առաքեցայ զի խնդրեցից ի քէն զհաւատս: Եւ ասէ սուրբ առաքեալն. փառք քեզ Տէր զի և անասնոց որ չիք բան՝ հրամայես խօսել: Եւ հրամայեաց սուրբ առաքեալն արկանել զնովաւ ձորձ, և նըստաւ ի վերայ նորա և եկն ի քաղաքն: Եւ ամենայն բազմութիւնքն պշուցեալ նայէին, թէ զիարդ արձակեսցէ զէշն: Եւ ասէ սուրբ առաքեալն ցէշն. Երթ նիրհեա որպէս էիրն. և նոյնժամայն անկաւ էշն և մեռաւ: Եւ ասէ թագաւորն. Յարո՛ զէշն [2]: Եւ ասէ սուրբ առաքեալն, եթէ [3] ոչ կարեմ յարուցանել, այլ այդ օգնէ զմա որ եդ զմա բերան խօսել՝ կարող է և զդա առնել անմահ: Եւ հրամայեաց թաղել զէշն: Եւ նստաւ սուրբ առաքեալն ի քաղաքին, և հաւատացին ամենայն իշխանութիւնքն: Եւ յետ այնորիկ լուան յայլ կողմանէ իշխանութեան թէ աստուած ոմն գտաւ յաշխարհին յայնմիկ:

Այր մի զօրագլուխ Մազդէի թագաւորի, որում անուն էր Ծոփա [4], եկն առ սուրբ առաքեալն և ասէ ցնա. Հրամայեա ինձ Տէր, զի պատմեցից զնե-

1. Ա. օր. չունի Եւ ասէ... հրամայեաց:
2. Ա. օր. զյաւանակդ:
3. Ա. օր. ոչ երբէ չկարեմ. չունի որ եդ զմա... եւ հաւատացին:
4. Ա. օր. Ծոփար:

դութխուն սրտի իմոյ առաջի քո: Եւ ասէ Թովմաս. Զի՞նչ է քեզ: Եւ ասէ զօրագլուխն. Կին մի էր իմ և դուստր մի լեալ էր ի նմանէ. և եղև օր մի հարսանիս դիպեցաւ ի քաղաքին, և տէր հարսանեացն սիրելի իմ էր. և առաքեցաւ առ իս հրաւիրակս, և առաքեցի զկինն իմ և զդուստրն ի հարսանիսն: Եւ իբրև երեկոյ եղև և ժամ եղև դառնալ, տեսի զի այր մի յարձակեալ էր ի վերայ նոցա և գլուխ նորա իբրև զշան, և աչս անկեալ կան նոքա ի տան իմ. և այս երիս ամ է՝ ոչ մեռեալ են և ոչ կենդանի. արդ եթէ[1] կամիս, կարող ես դալ ընդ իս և բժշկել զնոսա: Եւ իմացեալ առաքեալն Թովմաս, թէ հրաւիրեաց զնա Աստուած յայլ կողմն իշխանութեան, և յարուցեալ գնաց: Եւ ունէր զօրագլուխն ընդ իւր ջորիս չորս. և եկ սուրբ առաքեալն ի կառս ջորւոյն: Եւ ասէ ցնա սուրբ առաքեալն. Եկ նիստ ընդ իս ի կառս ջորւոյս: Եւ ասէ զօրագլուխն. Ինձ արժան է ի յառս տեառնդ իմոյ նստել: Եւ հրամայեաց սուրբ առաքեալն ելանել ի կառսն: Եւ իբրև գնացին աւուրց երից ճանապարհ, վաստակեցան ջորիքն և անկան, և տրտմեցաւ այրն: Ասէ Թովմաս. Մի երկնչիր, այլ հաւատա և տեսանես զքանչելիսն Աստուծոյ: Եւ ամբարձ սուրբ առաքեալն զաչս իւր ի վեր և ետես զի ցիռ երամակ արածէին. և ասէ Թովմաս. Երթ և ասա ընդ ցիռսն, թէ ձեզ ասէ առաքեալն Քրիստոսի՝ եկայք չորքդ ի ձէնջ զի պիտոյ էք ինձ: Եւ ամենայն ցիռքն դիմեցին առ սուրբ առաքեալն, եթէ ո՞վ յառաջ հասցէ առ նա. և եկեալ խոնարհեցուցին զգլուխս իւրեանց[2]: Եւ ասէ սուրբն. Լծեցարուք չորքդ ի ձէնջ ի կառսդ փոխանակ ջորւոյդ, և նոքա լծեցան որ համեմատագոյնքն[3] էին. և ամենայն ցիռքն՝ ոմանք առաջի և

1. Ա. օր. եթէ կարող ես՝ օգնեա եւ բժշկեա զնոսա. չունի Եւ իմացեալ . . . ասէ սուրբ առաքեալն:

2. Ա. օր. յաւելու իբրեւ զխոնարհեն:

3. Ա. օր. համատագոյնք:

ամանք զկնի երթային։ Եւ ասէ սուրբ առաքեալն. Ոչ էք ամենեքեան պիտոյ ինձ, երթայք գնացէք յանապատն[1] ձեր։ Եւ նոքա ամենեքեան խոնարհեցուցեալ զգլուխս իւրեանց երկիր պագին և գնացին։ Եւ եկեալ սուրբ առաքեալն ի քաղաքն՝ ի դուռն զօրագլխին, և ասէ[2] ցիշխանն, հատ զփակդ և մուտ ի տունդ, և ասա ցդեւսն որ են ի տան զօրագլխիդ. Ձեզ ասէ առաքեալն, օն եկայք ելէք արտաքս, մինչեւ յե՞րբ տանջէք զորդիս մարդկան։ Եւ ոչ կամեցան ելանել դեւքն։ Եւ ասէ իշխանն. Մինչեւ յե՞րբ աշխատ առնէք, զի վասն ձեր առաքեալն Թովմա այսր է։ Եւ ասեն դեւքն, թէ արդարեւ Թովմա առ դու՞րս կայ։ Եւ ասէ իշխանն. Այո առ դուրս կայ։ Եւ ասեն դեւքն. Վայ մեզ, զի ոչ տայ թոյլ մեզ հանգչել ի բնակութիւնս մեր։ Եւ ելեալ արտաքս դեւքն ասեն ցսուրբ առաքեալն. Դարձո զմեզ ի բնակութիւնս մեր և ծառայեմք քեզ, և ուր առաքես՝ քո հրամանաւդ երթամք։ Եւ ասէ Թովմաս. Ով ազգ անհաւատ և թիւր, մինչեւ յե՞րբ տանջէք[3] զորդիս մարդկան. արդ յայսմհետէ ոչ կարէք տանջել[4] զոք։ Յայնժամ եբաց Աստուած զբերան իշխանին և ասէ ցսուրբ առաքեալն. Խորագիտութիւն Քրիստոսի և առաքեալ բարձրելոյն, ունիս զխորհուրդս ծածկեալ Որդւոյն Աստուծոյ, զարթո զզօրութիւն քո և եկ ի կեցուցանել զմեզ. քանզի Աստուած առաքեաց զքեզ առ Հնդիկս դարձուցանել ի Տէր Աստուած իւրեանց։ Եւ դարձեալ իշխանին ասէ ցբազմութիւն մարդկան, հաւատալ ի Տէր Աստուած և ի սուրբ առաքեալ նորա։ Բազում և այլ ինչ խօսեցեալ իշխանին զադարեաց.

1. Ա. օր. յարօտն։
2. Ա. օր. չունի ասէ ցիշա վարն... եւ ասեն դեւքն վայ։
3. Ա. օր. մինչեւ ցայժմ դատէք զորդիս։
4. Ա. օր. չարչարել զմարդիկ որ ստեղծեալ են յարարչէն. յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի հալածեալ լինիք. չունի... Եւ ասաւ։

և ամենայն բազմութիւնն զարմանային։ Եւ Նստաւ Թովմաս ի տան զօրագլխին, և բժշկեաց զամենայն հիւանդսն և զախտաժէտսն որ էին ի քաղաքին, և հաւատացին բազումք, և ի կողմանց կողմանց գային և մկրտէին ։

Լուաւ զնմանէ Միգդոնա կին Քուրիսայ, որ էր երկրորդ Թագաւորութեան Մազդայի [1]. և եկեալ առ ոտս առաքելոյն, լուաւ զբանն քարոզութեան երկնային յուսոյն և յարութեան մեռելոց և արքայութեանն երկնից, և մկրտեցաւ յանունն Յիսուսի Քրիստոսի. և գնաց ի տուն իւր և ոչ ննջէր ընդ առն իւրում։ Իսկ Քուրիս մտեալ առ Թագաւորն, պատմեաց նմա և ամբաստան եղեւ վասն Ծոփարայ և ասէ. Ո՞չ գիտես զինչ գործեաց զօրագլուխն քո Ծոփար. չոգաւ և ած այր մի [2] ի քաղաքս մեր, զկանայս յարանց մեկնէ և զարս ի կանանց։ Արդ, կանայք քաղաքիս ոչ եղեւ նմա բաւական մեկնելոյ, չոգաւ Միգդոնա [3] առ նա և լուաւ ի նմանէ բանս կախարդութեան և մեկնեցաւ յանկողնոյ իմոյ. արդ, աղաչեմ զքեզ, զի առաքեսցես զԹագուհին առ Միգդոնա, թերեւս եկեսցէ յուղղութիւն։ Եւ մտեալ Թագաւորն առ Թագուհին, և ասէ. Ո՞չ գիտես զի կին Քուրիսայ չոգաւ առ այր մի զոր ած ի քաղաքս Ծոփար [4], և լուաւ ի նմանէ բանս և մեկնեցաւ յառնէ իւրմէ. արդ, երթ առ նա և խօսեա բանս յականջս նորա, թերեւս եկեսցէ յուղղութիւն։ Եւ յարուցեալ Թագուհին եկն առ Միգդոնա և ասէ. Ո՞չ գիտես եթէ Քուրիս երկրորդ է Թագաւորութեանս մեր, և զի՞արդ գործես դայս, զի բանիւ առն միոյ օտարի մեկնիս յառնէ քումմէ. բաւ և մի՛ առներ դայդ։ Եւ այլ բազում բանս խօսեցաւ որ նման են սմին։ Եւ ասէ Միգդոնա. Ո՛վ Թագուհի, աչք քո

1. Ա. օր. Մազդէի։
2. Ա. օր. յաւելու կախարդ։
3. Ա. օր. կինն իմ։
4. Ա. օր. յաւելու զօրագլուխըն մեր։

զառաքեալն չիք տեսեալ և զբարբառ քարոզութեան Նորա չէ լուեալ և յոյս կենաց արքայութեանն երկնից ի միտս քո չէ ծագեալ, և այսպէս անզգայաբար խօսիս ընդ իս: Եւ ասէ Թագուհին Տերտիղիա. Թէ այդ այդպէս է, տար զիս առ այրն այն: Եւ յարուցեալ Թագուհին եկն առ սուրբ առաքեալն: Իբրև ետես Թովմաս, ասէ ցնա. Ո՛վ Թագուհի, ընդէ՞ր եկիր տեսանել զայր օտարոտի: Եւ ասէ Թագուհին. Պատմեա ինձ զսքանչելիսն Աստուծոյ: Եւ սկսաւ սուրբն Թովմաս ի սկսման[1] սկիզբն արարեալ քարոզեաց Նմա զՔրիստոս. և Տէր եբաց զմիտս[2] Նորա ընդունել զբանն կենաց. և նոյնժամայն առեալ մկրտեաց զնա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, և յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ :

Եւ իբրև գնաց Թագուհին առ Թագաւորն, եհարց ցնա և ասէ. Թերևս ածէ՞ր յուղղութիւն զկին Փուրխայ: Պատասխանի ետ Թագուհին և ասէ. Ո՛վ Թագաւոր, ո՞չ գիտես զի արդարև իրաւ է կինն Փուրխայ. զի շոգայ ես առ առաքեալն և լուայ զքարոզութիւն Նորա և զյոյս յարութեան[3] և զկեանս անվախճան, և հաւատացի ես ի բան Նորա ի Հայրն ամենակալ և յՈրդին միածին և ի Հոգին սուրբ՝ ի մի աստուածութիւն, և մկրտեցայ, և խոստովանիմ թէ Նա միայն է Աստուած[4] և չիք այլ ոք բաց ի Նմանէ: Իբրև լուաւ զայս Թագաւորն, պատառեաց զհանդերձս իւր և ասէ. Մի՛ լիցի հանգիստ անձին Փուրխայ, զի զայս տառապանս ած ի վերայ իմ: Եւ խօսեցաւ Թագաւորն բանս բազումս ընդ Թագուհին հանդերձ սպառնալեօք[5], և ոչ կարաց ինչ օգտել[6]: Յայնժամ հաւատաց և որդի Թագաւորին անդրանիկ,

1. Ա. օր. յիսկզբանն:
2. Ա. օր զմիտս:
3. Ա. օր. յաւելու զարքայութեանն անանց:
4. Ա. օր. յաւելու ճշմարիտ:
5. Ա. օր. յաւելու եւ ողոքանօք:
6. Ա. օր. յաւելու զի ամենայն քաղաքն գնացին զհետ առաքելոյն:

որում անուն էր Վիժան. ընդ նմա և այլ բազում մեծամեծք: Եւ իբրև գիտաց Թագաւորն, թէ ոչ ինչ կարաց օգտել, զի ամենայն քաղաքն գնաց զկնի նորա, ապա հրամայեաց արկանել ի բանտ զամենայն սուրբս և զկինն և զորդին և զՄիգդոնա և զամենայն հաւատացեալս, և զսուրբ առաքեալն զան հարեալ եդ ի յայլ բանտի: Եւ ի մէջ գիշերին երևեցաւ Տէրն և աւէ ցսուրբ առաքեալն. Արի գնա առ հաւատացեալսն[1] և մխիթարեա զնոսա բանիւ ուրախութեան[2]: Եւ ելեալ սուրբ առաքեալն ի բանտէն, օրհնէր[3] զԱստուած և փառաւորէր զամենասուրբ Երրորդութիւնն յաւիտեանս ամէն:

1. Ա. օր. յաւելու ի բանտին:
2. Ա. օր. արքայութեան:
3. Ա. օր. չունի օրհնէր.... ամէն:

## ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

## Թ Ո Վ Մ Ա Յ Ի   Ա Ռ Ա Ք Ե Լ Ո Յ

## ՈՐ ԿԱՏԱՐԵՑԱՒ Ի ՀՆԴԻԿՍ

Մտեալ այնուհետև Թովմայի առաքելոյ ի տուն Վժմանայ՝ որդւոյ Թագաւորին Հնդկաց ի գիշերի, և բազում լուսով պայծառացաւ ամենայն ինչ որ ի տանն էր։ Եւ սկսաւ առաքեալն աղօթել և ասել[1]. Կցորդ և օգնական որ ի տկարութեան իցեն՝ Յի-սուս, յոյս[2] և վստահութիւն աղքատաց, հանգիստ աշխատելոց[3], ձայն որ յերկնից եկն[4], սպասաւորաց մխիթարութիւն, գիտանոց և նուաճանգիստ, որ[5] ելեալ են ի քո անդից, բժիշկ և փրկիչ որ վասն բազմաց խաչեցար[6] և վասն քո ոչ ոք խաչեցաւ։ Դու ես որ իջեր ի տարտարոսն զօրութեամբ քո մեծաւ, և իշխանք մահու ոչ կարացին հայել ի քեզ. ելեր փառօք մեծաւ և հաներ զքոյն ընդ քեզ. և զուղիղ ճանապարհն արարեր առ ամենեսեան. ընդ քո շաւիղն ամենեքին փրկեալք եղին, և մուծեր զնոսա ի քո գաւիթն և խառնեցեր զնոսա ի թիւ քո հօտից։ Ո՜վ բազում գթութեանդ քում, զոր բա-զում ողորմութեամբն իւրով առաքեաց մեզ Հայր

1. Ա. օր. եւ խօսել այսպէս։
2. Ա. օր. իմ եւ ապաւէն։ Բ. օր. իմ եւ վստահութիւն իմ, ապաւէն։
3. Ա. օր. յաւելու եւ որ կար-դան առ քեզ փրկիչ։
4. Ա. օր. Բան որ ի յերկնից իջեր։
5. Ա. օր. որ ուղղես եւ ճան-փոխցանես ի խաղաղութեան զծփեալսն ի մեղաց։
6. Ա. օր. եկիր ի չարչարանս խաչի ազատելով զըմբռ-նեալսն ի սատանայէ։

քո, որոյ գործք իւր փառաւորեն զնա։ Որդի վերին Հօրն և կատարեալ վերին զօրութեանն, առաքեալ [1] արքունեակ քոյ ծառայից. մեծատունդ՝ որ զքո ստացուածոց մեծացուցանես, աղքատ և կարօտ՝ քաղցեալ [2] զաւուրս քառասուն եղեր և լցուցեր զհոգիս ծարաւեալս ի քումմէ երանութենէդ։ Դու լեր ընդ Վիժանայ և ընդ Տերտեայ և Մանասարայ [3], և մոյծ զնոսա ի հօտ քո, և լեր նոցա օգնական յայս [4] մոլորեալ աշխարհիս, և բժշկեա յախտաժէտ երկրիս. լեր նոցա հանգիստ յաշխատեալ վայրի, և արբեա զնոսա ի պիղծ գաւառէս, և մաքրեա զնոսա ի պղծութենէ այնոցիկ՝ որք են ի յաւիտենիս թշնամւոյն. լեր բժիշկ մարմնոց նոցա և կեանք հոգւոց նոցա. արա զնոսա քեզ տաճար սուրբ և աստուածեղէն օթևան [5] անապական, զի բնակեսցէ ի նոսա Հոգին սուրբ [6]։

Եւ իբրև աղօթեաց զայս այսպէս, ետ նոցա ամենեցուն զտէրունական կնիքն. և մատուցեալ [7] հաց և բաժակ օրհնեաց նոյնպէս [8]. մարմինդ քո անապական [9] լիցի մեզ ի կեանս և արիւն քո ի թողութիւն մեղաց. և փոխանակ լեղւոյն զոր արբեր վասն մեր, բարձցի ի մէնջ լեղի թշնամւոյն. և

1. Բ. օր. առաքեալ արքունեակ ի քոց ծառայիցն։
2. Ա. օր. եւ ծարաւի վասն մեր եղեալ, զկերպարանս ծառայի առնլով ազատութիւն շնորհեցեր մեզ ի ծառայութենէ մեղաց եւ զանձինս քաղցեալս բարութեամբ լցուցեր, եւ զհոգիս ծարաւիս աստուածային սիրոյդ, արբուցեր շնորհօք սուրբ Հոգւոյդ. եւ ես բաւական ամենեցուն որք կարդան առ քեզ։
3. Ա. օր. Մանասերայ եւ հաստատեա զնոսա ի հաւատս քո սուրբ։ Բ. օր. Մանանասերայ։
4. Ա. օր. յամենայն պատահմունս։
5. Բ. օր. անօթս անապականութեան։
6. Ա. օր. յաւէլու զի անդադար փառաբանեսցեն զանճառ եւ զմեծ տէրութիւնդ քո։
7. Ա. օր. ապա առեալ։
8. Ա և Բ. օր. այսպէս։
9. Ա և Բ. օր պատուական։

վասն քացախոյն զոր ճաշակեցեր ընդ մեր, տկարութիւն մեր զօրասցի, և վասն թքոյն զոր առեր վասն մեր՝ ընկալցուք զցօղն անմահութեան, և վասն հարուածի եղեգանն որ հարար[1] վասն մեր՝ ընկալցուք զկատարեալ կեանս քո, և ընդ փշեղէն պսակին զոր եդին ի գլուխ[2] քո վասն մեր՝՝ ընկալցուք զանթառամ պսակ սիրոյ քո, և փոխանակ պատնյոյն զքեզ պաստառակալաւ վասն մեր, զօրութեամբ քո պնդեսցուք[3], և զի թաղեցար ի նոր գերեզմանի՝ ընկալցուք մեք դարձեալ զնորն յարութեան որ ի քէն եղև, և վասն յարութեան քո ի մեռելոց, և մեզ լիցի յարութիւն ի կեանս քո[4], և ի սուրբ դատաստանի քո կացցուք առաջի քո: Եւ բեկեալ ի գոհութենէ[5] հացէ անտի ետ Վիժանայ և Սիփորեայ և Տերտեայ և Միգդոնայ և Մանասարայ և կնոջ և ուստերաց[6] Սիփորեայ, և ասէ. Լիցի գոհութիւնս այս ի կեանս և ի զթութիւն և յուրախութիւն և յառողջութիւն հոգւոց ձերոց: Եւ նոքա ասացին, ամէն. և ձայն լսելի եղև, որ ասէր, ամէն: Եւ նոցա լուեալ զձայնն զայն, անկան ի վերայ երեսաց իւրեանց: Եւ դարձեալ ձայն լսելի եղև կրկին անգամ որ ասէր. Մի երկնչիք այլ միայն հաւատացէք:

Եւ այնուհետև երթայր առաքեալն յարգել բանտին, երթայր և Տերտեա հանդերձ Միգդոնեաւ և այլովք ևս որք ընդ նմա ի յարգել բանտին: Իսկ սուրբ առաքեալն ասէ ցնոսա առաջի բազում[7] եղբարցն՝ որք էին անդ. Դստերք և քորք, ի Տէրն

1. Բ. օր. զոր ընկալար:
2. Բ. օր. քեզ:
3. Ա. օր. յաւելու ի սէր աստուածութեան քո. եւ փոխանակ մահուանն քո կամաւ, կենդանացուցես զմեզ մեռեալ հոգիս իմ:
4. Ա. օր. յաւելու, ի կեանս սուրբս եւ անբիծս եւ անարատս: Բ. օր. շնորհի քո:
5. Բ. օր. զհացն ի գոհութեան սեղ:
6. Ա և Բ. օր. դստերն:
7. Ա և Բ. օր. բազմութեան:

իմ հաւատացէք[1]. ծառայակից իմ, այլ Տեառն Յիսուսի արբանեակք, լուարուք ինձ յաւուրս յայսմիկ, քանզի զբանն իմ աւանդեմ ձեզ, և ոչ խօսեցայց ընդ ձեզ ի մարմինս յայսմիկ և ոչ յաշխարհիս յայս. քանզի ելանեմ առ Տէր Յիսուս, առ այն՝ որ խոնարհեցոյց զինքն մինչև ի յիս ի տրուպս. և եհան զիս ի մեծութիւն յաւիտենական, և արժանի արար զիս լինել ծառայ իւր ճշմարտութեամբ: Եւ հաստատութեամբ[2] երթամ, գիտելով զի ժամանակն լցեալ է և ժամադրութիւնն մերձեալ, զի երթեալ առից զվարձս իմ ի Տեառնէ իմմէ: Քանզի արդար է վարձատուն իմ և գիտէ[3] թէ որպէս պարտ է ինձ առնուլ[4]. զի ոչ զչարի և ոչ նախանձի, այլ մեծատուր[5] է ի պարգևսն իւր. ոչ է ձիշտ ի տուրսն, վասն զի վստահ է յաննիւղ ստացուածս իւր: Ոչ եմ ես Յիսուս, այլ ծառայ Նորա. չեմ ես Քրիստոս, այլ պաշտօնեայ Նորա. չեմ ես Որդի Աստուծոյ, այլ աղաչեմ որդի Աստուծոյ լինել: Կացէք ի հաւատսն Քրիստոսի. մնացէք ի յոյս Որդւոյն Աստուծոյ. մի ձանձրանայցէք ի նեղութիւնս և մի երկնչիցէք[6] յորժամ տեսանիցէք զիս թշնամանեալ, կամ յորժամ անարգեալ[7] լինիմ, կամ սպանանիցիմ, վասն զի զկամս Նորա յանկ[8] հանեմ: Քանզի թէ ոչ կամեցայց մեռանել, գիտէք եթէ կարեմ, այլ համարեալ մահն չէ մահ, այլ լուծումն մարմնոյ. վասն որոյ խնդութեամբ ընդունիմ[9] զայս, զի երթեալ տեսից զվայելուչն զայն և զազնուագոյնն

1. Բ. օր. հաւատացեալ: Ա. օր. որք հաւատացէք յաւետարանն փրկութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որ իննէ:
2. Ա. օր. ստուգեալ հաստատութեամբ ի ճշմարտութիւն երթամ առ Տէրն իմ:
3. Բ. օր. գիտեմ:
4. Ա. օր. յաւելու զվարձսն:
5. Բ. օր. առատ:
6. Ա. և Բ. օր. երկմտիցէք:
7. Բ. օր. արգելեալ: Ա. օր. յաւելու կալեալ:
8. Բ. օր. յանգ ելեալ հանեմք եւ ի գլուխ:
9. Ա և Բ. օր. յաւելուն զելս:

և զցանկալին. քանզի բազում աշխատութեամբ համբերի ի գործս նորա և վաստակեցի վասն նորին շնորհացն, որ եկն յիս և ոչ երբեք հեռացաւ յինէն: Եւ արդ, մի՛ սպրդեսցէ մտանել ի ձեզ սատանայ և զխորհուրդս ձեր բաժանել. մի՛ լիցի նորա ի ձեզ տեղի ապստամբին[1] և բանսարկուին, զօրագոյն քան զնա է այն զոր դուքն ընկալարուք. Քրիստոսի դատաստանին[2] ապաւինեցէք, զի եկեալ ընկալցի զձեզ. Նա է զոր տեսանելոց էք ի գալստեանն:

Եւ կատարեալ առաքելոյն զբանս զայս՝ մտանէր ի խաւարչուտ տունն, և[3] ասէ դարձեալ. Փրկիչդ մեր Քրիստոս, որ չար համբերես վասն մեր, լիցին դրունքս այս որպէս յառաջագոյնն էին, և կնիք դիցին ի վերայ սորա[4]: Իսկ նոքա տրտմեալ էին և լային, զի գիտէին եթէ Մշդեհ կորուսանելոց է զնա: Եւ իբրև եմուտ սուրբ առաքեալն և եգիտ զպահապանսն զի մարտնչէին ընդ միմեանս և ասէին. Զի՞նչ մեղաք կախարդիս այսմիկ զի եբաց զդուրս մեքենայիւք կախարդութեան և կամեցաւ զամենայն արգելեալս[5] փախուցանել: Բայց արդ երթեալ պատմեսցուք արքային զամենայն, ասասցուք և վասն կնոջ նորա և որդւոց: Իսկ Թովմաս լուռ կայր մինչ նոքա խորհէին: Եւ իբրև եղև առաւօտ, երթային առ թագաւորն և ասէին ցնա. Տէր արքայ, զկախարդն զայն հան անտի և արգել այլ ուրեք, զի մեք ոչ կարեմք պահել զնա. և այժմ քո բաղդդ պահեաց զբանտն, ապա թէ ոչ ամենեքեան փախուցեալ էին. քանզի երկիցս եբաց զնա, և զդուրս բանտին գտաք բացեալ: Այլ և կին քո և որդիք[6] հանդերձ ամամբք ոչ մեկուսանան ի նը-

1. Ա. օր. չարին: Բ. օր. ա-ճաւորին:
2. Ա և Բ. օր. գալստեանն:
3. Բ. օր. յաւելու եղեալ ծունր Թովմաս եւ սկսաւ ասել այսպէս:
4. Ա և Բ. օր յաւելուն. եւ թողեալ զնոսա երբայր յարգելարանն:
5. Բ. օր. կալանաւորսն:
6. Ա և Բ. օր. որդի:

մանէ։ Իբրև լուաւ զայս թագաւորն, երթեալ գննէր զկնիքն[1] որ ի վերայ դրացն կային. և գտեալ զնոսա ողջ որպէս էին զառաջինն՝ զարոլեաց[2] զպահապանսն եթէ ընդէ՞ր ստէք, զի կնիքս ողջ են իբրև զառաջինն, դուք զի՞րդ ասէք թէ Տերտիա և Միգդոնիա զան առ Նա ի բանտ անդր։ Եւ պահապանքն ասեն. Մեք զճշմարիտն ասացաք քեզ։ Եւ Մշդեհ դարձեալ ի բանտէն Նստաւ յատենի և կոչեաց զԹովմաս և մերկացուցեալ զնա կացոյց առաջի իւր, եհարց զնա և ասէ. Ծառա՞յ ես եթէ ազատ։ Եւ Թովմաս ասէ. Ծառայ եմ[3] միայնոյ՝ որում դու ոչ ունիս իշխանութիւն։ Մշդեհ ասէ. Զի՞րդ փախեար և եկիր յաշխարհս յայս։ Եւ Թովմաս ասաց. Եկի այսր զի զբազումս կեցուցից, և քոյով ձեռօք փոխեցայց յաշխարհէս յայսմանէ։ Մշդեհ ասէ. Եւ ո՞վ է տէրն քո, և զի՞նչ անուն է Նորա, և յորմէ՞ աշխարհէ ես։ Եւ Թովմաս ասաց. Տէրն իմ Տէր է քո և երկնի և երկրի։ Մշդեհ ասէ. Զի՞նչ անուն է Նորա։ Թովմաս ասաց. Զկարես զանուն Նորա լսել ի ժամանակիս յայսմիկ, այլ տուեալ անուն Նորա է Յիսուս Քրիստոս։ Եւ Մշդեհ ասէ. Ես ոչ վաղվաղակի կորուսի[4] զքեզ, այլ երկայնմտութեամբ վարեցայ առ քեզ և դու յաւելեր ի չար գործս քո, և կախարդութիւն քո ընդ ամենայն տեղիս տարածեցաւ և[5] լսելի եղև։ Եւ Թովմաս ասաց. Այս կախարդիք ընդ իս գնան յորժամ աստի ելանեմ։ Ասէ Մշդեհ. Այլ արդ զայս առնեմ[6] քեզ, զի մոգութիւնդ քո՝ համդերձ քև ի բաց քերեսցի[7], և մեր աշխարհս սրբես-

1. Ա. օր. յաւելու մատանեացն։
2. Ա և Բ. օր. եւ ասէ զպահապանսն։
3. Ա և Բ. օր. միոյ եւ միայնոյ։
4. Ա և Բ. օր. վաղվաղեցի կորուսանել։
5. Բ. օր. յաւելու պատրանօք։
6. Ա. օր. ասեմ։
7. Ա. օր. ջերքեսցի։

ցի յայնմանէ։ Թովմաս ասէ. Զայս գիտեմ[1] զի աստի ոչ մեկուսանամ։ Զայս ասացեալ առաքելոյն, Մրշ-դեհ խորհէր ի միտս իւր թէ որպէս սպանցէ[2] զնա. և վասն բազում ամբոխին որ աշակերտեալ էին ի նմանէ՝[3] երկնչէր. քանզի բազումք յիշխանացն և ի մեծամեծացն հաւատացին ի բան նորա։ Եւ առեալ զնա ելանէր արտաքոյ քաղաքին, երթային ընդ նմա և զօրականքն հանդերձ զինու. իսկ այլ մարդիկն կարծէին եթէ ուսանել ինչ կամի թագաւորն ի նմանէ, և կացեալ մեկուսի հայէին ընդ նոսա։ Եւ իբրև չոգան կէս մղոնի միոյ, ետ զնա ի չորս զինուորս և և յիշխան մի, պատուիրեաց նոցա և ասէ. Երթայք տարէք[4] զդա ի լեառնն և անդ սպանէք սուսերաւ. և ինքն դարձաւ[5] ի քաղաքն։ Իսկ մարդիկն ընթանային զկնի Թովմայի[6] փրկել զնա։ Զօգան այնուհետև երկու զինուոր ընդ աջմէ առաքելոյն և երկուս յահեկէ՝ աշտէք ունելով ի ձեռս, և իշխանն ունէր զձեռանէ նորա և ձգէր բառնալով[7] զնա։ Եւ Թովմաս ասէր. Ո՜վ խորհուրդ ծածկեալ, որ մինչև ցելս մեր ի մեզ կատարի, ով մեծութիւն փառաց նորա, որ ոչ տայ վշտանալ մեզ ի կարիս մարմնոյ. չորք են որ ունին զիս, քանզի ի չորից ծնեալ եմ ես. և մի է որ ձգէ զիս, քանզի ի միոյ եմ և առ մի երթամ. և զայս այժմ կատարեմ[8] զի Տէրն իմ ի միջէ է և ի միջէ խոցեցաւ, և ես ի չորից եմ և ի չորից խոցիմ։ Եւ ելեալ ի լեառն՝ յորում վայրի հանդերձեալ էր մեռանել, ասէ ցզինուորսն որ ունէին զնա և ցայլսն ես. Եւ այժմ ի կատարածի իմում լուարուք ինձ, քանզի յելս մարմնոյս

1. Ա. օր. զի բեկանէ եղանեմ սակայն աստի։
2. Բ. օր. կորուսանիցէ։
3. Ա. և Բ. օր. նմա։
4. Ա. օր. ձանեք։
5. Ա. օր. դարձաւ եմուտ։ Բ. օր. դարձաւ անդրէն։
6. Ա. օր. յաւելու եւ կամէին։ Բ. օր. եւ կամեցան։
7. Ա. օր. բռնաբար։
8. Ա. և Բ. օր. ընկալեմ։

հաւի. մի կուրասցին աչք սրտից ձերոց և մի ականջք ձեր խլասցին. Հաւատացէք յԱստուածն զոր քարոզեմ, և մի առաջնորդէք [1] ձեզ ի խստասրտութիւն ձեր, այլ կրօնաւորեցարուք յամենայն վարս բարեպաշտութեան և վայելչական ազատութեան ձերոյ և փառացն որ առ մարդիկ և կենացն որ առ Աստուած [2]: Ասաց և ցՎխժան որդի Մշղեհի արքայի. Պաշտօնեայ Քրիստոսի, ո՞ւր արբանեկացդ Մշղեհի զինչ արժան է, զի թոյլ տայցեն՝ երթալ կալ յաղօթս [3]: Եւ երթեալ առաքելոյն յաղօթս կալ, ասէ. Տէր իմ և Աստուած իմ, յոյս իմ և վըստահութիւն իմ, վարդապետ իմ, որ զքաջալերութիւնս եղեր յիս, դու ուսուցեր զիս այսպէս յաղօթս կալ. ահա զքո աղօթս աղաչեմ և զկամս քո յանկ հանեմ: Դու լեր ընդ իս մինչ ի կատարած, դու ես որ ետուր [4] ինձ համբերութիւն ի մանկութենէ ի փորձութեան և ի կեանս, և յապականութենէ պահեցեր զիս. դու ես որ յաղքատութիւն աշխարհի ածեր զիս և ճշմարիտ [5] մեծութեամբն լցուցեր զիս Տէր. դու ես որ քեզ անուանեցեր զիս, վասն որոյ ի կին մարդ ամենևին ոչ մերձեցայ, զի մի գտցի յապականութեան՝ արժանաւոր տաճար քո: Չէ բաւական բերան իմ գոհանալ զքէն և ոչ զմըտաւ ածել զփոյթն քո և զխնամն որ եղև յիս: Քանզի կամէի մեծանալ զանցաւոր մեծութիւնս, և դու ի

1. Բ. օր. առաջնորդեսցէ ձեզ խստասրտութիւն ձեր: Ա. օր. ի խստութիւնս:
2. Բ. օր. յաւելու ցանկալ ձեզ անապական կենացն անբատուեր լուսոյն մշտնջենաւոր խնդութեանցն որ կայ եւ պահի եւ երբեք ոչ նուազի. յաղագս այսորիկ խօսեցայ ընդ ձեզ անդադար, պատրաստել զանձինս ձեր երկնաւոր առագաստին ուր նրանիքեցի զձեզ զամենեսեան:
3. Ա. օր. յաւելու իսկ Վխժան հաւանեցոյց զգինուորսն: Բ. օր. իսկ Վխժան հաւանեցուցանէր զնոսա:
4. Ա. օր. ի մանկութենէ իմմէ ետուր ինձ ի փորձութիւն համբերութեան կեանս:
5. Ա. օր. ճշմարտութեամբ քով:

տեսլեան ցուցեր ինձ, եթէ ի կորուստ և ի վ̃աս լինի սատանայեացն զնա. և հաւատացի յայտնութեան քո և մ̃ացի յաղքատութեան աշխարհիս, մինչև դու ճշմարիտ մեծութիւնդ յայտնեցար ինձ, որ և զիս և զայլս քեզ արժանիս լցուցեր ի քումմէ մեծութենէդ, և ի հոգոց և ի զբօսանաց զքոյն ազատեցեր[1]: Եւ արդ, լցի զպատուիրանս քո և կատարեցի զկամս քո, և եղէ աղքատ և կարօտ և օտար և ծառայ և արհամարհեալ և կապեալ և քաղցեալ և ծարաւի և մերկ և աշխատեալ, զի մի կորիցէ աշխատութիւնն մեր[2], և յոյսն որ ի քեզ է՝ մի ամաչեսցէ, և բազում վաստա՛կ իմ որ ի քեզ է՝ մի պախարակեսցի[3], և մի կորիցեն աղօթք իմ և պահք յաճախք, և բազում փոյթ իմ որ ի քեզ է, և մի փոխանակեսցի սերմն ցորենոյ յերկրէ քումմէ, և մի յափշտակեսցէ զնա թշնամի և զիւր որոմն խառնեսցէ. քանզի քո երկիր չընդունի զորմն Նորա, այլ և ոչ կարէ մտանել ի յշտեմարանս Նորա: Զորթն քո տնկեցի յերկրի, զարմատս իւր արձակեաց ի խոր և ոստք Նորա ի բարձունս տարածեցան. պտուղք Նորա ի վերայ երկրի ձգեցան և ի Նոցանէ ուրախ լինիցին արժանաւորքն քո զոր սացար: Զարծաթն զոր ետուր, արկի ի սեղանս. յորժամ պահանջիցես զայն, տուր ինձ հանդերձ տոկոսեօք զոր խոստացարն: Զմի[4] քանքարն յանկ հանեալ տասն արարի, յաւել ինձ զոր ունէին. որպէս հրամայեցեր պարտապանին իմոյ, թողի զպարտսն. մի յինէն խնդրեսցես զայն: Ցընթրիս կոչեցայ և եկի, և յագարակէ և ի լծոյ եզանց և ի կնոջէ ուրացեալ եղէ զի մի խոտեցայց վասն այսր: Ի հարսանիս կոչեցայ և սպիտակ հանդերձ զգեցայ, զի արժանի եղէց Նմա, և մի՛ կապեալ զոտս և զձեռս

1. Ա. օր. զերծուցեր:
2. Ա. օր. վաստակութիւն իմ:
3. Ա. օր. պակասեսցի:
4. Պակասէր ի բն. եղաք ըստ Ա. օր...... Զեախտինան:

անկայց յարտաքին խաւարն։ Ճրագ լուսոյ պայծառութեան ապաւէն Տեառն, դարձո՛ ի Հարանենաց, զի ընկալցի զնա, և մի տեսից զիս տխուր յիւղոյն ծախելոյ։ Աչք իմ տեսանեն զքեզ, և սիրտ իմ ուրախութեամբ ցնծայ զի արարի զկամս քո. և զպատուիրանս քո կատարեցի, զի նմանեցայց ժիր և երկիւղած ծառային, որ իւրով յօժարութեամբն ոչ ծուլացաւ ի հսկելոյ։ Զամենայն զիշերն վաստակեցի ի պահել զտուն իմ, զի մի ական հատցի։ Զմէջ իմ պնդեցի ճշմարտութեամբ, զկօշիկս ոտից իմոց պնդեցի, զի մի տեսից զնա մեղկեալ։ Զձեռս իմ եդի ի վերայ մաճոյ հերկոյն, և յետս ոչ դարձայ զի մի թիւրեսցին ակօսքն։ Ապխտակացաւ արտն և հասին նմա հունձք, զի զվարձն իմ առից. զհնանալոյ զհանդերձն իմ մաշեցի. զհարկն իմ որ ի համգիստն հասուցանեն կատարեցի. պահեցի զպահն առաջին և զերկրորդն, զի տեսից զերեսս քո և երկիր պագից սուրբ ճառագայթից քոց։ Խլեցի արմատաքի զչարան, և զանապատն լքի յերկրի, զի ի քո զանձուցդ լցայց։ Զխոնաւ աղբիւրն ցանկութեանց որ յիս էր՝ ցամաքեցուցի, զի ի կենաց աղբիւրդ հանգեայց։ Զկապեալն զօր ետուր ցիս սպանի, և լուծեալս որ յիս մի անկցի ի յուսոյն իւրմէ։ Զներքինն արտաքին արարի, և զարտաքինն՝ ներքին, և ամենայն կամք քո կատարեցան յիս։ Յետս ոչ դարձայ, այլ ընթացայ յառաջ, զի մի նախատ եղէց։ Զմեռեալն ոչ կենդանացուցի, և զնուազեալն լցուցի, զի ընկալայց զպսակն յաղթութեան, և իշխանութիւն երկոցունց յիս կատարեսցի։ Զնախատինան ընկալայ յերկրի, այլ զփոխարէն զվարձս իմ տուր յերկինսդ։ Մի ագասցեն զինէն զօրութիւնք[1] և իշխանութիւնք, և մի խորհեսցեն ինչ վասն իմ։ Մի տեսցեն զիս մաքսաւորք և պահանջողք և չահեսցեն[2] ինչ յինէն։ Մի գոչեսցեն չարք և վատթարք

1. Ա. օր. զուարթունք։ 2. Ա. օր. խնդրեսցեն։

ի վերայ առաքինւոյն և հեզին և մեծ վերացելոյն, և մի՛ վառեսցեն կալ առաջի իմ վասն զօրութեանդ քո որ պահէն[1] զիս[2]: Տուր ինձ, Տէր[3], զի խաղաղութեամբ անցից, և ուրախութիւն և խաղաղութիւն յուղարկեսցէ զիս և կացից առաջի դատաւորիդ, և սատանայ մի հայեսցի յիս. աչք նորա կուրասցին լուսովդ քո որ յիս բնակեցաւ. խցցէ զբերան իւր սատանայ, քանզի ոչ ինչ եգիտ յիս[4]:

Եւ այսպէս կացեալ[5] նորա յաղօթս, ասաց ցզինուորսն. Եկայք կատարեցէք զկամս[6] առաքչին ձերոյ: Եւ եկեալ չորեքին զինուորքն խոցեցին զնա աշտէիւքն. և այնպէս անկեալ յերկիր[7] կատարեցաւ: Իսկ եղբարքն ամենայն լային. բերին այնուհետև հանդերձս ազնիւս և կտաւս[8] բազում յոյժ, և պատեալ զնա այնոքիւք՝ եդին զնա ի թագաւորական շիրմի, յորում առաջին թագաւորքն եդեալ էին:

Իսկ Միփորա և Վիժան ոչ կամեցան ելանել[9] ի լեռնէն, այլ անդէն ի լերինն նստէին զօրն ող-

1. Ա. օր. պահեաց:
2. Ա. և Բ. օր. յաւելուն՝ քանզի փախչին եւ խուսեն ի նմանէ, չկարացեալ ընդդիմանալ նմա. յանկարծօրէն դարձան ի վերայ անկանին հինս եղելոյ նոցա. իսկ բաժին որդւոյ չարին աղաղակէ եւ յանդիմանէ զնոսա: Բ. օր. յաւելու դարձեալ. այլ եւ ոչ ծածկի ի նոցանէ, քանզի զբնութիւն իւրեանց որոնչեն չարքն որք են չարին մանկունքն, ծառն այն որոյ պտուղքն դառն են:
3. Ա. և Բ. օր. յաւելուն ծառայիս քո:
4. Ա. օր. յաւելու եւ ես Տէր զանուն քո գովեցից յաւիտեան: Բ. օր. եւ ես ծառայ քո արժանի եղիցիմ պարծել յօրհնութիւնս քո, եւ փառս տալ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ այժմ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:
5. Բ. օր. կատարեալ նորա զաղօթսն:
6. Ա. և Բ. օր. զհրամանս:
7. Ա. օր. աւանդեաց զհոգին ի ձեռս Տեառն: Բ. օր. աւանդեալ զհոգին ի կամս Աստուծոյ:
8. Ա. օր. սուրբս պատանաց:
9. Ա. օր. ի քաղաքն:

ջոյն: Եւ երեւեալ նոցա սուրբ առաքեալն Թովմաս ասէ. Զի՞ նստեալ պահէք զիս. չեմ աստ, քանզի ելի և զխոստացեալն ինձ ի Քրիստոսէ զամենայնն ընկալայ. այլ յորուցեալ ինջէք աստի, զի յետ սակաւ միոյ ժամանակի և դուք առ իս ժողովեսջիք: Իսկ Մշդեհ և Քարխիոս[1] տարան զՄիգդոնա և զՏերտիա և յոյժ տառապեցուցին և նեղեցին զնոսա զի անսայցեն նոցա[2]: Եւ յայտնեալ նոցա սուրբ առաքեալն Թովմաս ասաց. Մի՛ մոլորիք, Յիսուս սուրբն և կենդանին վաղվաղակի արասցէ[3] զօգնականութիւն ձեզ: Եւ Մշդեհ և Քարխիոս տեսեալ թէ ոչ հաւանեցան նոցա Միգդոնա և Տերտիա, թոյլ ետուն նոցա կալ ըստ կամաց իւրեանց: Ժողովէին այնուհետև եղբարքն միաբան ամենեքեան յաւելեալք և հաստատեալք[4] ի բանն Տեառն և ցնծացեալք[5] ի շնորհս Հոգւոյն սրբոյ: Իսկ առաքեալն ի հրաժարելն իւրում[6], զՍիփորա ձեռնադրեաց երէց և զՎիժան սարկաւագ, յորժամ ել ի լեառնն մեռանել: Իսկ Տէրն օգնէր[7] նոցա և յաւելոյր ի հաւատս նոցա[8]:

Դէպ եղև ոչ[9] յետ բազում ինչ ժամանակաց, զի մի ոմն ի մանկանցն Մշդեհի հարկանէր ի դիւէ, և ոչ ոք կարէր բժշկել զնա, զի յոյժ դժնդակ էր դևն: Զմտաւ ած թագաւորն Մշդեհ և ասաց. Երթայց բացից[10] զգերեզման առաքելոյն Աստուծոյ, և

1. Ա. օր. Քուրխիոսն:
2. Ա. օր. եւ նոքա ոչ հաւանեցան կամաց նոցա: Բ. օր. եւ նոքա ոչ հաւանէին նոցա:
3. Ա. օր. հասցէ ձեզ յօգնականութիւն: Բ. օր. առաքեսցէ զօգնութիւն իւր զաներեւոյթ եւ պահեսցէ զձեզ:
4. Ա. օր. հաւատացեալքն:
5. Ա. օր. յաւելու շինէին:
6. Ա և Բ. օր. ի վճարելն իւրում յաշխարհէս:
7. Ա. օր. օգնեաց: Բ. օր. օգնական էր:
8. Ա. օր. յաւելու եւ ձեռն-տու լինէր նոցա: Բ. օր. ըստ օրէ:
9. Ա և Բ. օր. չունին ոչ:
10. Ա. օր. երթայք բացէք:

առեալ ոսկր մի զնորա, կախեցից [1] որդւոյ իմոյ և բժշկեսցի. և երթայր այնուհետև կատարել զմտածեալն [2]: Իսկ առաքեալն Թովմաս [3] ասաց ցնա. ի կենդանիս ոչ հաւատացեր, ի մեռեալս հաւատա՞ս. այլ սակայն մի երկնչիր. գթայ ի քեզ և ողորմի Տէր Յիսուս Քրիստոս վասն բազում գթութեանն [4]: Եւ ելեալ նորա ի լեառնն և բացեալ զգերեզմանն, ոչ եգիտ անդ ոսկր, զի ոմն յեղբարցն գողացեալ գնշխարս երանելւոյն և տարեալ ի Միջագետս: Այլ ի տեղւոյ անտի չիրմէն յորում ոսկերք առաքելոյն կային, հող առեալ արկ զորդւովն իւրով, և ասաց. Հաւատամ ի քեզ Յիսուս այժմ՝ յորժամ թողցէ [5] զաս այսն որ յամենայն ժամ խռովէ զմարդիկ, զի մի տեսցեն զքեզ: Եւ իբրև կախեաց զհողն [6] մանկանն, ողջ եղև պատանեակն: Ժողովէր [7] այնուհետև ընդ եղբարս Մզդեհ թագաւոր, խոնարհեցուցանէր զգլուխ իւր ընդ ձեռամբ Սիփորայ: Եւ առէ Սիփոր ցեղբարսն. Աղօթս արարէք ի վերայ Մզդեհի զի ընկալցի Յիսուսէ Քրիստոսէ զգթութիւն [8], և անախտակալ լիցի առ նա: Եւ այնուհետև միաբան ուրախ լինէին և աղօթս առնէին վասն նորա [9]. Իսկ մարդասէրն Քրիստոս թագաւորն թագաւորաց և Տէրն տերանց, ետ Մզդեհի զկենարար զլոյս իւր, և ժողովէր ընդ բազմութիւն հաւատացելոցն, փառաւորելով զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին, որում զօրութիւն և մեծվայելչութիւն յաւիտեանս յաւիտենից:

1. Ա. օր. յաւելու ի պարանոցէ: Բ. օր. կապեցից:
2. Բ. օր. զմտածեալսն:
3. Ա. օր. երեւեալ նմա: Բ. օր. ի տեսլեանն:
4. Ա. օր. վասն իւրոյ մարդասիրութեանն եւ բազում քաղցրութեանն: Բ. օր. վասն բազում ողորմութեան իւրոյ եւ քաղցրութեան:
5. Ա. և Բ. օր. երող զիս այն:
6. Ա. օր. յաւելու ի պարանոցն:
7. Ա. օր. մտանէր:
8. Ա. օր. զողորմութիւն: Բ. օր. զթողութիւն:
9. Ա. օր. յաւելու եւ հաւատաց ի Տէր եւ մկրտեցաւ:

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՅՆ ԹՈՒՄԱՅԻ

Ի ժամանակին յայնմիկ էին ի միասին առաքեալքն Տեառն յԵրուսաղէմ, Պետրոս և Յովհաննէս, Անդրէաս և Փիլիպպոս, Բարթողոմէոս և Մատթէոս, Թումաս և Յակովբոս, Սիմոն և Յուդա յակոբեան, զի հոգասցեն վասն աշխարհիս և քարոզեսցեն զբանն Աստուծոյ յաշխարհ. և վիճակս արկին ընդ միմեանս որպէս և հասցէ նոցա քարոզել զՅիսուս Քրիստոս:

Եհաս վիճակ Թովմայի յուդայեանց, որ անուանեցաւ երկուորեակ, երթալ ի Հնդիկս, և նա ոչ կամէր, այլ ասէր՝ ոչ կարեմ համբերել տօթոյ երկրին. վասն զի հիւանդ եմ, և ես եմ այր եբրայեցի, զիա՞րդ կարեմ զնեղիս նոցա հանել:

Եւ մինչդեռ զայս խորհէր և խօսէր Թովմաս, յայտնեցաւ նմա Յիսուս և ասէ ցնա. Մի՛ երկնչիր Թովմաս, զի շնորհք իմ ընդ քեզ եկեսցեն: Եւ նա ասէ. Այլ ուր և կամիս առաքեա զիս Տէր, ի Հընդիկս մի՛ առաքեր: Եւ մինչդեռ խորհէր, պատահեաց Յիսուս առն մի վաճառականի, որ եկեալ էր ի Հնդկաց և անուն նորա Աբենէս. յղեալ էր զնա Գունդիփորա թագաւորին Հնդկաց և պատուիրեալ էր վասն հիւսան և քարակոփ ճարտարաց: Եւ ետես զնա Յիսուս ի հեռաստանէ, ասէ. Զի՞նչ խնդրես, միթէ հի՞ւսն պիտոյ է քեզ: Եւ նա ասէ. Այո Տէր: Ասէ Յիսուս. Ես ունիմ ծառայ մի, գիտէ բազում ճարտարութիւն. և եցոյց նմա զԹովմաս ի հեռաստանէ: Այն է, ասէ, երթ կալ զնա և միաբանեա. և երեսուն դահեկանի վաճառեաց զնա: Եւ գրեաց նմա գիր Յիսուս այսպէս. Յիսուս Նազովրեցի որդի

Յովսեփայ ի գեղջէ Բեթղահեմէ ի Հրէաստանէ, վաճառեցի զԹովմաս ծառայ իմ առ Աբեննեսի վա-ճառականի, մի որ զորս վաճառող եղիցի, Գունդի-փորայ Հնդկաց թագաւորին։ Եւ առի ի գնմանէ երե-սուն դահեկան։ Եւ ձեռնագրեալ ի գիրն Պետրոսի և Յակոբայ։ Եւ չոգաւ և կալաւ զնա Աբեննէս և ած առ Յիսուս, և ասէ ցՅիսուս. Սա՞ է ծառայն քո։ Ասէ Յիսուս. Դա է։ Եւ դարձեալ ասէ ցԹովմաս. Դա՞ է տէրն քո։ Ասէ Թովմաս. Դա է Տէրն իմ։ Եւ ասէ ցԹովմաս. Գնոց գնեցի զքեզ։ Իսկ նա լուռ եւեթ կայր, և առ տարաւ զնա ի վանս իւր։

Եւ ի մէջ գիշերին յարուցեալ Թովմաս կայր յաղօթս առ Տէր և ասէր. Ուր և կամիս առաքեա զիս, ի Հնդիկս մի առաքեր զիս, Տէր իմ։ Եւ իբ-րև առաւօտ եղև, սկսաւ վաճառականն տանել զկա-րասին իւր ի նաւն, զի նաւեսցէ ի Հնդիկս. և գնա-ցին ի միասին։

Եւ մինչդեռ նաւէին ի նաւի անդ, սկսաւ հար-ցանել ցԹովմաս Աբեննէս և ասէ. Զի՞նչ ճարտարու-թիւն գիտես։ Պատասխանի ետ Թովմաս և ասէ. Գիտեմ ես արօր տանել և մաճիճս և տաճարս շինել և նաւս ուղղել և սիւնս խոյակաւորս կանգնել և տաճարս արժանի թագաւորաց։ Եւ ասէ ցնա Աբե-նէս. Զայդպիսի ճարտարս խնդրէ թագաւորն իմ. և ուրախ եղև վաճառականն իբրև լուաւ զայս. և եր-թային մի փառօք և գոհութեամբ։

Եւ իբրև մերձեցան ի քաղաք մի որում անուն էր Սենքրոք՝ մօտ ի Հնդիկս, լուան ձայն երգոց ուրախութեան։ Ասէ Թովմաս ցվաճառականն. Զի՞նչ է այս ձայն։ Եւ ասեն ոմանք ցնա. Թագաւորին դուստր մի էր, ետ զնա առն. այն ձայն է ուրախու-թեան. և պատուիրակս առաքեաց ընդ ամենայն իշ-խանութիւնս իւր, զալ ամենեցուն ի հարսանիսն, մեծի և փոքու, մեծատան և աղքատի, օտարի և ընտանւոյ, և մի որ վրիպեսցի ի հարսանեաց թա-գաւորին։

Ասէ Արենէս ցԹովմաս. Եկ և մեք երթիցուք ի հարսանիս Թագաւորին, զուցէ լուիցէ Թագաւորն և ցասումն հասուցանիցէ մեզ, մանաւանդ զի օտարք եմք. և չոգան ի հարսանիսն: Իսկ Թումաս ի մէջ բազմականացն էր բազմեալ, և աչք ամենեցուն ի նա հայէին իբրև յօտար. իսկ Արենէս ի միւս կողմն կայր: Եւ ճաշակեցին ամենեքին, իսկ Թումաս ոչ ճաշակէր ամենևին. և որք կային ընդ նմա, ասէին. Դու զի՞ եկիր այսր, զի ոչ ինչ ճաշակես:

Իսկ Թումաս ասէ ցնոսա. Ես մեծ ևս քան զուտելոյ իրս եկեալ եմ այսր, զի զկամս Թագաւորին կատարեսցուք: Քանզի հրաւիրակքն պատուիրելով պատուիրեցին, զի որ լուիցէ և ոչ եկեսցէ, չար պատիժս կրեսցէ: Եւ ճաշակեցին և ուրախ եղ՚ն, պսակս առին և իւղս բերին, ետուն և Թումայի: Իսկ սըրբոյն առեալ զիւղն էօծ զգլուխն և զմիրոն և եհար յականջսն. և զպսակն եդ ի վերայ բարձին, և ի ձեռինն ունէր ոստս ձիթենոյ: Եւ փողայրն շրջէր ի մէջ բազմականացն, և դիպեցաւ փողայրն եբրայեցի, և ասէր փողովն յանուն Թումայի. Երանի ուր դու իցես, և երանի ուր դու երթալոց ես: Իսկ Թումաս լուռ եւեթ կայր: Մի ոմն ի մատռուակացն յարուցեալ ի սակարանից անտի, ած ապտակ ի ծնօտն Թումայի: Իսկ Թովմաս ասէ. Աստուած իմ թողցէ քեզ յայսմ աշխարհիս. այլ այսօր ցուցցէ ի քեզ մեծ սքանչելիս առաջի բազմութեանս. և տեսցեն երախանքդ բերել զձեռն քո շան՝ ի մէջ մարդկանդ:

Զայս ասացեալ Թումայի, եկն Թագաւորն, և արար խրախութիւն ի մէջ նոցա. և օրհնեաց զհարսն և զփեսայն, և եղև զրաւ և գնացին մարդիկն. և մնացին հարսնն և փեսայն միայն: Եւ մատեաւ Թումաս և օրհնեաց զհարսնն և զփեսայն, և եղեւ ուրախութիւն մեծ Թագաւորին և ամենայն դրան արքունի:

Եւ յետ այսորիկ ժողովեցան բազմութիւնն ի ճաշ: Իսկ Թովմաս նստէր լուռ և աղօթէր ի սրտի իւրում: Իսկ մատռուակն որ ած ապտակ Թումայի,

ջուրն սպառեցաւ, և նա չգտաւ յաղբիւրն զջրոյ, և պատահեալ նմա առիւծ և գէշ գէշ պատառեաց զնա, և զաջ բազուկ նորա հանդերձ արմկաւն եբեր շուն մի ի մէջ բազմականացն: Իբրև տեսին զայն, զարմացումն կալաւ զամենեսին, և ասեն. Ո՞վ իցէ սա. և ոմանք ծանեան զմատանի նորա և ասեն. Այս այր ապտակ էած զմա, և դա այսպէս սատաց ցդա :

Եւ եկն Թադէոսն և նստաւ առ ոտս նորա. և լսէր ի նմանէ զբան օրհնութեանց նորա, և ասէր. Այս այր կամ աստուած է և կամ առաքեալ է նորա:

Եւ փոքրին ասէր. Ես լուայ զի ասէր զմատրուակն, եթէ պահպանիցէ ի սակարանիցդ, և երթիցես զջրոյ և պատահիցէ քեզ առիւծ և սպանցէ զքեզ, և եղև այդպէս: Եւ ասէ Թադէոսն. Եկ ընդ իս և օրհնեա զդուստր իմ, զի միամօր է ինձ: Եւ եմուտ Թումաս յառագաստն, և սկսաւ օրհնել զհարսնն և զփեսայն և ասէ. Տէր Աստուած օրհնեսցէ զձեզ և առաջնորդեսցէ ձեզ ի խաղաղութենէ ի խաղաղութիւն: Տէր Աստուած եղիցի ձեզ յոյս և ապաւէն և փրկիչ հոգւոց և բժիշկ մարմնոց, որ կենդանացոյց զաշխարհս, և փրկեաց զնեղեալս: Եւ հրամայեաց Թադէոսն գնալ փեսաւիրացն, և իջուցին զառագաստն, և զուրք սենեկին փակեցան: Եւ տեսեալ փեսային ի նմանութիւն Թումայի, զի նստէր առ ոտս նորա, և ասէ. Ո՞չ դու քան զամենեսին վաղ ելեր: Եւ Տէր ասէ. Ոչ եմ ես նա, այլ եղբայր եմ նորա: Եւ յայտնեցաւ Տէր Յիսուս Քրիստոս, և սկսաւ ուսուցանել զնոսա և ասէ. Յիշելի լիցի ձեզ բանն Թումայի, զոր խօսեցաւ ընդ ձեզ, և ում յանձն արար՝ ծանեայք դուք զնա. քանզի կեանք աշխարհիս՝ ժամանակ մի է, և կեանք յաւիտենականն՝ անանց. զգոյշ կացէք զի մի անկանիցիք ի փորձութիւնս երկրաւորս. և յօժարութեամբ լուան հարսնն և փեսայն:

Եւ իբրև եղև առաւօտ, եկն Թադէոսն և պատրաստեաց սեղան. և չգտաւ Թադէոսն և եմուտ

տա հարսնն և փեսայն և եղին զնոսա ուրոյն ի մահճին, և զերեսս նոցա յոյժ ուրախալիցս: Եւ ասէ մայր նոցա. Զի՞րդ այդպէս կայք, իբրև զբազմաժամանակեայ կացեալք ընդ միմեանս: Պատասխանի ետ կոյսն և ասէ. Արդարև ասեմ քեզ, բազում սէր ունիմք մեք առ միմեանս, և աղաչեմք զԱստուած զի ի յոյս և ի սէր վճարեսցուք մեք, զի արժանի լիցուք միմեանց: Այդ պատմեմք ձեզ, որ յայսմ գիշերիս զարմանալիս տեսաք մեք. զոր ածերն օրհնել զմեզ, նա օրհնեաց զմեզ, և եղև օրհնութիւն նորա մեզ իբրև զլոյս և փր՛կութիւն: Եւ ի բաց արար ի մէնջ զխորհուրդ պղծութեան, և զցանկութիւնս երկրաւորս, և ետ մեզ զուրախութիւնս և զկեանս և զլոյս. և արժանի արար զմեզ անմահութեան կենացն և սերմանեաց ի մեզ զբանն կ՛նաց: Եւ իբրև լուաւ թագաւորն խռովեցաւ յոյժ, և հրամայեաց խնդիր եղանել սրբոյն Թովմայի, և ասէ. Եթէ գտանիցէք, ածէք առ իս, զի տարայ զնա օրհնել և նա աւերութիւն արկ ի մէջ նոցա:

Եւ շրջեցան ընդ ամենայն գաւառն և ոչ գտին զԹովմաս, զի գնաց անտի:

Յայնժամ եմուտ Թովմաս ի Հնդիկս ընդ Աբենու վաճառականի. չոգաւ Աբեննէս յաղջոյն Գունդիփորայ թագաւորին Հնդկաց, եւ տարաւ ընդ իւր զհիւսն, վասն որոյ պատուիրեալ էր թագաւորին: Եւ իբրև ասաց նմա, ուրախ եղև թագաւորն, և հրամայեաց ածել զնա ի ներքս: Եւ իբրև եմուտ, ասէ ցնա թագաւորն. Զի՞նչ ճարտարութիւն գիտես: Ասէ Թովմաս. Գիտեմ հիւսնութիւն և քարակոփութիւն, և եմ աշակերտ չինողի, և որդի է նա հիւսան: Թագաւորն ասէ. Փայտ գիտե՞ս կոփել: Ասէ Թովմաս. Փայտ և քար և զամենայն ինչ զոր կամիս: Ասէ թագաւորն. Շինե՞ս ինձ ապարանս: Ասէ Թովմաս. Շինեմ, զի վասն այդր իսկ եկեալ եմ: Եւ էառ թագաւորն զԹովմաս և եհան զնա արտաքոյ քաղաքին ուր հաճեալն էր շինել զապարանսն. և

տարաւ զնա ի տեղի մի, և ասէ ցնա. Բարի՞ է աստ արկանել հիմն: Եւ ասէ Թովմաս բարի է, և ջուր բազում ունի: Ասէ թագաւորն. Աղէ՛, սկիզբն արա շինելոյ: Թովմաս ասէ. Յայսմ ժամանակի ոչ կարեմք շինել, վասն զի տապ խորշակի է ամարայնոյ: Թագաւորն ասէ. Ամենայն մարդ յամարայնի շինէ, և դու ասես եթէ բարւոք է ի ձմերանի շինուած առնել: Եւ Թովմաս ասէ. Ո՞րպէս պարտ իցէ առնել: Թագաւորն ասէ. Որպէս և կամիս. բայց այժմ հիմն արկ եթէ որպէս առնես, զի տեսից: Եւ սուրբն Թովմաս լարագիր արար զտեղին, և եթող պատուհանս լուսանցոյցս ընդ արեւելս և ընդ արեւմուտս, հովարերս և հովաշունչս: Ասէ թագաւորն. Արդարև տեսեմ քեզ, ճարտար ես դու որպէս ես կամէի. և ետ նմա զանձ ի ծախս շինուածոյն և ինքն չուեաց յայլ կողմ աշխարհին:

Եւ առեալ Թովմայի զգանձն բաշխէր օր ըստ օրէ աղքատաց: Եւ յետ բազում ժամանակաց առաքեաց թագաւորն առ Թովմաս թուղթ և ասէ. Գրեա առ իս վասն շինուածոյդ թէ յինչ չափու է: Իսկ Թովմաս ասէ. Ապարանքս քաջ քաջ շինեցաւ, այլ թռչակս պակասեաց: Եւ թագաւորն ետ տանել դահեկանս բիւրս երկուս, և գրեաց եթէ գալոց եմ, պատրաստեցէք զատաճարդ: Իսկ սուրբ Թովմաս սկսաւ կալ յաղօթս և ասէր. Աստուած, գոհանամ զքէն զի մեռար և զբազումս կեցուցեր. և վաճառեցեր զիս և զբազումս գնեցեր ինեւ: Եւ ոչ դադարէր ուսուցանել, և ասէր ցաղքատսն. Զի Տէր իմ տեսչութեամբն իւրով արար ձեզ նմա միայն երկիրպագանել, զի նա միայն է կերակրիչ և տեսուչ որբոց և այրեաց, աղքատաց և տառապելոց:

Եւ յետ սակաւ աւուրց եկն թագաւորն ի քաղաքն, և եհարց զմտերիմս վասն շինուածոյն, եթէ յինչ չափոյ է: Եւ ասեն ցթագաւորն. Ապարանս ոչ շինեաց և ոչ գիտեմք թէ ինչ զակլին արար. և շրջի ընդ գեօղս և ընդ քաղաքս և տայ աղքատաց. այլ թէ յինչ տայ ոչ գիտեմք. և ուսուցանէ նոր իմն

Աստուած, և բժշկէ զհիւանդս, և զդևս հալածէ, և զմեռեալս յարուցանէ, ևս և այլ սքանչելիս առնէ. և ոմանք կարծեն զնմանէ եթէ ած է նա. և ինքն ուտէ հաց չոր և ըմպէ ջուր հով, և զգենու հան-դերձս անպիտանս և ոչ ինչ առնու յումեքէ: Զայս իբրև լուաւ Թագաւորն, հրամայեաց ածել զԹովմաս. և սկսաւ ծափ զծափի հարկանել և զգլուխն շարժէր: Եւ ածին զԹովմաս, ընդ նմա և զվաճառականն: Ասէ Թագաւորն. Շինեցե՞ր զտաճարն: Թովմաս ասէ. Շինեցի: Թագաւորն ասէ. Ե՞րբ տեսանեմ զնա: Թովմաս ասէ. Յայժմ ի ժամանակիս ոչ կարես տե-սանել զնա, այլ յորժամ հրաժարես յաշխարհէս, ապա տեսանես զնա: Իսկ Թագաւորն յոյժ արտմե-ցաւ և հրամայեաց կապել զվաճառականն և զԹով-մաս և դնել ի բանտի: Իսկ սուրբն Թովմաս զուար-ճալից բերկրանօք կայր ի բանտին, և ասէր ցվաճա-ռականն. Մի երկնչիր այլ միայն հաւատա յԱստուած. և եթէ մեռանիմք՝ ապատիմք ի հոգոց աշխարհիս. զի վասն Աստուծոյ տանջեն զմեզ: Իսկ Թագաւորն ի խորհուրդ կոչեաց զաւագս դրան իւրոյ, և ասէ ցնոսա. Զի՞նչ արժան է առնել զնոսա: Ոմանք ա-սէին, ի հուր արժան է այրել զդոսա, և ոմանք ա-սէին, կորստեան արժանի են. և Թագաւորն յօժա-րեցաւ ի հուր այրել զնոսա:

Իսկ եղբայր Թագաւորին հիւանդ կայր ախ-տացեալ մինչև ի մահ. և էր նա արտում ընդ իրան, քանզի յոյս նորա ի յինչս երկրիս էր: Կոչեաց նա զԹագաւորն և ասէ. Տուն իմ և որդիք իմ քեզ յանձն եղիցին և ամենայն ինչք իմ քեզ լիցին, և յոյժ արտմեալ եմ վասն կախարդին այն որ խաբեաց զմեզ և ոչ շինեաց զապարանն. արդ աղաչեմ զքեզ, տէր իմ արքայ, զի չարամահ արասցես զնա և հանգուսցես զհոգի իմ: Պատաս-խանի ետ Թագաւորն և ասէ. Զայդ և ես խոր-հեալ եմ, եթէ որով մահուամբ կորուսից զնա: Եւ զայս ասացեալ եղբայր Թագաւորին, և ինքն վախ-ճանեցաւ: Եւ Թագաւորն ի սուգ եմուտ վասն նո-

րա, զի յոյժ սիրէր զնա. և խորհէր չթաղել զնա առ սէր իւր:

Եւ առ հրեշտակն զհոգի նորա և տարաւ առ Աստուած յերկինս, և ցուցանէր նմա զտեղիս չարեաց և բարեաց: Եցոյց նմա զապարանս եղբօր իւրոյ զոր շինեաց նմա Թովմաս առաքեալն. և սկսաւ աղաչել զհրեշտակսն և ասել. Աղաչեմ զձեզ, տեարք իմ, տուք ինձ աստ տուն մի առ եղբօրս իմում: Ասեն հրեշտակքն. Ոչ հնար քեզ աստ տեղի առնուլ, զի եղբօր քո է այս ամենայն բարութիւնքս, զոր արար նմա Թովմաս: Եւ սկսաւ աղաչել զհրեշտակսն և ասել. Ողորմեցարուք ինձ վարանեցելոյս և դարձուցէք զիս, զի և ես շինեցից ինձ ապարանս, և պատմեցից եղբօր իմոյ վասն հանգստեան նորա: Իսկ Տէր վասն բազում ողորմութեան և մարդասիրութեան իւրոյ, հրամայեաց դարձուցանել զհոգի նորա ի կենդանութիւն, եւ եղեւ նոյնպէս կենդանի, և յարեաւ նստաւ ի մահճին, և ասէ ցծառայս իւր. Կոչեցէք զՏէր իմ արքայ:

Եւ պատմեցաւ արքային, եթէ եղբայրն քո կենդանացաւ: Եւ փառս ետ Աստուծոյ, եւ յարեաւ փութապէս եւ եկն առ եղբայր իւր, և բազումք ընդ նմա. և մոին տեսին զմեռեալն կենդանի, և զարմացան. եւ այս եղեւ նշանակ յարութեան: Եւ սկսաւ խօսել յարուցեալն ընդ եղբօր իւրում և ասէ. Աղաչեմ զքեզ տէր իմ և երդմնեցուցանեմ, եթէ զոր ինչ խնդրեցից ի քէն տացես ինձ: Ասէ թագաւորն. Եթէ զթագաւորութիւնս իմ խնդրեսցես տաց քեզ: Յայնժամ ասէ ցթագաւորն. Զապարանսն զոր շինեաց քեզ Թովմաս, տուր ինձ զնոյ: Ասէ ցնա թագաւորն. Զապարանսն զայն ես վաճառել ոչ կարեմ. և տեսե՞ր, ե՞ն իմ անդ ապարանս: Ասէ ցնա. Են և բարիք են: Ասէ թագաւորն. Եւ դու եթէ կամիս և հաճոյ է քեզ, առաքեալ է ճարտարն, տուր նմա շինել զինչ և կամիս, զի այժմ լաւագոյն շինէ քան զայն: Եւ եկեալ թագա-

ւորն և գնացին ի բանտն. և հրամայեաց կոչել զԹովմաս և զվաճառականն և զամենայն կալանաւորսն որ էին ընդ նմա ի բանտին. և անկեալ յոտս սրբոյն Թովմայի, և ասէ ցնա. Աղաչեմ զքեզ այր իմ, զի աղաչեսցես զՏէր Աստուած քո, զի Թողութիւն արասցէ մեղաց իմոց զոր մեղայ առ քեզ. և արժանի եղէց պաշտել զԱստուած երկնից՝ զոր դու պաշտես, և արժանաւորեսցէ զիս բնակել ի տաճարն զոր դու շինեցեր. և կայր ի գուճս առաջի սրբոյն Թովմայի և ասէր. Խնդրեմ ի քէն ծառայ Աստուծոյ, աղօթս արա վասն իմ զի արժանի եղէց տեսանել զհրեշտակս Աստուծոյ:

Իսկ Թովմաս սկսաւ փառաւորել զԱստուած և ասէ. Օրհնեմ զքեզ Քրիստոս Աստուած, զի դու միայն ես ճշմարիտ Աստուած և ոչ գոյ նման քեզ. որ դու միայն ես գիտող գաղտնեաց մարդկան. և դու միայն ես ողորմած առ որդիս մարդկան. և նոքա մոռացան զքեզ վասն մոլորութեան իւրեանց և դու ոչ անտես արարեր զնոսա ի սպառ: Եւ այժմ ընկալ Տէր զԹագաւորս և զեղբայր նորա, և տուր սոցա մտանել ի գաւիթս քո սրբութեամբ. սրբեա զնոսա և օծ իւղով քով սրբով, լուա զնոսա և ջընջեա յաղտոյ պղծութենէ մեղաց, պահեա զնոսա ի գայլոյն յափշտակութենէ, հովուեա զնոսա քո հովութեամբդ, արբո սոցա յաղբերէ քումմէ զջուր կենդանութեան զի մի պղտորեսցին խորհուրդք սոցա. զի զքեզ, Տէր, աղաչեն և ի քէն խնդրեն զի ծառայք քո եղիցին սոքա. շնորհեա սոցա և զուրախութիւն քո զի հաստատեսցին խորհուրդք սոցա ի քո տէրութիւնդ, և տացեն զշնորհս սրբութեան քո Տէր:

Զայս խնդրուածս արար Թովմաս վասն Թագաւորին և եղբօր նորա, զի տացեն նոքա զքրիստոնէական մկրտութիւնն: Եւ ասեն նոքա ցԹովմաս. Տուր մեզ զլոյն անմահութեան, և տացուք զփրկութիւն ոգւոց մերոց, և նշանակեա զմեզ յԱստուածն քո՝ զոր դու մեզ քարոզես. զի ի զրուցմանէ իւրմէ ծանիցէ զոչխարս իւր և ոչխարքն զիւրեանց հովիւն:

Իսկ Թովմաս ուրախ էր և ցնծայր զի ընկերս եգիտ քարոզութեամբ բանին կենաց. և հրամայեաց թագաւորին զեօթն օր չլուցանել բաղանիս. և յետ եօթն աւուրն առ Թովմաս զթագաւորն և զեղբայր նորա եւ եմուտ ի սենեակ թագաւորին, և հրամայեաց լուցանել ճրագունս, և նստէին Թովմաս և թագաւորն և եղբայր նորա, և այլ եւս աւագք դրան նորա:

Եւ եկն եմուտ Յիսուս առ նոսա և ասէ. Ողջոյն ընդ ձեզ եղբարք. զձայն նորա ամենեքեան լուան, բայց զնա ոչ կարացին տեսանել, թէ ով իցէ, քանզի չև էին մկրտեալ: Յարեաւ Թովմաս և ետ բերել կոնք մի ոսկի, և ետ արկանել ջուր և ձէթ և օրհնեաց զնոսա Թովմաս. և եդ զձեռն իւր ի վերայ գլխոյ թագաւորին և ասէ. Յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի եկեսցէ զօրութիւն բարձրելոյն ի վերայ ձեր, և եկեսցեն հրեշտակքն Աստուծոյ առ ձեզ, եկեսցէ ի վերայ ձեր երեք խորհուրդք բարձրելոյն, եկեսցէ ի վերայ ձեր հոգի խաղաղութեան: Եւ ասէ ցնոսա. Տէր մեր Յիսուս Քրիստոս առ հայց և ետ որդւոց մարդկան, կերան և ուրախ եղեն յոյժ. և ես տամ ձեզ զհացս զայս, առէք կերայք. և առին ի սրբոյն և կերան:

Յետ այսորիկ չոգաւ Թովմաս և ննջեաց ի տան միում. և եկն եկաց Յիսուս ի մնարս նորա, և ասէ ցնա երիցս. Թովմաս, Թովմաս, Թովմաս, արի տատւօտ է: Եւ յարեաւ Թովմաս և սկսաւ պաշտել ըստ սովորութեանն իւրում: Եւ ասէ ցնա Յիսուս. Երթ դու յարեկեկս կոյս երեք փասուանաւ ի բացեայ և ցուցից քեզ զփառս իմ, զի բազումք ունին հաւատալ յիս քև հանդերձ: Եւ յարեաւ Թովմաս ի քնոյն և պատմեաց եղբարցն որ ընդ նմա էին՝ զտեսիլն. և ասէ ցնոսա. Որդեակք իմ, Տէր մեր Յիսուս Քրիստոս կամի այսօր գործ ինչ գործել, այլ յաղօթս կացէք զի մի խափան ինչ լինիցի մեզ. զի որպէս յամենայն ժամ ցուցանէր առ մեզ զգութ իւր, նոյնպէս այժմ ցուսցէ առ մեզ զփառս իւր:

Եւ զայս ասացեալ եդ զձեռն իւր ի վերայ նոցա և ասէ․ Աստուած շնորհեսցէ ձեզ ողորմութիւն, և արժանի արասցէ զձեզ մտանել յաստուածային լուսոյ, և նոքա ընդ օրհնելն՝ ամէն, ասացին։

Եւ մինչդեռ սուրբն զայս ասէր, եկն այր մի, Սոփորոն անուն, այր ձոխ ի տան արքունի և տարատեղատ, այսինքն ամենապետ․ եկն անկաւ առ ոտս սրբոյն և ասէ ցնա․ Լսելով լուեալ եմ ես վասն սրբութեանդ քո․ և զոր ինչ առնես՝ վարձս յումեքէ ոչ առնուս․ և զոր առնուս՝ աղքատաց բաշխես․ և եթէ վարձ առնուս՝ տամ քեզ ոսկի և արծաթ որչափ և կամիս․ զի քո սրբութիւնդ գիտակ է, որ թագաւորն առանց իմ ոչինչ առնէ, և մեծ եմ ի դրան նորա, և ոչ գոյ նման ինձ յերկրիս հնդկաց, և ոչ յիշեմ եթէ մեղայ ումեք ի վերայ երկրի, և որ ինչ ինձ իրք պատահեցին ասեմ տեառնդ իմոյ։

Հարսանիս ունէի դստեր իմոյ, և էր ինձ միամօր, որպէս բնութիւնս մարդկան խնդրէ, և ես զկանանց փորձութիւն ոչ գիտէի, և արարի նմա հարսանիս ի քաղաքին իմում, և իբրև կատարեցի զհարսանիսն, քանզի ամենեքին բարեկամք իմ էին որ եկեալ էին ի հարսանիսն, յուղարկեցի զնոսա ընդ աղջկանն, և երթային բազումք յիւրեանց կամաց, առ ի հաճել զմիտս իմ, և իբրև եղև երեկոյ, ժամ եղև նոցա զառնալոյ․ առաքեցի ընդ առաջ նոցա երգիչս սպասաւորս և ես սպասէի եթէ երբ եկեսցեն։ Եւ մինչդեռ ակն ունէաք խաղաղութեան, եկին ոմանք ճչելով և կանչելով և պատառեալ զպատմուճանս իւրեանց և ասեն․ Տեսաք այր մի և ծառայք իւր ընդ նմա, և նա մարտնչէր առ կին քո և ծառայք նորա առ դուստրն քո, և բազումք ի նոցանէն փախեան, և մեք սուր հանաք և յարձակեցաք ի վերայ նոցա և մեր սուրքն յերկիր անկան։ Զայս իբրև լուայ ես, անկայ ի վերայ երեսաց իմոց և լայի զառնապէս։ Արդ զայս եկի աղաչել զսրբութիւնդ քո, զի արասցես ողորմութիւն տան իմոյ։ Եւ չոգայ ես առ նոսա որ եհան զկին

իմ և զդուստրն, և գտի զնոսա յօգնեալս և պարտեալս, և զծառայսն խոցոտեալս, եկի ածի զնոսա, և բազումք ի նոցանէն մեռան:

Ասէ ցիս կինն իմ. Տեսանէի ես այր մի բարձր և գլուխ նորա որպէս շան էր: Եւ դուստր իմ ասէր. Ես տեսանէի պատանեակ մի խարտեաշ և ատամունք նորա թուխ իբրև զածուխ:

Զայս ամենայն իբրև լուաւ Թովմաս ի Սոփորոնէ հազարապետէ, յոյժ տրտմեցաւ ընդ միտս նորա, և ասէ ցհազարապետն. Հաւատա՞ս եթէ բժշկիցէ զնոսա Աստուած: Եւ նա ասէ. Հաւատամ եթէ բժշկին նոքա: Եւ ասէ ցԹովմաս. Ցոյց ինձ զնա: Եւ ասէ Թովմաս. Ոչ ոք կարէ տեսանել զնա մարմնաւոր աչօք. միայն հաւատա և զոր ինչ խնդրես՝ գըտանես ի նմանէ: Եւ ամբարձ հազարապետն զձեռս իւր յերկինս, և ասէ. Հաւատամ ի քեզ Քրիստոս որդի Աստուծոյ կենդանւոյ. օգնեա ինձ և տան հօր իմոյ: Եւ ապա հրամայեաց առաքեալն Թովմաս Քանթիպեայ սարկաւագի ժողովել զամենայն ժողովուրդն առ ինքն: Եւ իբրև եկին, ասէ ցնոսա. Հարք և մարք և եղբարք, հաստատուն կացէք ի հաւատս ճշմարիտս, և սիրեցէք զՏէր Յիսուս յամենայն սրտէ ձերմէ. և մի նմանէք տանն Իսրայելի որ խոտորեցան և յետս կացին ի մեռանել Մովսիսի հովուին իւրեանց, ահա թողում ձեզ զՔանթիպես սարկաւագ առաջնորդ և տեսուչ որպէս զիս. զնա ընկալարուք ի սէրն Քրիստոսի, զի ես ոչ եմ ինչ, և ոչ դա, այլ Յիսուս Քրիստոս եղիցի ձեզ պատսպարան:

Զայս իբրև լուան ժողովուրդն, զաղաղակ բարձին և հող ի գլուխ եղեալ ամենեքեան. իսկ նա մխիթարէր զնոսա, և եդ զձեռն իւր ի վերայ նոցա և օրհնեաց զնոսա. և երթային զհետ նորա բազում արտասուօք, և ասէին ցնա. Աղաչեմք զքեզ, տէր, յիշեա զմեզ ի խնդրուածս քո, և յանձն արա զմեզ Տեառն Աստուծոյ քում:

Եւ ել նստաւ Թովմաս ի կառս հազարապետին և գնացին նոքա ի միասին: Եւ ասէ Թովմաս ցհա-

զարապետն. Եկ նիստ ի կառս: Ասէ Հազարապետն. Աղաչեմ զքեզ, Տէր, արժան է ինձ նստել առ ոտս քո. և այնպէս հետի գնաց Սոփորոն Հազարապետն քառասուն և ութ վտաւան, այսինքն երիս մղոնս և երկու վտաւան. և առիպեաց Թովմաս զՀազարապետն և ել նստաւ ընդ նմա ի կառսն. և գնացին ի միասին, և խօսէր ընդ նմա զբանն կենաց: Եւ ջորիքն վաստակեցան ուժգին գնալոմն, և Հազարապետն տրտմեցաւ յոյժ և կամէր արձակել զծառայս իւր զջորեաց, քանզի և օրն տարաժամեաց: Եւ իբրև ետես Թովմաս զՀազարապետն տրտմեալ, ասէ ցնա. Մի հոգար, միայն հաւատա յԱստուած, և այժմ տեսցես զսքանչելիս Աստուծոյ: Եւ ետես Թովմաս երամակ մի ցիռ, զի արածէին ի դաշտի անդ. ասէ Թովմաս ցՀազարապետն. Եթէ հաւատաս ի Յիսուս Քրիստոս, երթ և ասա ցիռ երամակն, եթէ ասաց Թովմաս առաքեալ Որդւոյն Աստուծոյ, եկեսցեն ի ձէնջ չորք՝ զի պիտոյ էք ինձ: Եւ զիմեաց ամենայն երամակն եթէ ո՞ յառաջ հասանիցէ առ Թովմաս. և իբրև եկին, երկիր պագին նմա իբրև զխոսունս: Եւ ասէ ցնոսա Թովմաս. Լծեցարուք ի կառսդ փոխանակ ջորեացդ. և իւրալի մատուցին զպարանոցս իւրեանց, և լծեցան որք հաստատունքն էին. և այլքն՝ ոմանք յաջ և ոմանք յահեակ երթային զկնի: Եւ իբրև գնացին եօթնասուն մղոնս, ասէ Թովմաս. Ձեզ ասեմ որ բացօթեայքդ էք, գնացէք յարօտն ձեր, ոչ էք ինձ պիտոյ, և գնացին ի բաց ի նմանէ :

Եւ (իբրև) մերձեցան ի դուռն քաղաքին, ել ամենայն քաղաքն ընդ առաջ Հազարապետին: Ասէ Հազարապետն. Տեսէք զսքանչելիսդ զի անպատում են գործք սորայս: Եհարց Թովմաս ցՀազարապետն. Ո՞ւր է տուն քո յոր տանիս զմեզ: Եւ նա ասէ. Տէր, դու ինքնին գիտես զտուն իմ:

Եւ իբրև էջ ի կառացն, կինն նորա և դուստրն անկանէին առաջի սրբոյն Թովմայի: Եւ նա ասէ. Տէր Յիսուս Քրիստոս բժշկեսցէ զձեզ, և առժա-

մայն բժշկեցան, և հաւատացին ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ. և սկսաւ Թովմաս փառաւորել զԱստուած և ասէ. փառք քեզ Տէր Աստուած մեր որ փառաւոր առնես զծառայս քո յամենայն ժամ, և յայտնեցեր զսէր քո ի մեզ. զի՞նչ կարացուք հատուցանել քեզ, զի դու զանձն քո ետուր մեզ, և գնեցեր զմեզ արեամբ քով: Եւ եղ համբաւ նորա ընդ ամենայն քաղաքն, և ժողովեցան առ նա բազմութիւն քաղաքին ի լսել զբանն Աստուծոյ. և հաւատացին յաւուր յայնմիկ հոգիք իբրև վեց բիւրք. Եւ չեւ ևս էր մտեալ Թովմաս ի տուն հազարապետին: Յայնժամ ասէ Թովմաս ցիշավայրին. Հա զփոկդ և մուտ ի տունդ, և ասա ցդեւսն որ ի տանն իցեն. Ձեզ ասէ Թովմաս ծառայն Աստուծոյ, եկայք ելէք արտաքս. զի վասն ձեր եկեալ եմ այսր, զի զձեզ կորուսից և կեցուցից զորդիս մարդկան: Եւ նոքա ոչ լուան նմա: Դարձեալ ասէ ցնոսա իշավայրին. Ձեզ ասեմ ազգք չար և դառնացող, բնակիչք գեհենի և ծնունդք խաւարի, ձեզ ասեմ որդիք կորստեան, ձ՛զ ասեմ անատրունչք և անձնականք. զինչ ասեմ վասն ձերոյ կորստեան, չեն բաւական ասել, բազում բանք են վասն ձերոյ կորստեան. զայս ձեզ ասեմ դեւք և որդւոց ձերոց. վասն ձեր առաքեցաւ այսր սուրբն Թովմաս, և ես նորա հրամանաւ եկի այսր առ ձեզ, լուարուք ինձ և եկայք ելէք առ տէրն իմ Թովմաս: Յայնժամ ասեն դեւքն ցիշավայրին. Արդարև Թովմաս առ զբա՞նն կայ: Ասէ ցնսն. Այո՛ արդարև: Ասեն դեւքն. Գիտեմք զի գթած է և բազում է զօրութիւն նորա և նա է ծառայ Յիսուսի Քրիստոսի: Պատասխանի ետ իշավայրին և ասէ. Եկայք ելէք, զի՞ ընդ բանիւ արկանէք զիս: Եւ վաղվաղակի ելին դեւքն: Եւ իբրև ետես զնոսա Թովմաս ասէ ցնոսա. Ո՛վ ազգ չար և դառնացող որ ոչ ունէիք իշխանութիւն, զի՞արդ մտէք այսր: Դեւքն ասեն. Դարձեալ եկիր կորուսանել զմեզ, և կարծեմք այսպէս եթէ ոչ թողուս զմեզ ի վերայ երկրի կեալ. և սկսան աղաչել զԹովմաս և ասեն. Գամիոս, դարձո զմեզ անդրէն ուր բնակեալ էաք

մեք. և ի քէն առեր իշխանութիւն մեզ, զի ուր դու կամիս՝ երթամք: Պատասխանի ետ Թովմաս և ասէ ցնոսա. Հրամայեալ է մեզ Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ, ոչ տալ թոյլ ձեզ մերձենալ ընդ մարդիկ որք ունին զպատկեր Աստուծոյ: Ասեն դևքն ցԹովմաս. Քեզ հրամայեալ է զաստուածպաշտումն ունել, և մեզ հրամայեալ է Քրիստոս զգործակցումն մեր ունել և որք զկամս մեր կատարեն. քեզ զի՞ փոյթ է վասն զաղանեաց. զի դու զյայտնիս տեսանես, և մեք զգաղտնիս ունիմք: Եւ մինչդեռ Թովմաս խօսէր ընդ նոսա, իշխանքն կային ի միասին և ոչ շարժէին, բայց այն որ առ Թումանի կայր որ և բարբառեցաւ և ասէ ցԹովմաս իշավայրին. Զի՞ կաս և ունկն դնես չար ուսմանց դոցա, որ առաքեցար ի Քրիստոսէ կեցուցանել զոգիս մարդկան, զիա՞րդ կաս և լսես զի ուսուցանեն քեզ բարի ուսումն, զի՞ յամես ո՞վ առաքեալդ Աստուծոյ և վարդապետ բարի, զի՞ կաս քարոզիչ բարձրելոյն, զի քո Տէրն զամենայն խորհուրդս գիտէ, և զքեզ առաքեաց վասն որդւոց մարդկան. զի՞ կաս խորհրդակիցդ Քրիստոսի, զի քո Տէրն քաջալերեաց զքեզ և ասաց. Մի երկնչիք, զի ես ընդ ձեզ եմ փրկել զձեզ. և այժմ ոչ թողու զքեզ աստուածութիւն նորա. այլ փառաւորէ զքեզ ի գործս բարիս. դու սկիզբն արա կարգալ առ Նա և Յիսուս խօսի ընդ քեզ. զի՞ կաս ո՞վ սքանչելի արդարդ Աստուծոյ, և նշանարարդ Յիսուսի, յայտնեա զզօրութիւն Աստուծոյ, որպէս ասէ Դաւիթ. Յայտնեա զզօրութիւնս քո և եկ ի կեցուցանել զմեզ. և արդ սկիզբն արա խօսելոյ և սաստեա զիւացդ, զի Աստուած առաքեաց զքեզ ի կեցուցանել զորդիս մարդկան: Եւ դարձեալ ասէ ցմարդիկն որ կային անդ. Ձեզ ասեմ, ես եմ էշ վայրենի որպէս տեսանէք զիս. Հաւատացէք ի Տէր Յիսուս Քրիստոս և ի Թովմաս առաքեալ նորա. Հաւատացէք ճշմարտութեան նորա. Հաւատացէք արարչին ձերոյ, հաւատացէք փրկչին ձերոյ, հաւատացէք Թովմայի ընտրելոյդ՝ որ յԱստուծոյ առաքեցաւ. զի և դուք

զօլաւ եղիցիք ընտրեալք. զի դա եղև և մնաւ և եհաս վարդապետութեան և քարոզութեան բանին Աստուծոյ. նոյնպէս և դուք հասանիցէք կենացն յաւիտենից, և լինիցիք քարոզք ճշմարտութեան և առաքելութեանն Աստուծոյ. և դարձուցանիցէք զամբարշտութիւնս յաստուածպաշտութիւնս և ի Տէր Յիսուս Քրիստոս:

Զայս ամենայն և որ սոյին նմանս խօսեցաւ իշխանայրին. և ամենայն բազմութիւն քաղաքին արշուցեալ հայէին ընդ նա լի զարմացմամբ և աշխ ըմբռնեալք :

Յայնժամ ասէ Թովմաս. Ո՞ կարէ պատմել զսքանչելիս քո Յիսուս Քրիստոս. և սկսաւ փառաւորել զԱստուած և ասէ. փառք քեզ Աստուած որ ամենայն գաղտնիք յայտնի են քեզ, զքեզ օրհնեմք և փառաւորեմք Որդի Աստուծոյ, որ վասն մեր խոնարհեցուցեր զաստուածութիւն քո. փառք աստուածութեան քո, որ վասն մեր չարչարեցար և թաղեցար և յարեար յաւուր երրորդի. փառք յարութեան քո Քրիստոս Աստուած, զի դու եղեր յարութիւն և կեանք ամենայն մարդոյ. փառք գալստեան քո յերկնից, զի մեզ ցուցեր ճանապարհս երկնաւորս, և խոստացար մեզ նստել ընդ աջմէ Հօր քո. դու ես լոյս խաւարելոց դու ես ճշմարիտ Փրկիչ մեր: Եւ ապա ասէ ցիշխանայրին. Եկայք զհետ իմ, և գնացին՝ մինչև եկին ընդ դուռն քաղաքին, և ասէ ցնոսա. Երթայք խաղաղութեամբ յարօտն ձեր. և երթային ամնադրիւ խաղալով և մեծաւ ուրախութեամբ. և զաեղի առ Թովմաս թէ ուր երթիցեն. և սկսան արածել, զի այն չորք օր էր զի չէին ինչ ճաշակեալ:

Եւ դարձաւ սուրբն Թովմաս ի քաղաքն և քարոզէր զբանն Աստուծոյ, և հաստատէր զնոսա ի հաւատսն. և օրհնէին և փառաւոր առնէին զԱստուած ի վերայ անպատում սքանչելեացն զոր առնէր Տէր ի ձեռն սրբոյն Թովմայի. վասն զի ամենասուրբ Երրորդութեանն վայելէ փառք այժմ և միշտ և յաւիտեանս :

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## ՅԱՂԱԳՍ ԳԻՒՏԻ ՆՇԽԱՐԱՑ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՅՆ ԹՈՎՄԱՅԻ

ՈՐ ԵՂԵՒ Ի ՁԵՌՆ ԱՌՆ ԱՅԼԱԶԳՈՅՆ,

ՈՐ[1] ԱՌԵԱԼ Ի ՄԻՋԱԳԵՏԱՑ ԵՐԵՐ[2] Ի ՀԱՅՍ,

ՈՐՈՎ ԼՈՒՍԱՒՈՐԻ ԵՐԿԻՐՍ[3] ՀԱՅՈՑ

Ի ՁԵՌՆ ԳԱԼՍՏԵԱՆ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՅՆ

*Եւ եղեւ յետ համբառնալոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և զսուրբ Հոգին առաքելոյ յերջանիկ դասս առաքելոցն. զգեղազարդ[4] և զհրաշալի խորհուրդ ի մէջ առեալ, համագումար զաւառս վիճակեցին զաշխարհս ամենայն ի միջի[5] իւրեանց: Եւ եղանէր վիճակն Թովմայի[6] երթալ ի Հնդիկս՝ աշակերտել զնոսա. և նա ոչ կամէր երթալ, այլ յամառեալ պնդէր, և հրաժարեալ յետս կայր ի վիճակէն, և պատճառէր զհեռաւորութիւն[7] և զծանրութիւն լեզուին և զջերմութիւն օդոյն, որպէս էր[8] իւր սովորութիւն, ստուգագործ և ճշմարտահաւատ[9] լինել, որ ոմանց թերահաւատ թուի. որպէս ի[10] յարութեանն Քրիստոսի ստուգեաց, երկրորդելով զերեւումն փրկչին, յետ ութ աւուրն որ եղեւ*

1. Ա. օր. որք:
2. Ա. օր. բերին:
3. Ա. օր. աշխարհս:
4. Ա. օր. զգեղեցկազարդ:
5. Ա. օր. վիճակեցին ի մէջ:
6. Ա. օր. յաւելու առաքելոյ:
7. Ա. օր. յաւելու աշխարհին:
8. Ա. օր. յաւելու իսկ:
9. Ա. օր. ճշգրտահաւատ:
10. Ա. օր. եւ:

ճշմարտեալ և յայտնեալ ամենեցուն [1] յարութիւն յարուցելոյն ի մեռելոց. Նոյնպէս և այժմ անհաւան եղեալ Թովմաս առաքեալ վիճակացն առաքելոց։

Ապա է [2] վերուստ ի վայր իջեալ Փրկիչն մեր [3], առաքէ զնա ակամայ երթալ ի Հնդիկս, ի ձեռն Աբեննեսի [4] վաճառականի, վաճառելով զնա որպէս ծառայ շինող ապարանից, որպէս ցուցանէ պատմութիւնն իւր լիակատար, զամենայն սքանչելիսն զոր արար ի ճանապարհին [5] ի Հարանդիսն, և ի Հնդիկս [6], զհիմնարկութիւն ապարանիցն արքային զոր խնդրէին [7], զառումն զանձուցն յարքայէն Գնդափառայ՝ ի ծախս շինուածոցն [8] ապարանիցն և զապառումն զանձուցն ի պէտս աղքատացն, և զշինումն ապարանիցն [9] ի ձեռն աղքատացն, և զմեռանելն եղբօրն Գնդափառայ արքային, և զտեսանելն զգեղեցկութիւն ապարանիցն յերկինս, և զյառնելն ի մեռելոց, և զպատմելն զհրաշալի տեսիլս ապարանից, և զհաւատալ Թագաւորին յԱստուած, և զմկրտելն հանդերձ զօրօք և զօրագլխօք և ընտանեօք իսկ [10]. և այլ [11] զայլոցն զհալածումն, զիժիցն զսատակումն և զհարուածոցն զբժշկութիւն, և յետոյ զհաւատալն Վիժանայ, և զձեռնադրելն ի Նմանէ սարկաւագ, և զգլխադարձ լինելն Մշդեհի արքայի, և զչարչարելն իւր իսկ [12] ի Մշդեհէ, և զմեռանելն իւր [13] ի Նմանէ։ Այս ամենայն գրեալ է լիակատար յիւրում պատմութեանն։

1. Ա. օր. որ եղեւ ամենեցուն ճշմարտեալ եւ յայտնեալ։
2. Ա. օր. վերուստ։
3. Ա. օր. Փրկչին մերոյ։
4. Ա. օր. Աբբանեսի։
5. Ա. օր. չունի ի ճանապարհին ի Հարանդիսն եւ։
6. Ա. օր. յաւելու զիժիցն զսատակումն եւ զհարուածելոցն զբժշկութիւն։
7. Ա. օր. խնդրէին եւ։
8. Ա. օր. շինուածին. չունի ապարանիցն։
9. Ա. օր. յաւելու յերկինս։
10. Ա. օր. եւ իւր իսկ ընտանեաւք։
11. Ա. օր. չունի եւ այլ... զբժշկութիւն։
12. Ա. օր. յաւելու առաքելոյն։
13. Ա. օր. չունի իւր։

Այլ յորժամ եհաս նա ի Հնդիկս, աշակերտեաց խել[1] զբազումս, և զամենս առ իւր խել կացոյց։ Եւ էր մի ոմն յաշակերտաց անտի[2] նորա քանթիկոս անուն, որ ընդ իւր խել երթեալ էր ի Հնդիկս, այր բարեպաշտօն և երկիւղած յԱստուծոյ, ազգաւ ասորի, էր[3] ի Միջագետաց Ասորւոց, և զկնի նորա շրջէր համապազ, սարկաւագ խել ձեռնադրեալ էր ի նմանէ, ուսանէր զբանն կենաց հոգևոր վարդապետութեան, և ուսուցանէր զբազմութիւն ժողովրդեան։ Եւ եղև ի ժամանակի չարչարանաց առաքելոյն Թովմայի, և ինքն լինէր չարչարակից սորոյն, ընդ նմին ի բանտ մտանէր և սպասաւորէր նմա, և զամենայն անցս չարչարանաց և զբանդից նեղութեանց, և զհարցափորձ բանուորացն և զպատասխանիս առաքելոյն Թովմայի, և զնորին մեռանելն[4] առաքելոյն ի չորից զինուորացն, և զայսահարիլն[5] որդւոյն Մչգեհի, և զգալն Մըշգեհի ակամայ ի գերեզման առաքելոյն վասն բժըշկութեան մանկանն, և զգտանելն զգերեզմանն ունայն և թափուր յամենասուրբ մարմնոյն, և զհաւատալն Մչգեհի արքային, և առնուլ[6] զհող գերեզմանին և արկանել զմանկամբն, և զբժշկելն, և զձայնելն առաքելոյն ի թափուր գերեզմանէն առ Մչգեհ արքայ, եթէ կենդանոյս չհաւատացեր[7] կենդանի յարարիչն եղելոց։

Զայս ամենայն երանելի այրս այս պատմեաց մեզ ճշմարտութեամբ, և իւր ի գիշերի առեալ զոսկրս և զպատուական նշխարս երանելի առաքելոյն Թովմայի, գնաց փախստեայ յաշխարհէն Հընդկաց, և եկեալ բնակեցաւ ի Միջագետս Ասորւոց, ընդ իւր ունելով զգանձն պատուական և զմարգա-

1․ Ա․ օր․ չունի խել։
2․ Ա․ օր․ չունի անտի։
3․ Ա․ օր․ որ էր։
4․ Ա․ օր․ եւ զմեռանելն նորին։
5․ Ա․ օր․ զդիւահարելոյ։
6․ Ա․ օր․ զառնուլն։
7․ Ա․ օր․ յԱստուած կենդանի․ արդ մեռելովս հաւատացեալ յարարիչն ամենայն եղելոց։

րեան լուսափայլ ի զարդ սուրբ եկեղեցւոյ. զհալածիչն զդիւաց և զլուսաւորիչն ամենայն տիեզերաց, զնշխարս սուրբ և աստուածամերձ և աստուածամուխ առաքելոյն Թովմայի[1]. որով լուսաւորեցան Հնդիկք և Աղուանք և Հայք, գրեթէ բոլոր ամենայն տիեզերք: Քանզի ի ձեռն նորա հաստատեցան[2] տիեզերք, ի յոյս յարութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ. քանզի սա համարձակեալ արկ զմատունս իւր ի կող կենարարին, զննել զխոցումն տիգին և որոնել զտեղի բևեռացն յարարչագործ ի ձեռնն որով ստեղծ[3] զԱդամ և հաստատեցան երկինք և երկիր:

Իսկ երանելի այրս այս, զայսպիսի աստուածային զանձ պատուական բերեալ պահէր ի ծածուկ ի տեղւոջ ուրեմն. և պաշտաւորէր ի ծածուկ սուրբ ակերացն որպէս վայելէր նորա սրբութեանն: Ապա յետ բազում[4] ժամանակի փոխի յաշխարհէ բարի խոստովանութեամբ, թողեալ[5] զնշխարսն հաւատարիմ և սրբասնեալ[6] քեռն իւր և այլոց կանանց որք ծածկաբար պաշտաւորէին սրբոյն. մինչև ի ժամանակս Կոստանդիանոսի բարեպաշտ թագաւորի, առաջին հաւատացելոյն ի Քրիստոս, ի ձեռն երանելոյ Նշանի խաչին ի յերկնից ի նմանութիւն աստեղաց. և եղև սկիզբն ամենայն տիեզերաց հաւատալ ի Քրիստոս:

Ապա յայտնեցաւ զօրութիւն հրաշալի նշխարաց սրբոյ[7] առաքելոյն Թովմայի, և առնէր մեծամեծ սքանչելիս ամենեցուն, որք գային հաւատով և մերձենային, լինէր բժշկութիւն պէսպէս ախտից. դիւաց հալածումն, այսահարաց փրկութիւն[8], կաղաց գնացումն, անդամալուծաց առողջութիւն և ա-

1. Ա. օր. չունի առաքելոյն Թովմայի:
2. Ա. օր. յաւելու ամենայն:
3. Ա. օր. ստեղծաւ Ադամ:
4. Ա. օր. չունի բազում:
5. Ա. օր. յաւելու զսուրբ:
6. Ա. օր. սրբազան:
7. Ա. օր. սուրբ:
8. Ա. օր. յաւելու կուրաց լուսաւորութիւն:

միայն ախտաժետաց բժշկութիւն յիւրաքանչիւր վտանգից ։

Իսկ տեսեալ նոր հաւատացելոցն ի Քրիստոս, պատուեցին զնա և մեծարեցին զտեղի բնակութեան նորա առաւել քան զառաւել. և վասն կանանց շինեցին, և կարգեցին ի նմա կուսանս սուրբս. սպասաւորեալ[1] սրբոյ առաքելոյն։ Շինեցին եկեղեցիս ի վկայութիւն[2] սրբոյն, և շքեղազարդ պայծառացուցին զնա մեծագին[3] սպասիւք. և մեծ Հայրապետն Մծբնայ սուրբն Յակոբ իւրովին իսկ եկեալ ի տեղին և երկրպագեալ սուրբ և պատուական նշխարացն, և մեծապէս պատուեալ զպատուական զաստուածամերձ զնշխարսն, և յորդորէր զամենեսեան պատուել[4] և մեծարել զնա. մեծամեծ սքանչելիք լինէին ի ձեռն սուրբ և պատուական[5] նշխարաց սրբոյն Թովմայի առաքելոյն, մինչև ի ժամանակս հալածանաց եկեղեցւոյն Աստուծոյ։

Եւ եղև ի ժամանակին յայնմիկ թագաւորել ամպարշտին Յուլիանոսի[6], յարոյց հալածանս[7] քրիստոնէից, և ինքն դիմեալ[8] երթայր ի Պարսիկս ասպատակելով[9] պատերազմել ի նմա. և պատուհաս ի Տեառնէ հասեալք ի վերայ նորա[10], ի ճանապարհին սատակել[11] յերկնային զօրացն հարեալ՝ իբրև նետիւ վախճանի չարաչար. և զօրքն Պարսից առ հասարակ ի վերայ դիմեցին և յաւարի առնուին զբազում գաւառս. և եկին հասին մինչև ի Միջագետս Ասորւոց և գերեցին զնա, և զսուրբ տեղին ուր կայր նշխարք սրբոյ առաքելոյն Թովմայի՝ աւերեցին։

1. Ա. օր. սպասաւորել։
2. Ա. օր. ի վկայարանս։
3. Ա. օր. մեծագոյն սպասուք։
4. Ա. օր. պատուել զնա եւ մեծարել։
5. Ա. օր. չունի եւ պատուական։
6. Ա. օր. Յուլիանոսի ամպարշտի։
7. Ա. օր. հալածումն։
8. Ա. օր. դէմ եդեալ։
9. Ա. օր. ասպատակաւ։
10. Ա. օր. ի վերայ ճանապարհ նմա։
11. Ա. օր. սատակի։

Իսկ[1] մի ոմն ի զօրագլխացն Պարսից հնդիպեալ գտանէր զնշխարս սրբոյ առաքելոյն Թովմայի. եդեալ ի պատուական գզրոցի, և ծածկեալ պատուական և մեծագին հանդերձիւ, և լցեալ ամենայն անուշահոտ[2] խնկօք։ Զայն գտեալ զօրագլխին՝ խնդութեամբ լի եղև, համարեցաւ գանձ պատուական գտանել կամ մարգարիտս գեղեցիկս. այլ[3] թէպէտ և գեղեցիկ և լուսափայլ մարգարիտ ի զարդ սուրբ եկեղեցւոյ, այլ նմա չէր ինչ փոյթ վասն աստուածային գանձուցն, բայց առժամայն ի խնդութենէն ոչ երաց զնա մինչև ցերեկոյն, այլ առ իւր պահեաց զնա մեծաւ զգուշութեամբ։ Եւ իբրև նսեմացաւ, խնդրեաց լոյս և երաց զնա, և իբրև ետես զսուրբ ոսկերսն՝ տրտմեցաւ յոյժ, և տրտմեալ բարկութեամբ[4] ընկէց զսուրբ[5] ոսկերսն յոտս երիվարացն, և ի բազում տրտմութենէն[6] ննջեալ ի քուն մտանէր։ Զայն տեսեալ երիվարացն ամբոխեցան յոյժ, և միմեանց կիցս ընկենլով զմիմեանս վիրաւորէին. խրխինջս առնելով որոտային սափր հատանելով զտեղին, ոչ կարէին հանդարտել և[7] ուտել զդարման իւրեանց, այլ փոխանակ տեառն իւրեանց՝ ինքեանք ամբոխէին։

Եւ էր այր մի յայլազգեացն Ցովսէփ անուն, որ դարմանիչ էր երիվարացն, տեսեալ զայն զարմացաւ յոյժ, և յարուցեալ իջանէր յոտս երիվարացն, զննէր թէ զինչ է ամբոխել երիվարացն[8]. կարծէր գողան ինչ մտեալ ի մէջ նոցա. և տեսեալ ոչ ինչ ամենևին[9] նկատեալ ընդ գետինն, տեսանէր լոյս սաստիկ ծագեալ ի սուրբ ոսկերացն, ապա ազդեալ նմա իբրև[10] յԱստուծոյ, խոնարհեալ ժողովէր

1. Ա. օր. Եւ։
2. Ա. օր. բուրմամբ խընկովք։
3. Ա. օր. զի թէպէտ եւ էր։
4. Ա. օր. յաւելու մեծաւ։
5. Ա. օր. չունի զսուրբ։
6. Ա. օր. տրտմութենէն։
7. Ա. օր. յաւելու զտեղի տանուլ եւ։
8. Ա. օր. նոցա։
9. Ա. օր. յաւելու ապա։
10. Ա. օր. որպէս։

զսուրբ ոսկերսն ի դոյգն ինչ կապերտ, և դնէր ընդ ննջս իւր. և ինքն զարհուրեալ մտախոհ[1] լինէր, թէ զինչ իցէ աչագին երևումն. և ապա յետ բազում մտայուզութեան նիրհեալ ի քուն մտանէր. ապա տեսիլ երևեալ նմա աչագին[2] և զարմանալի հրաշիւք, և հրեշտակ մի ահեղակերպ տեսլեամբ ի նմանութիւն բոցոյ հրոյ իջեալ կայր առ նմա. կարգաց զանուն նորա հեզարար և ասէ. Նայեաց և տես. և ի միտ առ զմեծամեծս Աստուծոյ և հայեաց ի զօրութիւն սուրբ ոսկերացդ[3]։

Յայնժամ համբարձ զաչս իւր, և տեսանէր սիւն մի հրեղէն՝ մերձ առ իւր ի վերայ ոսկեղէն խարսխի աչագին բարձրութեամբ մինչև յերկինս. և խաչ մի լուսեղէն ի վերայ նորա ի նմանութիւն ականն շափիղայ, և հեռագոյն ի նմանէ, երևեալ[4] այլ սիւնք մետասանք, ի նմանութիւն առաջին սեանն հրեղէնք և սքանչելիք յոյժ, որոց խարիսխքն հաստատեալ էին[5] ի վերայ երկրի իբրև զկարծր ապառաժ վէմս անշարժս և հաստատուն յոյժ. և գլուխք սեանցն կառուցեալ յերկինս կայր մերձեալ. և ի վերայ իւրաքանչիւր սեանց կառուցեալ կային խաչք լուսեղէնք ի նմանութիւն շափիղայ, և կամարք սքանչելատեսակք ի միմեանս կապեալ ի գոյն զարդու ապխտակութեան մարգարտի. և ի վերայ կամարացն այլ ջրեղէն կամար երկնագոյն կապուտակ տառնաձև, իբրև զամպ մածուցեալ լի բազմութեամբ խաչազգեաց[6] լուսափայլ մարդկան. և ի վերայ ջրեղէն կամարացն՝ կառք աստուածակառք զարմանատեսք անխմանալիք, և որ նստէր ի վերայ նորա անճառելի և անպատմելի փառօք զարդարեալ, որոյ տեսիլն զհրեղէնսն զարհուրեցուցանէր, և սրովբէք

1. Ա. օր. մտախոհք։
2. Ա. օր. յաւելու. յոյժ. տեսանէր զերկինս բացեալ։
3. Ա. օր. յաւելու. որ կայ ընդ ննջս քո։
4. Ա. օր. երևէր այլ սիւնս մետասանս։
5. Ա. օր. կային։
6. Ա. օր. խաչազգեստ։

կային շուրջ զնովաւ վեցթեւեանք, որոց թեւքն էին իբրեւ զրոց հրոյ բորբոքելոյ, եւ քերովբէք բազմաչեայք կային շուրջ[1] զարքունական աթոռովն, որք նայել ոչ իշխէին ի փառս ահագինս[2] աստուածային երեւմանն. եւ երկոտասան առաքեալքն երկոտասան աթոռով նստէին[3] յաջմէ եւ յահեկէ կառացն, եւ նստելոյն[4] ի վերայ նորա: Եւ յառաջին սեանն որ ի մնարից կողմանէն երեւեցաւ, եղանէր լոյս ահեղակերպ ի նմանութիւն շողոյ կամ հրաշափայլ օդից ցոլացելոյ ալանայր յարեւելս կոյս. եւ հրեշտակն որ իջեալ կայր առ նմա ասէր ցնա. Տեսե՞ր զսքանչելիսդ որ երեւեցաւ քեզ: Եւ նա ասէ. Աղաչեմ զքեզ, տէր, պատմեա ինձ զինչ է ահագին եւ զարմանալի տեսիլս որ երեւեցաւ ինձ[5]: Ասէ ցնա հրեշտակն. Սիւնդ առաջին զոր տեսեր մերձ առ մնարս քո, այդ քարոզութիւն Թումայի առաքելոյն[6] է, որ աշակերտեաց զՀնդիկս եւ զԱզուանս եւ զՀայս, որոյ ոսկերքն կան ընդ մնարս քո: Եւ մետասան սիւնքդ զոր տեսեր հեռագոյն, յառաջին սիւնէդ իւրաքանչիւր առաքելոցն քարոզութիւն՝[7] յիւրաքանչիւր վիճակս հաստատեալ, իբրեւ զկարծր ապառաժ վէմս անշարժս հաստատութեամբ: Եւ կամարք լուսեղէնք ի վերայ սեանցդ, այդ ընդհանրական առաքելական[8] եկեղեցիքն են, շինեալք ի վերայ հիման առաքելոց եւ մարգարէից, եւ հրեղէն[9] կամարքդ երկնագոյն կապուտակ ամպատեսիլ, լի անբաւ բազմութեամբ խաչազգեաց[10] լուսափայլ մարդկան, այդ մկրտութիւն[11] աւազանին է, զի որք մկրտեցան եւ որք մկրտին ի ջուր[12] սուրբ աւազանին, մաքրա-

1. Ա. օր. չունի շուրջ:
2. Ա. օր. չունի ահագինս:
3. Ա. օր. աթոռովք նստեալ:
4. Ա. օր. նստեալն:
5. Ա. օր. տեսիլս երեւեալ:
6. Ա. օր. չունի առաքելոյն:
7. Ա. օր. քարոզութիւնն է:
8. Ա. օր. չունի առաքելական:
9. Ա. օր. ջրեղէն:
10. Ա. օր. խաչազգեաց:
11. Ա. օր. յաւելու սուրբ:
12. Ա. օր. ի ջուրս աւազանին:

զարդ փայլին ի դասս վերինն Երուսաղեմի. և արեգակնափայլ ճոխութեամբ պայծառանան ի կամարս երկնից որպէս[1] տեսերդ. և կառքդ աշեղակերպ զոր տեսերդ, այդ աստուածութիւնն է հանգուցեալ ի վերայ Նոր մկրտելոցն և քարոզութեան առաքելոցն. և Նստեալն ի մէջ կառացն՝ Քրիստոս է որդին Աստուծոյ, որ էջն ի հայրական ծոցոյ և փրկեաց զորդիս յանիծիցն Ադամայ՝ առաջին պարտելոյ[2] ի թշնամւոյն խաչիւն իւրով և քարոզութեամբ սուրբ առաքելոցն: Երկոտասան[3] առաքեալքն հանդերձ երկոտասան աթոռովք Նստեալ ընդ[4] աջմէ և յահեկէ կառացն, այդ դատողական աթոռքն են և իշխանութիւնն զոր ետ Քրիստոս աշակերտաց իւրոց, զգահերէց զլխաւորութիւնն և զվերադոյն բարձրագահ աթոռն, զոր առաց փրկիչն, թէ Նստջիք յերկոտասան աթոռն դատել զերկոտասան ազգն Իսրայելի. և յառաջին սիւնէդ որ մերձ առ սնարդ է, լոյս որ ցոլացաւ[5] յարևէս կոյս, այդ քեզ առաջնորդէ յարևէս տանել զնշխարսդ որում դու արժանաւորեցար հանդիպել. և պատուիրեցես զմն՝ մինչև յոր եկից քոց յաշխարհէ[6]. և ուրանոր զագարումն առնու լոյսն ցոլացեալ յարևէս՝ այն է տեղի բնակութեան սուրբ առաքելոյն: Եւ յորժամ մերձեցցիս յաշխարհն Հայոց, մկրտեսցիս յանուն Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն[7]. և անուն քո կոչեսցի Յովսէփ[8]:

Եւ զարթուցեալ ի քնոյն զարմացեալ հիացեալ կար իբրև զարբեալ, և ոչ գիտէր թէ զինչ անիցէ: Ապա լոյսն որ ի սիւնէն ցոլացեալ, յայտնապէս

1. Ա. օր. որ:
2. Ա. օր. պարտեցելոյ:
3. Ա. օր. Եւ երկոտասանն:
4. Ա. օր. յաջմէ:
5. Ա. օր. լոյսդ որ ցոլաց:
6. Ա. օր. յաշխարհէս:
7. Ա. օր. Հոգւոյն սրբոյ:
8. Ա. օր. չունի Եւ անուն քո կոչեսցի Յովսէփ:

երեւէր նմա եւ առաջնորդէր նմա մինչեւ ի տեղի հանգստեան իւրոյ. եւ նա յարուցեալ փաղփաղակի փոյթ ընդ փոյթ անյապաղ գնայր զկնի լուսոյն ցոլացելոյ, հանդերձ սուրբ նշխարօքն: Եւ իբրեւ եհաս լոյսն յաշխարհն Հայոց ի գաւառն Աղձնեաց, ի տեղի մի որ մերձ է ի բերդն Սեմղ[1] կոչեցեալ, որ էր ընդ իշխանութեամբ Տաճկաց, եւ առ գեօղն[2] Հողձ[3] կոչեցեալ, եւ անուն տեղւոյն Պաղ[4] կոչի. անդանօր դադարումն առնոյր լոյսն, եւ գիտացեալ առնն թէ այն[5] է բնակութիւն սրբոյն: Եւ էր ի տեղւոջն յայնմիկ եկեղեցի մի, եւ սպասաւորէր[6] եկեղեցւոյն քահանայ մի բարեպաշտօն եւ երկիւղած յԱստուծոյ. զայն տեսեալ առնն համարեցաւ յԱստուծոյ եղեալ զպատահումն, ապա մկրտեցաւ ի քահանայէն յայնմանէ եւ կոչեցաւ անուն նորա Յովսէփ, որ կոչեցաւ[7] ի հրեշտակէն. եւ զգեցաւ զգեստ կրօնաւորութեան[8], եւ բնակեցաւ ի տեղւոջն[9] նշխարօքն եւ անուանեցաւ տեղին Տայի[10] վանս: Եւ այրն Յովսէփ սպասաւորէր սրբոյն ի տեղւոջն յայնմիկ ամս վեց սրբութեամբ, կրօնաւորական կերպիւ:

Ապա յետ ամաց անցանելոց[11], նոյն տեսիլ երեւեալ նմա իբրեւ[12] զառաջինն, լոյս ցոլանայր[13] ի նշխարաց սրբոյն որպէս զառաջինն[14] յարեւելս, եւ նա յարուցեալ առնոյր զնշխարսն, եւ գնայր[15] զկնի լուսոյն մինչեւ ցբլրակ մի որ կայ հանդէպ Մանազկերտոյ, ի վերայ գեղջն որ կոչի Պծիծս[16]. եւ անդ

1. Ա. օր. Սեղմ:
2. Ա. օր. գեաւղջն:
3. Ա. օր. Հողց:
4. Ա. օր. Պայի:
5. Ա. օր. անդ:
6. Ա. օր. սպասաւոր:
7. Ա. օր. որպէս ասացաւ:
8. Ա. օր. կրօնաւորական ըզգեստ:
9. Ա. օր. յաւելու հանդերձ սուրբ:
10. Ա. օր. Պայի:
11. Ա. օր. ամացն անցելոց:
12. Ա. օր. որպէս:
13. Ա. օր. ցոլացեալ:
14. Ա. օր. չունի սրբոյն որպէս զառաջինն:
15. Բն. գնաց, ուղղեցաք ըստ Ա. օր.:
16. Ա. օր. Բծիծս:

էր բնակեալ միայնակեաց մի Հրեշտակակրօն վա-
րուք. և բնակեաց առ Նմա այրն Յովսէփ Հանդերձ
սուրբ առաքելովն և կրօնաւորիւն, ի միասին սպա-
սաւորելով որբոյն արժանապէս մինչև ցօր մա-
Հուան իւրեանց: Եւ Նախարարքն աշխարհին, որ
էին ի մեծ տանէն Արծրունեաց, վանս շինեցին
զտեղին, և կարգեցին ի Նմա քաՀանայս Հանդերձ
կրօնաւորօք, և փառաւորեցին զտեղին առաւելա-
պէս, յորում տեղւոջ բժշկութիւնք բազում լինին,
ի փառս ամենասուրբ Երրորդութեանն յաւիտեանս
յաւիտենից ամէն:

# ԱՅԼ ՕՐԻՆԱԿ ՀԱՄԱՌՕՏ

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## ԹՈՎՄԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

## ՈՐ ՎԱՃԱՌԵՑԱՒ Ի ՀՆԴԻԿՍ

*Յետ համբարձմանն Քրիստոսի յերկինս եւ իջմանն Հոգւոյն Աստուծոյ յառաքեալսն, վիճակեցին սուրբ առաքեալքն ի վերայ ինքեանց զաշխարհս, երթալ ի քարոզութիւն սուրբ աւետարանին Քրիստոսի։ Եւ ել վիճակն Թովմայի առաքելոյն գնալ ի Հնդկաստան, եւ նա ոչ կամէր երթալ վասն օտար երկրին։ Յայնժամ երեւեցաւ նմա Տէրն եւ ասէ. Թովմաս, մի երկնչիր, զի ես ընդ քեզ եմ ուր եւ երթայցես։ Ասէ Թովմաս. Տէր, ուր եւ կամիս առաքեա զիս, բայց ի Հնդիկս մի առաքեր։ Ասէ Յիսուս. Ի Հնդուստան ել վիճակն քո, անդ երթիցես, եւ շնորհք իմ ընդ քեզ եղիցին։*

*Եւ մինչ Տէրն խօսէր ընդ Թովմայի, ահա վաճառական մի անցանէր ընդ այն, որ եկեալ էր ի Հնդկաց, Աբբանէս անուն նորա։ Եւ ունէր պատուէր ի Գնդափառ արքայէն Հնդկաց, վասն ճարտար հիւսն եւ լաւ քարակոփի զի տարցէ նմա վասն շինելոյ դարապասու։ Իբրեւ ետես զնա Քրիստոս, ասէ. Այր դու, զի՞նչ խնդրես։ Ասէ Աբբանէս. Հիւսն ճարտար եւ քարակոփ, զի տարայց ի Հնդուստան։ Ասէ Յիսուս. Ես ունիմ ծառայ մի լաւ ճարտար յամենայն արուեստս շինութեան, մանաւանդ եւ ի հիւսնութիւն. եւ վաճառեմ զնա քեզ. եւ եցոյց զԹովմաս։ Եւ ուրախացեալ վաճառականն, ասէ*

ցԹովմաս. Ծառա՞յ ես պատուական տանս այս: Ասէ Թովմաս. Այո՛ ծառայ եմ: Ասէ Աբբանէս. Սա զքեզ վաճառել կամի և ես գնեմ: Ասէ Թովմաս. Բարի եղիցի: Եւ հանեալ Աբբանէս երեսուն դահեկան և ետ ի Քրիստոս, և Քրիստոս ետ ի Պետրոս, և Պետրոս ետ ի Սանեփանոս տալ աղքատաց: Եւ ետ Քրիստոս գիր այսպէս. Ես Յիսուս որդի Յովսեփայ, վաճառեցի զԹովմաս ծառայ իմ Աբբանէս վաճառականի: Ձեռնագրեցին ի գիրն Պետրոս և Յոհաննէս և Յակոբոս. և առեալ տարաւ յօթևանն իւր:

Եւ ընդ լուսանալ աւուրն գնացին յեզր ծովուն, և գտին նաւ մի որ երթայր ի Հնդիկս. մտին անդ և նաւեցին: Եւ իբրև անցին յայնկոյս ծովուն և հասին ի քաղաք մի, լուան ձայն փողոյ: Ասէ Թովմաս ընդ վաճառականն. Զի՞նչ է այս ձայն ցնծութեան և ուրախութեանն: Ասէ Աբբանէս. Հարսանիս է դստեր Թագաւորին: Եւ քարոզն աղաղակէր. Եթէ ոք ոչ եկեսցէ ի հարսանիս որդւոյ Թագաւորին յեկաց և ի բնակաց, պատիժս կրեսցէ: Ասէ Աբբանէս ցԹովմաս. Եկ և մեք երթիցուք ի հարսանիսն, զի մի պատիժս կրեսցուք ի թագաւորական հրամանէն. և յարուցեալ գնացին: Եւ վաճառականն վասն զի ծանօթ էր, մեծարեալ նստուցին ընդ բազմականն պատուականաց քաղաքին. իսկ առաքեալն նստաւ ի կարգ ռամկաց: Իբրև ուտէին և ըմպէին, Թովմաս ամենևին ոչ եկեր և ոչ արբ, ասեն ցնա սեղանակիցքն. Այր դու, զի՞ եկիր այսր, զի ոչ ուտես և ըմպես: Ասէ Թովմաս. Վասն իրաց որ առաւել է քան զուտելն և քան զըմպելն եկեալ եմ ես: Յայնժամ մի ոմն ի մատռուակացն ած ապտակ առաքելոյն և ասէ. Զի՞ տրտմեալ ես իբրև ի տուն սգոյ: Հայեցաւ ի նա սուրբ առաքեալն և ասէ. Ձեռք որ հարին զիս՝ շունք քարշեսցեն զնա: Եւ փողահարն եբրայեցի էր, գիտեաց զինչ ասացն Թովմաս մատռուակին: Եւ հատաւ ջուրն ի բազմականին, և առ մատռուակն զսափորն և չոգաւ ի ջուրն: Յայնժամ ել առիւծ մի յանտառէն և եբեկ զմատռուակն և արար

զնա անդամ անդամ։ Եւ առժամայն չուն մի եբարձ զաջոյ ձեռն նորա և բերեալ ընկէց ի մէջ բազմականին։ Յայնժամ փողահարն ի բաց ընկէց զփողն և եկն անկաւ առաջի առաքելոյն և ասէ. Այրս այս կամ Աստուած է կամ առաքեալ նորա. զի ես լուայ զինչ ասաց սա մատուակին. և անկաւ առ ի վերայ ամենեցուն որք լուանն և տեսին։ Իսկ Թագաւորն եկն եկաց առաջի առաքելոյն և ասէ. Եկ ընդ իս, տէր, և օրհնեա զիս և զդուստր իմ, զի միամօր է ինձ, և տամ զնա առն այսօր։ Եւ յարուցեալ գնաց զկնի նորա և եմուտ ի սենեակն ուր էր հարսն և փեսայն առանձինն։ Եդ ձեռն ի վերայ նոցա և օրհնեաց զնոսա ասելով, լիցի ընդ ձեզ Քրիստոս. և ել արտաքս։ Եւ իբրև ել, անց ի վերայ ժամ մի. տեսեալ փեսայն զՔրիստոս ի նմանութիւն առաքելոյն, զի ընդ հարսինն խօսէր. և ասէ ցնա փեսայն. Ո՞չ դու վաղ ելեր. արդ առա զի՞արդ մտեր։ Ասէ Քրիստոս. Ես ոչ եմ առաքեալն որպէս կարծես, այլ եղբայր եմ նորա. և նստաւ Քրիստոս ի մահիճսն, և հրամայեաց նմա նստիլ յաթոռն։ Եւ ասէ ցնա Յիսուս. Յիշեա որդեակ, զոր ինչ պատուիրեաց ձեզ եղբայրն իմ, և ում յանձին արար զձեզ. արդ մեկնեցարուք ի պղծութենէ և պահեցէք զսրբութիւն։ Յայնժամ երկիրպագին Քրիստոսի փեսայն և հարսնն, և յանձն արարին նմա զանձինս իւրեանց։ Եւ Յիսուս եդ զձեռն ի վերայ նոցա և օրհնեաց զնոսա ասելով. Լիցի ընդ ձեզ Տէր, և ինքն եղև ի նոցանէ աներևոյթ։ Իբրև լուսացաւ, եկն Թագաւորն և Թագուհին, և տեսին զհարսն նստեալ բաց երեսօք։ Ասէ մայրն ցդուստրն. Զի՞ նստիս այսպէս բաց երեսօք և ոչ ամաչես, որպէս թէ բազմաժամանակք են քեզ և զորա։ Պատասխանի ետ հարսն և ասէ. Ոչ գիտես մայր իմ, զոր տեսաք մեք յայսմ գիշերի. և ոչ սքօղիմ ես, զի քօղն ապականութեան բարձաւ յերեսաց իմոց. և ուրախ եմ ես զի այր ուրախութեան տեսի ես և ոչ ամուսնացայց ընդ առն անցաւորի, զի առն երկ-

նուարի տպաւեմ ես: Եւ ապա փեսայն սկսաւ ասել. Խոստովանիմ զքեզ Տէր Աստուած իմ, որ եկիր առ մեզ ի ձեռն առն երբայեցւոյ, որ քարոզեաց զկեանսն և երևեցոյց զքեզ մեզ: Յայնժամ բարկացեալ թագաւորն և առէ ցծառայսն. Եկէք և ածէք զայրն կախարդ, որ ես ածի օրհնել զսոսա, և նա ատելութիւն արկ ի մէջ սոցա. և նոքա ելեալ շրջեցան ի քաղաքն և ոչ գտին, քանզի գնացեալ էին: Եւ գնացեալ յօթևանն, գտին զմարձակն զի անկեալ կայր և լայր զի ոչ տարաւ զնա առաքեալն ընդ ինքեանն: Յայնժամ յարուցեալ գնաց ինքն մարձակն, որ էր փողահարն առ հարսն և փեսայն, և միաբանեալ քարոզեցին և աշակերտեցին զթագաւորն և զթագուհին և զամենայն քաղաքն Սադրոք:

Եւ Թովմաս գնացեալ եհաս ի Հնդիկս, և եկաց առաջի արքային Գնդափառայ: Եւ թագաւորն եհարց զնա և առէ. Զի՞նչ ճարտարութիւն գիտես այր դու: Ասէ Թովմաս. Հիւսն եմ և քարագործ. աշակերտ ընտիր և ճարտար ուսթայի: Ասէ թագաւորն. Շատ է աշակերտին թէ լինիցի որպէս վարդապետն: Ասէ Թովմաս. Զ՞նչ ճարտարութիւն ոչ գիտէր ուսթայն իմ. ուսոյց ինձ զամենայն արուեստն իւր: Ասէ թագաւորն. Ինձ այսպէս այր պիտի. արդ շինեա ինձ տաճար արժանի թագաւորութեանն: Ասէ սուրբ առաքեալն. Ես ի շինել եկեալ եմ և ի կատարել: Եւ առ թագաւորն զԹովմաս և գնաց ի տեղի մի մարգագետին, և առէ. Աստ կամիմ շինել ինձ դարպաս: Ասէ առաքեալն. Խիստ ի դէպ է և պատշաճ. և առեալ լար և չափեաց զտեղին առաջի արքային և նշանակեաց զտեղի դրանցն և զպատուհանացն: Ասէ թագաւորն. Արդարև արժանի ես դու զթագաւորն ծառայել. և պատուէր ետ թագաւորն զի մի ոք վերակացու լիցի նմա և կամ կալ հակառակ զինչ և առնիցէ: Եւ զբանալի զանձատան իւրոյ զոր ունէր ի պապանց թագաւորն, ետ ի Թովմաս, և ինքն չոգաւ և գնաց յայլ կողմ իշխանութեան իւրոյ: Եւ

բացեալ սուրբ առաքելոյն զգանձն բաշխեաց կարօտելոց· և ինքն քարոզէր զՔրիստոս Աստուած· զդեւս հալածէր, զհիւանդս բժշկէր, զբորոտս սրբէր, զկոյրս լուսաւորէր, զկաղս գնացուցանէր, զմեռեալս յարուցանէր, խլից լսել տայր և համերց խօսել· և այլ բազում նշանս առնէր, մինչև զարմանալ ամենայն աշխարհին որ տեսանէին։

Իբրև անցին աւուրք բազումք, առաքեաց թագաւորն առ ուսթայն Թումաս և ասէ. ի՞նչ չափ է տաճարդ։ Եւ Թումաս գրեաց առ նա, թէ տաճարն շինեալ էր, բայց յարկն չև է յարկեալ, թօշակ գործաւորացն սպառեալ պարապեցաւ· և ետ բերել նմա երկու բիւր դահեկան· և գրեաց թէ յարկեա՛, այսինքն թէ ծածկեա զտաճարդ զի զալոց եմ տեսանել։ Եւ առեալ Թումաս զայն ես բաշխեաց կարօտելոց, և միշտ մխիթարէր զորբս և զայրիս և քարոզէր զՔրիստոս։ Եւ իբրև եկն ի քաղաքն, եհարց զմտերիմն իւր և ասէ· Յի՞նչ չափ և ի կերպ է տաճարն։ Եւ նոքա ասեն· Տաճար չիք շինեալ, այլ շրջի նա ընդ քաղաքս և ընդ գաւառս, ուսուցանէ պաշտել Աստուած զոմն Յիսուս և Քրիստոս անուն, և զնոյն ի խաչ ելեալն· և անուամբն այնու զամենայն ցաւս ի մարդկանէ փարատէ· ոչ ուտէ և ոչ ըմպէ, բայց միայն աղ և հաց, և հանդերձս անպիտանս ագանի, թէ մոգ է կամ առաքեալ Աստուծոյ՝ ոչ գիտեմք։ Յայնժամ սրտմեալ թագաւորն և հրամայեաց ածել զնա և զվաճառականն որ եբեր զնա· և իբրև ածին, վաճառականն յոյժ երկնչէր զնալ։ Ասէ առաքեալն· Մի՛ երկնչիր եղբայր, բայց միայն հաւատա ի Քրիստոս և տեսանես զսքանչելս նորա։ Իբրև եկն Թումաս առ թագաւորն, եհարց արքայ և ասէ· Այր դու, շինեցե՞ր զտաճարն։ Ասէ առաքեալն· Այո՛ շինեցի տաճար գեղեցիկ զոր չիք տեսեալ ոք ի մարդկանէ։ Ասէ թագաւորն· Ե՞րբ երթամք տեսանել զնա։ Ասէ առաքեալն· Այժմ ոչ կարես տեսանել զնա։ Ասէ թագաւորն· Ապա յո՞րում ժամանակի տեսանեմք։ Ասէ Թումաս· Յորժամ

փախձանիս յերկրի։ Ասէ թագաւորն. Ի կենդանութեանս ոչ տեսի, ի մեռելութեան զփո՞րդ տեսանեմ։ Եւ հրամայեաց տանել զնա և զԱրբանէս ի բանտ, մինչև հանդեայց սաէ և տեսից ապա՝ թէ զինչ արարին զգանձն իմ։ Եւ ուրախ էր սուրբ առաքեալն, զի երթայր ի տուն բանտին և քաջալերէր զԱրբանէս զի մի երկիցէ։ Եւ եղև հիւանդանալ եղբօր թագաւորին, և ի վաղիւն կոչեաց զթագաւորն և ասէ. Տէր իմ և արքայ, տուն իմ և որդիքն իմ քեզ լիցի յանձին. բայց աղաչեմ զքեզ չարչարանօք սպանանել զկախարդն զայն և զվաճառականն որ ած զնա, և հանդա զօգի իմ, զի վասնեաց զգանձն մեր, և ես վասն այսորիկ մեռանիմ։ Ասէ արքայ. Ես զայդ խորհեալ եմ զգիշերս ամենայն։ Եւ մինչ զայս ասէր, մեռաւ եղբայր թագաւորին։ Եւ առեալ հրեշտակացն տարան զնա և ցուցին նմա զտեղիս արդարոց և մեղաւորաց, ցուցին նմա և զապարանն զոր շինեաց սուրբ առաքեալն. և նա անկեալ առ ոտս հրեշտակացն և ասէր. Ողորմեցարուք ինձ վարանելոյս և դարձուցէք զիս առ եղբայրն իմ, զի գնեցից զապարանն զայն ի նմանէ. զի նա ոչ գիտաց զգեղեցկութիւն սորա, և տայ զսա ինձ գնոյ։ Իսկ արտմութիւն և մեծ սուգ եղև թագաւորին մահ եղբօրն քան զկորուստ գանձին. և մինչդեռ կոծէր և լայր թագաւորն, մտեալ առաջի նորա մահերիմքն և ասեն. Գիտասցէ տէր մեր արքայ, զի այրն այն մահապարտ բազում աքանչելիս արար ի քաղաքս մեր և ի գաւառս. կոչեսցի աստ, թերևս արասցէ աղօթս, զի յարիցէ մեռեալս մեր։ Ասէ թագաւորն. Ջանացարուք ածել զինչ և զիտէք։ Եւ փութացեալ հանին զԹովմաս ի բանտէն և բերին առաջի թագաւորին։ Ասէ թագաւորն. Եթէ յարիցէ եղբայրն իմ, բաշխեցից քեզ զինչ քո և ազատ արարից զքեզ ի մահուանէ։ Յայնժամ եկաց Թովմաս մերձ առ մեռեալն զին, և աղօթեաց. այսպէս. Տէր Յիսուս Քրիստոս Աստուած իմ և Բան Հօր, որ բանիւ միայն կոչեցեր զՂազարոս և յարու-

ցեր գնա ի մեռելոց, որ հատեալ և տրորեալ էր ի գերեզմանին. Նոյն աղօթութեամբ յարո՛ և զմեռեալս այս, զի ծանիցեն զքեզ միայն Աստուած ճշմարիտ հանդերձ Հարբ և ամենասուրբ Հոգւովդ։ Եւ մինչև ասացեալ էր զամէնն, և յարուցեալ նստաւ մեռեալն։

Յայնժամ եղև ուրախութիւն մեծ թագաւորին և ամենայն ժողովրդեանն։ Խօսել սկսաւ յարուցեալ մեռեալն և ասէ ցթագաւորն. Խնդրեմ ի քէն խընդիրս ինչ, տուր ինձ զայն։ Ասէ թագաւորն. Խընդրեա որդեակ և տաց քեզ զոր ինչ և կամիս, փոխանակ զի տեսի զքեզ յարուցեալ։ Ասէ եղբայր թագաւորին. Տուր ինձ զնոյ զտաճարն քո, որ յերկինս է։ Ասէ թագաւորն. Տաճար ինձ յերկինս ո՞վ ետ։ Եւ նա ասէ. Զայն որ շինեաց քեզ առաքեալն Քրիստոսի Թովմաս, զոր ես տեսի և ոչ կարեմ պատմել զհանգամանս նորա։ Ասէ թագաւորն. Զայն ոչ կարեմ տալ քեզ. այլ խնդրեմ ի Տեառնէ զի արժանի եղէց մտանել և բնակել անդէն. և դու եթէ կամիս, ահա որ յարոյց զքեզ ի մեռելոց, նա շինեսցէ քեզ տաճար բարւոք և վայելուչ քան զիմն։ Եւ մինչև ցայս վայր ի խնդութենէ յարութեան եղբօրն ոչ ասաց ինչ ընդ առաքելոյն. և ապա անկաւ թագաւորն և ամենայն մեծամեծք և յարուցեալն յառաջ առաքելոյն, և ասեն. Աղաչեմք զքեզ ծառայ Աստուծոյ կենդանւոյ, և տո՛ւր մեզ զճանապարհն որ տանի ի կեանսն առ Աստուածն քո. և թող մեզ զմեղս մեր, զոր արարաք ընդ քեզ անգիտութեամբ։ Ասէ սուրբ առաքեալն. Գթած ողորմած է Տէր, երկայնամիտ և բազումողորմ, և ոչ յիշէ զմեղս զոր մարդիկ անգիտութեամբ գործեն։

Յայնժամ սկսաւ քարոզել նոցա, թէ Աստուած է անսկիզբն և անփոփոխ, յոչնչէ արար զամենայն արարածս. ասաց և զմարդեղութիւն բանին Աստուծոյ և զամենայն խորհուրդ տնօրէնութեան նորա. և հրամայեաց պահել զրադանիսն եօթն օր, և զաւուրս եօթն ուսոյց նոցա զամենայն կարգս քրիստոնէութեան և երախայացոյց զնոսա. և յաւուր ու-

թերրգի տանել սուրբ առաքելոյն զթագաւորն և զամենայն մեծամեծս իւր և եմուտ ի բաղանիսն. և կացեալ ի վերայ աւազանին, արկ անդ իւղ և ասէ. Եկեսցէ անուն քո սուրբ Քրիստոս, եկեսցէ ողորմութիւն և զօրութիւն քո ի բարձանց. և իբրև զայս ասաց, մկրտեաց զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. մատոյց պատարագ և հաղորդեաց զամենեսեան և յանձնեաց զնոսա Աստուծոյ:

Եւ յետ այնորիկ եկեալ Թովմաս, շրջեցաւ յերկիրն ամենայն և քարոզեաց նոցա զբանն կենաց, առ որ հաւատացին բազումք ի Հնդկաց, և եղև ուրախութիւն բազմաց:

Եւ յետ ժամանակաց բարի հաւատով փոխեցաւ ի Քրիստոս թագաւորն Գնդափառ. և յարեաւ այլ թագաւոր Մչդեհ անուն, որ ոչ հաւատայ ի Քրիստոս. նա չարչարեաց զԹովմաս ի Բաղամինես քաղաքին, և յետոյ աշտէիւ խոցեալ եսպան զնա: Եւ բարձեալ հաւատացելոցն՝ թաղեցին զնա ի նշանաւոր տեղւոջ, յորում բազում բժշկութիւնք կատարին ի տապանէն սրբոյն ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

Իսկ Սիփորայ և Յուզանէս՝ որդիք թագաւորին, զհետ գնացին ի լեառն, զի տեսանիցեն զկատարումն առաքելոյն. և յետ կատարմանն Թովմայի տեսին զնա Սիփորայ և Յուզանէս, և քաջալերեալ ի տեսլենէն Թովմայի հաստատեցան ի հաւատս Քրիստոսի: Եւ մի ոմն ի ծառայիցն Մչդեհի այսահարեալ, ոչ գտանէր առողջութիւն. և երթեալ Մչդեհ ի գերեզմանն առաքելոյն, և ոչ գտին զմարմինն սրբոյն, վասն զի աշակերտքն սրբոյն թաղեցին զգուշութեամբ և յետոյ տարեալ տարան ի յԱսորեստան: Եւ առեալ Մժդեհ ի հողոյ տապանին, ցանեաց ի վերայ ծառային և առժամայն առողջացաւ:

Եւ եղև յետ ժամանակաց՝ գնաց զօրն Պարսից, ի յԱսորեստան ի թալան, և հանդիպեցաւ ոմն ի նախարարացն Պարսից Յուսէփ անուն, նշխարաց սուրբ առաքելոյն Թովմայի, կազ-

մեալ և զարգարեալ փայտեայ տապանաւ, և գիտացեալ թէ գանձ իցէ, և յոյժ խնդաց ի վերայ։ Եւ յերեկոյի առանձնացեալ եբաց և ետես ոսկերք մեռելոյ, և զի ոչ ունէր հաւատս քրիստոնէութեան որ կարծէր զայն նշխարք սրբոց լինել, վասն որոյ զայրացեալ ի միտս իւր, եհար և ցրուեաց զամենայն ոսկերս առաքելոյն Թովմայի ի յոտս ձիոցն։ Եւ ի գիշերին յայնմիկ զարհուրեալ ի պէսպէս տեսլեանց և ի յահէ անտի զարթուցեալ ետես զամենայն ոսկերս վառեալ որպէս մոմեղէն. և ահիւ մեծաւ յարուցեալ ժողովեաց զամենայն՝ ինքն և ծառայք նորա և եդին ի փայտեայ տապանին, ուր էր եդեալ զառաջինն, և եդին ի վերայ ձիոյ միոյ և տարեալ տարան ի Հայս՝ ի գաւառն Աղձնեաց, ի տեղին որ կոչի Խորձ, մօտ ի գեօղն որ Վան ասի։

Եւ Ուսուֆն այն հաւատաց ի Քրիստոս, մկրտեցաւ ամենայն տամբ իւրով և ընտանեօքն որ էին ի զօրուն Պարսից։ Եւ յետ ժամանակաց ինչ, ազդ եղև ի սրբոյ առաքելոյն սպասաւորաց իւրոց, առնուլ զնշխարս նորա և տանել յայլ տեղի ընդ արևելս. և առաջնորդութեամբ լուսափայլ աստեղն՝ գնացեալ հասին ի գաւառն Ըշտունեաց ի վերայ գեղջ որ կոչի Պարծիս։ Եւ անդ զադարեալ եկաց աստղն ի բարձր և ի յահեակ տեղւոջ, և եդին զնշխար սուրբ առաքելոյն ի քարեայ տապանի. և շինեալ եկեղեցի և եդին ի գրանդի նորա. և շինեցաւ տեղի նորա վանք միաբանակեցաց և է մինչև ցայս օր ի փառս Քրիստոսի և սուրբ առաքելոյն Թովմայի։

Թովմաս՝ անհաս խորութիւն Թարգմանի։ Եւ էր ի ցեղէն Յուդայի, երկուորեակ եղբայր Թադէոսի առաքելոյն, ի միում յարգանդէ ծնեալ. սա վաճառեալ ի Քրիստոսէ, գնացեալ ի Հնդուստան, և անդ քարոզեաց զՔրիստոս. և էանց յայնկոյս ի Պարս և ի Խորասան, և քարոզեաց Մարաց և Իլամացւոց, և գնացեալ յԵրուսաղէմ ի փոխումն Աստուածածնին և անտի դարձեալ գնաց ի Հնդիկս, և անդ կատարեցաւ ի փառս Քրիստոսի Աստուծոյ։

# Ը

## ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՅՆ ԵՒ ԱՒԵՏԱՐԱՆՉԻՆ

## ՄԱՏԹԷՈՍԻ [1]

Մինչդեռ [2] առաքեալն Քրիստոսի Մատթէոս աւետարանիչն ի լերինն էր բուն և միով պատմուճանաւ [3], երևեցաւ նմա Յիսուս ի նմանութիւն պատանեկի և ասէ ցնա. Խաղաղութիւն ընդ քեզ Մատթէոս. և [4] նայեցեալ ի նա առաքեալն ասէ. Ողջոյն ընդ քեզ [5] և խաղաղութիւն, պատանի բերկրեալ: Եւ ասէ ցնա Յիսուս. Զօրացիր Մատթէոս քաջալերեա [6] և ընկալ զգաւազանս զայս. և [7] էջ ի լեռնէս և երթիջիր [8] ի Զմիւռնին [9] քաղաք, և մտեալ

1. Ա. օր. Պատմութիւն սուրբ: Բ. օր. Վկայաբանութիւն սրբոյն Մատթէոսի Աւետարանչին: Գ. օր. Պատմութիւն Մատթէոսի աւետարանչին Քրիստոսի: Դ. օր. Պատմութիւն Մատթէոսի աւետարանչին:
2. Գ և Դ. օր. Մինչդեռ էր սուրբ առաքեալն եւ աւետարանիչն Քրիստոսի Մատթէոս ի լերինն մերձ եւ բուն: Ա և Բ. օր. առաքեալն Մատթէոս եւ աւետարանիչն:
3. Ա. օր. չունի եւ միով պատմուճանաւ: Գ և Դ. օր. յաւելուն որպէս եւ ազատեաց զնա սուրբ առաքեալն Անդրէաս ի մարդակերացն եւ յուղարկեաց ի լեառն եւ անդ երեւեցաւ Տէր ի նմանութիւն:
4. Բ. օր. եւ նա ասէ ողջոյն:
5. Գ և Դ. օր. ընդ քեզ բերկրեալ պատանիդ:
6. Բ. օր. քաջ լեր: Գ. օր. յաւելու զի ես ընդ քեզ եմ:
7. Գ և Դ. օր արի էջ:
8. Դ. օր. երթ զնա: Գ. օր. երթ:
9. Գ և Դ. օր. ի Զմուռնին քաղաք մարդակերաց:

զգաւազանս ի դուռն եկեղեցւոյն զոր չինեցեր [1], և լինիցի ծառ մեծ և պտղաբեր և կերիցեն զազանաբարոյ [2] մարդիկն, և փոխեսցին յանզգայութենէ ի զգայութիւն [3] և ծանիցեն զիս և զՀայրն իմ որ յերկինս է. և դու Հրով կատարեսջիր [4], և ընկալցիս զպսակն կենաց [5]: Եւ զայս ասացեալ Տեառն [6], ետ զգաւազանն ի Մատթէոս և ինքն վերացաւ յերկինս:

Եւ [7] առեալ զգաւազանն Մատթէոս՝ էջ ի լեռնէն, ձեպէր երթալ ի քաղաքն, և յորժամ մերձ եղեւ [8] ի դուռն քաղաքին, Հանդիպեցան նմա, այսաՀարեալք ի չար դիւաց, Փուլփանա կին Թագաւորին, և որդի նորա Փուլպանոս և կին որդւոյ նորա Ներբայ. աղաղակեցին [9] և ասեն. Ո՞վ ած զքեզ միւանգամ ի քաղաքս յայս՝ [10] ով Մատթէոս, կամ ո՞վ ետ քեզ զգաւազանդ զայդ, վասն զմեզ կորուսանելոյ: Հայիմք [11] մերձ քո և տեսանեմք զՅիսուս Քրիստոս իբրև զպատանի. այլ որովՀետև եկիր Հալածել [12] զմեզ ի քաղաքէս մերմէ, յարուցանեմք զԹագաւոր քաղաքիս ի վերայ քո և Հրով այրեսցէ զքեզ: Եւ Մատթէոս եդեալ ձեռս ի վերայ նոցա Հալածեաց զդեւսն և զնոսա բժշկեաց և գնացին զՀետ նորա:

1. Գ. և Դ. որ. յաւելուն դու եւ Անդրէաս:
2. Բն. զազանաբնութիւն:
3. Գ. և Դ. որ. եւ լինիցին զգաստք իբրեւ զայլ մարդիկք. եւ զգեցցին Հանդերձս. եւ այլ ոչ եւս կերիցեն զմարմինս (Գ. որ. զմիս) մարդկան, եւ կամ զայլ ինչ պիղծ կերակուրս:
4. Գ. և Դ. որ. կատարեսցիս:
5. Գ. և Դ. որ. լուսոյ:
6. Գ. և Դ. որ. Տէր մեր Յիսուս Քրիստոս:
7. Ամենայն որ. Եւ իջեալ Մատթէոս ի լեռնէն (Գ. և Դ. որ. գնաց ի քաղաքն, պատաՀեցան նմա):
8. Ա. և Բ. որ. մերձեցաւ ի քաղաքն (Ա. որ. պատաՀեցին):
9. Ամենայն որ. աղաղակէին (Գ. և Դ. որ. եւ ասէին):
10. Գ. որ. մեր:
11. Գ. և Դ. որ. ահա տեսանեմք մերձ առ քեզ զՅիսուս որպէս պատանի:
12. Գ. որ. կորուսանել:

Եւ մտեալ[1] ի քաղաքն, գնաց նոքօք յեկեղեցին։ Եւ եպիսկոպոսն Պղատոն ամենայն ուխտիւն ել ընդ առաջ առաքելոյն[2], երկիր պագանելով անկան յոտս նորա և օրհնեցան ի նմանէ. և ժողովեցան առ նա ժողովուրդք բազմութեան[3] քաղաքին։ Եւ ելեալ սուրբ առաքեալն Մատթէոս ի բարձր տեղւոջ ի վերայ վիմի և քարոզեաց նոցա զբանն կենաց. ուսուցանէր և պատուիրէր զի թողցեն[4] զՍատուրյն աստուածն և հաւատասցեն ի մի Աստուած ի Տէր մեր Յիսուս Քրիստոս։ Եւ[5] ասէ. Նայեցարուք ի գաւազանս յայս և տեսանէք մեծ սքանչելիս, զի[6] արմատասցի և բերցէ պտուղ[7] գեղեցիկ և ցանկալի։ Եւ զայս ասացեալ, աղօթեաց առ Աստուած և եհար[8] զգաւազանն յերկիր. և առժամայն բուսաւ և աճեաց և մինչդեռ հայէին եղև ծառ մեծ, և եբեր պտուղ յոյժ քաղցր[9] և ցանկալի. և բղխեաց աղբիւր յարմատոյ ծառոյն[10]։ Եւ զայն տեսեալ ժողովրդոցն տային փառս Աստուծոյ. և մտեալ

1. Գ. օր. Եւ առեալ զնոսա եմուտ ի քաղաքն։ Գ. օր. Եւ իբրեւ մտին ի քաղաքն գնացին ի միասին յեկեղեցին։
2. Գ. օր. նոցա։
3. Բն. յաւելու բազմութեան ... սուրբ առաքելոյն։
4. Ա. օր. թողուլ զկատա-րուրս աստուածոցն իւրեանց։ Գ. օր. չաստուած իւրեանց։ Գ. օր. զՍատուրն կուռն իւրեանց եւ հաւատան ի Քրիստոս։
5. Գ. եւ Գ. օր. Եւ զկնի բա-րոզելոյն ասաց։
6. Գ. եւ Գ. օր. զի ահա ես տնկեմ զայս եւ առժամայն արմատացի։
7. Գ. օր. պտուղ զարմանա-լի։ Գ. օր. պտուղ գեղե-ցիկ եւ զարմանալի որ ոչ սպառի։
8. Գ. եւ Գ. օր. ցրցեաց։
9. Ա. եւ Բ. օր. չունին քաղցր եւ ցանկալի։ Գ. եւ Գ. օր. պտուղ առատ քաղցրա-համ (Գ. օր. քաղցր եւ բարեհամ)։
10. Գ. եւ Գ. օր. յաւելուն յորդառատ (Գ. օր. յորդ) եւ բարեհամ, եւ որք կե-րան եւ արբին առժամայն զգաստացան եւ տեսին։ Ա. եւ Բ. օր. յարմատոյն աղբիւր, եւ ժողովուրդքն մտին յեկեղեցին եւ տեսին։

յեկեղեցին տեսին զանձինս իւրեանց մերկս [1], փոխեալ ի զազիր կերպարանս [2], և զայն տեսեալ անկանէին յոտս առաքելոյն, աղաչէին զնա զի տեսանէին զմերկութիւնս իւրեանց, և [3] ամաչէին ի միմեանց. և նա հրամայեաց նոցա երթալ ի յարկս իւրեանց զգենուլ հանդերձս նորս և դառնալ յեկեղեցին, զոր և արարին իսկ: Եւ հրամայեաց առաքեալն Պզատոնի եպիսկոպոսի, և մկրտեաց [4] ի յաղբեր ծառոյն զկին Թագաւորին և զորդի նորա և զկին որդւոյ նորա և զամենայն ժողովուրդն [5] որ չեւ էին մկրտեալք, և լուսաւորեալք ամենեքեան մտին յեկեղեցին. և սուրբ առաքեալն և հայրապետն կատարեցին զփրկական պատարագն և հաղորդեցուցին զամենեսեան: Եւ նոքա գոհանալով զԱստուծոյ, մեծապէս ուրախ լինէին ընդ գալուստ առաքելոյն:

Եւ տեսեալ Թագաւորին [6] զբժշկութիւնն՝ զոր արար սուրբ առաքեալն Մատթէոս ի կին նորա և յորդի և ի հարսն՝ խնդայր [7] ընդ բժշկութիւնն, բայց զի ոչ որոշէին յառաքելոյն, բարկանայր և խորհէր [8] հրով այրել զառաքեալն:

1. Գ. և Դ. օր. մերկ եւ զազիր եւ ամաչէին ի միմեանց:
2. Ա. և Բ. օր. կերպս:
3. Ա. և Բ. օր. եւ ընթացան յարկս իւրեանց զգեցան հանդերձ եւ դարձան յեկեղեցին. եւ հրամայեաց: Գ. և Դ. օր. Եւ ընթացեալ ի տունս իւրեանց եւ ծածկեցին զանձինս, եւ հրամայեաց:
4. Գ. և Դ. օր. մկրտեաց զնոսա յաղբեր ծառոյն որք հաւատացին ի Քրիստոս, եւ կատարեալ զփրկական պատարագն եւ հաղորդեաց զնոսա ի պատուական մարմնոյ եւ յարենէ որդւոյն Աստուծոյ:
5. Ա. և Բ. օր. ժողովուրդն եւ մտեալ յեկեղեցին հաղորդեցան եւ գոհանային զԱստուծոյ մեծապէս ուրախ եղեն յառաքելոյն:
6. Ա. և Բ. օր. թագաւորն զոր արար Մարկոս: Գ. և Դ. օր. Փուլպանոս թագաւորն (Դ. օր. զնշանսն) զոր արար Մարկոս:
7. Գ. օր. խնդրեաց բժշկութիւն:
8. Գ. և Դ. օր. կամէր:

Եւ տեսանէր ի գիշերին յայնմիկ[1] Մատթէոս զՅիսուս զի ասէր ցնա. Ընդ քեզ եմ զօրացիր և քաջ լեր, զի ես եմ որ կեցուցանեմ[2] զքեզ: Եւ զարթուցեալ ի տեսլենէն[3], գնաց յեկեղեցին առ եպիսկոպոսն և ասէ. Ծանոյց ինձ Աստուած զխորհուրդ թագաւորին, զի կամի առաքել զօրս ի վերայ իմ[4], բայց ոչ երկիցուք զի Տէր ընդ մեզ է: Եւ տեսեալ թագաւորին զբազմութիւն քաղաքին որ դարձան ի քարոզութիւնն[5] Մատթէոսի, և տարակուսեալ[6] թէ որպէս կարասցէ ըմբռնել[7] զնա և զմտաւ ածեալ խորհէր թէ զինչ արասցէ[8]: Իսկ դևքն որ ելին ի թագուհւոյն[9] և յորդւոյն և ի կնոջէ[10] նորա, կերպարանեցան[11] իբրև զօրականք[12] և ասեն ցթագաւորն. Զի՞ այդպէս[13] վախեցեր յօտար աղանդաւորէն. դա մոգաւոր էր և եղև աշակերտ Յիսուսի խաչելոյն ի Հրէից. և այժմ ելանելոց[14] է ընդ եպիսկոպոսին Պղատոնեայ ընդ դուռն քաղաքին որ կոչի Բարէան դուռն. փութաջիր և կալցիս զնա[15] դիւրաւ: Եւ զայն լուեալ թագաւորին առաքեաց չորս զօրականս[16] ի դուռն յայն և ասէ. Եթէ ոչ բերջիք զՄատթէոս, փոխանակ նորա[17]

1. Ա և Բ. օր. յաւելուն յանուշրջս:
2. Գ. օր. զօրացուցանեմ: Դ. օր. չունի զի... զքեզ:
3. Բն. յաւելու ի տեղեկենն:
4. Գ և Դ. օր. յաւելուն ես չարչարել զիս:
5. Գ և Դ. օր. ի Մարկոս ես հաւատացին ի Քրիստոս:
6. Ամենայն օր. ի տարակուսի լեալ:
7. Գ և Դ. օր. ունել:
8. Բն. յաւելու թէ զինչ արարցէ:
9. Գ և Դ. օր. ի կնոջէ նորա ի յորդւոյն ես ի հարսնէն:
10. Ա և Բ. օր. ի կնոջէ որդւոյ:
11. Ա և Բ. օր. կերպացան:
12. Ա. Գ և Դ. օր. իբրեւ զմի ի զօրականացն: Բ. օր. իբրեւ զմի զօրական: Գ և Դ. օր. ես կացեալ առաջի թագաւորին ասէր. ընդէ՞ր այնչափ երկեար:
13. Ա և Բ. օր. ընդէ՞ր այդչափ:
14. Գ և Դ. օր. անդ ելանէ:
15. Ա և Բ. օր. զնոսա: Գ և Դ. օր. յաւելուն արա որպէս կամիս:
16. Բ և Գ. օր. զինուորս:
17. Բն. յաւելու փոխանակ նորա:

զձեզ սպանանեմ ։ Եւ նոքա զինու[1] գնացին ի դուռն քաղաքին։ Եւ[2] ահա ելանէր առաքեալն և եպիսկոպոսն, բայց զնոսա ոչ տեսանէին և զխօսս[3] լսէին։ Եւ[4] գնացեալ պատմեցին Թագաւորին. և բարկացեալ առաքեաց զհետ նոցա այլ ևս տասն զօրականս զինու, և յարժամ մերձ եղեն առ սուրբսն[5], երևեցաւ նոցա պատանեակ մի, ունելով ի ձեռին զամբար[6] վառեալ. և այրեաց հրովն այն[7] զերեսս, զաչս և զմօրուսս[8]։ Եւ նոքա յահի լեալ[9] ընկեցին զզէնս իւրեանց և փախստեայք[10] այրեցեալք[11] և խարշատեալք և յաչաց պակասեալք դարձան առ Թագաւորն. և եղեն համր և ոչ կարէին խօսել։ Եւ[12] դևքն չարախօսք, տանջեալք ի հրեշտակաց, եղեն ի նմանութիւն զօրականաց և ասեն ցԹագաւորն. Ասասցուք քեզ զճշմարիտն. քանզի հրեշտակ յերկնից զարհուրեցոյց զմեզ ասել քեզ որ, թէ և դու բազում[13] զօրօք երթիցես՝ ոչինչ կարաս-

1. Ա. օր. զինուորքն։ Դ. օր. չունի։
2. Ա և Բ. օր. չունին և ահա ... եպիսկոպոսն. Գ. և Դ. օր. Եւ իբրև ելանէին Մարկոս և Պղատոն։
3. Ա և Բ. օր. զձայն խօսից նոցա։ Գ. և Դ. օր. զձայն միայն լսէին որ սաղմոսէին։
4. Գ. և Դ. օր. Եւ դարձեալ յետս գնացին առ թագաւորն և ասացին նմա թէ զձայնն լսեմք որ սաղմոսեն այլ զնա տեսանել ոչ կարեմք. և նա յղեաց (Դ. օր. առաքեաց) ։
5. Գ. օր. Մարկոս։ Դ. օր. նոսա։ Ա և Բ. օր. չունին։
6. Ամենայն օր. զամբարս վառեալս և։
7. Բն. յաւելու հրովն այն։
8. Գ. և Դ. օր. չունին զմօրուսս ։
9. Դ. օր. ահիւ ըմբռնեալ։ Ա. օր. և փախստականս այրեցեալք ամօթալից երեսօք դարձան։
10. Գ. և Դ. օր. գնացին փախստականս առ թագաւորն համբացեալք։
11. Բ. օր. այրեցեալ երեսօք, դարձան ամօթալից առ թագաւորն։
12. Ա. Բ և Գ. օր. Եւ դարձեալ դևքն զօրականք լեալք ասեն ցթագաւորն։ Գ. օր. Եւ դարձեալ երևեցաւ դևն ի կերպարանս զօրականի և ասէ ։
13. Գ. և Դ. օր. ամենայն։

ցես անձել [1] Մատթէոսի առաքելոյն [2]. քանզի Քրիս-
տոսի աշակերտ [3] է և նորա հրամանաւն եկեալ է
աստ. և եթէ ոչ [4] հաւատասցես ի խաչելեալն, այլ
բռնութեամբ ինչ արասցես, խաւարեսցին աչք քո և
ի խելաց անկանիցիս [5] և դու ինքնին կերիցես
զմարմին [6] քո ատամամբք քո: Եւ ասէ թագաւորն.
Դուք ո՞վ էք որ զայդ ասէք ցիս: Եւ ասեն ցնա.
Այն դեւքն եմք որ ի կին քո և յորդին և ի հարսն
մտեալ էաք, և Մատթէոս նշանաւ խաչին Քրիստոսի
եհան զմեզ ի նոցանէ: Եւ այժմ են նոքա յեկեղեցին
և աղմանեն ի միասին [7], և եթէ դու լուիցես մեզ և
հաւատասցես ի խաչելեալն [8], ապրիս որպէս և
նոքա: Եւ զայս ասացեալ եղեն դեւքն որպէս
ծուխ [9] և չիջեալք անյայտ եղեն [10]:

Եւ յարուցեալ ընդ արշալոյսն [11] առաւօտուն,
նա ընդ իւր երկու իշխան և գնաց յեկեղեցին նեն-
գութեամբ, զի սպանցէ զառաքեալն [12]. և յորժամ
եմուտ յեկեղեցին, խաւարեցան աչք իւր և զձայն
սաղմոսից [13] լսէր զառաքելոյն, այլ զնա ոչ տեսա-
նէր: Եւ ասէ [14] թագաւորն. Ցոյց ինձ զքեզ տէրր

1. Ամենայն օր. չար անձել:
2. Ա և Գ. օր. աւետարանչին:
3. Գ. օր. աւետարանչի և Յիսուսի: Դ. օր. շունի:
4. Բն. յաւելու ոչ... այլ:
5. Ա. Բ և Գ. օր. եղցես: Դ. օր. եղցես ի ծայլելեացդ:
6. Ամենայն օր. զանձն քո: Գ և Դ. օր. շունին ատամամբք քո:
7. Գ և Դ. օր. ընդ առաքելոյն: Գ. օր. յաւելու և օրհնեն զԱստուած:
8. Գ և Դ. օր. ճաշատուս ի Քրիստոս: Ա և Բ. օր. շունին ի խաչելեալն:
9. Դ. օր. որպէս զծուխ փերացաւ եւ անյայտ եղեւ: Դ. օր. ոչընչացաւ:
10. Ամենայն օր. յաւելուն Եւ յանի լեալ թագաւորն ոչ եկեր եւ ոչ արբ, եւ ոչ ննջեաց յերկիւղէն:
11. Գ և Դ. օր. ընդ առաւօտն:
12. Ամենայն օր. զՄարկոս:
13. Բ և Դ. օր. խօսիցն: Ա. օր. շունի: Դ. օր. շունի եւ զձայն... Ցոյց ինձ:
14. Դ. օր. սկսաւ ասել ցնա ողոքանօք:

տառապէալ Քրիստոսի և հաւատամ ի Քրիստոս, զի այժմ ծանեայ զի նա միայն է Աստուած ճշմարիտ զոր քարոզես դու։ Եւ զայս ասացեալ բացան աչք նորա, բայց ի նենգութենէն ոչ դադարէր[1]. մանաւանդ վասն կնոջ իւրոյ և որդւոյն որ յարէին յառաքելոյն ի սուրբ եկեղեցւոյն։ Ասէ ցնա սուրբ առաքեալն. Ով արիւնարբու բանսաւոր, մինչև յե՞րբ թաքուցանես[2] զթոյնդ ի սրտի քում, և ոչ յայտնես և կատարես զկամս հօրն քո սատանայի։ Զայն լուեալ[3] թագաւորն, դարձաւ յապարանն իւր[4], և խորհէր[5] թէ որո՞վ հնարիւք սպանցէ զառաքեալն։ Եւ[6] հրամայեաց զօրականացն և կալան զառաքեալն Մատթէոս և տա(րա)ն ի տեղին յոր զչարագործսն սպանանէին[7], մերձ ի ծովն։ Եւ արկեալ[8] տարածեցին զնա յերկիր և վար(ս)եցին[9] չորս ցիցս ձեռացն և ոտիցն, և կապեցին զոտս և զձեռս սրբոյն, և կուտեցին ի վերայ նորա փայտ բազում[10] և վառեցին հուր, և ցանեցին[11] ի վերայ փայտին մինչդեռ վառէր՝ ձէթ և ձիւթ և ծարպ, և[12] այնպէս բորբոքեցաւ ի վերայ սուրբ առաքելոյն։ Եւ[13] քանզի պատուէր տուեալ էր թագաւորն զօրականացն, եթէ ոք, ասէ, ի քրիստոնէից ընդդիմասցի ձեզ նոյնպէս հրով այրեսջիք և զնա։ Եւ քանզի[14] ժողովեցան

1. Գ. և Դ. օր. դարձաւ։ Ամենայն օր. չունին մանաւանդ.... եկեղեցւոյն։
2. Գ. և Դ. օր. ոչ թաքնես զթոյնսրդ եւ ոչ....։
3. Ամենայն օր. եւ դարձաւ թագաւորն։
4. Դ. օր. ի տուն։
5. Ա. օր. հնարէր։ Գ. օր. զմտաւ ածէր ։
6. Գ. օր. Եւ ի վաղիւն հրամայեաց զօրաց իւրոց երթալ ունել զՄատթէոս։ Դ. օր. Եւ ի վաղիւն ետ ունել զառաքեալն Քրիստոսի զՄաթէոս ։
7. Ամենայն օր. տանէին։
8. Բն. յաւելու արկեալ։
9. Ա. Բ և Գ. օր. կապեցին ի չորս ցիցս զձեռսն և զոտս։ Դ. օր. կապեալ արկեցին։
10. Ամենայն օր. չոր։
11. Դ. օր. թափեցին։
12. Բն. յաւելու եւ այնպէս... առաքելոյն։
13. Ամենայն օր. Եւ պատուիրէր զօրականացն։
14. Բն. յաւելու քանզի։

ամենայն հաւատացեալքն ի վերայ դաշտացն, մինչև կապեալ էին[1] զնա, կամեցան բռնութեամբ յափշտակել զառաքեալն ի ձեռաց նոցա։ Իսկ[2] սուրբ առաքեալն աղաչեաց զնոսա զի դադարեսցեն, քանզի[3] այսպէս, ասէ, Տեառն կամք եղիցին։ Եւ հուրն բորբոքեցաւ ի վերայ սրբոյն, և նա համբարձեալ զձայն[4] իւր օրհնեաց զԱստուած և աղօթեաց վասն փրկութեան թագաւորին և[5] քաղաքին, զի դարձցին և մի կորիցեն. և[6] ձայն լսելի եղև ի հրոյն որ ասաց[7]. Խաղաղութիւն ընդ ամենեսեան, և նոյն ժամայն աւանդեաց զհոգին առ Աստուած[8]։

Եւ տեսեալ Պղատոն եպիսկոպոսն զհոգի առաքելոյն յերկինս[9] վերացեալ սկսաւ[10] սաղմոսել։ Եւ ահա երկու[11] սքանչելատեսիլ այրք իջին ի հուրն[12] և բարձին զմարմին սրբոյն և եդին ի մէջ[13] ժողո-

1. Բն. յաւելու մինչև կա-պեալ էին։
2. Ամենայն օր. Եւ նա աղա-չեաց նոցա եւ դադարեցին (Գ և Դ. օր. լռեցին)։
3. Բն. յաւելու քանզի... և-ղիցին։
4. Ա և Բ. օր. զմիտսն։ Գ և Դ. օր. զաչս իւր յերկինս։
5. Գ. օր. եւ զի ամենայն քաղաքն դարձցին յաստուած-գիտութիւն եւ մկրտեսցին. եւ ասացեալ զամէնն։
6. Բն. յաւելու եւ ձայն... որ։
7. Գ. օր. եւ ի կատարմանն աղօթից ասաց ժողովրդեանն։
8. Ա. օր. հոկտեմբերի ամսոյ եւ ութ ի վեցերորդ ժամու աւուրն։ Բ և Գ. օր. ի նոյեմբերի ամսոյ եւ վեց ի վեցերորդ ժամու աւուրն։ Դ. օր. ի նոյեմբերի ամսոյ եւ վեց եւ էր օրն ուրբաթ եւ ժամ օրն վեցերորդ։
9. Ա և Բ. օր. յօդս։ Գ. օր. ետես զառաքելոյն յօդս վերացեալ։ Դ. օր. նորին կերպարանաւն յօդս վերա-ցեալ պայծառ քան զարեգակն։
10. Գ. օր. սկսաւ գոհու-թեամբ օրհնել զԱստուած եւ սաղմոսել։ Դ. օր. սկը-սաւ գոհանալ զԱստուծոյ եւ սաղմոսել զերանեալ ամ-բիծսն ի ճանապարհի արքա-յութեան երկնից։
11. Գ. օր. լուսաւորք եւ։
12. Ամենայն օր. ի բորբո-քեալ հուրն եւ առին։
13. Ա. օր. ուր քրիստոնեայքն էին։ Գ. օր. ուր ժողովեալ էին ամենայն հաւատացեալքն։ Դ. օր. ի մէջ հաւատացե-լոցն։

վոյն քրիստոնէից, և համբարձան յերկինս[1]: Եւ զայն[2] տեսեալբազմութիւն քաղաքին ուրախ եղեն յոյժ և[3] սկսան աղաղակել մեծաւ ձայնիւ և ասեն. Մեծ է Աստուածն քրիստոնէից և ոչ գոյ այլ Աստուած բաց ի նմանէ[4], զոր քարոզեաց սուրբ առաքեալն Մատթէոս: Եւ լուեալ թագաւորն զաղաղակ ձայնիցն՝ զարհուրեցաւ, և ընթացեալ փութապէս[5] եկն ի ժողովն և անկաւ ի վերայ մարմնոյն սուրբ առաքելոյն, մեծաւ հառաչմամբ, և բուռն հարեալ զոտից սրբոյ եպիսկոպոսին խնդրէր զթողութիւն. և տեսեալ եպիսկոպոսն զջերմեռանդ զղջումն թագաւորին, ընկալաւ[6] և օրհնեաց զնա և երախայացոյց[7]: Իսկ[8] զմարմին սուրբ առաքելոյն պատեալ եդին յեկեղեցւոջն մեծաւ պատուով. և յետ երից աւուրց մկրտեաց զթագաւորն[9] և զկին նորա և զորդին և զհարսն:

Եւ[10] երևեցաւ սուրբ առաքեալն ի վերայ աւազանին և ասէ. Թագաւորդ[11] անուանեսցի անուամբ իմով Մատթէոս, և կինն անուանեսցի Սոփիա և հարսն անուանեսցի Սիւնեսիա. նոյնպէս և որդին իւր անուանեսցի Մատթէոս:

1. Բն. յաւելու եւ համբարձան յերկինս:
2. Ամենայն օր. Եւ նոցա տեսեալ ուրախ:
3. Ա և Բ. օր. եւ ժողովեցան անդ ժողով քաղաքին եւ աղաղակէին երկ: Գ և Դ. օր. եւ զաղաղակ բարձեալ ասէին երկ:
4. Ա. Գ և Դ. օր. բաց ի միոյն: Բ. օր. բայց միայն:
5. Ամենայն օր. փութապէս առ եպիսկոպոսն անկաւ յոտս նորա եւ մեծաւ հառաչմամբ խնդրեաց թողութիւն: Գ. օր. եւ մկրտութիւն: Դ. օր. թողութիւն մեղաց մկրտութեամբ աւազանին:
6. Բն. յաւելու ընկալաւ:
7. Գ. օր. քաջալերեաց ի հաւատս: Դ. օր. մկրտեաց:
8. Բն. յաւելու Իսկ... պատուով:
9. Բն. յաւելու զթագաւորն... զհարսն:
10. Գ և Դ. օր. եւ ի մկրտելն:
11. Ա և Բ. օր. Փիլիպիանոս անուանեցաւ: Գ. օր. Փուլպանայ: Դ. օր. Փուլփանաս:

Եւ[1] այնպէս լուսաւորեալք սուրբ աւազանաւն և հաղորդեալք փրկական սուրբ խորհրդոյն և գնացին յապարանս իւրեանց և զամենայն կուռսն[2] խորտակեցին և յերկիր ընկեցին: Եւ առաքեաց Թագաւորն հրաման յամենայն գաւառս իւր և կործանեաց զամենայն բագինս կռոցն և զամենայն կռապաշտան լուսաւորեաց[3] ի հաւատսն որ ի Քրիստոս: Եւ[4] հրաման առնել որոց եպիսկոպոսին ձեռնադրեաց զԹագաւորն՝ բաշխանս, և զորդին իւր ի սարկաւագ: Եւ երևեալ ի տեսլեան սուրբ առաքեալն[5], ասէ ցԹագաւորն. Յետ երից ամաց[6] հանգիցէ Պղատոն առ Աստուած. և[7] դու նստցիս յաթոռ եպիսկոպոսութեան քաղաքիդ քոյ. և զհետ քո որդիդ քո: Եւ յետ երից ամաց երանելի եպիսկոպոսն հանգեաւ[8] առ Աստուած: Եւ Թագաւորն Մատթէոս, կամաւորութեամբ[9] եթող զԹագաւորութիւն իւր առ բարեպաշտի[10] ազգականի իւրոյ, և ինքն ձեռնադրեցաւ եպիսկոպոս քաղաքին իւրոյ, ըստ հրամանի սուրբ առաքելոյն, և ձեռնադրեաց զորդին իւր բաշխանս. և տուաւ նոցա[11] շնորհք յԱստուծոյ. որ միայն ձեռն դնելով և ապա-

1. Ա և Բ. օր. Եւ եկեալ յաւազանէն (Ա. օր. եւ) ի սուրբ խորհրդէն (Ա. օր. խորհրդենէն) եւ երթեալ յապարանս: Գ. և Դ. օր. Եւ եկեալ ի յաւազանէն լուսաւորեալ հոգւովն սրբով եւ հաղորդեցան ի կենարար (Գ. օր. պատուական) մարմնոյ եւ յարենէ Որդւոյն Աստուծոյ:
2. Գ. օր. բագինսն եւ ամենայն կռապաշտք ...:
3. Գ. օր. աստուածգիտութեամբ: Բն. յաւելու ի հաւատսն որ ի Քրիստոս:
4. Ամենայն օր. Եւ սուրբ առաքեալն Մարկոս ի տեսլեանն ձեռնադրեաց ...:
5. Բն. յաւելու երևեալ ... առաքեալն:
6. Ամենայն օր. ամաց:
7. Ա. օր. չանի եւ դու ... առ Աստուած:
8. Բ. Գ և Դ. օր. փոխեցաւ:
9. Գ և Դ. օր. կամաւ եա:
10. Գ և Դ. օր. քրիստոնէի:
11. Ամենայն օր. նմա:

*թիւք բժշկէին [1] զամենայն հիւանդս, և զդեւս ի մարդկանէ և յամենայն տեղեաց հալածական առնէին։ Եւ աստուածահաճոյ [2] փառուք կացեալ [3], հանգեաւ [4] ի Քրիստոս խաղաղութեամբ, և [5] Նստաւ յաթոռ եպիսկոպոսութեան որդին իւր, և նա նոյնպէս բարւոք փառուք կացեալ՝ փոխեցաւ ի Քրիստոս, և ի միասին ընդ առաքելոյն բարեխօսեն առ Տէր վասն ամենայն աշխարհի ։*

1. Ա և Բ. օր. առողջացուցանէր։ Գ. օր. փարատէր զամենայն ցաւս ի մարդոյ և յանասնոյ։ Գ. օր. զհիւանդս և զախտաժետս։
2. Գ. օր. բարեհաճոյ։ Դ. օր. բարի ։
3. Բ. Գ. և Դ. օր. կեցեալ։
4. Գ. օր. փոխեցաւ։
5. Գ. օր. Նոյնպէս և յետ նորա կեցեալ որդի նորա բարի վարուք և հանգեաւ ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Դ. օր. բռնեալ զորդին փոխանակ իւր յաթոռ եպիսկոպոսութեան։

## Թ

# ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## ՅԱԿՈԲԱՅ ՏԵԱՌՆ ԵՂԲՕՐՆ

Առաքելոյն Աստուծոյ սուրբն Յակոբոս՝ եղբայր Տեառն ըստ մարմնոյ, որդի էր Յովսեփայ աստուածահօրն, որ անուանեցաւ այր Մարիամու աստուածամօրն:

Զսա օրհնեաց Աստուած և սրբեաց յորովայնէ մօր իւրոյ, գինի և իւղ ոչ էարբ՝ որպէս զմեծն Սամուէլ և զսուրբն Կարապետն Յովհաննէս, և չընչաւորս ինչ ոչ եկեր և ածելի ոչ եհաս ի գլուխ նորա, իւղով ոչ օծաւ երբեք և ի բաղանիս ոչ եմուտ, բրդեղէն ոչ զգեցաւ այլ միայն ցփախ՝ այսինքն մազեղէն: Եւ յառաւել սրբութենէն իւրմէ յամենայն աւուր մտանէր ի սուրբն սրբոց, և ո՛չ մի անգամ ի տարւոջն ըստ օրինացն: Այլ և ծունկք նորա խստացեալ էին որպէս զուղտոյ ի ստէպ ծնրադրութենէն, և վասն առաւել ճգնութեանն իւրոյ արդար անուանեցաւ և եղբայր Տեառն կոչեցաւ: Եւ եթէ վասն է՞ր ասացաւ եղբայր Տեառն, այս է պատճառն:

Յովսէփ՝ որ աստուածահայր անուանեցաւ, ունէր ամուսին զՄարիամ՝ դուստր Մաթան քահանայի՝ զքոյրն Աննայի՝ զմայրն Մարիամու Աստուածածնին: Եւ Յովսէփ ունէր չորս որդիս. զՅովսէփ և զՅուդա, զՅակոբ և զՇմաւոն, որք առ հասարակ Տեառն եղբարք կոչեցան: Բայց դարձեալ իւրաքանչիւր ոք յայս չորից եղբարցս երեք երեք անուանց հանդիպեցան. և են այսպէս: Նա որ Յովսէփն էր, Յուա-

*տոս և Բարսաբայ անուանեցաւ. իսկ Յուդայն՝ Ղէբէոս և Թադէոս անուանեցաւ. և Շմաւոն՝ Սիմոն Կանանացի ասացաւ և Նաթանայէլ կոչեցաւ:*

*Արդ թէպէտև չորեքին եղբարք կոչեցան Յիսուսի, այլ յատուկ Տեառն եղբայր՝ Յակոբոս միայն էր, վասն զի համշիրակ էր Քրիստոսի, այս է՝ միամօր կաթամբ սնեալ Յիսուս և Յակոբ՝ ի մի տան միոյ տարւոյ տղայք էին: Մարիամ որ էր մօրաքոյր Մարիամու սուրբ կուսին մօրն Յիսուսի, առեալ զՅիսուս դիեցուցանէր կաթամբ ի ստինս իւր: Եւ մի՛ թուեսցի այս անպատշաճ, թէ զի՞րդ առնոյր Յիսուս կաթն ի մօրէն Յակոբայ: Նա որ զօծումն ի պոռնկէն ընկալաւ և զհամբոյրն ի մեղաւորէն, չէ զարմանք թէ զկաթն արդարոյն՝ ի զգաստէն և ի պարկեշտէն՝ ի մօրէն Յակոբայ առնոյր, այն որ մարդասիրութեամբն մարդ եղև Աստուածն ամենայնի: Այս է պատճառ Տեառն եղբայր ասելոյն Յակոբայ: Եւ այս յիրաւի, և այն ևս գիտելի է, զի ոչ թէ Յակոբ յԱստուածածնէն դիեցաւ, այլ Յիսուս ի մօրէն Յակոբայ, և այս յիրաւի՝ զի մարդասէրն Աստուած ոչ զարշի ի ծառայից իւրոց:*

*Առաքեալն Յակոբոս կրկին և երեքկին կերպիւ հարազատ էր Քրիստոսի: Նախ ազգականութեամբն որ էր ի ցեղէն Յուդայէ և յազգէն Յուդայէ՝ ի ցեղէն Դաւթի, որպէս և Գաբրիէլ ասաց Յովսեփայ, որդի Դաւթի: Եւ երկրորդ՝ մերձաւորութեամբն որ մայրն Յիսուսի՝ մօրաքոյր դուստր էր սրբոյն Յակոբայ, և նա նմա: Եւ երրորդ այն՝ որ համշիրակ էին: Եւ չորրորդ այնու՝ որ նմանատիպ էր ամենեւին կերպիւն և հասակաւն, ձեւովն և շարժմամբն Յակոբ Յիսուսի:*

*Սա ոչ էր ի թիւ երկոտասանիցն և ոչ ի համար եօթանասնիցն, այլ էր սա ի տանէն Աստուծոյ, մօտ ընտանի ի բնութենէ Յիսուսի Քրիստոսի. պատուով ի վեր քան զամենայն առաքեալսն: Վասն այսորիկ Պետրոս վէմն հաւատոյ և մեծն ամենայնի, երեսփոխանն Քրիստոսի, հաւանութեամբ և կամօք*

ամենայն առաքելոց սրբոց՝ ընտրեաց զՅակոբոս արդարն և ձեռնադրեաց զնա եպիսկոպոս Երուսաղէմայ. յետ յիսուն աւուր իջման Հոգւոյն Աստուծոյ ի նոսա: Եւ եդին (զՅակոբ) յաթոռն Քրիստոսի յԵրուսաղէմ, որպէս զմելքատէր և զեպիսկոպոսն ժառանգաւոր այնմ աթոռի և վիճակի՝ զսուրբն Յակոբոս: Եւ ինքեանք երկոտասան սուրբ առաքեալքն եօթանասուն աշակերտօքն՝ որպէս թէ ի Յակոբայ առաքեալք՝ գնացին ի քարոզութիւն աւետարանին Քրիստոսի ընդ ամենայն ոլորտս աշխարհի:

Եւ Յակոբոս նստաւ յԵրուսաղէմ՝ որպէս զեղբայր և զհայրենատէր և զարժանաժառանգ աթոռոյն Քրիստոսի: Գրեաց նոցա զթուղթն ընդհանրական, քաղցր և պարզ բանիւ քաջալերական, և հաստատէր զիւրաքանչիւր ոք ի հաւատս ճշմարտութեան և ի վարս առաքինութեան, զառաքեալսն ի քարոզութիւն բանին, և զժողովուրդն ի հաւատալ աւետարանին, և այնպէս եկաց յաթոռն Երուսաղեմի սուրբն Յակոբոս զամս երեսուն:

Իսկ անիրաւապան ազգն՝ Հրեայքն, չար նախանձու լցեալ, կրճտէին զատամունս իւրեանց ընդ համարձակ քարոզութիւն աւետարանին և ընդ բազմանալ հաւատացելոցն Քրիստոսի. վասն որոյ յաւուր միում ժողովեցան առ Յակոբոս և ստիպէին զնա ուրանալ զնա առաջի ժողովրդեանն, և ասէին. Արդարդ Յակոբոս ասա մեզ, ո՞ր է դուռն Յիսուսի. արդ աղաչեմք զքեզ, ել կաց ի վերայ աշտարակի տաճարին և ցոյց մեզ զդուռն փրկութեան: Եւ բռնութեամբ հանին զնա յաշտարակ տաճարին և ասէին. Ասա մեզ արդարդ, ո՞ր է դուռն Յիսուսի, զի մեք ամենեքեան հաւատամք քեզ, և գիտեմք որ ճշմարիտ արդար ես, և ակն մարդոյ ոչ առնես. ասա՛ մեզ, ո՞ր է դուռն փրկութեան. քանզի ամենայն ժողովուրդ ազգիս մոլորեցան զհետ խաչելոյն ի Պիղատոսէ:

Յայնժամ ի ձայն բարձր աղաղակեաց եւ ասէ Յակոբոս. Ընդէ՞ր հարցանէք զիս վասն Յի-

տեսի. ահա նստեալ է նա ընդ աջմէ զօրութեան Հօր ի բարձունս և հանդերձեալ է գալ ընդ ամպս երկնից, ի դատել զաշխարհս արդարութեամբ և հատուցանել ըստ իւրաքանչիւր գործոց արդարոց և մեղաւորաց: Եւ բազումք հաւանեցան բանիցն Յակոբայ և ասէին. Ովսաննա որդւոյ Դաւթի: Ընդ որ բարկացեալ դպրացն և փարիսեցւոցն, ասէին ընդ միմեանս. Չար բան արարաք որ այսպիսի վկայութիւն տուաք տալ Յիսուսի որդւոյ Մարիամու:

Յայնժամ աղաղակեցին միաբան. Ո՜հ, ո՜հ, արդարն մոլորեցաւ. և ելեալ ի թևս տաճարին, հարին զնա և ընկեցին ի բարձրութենէն ի վայր, և զի ոչ մեռաւ, սկսան քարկոծել զՅակոբոս արդարն: Եւ նա ծունր եդեալ վասն նոցա աղաչէր զԱստուած և ասէր. Տէր մի համարիր սոցա զայս մեղս, այլ թող սոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն:

Եւ մի ոմն ի քահանայիցն յորդւոցն Ռաքաբայ աղաղակեաց թէ զինչ գործէք, դադարեցէք ի հարկանելոյ զարդարդ զի վասն ձեր աղօթէ դա: Եւ մի ոմն ի նոցանէ առեալ զփայտ թափչաց, որով տափէին զկտաւսն, և այնու ուժգին հարեալ զգլուխ սրբոյն Յակոբայ, և այնպէս կատարեցաւ ի Քրիստոս, և աւանդեաց զհոգին իւր առ Աստուած և պսակեցաւ ի Քրիստոսէ սուրբն ընդ սուրբսն, արդարն ընդ արդարսն, վկայն ընդ վկայսն, եպիսկոպոսն ընդ եպիսկոպոսունսն, քահանայն ընդ քահանայսն, քահանայապետն ընդ քահանայապետսն, առաքեալն ընդ առաքեալսն, մարգարէն ընդ մարգարէսն, մարտիրոսն ընդ մարտիրոսսն, նահատակն ընդ նահատակսն, հայրապետն ընդ հայրապետսն:

## Ժ

# ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՅՆ ԹԱԴԷՈՍԻ

## ՅԱՂԱԳՍ ԱՌԱՋԻՆ ԳԻՒՏԻ ՍՈՒՐԲ ԽԱՉԻՆ

### ՈՐ ՅԱՒՈՒՐՍ ՅԱԿՈԲՈՒ ԱՌԱՔԵԼՈՅՆ

### Ի ՁԵՌՆ ԹԱԳՈՒՀԻՈՅՆ ՊԱՏՐՈՆԻԿԷ

### ՈՐ ԷՐ ԿԻՆ ԿՂԱՒԴԵԱՅ ԿԱՅՍԵՐ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՈՑ[1]

Եւ արդ պատմեցից ձեզ վասն սուրբ խաչին որ ի ձեռն հաւատացելոց, որ իբրեւ զձեզ էին, երեւեցաւ սքանչելի զօրութիւն[2] սուրբ խաչին։

Կին մի Պատրոնիկէա անուն, կին Կղաւդեայ կայսեր, որ երկրորդ էր ի Հռոմ. Կղաւդիոս յետ Տիբերեայ կայսեր։ Եւ եղեւ Կղաւդեայ կայսեր գնալ[3] ի պատերազմ ի սպանիացիսն՝ որք ապստամբեցին ի նմանէ։ Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ էր Պետրոս առաքեալ ի Հռոմ քաղաքի, որ էր գլուխ աշակերտացն Տեառն։ Տեսեալ տիկնոջն[4] Պատրոնիկեայ զնշանսն եւ զսքանչելի զօրութիւնսն՝ զոր առնէր Պետրոս յանուն Յիսուսի, զարմանայր, եւ հաւատայր յԱստուած, եւ արհամարհէր զկուռսն եւ զընոսի պաշտամունսն՝ որոց երկիր պագանէր, եւ հաւատայր յԱստուած Հայր եւ ի Տէր մեր Յիսուս

1. Օր. Հռովմայ։
2. Օր. զօրութեամբ սուրբ խաչին Քրիստոսի։
3. Օր. երթալ… ի Սպանիայ։
4. Օր. կնոջն… զսքանչելիսն եւ զզօրութիւնսն։

Քրիստոս և ի Հոգի[1] Նորա սուրբ, և ընդունէր մկըրտութիւն և փառաւորէր զԱստուած ընդ քրիստոնեայսն, և պատուէր և մեծարէր զսուրբ առաքեալն Պետրոս և յօժարութեամբ լսէր նմա: Եւ յետ այսորիկ կամեցաւ երթալ յԵրուսաղէմ և տեսանել զտեղիսն զայնոսիկ յորս շրջեցաւ Քրիստոս և արար[2] զօրութիւնս: Եւ փութապէս գնաց ի Հռովմայ և եկն յԵրուսաղէմ ինքն և երեք որդիք իւր և երկու դըստերք, և մինն էր կոյս: Եւ այլ եւս բազմութիւն զօրաց[3] ընդ իւր, որպէս թագուհւոյ և մեծափառութեամբ եկեալ:

Եւ ի մտանելն Նորա յԵրուսաղէմ, ելին ընդ առաջ Նորա ամենայն քաղաքն, և ընկալան զնա մեծաւ պատուով, որպէս զդշխոյ և զտիկին Հռովմայեցւոց աշխարհին: Եւ Յակովբոս էր առաջնորդ եկեղեցւոյն Երուսաղեմի. իբրև լուաւ զթագուհւոյն եթէ քրիստոնական հաւատովն[4] է, եկն առ թագուհին որ էր յապարանսն Հերովդի: Եւ իբրև ետես տիկինն[5] զՅակովբոս ուրախ եղև, և ընկալաւ զնա մեծաւ պատուով որպէս զՊետրոսն, և պատմեաց[6] Յակովբոս զզօրութիւնսն Քրիստոսի տիկնոջն, և զտեղիսն ուր[7] յայտնեաց Քրիստոս որդին Աստուծոյ զսքանչելիսն: Եւ ասէ դշխոյն ցՅակովբոս. Ցոյց ինձ զԳողգոթայն ուր խաչեցաւն Քրիստոս ի Հրէիցն, և զխաչափայտն յորմէ[8] կախեցաւն, և զգերեզմանն Նորա: Ասէ ցնա Յակովբոս. Այդ ոչ է ընդ մեր իշխանութեամբ, այլ Հրեայքն իշխեն, և չտան երթալ մեզ ի Գողգոթայն և ի յարութիւնն: Եւ ոչ զխաչն ցուցանեն մեզ, այլ հալածեն զմեզ և ի բանդ և ի կապանս արկանեն և ի նեղութիւնս բազումս կեղեն

1. Օր. ի Հոգին սուրբ. պակասէր ի Բն. եւ ընդունէր ... զայնոսիկ:
2. Օր. արար անդ:
3. Օր. չունի զօրաց:
4. Օր. հաւատոցն:
5. Օր. կինն:
6. Օր. պատմեաց զզօրութիւնն եւ զսքանչութիւնն Քրիստոսի Յակովբոս տիկնոջն:
7. Օր. զոր:
8. Օր. զորմէ:

զմեզ, զի մի քարոզեսցուք զաւետարանն փրկութեան յանուն Քրիստոսի՝ որով փրկեցան տիեզերք ամենայն: Իբրեւ լուաւ զայս Թադուհին, հրամայեաց կոչել զգլխաւորս Հրէից՝ զքահանայս, զհրամանատարս, զՋոմնիայ որդի Անանիայի եւ զԳոդոլիայ որդի Կայիափայ, եւ զՅուդայ որդի Սաղոմմայ [1], եւ ածին զնոսա: Ասէ ցնոսա տիկինն. Տուք ի ձեռս Յակովբայ եւ ընկերաց նորա [2] զԳողգոթայն եւ զգերեզմանն եւ զխաչափայտ նորա [3], եւ մի ոք իշխեսցէ արգելուլ զնոսա ըստ պաշտաման իւրեանց սպասաւորել տեղեացն սրբութեան: Եւ զայս ասացեալ ցնոսա, յարուցեալ ինքն [4] եւ որդիք իւր եւ դստերք [5] եւ որք ընդ նմայն էին տեսանել զտեղիսն սրբութեան: Եւ յանձն առեալ [6] Յակոբայ եւ որք ընդ նմա [7] էին, եւ [8] եգիտ անդ երիս խաչս եւ ոչ գիտէր թէ ո՞ր էր Քրիստոսին: Եւ նոյնժամայն [9] անկաւ կոյս դուստր նորա [10] եւ եհան զոգին առանց պատճառի իրիք. Իբրեւ ետես դշխոյն թէ մեռաւ դուստր նորա յանկարծակի առանց մ̅ասու, ամբարձեալ զձեռս [11] իւր եւ կրկնեալ ծունր՝ կայր յաղօթս առ Տէր եւ ասէր. Քրիստոս Աստուած որ ետուր զանձն քո ի մահ փոխանակ ամենայն արարածոց, եւ ելեր ի խաչ ի տեղւոջս յայսմիկ վասն փրկութեան մարդկան [12], եւ մեռար եւ եդար ի գերեզմանիս յայսմիկ, եւ [13] կեցուցեր զամենեսեան որ իցեն ի գերեզմանս, եւ յարեար որպէս զԱստուած կենդանարար ամենայնի եւ յարութեամբ քո յարուցեր զբազումս ընդ քեզ: Եւ արդ Տէր Աստուած ամենայնի, լուիցեն հեթանոսք

1. Օր. Արդաստղոմայ:
2. Օր. իւրոց:
3. Օր. Քրիստոսի:
4. Օր. ինքնին:
5. Օր դստերք իւր:
6. Օր. առնել:
7. Օր. նորայն:
8. Օր. յաւելու եկն եմուտ ի զերեզմանն հանդերձ աշակերտօք եւ դստերօք իւրեանցովք եւ:
9. Օր. ի նոյն ժամու:
10. Օր. դուստրն իւր:
11. Օր. զայս:
12. Օր. ամենայն մարդկան:
13. Օր. զի կեցուսցես:

և հրեայք խաչահանուք, և ոտնհար լիցին նոքա ամենեքեան ինձ: Եւ հեթանոսք՝ մոլորեալք կռոցն պաշտօնեայք և երկրպագուք դրօշելոցն, յորոց դարձայ ես յաստուածգիտութիւն, այժմ այսն առնիցեն[1] զիս և ատասցեն. Այս եղև նմա յաղագս թողլոյ նմա[2] զկուռսն, և խոստովանելով զՔրիստոս զոր ոչ գիտէր, և երթեալ պատուել զխաչելութեանն տեղի և զգերեզմանն որպէս զԱստուծոյ: Աղաչեմ զքեզ Քրիստոս փրկիչ աշխարհի, լո՛ւր պաղատանաց աղախնոյ քում վասն փառաւորեալ անուանդ քում սրբոյ. մի արգելուր զշնորհս բարերարութեանդ քո վասն անարժանութեանս իմոյ, որ փոխանակ արարչիդ պաշտեցի զարարածս. այլ վասն փառաց անուանդ քո ցոյց ինձ զսքանչելիս, և այժմ արա՛ առ մեզ զնշան քո բարի, զի մի՛ հայհոյեսցի անունն քո սուրբ ի թշնամեաց խաչի քո: Քրիստոս փրկիչ, մի՛ անտես առներ զյուսացեալս և զապաւինեալս ի քեզ: Եւ բազում հառաչանօք և արտասուօք գոչէր առ Տէր, զի արասցէ այցելութիւն որպէս զԱստուած: Եւ մատուցեալ առ դշխոյն երէց որդին իւր և ասէ. Լո՛ւր ինձ մայր իմ զոր ասեմս. ինձ այսպէս թուի ի խորհուրդս իմ, եթէ մահս որ յանկարծահաս եղև քեռս իմոյ, ոչ եթէ ընդունայն ինչ եղև[3], այլ նորահրաշ և սքանչելի զարմանս զմտաւ ածեմ, զի փառաւորեսցի մեծ անունն Քրիստոսի. և ոչ եթէ հայհոյեսցի վասն մահու սորա, որպէս կարծեն չարք. ահաւասիկ մտաք ի գերեզմանս և երիս խաչս տեսաք, և ոչ է յայտ եթէ ո՞ր է Քրիստոսին, յորոյ վերայ խաչեցաւ և եհեղ զարիւնն իւր սուրբ, և ո՞ր աւազակացն՝ որ ընդ Քրիստոսին խաչեցան[4]. արդ այժմ մահուամբ քեռս իմոյ յայտնեսցի[5] զօրութիւն սուրբ խաչին, յորում խաչեցաւ Քրիստոս Աստուած.

1. Օր. ուրախացին այսն առնելով:
2. Օր. սուրբ զաստուածածին եւ խոստովանելոյ:
3. Օր. եղեւ մանդ այլ նորասքանչ եւ հրաշալի... ածցես:
4. Օր. խաչեցան ի Հրէից:
5. Օր. յայտնի:

քանզի ոչ անտես[1] առնէ Քրիստոս զայնոսիկ[2] որք հաւատան ի նա և խնդրեն զողորմութեան շնորհս։

Յայնժամ ընկալեալ[3] Թագուհւոյն զաւազանն յորդւոյ իւրմէ, և հաւատաց թէ ի վերին շնորհացն ազդեցաւ նմա և փոքր ինչ սթափեցաւ[4] ի տրտմութեան զառն սգոյն։ Եւ մատուցեալ առ զմի ի խաչափայտից անտի, և եդ ի վերայ մեռելոյ զաւակին իւրոյ, և եկաց[5] յաղօթս առ Տէր և ասէ. Քրիստոս փրկիչ աշխարհի, որ ցուցեր զօրութիւն և սքանչելիս մեծամեծս ի տեղւոջս յայսմիկ, որպէս լուաք և հաւատացաք ի քեզ. Քրիստոս[6] փրկիչ և կեցուցիչ, եթէ քո է խաչս այս, և ի սմա բևեռեցար և տարածեցեր զձեռն քո ամենազօր, յայտնեա զզօրութիւն մեծութեան աստուածութեան քո, որ առեր մարմին ի սուրբ կուսէն Մարիամայ, և[7] չարչարեցար և[8] եդար ի գերեզմանի յայսմիկ և յերրորդ աւուր յարեար, և յարութիւն պարգևեցեր ազգի մարդկան, և այժմ կենդանացո զաւակս իմ յանուն խաչի քո սրբոյ, և փառաւորեսցիս, Տէր, դառնալով[9] ոգւոյ սորա ի սմա, և ամաչեսցեն Հրեայք խաչահանուք և հեթանոսք խաւարեալք ի ճշմարիտ լուսոյն. և հաւատացեալք օրհնեսցեն զքեզ Քրիստոս Աստուած, որ ես Տէր երկնի և երկրի։

Եւ ասացեալ զաղօթս զայս լուռ լինէր իբրև ժամ մի, և ոչ ինչ երևէր զօրութիւն խաչին։

Եւ ի բաց առեալ[10] զայն՝ դնէր և զմիւսն. և դարձեալ կայր յաղօթս արտասուօք[11], և ասէր այսպէս[12] զայս. Տէր Աստուած որ յակնարկելդ քո արարան արարածք ամենայն երևելիք և աներևոյթք,

1. Օր. անփոյթ։
2 Օր. վասն այնոցիկ։
3. Օր. ընկալաւ։
4. Օր. սրափեցաւ ի դառն սգոյն։
5. Օր. կացեալ։
6. Օր. Յիսուս։
7. Օր. յաւելու եւ եղեր մարդ։
8. Օր. յաւելու եւ խաչեցար։
9. Օր. ի դառնալ... առ սա։
10. Օր. առեալ դնէր զմիւսն։
11. Օր. յաւելու եւ հառաչանօք։
12. Օր. չունի այսպէս։

և հրամանաւ քո հաստատեցան [1] լեռնքս սա ի քէն, Աստուած արարիչ յաւիտենական որ եկիր ի փրկել զանեզերս ամենայն կամաւոր խաչելութեամբ քո, և կամիս զկեանս ամենայն մարդկան զի կեցցեն և ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն. զի դու ես մարդասէր փրկիչ և [2] յոյս հաւատացելոց. և եթէ քո է խաչս այս յորոյ վերայ հեղեր զսուրբ զարիւն քո, յայտնեա զզօրութիւն քո և կենդանացո՛ զդուստրս իմ, որ բազում մեռելոց յարութիւն պարգևեցեր [3], և լիցի ուրախութիւն հաւատացելոց ի ձեռն երևման սքանչելեաց քոց. և նկուն լիցին ատելիք ճշմարտութեանն հրեայք և հեթանոսք որք ոչ հաւատացին գալստեան քո Տէր և կամաւոր չարչարանացն, ի վերայ մեծամեծ սքանչելեացն զոր առնէր ես տեսել. և այժմ երևեսցի [4] զատերս խնամ զի արժանի լիցուք փառաւորել զքեզ Քրիստոս Աստուած [5], ամենայն հաւատացելոց յոյս և ապաւէն և օգնական, և ճշմարտեալքս սիրով ընդ ամենայն հաւատացեալս հանցուք օրհնութիւն քեզ ամենազօր տէրութեանդ: Եւ տացեալ նորա [6] զաղօթս զայս, լուռ լինէր մինչև ի ժամս երկուս, և ոչ ինչ ցուցանէր խաչն զօրութիւն սքանչելի [7] որպէս յուսայր թագուհին ի Տէր:

Եւ այսու [8] ամենայնիւ յետ տասն այն ևս խաչ. և առեալ զերրորդ խաչն դնէր ի վերայ նորա, և մինչդեռ կամէր համբառնալ զաչս [9] իւր և հայել ի բարձունս, և ի բառնալ զբերան իւր [10] որդ-

1. Օր. հաստատեալ կան եդեալքս:
2. Օր. Քրիստոս:
3. Օր. յաւելու քոյոց հաւատացելոց վասն անուանդ քո սրբոյ:
4. Օր. երևեսցին դատերս իմոյ եւ մեզ արժանաւոր:
5. Օր. Յիսուս:
6. Օր. նորա զայս լուռ եղեալ իբրեւ ժամս երկուս:
7. Օր. սքանչելեացն:
8. Օր. Եւ յետ այսր ամենայնի ի բաց առեալ եւ զայն եւս խաչ ի դատերն իւրմէ եւ:
9. Օր. զձեռս:
10. Օր. յաւելու յաղօթս առ Աստուած:

ւովքն իւրովք, և նոյնժամայն ի մերձենալ սուրբ խաչին ի դիակն, իսկ և իսկ յական թօթափել յանկարծակի դուստր նորա յարեաւ ի մեռելոց և յարուցեալ օրհնէր և փառաւորէր զԱստուած՝ որ խաչիւն իւրով սրբով կեցոյց զնա: Իբրև ետես տիկինն թէ ի զօրութենէ սուրբ խաչին վաղվաղակի յարեաւ դուստր նորա ի մեռելոց, զարհուրեալ հիացաւ յոյժ, և անկեալ ի վերայ երեսաց իւրոց երկիր պագանէր և համբուրէր զսուրբ խաչն Քրիստոսի, և գոհանայր ի վերայ անպատում սքանչելեաց զոր եցոյց Տէր ի ձեռն զօրութեան սուրբ խաչին, և փառաւորէր որդւովք և դստերօք իւրովք զՏէր ամենակալ. և առաւել ևս հաստատէին ի հաւատն որ ի Քրիստոս Յիսուս և ի խաչ նորին, եթէ արդարև Յիսուս Քրիստոս է որդի Աստուծոյ: Եւ այս խաչս է նորա, որ կենագործէ զհաւատացեալս սմաւ[1], ապաւէն և օգնական յաւոյն[2] և հաւատացելոց, նշան յաղթութեան ընդդէմ աներևոյթ թշնամւոյն, որք հակառակին ընդդէմ[3] ճշմարտութեան աւանդիցն որ ի Քրիստոս Յիսուս:

Աւէր զթագուհին որդին իւր, թէ այս այսպէս չէր լեալ, ոչ էր յայտնեալ զօրութիւն սուրբ խաչին[4]. ահա այսուհետև սուրբ խաչս Քրիստոսի մեծացի, և մեք ուրախացուք ի սքանչելիս զօրութիւն նորա, և Քրիստոս Աստուած սմաւ փառաւորեսցի այժմ և յաւիտեանս ամէն:

Եւ ես զխաչն Քրիստոսի զՅակովբոս զի զգուշութեամբ[5] պահեսցէ և պատուեսցէ, և հրամայեաց շինել եկեղեցի ի Գողգոթայ՝ ուր խաչեցաւն Քրիստոս, և ի գերեզմանին ուր թաղեցաւն. և զամենայն սուրբ տեղիսն պատուեցին շինուածովք. զի

1. Օր. իւր նովաւ, եւ. . :
2. Օր. օգնական եւ պահապան հաւատացելոց եւ յաղթութեան նշանակ ընդդէմ երեւելի եւ աներեւոյթ:
3. Օր. չարին ընդդէմ:
4. Օր. յաւելու եւ ոչնչութիւն աւազակաց խաչին:
5. Օր. զգուշութեամբ պատուեսցի:

շինեցին ժողովրդանոցս պաշտաման, յոր օրհնի Քրիստոս Աստուած ի տուէ և ի գիշերի։

Եւ տեսեալ դշխոյին զամենայն քաղաքն ժողովեալ ի տեսիլ մեծի սքանչելեացն, հրամայեաց դստերն իւրոյ յորոյ վերայ զօրութիւն սուրբ խաչին ցուցաւ, զի առանց սքողելոյ երեսեսցի ժողովրդեանն[1] որ կամէին տեսանել, որպէս զի տեսեալ զնա, փառաւորեսցեն զԱստուած ի վերայ անպատում սքանչելեացն[2]. զի հաւատացեալք ուրախ լիցին, և թշնամիք խաչին Քրիստոսի յամօթ լիցին և ատելիք։

Բայց ժողովք հրէից և ի հեթանոսաց ուրացողաց, յոյժ տրտմեցան ընդ հրաշագործութիւնն որ եղև ի գալստեան հաւատացեալ դշխոյին, զի տեսանէին զբազումս որ հաւատային ի Տէր։ Եւ համբաւ նշանացն յամենայն տեղիս պատմէր, և մեծանայր անունն Տեառն, և փառաւոր լինէր ի վերայ զարմանագործութեանցն։ Եւ եղև խաղաղութիւն մեծ ամենայն եկեղեցւոյն Երուսաղեմի, և ի քաղաքն որ շուրջ[3] կային զնովաւ, և լուեալ զայս ամենայն[4] տային օրհնութիւն Աստուծոյ։

Եւ յետ այսր ամենայնի ել դշխոյն յԵրուսաղեմէ իւրովք ամենեքումբք՝ զի երթիցէ ի Հռոմ։ Եւ ուր հասանէր ի քաղաքս, գային ամենեքեան ի տեսութիւն դստեր նորա յարուցելոյ ի մեռելոց, և ուսանէին զսքանչելեացն երևումն ի ձեռն խաչին Քրիստոսի։

Եւ եմուտ դշխոյն ի Հռոմ և պատմեաց Կղաւդեայ կայսեր զամենայն եղեալսն յանուն Քրիստոսի ի ձեռն սուրբ խաչին զօրութեան, որ երևեցաւ դստերբ նորա կուսիւ[5], մեռանել նորա և յառնել։ Եւ լուեալ կայսերն փառաւորեաց զԱստուած, և հրամայեաց զամենայն Հրեայսն հալածել ի Հռոմայ։

1. Օր. ժողովոյն։
2. Օր. յաւելու որ ի նմա և֊ ցոյց ի ձեռն սուրբ խաչին։
3. Օր. շուրջ զնովաւ են։
4. Օր. ամենեցուն։
5. Օր. յաւելու յԵրուսաղեմ։

Պատմէր զչխոյն և զԳետրոսի զաքանչելիսն որ եղեն, նաև ամենեցուն պատմէր զզօրութիւն սուրբ խաչին Քրիստոսի, և ամենեքեան լուեալ փառաւորէին զԱստուած։ Արդ զայս ամենայն որ պատմեցաւ, ի միտ առէք և հաւատացէք ի Քրիստոս, և ունիցիք զսուրբ խաչն կեցուցիչ և ապաւէն հաւատացելոց որ յուսան ի Քրիստոս։ Եւ Յակոբոս էր առաջնորդ եկեղեցւոյն Երուսաղեմի, որ էր հաւատարիմ այր ի Տէր, որ և գրեաց զայս զոր ետես ինքն և ծանոյց առաքելոցն որք էին քարոզք Քրիստոսի և ընկերք Յակոբու։ Նմանապէս և նոքա քարոզեն և ցուցանեն զզօրութիւն և զաքանչելիսն որ ի Քրիստոս։

Եւ զկնի մահուանն Կղաւդեայ և Գատրոնիկեայ հրեայքն գրգռեալ ի վերայ հաւատացելոցն, յարուցին [1] հալածանս, և փախստական արարեալ զհաւատացեալսն, և ի նմին ժամու, որպէս [2] ունիմք յաղագս նորա պատմել, առեալ թաղեցին զնա՝ զամենասուրբ խաչն Քրիստոսի։

1. Օր. յարուցեալ։
2. Օր. ժամու յաղագս սորին պատմութեան առեալ բաղեցին յերկրի տեղւոյ գագարանն մինչեւ ցայսօր։

## ՍՐԲՈՅՆ ԹԱԴԷՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

## ՎԱՍՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՄԵՌԵԼՈՑ [1]

*Արդ [2] հոգի ամենայն մարդկան որ ելանէ ի մարմնոյ աստի [3], է նոցա օթեվանք և բնակութիւն ի հանգստեան։ Քանզի ոչ խափանին միտք և ուշ ոգւոցն, վասն զի նկարագիր անմահին Աստուծոյ նկարագրեալ [4] է ի նոսա. զի ոչ է [5] իբրև զմարմին անզգայ որ ոչ իմանայ զապականութիւն[6] տգեղութեան որ զնովաւ անկանի։ Բայց վարձ հատուցման ոչ կարէ ընդունել առանց նորա [7]. վասն զի ոչ եթէ հոգւոյն միայն է վաստակն այլ և մարմնոյն որ բնակեալ է ի նմա։ Բայց վասն զի եկն Տէր մեր յաշխարհ, զի ուսուցանիցէ և յայտնեսցէ մեզ, եթէ կատարած աշխարհի լինի [8] և յարութիւն մեռելոց [9] մարդկան. և յայնմ աւուր նկարին [10] վարք իւրեանց, և լինին մարմինք նոցա որպէս մագաղաթ լի գրով ճշմար-*

1. Բ. օր. Թադէոսի առաքելոյ առ Աբգար վասն հոգւոց մեռելոց եւ վասն յարութեանն։ Գ. օր. Աղօթք սրբոյն Թադէոսի առաքելոյն յաղճանգեսի (?)։
2. Ա. օր. ամենայն հոգի։ Բ. օր. ոգիք։
3. Բ. օր. ոչ մեռանին այլ կան մնան կենդանիք օթեվանք·
4. Ա և Գ. օր. նկարեալ։
5. Բ. օր. եւ ոչ երև։
6. Բ. օր. յապականութեանն տգեղութեամբն որ անկանին զնոքօք։ Գ. օր. որ չուրջ զնովաւ։
7. Բ. օր. մարմնոյ։
8. Ա. օր. լինիցի։ Բ. օր. լինելոց է։
9. Բ. օր. ամենայն։ Գ. օր. ամենայն ննջեցելոց։
10. Բ. օր. կորիցեն ամենայն վարք նոցա։

տութեան. և ոչ[1] ոք է որ ոչ գիտէ զդպրութիւն, քանզի ամենայն ոք ընթեռնու զգիր դպրութեան իւրոյ, և զհամար գործոց իւրոց ի մատունս ձեռաց[2] իւրոց ունիցի. որպէս զի տգէտք և տխմարք, գիտունք և տեղեակք[3] լինին դպրութեան նորա: Յորում ոչ ոք ասիցէ ցընկեր իւր, թէ եկ ընթերցիր ինձ զայս[4], վասն զի մի վարդապետութիւն[5] և մի ուսումն թագաւորէ ի վերայ ամենայն մարդկան: Քանզի[6] այժմ խորհրդովք ձերովք պատճառէք զանգիտութիւն, բայց ի ճշմարտութեան ոչ կարէք պատճառել, յաւել մարգարէին, եթէ եղիցին ամենեքեան ուսեալք յԱստուծոյ:

1. Բ. օր. եւ ոչ մնայ որ ոչ գիտիցէ դպրութիւն յայնմ աւուր: Գ. օր. եւ ոչ ոք իցէ որ գիտիցէ:
2. Գ. օր. ի մատունս իւր:
3. Բ և Գ. օր չունին տեղեակք: Գ. օր. լինիցին դըպրութեան եւ լեզուի նորոյ: Բ. օր. որոց լեզու չիցէ որ ասէ:
4. Բ. օր. զայս գիր ինձ:
5. Բ. օր. դպրութիւն:
6. Բ. օր. զի այժմ պատճառին զանգիտութիւն: Չունի զյաջորդդ:

# ԺԱ

## ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

### Ս. ԱՌԱՔԵԼՈՑՆ ՍԻՄՈՎՆԻ ՆԱԽԱՆՁԱՅՈՅԶԻ

*Աստուածիմաստն և աստուածատեսն Սիմովն՝ աշակերտ Քրիստոսի, որ ի սուրբ վերնատանն էառ ի Քրիստոսէ զձեռնադրութիւն իշխանութեան գնալ ի վերայ օձից և կոխել զզօրութիւն աներևոյթ թշնամւոյն, այսինքն զմահու և զդժոխոց. և առեալ հրաման հերկել զերկիր և խլել զփուշ մեղաց և սերմանել զսերմ աստուածպաշտութեան ընդ ամենայն երկիր, որպէս վիճակեցին սուրբ առաքեալքն հրամանաւ Հոգւոյն սրբոյ ի վերայ մխեանց՝ զաշխարհս ամենայն։ Եւ եհաս վիճակ առաքելական սրբոյն Սիմովնի յարեւմուտս՝ յերկիրն Մաւրիտանիայ. և երթեալ անդ լուսաւոր վարդապետութեամբն լուսաւորէր զամենեսեան, սերմանելով զբանն կենաց ի խուժադուժ յաշխարհն յայն, առնելով նշանս և սքանչելիս ի ձեռն Հոգւոյն սրբոյ։ Հաւանեցուցանէր զամենեսեան՝ դարձուցանելով ի կռոցն մոլորութենէ յաստուածգիտութիւն, և լուսաւորէր սուրբ աւետարանաւն յորդեգրութիւն Աստուծոյ։ Շինեաց եկեղեցիս բազումս, ի բազում քաղաքս և ի գեօղս և ի գաւառս հաստատեաց քահանայս և պաշտօնեայս և յանձն արար զնոսա Հոգւոյն սրբոյ. և ինքն անցեալ գնաց ի Ցաւխռոնաց գաւառն և անդ սերմանեաց զաւետարանն փրկութեան։ Շինեաց եկեղեցիս և հաստատեաց քահանայս և պաշտօնեայս, և եղև առ նոսա աւուրս բազումս, և զերկեամ մի*

հաստատեաց զնոսա ի հաւատն որ ի Քրիստոս։ Եւ յետոյ անցեալ գնաց յաշխարհն Կրիտացւոց, և անընդունակ եղեալ, ոչ լուան քարոզութեան սուրբ աւետարանին, այլ դատեցան զնա ի խաչ հանել. և այնպէս կատարեցաւ սուրբ առաքեալն Սիմոն Նախանձայոյզ, և սակաւ ժողովուրդք հաւատացին ի Քրիստոս։ Եւ իջուցեալ զնա ի խաչէն եդին ի գերեզմանի և է յիշատակ սրբոյն յապրիլի ի քսան և մի, ի փառս Աստուծոյ. ամէն։

---

# ԺԲ

## ՅԱՂԱԳՍ ՍՐԲՈՑ ԱՌԱՔԵԼՈՑՆ

### ԹԷ Ո՛ՅՔ ԷԻՆ ԵՒ ՈՐՊԷՍ ԿՈՉԵՑԱՆ ՅԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ

Պետրոս առաքեալն էր ի գեղջէն Բեթսայիդա, եղբայր Անդրէի, այր ձկնորս, և ի լուանալ ուռկանացն կոչեաց զնա Տէր, զի ի ձկնորսաց եղև գլուխ Եկեղեցւոյ, և յայնմհետէ զմարդիկ որսայր. որ և յառաջ Սիմոն կոչէր և այլ անուամբ Կեփաս. որ և զՏէրն առաւել սիրէր այնչափ՝ զի և զմատնիչ Տեառն յոյժ ցանկութեամբ կամէր իմանալ. առիւք ի վերայ ծովուն գնաց, եւեւս զայլակերպութիւն Տեառն և ի յարութիւն աղջկանն՝ անդ էր, զարծաթն ի բերան ձկանն եգիտ, զբանալին արքայութեան էառ ի հովուել զաշխարան Քրիստոսի. հազար այր ի Պենտակոստէն դարձոյց, զմահն Անանիայ և Սափիրայ նախ եցոյց, զԵննիա զօսացեալն ողջացոյց, զԿոռնելիոս մկրտեաց և շուք նորա բազում հիւանդս ողջացոյց, ի Հերովդէէ բանտեալ՝ հրեշտակին ազատեցաւ: Ընդ որս և զաթոռն եօթն (ամ) կալաւ յԱնտիոք, և քսան և եօթն ամ ի Հռոմ. և յորժամ սատակեցաւ Սիմոն կախարդն ի Հռոմ, Պետրոս ի նոյն քաղաքին ըմբռնեալ ի Ներոնէ և ի նոյն օր թաղեալ:

Յակոբոս այս եղբայր էր Յոհաննու և որդի Զեբեդեայ. վասն մեծութեան, սրբութեան և բարձրութեան մտաց արժանի եղև կոչել որդի որոտման

Որ ի Հերովդէ Ագրիպպեայ ի խնդրոյ Հրէից գլխատեցաւ, և կամօք Տեառն ոսկերք նորա ի Սպանիա փերափոխեցաւ, որ և պատուով անդ բազմի։ Սա և նախանձաւոր եղև ընդ Յոհաննու, վրէժխնդիր լինել նախատանաց Տեառն. քանզի յորժամ սամարացիքն ոչ ընկալան զնա, հարցանէին զՏէրն. կամի՞ս զի ասասցուք, զի իջցէ հուր երկնից և այրեսցէ զդոսա. զնոյն և խնդրէին նստել յաջմէ և յահեկէ նորա յարքայութեան երկնից։ Եւ բազում իրս վասն աւուրն դատաստանի և արքայութեան երկնից եհարց զՏէր։ Եւ վասն երեք պատճառաց մեծ կոչի քան զմիւս այլ Յակոբոսն. զի յառաջ կոչեալ, և զի առաւել մերձաւոր և խորհրդակից, և զի յառաջ չարչարեալ ։

Յոհաննէս աւետարանիչն, եղբայր Յակոբայ, ըստ ամենայնի իբրև զՅակոբոս փառաւորեալ, և առաւել՝ զի ի չորս կենդանիս նմանեցաւ վասն բարձրութեան աւետարանչական բարձրութեան բարբառոյն որ և արժանի եղև լսել ի Տեառնէ վասն մօր Տեառն եթէ, ահա մայր քո և նա արժանաւորեցաւ փոխանորդել ի յորդիութիւն Աստուածածնին։ Կոյս ի Տեառնէ ընտրեալ և կոյս ի նմանէ մնացեալ, որ և բազմեալ ի վերայ լանջացն Տեառն, զաւետարանական քաղցրութեան աղբերն էարբ, որ զկնի աքսորանացն ի Տոմիտիանէ, և զկնի յայտնութեան տեսլեանն և աւետարանին գրելոյն՝ մինչև ի ժամանակս Տրայիանոսի մնացեալ, և զեկեղեցիս Ասիոյ կառավարեալ, որ զեռացեալ ձէթն ոչ իմացաւ, խաղաղ մահուամբ առ Տէրն կոչեցաւ՝ յամի չարչարանաց Տեառն ութսունից և ծննդեան իւրոյ իննսուն և իննից ։

Յակոբոս փոքրն Ալփէոսի, կոչեալ եղբայր Տեառն վասն ազգատոհմին, վասն նմանութեան պատկերին, վասն առաքինութեան վարուցն. եղբայր էր սա Շմաւոնի, Թադէոսի և Բառնաբայ, կոչեալ ի յառաքելոցն արդար, ընդ որ և սա ի յաւուր խաչելութեան մինչև ի յօր յարութեան ոչ

ինչ ճաշակեաց և Տէրն յարուցեալ՝ նմա երևեցաւ և եա հաց նմա ճաշակել։ Յետ գալստեան Հոգւոյն սա համարձակեցաւ պատարագել նախ զմարմինն Տեառն և յառաքելոցն եպիսկոպոս եղև Երուսաղեմայ. երեսուն ամ կալաւ զաթոռն. գրեաց զկաթուղիկէն իւր. նազօրացի գոլով միշտ խոշոր զգենոյր. բարկացեալ Հրէիցն՝ ընկեցին զնա յաշտարակէ տաճարին, թափչաւ հարին զգլուխ նորա։

Սիմոն այս կոչեալ եղև Կանանացի զի ի Կանա Գալիլիացւոց էր, և Նախանձաւոր՝ զի կանա նախանձ թարգմանի, որ և յԵգիպտոս քարոզեաց։ Կատարեցաւ մերձ ի Բաղատատ, և էր սա եղբայր Յակոբայ փոքեր և Թադէի և Բառնարայ և որդի Ալփեայ։

Թադէոս այս որ և է Յուդա Յակոբեան, որդի Ալփեայ, եղբայր Յակոբայ փոքեր, Շմաւոնի և Բառնարայ, ծնեալ ի Կանա Գալիլիացւոց, ի Միջագետս քարոզեաց և զԱբգար մկրտեաց յԵդեսիա, ի Պարս հասեալ և բազմութիւն ի ժողովրդենէն այնորիկ ի Քրիստոս դարձոյց, կատարեցաւ մարտիրոսութեամբ և մկրտեցաւ ընդ Քրիստոսի։

Անդրէաս այս եղբայր Սիմոնի վիմի որ էր Պետրոս, ի գեղջէն Բեթսայիդա, նախակոչեալ ի Տեառնէ. և իբրև էր ընդ Յովհաննու Մկրտչին՝ արժանացաւ լսել ի նմանէ եթէ ահա գառն Աստուծոյ։ Եղև սա կոչող եղբօր իւրոյ և յետ յարութեան լուսաւորեաց զՄատթէոս, յերկիրն մարդակերաց, և վիճակ առեալ քարոզեաց ի յԵդեսեայ (ի Սեդիա) և անտի եկն յԱքայիա, հասեալ ի քաղաքն Փաթերա ի խաչ հանեալ յԵգիա, և վասն խորհրդոյ խաչին և չարչարանացն բազում քննութիւն և լուծումն արար և զպատուականն կատարումն կենաց եկից։

Փիլիպպոս այս ի Բեթսայիդա դքան ամ շրջեալ՝ Սիրէացոց քարոզեաց. ըմբռնեալ բռնադատէին զնա զոհել, և նա ոչ կամեցաւ. և ի շնչոյ վիշապին մեռաւ որդի քրմապետին, զերկու քըրմապետս հարեալ և ժողովուրդն տառապեալ ի շնչոյ անտի, հրամանաւ Փիլիպպոսի կործանեցաւ բագինն

և յԵրուպօլիս խաչիւ կատարեցաւ, ասաց ցՏէր թէ ցոյց մեզ զՀայր և շատ է մեզ։

Բարդուղիմէոս այս ի Լիկաոնացիս էառ վիճակ և անտի հասեալ ի Հնդիկս բազումս անդ դարձոյց. վերջին եկեալ ի մեծն Հայք, ի բարբարոսաց քերթեալ և հրամանաւ թագաւորին գլխատեալ, զորոյ մարմինն թագաւորն Պաղմէոս ընդ ժողովուրդս երկոտասան քաղաքաց պատուով ամփոփեաց։

Թովմաս այս կոչեալ երկուորեակ զի յերկուց եղանակաց հաստատեաց զյարութիւն, տեսանելով և շօշափելով. Պարթից և Մարաց գաւառացն քարոզեաց և կատարեցաւ ի Հնդիկս սրով, որ և յետ սակաւ ամաց վերափոխեցան նշխարքն ի քաղաքն յԵդեսիա։

Մատաթիայս այս առեալ զտեղի Յուդայի Սկարիովտացւոյ, վիճակաւ առաքելոցն, զի ընտրեցին զնա և զՅովսէփ, և էր ժամանակն զկնի համբարձմանն յառաջ քան զգալուստ Հոգւոյն սրբոյ. որ և առեալ նմա վիճակս զՀրէաստան, անդ քարոզեաց և բազում սքանչելիս արար, խաղաղական մահուամբ կատարեցաւ բարի խոստովանութեամբ ի Քրիստոս։ Ոմանք ասեն զնա կրեալ զչարչարանս խաչին և պսակեալ մարտիրոսութեամբ. և է ամփոփեալ մարմին նորա ի Հռոմ։

Պօղոս այս էր ազգաւ Հրեայ, ի ցեղէն Բենիամինի, ի գաւառէն Կիլիկիոյ, ծնեալ յականաւոր քաղաքին Տարսոնի և հալածող էր քրիստոնէից, վասն հայրական օրինացն նախանձոյն. և եղև կոչմամբ Տեառն ի ճանապարհս Դամասկոսի անօթ ընտրութեան, որ և ի Սօղոսէ կոչեցաւ Պօղոս. վասն որոյ և բազում տանջանս կրեաց վասն Քրիստոսի. ի Փիլիպեայ գաւազանօք հարաւ, ի բանտ մտաւ, ոտն ի կոճեղ պնդեցաւ, ի Լիւստրիա, ի յԻկոնիա քարկոծեցաւ, յԵփեսոս գազանաց մատնեցաւ, ի յԵրուսաղէմ գանեցաւ, մատնեցաւ, կապեցաւ նենգութեամբ, ի բանտ հեթանոսաց եղաւ, ընդ որ աղաղակեաց առ կայսրն, և յետ համբարձմանն քան

ամ եւ մկրտութիւն նորա յԱնանիայէ դամասկացւոյ և յերեսուն և երկու ամին կատարեցաւ գլխատմամբ ի Ներոնէ ի Հռոմ։

Բառնաբաս այս Յովսէփ, ազգաւ Կիպրացի, սարկաւագ, որ և բազում եղանակօք գովէ զնա գործք առաքելոցն։ Ի քաղաքէ ծնեալ՝ որոյ շինեալ էր Կիւրոսի․ ընդ Պօղոսի ընկալաւ զքարոզութիւն հեթանոսաց, որոյ զկնի վասն Յովհաննու՝ որ կոչեալն էր Մարկոս՝ ի բաց եղաւ ի Պետրոսէ, բայց զքարոզութիւն ոչ եթող․ հրով կատարեցաւ․ որոյ զկնի ժամանակաց, ի ժամանակս Զենոնի կայսեր, մարմին նորա ի Կիպրոս կզզին գտաւ եւ ունէր զաւետարանն Մատթէոսի զոր գրեալ էր՝ ի վերայ լանջացն։ Սա ընտրեցաւ յառաքելոցն ընդ Մատաթիա և ոչ էառ զվիճակն, այլ զկնի Հոգին սուրբ հրամայեաց թուել զնա և զՊօղոս ընդ առաքեալսն։

Բառնաբաս այս որդի Ալփեայ, եղբայր Յակոբայ փոքեր, Շմաւոնի և Թադէի որ է Յուդայի, ոչ է սա յառաքելոցն այլ յեօթանասնիցն, այլ զի անուանակոչութեամբ նման է Բարսաբայ որ և կոչեցաւ Հոգւովն սրբով Բառնաբաս․ ոմանք կարծեն զնա լինել Բառնաբաս առաքեալ, ընդ որ և թէ ոչ առաքեալ, սակայն ի ցեղէ Տեառն է և եղբայր առաքելոցն և ընտրեալ ի Տեառնէ ընդ եօթանասունսն և վասն Տեառն պանծեալ եւ մարտիրոսական պատուով ի փառս Քրիստոսի։

# ՅԱՂԱԳՍ ԵՐԿՈՏԱՍԱՆ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՑՆ

ՎԼՍԵՄԱԿԱՆՆ ԴՈՐՈԹԷՈՍ[1] ՅԻՇԱՏԱԿՈՒՄՆ ԱՌՆԷ

ԵՐԿՈՏԱՍԱՆ ԱՌԱՔԵԼՈՑՆ,

ՆՇԱՆԱԿԵԼՈՎ, ԹԷ Ո՛ՒՐ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ՈՔ Ի ՆՈՑԱՆԷ

ՔԱՐՈԶԵԱՑ

Ա. — Պետրոս Առաքեալ ի Գաղիղիա, ապա և ի Միջագաղիղիա[2], ի Պոնտոս և յամենայն Կապադովկիա և ի Բիւթանիա քարոզեաց զաւետարանն՝ յետ վերջին դառնալոյ նորա յԱնտիոքայ. յետոյ և յամենայն Իտաղիա և ի Հռոմ. և[3] ի ներոնէ խաչեալ, և ի նմին ի Հռոմ թաղի, յառաջ քան զերիս կաղանդացն յուլիսի:

Բ. — Անդրէաս եղբայր նորա, ընդ ամենայն ծովեզերս Բիւթանացւոց և Պոնտացւոց, Թրակացւոց և Սկիւթացւոց տրամաշրջեցաւ, աւետարանելով զՔրիստոս[4]. յետոյ գնաց ի Սեբաստացւոցն[5] քաղաք մեծ, ուր բնակ Սարացւոցն[6] և փարխ գետ, ուր և ներքսագոյն Եթովպացւոցն բնակեն: Իսկ թաղեցաւ ի պարտէզս Աքայեցւոցն՝ խաչի մատնեալ ի յայծենագործէ:

1. Բն. Դեորորոսւ:
2. Բ և Գ. օր. չունին ապա եւ ի Միջագաղիղիա:
3. Գ. օր. չունի եւ:
4. Ա. Բ և Գ. օր. զՏէր:
5. Ա. օր. ի Սեբաստիանացւոց:
6. Ա. Բ և Գ. օր. Աբսարացւոց:

472

Գ. — Յակոբոս Զեբեդեան յետ աւետարանելոյ զՔրիստոս երկոտասան ցեղիցն Իսրայելի, սպանեալ լինի առ ի Հերովդէ չորրորդապետէ՝ ի Կեսարիա Պաղեստինացւոց:

Դ. — Յովհաննէս սիրելին եղբայր որ և զաւետարանն գրեաց, յԵփեսոս քարոզեալ զՔրիստոս, առ ի Տրայիանէ[1] թագաւորէ ի Պատմոս կղզի արտասահմանի՝ յաղագս բանին Քրիստոսի, և աստուստ փոխամբարձեալ եղև, վասն սորա[2] և բան կայու ընդ Ենովքայ և ընդ Եղիայի՝ տակաւին[3] գնա ի մարմնի նայել:

Ե. — Փիլիպպոս առաքեալ ի Փռիւգիա քարոզեաց զաւետարանն. թաղի յԱրապողիս հանդերձ դստերօք իւրովք, զորոց[4] և Ղուկաս աւետարանիչն ի Գործս առաքելոցն յիշատակէ:

Զ. — Բարթողոմէոս առաքեալ Հնդկաց՝ կոչեցելոց Եդեմոն, քարոզեալ զՔրիստոս, տուեալ նոցա զՄատթէոսեան աւետարանն, ննջեաց յՈւրբանոս քաղաքի Հայոց մեծաց:

Է. — Թովմաս առաքեալ Պարթևաց և Մեդացւոց և Պարսից և Գերմանացւոց[5] և Բարկրատացւոց[6] և Մոգուց[7] քարոզեաց զաւետարանն Քրիստոսի. կատարի ի քաղաքի Հնդկաց որ կոչի Բադամիդիս:

Ը. — Մատթէոս աւետարանիչ երբայեցի լեզուաւ զաւետարանն աւանդեաց Երուսաղեմի Եկեղեցւոյն, քարոզեալ զՔրիստոս կատարի յԱրապողիս Աորւոց:

Թ. — Յուդաս Յակոբու ի բոլոր ի Միջագետս քարոզեաց զՔրիստոս, կատարի յԵդեսիա, և անդէն թաղի:

1. Գ. օր. ի Դոմիտիանոսէ:
2. ԲՆ. և Ա. օր. բանս որոյ:
3. ԲՆ. և Ա. օր. տակաւին ի մարմնի գնա էլ:
4. Բ և Գ. օր. զոր:
5. Բ և Գ. օր. չունին Գերմանացւոց:
6. Բ և Գ. օր. Բագրատացւոց:
7. Բ և Գ. օր. Մոգաց:

Ժ. — Սիմոն կոչեցեալն Յուդաս, ի յԵղեւ-թերապաղիս եւ ի Գազա մինչեւ յԵգիպտոս քարոզեաց զՔրիստոս, թաղի Յոստրակային[1] քաղաք Եգիպտացւոց, խաչեալ[2] ի Տրայիանէ թագաւորէ:

ԺԱ. — Մատաթիաս որ համաթուեալ յերկոտասանն[3] փոխանակ Յուդայի, յառաջին յԵթովպիա քարոզեաց զՔրիստոս, կատարի եւ թաղի անդէն:

ԺԲ. — Սիմոն Նախանձայոյզ զբոլոր Մօրիտանիա[4] եւ զԱփրիկեցւոցն գաւառն տրամանցեալ[5] քարոզեաց զՔրիստոս, վերջոյ ի Բրետանիա խաչեալ ի Նոցանէ, թաղի անդ:

Զայսոսիկ մեզ Դորոթէոս ի հեթանոսական եւ յեբրայականն համահաւաքեալ[6] աւանդեաց, համայեցի յիշատակարանօք, զոր մեք որպէս պիտանի եւ դիւրընկալ զուգահաւաքեալ յայտնի բազմաց արարաք համադրութիւն եկեղեցական:

1. Գ. օր. Յաորակային: Բ. օր. Յաստակային:
2. Բ եւ Գ. օր. կոչեալ:
3. Բ եւ Գ. օր. մի յերկոտասանն:
4. Ա եւ Գ. օր. մաւրիտանեան:
5. Ա. օր. չունի տրամանցեալ:
6. Գ. օր. հաւաքեալ:

## ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼՈՑՆ

## ԹԷ ՈՐՊԷՍ ԿԱՏԱՐԵՑԱՆ ԵՒ ԿԱՆ ԱՅԺՄ

## ԵՊԻՓԱՆՈՒ ԿԻՊՐԱՑԻՈՅ ԱՍԱՑԵԱԼ

Այս առաքեալք հանդերձ առաքելակցօք և աշակերտօք, շրջան ի տար աշխարհ բարբարոսաց․ յաշխարհս հեռաւորս ըստ մարգարէութեան Մովսէսի, թէ կացոյց սահմանս հեթանոսաց ըստ թուոյ հրեշտակաց Աստուծոյ․ եօթանասուն և երկու ըստ լեզուաց լեզուաց պատգամաւորք․ քարոզք և վարդապետք առաքեցան ի Քրիստոսէ ընդ ոլորտս աշխարհի, և շրջեցան տեղւոջէ ի տեղիս և քարոզեցին զաւետարանն արքայութեան։ Եւ որպէս յաշտարակէն գրում՝ նոյնպէս և ի խաչէն ժողովումն և մխարանութիւն ի ձեռն Հոգւոյն սրբոյ՝ ի հաւատս ճշմարտութեան։ Վասն զի սուրբ նշանօք և ճշմարիտ բժշկութեամբ հաւանեցուցանէին, շինէին եկեղեցիս և կարգէին կացուցանէին քահանայս և վարդապետս, և կատարեցան բարի անուամբ և ճշմարիտ խոստովանութեամբ, յանուն Տեառն Յիսուսի։

Պետրոս՝ ի Հռոմ խաչեցաւ ի Ներոնէ կայսերէ։

Անդրէաս ի պարտէզս Եղլադացւոց՝ յԵգիատակոյ դատաւորէ։

Յակոբոս յԵրուսաղէմ սրով՝ ի Հերովդէէ։

Յովհաննէս յԵփեսոս՝ իւրով մահուամբ։

Փիլիպպոս յԱրապօլիս՝ վկայեալ յԵպիփիմէս քաղաքի։

Բարթողիմէոս յԱրաբոն քաղաքի ի Հայս։

Թովմաս ի Հնդիկս ի Կալամայի քաղաքի՝ մոր-թելով վկայեալ։

Սիմոն ի Բոսպորոն վերնումն սրով։

Յուդա յակովբեան յԱերեալեմոն կախեալ և նետաձիգ եղեալ ի Նոյանէ մեռաւ։

Թադէոս ի Հայս ի Սանատրուկ արքայէ։

Մատաթիա յԱճապոնտացւոց քարկոծեալ և ըն-կեցեալ ի ծով՝ հանեալ Թադեցին ի Բիրխոռն, յորում պատահեն Նշխարքն ընդ Նմա ի հանգստա-րանին։

Պաւղոս սրով վկայեալ ի Հռովմ ի Ներոնէ։

Յովհաննէս մկրտիչ ի Հերովդէէ։

Յակոբոս եղբայր Տեառն յԵրուսաղէմ Թախչով հարեալ զգլուխն և կայ ի լերինն Ձիթենեաց ընդ Սիմոնի։

Յակովբոս Ալփեան ի Հնդիկս ի Մարմարիկէս։

Մարկոս յԱղեքսանդր քաղաքի՝ ի հրապարակաց քարշեալ և կայ անդէն։

Ղուկաս ի Թեսբէս յեօթնադրունան։

---

## ՅԱՂԱԳՍ ԱՌԱՔԵԼՈՑՆ

### ԹԷ ՈՅՔ ԷԻՆ ԱՄՈՒՍՆԱՑԵԱԼՔ ԵՒ ԹԷ ՈՅՔ ՈՉ։

*Պետրոս առաքեալ և անուն կնոջ նորա Գազիա*[1], *և որդիք նորա Յովէլ*[2] *և Յովնան*[3], *և դուստր մի Սարխաթա*[4]*։*

*Յակովբոս և Յովհաննէս կոյսք։*

*Անդրէաս և կինն Անտողի*[5] *և դուստր մի Մարիա ։*

*Պաւղոս և կինն Մարիադոն*[6] *և որդիք Սաւղոս և Տիկոս*[7]*։*

*Փիլիպպոս և կին նորա Թէոկտի և որդի Թէոփիլէ ։*

*Թովմաս կոյս։*

*Բարթողիմիոս և կին նորա Թոմոսիա*[8] *և որդի մի Բարտոմիաս։*

*Մաթէոս և կին նորա Սկատնիա*[9] *և որդի մի Մատաթիա ։*

*Յակովբոս*[10] *և կին նորա Մարի անուն և որդի մի Ոսերկի*[11]*։*

1. Ա. օր. Գոշրի։ Բ. օր. Սոփիա։
2. Ա. և Բ. օր. Յովեղ։
3. Ա. օր. Յովնաս։
4. Ա. օր. Սոփիա։ Բ. օր. Գոշրգիա։
5. Ա. և Բ. օր. Անատոլիա։
6. Ա. և Բ. օր. Մարիգոշն։
7. Ա. և Բ. օր. Սաւուղ եւ Տիւքիկոս։
8. Ա. օր. Թեոդոսիա։ Բ. օր. Թեօվդոսի։
9. Ա. և Բ. օր. Կոստիանէ։
10. Ա. և Բ. օր. Յակովբոս կոյս։ Սիմոն եւ...։
11. Ա. օր. Սերգի անուն։ Բ. օր. Ասերգի։

Յուդա յակոմբեան և կին նորա Թէոփիտաս[1], կողխատրատրոս[2]:

Քրիստոսի[3] աշակերտք սոքա են: Բայց գիտելի է, Յիսուս միայն զՊետրոս մկրտեաց ձեռօք իւրովք, և Պետրոս զԱնդրէաս զեղբայրն իւր մկըրտեաց, և Անդրէաս զՅակոբոս և զՈհաննէս զորդիսն Զեբեդեայ, և Ոհաննէս և Յակոբոս զայլ առաքեալսն: Եւ զամենասրբուհի Աստուածածինն Պետրոս և Յոհաննէս մկրտեցին:

1. Ա. օր. Եւոդիանէ: Բ. օր. Թեոփփիաւն, յաւելու եւ որդի մի:

2. Ա. օր. Կոյխատրատոս: Բ. օր. Կոյխատրոմոս:

3. Բ. օր. յաւելու զհետեւեալսն:

[illegible]

- [illegible] (102?)

1 - [illegible] (2):
- [illegible] (39):
- [illegible] (98)
- [illegible] (101) — [illegible] (340):

5 - [illegible] (102) (342)
- [illegible] (104?) (350)
- [illegible] (116):
- [illegible] (155) — [illegible] (47?)
- [illegible]

10 - [illegible] (198):
- [illegible] (193)
- [illegible] (200)
- [illegible] (202) (201?)
- [illegible] (203)

15 - [illegible] (210) — [illegible] (47?)
- [illegible] (217)
- [illegible] (233)
- [illegible] (234)
  [illegible]

---

- [illegible] 68 — [illegible] 112:
- [illegible] 111 — [illegible] 150
- [illegible] 155 — [illegible] 156
- [illegible] 164
- [illegible] 165–67 — [illegible]
- [illegible] 169.
- [illegible] 235:
- [illegible] 303 — [illegible] 340
- [illegible] 343 — [illegible] 37?
- [illegible] 376 — [illegible]
- [illegible] 378
- [illegible] 406
- [illegible] 420:

# ԳԼԽԱԿԱՐԳՈՒԹԻՒՆՔ ՄԱՏԵՆԻՍ

## Ա.


*Գործք Պետրոսի և Պաւղոսի առաքելոյ* . . . 1

*Գործք սրբոց առաքելոցն Պետրոսի և Պօղոսի թէ զիարդ կատարեցան ի Հռոմ. (Այլ օրինակ համառօտ)* . . . . . . 30

*Վկայաբանութիւն գլխաւոր առաքելոցն սրբոյն Պետրոսի և սրբոյն Պաւղոսի փառաւորելոցն* . 46

*Վկայաբանութիւն Պետրոսի առաքելոյ* . . . 51

*Վկայաբանութիւն Պաւղոսի սրբոյ առաքելոյն* . 57

*Տեսիլ առաքելոյն Պաւղոսի որ տարան հրեշտակքն զհոգի նորա* . . . . . 62

*Տեսիլ առաքելոյն Պաւղոսի յորժամ տարան զհոգին (Այլ օրինակ համառօտ)* . . . 85

*Տեսիլ Պաւղոս առաքելոյն խօսելն ընդ հրեշտակին (Այլ օրինակ համառօտ)* . . . 85

*Տեսիլ սրբոյն Պաւղոսի առաքելոյն զոր ետես ի վերանալ յերկինս. (Այլ օրինակ համառօտ)* . . . . . . . 101

*Թուղթ Դիոնեսիոսի առ Տիմոթէոս աշակերտն Պաւղոսի յաղագս մահուան Պաւղոսի և Պետրոսի* . . . . . . . 110

*Նաւարկութիւն Պաւղոսի առաքելոյ ի Հռոմ* . 123


## Բ.


*Յաղագս Անդրէի առաքելոյ և նորին սքանչելեացն զոր Տէր արար ի ձեռն նորա և Մատթէի ի մարդակերաց աշխարհն* . . . 124

Վկայութիւն Անդրէի առաքելոյ որ չարչարեցաւ ի պարտէզս յառաջ քան զկաղանդաց դեկտեմբերի . . . . . . 146

Պատմութիւն Ս. առաքելոյն Անդրէի և Մաթէոսի թէ որպէս գնացին յաշխարհն մարդակերացն . 168

## Գ.

Պատմութիւն առաքելոյն Յակոբայ թէ ո՛րպէս գնաց ի Սպանիա և դարձեալ եկն յԵրուսաղէմ և գլխատեցաւ և մեռեալ մարմնով գնաց դարձեալ ի Սպանիա՝ որ և այժմ Ս. Յակոբ կոչի։ . . . . . 174

## Դ.

Վարք Յովհաննու Աւետարանչի . . . . 190

Յաղագս աքսորանաց սրբոյն Յովհաննու . . 222

Յաղագս Միռոնոսի և ամենայն տան նորա և եղելոցն ի ձեռն Յոհաննու . . . . 230

Յաղագս Վասլի և կնոջ նորա թէ ո՛րպէս լուսաւորեցան ի Յոհաննէ . . . . 241

Յաղագս Խռուսոսի և կնոջ նորա եթէ ո՛րպէս լուսաւորեցան ի Յոհաննէ . . . . 244

Յաղագս Կինոպասայ և չարարուեստ կախարդութեանց նորա զոր արար առաջի Յոհաննու. 251

Յաղագս դիւին որ ելանէր ի կերպարանս գայլոյն և երևէր ի քաղաքին յայնմ . . . 266

Յաղագս Անտիպանոսի թէ ո՛րպէս հաւատաց ի Քրիստոս ի ձեռն երանելոյն Յոհաննու . . 273

Յաղագս Սոսիպատրոսի և մօր նորա Պատրոկղիանէ և եղելոցն ի Յոհաննէ . . . 277

Յաղագս աւետարանին թէ ո՛րպէս պատմեցաւ ի Յոհաննէ կամ թէ յո՛րում տեղւոջ ընկալան . 286

Պատմութիւն առաքելոցն Քրիստոսի Յակոբայ և Յոհաննու որդւոցն որոտման . . . 293

## Ե

Վկայաբանութիւն սուրբ առաքելոյն Փիլիպպոսի որ վկայեաց յԵպլիփիմէս քաղաքի . 300
Վկայաբանութիւն սրբոյն Փիլիպպոսի առաքելոյ և աշակերտին Բարթողիմէոսի և Փիլիպպոսի քորն Մարիամնի. . . . . 300
Վկայութիւն սրբոյ առաքելոյն Փիլիպպոսի որ է մի յերկոտասանիցն և քեռն իւրոյ Մարիամնի և Բարթողոմէոսի որ էր յեւթանասնից անտի . . . . . . . 321
Կանոնք Փիլիպպոսի առաքելոյն . . . . 329

## Զ

Վկայաբանութիւն սրբոյ առաքելոյն Բարդողոմէոսի . . . . . . . 333
Վկայաբանութիւն սրբոցն Բարթողիմէոսի և Յուդայի առաքելոցն Քրիստոսի. (Այլ օրինակ համառօտ) . . . . . . 358
Գիւտ նշխարաց սրբոյ առաքելոյն Բարթողովմէոսի 365

## Է

Ի յիշատակ Ս. Առաքելոյն Թովմայի թէ որպէս յԵրուսաղեմէ ի Հնդիկս չոգաւ . . 369
Վկայութիւն Թովմայի առաքելոյ որ կատարեցաւ ի Հնդիկս . . . . . . 388
Պատմութիւն սուրբ առաքելոյն Թումայի . . 401
Պատմութիւն յաղագս գիւտի նշխարաց սուրբ առաքելոյն Թովմայի . . . . . 417
Պատմութիւն Թումայի առաքելոյն որ վաճառեցաւ ի Հնդիկս. (Այլ օրինակ համառօտ) . 428

## Ը

Վկայաբանութիւն սուրբ առաքելոյն և աւետարանչին Մատթէոսի . . . . . 437

## Թ

Վկայաբանութիւն Յակոբայ Տեառն եղբօրն . . 449

## Ժ

Սուրբ առաքելոյն Թադէոսի յաղագս գիւտի սուրբ խաչին որ յաւուրս Յակոբու առաքելոյն ի ձեռն Թագուհւոյն Պատրոնիկէ որ էր կին Կղաւդեայ կայսեր Հռովմայեցւոց . 453
Սրբոյն Թադէոսի առաքելոյն վասն յարութեան մեռելոց . . . . . . . 462

## ԺԱ

Վկայաբանութիւն սուրբ առաքելոյն Սիմոնի Նախանձայուզի . . . . . . 464

## ԺԲ

Յաղագս սրբոց առաքելոցն թէ ո՛յք էին և ո՛րպէս կոչեցան յառաքելութիւն . . . 466
Յաղագս երկոտասան սուրբ առաքելոցն, վսեմականն Դորոթէոս յիշատակումն առնէ երկոտասան առաքելոցն, նշանակելով թէ ո՛ւր իւրաքանչիւր ոք ի նոցանէ քարոզեաց . . 471
Քարոզութիւն առաքելոցն թէ ո՛րպէս կատարեցան և կան այժմ, Եպիփանու Կիպրացւոյ ասացեալ . . . . . . . 474
Յաղագս առաքելոցն թէ ոյք էին ամուսնացեալք և թէ ոյք ոչ . . . . . . 476

# ՑԱՆԿ ԱՆՈՒԱՆՑ ԱՆՁԱՆՑ

## ԵՒ ՏԵՂԵԱՑ


Աբգար թգ. 353, 363, 468
Աբննէս
Աբբանէս } 370-1, 375, 401-2, 418, 428-9, 433
Աբիաթար 184-5
Աբիսողոմ 117
Աբիրոն 311
Աբրահամ 8-10, 68
Ագրիպաս, Ագրիպպաս, Ագրիպպոս, 10, 23, 42, 51-3, 56
Ագրիպինա 49, 51
Ադամ 9, 317, 319, 420, 425
Աթէնք 49
Ալանի 7
Ակիւղաս 246
Աղբակ 362
Աղբիանոս 51-2
Աղեքսանդրացի 122, 475
Աղձնիք 426, 436
Աղուանք 420, 424
Ամովս 113
Անանիա 466
Անանիա առաք. 48, 470
Անանիա քհնյպտ. 455
Անատոլիա, Անտողի 476
Անդրամիտտ 122
Անդրէաս 124-173, 369, 370, 401, 466, 468, 471, 474, 476
Անդրոնիկոս 340
Անթիպատոս 219-221

Անթհիպատոս 157
Անթհիպատրէ 162, 164-5
Անտիոք 49, 193, 196, 466, 471
Ապամիա 49
Ապեոնա 351
Ապողոն, Ապողոնոս 163, 224-5, 245-6, 248, 251, 263
Ապողոնիդէ 231-6, 246-7
Աոիկիան, Աոակիան, Նաոիկիան 7
Ասիա 112, 192-3, 196, 291, 295 ևն
Ասկղիպաս 224
Ասոն 49
Ասորեստան 435
Ասպիւփոռոն, Ասպիւփոռոս 5
Ատալիա 49
Արաբոն 474
Արամազդ 343
Արապօլիս տես Յերապօլիս
Արես 343, 351
Արիստարքոս 49, 122
Արծրունիք 427
Արմինոն, Արեմինոն 119
Արտաշատ 352
Արտեմիդ 201, 209, 312-3, 215, 217, 224
Արտեմիս 203, 224
Արքեղայոս 184
Աւագուհի տես Ոգոհի
Աֆրիկէ 3
Աքայեցիք 162
Աքայիա 468

Բաղաամ 382
Բաղամիոնես, Բաղամիդիս 435, 472
Բաղտատ 468
Բաղբարաս 58
Բամիկանուն, Բատիկանուն 28
Բայիաս, Բաւաս 5, 31
Բանարաս 48, 467, 470
Բասիլիոս 3

Բարամ, Բարմ, Բարձ, Բացիամ 5, 353, 362, 366
Բարդողոմէոս, Բարթողիմէոս, Բարթողոմէոս } 300-328, 333-369, 401, 469, 472, 474, 476
Բարեան 441
Բարսաբայ տես Յուստոս
Բարտիմէոս 476
Բաքիղաս, Բաքեղոս, Բաքէոս, Բաքղիոս 3
Բեդսաիդա 466, 468
Բեթղեհեմ 370, 402
Բենաղիոս 6
Բենիամին 114, 469
Բենիսա 33
Բերիա 49
Բիտիկայոն տես Բամիկանուն
Բիրիտոձ 475
Բիւթանիա 46, 471
Բնակութիւն 225
Բոսպորոձ 475
Բոսնեայ 5
Բոստր, Բոստրիա, Բուստր } 340, 360
Բոցանիւթ 271
Բուլանդիա 172
Բրետանիա 473

Գաբբիէլ 83, 90, 108, 450
Գալա 473
Գալիլիա 57, 471
Գաղատիա 46, 48-9, 112
Գաղոս, Գաղատիոս 379
Գայիոս 48
Գեհոն 67-8, 91
Գերմանիկեցիք 345, 361
Գէթսամանի 190
Գիղիմոն (Դիղիմոն) 3
Գնդափառ, Գնտափառ, Գունդիփոր 370, 375, 378-9, 401-2, 405, 418, 428, 431, 435 եւն

Գոգիա, Գուրի 476
Գոգոյ մետիլինացի } 1
Գոգոյ մելիտացի
Գողողիա 455
Գողգոթա 454–5, 459
Գողթն 351, 362
Գովլիա 51
Գովտայ 5

Դադան 311
Դաղմատիա 57
Դամասկոս 48–9, 469
Դաւիթ 9, 71–2, 114, 117, 415, 450, 452
Դեմետրիկոս 213
Դերբին 49
Դէոմիտիա 264
Դէոմնոս, Դիոմնոս 204, 206, 209, 269, 270, 291–2
Դէոսկորիդոս, Դիոսկորիդէս 197, 205, 207–8, 212, 215–7, 269, 270, 291
Դէոսկորոս, Դիոսկորոս 3–4, 31, 203
Դիոնեսիոս 110
Դիոս 224, 269, 271–4
Դիոսկորացի 122
Դիոքլիտէ 183
Դիքիոն 247
Դոմետիանոս 222, 296
Դորոթէոս 473

Եբրայեցի 300
Եգիստէս 150–1, 157, 162, 164, 166–7, 172, 468
Եգիպտոս 192
Եդեմ 334
Եդեմոն
Եդեմոնք } 334, 358, 472
Եդոմ
Եդեսիա 468, 472
Եթէովպացի 270, 473
Ելիմացիք 340, 350
Ելլադա 49, 172

Եղեւթերապոլիս 473
Եղիա 70, 93, 105, 133, 221, 293, 472
Եղիսէ, Եղիսէոս 121–2
Եննիա 466
Ենովք 70, 105, 472
Եպեոնեա 351
Եպիկուրացիք 227
Եպիկուրոս 225–6
Եպիփիմէս 300
Եռասմոս, Եռաստոս 5
Եսայի 361
Երեմիաս 113
Երուսաղէմ 17, 26, 28, 46, 48–9, 118–121, 174–7, 190–3, 401, 451, 454, 460 եւն
Եւա 9
Եւթնադրունք 475
Եւկարիա 51
Եւստաքէոս 172
Եփեսացիք 209–11, 222, 226
Եփեսոս 49, 193, 196, 204, 219–296, 472 եւն
Եփիմեա 51
Եփրատէս 67, 91

Զարեւանդ, Զարաւանդ 353
Զենոն 470
Զմիռն 122
Զմիռնոս, Զմիռոնոս 273, 276
Զմիւռմին, Զմուռին 437
Զմիւռնիա 219

Թադէոս 351–364, 436, 450, 453, 462, 467–8, 475
Թաբոր 133, 293
Թեսաղոնիկէ 127
Թեսբէս 475
Թէոկղի 476
Թէոպեստիս 477
Թէոփիլէ 476
Թոմոսիա, Թէոդոսիա 476
Թովմաս, Թումաս 334, 352, 362–3, 369–436, 469, 472, 475–6

Իլամացիք 360, 436
Իկոնիոն 49, 469
Իսահակ 68
Իսրայէլ 412
Իտալիացի 1, 2, 3

Լայնոսոն 58
Լաւռենդ 243
Լիբեացի 17
Լիդիոս 183
Լիկաոնայ 328
Լիկիա 122
Լիկոնիոն, Լիկոնիա 318, 325
Լիւկիախոնոս 49
Լիւրիկեա, Լիւրիկէ 17, 38, 469
Լիւստրիա, Լիւստրոս 49, 122
Լիքիանոսացիք 469
Լուսին 244
Լոփոս 228–9

Խորասան 358, 362, 436
Խորին Ասորիք 340, 360
Խորձ 436
Խռիւսիս, Խռուսոս 244
Խռուսիպ 237–8

Ծոփար 382, 385

Կաղնիք 196
Կալիստրատոս 477
Կաղամադի 475
Կայիափա 455
Կապադովկիա 471
Կապուտկիա 46
Կառայ 276
Կառէոս 249, 250
Կատակոմա 28
Կենոպաս, Կինոպաս 178, 231–2, 236, 251–263
Կեսառ արկղ· 5

*Կեսարիա* 15, 37, 49, 122, 213, 472
*Կեփաս* 466
*Կիպրոս* 49, 470
*Կիւրոս* 470
*Կղաւդիոս*, *Կղաւդէոս* 12, 35, 48, 453, 460
*Կնիդոն* 49
*Կողոմեղեղացի* 1, 3
*Կոմենտարիոս* 213
*Կոոն* 49
*Կոստանդիանոս* 420
*Կոստիանէ*, 476
*Կորնթոս* 49, 112
*Կուռնելիոս* 466
*Կրետէս* 59, 60
*Կրիտիս* 49

*Հայք* 251–2, 295, 417, 420, 424, 426, 436, 469
*Հելիու* 351
*Հեր* 353
*Հերակլէս* 224
*Հերմոգինէս* 178–183
*Հերովդէս* 184, 293, 295, 454, 466–7
*Հնդուստան* 428, 436
*Հնդիկք* 334, 369, 388, 401, 417, 419, 420, 424, 469
*Հողձ*, *Հողց* 426
*Հռովմ* 1–3, 5–8, 30–33, 44–49, 51, 118, 189, 453–4, 460, 466 *եւն*
*Հրէաստան* 1, 11–2, 35, 177, 198, 402 *եւն*

*Ղազարոս* 433
*Ղերէոս* 362, 450
*Ղիբեա* 10
*Ղինոն* 48
*Ղոնգնոս* 59, 60
*Ղուկաս* 48, 49, 57, 60, 122, 472, 475

*Ճոպողիս տես Պոճողիս*

Մաթան 449
Մական 25
Մակեդոնիա 49
Մակոնոս 277
Մաչմաքսիմու 23
Մանազկերտ 426
Մանասար 390
Մանեռիս 5
Մառէոն, Մառեոն, Մառիոն 218-9, 225-7, 250
Մառտին 21
Մադէ, Մազդէ 382, 385
Մավրիտանիա, Մովրիտանիա 464, 473
Մատաթիա 127, 469
Մատթէ
Մաթէոս } 124–125, 127, 133, 168–173, 339, 342, 348, 359, 361, 369, 401, 437–448
Մատթէոս
Մարի 476
Մարիա 476
Մարիադոն 476
Մարիամ 131, 176–7, 207, 293, 449-450, 457
Մարիամի 300–328
Մարկեղոս 45, 48, 52, 55–6
Մարկոս աւետ. 475
Մարկոս 470
Մարմարիկէս 475
Մարութայ 365–6
Մարտիրոսաց քաղաք 365
Մարք 340, 350, 360–1, 436, 469
Մաքարէ 385
Մաքսիղիմոս 163
Մաքսիմիղոս 166
Մելիտացի (Գորգյ) 31
Միլիտէս, Մելիտոն 49, 122
Մեղքիսեդեկ 10
Մեմնոնտոնեա 27
Միգդոնա 385, 390, 393, 399
Միջագաղիղիա 471
Միջագետք 400, 417, 419, 421
Միռոնոս 230–250, 257, 260–2, 265

Միսինին 3
Միւսիս 49
Միւսոն 2:7
Միւտելին 49
Միքայէլ հրեշտակը 65-6, 68–71, 80-1, 83, 99, 108
Մշղեհ 393, 399, 400, 418–9, 435
Մոդաց երկիր 350, 361
Մոկաս 269
Մովսէս 133, 259, 261, 293, 311, 412

Յաղկերտ 365
Յակոբ Նհպտ. 8, 10, 68, 114
Յակոբ, Յակոբոս՝ եղբայր Յովհաննու 133, 174–189, 293–4, 369, 401–2, 429, 466, 472, 474, 476
Յակոբ եղբայր Տեառն 186–87, 191–3, 362, 467, 475–6
Յակոբոս Ալփեայ 369
Յակոբ Մծբնայ 421
Յամրէս, Յամբէս 16, 38, 178
Յանէս 16, 38, 178
Յեսու 330
Յերապաւլիս, Արապողիս, Երուպօլիս 328, 469, 472, 474
Յոբենողոս, Յոբնադիոս 6, 52
Յոբիանոս քաղաք 366
Յոհան Ոսկիբերան 102
Յոհաննէս, 175–7, 189–299, 305–310, 329, 369, 401, 429, 466–7, 472, 474, 476
Յոպպէ 187, 192, 294
Յոստրակային 473
Յովէլ 476
Յովհաննէս Մկրտիչ 131, 449
Յովնաթան 120
Յոփեան 476
Յովսէփ Նհպտ. 114, 277
Յովսէփ աստուածահայր 293, 362, 370, 402, 429, 449-50
Յովսէփ տես Յուստոս
Յովսէփ, Ուսուֆ 422, 425–6, 435–6
Յովսիաս 185–6
Յորդանան 131, 174 314, 318, 325, 328
Յուդա Նհպտ. 436, 450

Յուդա Յակոբեան 352, 355, 362–3, 358, 369, 401, 449-50
Յուդա քհնյ. 455
Յուդանէս 435
Յուլիանէ 6, 32
Յուլիանոս 421
Յուլիոս 122
Յուստոս 58, 449, 470

Նազարէթ 11, 34
Նազովրացի, Նազարացի / Նազովրեցի, Նազօրացի — 11, 30, 359, 370, 401
Նաթանայէլ 450
Նաւմաքու 45
Նաւմիու 26, 27-8
Նեղոս 335, 358
Ներբայ 43
Ներոն 2, 10–61, 119, 466, 470
Ներուաս 286, 296
Նեփթաղիմ 173
Նիկանովրա 300–1, 304, 311, 314, 322, 324, 327
Նիկիտէս 178
Նիսոն 49
Նիքոս 55
Նփրկերա 365

Շմաւոն նշպտ. 114
Շմաւոն առաք. 449-50, 467
Շնորհք 243

Ոգոհի, Աւագուհի, Աւգոհի / Ոգողուհի, Ագրուհի, Ագուրհի — 353, 357, 364
Ոզնիա 455
Ովրիոն 58
Որիգն 49
Որմի 362
Ուստխիխանեա, Ուստիխանէ / Ուստիկանեա, Ուսխիխանէ — 28–9
Ուրբիանոս, Ուրբանոս / Որբանոս, Ովրբիանոս — 353, 362, 472
Ոքտաբինա 49

Պաղ, Պաղի 426
Պաղեստին 1, 213
Պամփիլա 49
Պասեփոն 351
Պատմոս, Պատմա, Բատմա 222-3, 226-7, 229, 231-2
251, 277, 296, 472
Պատռաս 49
Պատրեալ 278
Պատրոկղիանէ 277-284
Պատրոկղոս 57-8
Պատրող 278
Պատրոնիկէ 453, 461
Պարթենէս 60
Պարթեւք 350, 361, 472
Պարծիս 436
Պարսիկք 350, 361, 421, 436, 469
Պաւղոս 1-50, 57-123, 189, 294, 469եւն
Պեռեպետուա
Պռեպատուա } 24-29, 43, 45
Պետրոս 1-56, 110, 170, 189, 190, 192, 369, 370,
401-2, 429, 45), 453, 466 եւն
Պերգէ 5
Պերգին 49
Պիղատոս 12, 35, 46, 263, 451
Պծիծս, Բծիծս 426
Պղատոն եպ. 439-147
Պոճողին, Պոճողիս 3-7, 31, 32
Պոնտոս 35, 46, 168, 263, 471
Պոնտինեա
Պոնտինտինեա } 27, 29
Պոսիքրոյ 46
Պոտամի 262
Պուենա 351
Պոոխորոս, Պրոխորոն 192-204, 222-231, 254, 257, 263,
289, 295 եւն
Պտղեմիադա 49
Պտղոմէոս 469
Պօղիկարպոս 273

Ջահաւոր, Ջահաւորեալ 229, 230, 252, 256, 265

Ռամայ 5
Ռերեաղեմոնէ 475
Ռէապոնտացիք 475
Ռիգինաւղոսիայ
Ռիգինկողոսեայ } 3
Ռիւգինիայ
Ռիգոն 49
Ռշտունիք 436
Ռոմանիա 198-209, 215
Ռուգոնոս, Ռոգոնոս } 241, 247, 250
Ռուգոնիոս, Ռուգունոս
Ռոքոս 273

Սարխաթա 476
Սալամաստ 362
Սակառիայ } 22, 42
Սակայիրայ
Սահակ 8-10
Սաղաթիէլ 83
Սաղովմայ, Աբտասաղոմայ 455
Սամարիա 1, 15, 177
Սամոս 49
Սամուէլ 449
Սանատրուկ 352-3, 362-3, 475
Սաւուղ 120
Սափիրա 466
Սեբաստեան 122
Սելեւկիա 49, 193-4, 196
Սեմղ, Սեղմ 426
Սենքրոք 402
Սերգի, Ոսերկի, Ասերգի 476
Սեփա 351
Սիդոն 49
Սիկիլիա 3
Սիմոն տես Պետրոս
Սիմոն Կանանացի, Նախանձայոյզ 363, 401, 450, 464–6, 468

Սիմոն մոգ 2, 7, 8, 10–47, 466
Սինոպ, Սինաւպ 168, 246
Սիրակուսա, Սեռակուսա 3, 31
Սիրէացիք 468
Սիւնեսիս 446
Սիփոր 390, 398, 400, 435
Սկոփիանոսիս 196
Սնտոփանոս 273-276
Սողոմէ 293
Սոսիպատրոս 277-283
Սուղիայ 3
Սուրակիոն 49
Սոփիա 446
Սոփրոն 411-3
Սպանիա 112, 174-5, 187, 189, 294, 467
Սպարդա, Սպարդէս 145, 150
Ստաբենոյ 5
Ստաբեա, Ստաբէոս 302–324
Ստեփանոս 48, 362, 429
Ստրատոկղէս 150. 151, 157, 166–7

Վան 436
Վասիլ 241-243
Վիժան 388, 398, 418
Վոսկղոյ 249
Վտոսիա 255
Վրիտացւոց աշխ. 465

Տաբեոնիա 5, 7
Տաբերիոն 49
Տալի 426
Տաճիկք 426
Տանեոսիս 5
Տաոսկինաս 5
Տարսոն 48, 49, 469
Տերանտիոս
Տերենտիոս } 354, 363-4
Տերինտէոս
Տերտիա 390, 393, 399
Տերտիղիա 386

Տիբեր 48, 453
Տիգրիս 67, 91
Տիմոթէոս 110-122
Տիտոս 57, 60
Տիւրոս 49
Տիւքիկոս, Տիկոս 476
Տոմննտանայ 27
Տոմիսիանոս 467
Տոպիելու 49
Տրայիանոս 467, 472
Տրեւս – Տաբեռնիսթեա 7

Փաթերա 468
Փասեքա 351
Փարաւոն 16, 38, 211, 259
Փարէս 60
Փարիս 471
Փափոսոս 276
Փեստոս 58
Փիլէգոս, 178–181
Փիլէոն 262–3
Փիլիպիա 49, 469
Փիլիպիանոս 446
Փիլիպպոս 300-332, 369, 401, 468, 472, 474, 47
Փիսոն 67, 91
Փոնի 230
Փոոն 32
Փուլպանոս 438, 446
Փուլփանա 438, 446
Փռիգիա 472

Քարիսիոս, Քուրիսոն 399
Քիոս 49
Քուրիս 385-6
Քանթիկոս 419
Քանթիպպէ 51
Քանթիպպոս որկւդ. 412